

9(47.925)

Գ-12

ՄԱՐՏԻՐՈՍ Ս. ԳԱՎՈՒԲՉԵԱՆ

ԱՐՄԷՆ ԵՒ ՀԱՅ
ԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ
ԵՒ
ՈՒՐԱՐՏՈՒՆ

1973
Տպ. ՍԵՒԱՆ
ՊԵՂՈՒՔ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մենք անհամապատասխանութիւն էինք տեսնում հայ ժողովրդի ժառանգած նիւթական ու հագեւոր բարձր մշակոյթի եւ նրա ծագման ու որպէս ժողովուրդ կազմաւորման մասին եղած պատմագիտական տեսութիւնների ու տեսակէտների միջեւ: Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի թողած նիւթական մշակոյթի բազմազարեան ու բազմատեսակ հետեւերը, նրա հոյակապ նարտարապետութեան հին զարգացում ունեցող ժառանգութիւնը, հայկական լեռնաշխարհի աշխարհագրական հին հայկական անունները եւ մետրոպեան ոսկեդարեան (գրաբար) լեզուի զարմանալիօրէն բարձր մշակութաժողովուրդը խօսում էին հայ ժողովրդի՝ հին անցեալում մեծ ու երկարատեւ պետականութիւն ունեցած լինելու մասին, հին ժամանակների Առաջաւոր Ասիայում որպէս մեծ ժողովուրդ մշակութային եւ ռազմաբազմազան կարեւոր եւ ազդեցիկ դեր խաղացած լինելու մասին:

Մենք գտնում էինք, որ այս բոլորը չէր կարելի տեղաւորել հայ ժողովրդի կազմաւորման, նրա պետականութեան սկզբնաւորման մասին բերուած (6-րդ դար մ. թ. ա.) թուականի եւ մեր էրայի սկզբնաւորման միջև ընկած կարճ ժամանակահատուածում՝ Նրուանդունիների եւ Արտաշէսեանների հայկական պետութեան մօտ 6 դար տեւող ժամանակում: Բոլոր նշաններն ու երեւոյթները խօսում էին այն մասին, որ Հայերը պէտք է ունեցած լինեն Նրուանդունիներից առաջ մեծ պետականութիւն, մի բան, որ մնացել է մթութեան մէջ:

Հենց այս պատճառներից ելնելով նամբայ ելանք հետազօտիչ շրջագայութեան դէպի հայ ժողովրդի անցեալի խորքերը՝ հայ ժողովրդի ծագման, նրա կեանքի հնագոյն շրջանի մասին լոյս փնտռելու ի խնդիր: Մեր երկարատեւ (բառարդ դարից աւելի տեւող) պարզաւորումների ընթացքում եկել ենք այն հետեւութեան, որ առաջա-

դրուած խնդրի լուծման համար անհրաժեշտ է ոչ թէ միայն տեղեկանալ հին ու նոր հայ եւ օտար հայագէտների գործերին ու տեսակետներին, այլ զգացել ենք, որ պէտք է քայլել նաեւ յոգնեցուցիչ, բայց անկոյս նաեւ պարհներով, պէտք է ծանօթանալ նաեւ հին աշխարհի ժողովուրդների պատմութեան, մշակոյթին, դիցարանութեան, պէտք է ծանօթանալ սոււմերների և ակկադների, ասուրիների եւ արարների, եգիպտացիների ու խեթերի, խուրրիների եւ ուրարտացիների, Հռոմի ու Բիւզանդիայի, Փոքր Ասիայի ու յոյների, Իրանի ու Միջին Ասիայի եւ Հայաստանի հարեւան հին ժողովուրդների պատմութեան, մշակոյթին, ռազմաքաղաքական գործունեութեան, դիցարանութեան, պէտք էր ծանօթանալ Առաջաւոր Ասիայի մեռեալ ու կենդանի մի շարք լեզուներին, սեպագրութիւններին, հիերոգլիֆներին, այդ բոլորի մէջ գտնելու նոր լոյս, մոռացուած որեւէ հետք հայ ժողովրդի անցեալ մեծ կեանքից, որի գոյութիւն ունեցած լինելու մասին խօսում էին մի շարք յայտնի նշաններ:

Մեր երկարատեւ հետազոտութիւնների ընթացքում երեւան են եկել բազմաթիւ փաստեր ու տուեալներ, որոնք խօսում էին այն մասին, որ հայկական ցեղը հայկական լեռնաշխարհի նախնադարեան համայնական հասարակութեան մէջ տոհմական տարրերի էթնիկական բիրեղացման արդիւնքն է:

Արմէն կամ Արմենիա անուան ծագման բացատրութիւնը, Նուարդ, Նաիրի, Ուրարտու, Բիաինա, Արգիշտի, Ռուսա, Սարգուրի, Իշպուրի, Արամէ, էրիմենա անունների ստուգաբանութիւնները, Խալդի, Վահագն եւ Աստուած դիցանունների ծագումնաբանական վերլուծութիւնները մեր առաջ պարզեցին արմէն-հայերի առկայութիւնը ուրարտական պետութեան կառուցուածքում:

Այսուհանդերձ ցանկանում ենք նշել, որ թէեւ աշխատութեան մէջ առաջ քաշուած նոր տեսակետները արդիւնք են հնագիտական, վիճագրական, լեզուաբանական, ազգագրական եւ այլ տուեալների համադրման եւ պատմահամեմատական հետազոտութեան, սակայն մենք յաւակնութիւնը չունենք պնդելու, որ դրանք բոլորն էլ ստացել են իրենց վերջնական ձեւակերպումը, ի հարկէ կարելի է ենթադրել, որ դեռ կը լինեն նշդումներ եւ բարեփոխումներ հետագայում երեւան գալիք փաստական նոր տուեալների հիման վրայ:

Մ. Գ.

երեւան

ԳԼՈՒԽ Ա.

ԱՐՄԷՆ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՁԵԻԸ

1. ՆԱՐԱՄ-ՍԻՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՄԱՆԻ

Արմէն անուան ծագման մասին խօսելուց առաջ, ի հարկէ, անհրաժեշտ է իմանալ, թէ ո՞րն էր այս անուան կանխադոյն ձեւը եւ աշխարհագրականօրէն ո՞րտեղ էր գտնուում նրա ծագման բնօրրանը:

Մեր ձաւոր Արեւելքի՝ մ. թ. ա. Գ. հազարամեակից եկող արձանագրութիւններից մի քանիսում յիշուած է Արմանի երկրանունը: Այս անուան մեզ յայտնի կանխադոյն յիշատակութիւնները պահպանուել են ակկադական նշանաւոր թագաւոր Նարամ-Սինի (Գ. հազարամեակի Բ. կէս՝ մ. թ. ա.)¹ հին սեպագիր արձանագրութիւնների մէջ:

¹ Պատմագիրների մօտ Նարամ-Սինի ժամանակի մասին գտնում ենք տարբեր բուականներ. սոււմեր-ակկադական պատմական հին բնակավայրերի գիտականօրէն կատարուած պեղումների սկզբնական շրջանում նրանց ժամանակների մասին եղած գնահատումները հետագայում կասկածի տակ դրուելով՝ որոշ գիտնականների մէջ մղում առաջացաւ աստիճանաբար նրանց ժամանակագրական բուերը կրճատելու եւ նրանք մօտեցնելու մեր էրային: Այդ կրճատումների արդիւնքը եղան Նարամ-Սինի ժամանակի մասին բերուած հետեւեալ բուերը:

3750 (մ. թ. ա.) — G. Maspero, «Histoire Ancienne des Peuples de l'Orient Classique», Paris, 1895, p. 599. L. W. King and H. R. Hall, «Egypt and Western Asia in the Light of Recent Discoveries», London, 1910, p. 133. (Այս բուականին Նարամ-Սինը արշաւում է Մագան):

Գ. հազարամեակի կէսին է դրում Նարամ-Սինի մեծ-հայր Սարգոնը — D. G. Hogarth, «Hittites, Encyclopaedia Britannica, 13th ed., 1926, p. 534: 2750 (մ. թ. ա.) — Նարամ-Սինի կառուցիչը իր քաղաքների դէմ — J. Garstang, «The Hittites», Wonders

**Այս արձանագրութիւններէց մէկը, որ պատմագրութեան մէջ
յայտնի է (Հրոզնու աշխատութեամբ) «Նարամ-Սին եւ իր թշնա-**

of the Past, I, V., edited by Hammerton, p. 972:

2755—2700 (մ. թ. ա.) — Ե. Ս. Բատունի, «Նախահայկական Հայաստան», Պէյրուս, 1950, էջ 86:

2646—2591 (մ. թ. ա.) Նարամ-Սինի գահակալութիւն — G. Contenau, «La Civilisation des Hittites et des Mitanniens», Paris, 1934, p. 49, L. W. King, «A History of Sumer and Akkad», London, 1916, II Table, The Dynasty of Akkad: (Սրահով Գինգը հրատարակ է 1910-ին իր բերած 3750 բուականից):

2550 (մ. թ. ա.) — Նարամ-Սինի կոնիւր իր բշնամբների դէմ — N. Adontz, «Histoire d'Arménie», Paris, 1946, p. 20. Լ. Գ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», Երևան, 1963, էջ 112: Ս. Յակոբեան, «Հայ ժողովրդի կազմաւորման հարցի շուրջ», Գրական քերթ, 17—2—1967: B. Hrozny, «Naram-Sin et ses Ennemis, d'après un Texte Hittite», Archiv Orientalni, V. I, March 1929 N. 1, Prague, p. 65 (26 ou 25 siècle av. J. C.):

Ին զ. (մ. թ. ա.) — Նարամ-Սինի քանդակը — J. H. Breasted, «Ancient Times», 2-nd ed. London, 1935, p. 161:

2530 (մ. թ. ա.) — F. M. T. B., «Encyclopædia Britannica», 14-th ed., 1929, տե՛ս Amorites.


2290—2254 (մ. թ. ա.) — Նարամ-Սինի գահակալութիւն — Լ. Բարսեղեան, Գիտադոսքիւններ Armani, Arme եւ Urme երկրների մասին, Պատմաբանասիրական հանդէս, քիւ 2, 1964, էջ 325:

Գ. Կոնտենոն իրաւացիորէն ասում է, թէ Միջագետքի պատմութեան ժամանակագրական բուերի խիստ կրճատումը, որ արում է, գուցէ առարկութեան շիանդիպէր, եթէ այն առանձին լինէր, բայց նա բնաւ կզգիացած չէ հին աշխարհից: Այն կապուած է եգիպտական, եգէական եւ այլ քաղաքակրթութիւնների հետ. նրանց հետ ունեցած սինխրոնիկ կապը պէտք է հաշուի առնել, իսկ եգիպտագէտները մերժում են Menes-ը՝ եգիպտոսի Ա. Գինաստիայի հիմնադրի ժամանակը 3200 (մ. թ. ա.) բուից իջեցնել («La Civilisation des Hittites et des Mitanniens», pp. 48—49):

Ըստ մեր բնութեան՝ Նարամ-Սինի բուականի ԻԳ դարից (մ. թ. ա.) աւելի կրճատումը առաջ կը բերէր սինխրոնիկ յարաբերութիւնների որոշ հակասութիւններ եւ շփոթութեան տեղիք կը տար (աչֆի առաջ ունեցալով Նարամ-Սինի եւ նրա մեծ-որ՝ Սարգոնի յիշած յատուկ անունները) Մերձատր Արեւելի սեմական գաղթերի եւ նախանեսիտեան խեղճերի, լուսնների եւ նեսիտ-խեղճերի ժամանակագրական յարաբերութիւնների հարցերում:

Heft 3 № 9-15


V Nr 13 VAT 13 009 = Forrer BoTU 2.



Nr. 15. Bo 6492.



Nr. 19. Bo 9240.



միները» անուամբ, մեզ հասած է հին խեթերէնով՝ գրուած Բ. հա-
զարամեակի սկզբներին (մ. թ. ա.) : Այս արձանագրութեան անգրա-
զարձել են եւ ուսումնասիրութեան նիւթ են դարձրել շատ հնադէտ-
պատմաբաններ եւ նրա արժէքի եւ հաւաստիութեան մասին բերել
տարբեր տեսակէտներ : Արձանագրութիւնը պատմում է Նարամ-
Սինի Բարեկոնից զէպի հիւսիս եւ հիւսիս-արեւմուտք կատարած մի
մեծ արշաւանքի մասին : Այդ արշաւանքով ակկադները արքան յաղ-
թել է իր զէմ զինակցած 17 երկրներէ 17 թագաւորներին, որոնց
մէջ, որպէս 11-րդը յիշուած են Արմանի երկիրն ու նրա թագաւոր
Մադակինան :

Բերում ենք այս արձանագրութեան սեպագիր տեքստը, որը
հրատարակուած է Ֆորրէրի կողմից. (տես աստ, էջ 9) :

Այս սեպագիր տեքստի 9—15 տողերում յիշատակուած են Նա-
րամ-Սինի հետեւեալ թշնամիները (բերում ենք Հ. Գ. Գուտերբոխի²
տառադարձութիւնը՝ այն Բ. Հրոզնի³ տառադարձութեան եւ է.
Ֆորրէրի հրատարակած այս խեթական սեպագիր տեքստի հետ հա-
մեմատելուց եւ փոքր ուղղում կատարելուց յետոյ) :

1. ^mAn-na-na-i-la LUGAL KUR URU GU.SU.A
2. ^mBu-na-na[-x-x] LUGAL KUR URU Pa-ak-k [i...]
3. ^mLa-pa-na-i-la LUGAL KUR URU U-ul-li-u-i
4. ^m[x-i]n-ni-pa-i-la LUGAL KU[R URU ...]
5. ^mPa-am-ba LUGAL KUR URU Ha-at-ti
6. ^mZi-pa-ni L[UGAL K]UR URU Ka-ni-es
7. ^mHu-u[r]
8. ^mHu-va-a-ru-va-aš LUGAL KUR URU A-mur-ri
9. ^mTi-is-š[i]-en-ki LUGAL KUR URU Pa-ra-ši


2) Լ. Ա. Բարսեղեան, «Հնագոյն ցեղային միութիւնը Հայաստանում», «Տե-
ղեկագիր», ԳԱ (հաս. գիտ.), 1962, քիւ 1, էջ 88:



3) B. Hrozný, «Naram-Sin et ses Ennemis d'après un Texte Hittite», p. 65-75.

10. [.]
11. ^mMa-da-ki-na LUGAL KUR URU Ar-ma-ni
12. ^mIs-qip-p[u] LUGAL HUR.SAG ERIN
13. ^mTi-es-š[i]
14. ^mUr-la-ra-ak LUGAL KUR URU La-ra-ak⁴
15. ^mUr-[b]a-an-da LUGAL KUR URU Ni-ik-ki [. . .]
16. ^mIl-šu-na-i-il LUGAL URU Tur-ki
17. ^mTi-i[š]-bi-in-ki LUGAL KUR URU Ku-ur-ša-u-ra


(1. Անմանախա՛ Գուշուա ֆաղափի երկրի թագա-
ւորը,

2. Բունանա [. . .]՝ պակկ [ի. . .] ֆաղափի երկրի
թագաւորը,

4) Հ. Գ. Գուտերբոխի տառադարձութեան մէջ, բերուած վերոյիշեալ տե-
ղեկագրում (Լ. Ա. Բարսեղեանի մօտ), 14-րդ թագաւորի տեղում կար
^mUr-la-ra-ak LUGAL URU La-ra-aka, որը, նայելով սեպագրին []

(LUGAL)  (KUR)  (URU)] (նիշո գտանք Հրոզնիին), պէտք է

կարդալ LUGAL KUR URU: Առաջին թագաւորի անունը Հրոզնին կարդում է

El-ma-na-i-la, իսկ մեծ պահեցիմ Գուտերբոխինը, որովհետեւ  վանկի

an ընթերցումը աւելի նիշո ենք համարում, ինչպէս, օրինակ՝ այն երեւում է

նաեւ 15-րդ թագաւորի  ^mUr-ba-an-da
ur ba an da

անուան մէջ, եւ հետաքրքիր է, որ Հրոզնին այն, այս դէպքում, նիշո է կարդացել
(ur-ba-an-da եւ ոչ ur-ba-el-da):

3. Լապանախիա՝ Ուլլիվի ֆաղափի երկրի թագա-
ւորը,
4. [...]ննիպախիա՝ [...] երկ [րի] թագաւորը,
5. Պամպա՝ Խաթթի ֆաղափի երկրի թագաւորը,
6. Զիպանի՝ Կանէշ ֆաղափի [ե]րկրի թ[ագաւորը],
7. Նուր [...],
8. Խուվարուվաշ՝ Ամուրրի ֆաղափի երկրի թագա-
ւորը,
9. Տիշշ[ե]նկի Պարաշի ֆաղափի երկրի թագա-
ւորը,
10. [...],
11. Մադակինա՝ Արմանի ֆաղափի երկրի թագա-
ւորը,
12. Իս-Գիպպ[ու] մայրիների լերան թագաւորը,
13. Տիեշշ[ի] [...],
14. Ուր-Լարակ՝ Լարակ ֆաղափի երկրի թագաւորը,
15. Ուր-[ը]անդա՝ Նիկկի [...] ֆաղափի երկրի թա-
գաւորը,
16. Իլշունաիլ՝ Տուրկի ֆաղափի թագաւորը,
17. Տի[շ]բինկի Կուրշաուրա ֆաղափի երկրի թագա-
ւորը):

Այս տեքստի արժէքի մասին մեր տեսակէտը բերելուց առաջ, նախապէս ասենք, որ ուսումնասիրողների մեծամասնութիւնը, ներառեալ մի շարք յայտնի և մեծահմուտ գիտնականներ (B. Hrosny, G. Contenau, S. Smith, J. Garstang, L. King, E. Mayer, N. Adontz, E. Forrer և ուրիշներ) այս տեքստը զնահատել են որպէս վստահելի ազրիւր և այդտեղ բերուած տուեալները՝ որպէս պատմական արժէք ներկայացնող վկայութիւններ, սակայն կան և պատմաբաններ, որոնք տեքստի հաւաստիութեան մասին կասկած են յայտնել: Այդ կասկածանքների հեղինակները հայագիտական տեսակէտով բաժանուած են երկու խմբի. առաջինում նրանք են, որոնք, հիմնուելով (խեթական) արձանագրութեան Նարամ-Սինի ժամանակներում (փորազրուած) գրուած շլինեւուն վրայ, այն համարում են վերցուած՝ աւանդութիւնից և կիսաառասպելական, որով պատմականօրէն անվստահելի, իսկ երկրորդում նրանք են, որոնք տեքստը համարելով հանդերձ պատմական, այնտեղ յիշատակուող Armani-ն (ոմանց սխալ տեղադրումներից ելնելով) չեն նոյնացնում Armenia-ի հետ: Հայագիտականօրէն ուշադրութիւն դրաւողն այն է, որ այս կասկածանքների վրայ ընդհանրապէս յենուած են նրանք, որոնք հայ ժողովրդի ծագման հարցում տակաւին կառչում են նրա՝ Բալկաններից գաղթած լինելու մերժուած վարկածին:

Բ. Հրոզնին այս խեթական տեքստի հաւաստիութեան մասին գրում է հետեւեալը. «... Հենց ինքը՝ Ակկադի նշանաւոր արքայ Նարամ-Սինը (ԻՁ կամ ԻԵ) դար մ. թ. ա.) պատմում է 17 թագաւորների մի մեծ զինակցութեան դէմ իր յաղթական պատերազմի մասին: ... Մեր խեթական տեքստը, տալով բոլոր երկրների ու թշնամի թագաւորների անունները և յիշելով Նարամ-Սինի կողմից վերականգնուած շէնքերը և այլն, իսկական պատմական տեղեկագրութեան տպաւորութիւն է ներշնչում...»: ⁵ Հրոզնին տեքստի հաւաստիութեան մասին ճիշդ զնահատական («իսկական պատմական տեղեկագրութիւն») տալով հանդերձ՝ այդտեղ յիշուած մի քանի երկրներ սխալ է տեղադրել՝ նրանց տանելով Զագրոսի շրջան (Armani) ⁶, Բարբելոնի մօտ (Gù. Su. A) ⁷, Բարբելոնից արեւելք

⁵) Բ. Հրոզնիի նշուած աշխատութիւնը, Archiv Orientalni-ի մէջ, էջ 65:

⁶) Նոյն տեղում, էջ 72:

⁷) Նոյն տեղում, էջ 66:

(Larak)⁸ եւ անդամ մինչեւ Էլամ (Parasi)⁹: Հեաադայում, սա-
կայն, Հրոզնին հրաժարուեց Արմանին Չագրոսի շրջան տեղադրող
իր տեսակետից եւ այն դրեց Հայկայի տեղում՝ աւելի մօտեցնելով
Խակահան տեղին¹⁰:

Պատմաբաններից նրանք, որոնք Նարամ-Սինի թշնամիների 17
երկրները տեղադրել են Խեթական երկրից (Փոքր Ասիայից) մինչեւ
Բարելոնի արեւելք երկարող մեծ տարածութիւնների վրայ, մոռա-
ցել կամ անտեսել են մի կարեւոր հանգամանք. դա 17 թշնամիների
զինակցութիւն կազմած եւ Նարամ-Սինի՝ նրանց միացեալ ուժերի
դէմ հանդէս եկած լինելն է:

Եթէ Նարամ-Սինը արշաւած լինէր իր թշնամի երկրների վը-
րայ առանձին-առանձին եւ յաղթած լինէր նրանց թագաւորներին
մէկ-մէկ, ապա բոլորը (ցուցակի ձեւով) մի արձանագրութեամբ չէր
րերի եւ այդքան մեծ քաջագործութիւն արած չէր լինի: Միանգա-
մայն պարզ է (եւ տեքստի տուեալները ցոյց են տալիս այն), որ
Նարամ-Սինը մի արշաւանքով կուռել է 17 արքաների զինակցու-
թեան դէմ: Իսկ այդպիսի կանուխ ժամանակներում, հազորդակ-
ցութիւնների նախնական միջոցների պայմաններում հնարաւոր չէր
զինակցութեան մէջ ընդգրկել Փոքր-Ասիայից մինչեւ Էլամ երկարող
հսկայ տարածութիւնների երկրներին: Ի հարկէ ճիշդ չէր լինի մտա-
ծել, որ Բարելոնի արեւելքում գտնուող մի երկրի ուժերը ակադա-
կան թագաւորի դէմ կուռելու համար Փոքր-Ասիայում գտնուող Խե-
թական երկրի ուժերի հետ միանան առանց նրանց միջեւ գտնուող
ակադական հզօր ուժերի միջամտութեան հանդիպելու, եւ դա այն-
պիսի ժամանակներում, երբ Նարամ-Սինի մեծ-հօր՝ Սարգոնի զօ-
րավարները (Սարգոնի Փոքր-Ասիա արշաւելուց առաջ) մինչեւ Փոքր-
Ասիա հասնելը հեքիսթային արկածախնդրութիւն էին համարում¹¹:
Այստեղից միանգամայն պարզ է, որ Նարամ-Սինի թշնամի երկրնե-
րի այդպիսի տեղադրումները համապատասխան չէին տրամաբանա-
կան իրականութեան եւ Արմանին էլ Չագրոս տանելը՝ ակնյայտօրէն
սխալ:

8) Նոյն տեղում, էջ 72:

9) Նոյն տեղում, էջ 70-71:

10) B. Hrozny, «Histoire de l'Asie Antérieure», Paris, 1947, p. 110. Տես Լ. Բարսեղ-
եանի յօդուածը, Պատմա-քաղաքագիտական համաժողով, 1964, քիւ. Բ., էջ 324:

11) G. Contenau, «La Civilisation des Hittites et des Mitanniens», Paris, 1934, p. 52-53.

Մենք գտնում ենք, որ այդ երկրները պէտք է փնտռել աւելի
փոքր շրջանակում եւ իրար աւելի մօտ տարածութիւնների վրայ, որ-
պէսզի կարելի լինի մտածել նրանց ուժերի մի տեղ հաւաքուելու աչ-
խարհագրական հնարաւորութիւնների մասին՝ նախքան ակադական
հզօր թշնամու միջամտութիւնը: Հետեւաբար դրանք պիտի տեղա-
դրել արդէն տեղը յայտնի Խեթական եւ ամանոսեան երկրներից մին-
չեւ Ասորեստանի հիւսիս-արեւմտեան շրջանները հասնող տարածու-
թիւնների վրայ, որոնց մօտաւորապէս կենտրոնական տեղերից է լի-
նում Ալզնիքը՝ Դիարբեկի շրջանով հանդերձ:

Դժբախտաբար ներկայ պատմագիտութեան յայտնի տուեալ-
ներով տակաւին հնարաւոր չէ այդ բոլոր երկրների տեղի մասին
ճշգրիտ բան ասել, բայց մեր ունեցած զիտեւելքները բաւարար հնա-
բաւութիւն են տալիս մի քանիսի տեղի վերաբերեալ որոշ բան աս-
ել եւ դրանով պատկերացում կազմել ընդհանուրի գրաւած շրջա-
նակի մասին:

Յայտնի է, որ Hatti-ն Խեթերի երկիրն է, իսկ Kaneš-ը սրա նման
գտնուում է Փոքր-Ասիայի արեւելեան շրջանում¹²: HUR. SAG. ERIN
(= մայրիների լեռ) Կիլիկիայի Ամանոս լեռն է¹³: Amurri-ն ամորիտ-
ների երկիրը, գտնուում է Ասորիքում¹⁴: Ullivi-ն տեղադրուում է վե-
րին Տիգրիսի վրայ՝ Դիարբեկի արեւելք¹⁵: Larak եւ Nikki
[...] երկրների տեղադրման մասին ճշգրիտ բան չենք կարող ասել,
բայց նրանց թագաւորների անունների (Ur - Larak եւ Ur - Banda)
սկզբնական մասը (Ur-) սուսերական ծագում ունի, եւ նկատի առ-
նելով այն, որ սուսերական մշակոյթն իր ազդեցութիւնը տարածել
էր ամբողջ Առաջաւոր Ասիայի վրայ, սակայն նրա անմիջական կը-
րողները եղել էին ասուրա-բարելական երկրները, ուստի բաւական
ճիշդ կը լինի նրանց երկրները (որոնք թշնամական դիրք էին բռնել
Ակկադի դէմ) տեղադրել հեաադայում Ասորեստան կոչուած երկրի
հիւսիս-արեւմտեան շրջանում՝ Վանայ լճից հարաւ ուղղութեամբ

12) Բ. Հրոզնի, Յշուած աշխատութիւնը, էջ 69:

13) Բ. Հրոզնի, նոյն տեղում, էջ 69:

14) F. M. T. B., «Amorites», [... the land of the Amorites» (Amurru, ideogr.
Martu) ... was the region of the middle Euphrates], Encyclopædia Britannica 14th ed.
Բ. Հրոզնի, Յշուած աշխատութիւնը, էջ 70:

15) Բ. Հրոզնի, նոյն տեղում, էջ 68: Լ. Ա. Բարսեղեան, «Հնագոյն ցեղային
միութիւնը Հայաստանում», Տեղեկագիր, Գ. Ա. (հաս. գիտ.), 1962, քիւ. 1:

(զուցէ ապագայ տեղեկութիւնները հնարաւորութիւն տան Nikki [· · ·]-ն լրացնել Nikki [ri] -ի և այն տեղադրել Նիխիբի — Նիխիբի — լանի տեղում) : Մեր նշած այս 7 երկրները (Hatti, Kaneš, HUR. SAG. ERIN, Amurri, Ullivi, Larak և Nikki [· · ·]) արդէն մօտաւորապէս սահմանազօում են 17 երկրների բռնած ընդհանուր տերիտորիան, որի շրջագծի արեւմտեան մասը որոշում են Hatti-ն և HUR. SAG. ERIN-ը, հարաւայինը՝ Amurri-ն, իսկ արեւելեանը՝ Larak-ն ու Nikki [· · ·]-ն : Մեզ համար հետաքրքրականն այն է, որ Armani-ն արձանագրութեան վրայ, 17 երկրների ցուցակում, գտնուում է կենտրոնական տեղերից այնպիսի մէկում (11-րդ տեղում, այսինքն՝ կենտրոնական 9-րդ տեղից երկու համարով շարժած դէպի Ur — Larak-Ur — Nikki [· · ·] թեւը), որին աշխարհագրականօրէն, 17 երկրների համար վերեւում գծուած տերիտորիայի վրայ, համապատասխանում է այն շրջանը, որտեղ, հետագայ արձանագրութիւնների տուեալներով, գտնում ենք Alzi-ն (Աշինիքը) կամ Արմէ-Շուպրիան :

Armani-ի տեղադրման նպաստող այս հանգամանքը մեծ կարեւորութիւն և կշիռ է ստանում մի այլ կարեւոր փաստով, որը հետեւեալն է. զինակցած 17 երկրները Նարամ-Սինի դէմ միացեալ ուժերով հանդէս գալու համար պէտք է հաւաքուած լինէին 17 երկրներն ընդգրկող շրջանակի մօտաւորապէս կենտրոնական վայրերից մէկում, և Նարամ Սինն էլ նրանց հանդիպած ու յաղթական ճակատամարտ տուած պիտի լինէր հենց նրանց հաւաքավայրի մօտ տեղերում (եթէ մեր վերելի գնումները ճիշտ են, ապա մօտաւորապէս Աշինիքի շրջանում) : Եւ իսկապէս էլ, հենց այս շրջանում՝ Դիարբեկիլիից վեր, Հայկական Տաւրոսից սկիզբ առնող Ambar — su (Ս. Երեմեանի կազմած քարտէզում «Սասնոյ ջուր» կոչուած)¹⁶ գետակի վրայ գտնուած է (in situ) Նարամ-Սինի յաղթանակի մի կոթողը («Stele of Victory») սեպագիր արձանագրութեամբ, որը պատմագրութեան մէջ յայտնի է «Դիարբեկիլի ստեյլա» անուամբ և գտնուում է այժմ Պոլսի թանգարանում¹⁷ : Կոթողի սեպագիր ակկադերէն արձանագրութիւնը, թէեւ լաւ չի պահպանուած և մեզ հասել է միասուած քերտով, նշում է նաև կառուցուած հիմքերի մասին,

16) Ս. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963 :

17) L. W. King, «A History of Sumer and Akkad», London, 1916, p. 243.

այսինքն՝ կատարուած շինարարութեան մասին : Բերում ենք այս արձանագրութեան տառադարձումն ու թարգմանութիւնը¹⁸ :

STELE A (DIARBEKR)

I. [d^hna - r]a - am - [d^hEN] - zu [da - n]um (սիւնակի մնացած մասը կտարուած է)

II. d^hEN - KI in ki - ib - ra - tim ar - ba - im na - e ir - tim ... - ti (սիւնակի մնացած մասը կտարուած է)

III. Iš - ku - un ù kigallam iš - pu - uk ša duppam šù - a ù - za - ku - ni d^hIštar (սիւնակի մնացած մասը կտարուած է)

IV. li - zu - hu ù zir - su li - il - gu - tu ... - ni - ... ù - ti (մնացածը կտարուած է) :

ՍՏԵԼԼԱ A (ԴԻԱՐԲԵԿԻԼԻ)

I Աստուածային Naram — Sin հզօրն (սիւնակի մնացած մասը կտարուած է)

II. Enki կողմերում չորս, ով որ դարձնի ճակատը... (սիւնակի մնացած մասը կտարուած է)

III. տեղադրի և հիմքերը քանդի, ով որ այս արձանագրութիւնը դիմազեղծի թող Իշտարը (սիւնակի մնացած մասը կտարուած է)

IV. պատառոտի և նրա սերմը անհետացնի ... և ... (մնացածը կտարուած է) :

Դիարբեկիլիում գտնուած այս յաղթանակի կոթողը ինքնին մի անհերքելի փաստ է, և կասկած չի թողնում, որ Նարամ-Սինը եղել է Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքում, այնտեղ մղել է սրտերազմ և այնտեղ կանգնեցրել է յաղթանակի կոթող, հետեւաբար իսթական տեքստում յիշուած Armani-ն պիտի անվերապահօրէն ընդունել հետագայում յայտնի Arme, Armina կամ Armenia անուան նախնական ձևեր :

18) G. A. Barton, «The Royal Inscriptions of Sumer and Akkad», London, 1929, p. 141 (անգլերէնից հայերէն քարգմանութիւնը կատարուած է մեր կողմից) :



Գիարբեկիբի այս կոթողի գոյութիւնը եւ խեթական տեքստի տուեալները թելադրում են նաեւ մի այլ կարեւոր միտք. դա այն է, որ Նարամ-Սինի կողմից Armani-ի նուաճումը անցողիկ բնոյթ չի ունեցել, այլ, որոշ չափով, կայուն: Այդտեղ կատարած շինարարութիւնը ստիպում է ընդունել, որ նրա գերիշխանութիւնն այդտեղ տեւել է որոշ ժամանակով եւ երեւոյթներ կան ցոյց տուող, որ Armani-ն չի հանդուրժել ստորադասութեան եւ նետուել է պայքարի, իսկ Նարամ-Սինը ստիպուած է եղել մի արշաւանք եւս կատարել Armani-ն կրկին նուաճելու համար: Մեր կարծիքով ահա այս է թելադրում խեթական վերոյիշեալ արձանագրութիւնից անկախ, ուղղակի Նարամ-Սինին պատկանող եւ յատուկ Armani-ն նուաճած լինելը նշող մի առանձին եւ անկասկածելիօրէն վստահելի արձանագրութիւն, որ գրուած է սկաւառակի վրայ սեպագիր ակկադերէնով: Այս արձանագրութիւնը յիշուած է նաեւ Հրոզնու կողմից («L'expédition de Naram-Sin contre le pays d'Armani est mentionnée de même dans des inscriptions authentiques de ce roi; voir Thureau-Dangin, Sumer u Akkad. Königsinschriften, p. 166 d et Rev. d'assy. X, 101, No. 1»)¹⁹: Բերում ենք Նարամ-Սինի այդ առանձին արձանագրութիւնը.

PERFORATED DISC A.

il¹na-ra-am^dEN-ZU da-lum šār Ki-ib-ra-tim
ar-ba-im nār ar-ma-nim^{ki} ù (մնացածը կոտրուած է)²⁰.

ԾԱԿՈՏԿԷՆ ՍԿԱԻԱՌԱԿ A

«Աստուածային Նարամ-Սինը՝ հօր արքան [աշխարհի] չորս կողմերի, նուաճողը Armani-ի եւ» (մնացածը կոտրուած է)²¹:

Ինչպէս տեսնում ենք, մեր խեթական արձանագրութեան տուեալները, ոչ թէ միայն ունեն իրենց ներքին տրամաբանական յարաբերակցութիւնը եւ իրենց յաջորդականութիւնը համապատաս-

19) Բ. Հրոզնի, նշուած աշխատութիւնը, էջ 71-72:

20) Գ. Ա. Բարտոն, նշուած գիրքը, էջ 140:

21) Նոյն տեղում, էջ 141 (ամգլիերէնից հայերէն թարգմանութիւնը՝ մեր կողմից):

խան իրենց աշխարհագրական իրական դրուածքների, այլեւ ներդաշնակ կապակցութիւն են ցուցաբերում արտաքին այլ փաստական արժէք ներկայացնող տուեալների հետ, ինչպիսին է շօշափելի եւ անհերքելի յաղթանակի կոթողն ու Նարամ-Սինի բուն վստահելի արձանագրութեան վկայութիւնը: Հետեւաբար նրանց վստահելիութիւնը եւ պատմական լինելը կասկածից դուրս է, եւ պիտի ընդունել, որ մի քանի պատմարանների կասկածանքները նրանց հաւաստիութեան մասին չեն արդարանում:

Սեթական արձանագրութեան վստահելիութիւնը վիճարկողներն իրենց պատճառարանութիւնները հիմնում են այն հանգամանքի վրայ, որ արձանագրութիւնը ժամանակակից չէ Նարամ-Սինին, այլ փորագրուած է նրանից մի քանի դար յետոյ. սրանից հետեւցնում են, որ բովանդակութիւնը բերուած պիտի լինի աւանդութիւններից, որոնք կարող էին իրականութիւնից շեղուած ու փոփոխուած լինել:

Ի. Մ. Գիակոնովը սրան աւելացնում է իր պատճառարանութիւնը. նա ընդունելով հանդերձ, որ արձանագրութեան մէջ յիշատակուած աշխարհագրական անունները կարելի է տանել մինչեւ Գ. հազարամեակ, դառնում է, որ «Նարամ-Սինի թշնամիների անունները ամբողջութեամբ խեթական են, այդ թուում թագաւորների անուններն այն երկրների, որոնք երբեք խեթական չեն եղել: Արմանիի թագաւորը կոչուել է Մադակինա, մինչդեռ բուն Նարամ-Սինին պատկանող մի արձանագրութեան մէջ նա կոչուում է Ռեդ-Ադադ, այսպիսով, բոլոր դէպքերում, տեքստում բերուած անունները ճիշտ չեն, դժուար թէ վստահելի լինեն եւ նրա միւս տուեալները»²²:

Նախ պիտի ասել, որ դժուար է ընդունել, որ խեթական տեքստում Նարամ-Սինի բոլոր թշնամիների անունները խեթական են: Վերելում խօսեցինք տեքստում յիշատակուած 14-րդ եւ 15-րդ թագաւորների Ur - Larak-ի եւ Ur - Banda-ի մասին: Հին Արեւելքի պատմութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այս անունները սումերական են, կամ առնուազն սումերատիպ են: Մենք դրանք համեմատում ենք սումերական հետեւեալ անունների հետ²³.

Ur-nina (2600 մ. թ. ա.)՝ Լագաշի ղեկավար, որին ծանօթանում ենք Տելլոյում՝ Ֆրանսիացիների կատարած պեղումներով:

22) Ի. Մ. Գիակոնով, «Հասարակական-պետական կարգը», Մոսկուա, 1959, էջ 232 (Ռուսերէն):

23) Seton Lloyd, «Twin Rivers», Oxford, 1943, pp. 14-15:

Ur-bau, Ur-gar, Ur-ningirsu, Ur-lama ' նոյնպէս Լագաշի զեկազարներ, որոնց ծանօթանում ենք նոյն տեղում Լուլլի թանգարանի կողմից կատարուած պեղումներով:

Ur-ning, Ur-gigir, Ur-babbar ' էրեքի 4-րդ զինաստիւթից:

Ur-nammu (Ur-engal) ' Ուր-ի 3-րդ զինաստիւթից (2210-2100 մ. թ. ա.):

Բ. Հրոզնին Ur-Larak անուան մասին գրում է. «Le nom du roi de cette ville (Larak)... est Sumerien», իսկ Ur-banda-ի մասին գրում է. «De même le nom Ur-banda est un nom sumerien; comparer par ex. le nom du dieu Lugalbanda adoré dans le proche Ašnunak, et des noms comme Galubanda»²⁴: Սրանց կարելի է աւելացնել (սումերական) Ur-Lugal banda (Հմմտ. Nu banda)²⁵:

Մեր կարծիքով, այս մասին այլ համեմատութիւններ եւ բացատրութիւններ աւելորդ են. պարզ է, որ Ur-Larak եւ Ur-banda անունները ոչ թէ խեթական, այլ սումերական են:

Ինչպէս 14-րդ եւ 15-րդ, այնպէս եւ 7-րդ թաղաւորի Nur — [...] անունը չի կարող խեթական լինել, այս տիպի անունների էլ հանդիպում ենք սումերների եւ ակկադների մօտ, աւելի ուշ ժամանակներում ասորեստանցիների եւ արարների մօտ, ուստի վստահօրէն կարելի է ասել, որ դրանք սեմական են: Nur սեմական լեզուով նշանակում է «լոյս» եւ որպէս նախածանց երեւում է ասորեստանեան եւ այլ սեմական թաղաւորների անունների սկզբում. օրինակ Nur-ili (նշանակում է լոյսն ասածոյ)՝ Ասորեստանի թաղաւոր, որ ապրել է Աչուր-Նիրարիի (1550 մ. թ. ա.) նախորդից՝ Išme — Dagan Գ.ից առաջ: Համեմատութեան համար բերում ենք նաեւ արարական Արբասիդների զինաստիւթի ուշ շրջանի ժամանակակից՝ Մուսուլի զեկազար Nur-ud-din Arslan Շահ Ա. (1193 մ. թ.) եւ Բ. (1218 մ. թ.), Nur-ud-din (نورالدین) նշանակում է լոյսը կրօնի (Հմմտ. Izz-ud-din Masud Ա. (1180 մ. թ.), Nasr-ud-din Mahmud²⁶:

Չերկարացնելու համար անհրաժեշտ է ենք դանում քննել մի քանի անուններ (Anmanaila, Lapanail, ... Innipaila, Ilšunail,

որոնց Բ. Հրոզնին որոշ ճշտութեամբ ամորիական է համարում («որոշ ճշտութեամբ» ասացինք, որովհետեւ սեմական են, բայց չենք կարող ասել անպայման ամորիական են): Շատ հեշտութեամբ կարելի էր ցոյց տալ, որ Anmana-ila, Lapan-ila, ... Innipa-ila եւ Ilšuna-il անունների վերջաւորութիւնները յիշեցնում են Nur-ili անուան վերջաւորութիւնը, Ilu — idin — anda²⁷ անուան սկզբնամասը եւ Gimil — ili — šu²⁸ անուան միջին մասը, որոնք ակկադա-սեմական են, հետեւաբար կարծում ենք, որ մեր քննած անուններն իսկ բաւական են ցոյց տալու, որ Նարամ-Սինի թշնամիների անուններն «ամբողջութեամբ խեթական» չեն:

Ի. Դիակոնովը Արմանիի արմենական լինելը մերժում է նաեւ իր այն պատճառարանութեամբ, որ Նարամ-Սինի մի իսկական արձանագրութեան մէջ Արմանի երկրի թաղաւորի անունը ոչ թէ Մադակինա է, այլ «Ռեդ-Ադադ»՝ աչքի առաջ ունենալով եւ այն, որ Ադադ անունը սեմական է, այսինքն՝ քանի որ Արմանիի թաղաւորի անունը սեմական է, ապա Արմանին չի կարող հայկական լինել:

Գիտութեան յայտնի է, որ Ադադ ու Տեշուպ անունները նոյն (չանթի, փոթորիկի, անձրեւի, հետեւաբար եւ պատերազմի) աստուածութիւնն են ներկայացնում: Այն սեմական աշխարհում ծանօթ է աւելի Ադադ անունով, իսկ փոքր Ասիայում եւ հայկական լեռնաշխարհում աւելի Տեշուպ անունով: Այս աստուածութիւնը սեպագիր արձանագրութիւններում բերում է IM գաղափարագրով, այնպէս, որ այս գաղափարագիրը կարելի է կարգաւ Ադադ կամ Տեշուպ: Նարամ-Սինի ակկադական արձանագրութեան մէջ Արմանիի թաղաւորի անուան երկրորդ IM մասը կարգացել են Ադադ՝ աչքի առաջ ունենալով Նարամ-Սինի ակկադական լինելը, բայց, ոչ մի կասկած, որ այն այս դէպքում պիտի կարգաւ Տեշուպ, եւ հետեւաբար Արմանիի այդ թաղաւորի անունը պիտի լինի Ռեդ-Տեշուպ: Տեշուպ անունը օտար չէ արմենական Արմանիի համար: Այդ աստուածութիւնը

27) Գ. Ա. Բարտոն, ճշուած գիրքը, էջ 373:

28) Նոյն տեղում, էջ 305:

Հիմ արձանագրութիւններից իմանում ենք, որ Նեպիտ-Խեթերի Կրեւալուց (2000 մ. թ. ա.) առաջ Ասորեստանի հիւսիսային շրջաններից մինչեւ Կապադոկիա գոյութիւն են ունեցել ասուրական (սեմական) տարրեր. տես G. Contenau, «La Civilisation des Hittites et des Mitanniens», Paris, 1934, p. 47:

24) Բ. Հրոզնի, ճշուած աշխատութիւնը, էջ 72:

25) Գ. Ա. Բարտոն, ճշուած գիրքը, էջ 406:

26) Սետոն Լոյդ, յիշուած գիրքը, էջ 39, 153:

Տեղույ անունով պաշտում էր հայկական լեոնաշխարհի Խուրրի-Միսանեան ժողովրդի կողմից եւ Տէյլերա անունով Ուրարտուի կողմից եւ երկու դէպքում էլ ներկայացում էր (արձանագրութիւնների մէջ) IM գաղափարազրով (Արմէնների՝ խուրրիմիտանիների եւ ուրարտացիների հետ ունեցած կապի մասին դեռ կը խօսենք այս ուսումնասիրութեան մէջ), այնպէս որ Արմանիի թագաւորը կարող էր իր անուն մէջ կրել Տեղույ անունը եւ կոչուել Ռեդ-Տեղույ: Անդամ Աղադ (Ատատ) անունը օգտագործուած է հայերի մօտ. օրինակ՝ ունէինք Ատատ Գնունի (Սոր. Գ. խզ), Ատատ Խոռխոռունի (Սեր. ԺԳ. իը) եւ այլն:

Միստամանակ պէտք է աչքի առաջ ունենալ այն հանդամանքը, որ Նարամ-Սինի այդ իսկական արձանագրութիւնը, որտեղ յիշուած են Արմանին ու նրա Ռեդ-Տեղույ (Աղադ) թագաւորը, մեզ յայտնի խեթական արձանագրութեան բովանդակութիւնը պարունակող (Նարամ-Սինի դէմ զինակցութիւն կազմած 17 թշնամիների մասին յիշատակող) արձանագրութիւնը չէ կամ նրա ակկադերէն բնօրինակը (կամ մի փոփոխակը) չէ. եթէ այդպէս լինէր, ապա հենց ինքը՝ յայտնի արեւելագէտ Ի. Գիսկոնովը չէր կասկածի խեթական արձանագրութեան հաւաստիութեան մասին: Ի հարկէ այդ արձանագրութիւնը Նարամ-Սինի՝ Արմանիի վրայ կատարած մի յատուկ արշաւանքի մասին խօսող «Ծակոտկէն սկաւառակ Ա» արձանագրութեան մի այլ օրինակն է (աւելի լրիւ բովանդակութեամբ) ուր յիշուած է Արմանիի արքայ Ռեդ-Տեղույի (Աղադի) անունը: Ուստի զարմանալի կամ անսպասելի չէր լինի, եթէ Նարամ-Սինի մի («Ծակոտկէն սկաւառակ Ա»-ի յիշած) արշաւանքի ժամանակ Արմանիում իշխէր Ռեդ-Տեղույը, իսկ միւս (խեթական տեքստի յիշած) արշաւանքի ժամանակ՝ Մադակինան:

Մեր ունեցած տուեալներով, ի հարկէ, զժուար է ասել, թէ այս արշաւանքներից ո՞ր մէկն էր առաջ կատարուել, սակայն եթէ մի պահ ենթադրենք, որ խեթական տեքստի յիշած (17-ի դէմ կատարուած) արշաւանքը առաջ էր կատարուել, ապա անհաւանական չէ, որ այդ արշաւանքի ժամանակ Մադակինան զոհուած (կամ յետոյ մահացած) լինի, եւ երբ Նարամ-Սինը մի յատուկ արշաւանքով կրկին եկաւ Արմանիի վրայ, իշխանութեան դուրս գտաւ Ռեդ-Տեղույին:

Գալով այն կարծիքին, որ խեթական արձանագրութեան բովանդակութիւնը կիսաառասպելական է եւ բերուած է աւանդութիւ-

նից, մենք այս տեսակէտին էլ համաձայն չենք: Սխալ չհասկացուելու համար ասենք, որ մենք չենք ուզում թխտել, որ կարող էին դոյութիւն ունեցած լինել առասպելներ Նարամ-Սինի նման մի աշխարհակալի եւ խիզախ պատերազմիկի մասին,²⁹ դա շատ բնական է. բայց մեր արձանագրութիւնը չունի այդպիսի բնոյթ եւ նկարագիր: Ոչ ոք չի կարող, եւ իրաւունք չունի, պատկերացնել, որ մի աւանդական առասպել կարող էր իրար ետեւից յիշել 17 երկրների եւ 17 թագաւորների անուններ, այնինքն՝ իրար ետեւից յիշել 34 յատուկ անուններ, այն էլ մեծամասնութեամբ այնպիսի անուններ, որոնք պատմողի համար լեզուական ինչ որ ուշադրութիւն գրաւող նշանակութիւն չէին կարող ունեցած լինել:

Աւանդական առասպելը իւրաքանչիւր թագաւորի անունը յիշելիս՝ զոնէ նրա մասին մի բան կ'ասէր, եւ չոր ցուցակի ձեւով իրար ետեւից չէր բերի 17 երկրների եւ 17 թագաւորների անուններ: Հին Միջագետքում ծնունդ առած մի շարք առասպելներ հասել են մեզ սեպագիր արձանագրութիւններով (օրինակ՝ Գիլգամեշի եւ Ջրհեղձի առասպելները), բայց այդ զրոյցները կարգալիս՝ միանգամայն յայտնի է դառնում եւ զուտ ես, որ դրանք առասպել են, բայց այն ձեւը եւ ոճը, որ դառնում ենք մեր խեթական արձանագրութեան մէջ, յատուկ է հին Արեւելքի թագաւորական արձանագրութիւններին, որտեղ յիշատակուած են արքայի նուաճումներն ու կատարած շինարարական աշխատանքները: Եթէ այստեղ սկզբում չի բերուած Նարամ-Սինի աստուածային տիտղոսների բանաձեւը, ապա դա պիտի բացատրել ընդօրինակման կրճատմամբ: Ոչ մի կասկած, որ խեթական տեքստը ընդօրինակութիւն-թարգմանութիւն է մի այլ արձանագրութեան, որը կարող էր իսկական Նարամսինեան բնօրինակը եղած լինել, կամ, իր կարգին, նրա մի նախկին ընդօրինակութիւնը: Ի հարկէ մէկը միւսից ընդօրինակելիս՝ եւ մանաւանդ թարգմանելիս՝ կարող էին որոշ փոքր վրիպումներ եղած լինել, բայց դա դեռ չի վերացնում արձանագրութեան տուեալների պատմական լինելը:

Այստեղ պէտք է նշել, որ անցեալի մասին հետաքրքրութիւնը միայն մեր ժամանակներին չի պատկանում, եւ ոչ էլ անցեալի պատմութեան ու մշակույթի մասին հին ու նոր երկեր, մատեաններ, նը-

29) Նեօ-ասսուրական մի արձանագրութիւն է գտնուած, որտեղ լեզվապահան ոճով է պատմուած Նարամ-Սինի՝ խեթական արձանագրութեան մէջ յիշատակուած արշախի մասին (Cun. Texts 13, 44. տե՛ս Բ. Հրոզմու նշուած աշխատութիւնը, էջ 65):

կարներ եւ իրեր հաւաքելն ու պահելը (Թանգարաններ ու զբաղա-
րաններ կազմելը) յատուկ է միայն մեր ժամանակներին: Նինուէի,
Թեւ-Ամառնայի, Բողաղ-Քէօյի եւ այլ նշանաւոր հին ոստանների
պեղումներով յայտնաբերուած արխիւները ցոյց տուցին, որ հին
Արեւելքի ժողովուրդները մեծ հետաքրքրութիւն են ցուցաբերել այլ
երկրների պատմութեան ու մշակոյթի մասին: Աւարաուութեամբ
ձեռք բերուած նիւթերից զատ, յատուկ մարզիկ ու զբաղէտ-զիտնա-
կաններ են ուղարկել մէկը միւսի մայրաքաղաքը (ի հարկէ բարեկա-
մութեան պայմաններում) եւ ընդօրինակելով այդտեղ եղած պատ-
մական, զեղարուեստական կամ զիտական կարեւոր նիւթերը՝ բերել
են իրենց մօտ եւ մեծ խնամքով ու յարգանքով պահել: Անգամ իրենց
մօտ պահել են օտար զբաղիւրներ, թարգմաններ, զիտնականներ ու
արուեստագէտներ:

Նինուէի պեղումները յայտնաբերեցին բազմահազար սեպագիր
սալիկներ պարունակող զբաղաբան. դա Նինուէի մատենադարանն
էր, որտեղ պահուած սալիկները հաւաքածու էին, որոնց կարեւոր
մասը բերուած կամ ընդօրինակուած էր այլ երկրներից: Այդ զբա-
ղարանը «կազմուած էր սիստեմով. սալիկների մի մասը թաղաւորը
(Ասար-Հադզոն) ստացել էր մասնաւոր հաւաքածուներից, իսկ մեծ
մասը պատճէններ էին, որոնք թաղաւորը հրամայել էր պատրաստել
իր երկրի բոլոր զաւաճներում: Մի անգամ իր պաշտօնեայ Շադա-
նուին ուղարկելով Բարելոն, նրան տուել էր հետեւեալ հրահանգը.
«...Այն թանկարժէք սալիկները, որոնց պատճէնները չկան Ասորես-
տանում, գտէք եւ բերէք ինձ: Ես զրեցի գլխաւոր քրմին եւ Բորսիպ-
պայի նահանգապետին, որ դու, Շադանու, այդ սալիկները պահելու
ես քո պահեստում, եւ խնդրեցի, որ ոչ ոք չպէտք է հրաժարուի դը-
րանք քեզ յանձնելուց: Եթէ դուք իմանաք, որ այս կամ այն սալիկը
կամ ծիսական տեքստը յարմար են պալատի համար, որոնեցէք,
վերցրէք եւ ուղարկեցէք այստեղ»³⁰: Այս դէպքը մեզ յիշեցնում է
Պորենացու հաղորդած այն դրոյցը, թէ հայոց Վաղարշակ թաղաւորը
Մար Աբասին ուղարկել է Նինուէ՝ Արշակի մօտ, ընդօրինակելու հա-
յոց անցեալի մասին այդտեղի գիւմանում պահուած հին գրութիւն-
ները:

Սարգոն Ակկադացու մի արշաւանքի մասին պատմող արձա-
նագրութեան 3 պատճէններ են դտնուել, մէկը Թեւ-Ամառնայում,

30) Կ. Կերամ, «Աստուածներ, դամբարաններ, գիւմակամներ», Երեւան,
1966, էջ 307:

մէկը Աստուրում, իսկ միւսը Բողաղ-Քէօյում: Այս երեւոյթը մեր
հարցի համար հետաքրքրական է նաեւ նրանով, որ թէեւ Թեւ-Ամառ-
նայի եւ Աստուրի օրինակները ակկադական լեզուով են գրուած,
բայց Բողաղ-Քէօյի օրինակը գրուած է նեսիտ-խեթերէնով³¹:
Այս առթիւ Գ. Կոնտենոն ասում է. «Սա մի տպաւորիչ օրինակ է
այն հետաքրքրութեան, որ Փոքր-Ասիան ցուցաբերում էր Միջա-
գետքի մշակոյթի նկատմամբ, քանի որ նա վերցնում ու թարգմա-
նում էր բնագրեր, որոնք անկասկած ունէին իրենց հոչակը: Փորրէրը
իր ուսումնասիրութիւնների մէջ (1919) ութից ոչ պակաս տարբեր
լեզուներ էր յայտնաբերել Բողաղ-Քէօյի գրութիւնների մէջ (սումե-
րական, ակկադական, նախա-խեթական, լուիտական, պալատա-
կան, խուրրիական, հնդ-իրանական եւ վերջապէս նեսիտական)»³²:

Ի՞նչ էր պատճառը, կամ ո՞րտեղ էր Սարգոն-Ակկադացու ար-
ձանագրութեան կարեւորութիւնը խեթերի համար, որ այն թարգ-
մանել են իրենց լեզուով, երբ իրենց մօտ կարող էին պահել նրա ակ-
կադերէն օրինակը, ինչպէս պահուած էին տարբեր լեզուներով արձա-
նագրութիւններ: Դրա պատճառը շատ պարզ է. այդ արձանագրու-
թեան մէջ կար խեթական երկրի (մեզ համար յայտնի ամենահին)
յիշատակութիւնը, ուստի այն թարգմանել են՝ հաւանաբար օգտա-
գործելու նաեւ ուսումնական գործում, որպէս իրենց երկրի հին
պատմութեան մի հատուածը:

Ահա նոյնպիսի կարեւորութիւն ունէր նրանց համար Նարամ-
Սինի մասին պատմող մեր խեթական արձանագրութիւնը: Այդտեղ
յիշատակութիւն կար Hatti երկրի եւ նրա Pamba (մեզ յայտնի առա-
ջին) թաղաւորի մասին, այդ պատճառով էլ այն թարգմանել են խե-
թերէնի, եւ հաւանաբար դրա եւ նմանների բազմաթիւ օրինակներն
ունէին մագաղաթների կամ նման այլ նիւթերի վրայ օգտագործելու
համար անգամ ուսման գործում, որոնք փչացած պիտի լինեն մեզ
հասնելուց առաջ:

Ամփոփելով վերեւում բերուածը, ասենք, որ «Նարամ-Սինը
եւ իր թշնամիները» անուամբ յայտնի խեթական արձանագրութիւնը
պատմական վստահելի վկայութիւններ պարունակող յիշատակարան

31) G. Contenau, «La Civilisations des Hittites et des Mitanniens», Paris, 1934,
p. 51:

32) G. Contenau, «La Civilisations des Hittites et des Hurrites du Mitanni»,
Paris, 1948, p. 38:

է, մի բան, որ ընդունուած է մի շարք յայտնի եւ բազմահմուտ արեւելագէտներէ կողմից:

Այդ արձանագրութեան հաւաստութիւնը վիճարկողներէ պատճառարանութիւնները չեն դիմանում քննութեան:

17 երկրներէ մէջ յիշատակուած **Armani**-ի (արձանագրութեան տուեալներէ թելագրանքից ելնող) տեղագրումը համընկնում է աշխարհագրական այնպիսի շրջանի, որը հետագայ խեթական, ասուրական, խալդական արձանագրութիւններէ մէջ յիշուած է **Alzi, Alzini, Urme, Arme** եւ **Šupria** անուններով:

Այս տեղագրութեան ճշտութիւնը ապացուցուած է խեթական արձանագրութիւնից դուրս՝ Նարամ-Սինի՝ Դիարբեկիւրի մօտակայքում թողած յաղթական կոթողով, եւ այս արքայի մի այլ խակական արձանագրութեան մէջ **Armani**-ի մի անգամ եւս եւ առանձին առիթով յիշատակուած լինելու փաստի քննութեամբ:

Դեռ սա ամբողջը չէ: Դեռ կան այլ հանգամանքներ եւ փաստեր, որոնք տարակոյս չեն թողնում **Armani**-ի այս տեղագրման ճշտութեան եւ նրա **Arme, Armina** կամ **Armenia** անուան հետ ունեցած նոյնութեան համար:

2. ՆԱՐԱՄ-ՍԻՆԻ ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻԻՆԸ —

ԱՐՄԱՆՈՒ ԵՒ ԻԲԼԱ

Եփրատ եւ Տիգրիս գետերը Միջագետքի հին բնակիչներէ (սումերներէ, ակկադացիներէ, ասորեստանցիներէ) համար ունեցել են կենսական մեծ նշանակութիւն, եղել են կեանքի մշտական եւ հիմնական աղբիւր: Եփրատ եւ Տիգրիս գետերի հեղեղումները դաշտերի բերրութեան՝ փարթամ բուսականութեան աճի համար ունեցել են դործնական արժէք եւ միաժամանակ բնակիչներին ահաբեկող անդրմաղբիլի ուժ, ուստի պատահական չէ, որ այս զոյգ գետերը հին ժամանակներում եղել են պաշտամունքի առարկայ:

Սումերները իրենց ջրի **Ea** աստծուն (որի տաճարը գտնուած էր **Eridu**, ըստ սումերներէ՝ ամենահին քաղաքում) պատկերացնում էին ձեռքում բռնած մի սկիհով, որից հոսում ու գետին էին թափուած

ջրի երկու առանձին շիթեր, որոնք խորհրդանշում էին Միջագետքի զոյգ գետերը³³:

Ի հարկէ սումերներն ու ակկադները Եփրատի եւ Տիգրիսի մասին ունէին աւանդական առասպելներ, ինչպէս ջրհեղեղի առասպելը³⁴: Այս գետերի հետուոր աղբերակունքները եւ նրանց բխեցնող հիւտիսային լեռնաշխարհը ունէին առեղծուածային խորհրդաւորութիւն՝ որպէս առասպելական դանձերի եւ որպէս աստուածների ընդհատվայր լեռներէ աշխարհ: (Սումերները հաւատում էին, որ աստուածները բնակուած են լեռների գագաթին, զրա համար իրենց աստուածներէ համար կառուցում էին զիկուրատներ): Եւ ոչ մի կասկած, որ նրանց մէջ բուռն հետաքրքրութիւն եւ մեծ մղում պիտի առաջանար այդ տեղերին հասնելու, իմանալու, ճանաչելու կամ զբաւելու եւ ունենալու ցանկութիւններով: Սակայն իրենց պատմութեան սկզբնական շրջաններում իրենց հետաքրքրութեան համար այդ լեռնաշխարհը անհասանելի ընդթ ունէր, եւ թէեւ հաղորդակցութիւնների եւ փոխադրական նպատակների համար այս գետերը ունէին գործնական կարեւոր նշանակութիւն, բայց գետերի հոսանքի մեծ ուժը փոխադրութիւնները (փշած տիկերով, լաստերով, նաւակներով) հնարաւոր էին դարձնում միայն հոսանքն ի վար եւ ոչ թէ հոսանքն ի վեր, մանաւանդ որ դժուար էր իրարից անկախ եւ ռազմականորէն տկար քաղաք-պետութիւնների բնակիչներէ ու տէրերի համար թափանցել գետերի վերին հոսանքներում ապրող թշնամական երկրները: Բայց անգամ Ասորեստանի Սաղմանասար Գ.ի համար կրօնական պարտքի եւ արքայական պատուի եւ հեղինակութեան հարց է եղել հասնել, տեսնել ու զբաւել Տիգրիսի եւ Եփրատի ակնադրիւրները: Նա մի արձանագրութեան միայն դրում է. «Իմ զահակալութեան տասնհինգերորդ տարին ես առաջացայ դէպի Տիգրիսի եւ Եփրատի ակնադրիւրները. ես քանդակեցի իմ արքայական նկարը նրանց ժայռերի վրայ»³⁵:

Քաղաք-պետութիւններին գէնքի ուժով միացնելով ռազմի մեծ ռեսուրսներ կուտակող եւ մեծ բանակներ կազմող սումեր-ակկադեան հզօր արքաների համար այդ գետերի աղբերակունքների միջակայն խորհրդաւորութիւնը եւ նրանց լեռնաշխարհի անտառները (որպէս

33) Leonard Woolley, «Ur of the Chaldees», 1940:

34) Seton Lloyd, «Twin Rivers», p. 17-18:

35) D. Luckenbill, ԹՅՄ գրքում, էջ 205:

չինանիւթ) եւ հարուստ հանքավայրերը (որպէս պղինձ, երկաթ, արծաթ եւ ոսկի) իրենց հետաքրքրութեան, ընչաքաղցութեան եւ հպարտութեան համար այնքան դայթակղեցուցիչ պիտի լինէին, որ նրանք չէին կարող չփորձել արկածախնդրական արշաւանքներով թափանցելու գետերի վերին հոսանքներում գտնուող թշնամական երկրները եւ անգամ հասնելու այդ աղբերակունքների հարուստ եւ առեղծուածային լեռնաշխարհը:

Erech-ի արքայ Lugal-Zaggisi-ն, որ իր իշխանութեան տակ միացրել էր սումերական մի քանի քաղաքներ, Եփրատ եւ Տիգրիս գետերի վրայով հասել է «Վերին ծով»: Նա իր մի արձանագրութեան մէջ ասում է, թէ «... երբ Enlil աստուածը՝ երկրների (Սումերի) արքան Lugal-Zaggisi-ին յանձնել էր երկրների թագաւորութիւնը եւ շնորհել նրան յաջողութիւն երկրի առաջ, եւ երբ նրա հզորութիւնը երկրներին խոնարհեցրել էր եւ նա նրանց յաղթել էր արեւի ծագումից մինչեւ նրա մայրամուտը, այդ ժամանակ նա ուղիղ ճամբայ բացաւ Ներքին Ծովից Եփրատի եւ Տիգրիսի վրայով մինչեւ Վերին ծովը. արեւի ծագումից մինչեւ նրա մայրամուտը Enlil-ը շնորհեց նրան իշխանութիւն...»³⁶: «Վերին Ծով» արտայայտութիւնը ի հարկէ այստեղ ներկայացնում է Վանայ լիճը:

Եթէ Lugal-Zaggisi-ն, որ Սումերի ոչ բոլոր քաղաքներն էր բերել իր իշխանութեան տակ, կարողացել էր Եփրատ եւ Տիգրիս գետերով հասնել Վերին Ծով, ապա ակեղաղական հզոր արքաները՝ Սարգոնն ու Նարամ-Սինը, որոնք նուաճել էին ամբողջ Սումերը, Ակկադը եւ տիրում էին Միջագետքի եւ հարեւան երկրների շատ աւելի մեծ տարածութիւնների ու ցեղերի վրայ, բնականաբար եւ անկասկած Lugal-Zaggisi-ից, Gudea-ից եւ ուրիշներից պիտի ետ չմնային եւ պիտի արշաւէին Եփրատ եւ Տիգրիս գետերով դէպի նրանց աղբերակունքների երկրներն ու լեռնաշխարհը (անգամ հետագայ Ասորեստանի Սարգոնը հպարտութեամբ յիշում է Արմանին նուաճած լինելը):

Ահա այսպիսի նպատակ հետապնդած պիտի լինի Նարամ-Սինի դէպի Արմանի կատարած արշաւանքը, որին նուաճած լինելը հպարտութեամբ նշած էր յատուկ արձանագրութեամբ: Այս արշաւանքը նա կատարած պիտի լինի իր դահակալութեան եւ նուաճումների սկզբնական շրջանում: Հաւանաբար նա հետեւելով իր մեծ հայր

Սարգոնին, որպէս մեծ եւ հզոր արքայ, իր արժանապատուութեան ու վեհափառութեան համար սրբազան պարտք էր համարել հասնելու երկու գետերի աղբերակունքների երկրներն ու աշխարհը, ինչպէս իր պապն էր արել (մի արձանագրութիւն յիշում է Սարգոնի կողմից Լուլուբիի, Արմանիի եւ Ակկադի նուաճուած լինելը): Մենք կարծում ենք, որ Արմանին նուաճելը սումեր-ակկադեան մեծ արքաների համար գործնական նպատակներից դատ ունէր նաեւ կրօնաբարոյական նշանակութիւն, որովհետեւ այն գտնուում էր երկու սրբազան գետերի աղբերակունքներն ընդգրկող եւ աստուածների նստավայր հանգիստացող լեռնաշխարհում:

Նարամ-Սինը, ինչպէս ասացինք, Արմանին նուաճած լինելը նշած է յատուկ արձանագրութեամբ: Այդ արձանագրութեան տեքստը որ տեսանք «Մակոտկէն սկաւառակ A»-ի վրայ, ընդհատուած էր Արմանի անունից յետոյ՝ սկաւառակի մի մասի կտորուած լինելու պատճառով: Արեւելագէտներից ոմանք կարծել են, թէ այդ արձանագրութիւնը (եթէ միաստուած չլինէր) իր ամբողջութեամբ պիտի յիշեցնէր Նարամ-Սինի՝ իր 17 թշնամիների դէմ կատարած (սեթական արձանագրութեամբ յայտնի) արշաւանքի մասին, մինչդեռ իրականում դա, ինչպէս նշել ենք վերելում, վերաբերում էր Նարամ-Սինի մի այլ առանձին արշաւանքին:

Բարբարաւտարար մեզ յաջողուեց ունենալ այս արձանագրութեան աւելի լրիւ տեքստը, որն Արմանիի տեղադրման համար մեծ նշանակութիւն ունի: Երեւի այն հայագիտութեամբ զբաղուողների ուշադրութիւնից հեռու է մնացել տեքստը թարգմանողի մի սխալի պատճառով:

Սեպագիր արձանագրութիւնը փորագրուած է եղել մարմարի բեկորի վրայ. տեքստի տառադարձութիւնն ու թարգմանութիւնը կատարուել են de Genouillac-ի կողմից. բերում ենք այդ արձանագրութիւնը.

MARBLE FRAGMENT

il^{na-ra-am} d^{EN-ZU} da-lum Šar Ki-ib-ra-tim ar-ba-im nar ar-ma-nim^{ki} U ib-la^{ki} 27

36) L. W. King, «A History of Sumer and Akkad», London, 1916, p. 194:

37) Գ. Ա. Բարսոն, Աշուած գիրքը, էջ 138:

MARBLE FRAGMENT

The divine Naram-Sin, The mighty, King of the four regions the conqueror of Amarnu and Ibla³⁸.

Բերում ենք թէ ակկադերէնի, թէ անգլերէնի թարգմանութիւնը.

ԱԿՎԱԳԵՐԷՆԻՑ

Աստուածային Naram-Enzu-ն (Naram-Su-en)՝ հզօր արքան (աշխարհի) չորս կողմերի, նուաճողը Armani-ի և Ibla-ի.

ԱՆԳԼԵՐԷՆԻՑ

Աստուածային Naram-Sin-ը, հզօր արքան չորս շրջանների, նուաճողը Amarnu-ի և Ibla-ի.

Ինչպէս երեւում է, տեքստի տառադարձման և թարգմանութեան հեղինակը Արմանի անունը ճիշդ է բերում տառադարձութեան մէջ, բայց թարգմանութեան մէջ Արմանու-ի փոխարէն սխալմամբ գրել է Ամարնու: Այս սխալը նա կատարած պիտի լինի կամ միտքը բնազդօրէն Արմանու-ի փոխարէն Ամարնու թելադրած (եղիպտոսի Amarna-ի մասին շատ կարգացած, լսած ու գրած) լինելով, կամ խկապէս նա գիտակցօրէն Արմանու-ն Ամարնու (Ամարնա) հասկանալով: Առաջին հայեացքով թարգմանութեան նայող ընթերցողը, եթէ նա գրազուում է հայագիտութեամբ, ուշադրութիւն չպիտի դարձնէր ի հարկէ Ամարնու-ին, որքան եթէ այնտեղ գրուած լինէր Արմանու, և ահա, կարծում ենք, այս պատճառով հայագիտութեան համար շատերի կողմից անտեսուել է այս կարեւոր արձանագրութիւնը:

Ինչպէս երեւում է, մարմարի բեկորի վրայ փորագրուած այս արձանագրութիւնը պարունակում է ճիշդ միեւնոյն տեքստը, որ գրոյժուած է «Մակրոակէն սկաւառակ A»-ի վրայ, միայն այն տարբերութեամբ, որ «Մակրոակէն սկաւառակ A»-ից սրահասում է Իրլանդիանում՝ այդ մասը կտարուած լինելով:

³⁸ Նոյն տեղում, էջ 139:

Այս արձանագրութեան մի այլ օրինակում, ինչպէս ասացինք, Արմանուի և Իբլայի հետ յիշուում է նաև Արմանու երկրի թագաւոր Ռեդ-Ադադը³⁹ (Ռեդ-Տեշաւադ):

Այս երեք օրինակները ցոյց են տալիս, որ Նարամ-Սինի այս արձանագրութիւնը ունէր շատ օրինակներ գրուած տարբեր նիւթերի վրայ, երեւի ցուցադրուելու կամ պահելու համար սուժեր-ակիւզական տարբեր տաճարներում կամ գիււաններում, մի բան, որ ցոյց է տալիս, թէ Նարամ-Սինը ինչքան մեծ կարեւորութիւն է սուել իր այս արչաւանքին ու նուաճմանը:

Ինչպէս պարզ երեւում է այս արձանագրութիւնից, Նարամ-Սինը մի արչաւանքով նուաճել է Արմանին և Իբլան. դրանից կարելի է կռահել, որ Արմանին և Իբլան հարեւան երկրներ էին, կամ մէկը Տիգրիսի, իսկ միւսը Եփրատի վերին հոսանքների երկիր էր:

Որտե՞ղ է գտնուում Իբլան: Ըստ մեզ, այս հարցի պատասխանը շատ կարեւոր է Արմանի տեղագրումը ստուգելու համար: Այն կը լինի մի շօշափելի և կոնկրէտ փաստ Արմանի տեղագրումը վերջնականապէս հաստատուած համարելու համար:

Հարցի լուծման համար որպէս երակէտ նորից յիշեցնում ենք, որ հզօր Նարամ-Սին արքայի համար արժանապատուութեան ու փառքի պարտք պիտի համարուէր հասնել ու նուաճել Եփրատ և Տիգրիս գետերի աղբերակունքների լեռնաշխարհի երկրները:

Ի հարկէ այդ երկրներից առաջինն ու կարեւորագոյնը Արմանին էր, որը տեղադրեցինք Ադնիքի և Արմէ-Շուպրիայի տեղում, իսկ Իբլան, դատելով արձանագրութեան մէջ Արմանից յետոյ յիշուած լինելուն, պիտի գտնուէր աւելի հեռու և աւելի վեր քան Արմանին: Ուստի մենք գտնում ենք, որ Իբլա երկրի կամ լեռներից յիշատակը պահած է Գիւրբեկիցից վեր հայկական Տաւրոսի հիւսիսային կողերում և Արածանիի ափին գտնուող Բալու քաղաքն ու Բալախովիտը, ինչպէս նաև Պաղիմ բերդն ու Պաղնատունը, և անհաւանական չի թուում մեզ, որ Արեղեանների նախահայրերը այս շրջանից շարժած լինեն դէպի հիւսիս-արեւելք:

Այսպիսով գտնում ենք, որ Հայկական Տաւրոսի մի կողմում

³⁹ Ա. Քիֆիշիմ, «Հին Շումերների աշխարհագրական պատկերացումները Պատեսի Գուդէայի ժամանակներում», Պաղեստինեան Ժողովածու, Գիտ. Ակադ. ՍՍՀՄ, պրակ 13/76/1965, էջ 64-65:

(Գիտարեկիրի եւ Սասունի շրջաններում) գտնուում էր Արմանին, իսկ միւս կողմում (Մալաթիայի եւ Բալուսի շրջաններում) գտնուում էր Իրլամ, այնպէս որ Արմանին կարելի էր հասնել աւելի հեշտ Տիգրիսով, իսկ Իրլային՝ Եփրատով: Այլ խօսքով՝ սուսեր-ակկադական արքաների համար Արմանին այն երկիրն էր, որ գտնուում էր Տիգրիսի ազրերակունքների լեռնաշխարհում, իսկ Իրլան՝ Եփրատի:

Նարամ-Սինի մեծ հայր Սարգոնի նուաճումների մասին պատմող երկրագրեան (սուսերերէն եւ ակկադերէն) մի արձանագրութեան⁴⁰ մէջ յիշուում է, որ նա նոյնպէս հասել ու գրաւել է Իրլան: Բերում ենք արձանագրութեան այդ մասին թարգմանութիւնը⁴¹.

«... Սարգոն արքան Tutuli-ում Դագանին մատուցեց պաշտամունք, վերին երկիրը... նա տուեց Mari-ն, Yarmuti-ն եւ Ibla-ն մինչեւ անտառ մայրիների եւ լեռները արծաթի՝ Սարգոնին,»:

Ի հարկէ Սարգոնը՝ յիշուած այս վայրերը գրաւելու համար շարժուած պիտի լինի Եփրատով դէպի վեր: Վերին երկրներից նա առաջինը հասել է Mari, որ ամորիտների մայրաքաղաքն էր (սա տեղագրուում է ներկայ Իրաք-Սուրիա սահմանի Եփրատը հատող կէտում)⁴², յետոյ հասել է Yarmuti եւ ապա Եփրատով աւելի վերերը շարժուելով՝ հասել է Ibla երկիրը, այստեղից դուրս գալով Եփրատից՝ ուղղուել է դէպի արեւմուտք եւ հասել «մինչեւ» Կիլիկիայի Ամանոս լեռան մայրիների անտառը եւ արծաթի լեռները:

Ինչպէս տեսնում ենք, այս երթով գրաւուած երկրների շարքում Իրլայի գիրքը չի հակասում նրա տեղագրման հայկական Տարրուում:

Կայ եւ շատ աւելի կոնկրէտ ապացոյց Իրլայի մեր այս տեղագրման եւ նրա Արմանիի հետ ունեցած հարեւանութեան համար. դա հետեւեալն է.

40) Գ. Ա. Բարտոն, Յշուած գիրքը, էջ 108—109:

41) Թարգմանութիւնը կատարել ենք Բարտոնի գրքում բերուած անգլիերէնից, էջ 109:

42) Seton Lloyd, «Twin Rivers», տե՛ս քարտէզ, էջ 19:

3. ԳՈՒԳԷԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ—ԻԲԼԱ ԵՒ ՈՒՐՍՈՒ

Սուսեր-ակկադների մեծ արքայ Gudea-ն իր կատարած շինարարութիւններին շինանիւթ հայթայթելու համար կատարել է մեծ արշաւանք մի շարք երկրներ, ինչպէս եւ հիւսիսային երկրները՝ նոյնպէս հասնելով մինչեւ Կիլիկիայի Ամանոս լեռը: Այս մասին թողած մի արձանագրութեան մէջ նա յիշուում է, որ շինարարութեան մէջ որպէս հեծան օգտագործելու համար Իրլա լեռան Ուրու քաղաքից կարել բերել է ծառեր գրանք դերանների վերածելուց յետոյ: Ահա այդ արձանագրութեան մեղ հետաքրքրող մասը.

«Երբ տուեց Ningirsu-ի նա կառուցեց, Ningirsu-ն, արքան որին նա սիրում է, վերելի ծովից մինչեւ ներքեւի ծովը բացաւ իր ճամբան ինչպէս դուռ. Amanus-ից՝ մայրիների լեռից մայրի ծառեր, որոնց երկարութիւնը 60 կուրիտ էր, մայրի ծառեր, որոնց երկարութիւնը 50 կուրիտ էր, Ukurinu ծառեր, որոնց երկարութիւնը 25 կուրիտ էր, նա վերածեց դերանների եւ բերեց վար այդ լեռից: Մեծ յենակներ, փոթորիկներին դիմադրելու, նա շինեց, մեծ խոտոչներ (?) բրոնզից շինուած, եօթ աշքերով նա շինեց. մշակուած բրոնզից լամելու ձեռքի բաժակներ նա շինեց. կոսանիլի բրոնզից մի լծակ (?) նա շինեց. այդ մայրի փայտից մեծ դռներ նա շինեց, մետաղեայ աստղերով դեղեցկացրեց դրանց, Eninnu-ում նա դրեց դրանց Emakh-ում, որը բերուած էր ցած, դերաններ որպէս սիւներ նա դրեց: Ursu քաղաքից, [որ գտնուում է] Ibla լեռան վրայ, Sapalu ծառեր, մեծ amalu ծառեր, tulubu ծառեր անտառոտ լեռան՝ վերածեց դերանների, VI, Eninnu-ում որպէս սիւներ նա տեղադրեց.....»⁴³:

Այս արձանագրութեան մէջ մեզ համար կարեւորը այն է, որ Իրլա անունով կոչուել են թէ երկիրը (ըստ Սարգոնի եւ Նարամ-Սինի) եւ թէ լեռը: Այլ խօսքով՝ Իրլա-ն մի լեռներկիր է, որտեղ գտնուում է Ուրու անունով քաղաքը: (Այստեղ աճել են Sapalu տնունով ծառեր, որոնք օգտագործուել են շինարարութեան մէջ: Մենք ենթադրում ենք, որ շինարարութեան մէջ օգտագործուած այս ծառի հին անունը պահուած է մեր ծվիկ բառի մէջ):

43) Թարգմանութիւնը բերում ենք Բարտոնի գրքում (էջ 183 եւ 185) բերուած անգլիերէն քարգմանութիւնից, այն համեմատելով բնագրի տառադարձութեան հետ:

Այստեղ ցանկանում ենք գոհունակութեամբ նշել, որ Ա. Քի-
 Փիշինը իր վերելում նշուած շատ արժէքաւոր յօդուածով Նարամ-
 Սինի յիշած Արմանին նոյնացնում է («մ. թ. ա. Ա. Հազարամեակի
 սղօրէրներում յիշուած») Արմէ երկրի հետ: Նա Արմանին, իրաւա-
 ցիօրէն, տեղադրում է Տիգրիսի վերին հոսանքի եւ Վանայ լճի շրջա-
 նում: Այստեղ միայն չենք կարող համաձայնուել յարգելի դիտնա-
 կանի՝ Գուդէայի նշած Ուրսու քաղաքի եւ Իբլա լեռան համար ցոյց
 տուած տեղերի հետ: Նա Ուրսուն տեղադրում է ներկայ Ուրֆա քա-
 ղաքի տեղում, որը գտնուում է ոչ թէ լեռան վրայ, այլ դաշտային
 շրջանում (Ուրֆա-ն Պուրրիների մայրաքաղաք Urhói-ն է, ծագած
 է Պուրրի անունից. այն՝ Պուրրիներից առաջ չկար), մինչդեռ
 Գուդէան իր արձանագրութեան մէջ, ինչպէս տեսանք, շատ պարզ
 նշում է, որ Ուրսու քաղաքը գտնուում է Իբլա լեռան վրայ, որտեղից
 նա կտրել է ծառեր շինարարութեան մէջ օգտագործելու համար: Ոչ
 մի կասկած, որ Իբլա լեռն ու երկիրը, նրանց հետ եւ Ուրսու քա-
 ղաքը, գտնուում էին, ինչպէս նշեցինք, Բալուի շրջանում. դրա հա-
 մար ունենք նաեւ մի կոնկրէտ ցուցմունք-ապացոյց Ուրարտուի ար-
 քայ Մենուայի մի արձանագրութեան մէջ:

4. ՄԵՆՈՒԱՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻԻՆԸ —
 ՈՒՐՍԱ ԵՒ ՈՒՐՄԷՆՈՒԵՒՆԻ

Այսպէս իմանալով, որ Ուրսու (կամ Ուրսա) անունով քաղաքը
 գտնուել է Իբլա երկրում եւ լեռան վրայ՝ Իբլայի մեր տեղադրու-
 թեան եւ նրա Արմանիի հետ ունեցած հարեւանութեան համար փաս-
 տական մեծ նշանակութիւն է ստանում Ուրարտուի Մենուա արքայի
 հետեւեալ արձանագրութիւնը, որը գտնուել է մի քանի մնասուած
 բեկորներով Մուշի արեւելեան կողմում գտնուող Trmerd գիւղում:

ԲԵԿՈՐ A

1 [.] Su(?) [.]
 [KUR(?)] a-la-ú [.]
 [KUR ur-me-ú-hi-d [1]

[KUR(?)] a-la-ú [.]
 5 SU-Ū-i-du-l [1]
 [za] -a-a[š] -gu-b [1]
 URU ur-šá-[i] -ni [.]
 [h] a-ú-bi KUR e-ba-[a-ni]
 KUR ur-me-ú-hi-ni-ni-e (?) - di
 10 Su-tu-qu-bi du [.]
 [.] a-i [.] di [.]
 [.] KUR^{mes} [.] lu [.]
 [.] ni

մնացած մօտ նոյնքան տողեր շատ մնասուած են⁴⁴:
 Բերում ենք այս տեքստի թարգմանութիւնը Մեյքելզիլեից.

ՖՐԱԳՄԵՆՏ A

...երկիրն(?) Ալաու [. . .] . . . Ուրմէուի երկրի դէմ...
 երկիրն (?) Ալաու [. . .] . . . եւ մղեցի նրանց... մահացրի...
 Ուրշա [. . .]-նի քաղաքը... նուաճեցի երկիրը... Ուրմէուի երկրի
 դէմ... ճնշեցի... երկիրը... եւ դնացի...⁴⁵

Բերում ենք նաեւ Աէյսի թարգմանութիւնը Ադոնցի գրքից.

(MENUA FILS D'ISPUINI)

... à P Alauⁿi (?), P Urmeniuhi-di. Il ruina P Alauⁿi, massacra

44) Գ. Ա. Մեյքելզիլի, Ուրարտական սեպագիւ արձանագրութիւններ, Մոս-
 կուա, 1960. էջ 162:

45) Նոյն տեղում, էջ 164:

«des habitants» de ^VUrsai-ni conquit le pays, nivela au sol ^PUrmeniuhini-ni ...⁴⁶

Արձանագրութեան տուեալներէն պարզ է, որ Մենուան Եփրատից այն կողմ չի անցել, եւ Հայկական լեռնաշխարհից դուրս չի ելել. արձանագրութիւնն էլ գտնուել է Մուշի շրջանում: Մենուան այստեղ յիշում է Ալաու եւ Ուրմէնիսի⁴⁷ (կամ Ուրմենիուսի) երկրները եւ Ուրշա[...] (կամ Ուրսա) քաղաքը: Ալաուն տեղագրութեամ է Մուշից մի քիչ արեւմուտք⁴⁸, իսկ Մուշից հեռու չպիտի լինեն ուրմէնիսի երկիրն ու Ուրշա[...] (Ուրսա) քաղաքը, որոնց իրար մօտ լինելը նոյնպէս պարզ հասկացւում է արձանագրութիւնից:

Կարծում ենք, որ սրանից աւելի կոնկրէտ ապացոյց փնտռել աւելորդ է. Մենուայի յիշած Ուրշա (կամ Ուրսա) քաղաքը ներկայացնում է Gudea-ի յիշած Ուրսու քաղաքը եւ որով՝ Իբլա-ն, իսկ Ուրմէնիսի⁴⁹ (կամ Ուրմենի[ուսի]ն) էլ՝ Արմանին:

Հետեւաբար պիտի կասկածից վեր համարել, որ Նարամ-Սինի նուաճած Արմանի եւ Իբլա երկրները գտնուում են մեր տեղագրած տեղում՝ Արմանի-ն Իլարբեկի — Սասունի շրջանում, իսկ Իբլա-ն՝ Բալու — Բալահոյիտի շրջանում:

Այսպիսով պիտի հաստատուած համարել, որ ակկադական արքաների՝ Սարգոնի եւ Նարամ-Սինի յիշած Արմանին, գտնուելով Աղձնիքում կամ Արմէ-Շուպրիայում, այլ երկրանուն չէ, բայց եթէ միայն ուրարտական արքաների յիշած Արմէ կամ Ուրմէ, պարսկական արքաների յիշած Արմինա կամ Արմնի եւ յոյների յիշած Արմենիա երկրի անունը:

Ուստի մենք ընդունում ենք, որ Արմենիա անուան նախնական

⁴⁶) Nicolas Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, p. 154.

⁴⁷) Մեդիֆիշվիլիս իր յիշում գրքի 164-րդ էջի վրայ քիւ 1 ծածօքագրութեամ տակ Ur-me-u-hi-ni-ni-ի մասին գրում է, քէ արձանագրութեամ՝ վրացական քանդակում գտնուող էստամպատ-ի վրայ այս անուամ me եւ վանկերի արձանում ni վանկը չկայ եւ դրա համար տեղ էլ չկայ: Մեմֆ գտնում եմք, որ Ur-me-(-u-hi)-ni-ni-ն իմաստի տարբերութիւն չունի Ur-me-ni (-u-hi)-ni-ից, ուստի Սէյսը սխալ չի հասկացել գրելով Ուրմենիուսի:

⁴⁸) Հայկական ՍՍՀ առկա, էջ 102. տե՛ս ԱԱՅԱ (Հայկական Տարածքի վրայ):

եւ հնագոյն ձեւը եղել է Արմանի: Յաջորդ գլուխներում ցոյց կը տանք նաեւ, որ Արմանի անունը պատկանում է (ոչ թէ ուրիշ ցեղերին, ինչպէս կարծում են ոմանք, այլ) հայերին:

Այս գլուխը փակելուց առաջ չենք կարող շանդրադառնալ Դարեհի՝ Բեհեստունի արձանագրութեանը:

5. ԴԱՐԵՀԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ — ԱՐՄԻՆԱ ԿԱՄ ԱՐՄՆԻԱ

Դժբախտաբար մեր ժողովրդի հնագոյն շրջանի պատմութեան համար մեր աղբիւրները եղել են օտարների եւ ընդհանրապէս թըշնամիների թողած յիշատակութիւններ, որոնք միշտ էլ եղել են միակողմանի եւ միտումնաւոր. նրանք շատ յաճախ ուռճացրած են ներկայացրել իրենց յաջողութիւններն ու յաղթանակները՝ լուելով իրենց պարտութիւնների կամ մեր սխրանքների մասին: Շատ անգամ էլ ազատազէլ են դէպքերը յօգուտ իրենց: Այս բանի լուազոյն օրինակներից մէկն է Դարեհի՝ Բեհեստունի ժայռի վրայ թողած արձանագրութիւնը:

Արձանագրութիւնը տեղեկացնում է, որ Դարեհի բանակը հինգ անգամ ճակատամարտ է մղել իր իշխանութիւնը մերժող ու չճանաչող հայերի դէմ. ճակատամարտերից երեքը Դադարչիչի եւ երկուսը՝ Վառամիսայի ղեկավարութեամբ, եւ իբր թէ հինգ ճակատամարտում էլ Ահուրամազդայի շնորհիւ իրենք են յաղթել: Մինչդեռ արձանագրութեան ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, որ բնաւ էլ այդպէս չի եղել, ինչպէս գրում է Դարեհը պոռոտախօսութեամբ:

Դադարչիչը, որ եղել է Դարեհի ծառայութեան մէջ գտնուող մի հայ գորավար, պարսկական բանակի գլուխն անցած մտել է Արմինա՝ հնագանդեցնելու համար հայերին:

Դարեհն ասում է, թէ հայերը ելան Դադարչիչի դէմ եւ պատերազմ մղեցին Արմինայի Զուզգա անուն մի տեղում. այս ճակատամարտից քիչ ժամանակ անց, հայերը երկրորդ անգամ առաջացան, Դադարչիչի դէմ ճակատամարտ տուեցին Արմինայի մէջ Տիգրա անուն ամրոցում, ապա, քիչ ժամանակ անց, շարունակում է Դարեհը, հայերը երրորդ անգամ առաջացան Դադարչիչի դէմ եւ երրորդ ճակատամարտը տուեցին նոյնպէս Արմինայում գտնուող Ուլամա անուն ամրոցում:

Այս երեք ճակատամարտերի ելքը մերկացնող ամենակարեւոր հանգամանքն այն է, որ հայերը պարսկական բանակի դէմ չորրորդ ճակատամարտը մղել են Հայաստանից դուրս՝ Ասորեստանի հողի վրայ, որտեղ Դարեհը Դադարչիչի տեղ նշանակել է Վաուսիսա անուն պարսիկին: Սրանից միանգամայն պարզ հասկացում է, որ Դադարչիչի ղեկավարութեան տակ գտնուող պարսկական բանակը երեք անգամ էլ պարտուել է եւ հայերը նրանց աստիճանաբար դուրս են հանել իրենց երկրից: Այլ խօսքով՝ երկրորդ ճակատամարտի տեղը եղող Տիգրա ամրոցն առաջինից՝ Զուզգա-ից աւելի մօտ է եղել Ասորեստանի սահմանին, իսկ երրորդ տեղը՝ Ուլամա-ն՝ սահմանին շատ մօտ, այնպէս որ չորրորդ ճակատամարտը մղուել է արդէն Ասորեստանում: Այլ խօսքով՝ հայերը երեք անգամ էլ հալածել են պարտուած թշնամուն անգամ Հայաստանի սահմանից այն կողմ՝ Ասորեստանի հողի վրայ: Դարեհը գրում է, թէ երրորդ պատերազմից յետոյ Դադարչիչը սպասեց իրեն մինչեւ նրա զալը Մարաստան: Սա պարզօրէն ցոյց է տալիս, որ Դարեհը Վաուսիսայի ղեկավարութեամբ Մարաստանից մի նոր բանակ է ուղարկել Դադարչիչի ջախջախուած բանակի օգնութեան, եւ հենց Վաուսիսայի ղեկավարութեամբ էլ հայերի դէմ մղուել է չորրորդ ճակատամարտը Ասորեստանում:

Երեւի այստեղ է, որ պարսիկներն ունեցել են որոշ յաջողութիւն, որովհետեւ հինգերորդ ճակատամարտը Վաուսիսան հայերի դէմ մղել է Հայաստանում: Այս հինգերորդ ճակատամարտում է, որ պարսիկները, ունենալով իրենց կայսրութեան հսկայ ռեսուրսները՝ յաղթել են հայերին:

Դարեհի այս արձանագրութեան մէջ, մեր ուսումնասիրութեան համար հետաքրքրականն այն է, որ նա երբ ընդհանրապէս խօսում է Հայաստանի մասին, այն անուանում է Արմինիյա, Արմինա, բայց ճակատամարտի կոնկրէտ վայրերն անուանելիս (թէ՛ Զուզգա-ի, թէ՛ Տիգրա-ի եւ թէ՛ Ուլամա-ի անուանման առթիւ)՝ Արմինիյա-ի փոխարէն գրում է Արմինիյա: Մենք չենք կարող ընդունել, որ սա գրագրի սխալի կամ վրիպման արդիւնք է. այդ վրիպումը չէր կարող պատահել երեք անգամ:

Մեզ համար զարմանալին այն է, որ արձանագրութիւնն առաջին անգամ ընդօրինակող եւ բաղմահմուտ գիտնական H. C. Rawlinson-ի (որի փանթերի շնորհիւ սեպագրերի վերծանումը վերջնականապէս լուծուեց) ընդօրինակութիւնների մէջ, որ առաջին անգամ

հրատարակուել է 1847 թուականին, վերոյիշեալ երեք ճակատամարտերի վայրերի անուանման առթիւ, երեք անգամ էլ Արմինիյա-ի փոխարէն ունի Արմանիյա. եւ Կ. Բասմաջեանն էլ այսպէս բերել է իր աշխատութեան մէջ:

Սակայն L. W. King-ը, որ R. C. Thompson-ի հետ ուղարկուել էր Բեհեստուն Անգլիական թանգարանի (British Museum) կողմից, կատարեց նոր և (ըստ Կինգի ասելուն) ճշտուած ընդօրինակութիւն: Կինգը այս նոր ընդօրինակութեան մէջ՝ արձանագրութեան

յիշուած երեք տեղերում $\overline{\text{𐎠𐎵}} \overline{\text{𐎠𐎡}} \overline{\text{𐎠𐎢𐎴}} \overline{\text{𐎠𐎢𐎰}}$ $\overline{\text{𐎠𐎢𐎴}} \overline{\text{𐎠𐎢𐎰}}$ $\overline{\text{𐎠𐎢𐎴}} \overline{\text{𐎠𐎢𐎰}}$
 ա ր մա ն ի յա

(Armaniya)-ի փոխարէն բերում է $\overline{\text{𐎠𐎵}} \overline{\text{𐎠𐎡}} \overline{\text{𐎠𐎢𐎴}}$ $\overline{\text{𐎠𐎢𐎰}}$ $\overline{\text{𐎠𐎢𐎴}}$ $\overline{\text{𐎠𐎢𐎰}}$

Armaniya եւ յատուկ ծանօթութեամբ նշում, որ $\overline{\text{𐎠𐎢𐎴}}$ (ma վանկի)

սեպախմբի փոխարէն տեղում գտնուում է $\overline{\text{𐎠𐎢𐎴}}$ (m)սեպախումբը:

Ի հարկէ մենք պիտի ընդունենք այս երկրորդ ընդօրինակութիւնը, որը, ըստ հեղինակի, աւելի ճշտուած ձեւն է. այսուհանդերձ մենք ցանկանում ենք այստեղ նշել, որ Armniya-ն պէտք չէ կարգալ Arminiya: Կինգի ճշտուած ընդօրինակութեան մէջ երեք անգամ էլ Armniya-ի m և n տառերի արանքում չկայ i ձայնաւորը: Սա չի կարելի վերագրել Դարեհի գրագրի վրիպումներին: Այս կապակցութեամբ պէտք է յիշել Պորենացու պահած թանկագին վկայութիւնը. «... ամենայն ազգք զաշխարհս մեր անուանեն որպէս Յոյնք՝ Արմէն եւ Պարսիկք եւ Ասորիք՝ Արմնիք (Պոր., Վենետիկ, 1881, Ա-ԺԲ)»:

Հաւանաբար Դարեհի գրագրը եղել է արամէացի կամ արամէադէտ: Ինչպէս յայտնի է, արամէական գրութիւնների մէջ ընդհանրապէս կարճ ձայնաւորները եւ յատկապէս բառամիջի ձայնաւորները չեն գրուում, ինչպէս ներկայ արաբերէնում: Օրինակ՝ արաբերէնով գրուած کتب Ktb բառը կարդացւում է հետեւեալ (մէկից աւելի) ձեւերով.


- کتب (Ktb) կարդացւում է Kataba, որը նշանակում է «գրեց».
- کتب (Ktb) կարդացւում է Kutb, որը նշանակում է «գրքեր».
- کتب (Ktb) կարդացւում է Kutiba, որը նշանակում է «գրուեց»:

(کتب-ի այս ընթերցանութիւններէ մէջ a հնչում է ինչպէս անգլերէն cat, hat բառերում): Հետեւաբար երկու բաղաձայնները կարգալիս՝ երկուսի արանքում կարելի է հնչել ք, ու, ի կամ ա:

Արամէերէնով Արմանի գրել ցանկացողը պիտի գրէր Արմնի, որն ուրիշի կողմից կարող էր կարգացուել Արմնի, Արմինի կամ Արմանի: Երեւի արամէերէնի այս հանգամանքը ունեցել է իր ազդեցութիւնը Գարեհի արձանագրութեան վրայ: Որ արձանագրութեան մէջ երեք տեղ Արմնի անունն մ եւ ն տառերի արանքից բացակայում է ի ձայնաւորը, կարող է նշան լինել, որ այն պիտի կարգալ — հնչել Արմանի:

Գարեհի արձանագրութեան Armniya-ն եւ Պորենացու վկայութիւնը, թէ ասորիներն ու պարսիկները այդ ժամանակներում մեր երկիրը կոչում էին Արմնիք (հաւանաբար Պորենացին այս անունը բերում է այնպէս, ինչպէս գրում էր պարսիկերէն եւ ասորերէն գրութիւններէ մէջ) միանգամայն հաստատում է անգամ այն հանգամանքով, որ ներկայումս իսկ թէ՛ պարսիկները (որոնք ժառանգորդներն են եղել հին պարսիկների) եւ թէ՛ արաբները մեր ազգանունը գրում են ارمني (Armani) բայց փաստն այն է, որ թէ՛ պարսիկները եւ թէ՛ արաբները գրում են ارمني (Armeni) բայց այն կարգում — հնչում են Armani:

Արմանի անունը, որը, ինչպէս տեսանք, եղել է մեր երկրանունն հնագոյն ձեւը, մեր մատենագրութեան մէջ պահուած է նաեւ որպէս նրա էպոնիմը Արմանեակ⁴⁹ (= Արմանի-ակ) կամ Արամանեակ⁵⁰ (= Արամանի-ակ) ձեւերով. —ակ վերջաւորութիւնն ունեն շատ անուններ (Հայկակ, Փառնակ, Վաշտակ եւ այլն):

Արամանեակ ձեւի կապակցութեամբ տեղին է նշել, որ պարսկական  տեպստումբը կարելի է կարգալ ր կամ բա:

Ուստի հնարաւոր էր Armani-ն կարգալ նաեւ Արամանի:

49) Հ. Աճառեանն իր «Աճառեանութիւն» բառարանում Արմանեակ անունը համար տալիս է հետեւեալ ազդեցութիւնները. «Մի. Այրիվ. 44, Սամ. Անեց. 41: Արամանեակի համար. «Սեր. ա (հրտր. Պատկ. էջ 2, 5), Յե. կք. բ. Ուխտ. Ա. ծգ. Շնորհ. Վիպ. 115, Վրդ. է. Մի. Անեց. գ. Մի. Այրիվ. 17, Սամ. Անեց. 11, 42»:

50) Դովտ. Ստ. Մալխասեանը խորհմացու պատմութեան (իբ) աշխարհաբար քարգամութեան մէջ, որի (քարգամութեան) համար բաղաձայնութեան մէջ է գրել մի շարք ձեւագրեր, այս անունը բերում է միշտ Արամանեակ ձեւով:

Արամանեակ (Արամանի-ակ) ձեւի —ակ վերջաւորութիւնը հաւանաբար սերունդ է ուրարտական —ալի կամ —ալի վերջաւորութեան, որ երեւում է մի շարք անունների վերջում (ինչպէս Էրիալի, Էրիկուալի, Դիաուալի). հաւանաբար Արամանեակ-ը (Արամանի-ակ) կը համապատասխանէր Մենուայի յիշած Ուրմէուխի-նի (կամ Ուրմենիուխի) երկրանունն: Նմանապէս ուրարտական որոշ տեղանունների —լիսի կամ —լիսա վերջաւորութիւններից (Աշտուլիսի, Արգիշտիլիսի [լի], Ռուսախինա եւ այլն) կարող էր առաջ եկած լինել մեր մի շարք տեղանունների —ական վերջաւորութիւնը (Ողական, Օշական, Ղազիկան եւ այլն): Ի հարկէ չենք ուզում ասած լինել, որ մեր մատենագրութեան մէջ յիշուած այս տիպի բոլոր անունները ուրարտական ժամանակների —ալի եւ —ալի կամ —լիսի եւ —լիսա վերջաւորութիւններն ունեցող անունների շարքը պիտի դասել, նրանցից շատերը, բնական է, կարող են հետագայում կազմուած լինել հայկականացած —ակ եւ —ական վերջաւորութիւնն ունեցող անունների օրինակով, ինչպէս մեր օրերում մենք կազմել ենք Լեհիմ-ական, Կիրով-ական անունները:

Այսպիսով, թէ՛ սկիզբական, աստուրական, պարսկական եւ ուրարտական արձանագրութիւնների տուեալներով եւ թէ՛ մեր ազգային մատենագրութեան պահած յիշատակութիւններով հիմնաւորում է, որ Արմնիա անունն նախնական ձեւը եղել է Արմանի:

ԳԼՈՒԽ Բ.

ՍՈՒՄԵՐԱՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայագիտութեան բնագաւառում վերջին 10—15 տարիները նշանաւորուեցին նաեւ նրանով, որ Հայերի Բաղկաններից դաղթած լինելու տեսութիւնը մերժող պատմաբանների թիւը շատացաւ, սակայն եւ այնպէս դեռ կան գիտնականներ, որոնք Հայերի Հայկական լեռնաշխարհի բնիկներն եղած լինելու տեսակէտի համար բերուած փաստարկութիւնները բաւարար չեն համարում եւ տակաւին կանգնում են դաղթի տեսադժի վրայ:

Մեր թուադրութիւնից առաջ Գ. Հազարամեակի կէսերին Հայկական լեռնաշխարհում Արմանիի գոյութիւնը վկայող նարամսինեան արձանագրութիւնները վճռական ոյժ ունէին Հայերի ԹԲ. դարում (մ. թ. ա.) Բաղկաններից եկած լինելու տեսութիւնը հերքելու համար, սակայն այդ արձանագրութիւնների մինչև հիմա եղած ուսումնասիրութիւնները (որոնք աւելի կենտրոնանում էին խթական արձանագրութեան վրայ) բաւարար չափով չէին խորանում արձանագրութիւնների Հաւաստութեան մասին եղած կասկածանքների վերացման եւ Հայագիտութեան հետ նրանց ունեցած կապակցութեան ուղղութեամբ: Այս է պատճառը, որ Արմանիի տեղի համար բերուած կարծիքները դաղթի կողմնակիցների կողմից չեն ընդունւում որպէս բաւարար ապացոյց Արմանիի Հայկական լեռնաշխարհում տեղադրելու եւ Արմենիա անուան հետ նոյնացնելու համար: Ուստի մենք կարծում ենք, որ նարամսինեան արձանագրութիւնների ներկայ քննութիւնից յետոյ (հաշուի առնելով, ի հարկէ, նաեւ այս ուղղութեամբ մի քանի ուսումնասիրողների կողմից կատարուած աշխատանքները) Արմանիի Հայկական լեռնաշխարհում տեղադրու-

թիւնը եւ Արմենիա անուան հետ ունեցած նոյնութիւնը պիտի համարուի վերջնականապէս հաստատուած:

Այս ընդունելով հանդերձ, սակայն, գաղթի տեսութիւնը պաշտպանողները գուցէ այս անգամ ասեն, թէ հայերի ներգաղթը կարող էր տեղի ունեցած լինել ո՛չ թէ փոխադների հետ «ԺԲ. դարում (մ. թ. ա.)», կամ նեսիտ խեթերի հետ «Բ. հազարամեակի սկզբին (մ. թ. ա.)», այլ լուրտների կամ պալաիտների հետ «Գ. հազարամեակի կէսերին (մ. թ. ա.)» եւ այդպիսով հակասութեան մէջ չընկնել նարամսինեան արձանագրութիւնների անհերքելի վկայութիւնների հետ:

Մենք կարծում ենք, որ այդպիսի պնդման համար արդէն որեւէ ելակէտային հիմք չի մնում: Գաղթի տեսութեան հիմնական դրդապատճառները եղել էին հայերէնի հնդեւրոպական լեզու լինելը (եւ հնդեւրոպական լեզուների «հայրենիքը» Եւրոպան համարելը) եւ Հերոդոտի, Ստրաբոնի, Քսենոֆոնի, Հոմերի եւ նման այլ հեղինակների վկայութիւնների միակողմանի մեկնարանութիւնները, որոնց հիման վրայ ենթադրուող գաղթը կարող էր «տեղի ունեցած լինել» ԺԲ. դարաշրջանում (մ. թ. ա.), բայց երբ այսպիսով հերքուած է (գաղթի տեսակէտով) այս ժամանակաշրջանը եւ խախտուած՝ վերոյիշեալ վկայութիւն-տուեալների՝ յօդուած գաղթի արուած մեկնարանութիւնների արժէքը, ապա գաղթը Գ. հազարամեակ տանելու համար որեւէ կոնկրէտ հիմք չի մնում: Մանաւանդ դժուար է ընդունել հնդեւրոպական լեզու կրող բոլոր ժողովուրդների՝ մի մայր ցեղից ծագած լինելը, իսկ հնդեւրոպական լեզուների հայրենիքի՝ Եւրոպայում տեղադրութիւնը վիճելի է հիմնովին. դորաւոր տուեալներ ունենք սակայն, որ այն գտնուած էր Փոքր Ասիայում: Լեզուաբանական եւ այլ տեսակէտներով պատճառներ ունենք ընդունելու, որ հայերէն խօսող արմէնները պէտք է գոյութիւն ունեցած լինեն հայկական լեռնաշխարհում Նարամ-Սինի ժամանակաշրջանից էլ առաջ՝ անգամ այնպիսի ժամակներում, երբ սումերները դեռ չէին սկսել իրենց լեզուով արձանագրութիւններ թողնել:

Գիտնականները վաղուց են ուշադրութիւն հրաւիրել որոճե-

րերէնի մէջ հայերէն բառարմատների գոյութեան վրայ: Այս ուղղութեամբ աշխատանքներ են կատարել մի շարք յայտնի հետազոտողներ: Լ. Կինգը հակում ունէր այդ երեւոյթների մէջ պատահականութեան հնարաւորութիւն տեսնել, սակայն այլ յայտնի գիտնականներ, յատկապէս Սադրբեան եւ Կարստ, երկու լեզուների մէջ կապը հաստատ են համարում:

Մենք եւս՝ այս ուղղութեամբ կատարած մեր հետազոտութիւնների ընթացքում նշմարել ենք երկու լեզուների մէջ այնպիսի համընկնումներ, որոնք հնարաւոր չէ վերագրել պատահականութիւնների:

Մենք սումերահայ կապեր ենք նշմարում ո՛չ թէ միայն լեզուաբանական դժով (երկու լեզուների մէջ կան բազմաթիւ բառերի ու քերականական էլեմենտների համընկնումներ), այլեւ պատմահնագիտական, մշակութային, կրօնական եւ անգամ մարդաբանական բնագաւառներում:

Ի հարկէ այստեղ տեղը չէ սումերահայ կապերի մասին ընդհանուր քննութեամբ զբաղուել, սակայն տեղին ենք համարում որոշ երեւոյթների բացայայտումը որպէս ապացոյց Նարամ-Սինի ժամանակից էլ առաջ արմէնների՝ Հայկական լեռնաշխարհում գոյութիւն ունեցած լինելուն համար:

Այստեղ, լեզուաբանական կապերի մասին գաղափար տալու համար, նախ ներկայացնում ենք սումերական մօտ 50 բառեր (ներանց մեզ յայտնի ընդհանուր քանակը հինգ անգամ աւելի է), որոնց համընկնումը համապատասխան հայկական բառերի հետ դժուար չէ տեսնել:





Ներկայացուող բառերն ընդհանրապէս բերում ենք Ս. Լանդգոնի¹⁾ սումերական նշանաւոր բառացուցակներից՝ մեծ մասամբ, ստուգման համար, համեմատելով Պ. Ա. Դէյմէլի²⁾ եւ Ռ. Լաբատի³⁾ աւելի նոր բառարանների տուեալների հետ:

1) Stephen Langdon, «A Sumerian Grammar and Christomathy», Paris, 1911.

2) P-Anton Deimel, «Sumerish - Akkadisches Glossar», Roma, I, 1934.

3) René Labat, «Manuel d'Epigraphie Akkadeienne», Paris, 1952.

ՍՈՒՄԵՐԵՐԷՆԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒՈՂ ԿԱՄ ԿԱՊՈՒՈՂ
ՀԱՅ ԲԱՌԵՐ






№	Մուտքերը բառ եւ նշան ասուրական սեպագիրը	Բերուած սուտեր բառի իմաստը		Բերում ենք Հայ բառ Համեմատելով սուտեր բառի Հեռ ձևերմաներէն ⁴	Բերում են հնդեւրոպա- կան, օտար եւ Հայ բառեր (ոմանք՝ վերապահու- թեամբ) Աճառեանի Ար- մատական բառարանից մեր Հայ բառերի Հեռ կապուած կամ Համե- մատուած
		ակկա- դերէն	անդլերէն Ֆրանսերէն կամ գերմաներէն ⁴		
1	2	3	4	5	
ab  ab, ap	tamtu tamtum	ocean Meer×	ափ ⁵	ափ զօրեւէ տեղի կամ բանի եզր՝ յասկապէս «ջրի եզր» ծովափնեայ	
agar 	ugaru	Feld×	ագար [-ակ]	(Karst) սուտեր agar	
an 	šamú	heaven	[երկ-]իմ ⁶	Ճն. οὐρανός «երկին» Հայ երկունք, (Karst) սուտեր dingir	
anšu 	imeru	Esel×	էշ ⁷	Հնդեւ. ek'wo «ձի» արմատից. (Սագըղեան, Karst) սուտեր anšu	

4) Այս (համար 3) սիւնակի անգլիերէն բառերը եւ նրանց դիմացի ակկադա-
կանն ու սուտերականը բերում ենք. S. Langdon-ի յիշուած գրքից, գերմաներէն
բառերը եւ նրանց դիմացիները՝ P. A. Deimel-ից՝ նշելով × նշանով, իսկ ֆրան-
սերէններն ու դիմացիները՝ René Labat-ից՝ նշելով + նշանով:







5) (Ab, ap) > ափ, ճայնաւորից յետոյ շնչառուած վանկի վերջում յաճախ
(b, p) > Փ. հմմտ. Šupani > Ճոփ. (dib, dub, tab) > բափել եւ այլն:







6) Երկ-ին «գործ ին կամ Anu աստծոյ» Anu = սուտեր երկնային աստ-
ուածների հայր. հմմտ. երկ-իւր «գործ իւր-ի», իւր-ը հմմտ. բուրբ եր, ակկադ
irsitu «երկիր»։ Բառերի հետ:

7) Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երեւան, 1945, էջ 139:

	1	2	3	4	5
5	ara  e - ara	tênu	grind zermahlen× mühle×	աղալ աղօրի	Հնդեւ. al (ասիական ar) արմատից՝
6	arà 	alaktu	route	արա-հետ «ճանապարհ»	կազմուած է այր եւ հետ բառերից իբր ժարդու ու տի տեղ
7	arabu	arabû	× wasservogel	կարապ	«պար թռչունը» Հմմտ. լիթ. gulbe, վրաց քարքարի «կարապ», ուսու գոլուր «աղանի» եւն. կարապ բառի ծագումը դեռ որոշ չէ:
8	bad 	duru	city-wall mauer×	պատ	(Սագըղեան) սուտեր bad, bat «պարիսպ», (Karst) սուտեր bad, bat «արմ, շրջապատ»
9	bal bal, pal 	hirû herû	dig creuser +	պեղ [-ել]	Հնդեւ. bel «կտրել, Հա- նել, փորել, փոսացնել» արմատից:
10	bar	mirinu	mad - dog	բար-ակ ⁸	«որսի շուն» Հին բառ Հուն, աղտեղի: Պրո- պարազ Հուն, Խաւ- baracco եւ թուրք. baraq որսի շուն:
		ahû	hostile be cruel	բար [-կանալ]	բարկ «կծու, թունդ, դժնեայ, բարկացնող»: Հնդեւ. րոսպական bhaq «շողալ, խորովել» արմա- տից. (Սագըղեան, Karst)
	bar, par 	ahû	etranger + ennemi +	բար [կ]	բուռն, սուտեր bar «զօրեղ, կատաղի»:




8) Բարակ «որսի շուն» բառի համար հետաքրքիր է նաեւ անգլիերէն bark «հաշի» բառը:

	1	2	3	4	5
11	bar bar, par 	kabábu ša i-šati nûru namaru	brannen× Licht× shine bright	վան [-b1]	կամբու. war «վանել», Հնդեւ. ver «եփել». (Սաղըզեան, Karst) սուժեր bar «փայլել», փայլակ, արեղակ»:
12	bi bi 	kabû nabû gabû atmû	speak sprechen× Sprache×	բա (բալ, բաճ)	բա, որից բալ «խօսել», ասել» (բաժ, բաս, բայ) բայ «խօսք, մարդկային բան», բաճ «խօսք, բառ...», բառ «բառ». Հնդեւ. արմատից (Karst) սուժեր ba «խօսել»:
13	bir bir 	akâšu	morden× verwüsten×	վէր [f] վիր [-աւորել]	լատ. feritus «զարնուած, վիրաւոր», vulnus «վէրք»:
14	dib dub dib  dub, tub  dub - dub (Karst) tab - tab	tabaku tabaku saraku tabâku tabâku	pour - out ausgiessen× ausgiessen×	բափ [-b1] բափբափել բափբփել բօբափել	բափ «խառակ» = թրք. տիփ, զնդ. pat «ընկնել», վազել», Հնդեւ. stap «հրել, զարնել» արմատից. (Karst) սուժեր. dub «թափել», tab - tab «չարժել, յուզել» = թօ- թափել:
15	du Հին նշան 	alaku	walk gehen×	հետ, ոտ	հետ «ոտք», 2) «հետք», 3) «ճանապարհ»: հնդեւ. ped, որից հետ, Հնդեւ. pod, որից ոտ:

	1	2	3	4	5
16	ellu  ulili	lallarâti	wehgeschrei× Geschrei×	լալ («շ թէ լա», օրինակ՝ լալաՀառաջ, լալաղին)	Հնդեւ. pla արմատից «զարնել, ծեծել, կծել», յետոյ «լալ»: Արմատի պարզ ձևը պահուած է Հայերէնի մէջ, միւս ցե- ղակիցները ունեն անա- կան ձևը՝ plag...
17	egi < eġi  գոյական egi (sal-) egi	be great grow up rubu rubâtu	Furstin×	աճ աճ [-b1]	Հնդեւ. արմատն է՝ aug, որից լա. augeo, գոթ. aukon, սանս. a'jas «ուժ», լա. auxilium «աճուցի»:
18	eri  (Սաղըզեան) garas (Karst) gara	ardu slave	սարուկ	գերի	բեւեռ. garri դարի «գերի», Հնդեւ. ger «բռնել», (Սաղըզեան) սուժեր garas, (Karst) սուժեր gara «սարուկ»:
19	ga gal 	Bašû	exist	գոյ ⁹	Հնդեւ. ves «մնալ, բնակել», սուճ տեղ լինել» արմատից:
20	gara 	lildu	Fettmilch×	կարա [գ]	պրս. Kara «կարագ», կարագ < կարակ:
21	gar Kur 	aklu Kurmatu	food bread food	կեր կուր կեր(ա)կուր	կեր «կերակուր, ուտելիք» (մանուսանդ անասունի). արմատի երկրորդ ձևն է կուր. Հնդեւ. g'er արմատից:

⁹) Gal = գոյ (1 > յ). հմմտ. արաբ. ալիֆ, յոյն alfa հայ ալբ:

¹⁰) Հետաքրքիր է նշել, որ սուժերներն Ka «բերան» բառի սեպագիրն է


, իսկ Ku կամ Kur «ուտել» բառինը՝  : ինչպէս պարզ
երեւում է, ուտելու գաղափարը արտայայտելու համար «բերան» բառի սեպագիրը
մէջ մտցրել են  (gar «կեր, հաց») սեպագիրը:





	1	2	3	4	5
22	gin, gim 	amtu	maid	կիմ	կին «կնիկ» հնդեւ. g ^u en ձեւից. երկրորդ ձեւն է կան հնդեւ. g ^u n ձեւից:
	gim gem	banû alādu	create beget	կիմ, ծիմ	ծին «ծնունդ», ծագում. բունը հնդեւ. g ^u en արմատից:
23	gur 	našû našû	lift cary tragen ×	կիր կր[-ի]	կրեւ լծ. կուռն, կռնակ- լտ. gero, արաբ جر jarr, հայ. չար, չարչարանք, քարշեւ. լտ. gestare «կրել, սանել» ձեւին ցե- ղակից: Հնդեւ. արմատ ag:
24	gurun 	inbu eldu	Frucht × harvest	գարուն	հնդեւ. նախաձեւն էր uēsṛ, ver: ցեղակիցներ են սանս. vasanta զնդ. vanhar, պրս. bahar, պհլ. vahar «գարուն»: Սչուն գարուն իրար են աղգել: Եթէ գարուն-ի -ուն մասնիկ է, գար կապում է հնդեւ. vest ձեւի հետ. vesar > գեհար > գահար > գար: Ճապոն. haru «գարուն»:
	gurun 	inbu enbu	Frucht × fruit ¹⁾ harvest		
	gurin, gurun 	inbu	Frucht ×		
	guru 	inbu	Frucht ×		
25	id 	nāru	canal river fluss Kanal	գետ	հնդեւ. vedo- ձեւից. հիմա. սանս. udan «ալիք». գոթ. vato, անգլ. water, հսլ. voda «ջուր», բուլղար wada «գետ», անգլ. wet «թաց» հնդեւ. vad, vod, ved, ud ձեւերից:




¹⁾ S. Langdon, pp. 46, 275:

	1	2	3	4	5
26	igi	ēnu	eye to see	աչ[ֆ]	աչք. մեկնութիւնը տես ահն. սանս. akša բառին հետ. արաբ. عين այն, թրք. göz «ակն», ահն. հնդեւ. ōki «աչք», սեռ. ōknós. ռուս. oko, լտ. oculus, պհլ. aš, անգլ. eye «աչք», հայ. աչք «նայել»
	igi	inu	Auge ×	ակ[ն]	
27	illulu 	tilpanu	Bogen ×	աղեղ	աղեղն «նես նետելու գործիք». shröder- արաբ. عق «aq բառից, Muller լտ. arcus, «աղեղ» Bugge- սանս. arala «ծում», կու- ցած»: Պետերսըն - եղն մասնիկ:
28	ir, er, eri ur	rihû erešû	beget erzeugen × creation to create	առ[-նել] («ստեղծել») արար[-չուր- բիւն]	առնել-արմատն է ար. արանից արար «անել», գործել, ստեղծել, շի- նել, «ստեղծել» արարած, արարիչ են. հնդեւ. ar արմատից:
	isi, šeš 	bakû	to weep weinen ×	կիծ, կոծ	կծանել = պրս. gazidan «խածնել», թրք. qoz - maq «կատաղել», գայրանալ, (Justi) կծու, (Muller) պրս. gāz «կծել», կիծ:
	isiš, išiš išeš, ešeš eš - eš	bakû bakû	weinen × to weil pleurer +	կսկիծ կսկիծ[-նել]	
30	Ka - izi ka	ḥamātu ša išati	brennen × Feuer ×	կայծ	կայծ «կրակի պէծ», «կրակ». հնդեւ. gaid- արմատից. արա հետ հիմա. լիթ. gaidrūs «պայծառ», գուարթ. լեթթ. dzidrams «պայծառութիւն» gāiss «ոգ», եղանակ, յն. παιδιμος «լուսաւոր», հիմա. թրք. köz «խարսկ»:
	izi				

	1	2	3	4	5
31	Ki-maḥ	Kimahhu Kuburu	grab×	կմախ	սասուր. kimaxxu «գաղաղ», սուսիբրki-max«գերեզման», արամ. gmk «մահարձան»:
32	Ku-babbar	Kaspu Sarpu	Silber ×	կասպար	ասոր., արամ. awarā, արաբ. պարս. abar «կասպար», (Karst) սուսիբր. abar «կասպար», լատ. aes cuprium-ից, լատ. cuprum, անգլ. copper, գերմ. kupfer, ֆրնս. cuivre, եւն. «պղինձ», ամբողջ ընտանիքը կապ չունի Հայերէնի հետ:
33	luḡ laḡ luḥ lah	misu	clean washed wash reinigen ×	լնգ[-անալ] լնգ[-ալ] լնյգ, լիւղ	լոգանալ «լուացուիլ». Հնդեւ. loy - արմատից. (Karst) սուսիբր. laḡ, lag «լուալ, մաքրել», մաքուր». luḡ «մաքուր. լուացուած»:
34	maḥ muḥ	Kuburu muḥhu	«գերեզման» Schädel ×	մահ	Հնդեւ. mer «մեռնել» ար- մատից, որից մեռանել, մարդ. պարզ չէ իրանեան փոխառութիւն է թէ ոչ. ամենից մերձաւոր են. սանս. mtyū-, ouu. mālāt, գերմ. mord «մահ», սրանց Համապատասխան է Հայ մարդ. եւ ոչ մահ (Հ ձայ- նը չի բացատրուում):
35	marun	sasiru	Ameise ×	մրջիւն (ջն մանիկ կամ աճ)	մրջիկ Հայ բառ. այս եւ ցեղակիցների նախնականն է moruo -: Հայերէնի ար- մատն է մուրջ, ուր ջ մասնիկ է, յետոյ էլ աւե- լացել է իւն մասնիկը:

	1	2	3	4	5
36	mu  mun	Šumu	name	սմուն	Հնդեւ. onmn, onomn ձեւերից. սանս. naman, գնդ. nama, պճլ. պրս. nam, փարս mam, լատ. nomen, անգլ. name, հուլ. ima բոլորն էլ «անուն», Հնդեւ. նախա- ձեւ. el/onomen (Մորթ- ման) իսպ. anuni «անուն»:
37	Šir Šir, Sir Šir Sig, Sig	nuru išku nuru namaru	light lumière + shine	շնդ շնդ[ալ]	Հմմտ. արմ. շնդ «շող» (իմա արաբ. شمس Šu'la «բաց, նշոյլ») Հնդեւ. ար- մատ svar «զառել», լատ. sol «արեգակ», գնդ. surem «առաւօտ կանուխ»:
38	tab tab dab	hamatu hamātu	blaze burn flackern × flammen	տապ	տապ «տաքութիւն, ջեր- մութիւն» պճլ. tap «տաք» պրս. tab «տաքութիւն» եւն. Հնդեւ. tep- «տաքա- նալ» արմատից, որը Հայ- երէնում պիտի տար թեւ, թու:
39	til til	gamaru Katu gamāru Katū	be complete, cease, come to an end wollständig sein Zu Ende sein	դուլ	դուլ. «գաղար, հանգիստ» Հնդեւ. dhul- արմատից. Հմմտ. իսպ. dah «յետա- ձգում, դադար», հուլ. u. duol «գաղար, հանգստու- թիւն», հուլ. twellen «գաղ- րիլ» եւն. այս բոլորը Հնդեւ. dhuol նախաձեւից:

	1	2	3	4	5
40	tu 	alāgu	beget gebären × erzeugen ×	ánu	ձու «հաւկիթ» որից ձուք «ամորձիք», այս դադարի համար հնդեւրոպական լեզուներում գտնուում ենք մի եւ ընդհանուր ձեւ. բոլորը հնդեւ. ouiom նախաձեւից. Հիւբշման չի ընդունում սրանց կցել ձու բառը, որի նախաձայն ձ մտնում է առանց բացատրութեան:
41	tur 	erēbu	to enter eintreten ×	դուս	Դուսն «դուս, կիրճ, լեռների մէջ անցք, պալատ», հնդեւ. dhur ձեւից. հնդեւ. նախաձեւն էր dhwer (Karst) սուժեր tur «ներս մտնել»:
42	ud u, ud 	urru ūmu	day storm spirit tag × sturm ×	ուդ օդ	հնդեւ. audho - ձեւից, որ կազմուած է au - «փչել, շնչել» արմատից - dh - ածականով:
43	udu  ud	imméru immeru Sénu	Schaf × Kleinvieh × Sheep	օդի ուդի	ամանք համարում են ընկի հայ բառ. հնդեւ. ovi «ոչխար» բառից, տե՛ս հոլիւ: Այս մեկնութիւնը ընդունելու դժուարութիւններն են՝ 1) ունենք արդէն (հոլիւ 2) կարելի չէ մեկնել ա (աւդի) նախաձայնը հնդեւ. օ-ի դիմաց. 3) առանց բացատրութեան է մտնում -դի: (Սագըզեան եւ Karst) սուժեր udu «ոչխար»:

	1	2	3	4	5
44	umman um-mi-a		people host total whole	ամէն (հնչում է ամմէն)	ամէն «բոլոր», հնդեւ. smmo ձեւից, ամէն բառի մէջ պարզ արմատն է ամ smmo, իսկ -էն մասնիկ է: (Karst) սուժեր umuna «հաւաքոյթ»:
45	ur ur 	ahāzu hamāmu	Seize halten × fassen ×	առ	առ «առնելը, գրաւում», կողոպուտ, աւար...» առնել, առնուլ. հնդեւ. ar - արմատից: (Մորթման) խալդ. arniu, arubi, aruni, arien ձեւերի հետ: (Karst) սուժեր ra «ետ առնել, բռնել»:
46	utima ¹² 	etütum	Finsternis ×	մութ	մութ, խաւար, մթնութիւն» (համեմատում են հետեւեալների հետ) անգլ. muddy «ցիխտ», սանս. tama, լատ. tenebrae «խաւար սանս. «ամպ» mudira, զնդ. temanh, պրս. tum «մութ», (Karst) սուժեր mud «մթնել, mut «մութ»:
47	utul udul, utul 	re'u re'ü utullu	shepherd herdsman Hirt ×	հօտաղ	հօտ «ոչխարի եւ ուրիշ չորքոտանիների խումբ» հնդեւ. pa - արմատից, հայերէնի մէջ արմատը աճած է d ածականով: Մրանից ունենք հոտաղ կամ հօտաղ «հոլիւ»:

¹²⁾ Սուժեր utima «մութիւն» բառից ծագած պիտի լինի արաբ արաբ արաբ, «մութ, մութիւն»: Սուժեր բառի m-ն գալով առաջ՝ ստացուել է մութ:

	1	2	3	4	5
48	uz 	enzu	she - goat	էծ այծ	այծ (սովորաբար էգի համար) = բնիկ հայ բառ. հմմտ. սանս. a) a, եբբ. c e z = արար. ʾanz, փիւնիկ 'az, ասոր. 'nez 'այծ': (Մագըղեան) սուժեր ruz, (Karst) սուժեր uz 'այծ'. դաւառ. ած, էծ, ած, եծ, աղ. 'այծի էգը':
49	zag 	imittu	right hand droit + × rechte seite	ձախ	Մեկնութիւնը անձանութիւն: Հնդեւ. լեզուների մէջ ձախ բառը ենթարկուել է tabou-ի. գրա համար չկար նրանց մէջ մի ընդհանուր ձեւ, գլխաւորապէս երեք խմբակներ կան. 1. սանս. savyā, զնդ. haoya, եւն. 2. հուլ. l'ē v ū, լատ. laevos, եւն. 3. լատ. scaevos, եւն. կողմացած մի ձեւ է նաեւ հայ ձախ. հմմտ. պրո. ʿap «ձախ», Թրք. սաղ «աջ»:
50	zu - ab 	apsú tamtum idú	sea × Süßwasser - - Abgrund Meer × Wissen ×	ծով. ՆՋԲ վրաց. զովա, հյ. ժողով. բառի հեռ. զնդ. jēiwi «խոր», յն. ζαφ հհու. kaf «ծով». բուլղար հնդեւ. gap «խորունկ լիներէ, վիհ բացուել» արմատից: Իբր խալդ. ձույ կամ սույ բառից: (Մագըղեան եւ Karst) սուժեր zuab «ովկիանս», Թրք. su, sub, suv «ջուր», արար. ʾab zaub «հոսիլ» ʾab zab մի քանի գետերի անուն:	

Գծարխաարար հայկական լեզուարանութեան մէջ սովորութիւն է եղել մի թիւր մտածողութիւն, որ հայերէնի եւ մի այլ հին լեզուի մէջ որեւէ նոյնանմանութիւն նշմարուելու, կամ նրանց միջեւ փոխառութիւն նկատուելու դէպքում՝ միշտ կամ ընդհանրապէս հայերէնը դրուել է ստորագաս՝ ստացողի, ընդօրինակողի դերում: Այդպէս են վարուել հայերէնը իրանական լեզուների, հայերէնը ռուսարտերէնի, լեթերէնի, հայերէնը շուամերէնի, ասորարարելական կամ սեմական որեւէ լեզուի, հայերէնը յունարէնի եւ այլ լեզուների հետ համեմատելիս: Չեն ուղեցել մտքից անցկացնել, որ միւսները կարող էին հայերէնից օգտուած լինել:

Ի հարկէ այս մտածելակերպը առանց պատճառի չի եղել: Այն առաջ է եկել նախ այն պատճառով, որ հայերը իրենց դեռ չգրուած բազմահազար տարիների պատմութեան վերջին, մօտ 1,5 հազար տարիների ժամանակամիջոցում, այսինքն՝ պատմականօրէն մեզ աւելի յայտնի ժամանակներում, ընդհանրապէս կորցրած են եղել իրենց քաղաքական դերակազմութիւնը շրջապատի նկատմամբ, եւ անգամ շատ դարերով գտնուել են ենթակայի վիճակում. երկրորդ գործօնը, որ ազդել է մտքերի վրայ, եղել է այն, որ հայերը նկատուել են ոչ բնիկ, եւ Հայկական լեռնաշխարհ եկած՝ ժի դարում (մ. թ. ա.), այնպէս որ այդ թուագրութիւնից առաջ Առաջաւոր Ասիայում գրանուող ժողովուրդների լեզուներին չէին կարող ազդած համարուել: Մեր կարծիքով ժամանակն է, որ այլեւս վերանայուի այդ դիրքաւորումը:

Սուժերերէնի եւ հայերէնի մէջ որեւէ նոյնանմանութիւն նըմարուելու դէպքում, ի հարկէ, սուժերերէնը համարուելով հնագոյն լեզու՝ հայերէնը դրոււմ էր ստացողի դերում, բայց ճիշդ է եղել այդ, մենք գտնոււմ ենք, որ՝ ոչ: Մեր քննութիւնը պարզում է, որ հայերէնը նոյնպէս հին լեզուներից մէկն է եղել Առաջաւոր Ասիայում, եւ հայերէնի ու սուժերերէնի միջեւ գոյութիւն ունեցող ընդհանրութիւնները քննելիս՝ առեւտրի մէջ հայերէնը պարտքի տակ չի մնացել:

Ի հարկէ սուժերերէնում հայերէնը յիշեցնող բառերի թիւը շատ աւելի է, քան մենք բերել ենք այստեղ (տե՛ս նաեւ Մագըղեան, «Հանդէս Ամսօրեայ», 1909, Քարստ, «Յուշարձան», Ղափանցեան, «Արա Գեղեցիկ»), սակայն այսքանն էլ, կարծում ենք, բաւական է ցոյց տալու, որ երկու լեզուների մէջ եղող այս նմանութիւնները չի կարելի վերագրել պատահականութիւնների: Առաւել դրան՝ ցանկա-

նում ենք նշել նաև այն, որ այս նմանութիւնները կամ նոյնութիւնները չեն սահմանափակում միայն բառային ֆոնդի ընդգուլունով, այլ կան նաև քերականական որոշ նմանութիւններ: Բերենք մեր ուշադրութիւնը գրաւած մի շարք երեւոյթներ.

1. Սումերերէն me¹⁶ = եմ, mu¹⁶ = իմ, mene¹⁷ = մենք, e-ne-ir¹⁸ = անոր (նրա), aba¹⁹ = ո՞վ (b > վ), ana - šu¹⁹ = ինչո՞ւ:

2. Սումերերէնում քաղաքների անուններից (ընդհանրապէս տեղանուններից) յետոյ երեւում է՝ անուան քաղաք լինելը ցոյց տուող ki դետերմինատիւր. օրինակ՝ MARI^{ki} «(քաղ.) Մարի»: Ki դետերմինատիւր, որը նշանակում է տեղ, երկիր, սկզբներում դրուել է նաև երկրանուններից յետոյ (ընդհանրապէս երբ երկրի անունը յիշուել է իր գլխաւոր քաղաքից յետոյ)²⁰, բայց այդ դէպքում երկրանունից առաջ, քաղաքից տարբերուելու համար, դրուել է kur «երկիր» դետերմինատիւր. օրինակ՝ kur MAGAN^(ki): Հետագայում, գործնականում, երկրանուններից ki դետերմինատիւր վերացուել է՝ թողնելով միայն kur-ը՝ kur MAGAN, իսկ ki դետերմինատիւր մնացել է միայն քաղաքների համար:

Մեր կարծիքով այս ki դետերմինատիւր, որ «տեղ»ի նշանակութիւն ունի, հայերէնում երեւում է որպէս ք մասնիկ այս կամ այն ցեղը կամ նրա երկիրը նշանակող անուններից յետոյ. օրինակ՝ Հայք, Վերք, Պարսք եւ այլն: Գուցէ այստեղից էլ ք մասնիկը որպէս հաւաքականի կամ տոպոնիմական ածանց հետագայում ստացել է յոգնակերտ մասնիկի դեր եւ նշանակութիւն (փոխանակ յոգնակի ք-ից յետոյ երկիր նշող ք մասնիկ): Ասացինք «հետագայում», որովհետեւ սումերերէնի e-ne յոգնակերտ մասնիկի հետքերը գտնում ենք նաև հայերէնում, որը կարծես գոյութիւն է ունեցել ք յոգնակերտից առաջ:

16) S. Langdon, p. p. 102 - 103:

17) " " p. 109:

18) " " p. 107:

19) " " p. p. 110 - 111:

20) " " p. 58:

3. Սումերերէնում յոգնակերտ մասնիկ է nene կամ ene, որը ձայնաւորով վերջացող անուններից յետոյ կրճատուում է ne ձևի²¹: Մենք գտնում ենք, որ այս յոգնակերտ մասնիկը շատ տարածուած է մեր լեզուում, յատկապէս հայերէնի բարբառներում: Այս մասին Ար. Ղարիբեանից բերում ենք հետեւեալը.

«Բարբառների ընդհանուր յոգնակին է «եր» մասնիկը:

«Համարեա չկայ մի բարբառ, որ այդ յոգնակին չունենայ, սակայն այդ յոգնակիի հետ միասին կամ նրա հետ բարբառած՝ մենք գտնում ենք բազմաթիւ այլ եւ այլ յոգնակիներ:

«Բաւական տարածուած է ան յոգնակին. օրինակ՝ իշան, ձիան (Բայազէդի ենթաբարբառում), տեղան > անկողիններ (Սեբաստիայի բարբառ):

«Այդ ան յոգնակին բարբառում է «տ» յոգնակիի հետ եւ ստացւում է տան, օրինակ, պաւլըտան > սպաուաներ, գլխըտան > գլուխներ, գուլպըտան > գուլպաներ:

«Ունենք անի յոգնակի, օրինակ՝ որսողանի > որսորդներ, ուրիշանի > ուրիշներ (Ջուղայի բարբառ):

«Էնի յոգնակին գտնում ենք Շամշադինի եւ Ղարաբաղի շրջանում, օրինակ, կատուէնի > կատուներ, վէդրէնի > վէզրոներ, կուրիէնի > կրիաներ, գուլպէնի > գուլպաներ:

«Ներ յոգնակին կարելի է գտնել համարեա բոլոր բարբառներում. դա բազաղրեալ յոգնակի է, կազմուած և եւ էր յոգնակիացոյց մասնիկներից:

«Նի վերջաւորութիւնը նշանակում է յոգնակի Պոլսի բարբառում (ոսմերնիս > մեր ոտները, գրքերնիս > մեր գրքերը): Նոյն յոգնակին և՛ ձեւով գտնում ենք նաև Ղարաբաղի բարբառում, օրինակ՝ ցրզըցնէ > ջաղացներ, տխկնէ > տախտակներ»²²:

Ինչպէս երեւում է՝ սումերերէնի ene, ne յոգնակին հայերէնում շատ տարածուած է եղել, եւ որը պահուել է աւելի բարբառներում: Այստեղ պէտք չէ կասկած յարուցուի դրանց հնութեան մասին՝ գրաբարում նոյնպէս չգտնուելու պատճառով. այս կէտը գնա-

21) S. Langdon, p. 106:

22) Ար. Ղարիբեան, Հայ բարբառագիտութիւն, Երևան, 1953, էջ 137:

հատելիս՝ պէտք է աչքի առաջ ունենալ այն իրողութիւնը, որ բարբառները նոյնքան հին են, որքան զրաբարը եւ նրանցից ոմանք անզամ աւելի հին, քան զրաբարը²³: Այսուհանդերձ զրաբարում եւ զրական աշխարհաբարում էլ ունենք այդ յոգնակիի հետքը, օրինակ՝ ն յոգնակին պահուել է բայերի սահմանական եղանակ ներկայի յոգնակի երրորդ դէմքում (խօսե-ն, զրե-ն եւայլն):

4. Բերում ենք սումերերէնի sig (= «խփել, հաստատել») բայի սահմանական եղանակ ներկայի խոնարհումը²⁴ համեմատելով մեր երգել բայի խոնարհման հետ.

Եզակի		Յոգնակի	
Sig - mu ²⁴	երգ-եմ	Sig - me-ne	երգ-եմ-ք
Sig - zu	երգ-ես	Sig - zu-ne	երգ-է-ք
Sig - ni (կամ bi)	երգ-է	Sig - e-ne	երգ-ե-ն

Ինչպէս պարզ երեւում է, խոնարհումները գրեթէ համապատասխան են հայերէնին, միայն հայերէնում եզակի երրորդ դէմքի (սումեր ni կամ bi - ին համապատասխանող) է վերջաւորութիւնը (երգ-է) չունի կամ կորցրել է իր բաղաձայնը, ճիշդ այնպէս ինչպէս սումերերէնի յոգնակի երրորդ դէմքում (որտեղ Sig - e [-ne]-ի տեղ պէտք է լինէր Sig - ni [-ne] կամ Sig - bi [-ne]) ni կամ bi դիմորոշիչը կորցրել է իր բաղաձայնը, իսկ մնացած i-ն փոխուել է e-ի, ազդուելով յաջորդող ne-ի e-ից:

Յոգնակիի խոնարհման մէջ հայերէնի երրորդ դէմքը (երգ-ե-ն) լրիւ համընկնում է սումերականին (Sig - e - ne). այստեղ հայերէնը պահել է ne (=ն) յոգնակին: Հայերէնի յոգնակի առաջին դէմքում, որտեղ ըստ սումերականի (Sig - me - ne) սպասելի էր երգ-եմ-նեմ կամ երգ-եմ-եմ, գտնում ենք երգ-եմ-f, այստեղ նե կամ եմ յոգնակին փոխարինուել է հետագայ f յոգնակիով, իսկ երկրորդ դէմքում, որտեղ ըստ սումերականի սպասելի էր երգ-ես-նեմ կամ երգ-ես-եմ, գտնում ենք երգ-է (...)-f. այստեղ էլ ես-ը կորցրել է դիմորոշիչ u

²³ Ար. Ղարիբեան, Հայ բարբառագիտութիւն, Երևան, 1953, էջ 77—78:

²⁴ S. Langdon, p. 130: Ուշ շրջանի տեկստերում mu-ն եզակի Գ դէմքի ցուցիչ է, սումերերէնը ունի նաեւ նախդիրներով խոնարհում:

բաղաձայնը, իսկ նե կամ եմ յոգնակին նոյնպէս փոխարինուել է հետագայ f-ով: Հայերէնի այս փոփոխութիւնները պիտի բացատրել նրա կեանքի անցած (սումերերէնից աւելի) երկար ճանապարհով:

5. Ասացինք, որ սումերերէն *ene* կամ *ne* յոգնակերտ մասնիկին համապատասխանող մասնիկները հայերէնում գոյութիւն են ունեցել f մասնիկից առաջ. դրա համար սպացոյց ենք համարում նաեւ հետեւեալները.

Մեմֆ դերանունը (սումեր. *me - ne = մե-նե-ֆ*)²⁵ կազմուած պիտի լինի եզակի առաջին դէմք մե (*me*)-ից, յոգնակերտ ն (*ne*) մասնիկից եւ յոգնակերտ f մասնիկից: Հայերէնում կրկնակի կամ բաղադրեալ յոգնակիի գոյութիւնը անսովոր երեւոյթ չէ. օրինակ՝ ունենք նաեւ ոմ-f (մեր-ոմ-f), ուն-f (ծաղի-ուն-f), ն-եր (ֆաղաֆ-ն-եր) եւայլն.

Մեմֆ դերանունն ն մասնիկի յոգնակի լինելը մոռացուելով (կամ f յոգնակիի առաջացումից յետոյ ն յոգնակին կորցնելով ուժ)՝ հետագայում աւելացրել են f մասնիկը: Սա պարզօրէն ցոյց է տալիս, որ նախապէս գոյութիւն է ունեցել ն, յետոյ՝ f:

Մեմֆ բառի քննութիւնը միաժամանակ ցոյց է տալիս նաեւ հետեւեալ հետաքրքրական եւ նշանակալի հանդամանքը. հայերէնի բարբառների մեծ մասը եւ զրական աշխարհաբարն ունեն մեմֆ ձեւը՝ այսինքն ն յոգնակի մասնիկով, իսկ զրաբարը եւ մի քանի բարբառներ՝ մեմֆ ձեւը՝ առանց ն մասնիկի: Այն բարբառները, որոնք ունեն մեմֆ ձեւը (Բէլլան, Քեսար, Մարաշ, Հաճըն, Զէյթուն, Խարբերդ, Տիգրանակերտ, Մուշ, Վան, Ուրմիա, Մարաղա եւայլն)²⁶, աշխարհազրականօրէն գտնուում են գրեթէ Հայաստանի ընդհանուր տերիտորիայի հարաւային շրջաններում՝ չումեր-ակկադական Միջագետքին աւելի մօտ, քան մեմֆ ձեւն ունեցող բարբառները (Մեղրի, Ղարաղալ, Աղուլիս, Հաղրութ, Շամախի, Հաւարիկ, Համէն), որոնք գտնուում են աւելի վեր, Միջագետքի հարեանութիւնից հեռու, յատկապէս Հայաստանի ծայր-արեւելքում՝ հեռու Եփրատ-Տիգրիսի աւազանից (ի հարկէ կը լինեն բարբառներ, որոնք ներքեւից վեր կամ վերեւից ներքեւ տեղափոխուած լինեն):

²⁵ Մեմֆ(f)-ի սումեր. *men_e*-ի հետ համընկնումը ժխտում է մեմֆ-ի ն-ի հետագայ աւելացում եղած լինելու տեսակէտը:

²⁶ Ար. Ղարիբեան, Հայ բարբառագիտութիւն, էջ 147:

Մեմֆ բառի ն-ֆ բաղադրեալ յոգնակիրից զատ ունենք նաեւ հե-
տեւեալ բաղադրեալ յոգնակիրները .

Օն-ֆ կամ ոն-ֆ . օրինակ՝ աւ-օն-ֆ, աղ-օն-ֆ, ամ-օն-ֆ (Պո-
լիս), ին-նն-ֆ «նրանք» (Վան)²⁷, որ-նն-ֆ, մեր-նն-ֆ եւայլն :

Ուն-ֆ . օրինակ՝ ըն-նն-ֆ «նրանք» (Տիգրանակերտ)²⁷, զա-
ւակ-նն-ֆ, մաւ-նն-ֆ եւայլն :

Ին-ֆ . օրինակ՝ լիւ-ին-ֆ՝ «լեռներ» :

Ան-ֆ . օրինակ՝ տեղ-ան-ֆ, ձի-ան-ֆ՝ «ձիեր»²⁸ եւայլն :

Այս բոլոր բաղադրեալները նոյնպէս ցոյց են տալիս, որ ինչ-
պէս են, այնպէս էլ օն, ոն, ուն, ին, ամ եւ սումերական *ene* կամ *ne*
յոգնակիրն յիշեցնող միւս հայկական յոգնակերտ մասնիկները գոյու-
թիւն են ունեցել հայերէնում ֆ մասնիկից առաջ, ուստի շատ աւելի
խոր հնութիւն ունեն քան ֆ յոգնակիրն : Սումեր *ene* կամ *ne* յոգնա-
կերտ մասնիկին համապատասխանող հայկական այս մասնիկների եւ
սումեր *me - ne* (= մե-ն(-ք) գերանուան մեր բարբառներում
պահուած լինելը ցոյց է տալիս, որ հայերէնի բարբառները գոյութիւն
են ունեցել զբարբառից անկախ, չեն առաջացել նրանից :

Սումերերէնի *ene* յոգնակիրն առաջ է եկել *ni* մասնիկից : Այս
մասնիկի ուժեղացումը *ni - ni* ձեւի առաջին բաղաձայնի կորուս-
տով ստացուել է *e - ne*²⁹, որի երբեմն աւելի սեղմուած ձեւն է եղել
ne : Ինչպէս արդէն նշեցինք վերելում, հայերէնն ունեցել է
ինչպէս *նի* (*ni*), այնպէս էլ *էնի* (*ene*) ձեւերը : Նի յոգնակիրն առանձին
երեւում է Հաճընի բարբառում, օրինակ՝ տկալնի (գլխալներ),
ծիեաննի (ձիեր)³⁰ :

Մեծ հաւանականութեամբ սեպագիր արձանագրութիւնների
մէջ երկրների եւ քաղաքների անունների յեանամասում երեւացող
խորբրիական կոչումը *ni* մասնիկը (*Arma - ni*, *Alzini - ni*, *Mitan - ni*
եւայլն, որին համապատասխանում է մեր ֆ մասնիկը՝ Հայ-ք, Վիր-ք,
Աղուան-ք եւայլն) կապ է ունեցել սումերական-հայկական յոգնա-
կերտ *ni* (նի) մասնիկի հետ :

27) Նոյն տեղում, էջ 160 :

28) Նոյն տեղում, էջ 138 :

29) S. Langdon, էջ 106—107 :

30) Ար. Ղարիբեան, նոյն տեղում, էջ 98 :

Հետաքրքրական եւ յատկանշական երեւոյթ է նաեւ այն, որ
սումերական *ni* մասնիկը սումերերէնում ունի նաեւ որոշիչ յօդի
նշանակութիւն՝ ճիշդ այնպէս, ինչպէս հայերէնում ն յօդը, օրինակ՝
*Gudea - ni*³¹ նշանակում է Գուդէա-ն :

Մեր բոլոր բարբառներում կայ յոգնակերտ եր մասնիկը, որի
գլխաց գրաբարը ունի եար (<իար) : Կարծիք կայ, որ եր-ը առաջա-
ցել է եար-ից : Մեր բարբառները չեն առաջացել զբարբառից . ձայնա-
փոխութիւններն էլ բոլոր բարբառներում նման կամ հաւասար չեն
եղել, չէին էլ կարող լինել : Այնպէս որ դժուար է ընդունել, որ բոլոր
բարբառները եր-ը ստացան եար-ից, պիտի ընդունել, որ եր ձեւը
գալիս է խոր անցեալից եւ նրան զուգահեռ գրաբարը, զուցէ եւ մի
քանի այլ բարբառներ ունէին եար ձեւը :

Սումերերէնի որոշեալ *me* (< *ne* ?) յոգնակերտ մասնիկը,
կցուելով հայերին վերաբերող յոգնակերտ *eš* մասնիկի հետ, կազ-
մել է *me - eš* > *meš* բաղադրեալ յոգնակերտը . օրինակ՝ *ga «ձուկ»,*
*ga - meš «ձկներ»*³² :

Այստեղ մեղ համար հետաքրքիրն ու կարեւորը այն է, որ սու-
մեր *eš* յոգնակերտ մասնիկը համընկնում է հայերէնի եր յոգնակեր-
տի հետ, իսկ *meš-ը*՝ բաղադրեալ յոգնակերտ ներ-ի հետ : Փաստն
այն է, որ վանկի վերջում կամ սկզբում բարբառային *er* > *eš* կամ
r > *š* (կամ *s*), ինչպէս եւ *n* > *m* ձայնափոխութիւնները պատահող
երեւոյթներ են սումերերէնում³³ . օրինակ՝ *er* > *eš* (երկուսն էլ) նշա-
նակում են «լալ, լաց լինել», *duru* > *dusu* (երկուսն էլ) նշանակում
են «էշի քուռակ» եւայլն : Համեմատել նաեւ սումեր *ešše* (*eššu*)
«երեք» եւ հայ երե(ք), երբ, երբ(եակ), երբ-(օրեայ) եւայլն : Սու-
մերերէնում *n* > *m* ձայնափոխութեան համար օրինակ են սումեր
nin > *mim*, որ նշանակում են (երկուսն էլ) «երկիր, հողամաս»,
erin > *erim* (երկուսն էլ) «գինուոր» եւայլն : Արդէն սումերերէնում

31) S. Langdon, p. p. 105 - 106:

32) " p. 84:

33) " p. p. 43 - 44:

կայ թէ՛ ne եւ թէ՛ me յոգնակերտ մասնիկը, իսկ հայերէնում էլ կայ ն յոգնակերտը:

Հետեւաբար պիտի ընդունել, որ հայերէնի եր եւ ներ յոգնակերտ մասնիկները համընկնում են սուժեր eš եւ meš յոգնակերտ մասնիկներին հետ:

Պէտք է նորից նշել, որ եր եւ ներ յոգնակերտ մասնիկները գտնուում են համարեա մեր բոլոր բարբառներում. այդ երեւոյթը թերազրուժ է, որ այս յոգնակերտ մասնիկները գալիս են խոր անցեալից եւ միաժամանակ նոր փաստ են, որ մեր բարբառները գոյութիւն են ունեցել զբարբարից անկախ.

Սուժեր անձնական անկախ գերանուններ են հետեւեալները ուղղականում³⁴.

Ա Դէմք	եզակի	ma - e (mō), me
	յոգնակի	me - a (mō) mene
Բ Դէմք	եզակի	za - e (zō), zī, sī
	յոգնակի	zene, zen
Գ Դէմք	եզակի	nī, nē bī, bē
	յոգնակի	ene, enen
		bine

Ինչպէս պարզ երեւում է՝ յոգնակիները կազմուած են եզակիների վրայ աւելացնելով յոգնակերտ ne կամ en մասնիկը:

Հայերէնում նոյնպէս գոյութիւն ունեցել է եզակի Ա դէմքում սուժեր me-ին համապատասխանող մե ձեւը, որը կորել է ես ձեւի հետ ունեցած մրցութեամբ. մե-ի գոյութիւն ունեցած լինելը փաստուում է նրա յոգնակի մե-ք կամ մե-նէ ձեւի գոյութեամբ, որից հանելով ք յոգնակերտ մասնիկը կամ նէ բազազրեալ յոգնակին՝ կը ստանանք մե, որը համընկնում է սուժեր եզակի me-ի հետ:

Սուժեր Ա դէմքի յոգնակի me-ne գերանունը ճշգրտէն համա-

պատասխանում է հայերէնի մե-ն(ք) գերանուն, որի յոգնակերտ մասնիկի (ժամանակի ընթացքում) ուժի կորուստով՝ հետագայում աւելացրել են ք յոգնակերտ (երկրորդ) մասնիկը:

Բ Դէմքում հայերէնը, սուժերերէնի հետ համեմատած, ունի թեթեւ՝ ոչ-հիմնական տարբերութիւններ, այսուհանդերձ ուշադրութիւն ենք հրաւիրում հետեւեալներին վրայ. ինչպէս ցոյց տուցինք՝ սուժեր ուղղական Բ դէմքի եզակի անձնական անկախ գերանունը ունի za-e (zō), zī, sī (բոլորն էլ «գու») ձեւերը. սուժերերէնը ունի նաեւ որպէս վերջիկը (suffix) կցուող եզակի - zu «գու» եւ յոգնակի - zune, - enzen «գուք» ձեւերը:

Սուժեր zu-ն հայերէնում երեւում է (անկախ) դաւ ձայնով: Անստովոր երեւոյթ չէ ինչպէս ազգակից, այնպէս էլ իրար հետ շփուած տարրեր լեզուների միջեւ սուլական, աստամաքմային եւ լեզուաքմային հնչիւնների փոխանակումները: Շ, չ, ս եւ ց հնչիւնները հայերէնում, որոշ դէպքերում դարձել են ծ, դ կամ ք, օրինակ՝ եւրոպական-հնդեւրոպական մի շարք լեզուների գոյականացուցիչ - sion վերջաւորութիւնը (սուսերէն-ցիլյա) հայերէնում երեւում է — թիւն (-թյուն) ձայնով՝ ս-ի (ց-ի) տեղ ք. հմմտ. նաեւ սուժեր ussu եւ հայ ութը: Այս երեւոյթը կարելի է գտնել անգամ մեզ մօտ. օրինակ՝ մեր Ուրմիայի բարբառում ծածկեմ-ը հնչում են տասկեմ (ծ > տ, ծ > ս): Հմմտ. նաեւ սասանել-ծածանել-տատանել, ամաչ-ամալթ (ամոթ), ճանաչ-ճանօթ, աղաչ-աղալթ (աղօթ): Շ. ի՛ ժ-ի հետ ունեցած լծորդութեան օրինակներ կան անգամ սուժերերէնի մէջ. օրինակ՝ սուժեր zag եւ dug (երկուն էլ) նշանակում են «ծունկ». հմմտ. նաեւ սուժեր zag (to roast, burn) եւ հայ. տաղ-ել (չ > տ), հետեւաբար հայ. դաւ գերանունը կարող էր սուժերերէնում հնչուել zu:

Ինչպէս ասացինք՝ սուժեր Բ դէմքի եզակի - zu «գու» ձեւը կցուող վերջիկը է. եթէ աչքի առաջ ունենանք z ձայնի s-ի հետ ունեցած լծորդութիւնը (հմմտ. անգլիական peter - son եւ հայ Հայկա-զուն՝ - son=զուն), ապա հետաքրքիր է մեր բայերի սահմանական եղանակ ներկայ Բ դէմքի -ս (սուժեր- zu վերջիկը նման Բ դէմքի) վերջաւորութիւնը՝ դրես, սիրես, բերես եւայլն (այն ժամանակ, երբ հայերէնում այլ տեղեր -ս վերջիկը Ա դէմքի ցուցիչ

34) Նոյն, էջ 109:

է՛ հա, աշակերտներս, սրաներս, հայրս եւայլն) : Ինչպէս պարզ երեւում է, Բ դէմքի մեր այս u վերջդիրը համընկնում է սումեր - zu վերջդրի հետ :

Սումեր -enzen «դուք» դերանուան -en վերջաւորութիւնը յոգնակերտ մասնիկ է, որի վերացմամբ՝ եզակին կը լինէր enz, որը դիմափոխութեամբ կը տար ինձ՝ մեր Ա դէմքի հայցական-տրականը. մեր ինձ-ի հետ համեմատել նաեւ սումեր անուղիղ անկախ zen «ձեզ» դերանունը. դիմափոխութեան այս երեւոյթը պէտք է տարօրինակ թուայ. դրա օրինակը գտնուում է եւ մեզ մօտ (անգամ թուափոխութեամբ). Վանի բարբառում ձիգնից, ձիգնով նշանակում են «ինձնից, ինձնով» :

Սումեր ուղղական Գ դէմքի եզակի ni կամ ne դերանունը համընկնում է հայերէնի նա, ան, էն-ի հետ, իսկ ni կամ ne-ի յոգնակի en - en «նրանք» ձեւը գտնում ենք մեր բարբառներում՝ ան-օն (-ք) (Պոլիս), էն-ուն (-ք) (Հաճըն), ին-օն (-ք) (Վան), ին-օն (-ք) (Կարին), ըն-ուն (-ք) (Տիգրանակերտ, Քեսաբ) եւայլն՝ բոլորն էլ «նրանք» իմաստով : Ինչպէս երեւում է՝ այստեղ նոյնպէս հետադարձում աւելացրել են յոգնակերտ f (երկրորդ) մասնիկը :

Սումեր եզակի Գ դէմքի անձնական bi դերանունը տեսնում ենք բայերի խոնարհման մէջ որպէս սահմանական եզանակ Գ դէմքի վերջաւորութիւն. օրինակ՝ sig - bi (սրան տեսանք sig բայի մեր բերած խոնարհման մէջ) : Հայերէնը այս b > վ հնչիւնը որպէս եզակի Գ դէմքի վերջաւորութիւն պահել է անցեալ կատարեալում՝ տես-աւ, անց-աւ, դա-աւ եւայլն : Հետաքրքիր է նաեւ այն, որ հայերէնում սրա յոգնակին է տես-ան, իսկ մենք գիտենք, որ այստեղ ն հնչիւնը պարզ յոգնակերտ մասնիկ է, որին ունենք նաեւ ուղղական Գ դէմքի յոգնակիում (երգե-ն), հետեւաբար գտնում ենք, որ խոնարհման այդ ձեւի յոգնակիում (տես-ա-ն) ա ձայնը մաշուած աւ է, որին գտնում ենք եզակիում (տես-աւ), քանի որ յոգնակին պիտի լինէր տես-աւ-ն : Նոյն բանը պատահել է եւ սումերերէնում : Եզակի Sig - bi (կամ Sig - ni)-ի յոգնակին Sig - e - ne է, որի e-ն մաշուած bi (կամ ni) է :

Սումերահայ կապերի տեսակէտով հետաքրքիր է նաեւ սումեր - ba վերջածանցը, որը յաճախ հանդէս է գալիս որպէս սեռական-

տրական հոլովի վերջաւորութիւն, օրինակ՝ ud - ba «օր-ւայ, օր-ին», հայերէնը հոլովական այս վերջաւորութիւնը քերականական նոյն իմաստով պահել է ժամանակ ցոյց տուող բառերում՝ օր-ուայ, ժամ-ուայ, տար-ուայ եւայլն :

Սումերերէնում սեռական հոլովի վերջաւորութիւն է նաեւ a ձայնաւորը. օրինակ՝ é adda - na «տուն հօր նրա»՝ «նրա հօր տունը», mu lugalla «անուամբ արքայի», այս կապակցութիւններում ad նշանակում է «հայր», adda՝ «հօր», lugal «արքայ», lugalla «արքայի» : Սեռականի այս ա վերջաւորութիւնը գտնում ենք եւ հայերէնում՝ Հայկայ, Արմենակայ, Վանայ, Սեւանայ, աղջկայ եւայլն :

Այս բերուածներից միանգամայն պարզուած է, որ հայերէնի սեռական հոլովի -ուայ եւ -այ վերջաւորութիւնները գալիս են խոր անցեալից եւ նոյնպէս վերապրող նշաններ են սումերահայ հին յարաբերութիւնների :

Կարծում ենք, որ հետաքրքիր է նաեւ սումերական Dadulul³⁴ (մի սումեր վաճառականի) անձնանունը, որը պահպանուել է մեր Թաթուլ անունի մէջ :

Ի՞նչ եզրակացութիւն պիտի հանել սումերերէնի եւ հայերէնի մէջ եղող այս ընդհանրութիւններից : Սումերերէնը հայերէն է : Չենք կարող ասել այն : Ճիշդ է, որ սումերերէնի հնագոյն արձանագրութիւններից, որտեղ յիշուում են մեր նշած նմանութիւնների կարեւոր մասը, մեզ բաժանող ժամանակահատուածը հասնում է մօտ 5—6 հազար տարիների, եւ այս ժամանակներում կատարուած պիտի լինեն մեծ փոփոխութիւններ՝ հայերէնը հեռացնելով սումերերէնից (անգամ մեր ներկայ բարբառներում կան այնպիսիք՝ Ալուլիս, Կարձեւան, Սուեդիա եւայլն, որոնք լեզուաբան չեղողի համար մօտաւորապէս նոյնքան անհասկանալի են, որքան սումերերէնը), սակայն տակաւին բաւարար հիմքեր չունենք (հայերէնի եւ սումերերէնի մեզ յայտնի առեւանջերով, մանաւանդ հեթանոսական շրջանի հայերէնից դրաւոր նմուշներ գեւ չունենք) յայտարարելու, որ սումերերէնը հայերէն է :

Սումերերէնը լեզուաբանութեան յայտնի է որպէս կցական

34) S. Langdon, p. 139:

(agglutinative) լեզու : Այդպէս է կոչուում, որովհետեւ բառարմատը գրեթէ չի ենթարկուում թեքման. օրինակ՝ նախադասութեան միւս անդամների հետ բայի կապը արտայայտուում է մի շարք նախադաս եւ յետադաս անկախ մասնիկներով կամ բառերով, որոնք կըցուում են՝ անփոփոխ մնացող բայարմատին : Հնդեւրոպական եւ սեմական լեզուներում արմատը ենթարկուում է թեքման, չի պահուում իր նախկին անկախ վիճակը եւ փոխուում՝ արտայայտելու համար զանազան անհրաժեշտ իմաստային կապակցութիւններ : Այսուհանդերձ, սակայն, մեր կարծիքով, լեզուները ազգակցական խմբերի բաժանելիս (հնդեւրոպական, սեմական եւ այլն)՝ ազլուտինատիւ յատկութիւններ ունեցող լեզուները պէտք չէ ազգակցական առանձին խումբ համարել, որովհետեւ հնդեւրոպական եւ սեմական խմբերին պատկանող լեզուների մէջ եւս այս կամ այն չափով ազլուտինատիւ յատկութիւններ գրասեւորուում են, եւ մենք գտնուում ենք, որ հնդեւրոպական լեզուները այս տեսակէտով բաւական մօտենում են սումերերէնին, որտեղ կան նաեւ թեքման որոշ երեւոյթներ. ուստի թեքական յատկութիւնները որոշ ուղղութեամբ զարգացման հետեւանք պիտի համարել եւ տարբերութիւնները գնահատելիս՝ աչքի առաջ պիտի ունենալ, այլ գործօնների հետ, ժամանակի տարածութիւնը, որ բաժանում է համեմատուող լեզուները :

Այս տեսակէտով սումերերէնի եւ հնդեւրոպական լեզուների մօտիկութիւնը ցոյց տալու համար բերենք սումերերէնի ազլուտինատիւ կազմուածքից մի օրինակ, որը համեմատուում է Ֆրանսերէնի հետ՝ ցոյց տալու համար նաեւ, թէ որքան մօտ է հայերէնին :

Սումերերէն *lal* նշանակում է *payer* (վճարել), իսկ *in-na-an-lal il-le-lui-a-payé*³⁵ (ան-այն-նրան-վճարել [-է]), կամ *ni-na-an-lal* նա-այն-նրան-վճարել(-է) : Այստեղ հայերէնի նմանութիւնը ակնյայտ է որոշ թեքումով հանդերձ :

Սրա հետ մէկտեղ, տակաւին, ինչպէս ասել ենք վերելում, բաւարար հիմքեր չունենք յայտարարելու, որ սումերերէնը հայերէն է, սակայն մի բան աներկրայօրէն որոշ ու հաստատապէս կարող ենք ասել, որ սումերերէնի եւ հայերէնի միջեւ գոյութիւն է ունեցել շփում-կապ, իսկ այդ կապը եղել է ուղղակի եւ ոչ թէ երրորդ լեզուի միջո-

³⁵) G. Contenau, «La Civilisation des Hittites et des Hurrites du Mitanni», Paris, 1948, p. 20 - 21:

ցով : Վերելում մեր բերած մօտ 50 բառերի ցուցակը կազմելիս, դիտաւորեալ կերպով սումերերէն բառերի կողքին բերել ենք նշանակութեամբ նրանց համապատասխանող ակկադա-սեմական բառերը, եւ ինչպէս պարզ երեւում է՝ ակկադական բառերը հնչիւնով (չափ քիչ բացառութեամբ) նման չեն սումերական եւ հայկական բառերին, մինչդեռ սումերերէն բառերը թէ՛ հնչիւնով եւ թէ՛ նշանակութեամբ միանգամայն համապատասխան են հայկականներին : Սա կարելու է անհերքելի փաստ է, որ սումերահայ կապը եղել է ուղղակի եւ ոչ թէ աշխարհազրականօրէն երկուսի արանքում գտնուող սեմական աշխարհի միջոցով :

Ապա ինչպէ՞ս եւ ե՞րբ եղել այդ կապը : Ահա հենց այս հարցի պատասխանն է, որ մեծ նշանակութիւն ունի արմէնների Հայկական լեռնաշխարհում անյիշելի ժամանակներից գոյութիւն ունեցած լինելը պարզելու համար՝ հայերի՝ Հայկական լեռնաշխարհի հիմնական բնիկները եղած լինելը ցոյց տուող փաստերի վրայ մի կարելու ասպացոյց եւս աւելացնելու համար :

Վերելում մեր ներկայացրած բառացուցակի հետեւեալ բառերը (ընդհանուրի մօտ 2/3-ը) Աճառեանից բերուած տուեալների համաձայն, հաստատապէս հնդեւրոպական են. էշ. աղալ, պեղել, հետ (ոտ), ան, գոյ, կաք, կեր, կուր, կիմ, գարուն, գետ, աչք (ակն), սոնիլ (արարել), լոգնալ, ամոււն, շոդ, տապ, դուլ, դուռ, օդ, օդի, ամէն, առնիլ, էծ (այծ), գայրանալ եւ ծան (նախաչել) : Քանի որ սումերերէնը հնդեւրոպական լեզու չի համարուում, ապա պիտի ընդունել, որ այս բառերը (սրանցից դատ, ինչպէս ասել ենք, դեռ կան շատ ուրիշներ, որ մենք չենք բերել) նա ստացել է մի հնդեւրոպական լեզուից, որի հետ ուղղակի շփման մէջ է գտնուել : Այս բառերը այնքան նման են հնդեւրոպականներին, որ դրանց սումերերէնում գոյութիւնը չի կարող բացատրուել մի մեծ (հիւսիսեւրասիական) լեզուախմբի շրջանակի մէջ առնելով : Միանգամայն պարզ է, որ դրանց գոյութիւնը մի հնդեւրոպական լեզուի հետ ուղղակի շփման արդիւնք է :

Ե՞րբ է եղել այդ շփումը : Այս հարցի լուծման համար մենք անում ենք հետեւեալ ելակէտային խորհրդածութիւնը.

ա) Ի հարկէ այդ շփումն ու փոխառութիւնները պիտի տեղի ունեցած լինեն սումերական հնագոյն արձանագրութիւնների ժամանակներից առաջ, քանի որ այս բառերից ոմանք գտնուում են նաեւ հնա-

զոյն արձանագրութիւնները վրայ, իսկ այդ արձանագրութիւնների ժամանակները մեզ տանում են մինչեւ Գ. Հազարամեակի առաջին կէտը (մ. թ. ա.) :

բ) Պիտի ընդունել միաժամանակ, որ հենց արձանագրութիւնների առաջին օրերին է, որ սումերները իրենց լեզուի մէջ ընդունեցին այդ բառերը, այլ բառական առաջ եւ երկարատեւ շփման ընթացքում :

գ) Յետոյ աչքի առաջ ունենալով այն հանդամանքը, որ այդ կանուխ ժամանակներում մարդիկ զուրկ էին հաղորդակցութեան (յառկապէս հեռուոր տեղերի հետ կապի) էֆեկտի միջոցներից, չկար գիր, չկար հեռուոր վայրերի հետ գործուն առևտուր, չկար աշխարհակալ պետականութիւն (հիմնական միակ գործուն շարժումը քոչւորութիւնն էր) : Հետեւաբար մշակութային փոխանակութիւնները կարող էին կատարուել առելի փոխանակող կողմերի հարեւանութեամբ եւ անմիջական շփումով :

դ) Ի հարկէ մենք չենք անտեսում փոխանցման գործում միջնօղակի դերը, սակայն ինչպէս ցոյց տուեցինք, այս դէպքում, սեմական աշխարհը փոխանցողի (միջնօղակի) դեր չի կատարել եւ ինչպէս տեսանք, սկիզբից անհաշիւ ճայնով նման չեն սումերական-հայկական բառերին. այս երեւոյթը բնական է, քանի որ այս բառերը գտնուում էին սումերական լեզուում սկիզբների երեւումից առաջ :

ե) Սումերների երկրի շրջապատում չենք գտնում հնդեւրոպական լեզու խօսող ցեղերի հետք. անգամ Իրանում եւ Հնդկաստանում Բ. Հազարամեակից առաջ չկային հնդեւրոպական լեզու խօսողներ :

Ի մի բերելով վերոյիշեալները՝ մեզ մնում է ընդունել, որ լեզուական տարրերի այդ փոխանցումները կատարուած են Գ. Հազարամեակից առաջ (մ. թ. ա.) հնդեւրոպական լեզուի կազմաւորման ու բիրեղացման շրջանին : Ի հարկէ սումերների եւ հայկական ցեղերի միջեւ շփումը գոյութիւն ունեցած պիտի լինի շատ աւելի կանուխ շրջանում, երբ սումերները դեռ չէին իջել հարաւ եւ ասորում էին որպէս հայկական ցեղերի հարեւաններ :

Հնագիտութիւնն արդէն բառական վստահելի ճշդութեամբ պարզել է Սումերի հնագոյն ժողովուրդների ծագման խնդիրը : Սումերական մշակոյթին վերաբերող մի շարք հնագիտական վայրերի պեղումները եւ դրանց արդիւնքների դասաւորումն ու ուսումնասի-

րութիւնները յայտնի են դարձել, որ Հարաւային Միջագետքում նոր քարէ դարի ժամանակներում Պարսից ծոցի եզերքների մօտ բնակութիւն են հաստատուել եղէգներից հիւսուած տնակներում ապրող մի պրիմիտիւ ժողովուրդ : Այս ժողովրդի հետքերը առաջին անգամ յայտնաբերուել են՝ ներկայումս Al-Ubaid կոչուած վայրի պեղումների ամենաստորին շերտում եւ դրա համար էլ սրանց ժամանակաշրջանը այդ վայրի անունով պայմանականորէն կոչուել է Ալ-Ուբեյդեան մշակոյթի (նախադինաստիական առաջին) ժամանակաշրջան : Վերջնականապէս պարզուել է, որ այս պրիմիտիւ ժողովուրդը եկել է Իրանի կողմերից³⁶ : Նրանք Միջին-Ասիայի Թուրանական ցեղերի նախնիների հարաւային հարեւաններն էին, որոնք իրենց հետ բերած պիտի լինեն եւ սումերներին փոխանցած Թուրքերէնը յիշեցնող այն բառերը, որոնք նշմարուում են սումերերէնի մէջ (Թուրքերը ոչ մի կապ չունեն մեծ մշակոյթ ունեցող բուն սումերների հետ) :

Ալ-Ուբեյդեան մշակոյթին անմիջապէս յաջորդել է բուն սումերական կոչուող եւ աշխարհում յայտնի առաջին մեծ քաղաքակրթութեան կրողների նիւթական մշակոյթի հետքերը, որոնք առաջին անգամ յայտնաբերուել են Uruk-ի (Ս. Գրքում՝ Erech, այժմ՝ Warka)՝ սումերական ամենահին քաղաքի վայրի պեղումներով, եւ դրա համար էլ նրանց ժամանակաշրջանը կոչուել է Ուրուքեան մշակոյթի (նախադինաստիական երկրորդ) ժամանակաշրջան :

Գիտութեանը յայտնի է դարձել արդէն, որ սումերերէն լեզու խօսող եւ սումերական մշակոյթը կրող այս հնարամիտ եւ տաղանդաւոր ժողովուրդը (նրանց ամենամեծ նուաճումը պիտի համարել զրի ստեղծումը) նախապէս եղել է լեռնային ժողովուրդ³⁷ : Նրանց նախկին բնակավայրը եղել է Միջագետքի եւ Ասորիքի հիւսիսում տարածուող լեռնային երկրները՝ մեզ յայտնի Արարատը (Կորդուքը), Արմէ-Շուպրիան, Կիլիկիան եւ նրանց յարող ու հարեւան տեղիտորիաները : Սումերները հաւատում էին, որ իրենք լեռների ծրնունդ են, սումերերէնում կարգում ենք. a-kurgal e-ri-a «որին հայրը՝ մեծ լեռը ստեղծեց» (S. Langdon, 94):

³⁶) Seton LLoyd, «Twin Rivers», Oxford, 1943, p. 2:
³⁷) «...» p. 12, Leonard Woolley, «Ur of the Chaldees», (Pelican Books), 1940, p. p. 83 - 88.

Նրանք լեռնային այս շրջաններից Դ հազարամեակին (մ. թ. ա.) Եփրատ ու Տիգրիս գետերի հոսանքով աստիճանաբար իջել են հարաւի բերրի եւ բարեխառն կլիմայ ունեցող դաշտավայրերը եւ վերջնական բնակութիւն հաստատել երկու գետերի բերած տիղմի պատճառով նահանջող Պարսից ծոցի ափերի մօտ: Նրանց լեռնային այդ բնակավայրերից դէպի սուժեր տանող ճանապարհներն ընդգրկող տերիտորիաների վրայ մի շարք հին կացարանների հնազիտական պեղումները յայտնաբերել են սուժերական ու բուժական մշակոյթի նախատիպը հանդիսացող նիւթական մշակոյթի մնացորդներ: Այդ կացարաններից կարելի է յիշել հետեւեալները.

1. Մուսուլի հիւսիսում երկու բլուր.

ա) Arpachiyah (պեղում՝ Անդլիական թանգարանի կողմից 1931 թուին):

բ) Tepe - Gawra (պեղում՝ Պենսիլվանիայի համալսարանի կողմից 1931 թուին)³⁸:

2. Սինճար լեռների ստորոտում մի վայր (պեղում՝ Իրաքի կառավարութեան կողմից 1939 թուին)³⁹:

3. Նիսիրինի (Մծբինի) մօտ Tell - Halaf կոչուած վայրը (պեղում՝ Baron Von Oppenheim-ի կողմից 1914 թուականից առաջ)³⁸:

1935 թուին Տել-Հալաֆեան խեցեղէնի նմանները գտնուեցին տարածուած Տիգրիսի վերին աւազանից մինչեւ Միջերկրական հասնող տերիտորիաների վրայ: Գիտութեան կողմից Տել-Հալաֆեան կանխադոյն ժամանակաշրջանը թուադրում է մօտ 4500 թ. (մ. թ. ա.)⁴⁰:

4. Sakje-Geuzu (պեղում՝ անդլիական մի արշաւախմբի կողմից)⁴¹:

5. Antioch (պեղում՝ ամերիկացիների կողմից)⁴²:

6. Mersin-ի մօտ՝ Տարոս եւ Ամանոս լեռների միջեւ մի բլուր (պեղում՝ Լիվրպուլի համալսարանի պրոֆեսոր Garstang-ի կողմից)⁴³:

³⁸) Seton LLoyd, p 9:

³⁹) Նոյն տեղում, էջ 8:

⁴⁰) Նոյն տեղում, էջ 11:

⁴¹) Նոյն տեղում, էջ 10:

⁴²) Նոյն տեղում, էջ 10:

⁴³) Նոյն տեղում, էջ 10:

Մերսինի պեղումների տուեալները երեւան են հանել սուժերական մշակոյթի նախնական հնագոյն էտապները, որոնք շերտ առ շերտ ուրուքեան եւ ալ-ուբեյդեան ժամանակաշրջաններից աստիճանաբար շատ դարերով յետ են դնում եւ ցոյց են տալիս, որ այս շրջանը մտնում է սուժերական մշակոյթի բնօրրանի մէջ:

Մենք չբերեցինք անունները բոլոր այն վայրերի, որոնց պեղումները շատ մեծ նշանակութիւն են ունեցել սուժերական մշակոյթի ծագման հարցը եւ նրա զարգացման ստադիաները ճշտորոշելու տեսակէտով, սակայն կարծում ենք որ այսքանն էլ բաւական է ցոյց տալու այն ուղղութիւնը որով իջել են սուժերները դէպի Հարաւային Միջագետք, եւ այն լեռնային շրջանները, որտեղ բնակուելիս են եղել Սուժեր գալուց առաջ:

Ղ. Ալիշանն իր «Հին Հաւատք Հայոց» աշխատութեան մէջ բերում է այս հարցի համար մի շատ կարեւոր տեղեկութիւն — վկայութիւն. նա գրում է. «... Իտալ նոր հեղինակ մի, Պիւթագորասի ուղեւորութեան վիպասանական պատմիչ, երգել տայ Քաղղէացոց. «ո՛վ լուսին, բնակիչք աշխարհին հայոց՝ որ մեր հին նախահարքն էին, նուիրեցին քեզի լեռ մի եւ պաշտօն, եւ կու պարծին քու անուամբ կոչուելու»⁴⁴: Յայտնի է, թէ Պիւթագորասի ուղեւորութեան վիպասանական պատմիչը որտեղից է քաղել այս անգին տեղեկութիւնը, սակայն կասկած չկայ, որ այն խոր անցեալից եկող՝ օտարների կողմից նշուած գոհարներից է, որն անաղարտ պահել է պատմական կարեւոր յիշողութիւններ, որոնք բերուած պիտի լինեն (վերագրուելով Քաղղէացիներին) սուժերակազական հին աղբիւրներից: Պիւթագորասեան այս յիշատակութիւնը կոնկրէտ վկայութիւն է եւ անժխտելի փաստ, որ լուսնապաշտ (Nannar-ին պաշտող) սուժերների նախնիները եղել են հայոց աշխարհի բնակիչներ: Հետազօտողներից ոմանք սուժերներին բերում են Փոքր Ասիայից⁴⁵, ոմանք էլ՝ Կովկասից⁴⁶: Միեւնոյն է. նրանք սուժեր իջնելուց առաջ երկար ժամանակ բնակուել են Հայկական լեռնաշխարհում եւ ապա Հիւսիսային Միջագետ-

⁴⁴) Ղ. Ալիշան, «Հին Հաւատք Հայոց», էջ 101, ծան. 1:

⁴⁵) Seton LLoyd, «Twin Rivers», p. 6:

⁴⁶) Ամպրոզիոյ Տոմիսի «Մարդիկ, կուլտիւր եւ Աստուածներ», Մոսկուա, 1966,

բում, եւ ինչպէս ասացինք վերելում՝ մօտաւորապէս Գ Հազարամ-
եակի սկզբներին կամ աւելի առաջ շիման մէջ են գտնուել հնդեւրո-
պական լեզու կրող մի ժողովրդի հետ եւ լեզուական տարրերի փո-
խանակութիւններ կատարել:

Ուլքե՞ր էին հնդեւրոպական լեզու ունեցած այդ ժողովուրդը
այդքան կանուխ ժամանակներում (երբ կարծու՞մ էր, թէ հնդեւրո-
պական լեզու խօսողներ չկային այստեղ այդ ժամանակ):

Այս հարցի տեսակէտով կարելո՞ր նշանակութիւն են ստանում
հետեւեալ հանգամանքները.

1. Չպիտի պատահականութեան վերադրել վերելում մեր նը-
շած այն երեւոյթը, որ մեքէ գերանունն (սուժերական ne յոգնակիին
համապատասխանող ն մասնիկով) ունեցող հայ բարբառները, ի տար-
բերութիւն մեք գերանունն ունեցող բարբառների, դրաւում են Հայ-
կական լեռնաշխարհի հարաւային շրջանները (Ուրմիա, Վան, Մուշ,
Տիգրանակերտ, Պարբերդ, Ձէյթուն, Հաճըն, Մարաշ, Քեսար, Բէյ-
լան)՝ ճիշդ այն լեռնային տերիտորիաները, որոնք մտնում են սու-
մերների հետ շիման շրջանների մէջ:

Միաժամանակ նկատի առնելով մի շարք հայկական բարբառ-
ների աւն, աւնի, էւնի, նի յոգնակերտ մասնիկ ունենալը եւ բոլոր բար-
բառներում ն-նր (եւ-ից առաջ-ն) յոգնակիի դոյութիւնը, ապա ան-
գամ դժուար է որոշել, թէ ո՞վ ուժի՞ց (սուժերնե՞րը հայերից, թէ՞
հայերը սուժերներից) է վերցրել այս յոգնակիները:

2. Եթէ դժուար է որոշել, թէ ո՞վ ուժի՞ց է վերցրել այդ յոգ-
նակիները, ապա երկու լեզուների մէջ կան այնպիսի ընդհանրու-
թիւններ կամ նոյնանմանութիւններ, որոնց մէջ դժուար է առաջնու-
թիւնը առ սուժերականներին: Այս տեսակէտով ուշադրութիւն են
դրաւում մեր վերելի ցուցակում բերուած հետեւեալ բառարմատ-
ներն ու նոյն արմատից կազմուած կրկնական բարդ բառերը:

Ir = ար («առնել, ստեղծել»), ir - ir = արար[չութիւն], i š i,
e š, š e š = կիծ, կոծ, is - i š = կսկիծ, dub = քափ[ել], tab-tab
= քափքափ[ել], քափքփ[ել], քօքափ[ել]:

Այս սուժեր արմատներն ու կրկնական բարդերը թէ՛ ձայնով
եւ թէ՛ նշանակութեամբ համապատասխանում են հայկականներին,
հետեւաբար նրանց նոյնութիւնն ակնյայտ է: Որո՞նք են առաջնայի-
նը: Հայկականները սուժերականներից են եկել, թէ՞ սուժերական-

ները հայկականներից: Այս տեսակէտով կարծիք կազմելու համար
աչքի առաջ ունենք հետեւեալ հանգամանքները.

ա) Սուժերէնը հնդեւրոպական լեզու չի համարում, մինչ-
դեռ հայերէնը հնդեւրոպական է. ir - ir (ար-ար) կազմուած է ir
(ար) արմատի կրկնութեամբ, իսկ ար (> առնել) հնդեւրոպական է:

բ) Կան լեզուներ, որոնց մէջ նոյնպէս նշմարում են արմատ
բառի կրկնութեամբ կազմուած բարդ բառեր, որովհետեւ արմատ
բառ կրկնելը դալիս է խոր հնութիւնից, անգամ լեզուների կազմա-
ւորման ժամանակաշրջանից: Այդ ժամանակներում՝ լեզուների զար-
դացման այդ ստադիայում, դեռ չէին առաջացել յոգնակերտ մաս-
նիկներ կամ բառեր, եւ յոգնակիին արտայայտում էին արմատ բառի
կրկնութեամբ: Այս երեւոյթի քիչ հետքեր հասել են մեզ սեպագրա-
կան շրջանից. օրինակ՝ սուժերէն mada mada նշանակում է երկրներ,
umun kur - kur - ra՝ աէր երկրների, dingir gal - gal՝ աստուած մեծ-մեծ
(= մեծ աստուածներ), gud - tur - tur՝ եգ-փոքր-փոքր (= փոքր եգ-
ներ) եւայլն⁴⁷:

Հայերէնը սակայն կրկնականների տեսակէտով բացառիկ աչ-
խտութիւն ու հարստութիւն է ցուցաբերում: Եթէ սուժերէնում
(անգամ այդ չին՝ սեպագրական ժամանակներում) քիչ հետքեր են
պահուել⁴⁸, ապա հայերէնում, այժմ իսկ, բազմաթիւ են այնպիսի
կրկնականներ, որոնք յոգնակիի ծագում կամ հանգամանք ունեն-
օրինակ՝ պէսպէս, գոյնգոյն, կարկրիլ եւայլն: Մեր հետազոտու-
թիւնները ցոյց են տուել, որ հայերէնը, համեմատած իր շրջապա-
տի լեզուների հետ, այս ուղղութեամբ (կրկնական ձեւերի շատու-
թեամբ ու տեսակներով) առանձնայատուկ երեւոյթ է ցուցաբերում:
Այդ բանին հաւանաբար նպաստել է նաեւ հայերէնի՝ բարդ բառեր
կազմելու կամ ստեղծելու մէջ ունեցած բացառիկ ճկունութիւնը:

Հայերէնում արմատի կամ բառի կրկնութեամբ կազմուած
բազմաթիւ եւ անհամար բարդ բառեր կամ կրկնականներ ունենք, ո-

47) S. Langdon, «A Sumerian Grammar and Chrestomathy», p. 81 - 82.
48) S. Langdon-ը նոյն գրքի 81-րդ էջում գրում է. «The primitive method of
indicating the plural seems to have been the cumbersome process of doubling the word.
Few traces of this ancient phenomenon remain».

որոնք հանդէս են պալիս կազմութեան տարրեր՝ ձեւերով, սակայն, ընդհանրապէս հիմքում ունենալով յոգնակիւի հանգամանք՝ արմատի իմաստի ուժեղացում, սաստկացում կամ բազմացում են արտայայտում:

Բազմաթիւ են այնպիսի կրկնականներ, ինչպիսիք են փողփողիլ, վառվառիլ, վառվըռիլ, ողողիլ, երերալ, դողդողալ, ջախջախիլ, չարչարիլ, սարսուռ, ծործոր, մոմուռ եւայլն եւայլն:

Ի հարկէ կարելի էր տասնեակներով բերել այնպիսիներ, որոնք բնաձայնական ծագում ունեն, ինչպէս օրինակ՝ մոմուռ, ֆլֆլալ, տղտղալ, հահալ, ցվցվալ եւայլն, էլ չենք խօսում այնպիսի կազմութիւնների մասին, ինչպիսիք են շարեշար, պատեպատ, սարեսար եւայլն, կամ ձեռք-ձեռքի, ուս-ուսի, ձայն-ձայնի (ձայն ձայնել կամ ձենձենել, ձայն-ձուն կամ ձեն-ձուն) կամ տեսակ-տեսակ, ֆիչ-ֆիչ, տեղ-տեղ, հատ-հատ եւայլն, եւայլն:

Կրկնականներից շատերը, ի հարկէ, գալիս են մեր բարբառներից, սակայն, ինչպէս նշել ենք վերելում, բարբառները պակաս հնութիւն չունեն դրաբարի հետ համեմատած: Անշուշտ մենք չենք ուզում ասած լինել, որ մեր ներկայացրած ու չներկայացրած բոլոր կրկնականները գալիս են անցեալից. մեր նպատակը եղել է ցոյց տալ հայերէնի իւրայատկութիւնն ու հարստութիւնը այս տեսակէտով:

դ) Քիչ քանակութեամբ պահպանուած եւ յոգնակիւի կազմութիւն ունեցող սումերերէն կրկնականներից վերելում նշուածները՝ dingir gal - gal (= աստուած մեծ-մեծ), gud - tur - tur (= եզ-փոքր-փոքր) եւ միւսները իսկապէս պիմիտիւ ձեւերի տպաւորութիւն են թողնում, բայց նոյն բանը չենք կարող ասել ir-ir (= ար-ար[չութիւն]), is - iš (կս-կիծ) tab - tab (= թափ-թափ[ել] > թափ-թրփ[ել], թօ-թափ[ել]) ձեւերի մասին, որոնք աւելի հայկական կրկնականների դասին են պատկանում:

Ի մի բերելով կրկնականների մասին վերելում մեր բերածները, չենք կարող ir - ir = արար[չութիւն], is - iš = կս-կիծ, tab-tab = թափ-թափ[ել], զոյգերի մէջ անդրանկութիւնը տալ սումերականներին:

3. Մեր վերելում բերած սումերական-հայկական մօտ 50 բառերի ցուցակում կան եւ այնպիսիներ, որոնց քննութիւնը երեւան է

հանում շատ հետաքրքրական եւ նշանակալի երեւոյթ եւ մեզ օգնում են հաստատապէս պարզելու, թէ սումերները ո՞ր հնդեւրոպական լեզուից են ազդուած կամ օգտուած: Դրանցից բերում ենք նախ հետեւալ բառերը. ga = գոյ, gurun = գարուն, lag = լոգ:

ա) Գոյ բառը ըստ Աճառեանի Արմատական բառարանի (որի սուեաների կարեւորագոյն մասը բերել ենք ցուցակում) բնիկ հայ բառ է եւ ծագել է հնդեւրոպական ves «մնալ, բնակիլ, տուն-տեղ լինել» արմատից, որից առաջ են եկել հնդեւրոպական ցեղակից լեզուների հետեւալ բառերը.

- սանս. vasati «բնակիլ, մնալ, գիշերել»,
- սանս. vastu «տեղ, վայր, բան, իր»,
- գենդ. vanhaiti «բնակում է»,
- գոթ. wisan «մնալ, բնակիլ»:

Աճառեանն ինքն էլ նկատում է, որ այս բառերի «նշանակութիւնները համապատասխան չեն հայերէնին», բայց, ասում է, «ves գերմանական լեզուներում ստացել է «լինել, գոյ լինել նշանակութիւնը» եւ բերում է.

- գոթ. wisan «լինել»,
- գոթ. was «էի»,
- գոթ. wist «գոյութիւն, բնութիւն»,
- գերմ. war «էի»,
- անդլ. was «էի»:

Ինչպէս տեսնում ենք, հայերէնից զատ բոլոր այս լեզուները պահել են հնդեւրոպական ves արմատի v նախաձայնը, մինչդեռ հայերէնը v ձայնի տեղ ունի գ ձայնը, եւ ընդհանրապէս հնդեւրոպական v ձայնի տեղ գ ունենալը հայերէնին յատուկ երեւոյթ է: Եւ ահա մենք տեսնում ենք, որ սումերերէնում էլ ga բառը նոյնպէս ունի գ նախաձայնը, եւ սա անտարակուսելիօրէն թելադրում է, որ սումերերէնը այս բառը կարող էր վերցրած լինել (հնդեւրոպական լեզուների մէջ) միայն հայերէնից: Այս տեսակէտը ուժեղացնող միւս հանգամանքը այն է, որ հնդեւրոպական լեզուների մէջ հայերէն բառն է, որի նշանակութիւնը ճշգրտօրէն համապատասխանում է սումերական բառի նշանակութեան՝ ga = exist = գոյ:

բ) Գարուն բառն ըստ Աճառեանի Արմատարան բառարանի նոյնպէս ընդհանրապէս հայ բառ է, որի ցեղակիցներն են.

սանս.	vasantá
զնդ.	vanhar, vanhri
պրս.	vahara, bahar
պհլ.	vahar
օս.	valjag
զնչ.	varno
յն.	έαρ, հոմեր φέαρ
հսլ.	vesna
ռուս.	վեսна

«գարուն»

Հնդեւրոպական նախաձեւն էր uēsr, որի հետ կար նաեւ uēsra եւ սրանից կրճատուած vēr, աշուն, գարուն իրար են ազդած. եթէ գարուն բառի -ուն մասնիկ է, գար կապուած է հնի. vesr ձեւի հետ, անցնելով vesar > գեհար > գաեհար > գար ձեւերից: Karst-ից բերում է մոնղոլ. xabur, ըստ բեթ. kabar, xabar, ճապոն haru «գարուն»:

Ինչպէս տեսնուած է, հայերէնը V նախաձայնի տեղ ունի գ ձայնը եւ մենք դանում ենք, որ սոււմերական gurun = «harvest, fruit» բառը կարող էր դալ միայն հայ գարուն բառից. ո՛չ թէ միայն գ նախաձայնի հայկական լինելուն պատճառով, այլեւ հայ բառի -ուն վերջաւորութիւնը անսխալ պահած լինելուն պատճառով, եւ եթէ -ուն վերջաւորութիւնը մասնիկ է, ինչպէս («եթէ» ասելով) հաւանական է համարուած Աճառեանը (մանաւանդ որ «գարուն, աշուն իրար են ազդած»), ապա, առաւել եւս, հնդեւրոպական միւս լեզուների համապատասխան բառերից միայն հայ բառը կարող էր սոււմերական բառի նախատիպը եղած լինել: Ուստի կասկածից դուրս է, որ սոււմերերէնը gurun բառը վերցրել է հայերէնից:

դ) Գոյ, գարուն բառերի նման ուշադրութիւն է դրւում նաեւ լոզ («լողանալ, լուացուել») բառը, որը (ըստ Աճառեանի) առաջ է եկել հնդեւրոպական lov արմատից. համեմատութեան համար Աճառեանը բերում է հետեւեալ ցեղակից բառերը.

յն. λουω (< λουω), λουεω հոմեր. λουω (< λουω)
«լուալ, լուացուել, լողանալ», որից

Փրնս.	laver	} «լուանալ» եւն.:
իտալ.	lavare	

Ինչպէս տեսնուած ենք լոզ բառուած եւս, ըստ նշուած օրինակափութեան, հայերէնը հնդեւրոպական V ձայնի տեղ ունի գ ձայնը, այնպէս որ սոււմերական lug (= «be clean, to wash») բառը, որ ճշտօրէն համապատասխանում է հայ լոզ (լոզանալ) բառին, եղած պէտք է լինի հայերէնից, որովհետեւ սոււմերերէնը, անսխալութեամբ լիօրէն, այս բառն եւս կարող էր ստանալ միայն հայերէնից:

Մեր հարցի տեսակէտով հետաքրքրական է նաեւ այն, որ սոււմերերէնում նշմարուող հնդեւրոպական բառերը նշանակութեամբ աւելի մօտ են հայկականներին:

Օրինակ՝ սոււմեր. bal (= անգլ. «dig» «փորել») բառը հայերէնում համապատասխանում է պիղ-ել բառին, որը ծագել է, ըստ Աճառեանի, հնի. bel «կարել, հանել» արմատից, որից ցեղակից լեզուները պահում են՝

սանս.	bila	«խոռոչ, ծակ, բացուածք»,
չուեղ.	bera	«ծակ, բացուածք»,
հիւլ.	belach	«ծերպ, ճեխք»,
նիւլ.	bealach	«ճամբայ, լեռնանցք»:

Բերուածներից պարզ երեւում է, որ սոււմեր բառը նշանակութեամբ աւելի համընկնում է հայկականին:

դ) Սոււմեր id, g'id (= անգլ. «river» «գետ») բառը հայերէնում համապատասխանում է նոյնպէս գիտ բառին, որը, ըստ Աճառեանի, ծագել է հնի. vedo-ձեւից, որից ցեղակից լեզուներում կան՝

սանս.	udan	«ալիք»,
յն.	ὕδαρ (սեռ. ὕδατος)	«ջուր»,
լատ.	unda	«ալիք»,
հիւլ.	vatn	} «ջուր»,
գոթ.	wato	
գերմ.	wasser	
անգլ.	water	
հսլ.	voda	
ռուս.	վанна	

փոխ. βέδυ

անդլ. wet «թաց»,

բուլղար wada «դեա»:

Ինչպէս պարզ երեւում է՝ բուլղար բառից դատ, ցեղակից ոչ մի լեզուի բառ չունի սուժեր եւ հայ բառերի ճիշտ («գետ») նշանակութիւնը: Առաւել դրան՝ եթէ Karst-ի բերած g'id ձեւը ճիշդ է, ապա ց' նախաձայնը միանգամայն հայկական է, քանի որ ցեղակից լեզուները պահում են հնդեւրոպական vedo արմատի V նախաձայնը:

ե) Ուշադրութիւն է դրւում նաեւ Umman-ամէն յարաբերութիւնը: Ամէն բառի համար Աճառեանից բերում ենք հետեւեալը.

Ամէն «բոլոր» = հնի.smmo ձեւից, որի միւս ժառանգներն են ի միջի այլոց՝

սանս.	sama	«խրաքանչիւր ոք»,
գնդ.	hama	«ամբողջ, նոյն»,
հպրս.	hama	»բոլոր, ամբողջ»,
փարսի	hama	
պրս.	hamah	
աֆղան	hamah	
պհլ.	hamak	
բելուճ.	hama	
քրդ.	ham	
դադա	hame	
յն.	ἄμο, αμα	«միասին»,
գոթ.	sums	»ոմն ոք» եւն.:
հրդ.	sum	
հիւլ.	sumr	

Հ. ամէն բառի մէջ պարզ արմատն է աւ՝ < smmo-, իսկ -էն մասնիկ է»:

Ամէն բառն իրականում հնչում է ամմէն (երկու մ-ով) ճիշտ սուժեր բառի եւ հնդեւրոպական արմատ smmo-ի նման, մինչդեռ ցեղակից բառերը ունեն մէկ մ:

Այստեղ նոյնպէս պարզ երեւում է, որ հնդեւրոպական ընտանիքում ոչ մէկը չունի այս բառը -էն մասնիկով, որը յատուկ է միայն հայ բառին, որով հայկական է: Եւ ահա սուժեր բառն էլ (umman) հանդէս է գալիս նոյնպէս -էն (-an) վերջաւորութեամբ, իսկ իր

(umman = «people, host») «ժողովուրդ, բազմութիւն» նշանակութեամբ աւելի մօտ է հայ բառի «ամէն» նշանակութեան, քան թէ սանս.sama բառի «խրաքանչիւր ոք», գոթ.sums, հրդ.sum եւ հիւլ.sumr բառերի «ոմն ոք» եւ յն. ἄμο, αμα բառերի «միասին» նշանակութիւններին: Այստեղ էլ միայն մի բացատրութիւն կարող է լինել. դա այն է, որ սուժերէնն այս բառը վերցրել է հայերէնից, հետեւաբար հայ բառը սուժեր բառի նախնին է: Այստեղ պէտք է նշել, որ արար ձև umma(t) բառը, որ նշանակում է «ժողովուրդ, ազգ» նոյնպէս չունի -էն (-an) վերջաւորութիւն. հետեւաբար հայ բառի ստաջնութիւնը հաստատ է:

Վերեւում ցոյց էինք տուել, որ սուժեր eš յոգնակերտ մասնիկը համընկնում է հայերէնի եր յոգնակերտի հետ, իսկ meš բազադրեալ յոգնակերտ մասնիկը՝ ցեր-ի հետ: Այստեղ կարեւոր է պարզել, թէ ո՞վ ումից է վերցրել այս մասնիկները: Eš = եր եւ meš = ցեր հասարութիւնների համար որպէս ցուցմունք բերել էինք սուժերէնում կատարուող համապատասխան ձայնափոխութիւններ եւ նրանց համար օրինակներ: Յոյց էինք տուել, որ այդ ձայնափոխութիւնները սուժերէնում կատարուել են ր-ից ջ ո՛չ թէ ջ-ից ր, օրինակ էինք բերել սուժեր ցր>eš «լալ, լաց լինել», duru>dusu «էշի քուռակ» եւ այլն: Հայերէնում (մի քանի բարբառներում) գտնում ենք ր > շ ձայնափոխութիւնը, բայց դրանք երեւում են պայթականներից առաջ. օրինակ՝ մարդիկ > մաշդիկ, կ'երթան (գնում են) > գեշգօն [Համչեն], կ'երթայի (գնում էի) > դաշդի [Համըն], մարդ > մաշթ, մօրթի > մօշթի, երթալ > էշթալ [Նոր-Նախիջեւան] եւ այլն⁴⁹: Միաժամանակ շ > ր ձայնափոխութեան ոչ մի երեւոյթ չկայ հայերէնում: Այսպիսով գտնում ենք, որ այս ձայնափոխութիւնները կատարուել են ր ից շ եւ ոչ թէ շ ից ր. հետեւաբար ր-ով ձեւը նախօրինակն (նախնին) է, իսկ ջ ով ձեւը՝ սերունդ. եւ քանի որ ր-ով ձեւը (եր) հայկական է, իսկ ջ-ով ձեւը (eš)՝ սուժերական, ապա պիտի ընդունել, որ սուժերական eš-ը շէր կարող լինել հայկական եր-ի նախնին: Այս եզրակացութիւնը հաստատուում է նաեւ այն իրողութեամբ, որ Բեհհասունի արձանագրութեան բարբառական տեքստ-

⁴⁹ Ա. Ղարիբեան, «Հայ բարբառագիտութիւն», Երևան, էջ 132:

տում Ուրարտուի տեղ երևում է Ուրաշտու, այսինքն՝ ր-ն (Ուրարտու) փոխուել է շ-ի (Ուրաշտու) հետեւաբար կասկած չկայ, որ սումեր ըն յոգնակերտ մասնիկը կարող էր առաջանալ հայկական (բոլոր բարբառներում գտնուող) եր մասնիկից, ոչ թէ հայկականը սումերականից:

Փաստ է նաև այն, որ սումերերէնում վանկի սկզբում կամ վերջում պատահում է $n > m$ ձայնափոխութիւնը, որի համար օրինակ էինք բերել $en > em$ «բարձրանալ, համբառնալ», $erin > erim$ «զինուոր»: Հայերէնում էլ պատահում է $n > m$ ձայնափոխութիւնը օրինակ՝ բռնել $>$ բնդրոնել $>$ բմբռնել, անբիծ $>$ ամբիծ, անբարիչա $>$ ամբարիչա. ասոր. Nsiwin $>$ Մծրին (բոլորն էլ շրթնային ր-ից առաջ), բայց հայերէնում երևացող այս $n > m$ ձայնափոխութիւնները սումերերէնի հետ համեմատած ուշ շրջանին են պատկանում, իսկ կարեւորը այն է, որ զբանք թէ՛ սումերերէնում եւ թէ՛ հայերէնում կատարում են $n > m$, ոչ թէ $m > n$ (համեմատել նաև հայ անուն եւ սումեր mun «անուն»): Հետեւաբար հայկական մեր բազազրեալ յոգնակերտ մասնիկից կարող էր առաջ գալ սումեր meš բազազրեալ յոգնակերտ մասնիկը, ոչ թէ սումեր meš-ից հայ մեր-ը:

Այսպիսով պիտի ընդունել, որ սումեր ըն եւ meš յոգնակերտ մասնիկները կարող էին առաջացած լինել հայ եր եւ մեր մասնիկներից, ոչ թէ հայկականները սումերականներից:

Այսպիսով, վերոյիշեալ քերականական էլեմենտների եւ սումերերէնում գտնուող մի շարք հնդեւրոպական բառերի քննութիւնը ցոյց է տալիս (եւ կարծում ենք, որ այսքանն էլ բաւական է ցոյց տալու), թէ սումերները հնդեւրոպական լեզու խօսող ո՛ր ժողովրդի հետ շփման մէջ են գտնուել եւ փոխ առել իրենց լեզուում գտնուող հնդեւրոպական տարրերը: Վերոյիշեալ աուեակները կասկած չեն թողնում, որ սումերերէնին հնդեւրոպական տարրեր փոխ աուողները եղել են հայերէն խօսող արմէնները:

Մնդամ եթէ սումերները հայկական լեռնաշխարհում նախապէս բնակուած չլինէին, միեւնոյն է, խոր անցեալում (սումերական հնագոյն արձանագրութիւնների վրայ հայերէնի հետ առնչուող լեզուական տարրերի որոշ մասի զբանցման օրերին) սումերների՝ Սումեր երկրում գտնուած ժամանակ հայերի հետ շփումը կարող էր տեղի ունեցած լինել նոյն ժամանակներում հայերի՝ հայկական լեռնաշ-

խարհում առկայութեամբ (սումեր երկրի մօտակայքում ապրած լիւնելով), ոչ թէ քաղկաններում կամ եւրոպայի մի այլ հետու վայրում գտնուելով:

Միայն $zu - ab = \delta ուլ$, $ka - izi = կայծ$, $ki - mah = կմախ$, $ku - babbar = կապար$ հաւասարութիւնները բաւական են ցոյց տալու, որ զոյութիւն է ունեցել սումերահայ հին կապ. սրանք բառեր չեն, որ կարելի լինէր խօսել պատահականութիւնների մասին, այլ բառակապակցութիւններ, որոնք չէին կարող գտնուել հայերէնի մէջ, եթէ հայերը եկուորներ լինէին Առաջուոր-Ասիայում ՃԲ՝ դարից յետոյ (մ. թ. ա.)՝ զալով Եւրոպայից:

Եթէ լինեն նաև այնպիսի (հակառակ այն բանին, որ սումերերէնը հնդեւրոպական լեզու չի համարւում), որ հնդեւրոպական այս բառերը ոչ թէ հայերէնից սումերերէնին՝ այլ սումերերէնից հայերէնին են անցել, ապա նրանք ստիպուած պիտի լինեն ընդունել, որ այդ բառերը (որոնց ձևերն ընդհանուր են սումերերէնին ու հայերէնին) հայերէնից են անցել հնդեւրոպական ընտանիքի միւս լեզուներին, մի բան, որ չի փոխի հայերէն խօսողների հայկական լեռնաշխարհում շատ հնուց սումերների հարեւանները կամ մօտակայքում եղած լինելու տեսակէտը, որովհետև այդպիսի անցումը կարող էր կատարուած լինել շատ խոր անցեալում, որպէսզի հայերէնից էլ ստացող միւս լեզուն կարողանար զ ձայնը վ-ի փոխելով դառնար մայր փոխանցողը միւս բոլոր հնդեւրոպական լեզուների, եւ դա, ի հարկէ, կասկածի տակ պիտի դնէր հնդեւրոպական լեզուների Եւրոպայից ճառագայթած լինելու խախտու տեսութիւնը՝ այդ լեզուների «հայրենիքը» բերելով Փոքր-Ասիա եւ հայկական լեռնաշխարհ:

դ) Ի հարկէ չպիտի մոռանալ եւ այն, որ հայերն էլ իրենց հերթին, սումերների հետ շփման ընթացքում, սումերերէնից իրենց լեզուին ընդունեցին սումերական լեզուի տարրեր, դրանց թւում սումեր բառերին համապատասխանող այն հայերէն բառերը, որոնք հնդեւրոպական չեն: Այս տեսակէտով շատ հետաքրքրական է $zu - ab$ բառը, որ բերել ենք վերելի մեր բառացուցակում:

Ոչ մի կասկած, որ հայերէնի ծով բառը հենց սումերական $zu - ab$ բառն է, այն տարբերութեամբ, որ հայերէնը ի ձայնը փոխել է վ ձայնի (հմմտ. $Biaina = վան$, $Erebouni = Երեվան$, $Iberia = վիրք եւայլն$): Ո՞րն է սերունդ, ո՞րն է ծնող: Նկատի առնելով,

որ հայերէնը հնդեւրոպական լեզու է եւ ծով բառը հնդեւրոպական չի համարուում, ապա պիտի ընդունել, որ հայերէնի ծով բառը առաջ է եկել սումեր zu-ab («ծով») բառից:

Կարեւորն ի հարկէ այստեղ այն է, թէ ե՞րբ է կատարուել այդ փոխառութիւնը: Արդեօք ա՞յն ժամանակներում, երբ սումերները գտնուում էին հայկական լեռնաշխարհում, թէ՞ նրանց (սումերների) հարաւային Միջագետք տեղափոխուելուց բաւական ժամանակ յետոյ, երբ սումերներէնը որպէս դեպումատիկական-միջագային լեզու օդաւարժուում էր Առաջաւոր Ասիայի ժողովուրդների կողմից:

Այստեղ նշում ենք zu-ab բառի վերաբերեալ մի քանի շատ կարեւոր եւ յատկանշական երեւոյթներ, որոնց լուսարանումը կարող է այս հարցում որոշիչ դեր խաղալ:

Դրանցից հետաքրքրականն այն է, որ սումերները գրում էին zu-ab բայց արտասանում էին ab-zu ճիշտ այնպէս, ինչպէս գրում էին gal-lu (= մեծ մարդ, թագաւոր), բայց արտասանում էին lu-gal⁵⁰:


Ի հարկէ աւելի խոր անցեալում նրանք այս բառերը հնչել են այնպէս, ինչպէս գրել են: Եւ դա այնքան էլ տարօրինակ չէ, քանի որ այսպիսի երեւոյթներ կարելի է գտնել եւ այլ լեզուներում: Օրինակ՝ անգլիացիները այժմ գրում են what, where, which բայց արտասանում են hwat, hwere, hwich, այսինքն՝ գրում են wh-բայց հնչում են hw-: Կասկած չկայ, որ առաջներում նրանք այս բառերը հնչել են այնպէս, ինչպէս գրում են, սակայն որպէս աղգային արագիցիաների պահպանողներ՝ գրութեան մէջ պահում են առաջուայ ձևերը, թէեւ այդպէս չեն հնչում այժմ:


Գրաւոր լեզուի այդպիսի արագիցիայի պահպանման օրինակ ունենք եւ մենք. այժմ իսկ արեւմտեան հայերէնում, ուր ա եւ ո ձայնաւորներով վերջացող բառերի վերջում աւելացնում ենք յ տառը ինչպէս գրաբարում (օրինակ՝ վրայ, սիրոյ), որովհետեւ այն առաջներում հնչում էր, եւ թէեւ այժմ դադարել ենք այն հնչելուց, բայց գրութիւնների մէջ պահում ենք:


Եւ ահա zu-ab բառը անցել է հայերէնին ու մեզ հասել ծով ձևով այնպէս, ինչպէս սումերներն արտասանել են այն խոր անցեալում, ոչ թէ այնպէս, ինչպէս արտասանում էին (abzu) հետագայում: Հետեւաբար փոխառութիւնը կատարուած պիտի լինի շատ վաղուց՝


սումերների հայկական լեռնաշխարհում բնակութեան ժամանակաշրջանում:

Սումերահայ յարաբերութիւնների տեսակէտով մեր ուշադրութիւնն է գրաւում նաեւ սումերական dagal բառը: Այս բառի հայագիտութեան հետ ունեցած կապը պարզելու համար բերում ենք հետեւեալ բացատրութիւնը. մարդիկ ծնուում են մօրից, աշխարհ են դալիս մօրից: Դրա համար հին ժամանակներում կար այն հաւատը, որ աշխարհից հեռացող՝ մեռնողը վերադառնում է մօրը: Հեթանոսական ժամանակներում հաւատում էին, որ առտուն ծագող (ծնունդ) արեւը երեկոյեան մահանում է, իսկ երեկոյեան մահացած արեւին ասում են մայր մտաւ, այսինքն՝ վերադարձաւ մօրը (մայրամուտ): Անգամ երբ մարդ նուազում է, կամ երբ կրակը հանդում (մահանում) է՝ ասում են մարեցաւ, այսինքն՝ վերադարձաւ մօրը, որտեղից առաջ եկել, ծնուել էր: Այս հաւատը, որ մեռնողը վերադառնում է մօրը, պատճառ է դարձել, որ դագաղին (որի մէջ դնում էին կամ որով տանում էին մեռելին) կոչեն մայր, եւ ահա հենց մեր դագաղ բառը սումերական dagal բառն է, որը նշանակում է «մայր»: Dagal-ը

ներկայացւում էր  սեպախմբով, որը ունէր նաեւ «մայր» իմաստը⁵¹: Մայրութիւնը, ծնելը (երեխայ ստեղծելը) համարուել է

աստուածային գործ, ուստի հետաքրքիր է այս  «մայր»

նշանակող բարդ սեպախմբի կազմութիւնը. պարզ երեւում է, որ ba «տուն» կամ ma «գործել, ստեղծել» նշանակող  սեպախմբի

մէջ գրել են «աստուած» նշանակող  սեպախմբը եւ դրանով արտայայտել են մայր (յղիութիւն, ներսում աստուածութիւն կրելու) գաղափարը:

Կարծում ենք, որ հին ժամանակներում մեռելներին թաղելուց առաջ որոշ ծիսակատարութիւններ կատարելու համար (հաւանաբար մօրը վերադարձնելու խորհուրդը ներկայացնելու համար) նախապէս դնում էին դագաղի մէջ եւ այդ դագաղով էլ տանում դերեզման. ե-

50) S. Langdon, p. 25:

51) S. Langdon, p. 103, 208: P. Deimel, *me'u dagal* եւ *ama*:

բեւի սովորութիւն էր այդ դազադը շինել յատուկ փայտից, որի ծառին էլ կոչել են մայրի: Միաժամանակ հետու չէ, որ հենց մայրի ծառի դիւրավառ փայտն (չամ) էին օգտագործում վառելու համար պաշտամունքի առարկայ կրակը, այսինքն՝ մայրի փայտից էր ծընուում սրբազան կրակը եւ դրա համար էլ այդ փայտը մայր էր եւ նրա ծառն էլ՝ մայրի:

Կասկած չկայ, որ դազադ = dagal նոյնութիւնը սումերահայ հին առընչութիւններից ու յարաբերութիւններից մնացած մեծարժէք հետքերից մէկն է:

Այսպիսով՝ սումերահայ լեզուական կապի մեր այս քննութիւնների արդիւնքը անտարակուսելիօրէն խօսում է այն մասին, որ սումերներն իրենց արձանագրութիւններում երեւացող եւ միայն հայերէնի հետ առընչուող հնդեւրոպական տարրերը ստացել են այդ արձանագրութիւնների ժամանակաշրջանում (եւ հաւանաբար, աւելի կանուխ ժամանակներում) իրենց մօտակայքում գտնուած հայկական ցեղերից:

Ուստի արմէններին պիտի համարել մինչեւ հիմա յայտնի հնդեւրոպական լեզու խօսող ամենահին ժողովուրդը: Սա անխուսափելիօրէն կասկածի տակ է դնում հնդեւրոպական «հայրենիքը» Եւրոպայում տեղադրող տեսութիւնները: Միանգամայն ճիշտ է՝ Պրոֆ. Ս. Յակոբեանը, երբ գրում է. «Անկասկած է, որ հայոց լեզուն ձեւաւորուել է հայ էթնոսի կազմաւորման հետ միաժամանակ»⁵²: Միւս կողմից, քանի որ սումերներն ու հայերը նախասկզբնական հարեւաններ էին, ապա բնական կը լինէր յուսալ, որ նրանք խօսէին իրար հասկնալի լեզուով կամ բարբառներով, պատկանէին մարդարանական նոյն տիպին, գտնուէին մշակութային եւ հասարակական զարգացման իրար մօտ (եթէ ոչ նոյն) աստիճանի վրայ:

Պիտի ասել, որ դիտութեանը տակաւին այդքան էլ յայտնի չեն սումերների եւ հայկական ցեղերի խոր անցեալին վերաբերող այս հանդամանքների պարզաբանման համար անհրաժեշտ բաւարար տեղեկութիւններ, սակայն մինչեւ հիմա եղած հնադիտական ու բանասիրական աշխատանքների արդիւնքները որոշ բան ասում են այս մասին, դրանց հիման վրայ կարող ենք ասել հետեւեալը.

ա) Վերեւում ցոյց տուեցինք սումերերէնի եւ հայերէնի մէջ

52) Ս. Յակոբեան, «Հայ ժողովրդի կազմաւորման հարցի շուրջ», «Գրական Բերք», 1967, փետրուարի 17:

կղած նմանութիւնների եւ ընդհանրութիւնների մի մասը, եւ եթէ հաշուի առնենք նրանց իրարից բաժանող վերջին հազարամեակների մեծ ժամանակահատուածը եւ ապրած տարբեր միջավայրերի պայմանները, ապա այդքան ընդհանրութիւնների գոյատեսուումն անգամ մտածել պէտք է տայ երկու լեզուների նախապէս ունեցած մօտիկութեան մասին:

Ի հարկէ բացառուած չէ այն հնարաւորութիւնը, որ էթնիկապէս նոյն տարրին պատկանող երկու տեղաբնիկ հարեւաններ զարգացրած լինեն լեզուական տարբեր ուղղութիւններ (այդ բանը կարող էր պատահած լինել եթէ նրանք իրարից բաժանուած լինէին դժուարանցանելի բնական արդեւքներով, օրինակ՝ լեռնաշղթաներով կամ անապատներով) եւ իրարից փոխ առած լինեն լեզուական միայն առանձին եւ պատահական էլիմենտներ: Ինչպէս ասել ենք վերեւում, սումերերէնը հնդեւրոպական լեզու չի համարուել, բայց կան դիտնականներ, որոնք աշխատել են ցոյց տալ, որ սումերերէնը հնդեւրոպական է⁵³: Թէեւ նրանց տեսակէտները տակաւին ընդհանուր ընդունելութիւն չեն գտնում, սակայն, եթէ մի օր բացայայտուի, որ սումերերէնը հնդեւրոպական է, ապա հաւանաբար այն պիտի համարուի հայերէնին ազդակից, որից հայերէնը հեռացել է սումերների հեռացումից յետոյ անցած հազարամեակների ընթացքում իր ունեցած յարատեւ զարգացմամբ:

բ) Հայերը մարդարանականօրէն գլխաւոր եւ հիմնական ներկայացուցիչներն են կլոր գլուխ (brachycephal) տիպի, որը հենց նրանց անունով էլ (հայերը այս տիպի ամենամիտասեռ եւ ամենաանխառն վերապրողներն են) գիտութեան մէջ կոչուում է նաեւ Armenoid:

Եւ ահա սումերներն էլ իրենց (ընդհանրապէս) կլոր դանդեւրով պատկանում են Արմէնոյիդ տիպին:

գ) Հայերը յայտնի են իրենց խոշոր եւ կոր արծուէքթով, եւ դա այնքան իւրաքայտուկ է նրանց, որ այդպիսի քիթը կոչուում են հայկական քիթ:

Եւ ահա սումերներն էլ ունէին խոշոր եւ կոր արծուէքիթ նման հայկականին: Seton LLOYD-ը սումերների մասին գրում է. «... These strange, rather undersized gentlemen with their large, curved noses...»⁵⁴:

53) Leonard King, «A History of Sumer and Akkad», London, 1916, p. 54:

54) Seton LLOYD, «Twin Rivers», p. 8:

դ) Սուսերները հայերի նման ընդհանրապէս միջահասակ են եղել:

ե) C. L. Woolley-ի դեկալարութեամբ անգլո-ամերիկեան արշաւախմբի Ur քաղաքում կատարած պեղումներով երեւան հանուած է դամբարանը մի սումեր արքայի (ցեղապետի), որի թաղման ժամանակ զոհարեւել ու դամբարանի դրան առաջ թաղուել են նրա ծառաները, կանայք, քառանիւ կառքեր քաշող եզներով, իրեր եւ այլն⁵⁵: Յեղապետի կամ թաղաւորի թաղման այս սովորութիւնը նոյնութեամբ տեսնում ենք (թէեւ աւելի ուշ ժամանակներին) մեր Լճաչէնի դամբարաններում, որտեղ նոյնպէս ցեղապետի հետ թաղուել են կառքեր, քաշող կենդանիներ, մարդիկ եւ նիւթական հարստութիւն: Այս կապակցութեամբ չենք կարող չլիշել նաեւ մեր Արտաշէս արքայի թաղման մասին Խորենացու պահած տեղեկութիւնները: Նա բերելով Արիստոնից դրում է. «... Եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարճք եւ մտերիմ ծառայք. եւ որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիտն...»: Դազաղքն էին ոսկեղէնք, դահոյքն եւ անկողինքն բեհեղեայ, եւ պատմուծանն որ զմարմնովն՝ ոսկեթել, թագ կապեալ ի գլուխն...»⁵⁶: Ապա աւելացնում է, թէ «Չամանէ երգիչքն Գողթան առասպելարաննն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցհայրն. Մինչ դու գնացեր, եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թաղաւորեմ⁵⁷»:

Ճիշդ է, որ Լճաչէնի դամբարաններն (ԺԳ դար մ. թ. ա.) ու Արտաշէսը (Բ դար մ. թ. ա.), սումերական դամբարանի հետ համեմատած, ուշ ժամանակի են պատկանում, բայց թաղման այսպիսի սովորութիւններ տեղական անխախտ հաւատի ու բազմադարեան տրադիցիաների մնացորդներ պիտի համարել:

զ) Մենք վերեւում նշեցինք, որ սումերները ծագումով եղել են լեռնական ժողովուրդ եւ նախքան Հարաւային Միջագետք իջնելը ապրելիս են եղել Միջագետքի եւ Ասորիքի հիւսիսում տարածուող լեռնաշխարհում եւ նրանց նիւթական մշակոյթի նախատիպերը՝ նա-

55) J. H. Breasted, «Ancient Times», 1935, p. 151:

56) Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Բ.—կ:

57) Նոյն տեղում, Բ.—կա:

խաւրուքեան եւ նախաւրէյդեան ժամանակաշրջանի մշակութային նստուածքները գտնուել են վերին Միջագետքի եւ վերին Ասորիքի մի շարք նոր քարեդարեան բնակավայրերի հնագիտական պեղումներին միջոցով, եւ բնական կը լինէր սպասել, որ այդ շրջաններին (Սինճարի, Նիսիրինի, Թեւ-Հալաֆի, Սաքէ-գէօղի, Անտիոքի, Մերսինի եւ միւսերի) նոր քարեդարեան մշակոյթները համընդհանրութիւն ունենային հայկական լեռնաշխարհի նոյն ժամանակաշրջանի բնակավայրերի մշակութային նստուածքների հետ:

Եւ իսկապէս էլ՝ Հայկական լեռնաշխարհի մի քանի նոր քարեդարեան բնակավայրերի (Պարբերդի, Մալաթիայի, Վանի, Կրդղեակ ու Մաշտոցի բլուրների, Մոխրաբլուրի եւ այլն) հնագիտական պեղումները հաստատում են այդ համընդհանրութեան գոյութիւնը:

Սոսելով Հայկական լեռնաշխարհի եւ հարեւան երկրների նոր քարեդարեան բնակավայրերի մշակութային կապերի մասին՝ Ս. Հ. Սարգսեանը դրում է. «Այդ է ապացուցում Կիլիկիայի, Ասորիքի, Փիւնիկիայի եւ Վերին Միջագետքի (Մերսին, Կալա-ատ-Չարմոյ, Ռաս-Շամրա, Ջերեմ-Բիր Ա.) նիւթերի համընդհանրութիւնը Հայկական լեռնաշխարհի նիւթերի հետ, առանձնապէս նոր քարեդարեան խեցեղէնի հետ, որը թուազուում է մօտաւորապէս 6-րդ հազարամեակի սկզբից մինչեւ 4-րդ հազարամեակի վերջը⁵⁸»:

Ամփոփելով այս գլխում բերուածները՝ պիտի աներկբայօրէն ընդունել, որ Առաջաւոր Ասիայի էթնիկական խմբերի կազմաւորման վաղ ժամանակներից սումերներն ու արմէնները պատկանել են մարդարանական նոյն՝ Արմէնոյիդ տիպին: Միջագետքի, Ասորիքի, Հայկական լեռնաշխարհի եւ Առաջաւոր Ասիայի այլ շրջանների նոր քարեդարեան եւ վաղ էնէոլիթին սրտականող բնակավայրերի մշակութային նստուածքների հնագիտական ուսումնասիրութիւնները եւ սումերներէնի ու հայերէնի լեզուական ընդհանրութիւնների մեր ներկայ քննութիւնները դրդում են մեզ ընդունել այն հաւանականութիւնը, որ սումերներն ու հայկական ցեղերը երկար ժամանակ գտնուել են շփման մէջ եւ անգամ Դ հազարամեակին (մ. թ. ա.), նախքան սումերների հարաւ իջնելը, ապրել են Հայկական լեռնաշխարհում որպէս հարեւաններ՝ գտնուելով մարդկութեան համաշխարհային քաղաքակրթութեան գուռ բացած Առաջաւոր Ասիայի այս շրջանի մեծ

58) Ս. Հ. Սարգսեան, «Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում»,

էջ 151:

մշակոյթը կերտողներին, զարգացնողներին ու կրողներին կենտրոնում:

Պիտի վերջնականապէս ապացուցուած համարել, որ Հայկական լեռնաշխարհը եղել է արմէնների (հայերի) ծագման օրրանը: Հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհում նախնադարեան համայնական հասարակութեան էքնիկական բիւրեղացման արդիւնք է:

Հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհի նախարնիկների միակ վերապրող շառաւիղն է, որ նոր քարեդարի, էնէոլիթի եւ պատմական ժամանակների ընթացքում դոյութեան անհաւասար պայքար է մղել՝ ամուր կառչելով իր հայրենի երկրին ու հողին: Մօտ 7 հազար տարի ընդգրկող այդ ժամանակահատուածում զարմանալի եւ անօրինակ տոկունութեամբ ճեղքելով ու անցնելով բնութեան զանազան կործանիչ ու աւերիչ ուժերը, ճեղքելով ու անցնելով բազմաթիւ թշնամի ցեղերի, այլազան ազգերի, աշխարհակալ ոսոխ ու մրցակից պետութիւնների ու կայսրութիւնների կործանիչ ու տարրալուծող — տարրափոխող ուժերը՝ անաղարտօրէն մեր օրերին է հասցրել Հայկական լեռնաշխարհի ծնունդ եղող մարդարանական Արմէնոյիդ տիպը, որպէս ամենահարազատ ներկայացուցիչն ու իրաւական ժառանգորդը իր երկրի մշակութային բոլոր հնազոյն նստուածքների եւ յուշարձանների:

ԳԼՈՒԻ Գ.

ՄԵԾ ԱՐ ԿԱՄ ԱՐԱ ԱՍՏՈՒԱԾԸ

1.— ԱՐ (ԱՐԱ) ԱՍՏՈՒՅ ԾԱԻԱԼՈՒՄԸ

Մեր դարաշրջանում վերջնականապէս պարզուած է, մեր հարցի համար շատ շահեկան այն հանգամանքը, որ Արան եղել է լայն տարածում ստացած մի մեծ եւ հին տատուածութիւն: Դա փայլուն կերպով ապացուցուած է Արայի կամ Արա Գեղեցիկի ու Շամիրամի մասին կատարուած մի շարք ուսումնասիրութիւնների մէջ, որոնց կարեւորագոյններից պիտի համարել Ն. Ալոնցի, Հ. Ա. Մատիկեանի եւ յատկապէս Գր. Ղափանցեանի աշխատութիւնները:

Մեր որոնումները մեզ համար անտարակուսելիօրէն պարզ են գարձրել այն իրողութիւնը, որ Փոքր-Ասիայի արեւելեան շրջաններում եւ Հայկական լեռնաշխարհի ընդարձակ տերիտորիաների վրայ նախապատմական անյիշելի ժամանակներից ապրող եւ էթնիկական յատկանիշներով լեռնական եւ Արմէնոյիդ տիպի բնիկների մէջ հենց տոտեմական ստադիայից սկսած առաջ է եկել մի աստուածութիւն, որին կոչել են Ար կամ Արա:

Արայի փոքրասիական ծագման մասին խօսել են նրան ուսումնասիրող մի շարք մեծահմուտ գիտնականներ: Ղափանցեանը գրում է, թէ «Արան ծնուել է փոքրասիական օրրանում թէ՛ անուամբ եւ թէ՛ բովանդակութեամբ»¹:

Այս աստուածութիւնը բնիկների կեանքի նախնական որսորդա-

1) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունք», էջ 77:

կան ժամանակաշրջանում ունեցել է կենդանական-բուսական բուսականությունը: Նստակեաց կենանքի եւ հողագործութեան շրջանում Ար-ը (Արա-ն) զարգացրել է բուսական եւ աստրալին (Արեւ) յատկանիչներ, ապա հողագործական տնտեսութեան մէջ իւրիպայիտն միջոցառումների զարգացմամբ եւ պետականութեան ամրացմամբ զար-ձեւ է զարնանային-արեւի-ուզմի մեծ եւ հզօր աստուածութիւն:

Արը (Արան), իր նկարագրի այսպիսի նախնական բնոյթով եւ հետագայ բարդ զարգացմամբ, մի նուանձին երեւոյթ էլ մարդկութեան դիցարանութեան պատմութեան մէջ: Նա ունեցել է իր մօտաւոր նմանները, օրինակ՝ Աշուրը, նոյնպէս իր նախնական շրջանում, երբ նրան պաշտող սեմիտները նոր էին հիմնադրել Աշուր քաղաքը, ունեցել է բուսական (խաղաղ) նկարագիր², բայց հետագայում, Ասորեստանի հզօրացումով եւ լայն ծաւալ ընդգրկող կայսերական նուաճումներով, զարձեւ է ուզմի եւ արեւի աստուածութիւն:

Աշուրի եւ Արայի տարբերութիւնն այն է, որ Աշուրը զարգացնելով անմարդկային արիւնարբու եւ աւերիչ նկարագիր, շրջապատեց այլ ժողովուրդների կողմից, շղարձաւ (անգամ որոշ չափով) ունիվերսալ կրօն, հակառակ Ասորեստանի կայսրութեան լայն ծաւալման եւ երկար կեանքին:

Մինչդեռ Արը, կրելով մարդկային հրապուրիչ զաղափարախօսութիւն՝ մօտեցաւ համամարդկային ստադիայի եւ ճառագայթելով չորս կողմ՝ ունեցաւ մեծ եւ լայն տարածում, կենտրոն ունենալով իր ծագման օրրանը՝ վերոյիշեալ տերիտորիան Փոքր-Ասիայի Արեւելքում եւ Հայկական լեռնաշխարհում:

Պէտք է յատուկ շեշտով նշել, որ Ար աստծոյ այսպիսի տարածման համար նպաստող հանգամանք հանդիսացաւ ոչ թէ միայն նրա, ինչպէս ասացինք, ունեցած մարդկային հրապուրիչ զաղափարախօսութիւնը, այլ նաեւ նրա ծագման վայրի աշխարհագրական (շրջակայ մայր ցամաքների նկատմամբ ունեցած) խաչմերուկային դիրքը:

Դժուար է ճիշդ որոշել Արայի եւ (ինչպէս շատ ճիշդ որակեց Ղափանցեանը) Արայիզմի տարածման ուղիներն ու շրջանները եւ նկարագրի զարգացման ու բարդացման ժամանակագրութիւնը: Այդ բանն անել մեր նպատակից դուրս է, բայց, այնքան որքան մինչեւ հիմա եղած հետազոտութիւնները պարզում են, կարող ենք նշել նրա

2) J. H. Breasted, «Ancient Times», Boston, p. 191:

տարածման հետեւեալ շրջանները. նա արեւմուտքից անցել է Փոքր-Ասիայի տերիտորիայով խեթերի երկիր (Ara)³ եւ Պամփիլիա (Er)⁴. մուտք է գործել Եւրոպա ընդգրկելով Թրակիա-Սպարտա-Յունաստանը (Ares)⁵, Մակեդոնիան (Aras)⁶, Գերմանիան (Ertag)⁷, Իռլանդիան (Ir)⁸. արեւելքից նա հասել է Ուրարտու (Ar'a °, Ar[di])⁹, Վրաստան (Arali)¹¹. հիւսիսից՝ Վրաստանի վրայով անցել է Կովկասեան լեռնաշղթան եւ տարածուել է սլաւոնական ընդարձակ տարածութիւնների մէջ՝ դրաւելով Ռուսաստան-Ուկրաինա-Բելոռուսիան (Շար, Շարիոյ)¹². հարաւից անցնելով Ասորիքի Խառան քաղաքով (Aru)¹³ հասել է Աֆրիկեան մայր ցամաք՝ նուաճելով փարաւոնների երկիր Եգիպտոսը (Ra)¹⁴. իսկ հարաւ-արեւելքից՝ Բարեւոնը (Aria)¹⁵:

Այդ վաղ ժամանակներում այսպիսի խոր եւ լայն (չորս կողմ) ճառագայթումը կարելի է բացատրել միայն ճառագայթող էներգիայի ինտենսիվութեամբ ու բնոյթով ու նրա աղբիւրի՝ տարածութեան մէջ ունեցած աշխարհագրականօրէն նպաստաւոր (խաչմերուկային) դիրքով:

Պէտք է ասել, որ Ար աստուածութիւնն իր նուաճած այս բոլոր շրջաններին չի հասել իր բովանդակութեան՝ իր նկարագրի, բոլոր դժերով, կամ եթէ հասել էլ է իր ամբողջ բովանդակութեամբ, ապա

3) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 77—78:

4) Նոյն տեղում, էջ 60:

5) Նոյն տեղում, էջ 73, 8:

6) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», էջ 316:

7) Նոյն տեղում, էջ 326:

8) Encyclopaedia Britannica, 13th ed., 1926, տե՛ս IRELAND:

9) Սանդալեան, «Les Inscriptions Cunéiformes Urartiques», էջ 328. տե՛ս Գր. Ղափանցեան, էջ 71:

10) Ardi (Ուրարտական)՝ Արեւի աստուած:

11) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 81:

12) Նոյն տեղում, էջ 77, 81, 82:

13) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», էջ 183:

14) Salomon Reinach, «ORPHEUS, A History of Religion», N. Y. 1942, p. 29:

15) Sayce, «The Cuneiform Inscriptions of Van», 1882, p. 415—416, տե՛ս Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 10:

տեղական ասանձնայատուկ ազդեցութիւնների պատճառով պահել կամ զարգացրել է իր բովանդակութեան միայն մի մասը, որը յատկանշական է եղել տուեալ տեղի պայմաններին:

Օրինակ՝ Թրակիա-Սպարտա-Յունաստանում Ares-ը արեւի եւ ռազմի աստուած է, նոյնը պիտի ասել Մակեդոնիայի Aras-ի համար: Եգիպտոսի Ra-ն եւ Ուերարտուի Ar[di]-ն եղել են լոկ արեւի աստուածներ: Սեթական Ara-ն¹⁶ եղել է բուսական, իսկ Վրաստանի Arali-ն¹⁶ երկրագործական աստուածութիւն: Սլաւոնական Եար-Եարիլոյ-ն¹⁷ եղել է բուսական-երկրագործական եւ ռազմի աստուածութիւն:

2.— ԱՐԱՆ՝ ԱՐԵՒԻ ԱՍՏՈՒԱԾ

Գր. Ղափանցեանը իր յայտնի աշխատութեան մէջ, տարուած Արայի բովանդակութեան բուսական-գարնանային, մեռնող ու յարութիւն առնող գծերով, չդիտես ինչու, անտեսել է նրա աստրային՝ արեւի աստուած լինելու նշանակալի եւ յայտնի բնոյթը, մի բնոյթ, որը Արայի մէջ մեր կարծիքով աւելի ուժեղ է, քան նրա միւս յատկանշները: Իր աշխատութեան մէջ մի շարք տեղեր ինքը բերում է այնպիսի փաստեր, որոնք կարող էին Արայի արեւի բնոյթին վերաբերուել, քան նրա բուսական եւ մեռնող ու յարութիւն առնող գծերին: Բայց նա դրանք ձեւակերպում է բուսական գծի օգտին. օրինակ՝ նա գրում է. «Ի նկատի առնելով Ar || Ara-յի անուան եւ պաշտամունքի այն մեծ տարածումը Փոքր-Ասիայում եւ նրա սահմաններից դուրս, որ մենք ներկայացրինք մինչեւ հիմա, նրա իւրայատուկ դերը («արայիզմը») կապուած գարնան ծլող եւ աճող բուսականութեան եւ հացահատիկների հետ, ինչպէս եւ զարթօնքի՝ յարութիւն առնելու հանգամանքի հետ, եւ առաջարկում եմ հնդեւրոպական լեզուների մի-երկու բայարմատներ (այս ֆուլցիանների հետ կապուած) համարել Ar(a) անունից սերուած...: Առաջին «արայաբուղի» հնդեւրոպական արմատն է ar կամ or բայը, որ նշանակում է «ծագել (ծնուել), բարձրանալ, յարութիւն առնել», ինչպէս

այդ տեսում ենք Արայի տարածման մերձաւոր վայրերի լեզուներում — յուն. or- «բարձրանալ» (ornümi, ornüo), լատին. or- (orior) «ծագել, ծնուել, բարձրանալ» (այստեղից է oriens «արեւելք»), իեթերէն ara (i) — «բարձրանալ, ընդվզել» եւ հայոց ar (i) «բարձրանալ», «յարութիւն առնել» (յառնեմ-յարեայ, իսկ հրամայականը՝ արի, մաքուր «ար» սկզբնական արմատից եւ նշանակում է «վերկաց», «կանգնի...»)¹⁸:

Ինչպէս տեսում ենք՝ Ղափանցեանի բերած այս or- բայը բուսական ուժեղ ապացոյց է Արայի օգտին, բայց բայի «ծագել, բարձրանալ» նշանակութիւնը կարող է վերաբերուել Արայի աւելի արեւային, քան թէ բուսական բնոյթին, մանաւանդ որ վկայակոչելով orient «արեւելք» բառը՝ նա այլեւս Արայի արեւային նկարագրից խուսափելու տեղ չունէր:

Ղափանցեանին անդամ յայտնի էր Sayce-ի նման մի մեծ հնագէտ-պատմաբան-լեզուաբան գիտնականի տեսակէտը, որ Արան արեւի աստուածութիւն է («...it is better to suppose that Er, or Ara, was an Armenian name for the Sun-god»), մանաւանդ որ նրա այս տեսակէտը հենց ինքն է մէջ բերել իր գրքի («Արա Գեղեցիկ պաշտամունքը») 18-րդ էջում: Սակայն այդ բոլորից յետոյ զարմանալիօրէն այս փաստերի կողքով է անցնում: Հաւանաբար նա ուշադրութիւնը կենտրոնացնելով Արայի միայն բուսական-գարնանային նկարագրի վրայ՝ նպատակ ունէր հող պատրաստել շեշտելու նրա մեռնող ու յարութիւն առնող բնոյթը եւ այդպիսով ուժեղացնելու Արա Գեղեցիկ-Շամիրամ առասպելի համեմատութիւնը մօտաւորապէս նման զոյգերի հետ (Թամուզ-Իշտար, Էշմուն-Աստրոնոյ, Օսիրիս-Աստարտէ, Ատտիս-Կերեւէ, Ադոնիս-Աստարտէ եւայլն), սակայն, ինչպէս ինքն էլ է ընդունում, Արան որպէս մեռնող ու յարութիւն առնող բնութեան աստուածութիւն (որը ի հարկէ համեմատելի կողմեր ունի Միջագետքի Թամուզի, Փիւնիկեան Ադոնիսի, սեմիտական Էշմունի, Բեզիպատական Օսիրիսի, Փոսուդիական Ատտիսի, Սեթոսուրբիական Տելիպիտուի եւ նմանների հետ) աւելի ուշ շրջանի զարգացում է՝ հաւանաբար Միջագետքի ազդեցութեամբ, մինչդեռ Արան խոր անցեալում մեծ նշանակութիւն ու համբաւ է ունեցել որպէս արեւի մեծ աստուած:

16) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկ պաշտամունքը», էջ 77—78, 81:

17) Նոյն տեղում, էջ 77, 82:

18) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկ պաշտամունքը», էջ 93:

Գուցէ Ղափանցեանը լռելով Ար-ի արեւի աստուած լինելու մասին ուզում էր խուսափել նրա եզրիպտական Ra-ի հետ համեմատութեան մէջ զրուելուց՝ վախենալով, որ զրանով կարող է գործը բարդանալ, որ այդ (Ար || Ra) համեմատութիւնից, նկատի առնելով այս վերջինի յայտնի հնութիւնը, կարող է առաջ դալ անդրանկութիւնը կամ ծագման հարցում առաջնութիւնը Ra-ին տալու միտքը եւ այդպիսով հակասութիւն ստեղծելու հնարաւորութիւնը Արային փոքր-ասիական-հայկական ծագում ունենալու յայտնի եւ հաստատուած թեզիսի համար:

Այս կասկածը, եթէ կար, ի հարկէ ի դուր էր, քանի որ զիտութիւնը երեւան է հանել արդէն այն հանգամանքը, որ Ra-ն Եզրիպտոսի տեղական ծնունդը չէ¹⁹, այլ մուտք է դործել Եզրիպտոս՝ զալով Սիրիայի կողմերից²⁰, մի բան, որ ցոյց է տալիս նրա ծագման վայրի (հայկական լեռնաշխարհի) ուղղութիւնը: Ինչ վերաբերում է Ra-ի հնութեան, ապա նրա Եզրիպտոս մուտքի սկզբնական ժամանակի մասին զեռ ճշգրիտ եւ որոշիչ տուեալներ պակասում են, միայն յայտնի է, որ նա այդտեղ եղել է մ. թ. ա. Գ հազարամեակի վերջերից, իսկ դա ոչ միայն չի հակասում նրա հայկական ծագման հարցի հետ, այլ եւ ապացուցում է Ար-ի Փոքր-Ասիայում եւ հայկական լեռնաշխարհում առկայութիւնը աւելի կանուխ ժամանակներում, մի բան, որ ինչպէս յետոյ կը տեսնենք, կարող է շատ հետաքրքրական լինել արմէնների պատմութեան համար:

Ար-ից Ra անցումը մի առանձին դժուարութիւն չի ներկայացնում. բաւական է ասել, որ եթէ Ասորեստանի Սարգոնի մօտ Ռուսա անունը կարող է դառնալ Ռուսա²¹, Արաքսը արարների մօտ Ռաս²², ապա Ար-ը եզրիպտացիների մօտ կարող էր դառնալ Ra: Մեր մօտ էլ Անիի արեւմտակողմը գտնուող Ծաղկածորի միջից վաղուց Արաքս գետը կոչուում էր Ռահ²³: Ար-ից Ra անցումը հնարաւոր է ան-

գամ բացատրել հենց մեր Արա-յի միջոցով, որի առաջին ճայնաւորի նուազումով ու կորուստով ստացուած կը լինի Ra, մի բան, որ կարող է միաժամանակ ցոյց տալ Ար-ի Արա փոփոխակի խոր հնութիւնը:

Անգամ թամուզը (բարեխական Dumuzi-ն), որի հետ համեմատուում է Արան, ոչ թէ միայն բուսականութեան եւ մեռնող ու զարթնող բնութեան անձնաւորումն է, այլ նաեւ արեւի աստուածութիւն²⁴:

Կասկած չկայ, որ մարդկային նախնական հասարակութիւնը, երբ որսորդական կեանքից անցաւ նստակեցութեան ժամանակաշրջան եւ սկսեց զարգացնել հողագործութիւնը, զգաց բուսականութեան եւ մեռնող ու զարթնող բնութեան կապը արեւի գործունէութեան հետ, յատկապէս այն ժամանակ, երբ երկնային մարմինների շարժումների դիտումները կապուած էին հողագործութեան պրակտիկ (ցանքի ժամանակը որոշելու, անձրեւի ու փոթորիկի մասին դուշակութիւններ անելու) հարցերի հետ: Ուստի բուսականութեան արեւի հետ ունեցած կապը եւ նրանց պաշտամունքի զուգակցութիւնը բնական պիտի համարել: Հեթանոսական հին ժամանակաշրջանում նոյնիսկ հաւատում էին, որ արեւը ծագում է բոյսից: Անգամ մեռնելու եւ յարութիւն առնելու երեւոյթը (նախնական ժամանակների հասկացողութեամբ) տեսանելի է ոչ թէ միայն բուսականութեան կեանքում, այլ նաեւ արեւի գործունէութեան մէջ՝ իր մայրամուտով ու արեւածագով, իր ուժի ձմեռուայ նահանջով եւ ամառուայ հզօրացմամբ: Մենք կարծում ենք, որ քաղաքակրթութեան արշալոյսին նախնադարեան մարդու ուշադրութիւնն աւելի շատ եւ աւելի առաջ արեւի մեռնելն ու յարութիւն առնելն է (կէս օրուայ մէջ կատարուող արեւածագն ու մայրամուտը) զրաւել, քան թէ բուսականութեան աստիճանական (կէս տարուայ մէջ կատարուող) մահն ու զարթոնքը:

«Վեղկէր գիտնականը, որ համարում էր Արէսին աստուած

19) L. King, «A History of Sumer and Akkad», London, 1916, p. 334:
 20) W. M. Flinders Petrie, «The Gods of Ancient Egypt, wonders of the past, I, p. 167:
 21) D. Luchenbill, «Ancient Records of Assyria and Babylonia», Chicago, 1927, p. 5:
 22) Հ. Ա. Էփրիկեան «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», հատ. Ա., Բ. տպ. վեհնտիկ, 1903—905, տե՛ս Երասխ:

23) Հ. Պոտուրեան, «Հայ Համբազիտակ», էջ 174, Լէօ, Երևան, 1966, Ա. էջ 509:
 24) M. Jastrow, «The Religion of Babylonia and Assyria», Boston, 1898, 58-րդ էջում գրում է. «Տամուզը անձնաւորումն է հողագործական գործունէութեան», իսկ 548 էջում գրում է. «Տամուզը նոյնպէս արեւի աստուածութիւնն է»:

հրատապ արեւի, ... հնարաւոր էր գտնուած նաեւ ստուգարանօրէն կապել Արէս՝ հայ արեւ բառի հետ²⁵»:

Գրեթէ բոլոր հետազոտողներն ընդունում են Ares-ի նոյնացումը Արայի հետ, իսկ մեզ յայտնի է, որ Ares-ը եղել է արեւի, ազգի ստուածութիւն²⁶: Դա մի անգամ եւս փաստում է, Ar(a)-ի արեւի ստուած լինելը:

Մատիկեանն ասում է, թէ Վահագնը գրաւել է մի բնիկ աստուածութիւն հանդիսացող Արայի տեղը²⁷: Մատիկեանն այս եզրակացութեան յանդերձ համար աչքի առաջ ունեցած պիտի լինի Վահագնի նկարագրում յայտնաբերուած արեւային դիժը, քանի որ նա նոյնպէս ընդունում էր, որ Արան արեւի ստուածութիւն է: Մեր կարծիքով հնէրը ճիշդ էին, երբ Վահագնի ծննդին վերաբերող մեր հրաշարի հեթանոսական բանաստեղծութեան մէջ («Երկնէր երկին, երկնէր երկիր... ընդ եղեգան փող բոց ելանէր... Եւ աշկունքն էին արեւակունք») տեսնում էին ծովի կողմից հուր-արեւի ծնունդը (ի հարկէ Վանայ ծովի արեւմտեան ափերից):

Մ. Արեղեանը Վահագնին վերագրելով ամպրոպային բնոյթ՝ գրում է հետեւեալը. «Առասպելաբանութեան մասին քիչ ու շատ ծանօթութիւն ունեցող ամէն ոք իսկոյն կը նկատի, որ արեւակնանման աշերտով, հրամազ ու բոցամօրուս պատանեակ աստուածը երկնքի եւ երկրի, ծիրանի ծովի եւ մի բոյսի — եղէգնի որդին, բնութեան մի երեւոյթի անձնաւորում է: Այդ նկարագիրը բաւական յարմարում է արեւակին: Ուստի եւ ոմանք հնումն Վահագնին նոյնացրել են արեւակի հետ իբրեւ Ապոլոն, ուրիշները նորումս երգի նկարագիրն արեւակին են վերագրել եւ բացատրել, թէ դա պատկերացնում է արեւակի ծագումը²⁸»: Պէտք է աչքի առաջ ունենալ այն հանգաման-

25) Ն. Աղոնց, «Հին Հայոց աշխարհաւայեացք», Հայրենիք ամսագիր, 1926, քիւ 2, էջ 76:

26) Encyclopaedia Britannica-ի 14-րդ հրատարակութիւնը Ares-ի մասին գրում է. «Նա յունական հիմ դիցաբանութեան մէջ ազգի կամ անլի ճիշդ անկատարաբի աստուած է... Արէսի պիւմիտի մկարագրի մասին շատ քննադէմեր են եղել. նա փոքրիկ աստուած է, յայտնի աստուած կամ արեւի աստուած»:

27) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 4:

28) Մ. Արեղեան, «Հայոց հիմ գրականութեան պատմութիւն», գիրք Ա, Երևան, 1944, էջ 32:

քը, որ Ares-ն էլ, լինելով փոթորկի աստուած, եղել է նաեւ արեւի աստուած:

Հ. Ղ. Ալիշանը բերում է մի հին վկայութեան խօսքերը. «ոմանք զԱրեղական պաշտեցին եւ Վահակն կոչեցին»²⁹:

Ն. Աղոնցն այս մասին ասում է. «Հայ մատենագրութիւնից յայտնի է, որ Վահագնը նոյն է ինչ որ Հերակլը եւ ուրեմն Արէսը: Արդ՝ Վահագնի վերաբերեալ գուսանական երգը — երկնէր երկին — եթէ յերաւի Վահագնին է նայում, նրան նկարագրում է իբրեւ արեւի աստուած: Վահագն = Վերեթրագնա հրու դէնի մականունն է եւ առնչութիւն չունի արեւի հետ: Վահագնի արեւացումը բուն հայկական բնոյթ ունի եւ բացատրելու է նրանով, որ Վահագնին է անցել տեղական մի ուրիշ աստուծու ժառանգութիւնը, լծորդուած արեւին, ուրիշ խօսքով, իրանական անուան տակ սքոզուած է զուտ հայկական աստուածութիւն, որի հարազատ անունը էր — Արայի մօտն է որոնելու»³⁰:

Երկու յայտնի գիտնականները՝ Մատիկեանն ու Աղոնցը, ընդունում ու շեշտում են այն հանգամանքը, որ Վահագնը գրաւել է (մէկի ասելով «ազգային աստուած», միւսի ասելով «զուտ հայկական») Արայի տեղը: Մենք միանում ենք նրանց այս տեսակէտին եւ աւելացնում, որ եթէ իսկապէս Վահագնը նախապէս չի ունեցել արեւային բնոյթ եւ Արայի տեղը գրաւելով է դարձել արեւ, ապա դա փաստում է Արայի արեւային նկարագրի հզօրութիւնը:

Բայց, քանի որ Հ. Ղ. Ալիշանի բերած մի վկայութեամբ՝ «ոմանք զԱրեղական պաշտեցին եւ Վահակն կոչեցին», ապա պիտի ընդունել, որ Վահագնը ստանալով արեւի նկարագիր, գրաւել է արեւ Արայի տեղը եւ կամ Արայի տեղը գրաւելով՝ իր գլխին է դրել նրա արեւաչոզ թագը: Բոլոր դէպքերում մի բան պարզ է, որ Արան եղել է արեւի աստուած:

Դուկա. Հ. Ա. Մատիկեանն ուղղակի ընդունում է Արայի արեւային բովանդակութիւնը. նա գրում է. «Արա Գեղեցիկը նոյն է Պղուտարքոսի աւանդած հայկական Արէսի հետ, որուն ամուսինն

29) Ալիշան Հ. Ղ. Մ., «Հին հաւատք, կամ հեթանոսական կրօնի Հայոց», Վիեննայի, 1895, էջ 86:

30) Ն. Աղոնց, «Հին Հայոց աշխարհաւայեացք», Հայրենիք ամսագիր, 1926, քիւ 12, էջ 77:

կը համարի *Αρμένια* Այս աւանդութիւնն անով աւելի հետաքրքրական է, որ հոս Արայի հակառակորդը *Διόρφο* կը յորջորջուի, որ կը նշանակէ մթնալոյս, մթնաթափանց, ուրեմն լուսնային աստուածութիւն մը, որուն դէմ կը մաքատի Արեգակնային Արան...»³¹ :

Ի հարկէ պիտի չմոռանալ արեւ Արային պաշտող արձէնների կեանքի վերլուծարումները անցած հազարամեակների ընթացքում: Փոքր-Ասիան զտնուելով մայր ցամաքների խաչմերուկում՝ ենթարկուել է տարբեր ժամանակների բազմաթիւ արչաւանքների ու ազդեցութիւնների: Այդ ազդեցութիւններին չզիմացող Արան իր տեղը զիջել է այլ աստուածների եւ ինքը արեւի պատուաւոր դիրքից իջել է մի աննշան աստղի դրութեան³², ի հարկէ կառչելով իր աստրային բնոյթից, բայց հուսկ յետոյ դարձել մի մոռացուած անձնական անուն: Բոլոր փորձութիւնների զիմացող ժողովրդային աւանդութիւնները, սակայն, պահել են Արայի արեւաշող հետքերը եւ մենք այսօր հնարաւորութիւն ենք ունենում որոշ չափով պատկերացում կազմելու նրա անցած մեծ փայլի ու հզօրութեան մասին:

Արայի հարցով քիչ թէ շատ դրադուած գրեթէ բոլոր յայտնի հնագէտ-պատմարանները ընդունում են, որ Արան եղել է նաեւ արեւի աստուած:

Հ. Գ. Ժամկոչեանը նոյնպէս ընդունում է, որ Արան եղել է նաեւ արեւի աստուած («Ջարթնոց ու մեռնոց բնութեան, արեւի աստուած էր Արան»³³):

Ar(a)-ի հենց արեւի աստուած լինելու բնութագրի մասին առաջ ունենալով է, որ մենք Ուրարտական Ardi արեւի աստուածը նոյնացրինք Ar(a)-ի հետ, եւ դրանով ենթադրեցինք, թէ Ar-di անուան երկրորդ մասը պիտի լինի մասնիկ:

Այս կապակցութեամբ կարող է հետաքրքրական լինել Ղափանցեանի մի մէջըրերումը: Սօսելով Արայի հետ իր կապած արագիլի («ara-gil») մասին՝ կարծես նոյնպիսի կապակցութեան մէջ է ուղղւած

31) Գուկտ. Հ. Ա. Մատիկեան, «Արեւն ու լուսին», Համգէս ամսօրեայ, 1920, Բիւ 9, Սեպտ., էջ 279:

32) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեմնա, 1930, էջ 310:

33) Հ. Գ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», հատոր Ա., Երևան, 1963, էջ 260:

զնել լատ. ardea բառը, որը, ինչպէս ինքն է ասում, նշանակում է «տաք, վառվառն»³⁴: Սրան պիտի աւելացնել ardent «հրավառ, եռանդուն, սաստիկ վառվառն»: Համեմատել ard-ent եւ եռ-անդ, ուր՝ ard = եռ (= ար): Արդեօք այս լատիներէն ardea բառը, որ մի կերպ ասնչւում է Արայի հետ, կարելի չէ՞ թէ՛ իր հնչումով եւ թէ՛ իր («տաք, վառվառն») նշանակութեամբ կապել Ardi արեւի աստուծոյ հետ:

Այս կապակցութեամբ, մեր կարծիքով, նոյնպէս հետաքրքրութիւն է ներկայացնում Ն. Աղոնցի բերած հետեւեալ տեղեկութիւնը. «Կիրասունի դէմ «Արէսի կղզի», Արեւտիս քաղաքը եւ «Արէսի պարտէզ», որ էր Կողքիսում, ապացոյց են որ Արէսն ընտանի է եղել մերձակայ Պոնտոսի ամերին»³⁵: «Ինչպէս որ մակեդոնական Արէսը, որ է Արոտոսը, յեղաշրջուած է Հերակլէսի, այնպէս էլ հայ էր-Արան դառնում է Վահագն, արեւելեան Հերակլէս»³⁶: Ինչպէս տեսնում ենք, Արեւտիսի, Արոտ(ոս)-ի նոյնութիւնը Արէսի հետ՝ ուժեղացնում է մեր ցոյց տուած Ardi - Ara համեմատութիւնը (օրինակներ շատ կան, որ ա եւ դ իրար են փոխարինում):

3. — ՆՈՒԱՐԴ

Հնագիտութիւնն արդէն ցոյց է տուել, որ սումերների նախկին բնակավայրը մօտաւորապէս եղել է այն շրջանը, որ մենք ծննդավայր համարեցինք Արային (Փոքր-Ասիայի արեւելեան շրջաններն ու Հայկական լեռնաշխարհը): Իսկ ինչպէս սումեր-ակկադեան աստուածները, այնպէս էլ փոքրասիական աստուածները ունեցել են իրենց զուգակիցները, եղել են այր եւ կին, եւ քանի որ Արան ծնուել է այս միջավայրում, ապա նա եւս իր նախնական շրջանում պիտի ունեցած լինէր իր զուգակիցը (consort): Ի հարկէ Արայի բուն զուգակիցը չի կարող Շամիրամը եղած լինել, քանի որ հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ Արա Գեղեցիկ-Շամիրամ առասպելը աւելի ուշ

34) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 140:

35) Ն. Աղոնց, «Հին հայոց աշխարհայեացքը», Հայրենիք ամսագիր, 1926, Բիւ 12, էջ 76:

36) Նոյն տեղում, էջ 77:

չըջանի (Միջագետքի ազդեցութեան) արդիւնք է, հետեւաբար այս-
տեղ մնում է ընդունել, որ Արայի բուն նախնական զուգակիցը եղել
է մի ուրիշ զիցարանական դէմք կամ աստուածուհի: Այս պատճա-
ռաբանութիւնից ելնելով, ի հարկէ, մեծ կարեւորութիւն է ստանում
զարձեալ մեր անմահ Սորենացու պահած թանկագին վկայութիւնը.
«Այլ անդրէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ զծնեալն ի
Նուարդայ սիրելոյ կնոջէն Արայի, ...» (Սոր. Ա. — ի): Ուստի պի-
տի ընդունենք, որ Արայի բուն զուգակիցը եղել է Նուարդը, եւ պիտի
ընդունենք միաժամանակ, որ Նուարդը եղել է մի կարեւոր աստուա-
ծուհի:

Եւ ահա ծագում է այն հարցը, թէ ո՞վ էր Նուարդը: Մենք
զանում ենք, որ Նուարդի անուան մէջ պիտի պահուած լինի հենց
Փոքր-Ատիայի Մա, սումեր-ակկադեան Nana կամ Nina, հայկական
Նանէ կամ Անահիտ³⁷ զիցուհին:

Այս տեսակէտի համար որպէս հիմք պիտի ասենք, որ Նուարդ
անուան մէջ մենք տեսնում ենք երկու զիցարանական անուններ՝ Նու-
արդ, որտեղ Նու-ն մեր Նանէ-ն կամ Անահիտն է, իսկ արդ-ը (Արդ)
մեր Արան է իր ուրարտական Ard(i) ձեւով:

Իսկ Նու-Արդ կոմբինացիայի համար որպէս օրինակ-ապացոյց
բերում ենք հետեւեալը.

Ն. Աղոնցն իր «Հին հայոց աշխարհայեցողքը» յօդուածում բե-
րում է նշույնեղի՝ Ատարդատ անուան հետեւեալ ասուգարանութիւ-
նը. «Դարկեսոյի աւելի հին եւ լրիւ ձեւն է Ատարդատ(էս)..., Ա-
թարդատէս կազմուած է երկու դաս անուններից՝ Աթար եւ Հաթէ:
Առաջինը արամէական ձեւն է Իշթար զիցուհու անուան, երկրորդը՝
փոքր-ասիական Ատիս աստուծու անունն է, հազարային սկզբնաձևն-
չիւնով: Աթարդատէս, ուրեմն, նշանակում է Ատիսի Իշթար, այս-
ինքն՝ այն Իշթարը, որի սիրելին է Ատիսը»³⁸:

Մենք սկզբունքօրէն ընդունում ենք այս բացատրութիւնը մի-
այն այն տարբերութեամբ, որ Աթար-գատ(իս) անուան երկրորդ
մասը ոչ թէ Ատիս (Ատտիս-ն) է, այլ արամէական Դագ աստուածը:

³⁷ Ղափանցեամբ գրում է, թէ «Անահիտը... փոքրասիական աստուածա-
մայրն է՝ մեզ պոմսական Ma-յին» («Արա Գեղեցկի պաշտամունքը», էջ 23):

³⁸ Հայրենիք ամսագիր, 1926, էջ 79, թիւ 1:

Յայտնի է, որ արամէական Աթար (Իշտար) զիցուհու սիրելին³⁹ ու
ամուսինն⁴⁰ էր Արամէական Դագ աստուածը, ոչ թէ փոքրասիական
Ատտիսը (Ատիս), այնպէս որ Աթար-գագ կամ (դ > ա եւ գ տառերի
զրափոխութեամբ) Աթար-Գատ նշանակում է Դագի (սիրելի) Աթար,
այսինքն՝ այն Իշտարը, որի սիրելին է Դագը (> Գատը)⁴¹:

Այսպիսի կազմութիւն ունեցող մեր Նուարդը (Nu-Ard)
նշանակում է Ardi (Ara)-ի Nu-ն, այսինքն այն Nu-ն (Նանէ կամ Անա-
հիտ), որի սիրելին է Ard-ը (= Արա-ն):

Իսկ Նուարդի (Սորենացու վկայութեամբ) Արայի կինը լինե-
լուց դատ ուրիշ ի՞նչ ապացոյց կայ, որ Արա-ն եղել է Նու-ի սիրելին

³⁹ «Ատորիներն իրենց Դագն աստու (= մեր Արան) սիրուում անուանում
էին Դերկեսոյ (= Atargatis), որի սիմվոլը աստղն էր...» (Ղափանցեամբ, «Արա
Գեղեցկի պաշտամունքը», էջ 25):

⁴⁰ Նոյն տեղում, էջ 117:

⁴¹ Աղոնցը ներդրելի ստուգաբանութիւնից յետոյ նոյն տեղում բերում է
Ֆրեյզերի տեսակէտը, որը Atar-gat-ի «երկրորդ բաղադրեալը համարում է նոյն
Արաի կիլիկեան ձեւը իբր Ար-եհ կամ Հար-եհ, ուրեմն Արաբատ կիլիկեանն է
նոյն անուան (Adonis, I, p. 162)»: Իսկ Ղափանցեամբ ասում է, թէ «... աւելի յա-
ջող կը լինի բերելու բացատրել «Արար-գատը» որպէս կէտերի (= խեբերի) Արար,
մասնաւանդ որ հնչուել է ket վերջածնով եւս (Գերկեսոյի մէջ), իսկ Ket
ժողովուրդը (= Keteoi) յիշում է եւ Հումբոսի մօտ: Քամակեացի հնչելի են Astor
եւ et իգական մասնիկի յաւելումը՝ Astoret (այստեղից էլ յունական Astarté):
Ուտա-եղեւսիայում գործածական էր Թարհաթա (Tharhatha) կամ Թարհաթա
(Tharahatha), ինչպէս ցոյց են տալիս հայ փոխառութիւնները (տե՛ս Hübschm. Arm.
Gr.), թէպէտ կայ եւ առանց այդ hath (gat) մասի Ath-tar ձեւը... («Արա Գեղեցկի
պաշտամունքը», էջ 38):

Մենք մերժում ենք Ֆրեյզերի տեսակէտը, որ Արաբատ կիլիկեանն է նոյն
անուան (Արար-Հար-եհ), որովհետեւ չի բացատրում Արաբատ-ում գ տառի գո-
յութիւնը: Մենք համաձայն չենք նաեւ Ղափանցեամբի առաջարկութիւններին, որով-
հետեւ Արաբատ(իս)-ը խեբական չէ, այլ արամէական-սիրիական, իսկ Astor-et,
Thar-hatha կամ Thara-hatha կազմութիւնը (Իշտար-իգական մասնիկ) անկախ է
Արար-գատ-եւ կազմութիւնից, մասնաւանդ որ այս ձեւն էլ չի բացատրում գ տառի
գոյութիւնը:

կամ Նու-ն եղել է Արա-ի սիրելին: Սրա համար Ն. Աղոնցը բերում է հետեւեալ շատ կարեւոր տեղեկութիւնը. «Հոմերոսի մօտ Արէսի մերձաւորը կոչուած է Ենիո, որը նրա համար ե՛ւ մայր է ե՛ւ աջակից կուում (Իլիական Ե՛. 592): Այս է պատճառը, որ Արէսը երբեմն կը-րում է նրա անունը՝ Ենիական:

«Արէսի կապը Ենիայի հետ հին յիշողութիւն է եւ կարեւոր:

«Թուում է, որ Ենիոն կանացի դէմքը ոչ այլ ոք է, եթէ ոչ Ափ-րոզիտէի նախորդը: Պելագոսական Ափրոզիտէն զրաւել է Թրակացի Ենոյի զիրքը Արէսի նկատմամբ: Այնինչ Թերալում Ափրոզիտէն ար-դէն Արէսի կինն էր համարուում, Լեմնոսում նրա օրինաւոր ամուսինը տակաւին Հեփեսոս(ոս)ն էր եւ Արէսի տարփանքը Ափրոզիտէի հան-դէպ ապօրինի էր նկատուում, ինչպէս երեւում է նրանց սիրային ար-կածից, երբ Հեփեսոսը իր խարուած ամուսին հետապնդում է իր եր-ջանիկ հակառակորդին՝ Արէսին:

«Ենոյի եւ Արէսի մտերմութիւնը չէր մոռացուած դեռ եւս Գ դարում. Թրակիայում սովորութիւն կար գերիններ զոհել Արէսին եւ Ենոյին, ինչպէս պատմում է Ամմիան Մարկելինը (XXVII, 44):

«Թուում է, որ այս զոյգի յարաբերութիւնը աւելի բարդ է եղել, քան Արէսի եւ Ափրոզիտէի եւ մօտ Ատիս — Կիրելեան սերտութեան. կարծում ենք, որ Ենիոյի անունն իսկ Enn, Enoo ուրիշ բան չէ, եթէ ոչ Nana, Nina անուան մի այլ ձեւը...⁴²»:

Աղոնցի բերած այս տեղեկութեան մէջ Ենիո-Արէս-Ափրոզիտէ-Հեփեսոս(ոս) յարաբերութիւններն իրենց ամբողջ բովանդակութիւն-ներով լրիւ համապատասխանում են Նու(արդ)-Արա-Շամիրամ-Նինոս յարաբերութիւններին: Արէսեան խմբում Ենիո-ն իսկական, նախնա-կան եւ հարազատ սիրելին է Արէսի, իսկ Ափրոզիտէի սէրը Արէսի նկատմամբ ապօրինի է, քանի որ ունի ամուսին՝ Հեփեսոսը, որը խանդից վրէժխնդրութեան համար, հետապնդում է իր հակառակոր-դին՝ Արէսին: Ծիչը նոյն յարաբերութիւններն ենք տեսնում Արայի խմբում: Նու(արդ)ն իսկական նախնական, հարազատ սիրելին է (Նու⁴³ հայերէն նշանակում է հարս) Արայի, իսկ Շամիրամի սէրը Ա-րայի նկատմամբ ապօրինի է, քանի որ ունի ամուսին՝ Նինոսը, որը

խանդից, վրէժխնդրութեան համար, հետապնդում է⁴⁴ իր հակառա-կորդ Արային: Ուստի պարզ է, որ Ենիո-ն մեր Նու-ն է:

Այս կապակցութեամբ շատ հետաքրքրական է Գ. Ս. Սարգս-եանի բերած հետեւեալ արժեքաւոր տեղեկութիւնը (խօսելով «Թա-դաւորների ու նրանց նախնիների պաշտամունք»-ի մասին՝ զրում է). «Պաղոմէոս Փիլադելփոսը զիմեց յաջորդ քայլին, դեռեւս կենդանու-թեան ժամանակ աստուածներ յայտարարելով իրեն եւ իր կնոջ՝ Ար-սինոյէին որպէս θεοί ἀδελφοί եւ նրանք իսկապէս քոյր եւ եղբայր էին: Բացի այդ, ստեղծուեց Ափրոզիտէ-Արսինոյէի, այսինքն Ափ-րոզիտէ զիցուհու հետ նոյնացուած Արսինոյէի պաշտամունքը⁴⁵: Ոչ մի կասկած, որ այստեղ յիշուած Արսինոյէ զիցուհին ունի ճիշդ մեր Նուարդի ճշմանակութիւնը: Արսինոյէ կամ Արէս-Ենիո անունը նշանակում է Արէսի Ենիոն (Նու):

Սա ճիշդ մեր Նու-արդ-ի յունական ձեւը կամ Թարգմանու-թիւնն է եւ նոյնպէս ցոյց է տալիս Նուարդի մեր ստուգաբանութեան ճշգրտութիւնը:

Միւս կողմից պիտի նշենք, որ ինչպէս Արէս-ը Հայկական լեռ-նաշխարհի (եւ Փոքր-Ասիայի արեւելեան շրջանի) ծնունդ Արան է, այնպէս էլ Ենիո-ն մեր Նու-ն է, որի մէջ պիտի տեսնել Անահիտը կամ Փոքր-Ասիայի Մա զիցուհին: Սրա համար կարեւոր ապացոյց է պա-րունակուում Սարգսնի այն վկայութեան մէջ, որտեղ ասուում է, թէ կապագովկիայի զլիաւոր սրբավայր Կոմանա տաճարային քաղաքում պաշտուում է Էնիո-Մա աստուածութիւնը⁴⁶:

44) Ն. Աղոնցի՝ իր «Հին հայոց աշխարհայեցքը» յօդուածում բերած տե-ղեկութեան համաձայն, գերամացի գիտնական Վիլհելմ Բեռլինի պայիրուսի ժո-ղովածուն քննելիս երեւան է հանել մեր Արա-Շամիրամ աստուայի համար մեծ կա-րեւորութիւն մերկայացնող մի սիրային վէպ, որի հերոսն է Ատրեստամի քաղա-ւոր Նիմոսը: Մեմֆ չեմֆ ուզում մէջբերել այդ երկար պատմութիւնը. վէպի եւ տրուած մեկնութեան որպէս ամփոփում այսօրեւ թանկ, որ Նիմոսը մեծ ուժերով արշաւում է Հայաստանի վրայ խանդելով այն բանից, որ իր սիրածը (Անանուսի վկայութեամբ՝ «Եւ էր Շամիրամ կինն Ատրեոց արքայի Նիմոսի...») սիրում է Հայաստանի Արային:

45) Գ. Ս. Սարգսեան, «Հիլիեմիտական դարաշրջանի Հայաստանը եւ Մոզուս և արեւմտեան», Երևան, 1966, էջ 26:

46) Նոյն տեղում, էջ 213:

42) Ն. Աղոնցի մոյն յօդուածում, Հայրենիք ամսագիր, Բիւ 12, էջ 75:

43) Nus խալդեերէն ճշմանակում է քաղուսի (տե՛ս Եղիա Քասուսի, «Նախա-հայկական Հայաստան», Պէյրուք, 1955, էջ 618):

Nu - ին՝ Nina-ի եւ Անահիտի հետ նոյնացնելիս՝ մտաբերում ենք սրանց ունեցած լուսնային բնույթը⁴⁷, որովհետեւ դիցարանութեան մէջ արեւ-լուսին դուզակցութիւնը որպէս այր ու կին, կամ քոյր ու եղբայր, շատ հին հաւատ է յատկապէս Առաջաւոր Ասիայում, հետեւաբար շատ հետաքրքրական է այդ հաւատի արտայայտութիւնը տեսնելը մեր այս շատ հին գոյգի՝ Նու-ի (Անահիտի) եւ Արդ-ի (Արայի) մէջ: Որով Նու-Արդ պիտի նշանակի Արդ-Արայի (սիրելի) Նու-Անահիտը, կամ դիցարանական ընդհանուր հասկացողութեամբ Արեւի (սիրելի) Լուսինը: Ահա թէ ինչ մեծ ու գեղեցիկ խորհուրդ էր պահում իր մէջ այդքան ժամանակ ամպերի տակ մնացած մեր համեստ ու անմեղ Նուարդը:

Նուարդ անուան մեր այս ստուգարանութեան արդիւնքը մի ուրիշ ապացոյց եւս ունի ուրարտական լուսնի աստուածութիւն եղող Սիեւարդիս անուան մէջ⁴⁸: Ն. Ադոնցը գրում է, թէ «Լուսնի աստուած Սին-ի ուրարտական անունը Սիեւարդի է, ... հրապուրիչ է այս անունը կազմուած համարել սիել («կին» կամ «քոյր») եւ արդի («արեւ») բառերից⁴⁹: Մեզ թւում է, թէ այլ փաստարկութիւններն աւելորդ են. միանգամայն պարզ է, որ ուրարտական Սիել-Արդի անուան մէջ մենք ունենք հայկական Նու-արդ անուան կրկնօրինակը, նոյն նշանակութեամբ, նոյն կազմութեամբ: Ոչ մի կասկած, որ երկուսի մէջ էլ -արդ մասը արեւի Արդ (Արա) աստուածն է, երկուսն էլ նշանակում են Արդ-(Արա)-ի սիրելի Նու-ն կամ Սիել-ը. մենք գտնում ենք, որ ինչպէս Նու-ն (Ենիտ, Նանէ, Անահիտ) դիցուհի է, այնպէս էլ Սիել-ը դիցարանական գէմք է եւ յիշեցնում է Գուտխալիա Գ-ի եւ Հայաստյի Մարիա արքաների միջեւ կնքուած դաշնագրութեան մէջ յիշուած Սիելի⁵⁰ դիցուհին: Նկատի առնելով Սիեւարդի-ի լուսնային բնույթը եւ ելնելով վերելում մեր կատարած վերլուծութիւնների արդիւնքից՝ հետեւցնում ենք, որ Սիելը լուսնի դիցուհի է,

եւ կարծում ենք լուսնի յայտնի դիցուհի Սելենէ-ն: Այսպէս ուրեմն, ինչպէս Նուարդ, այնպէս էլ Սիել-արդի նշանակում է Արեւի (սիրելի) լուսինը: Երկուսն էլ ներկայացնում են սիրելին այն արեւ աստծոյ, որ կոչւում է Արդ, կամ աւելի ճիշդը (նախնական ձեւը) Ար (Արա), քանի որ Նուարդ-ը (Արդի սիրելի Նու) կինն է Արայի:

Նուարդի ստուգարանութեամբ երեւան հանուած Արա = Արդ հաւասարութիւնը խոշոր նշանակութիւն ունի հայ ժողովրդի պատմութեան համար: Մենք յատուկ ուշադրութիւն ենք հրաւիրում այս հաւասարութեան վրայ, որովհետեւ մեր այս ուսումնասիրութեան յաջորդ մասերում այդ հաւասարութիւնը շատ մեծ դեր է խաղալու մեր ժողովրդի պատմութեան մէկից աւելի հանդուցային կէտերի լուծման, եթէ կարելի է ստել, որպէս բանալի (հայութիւնից դէպի Ռուբարտու) փակ դռների բացման համար:

Նուարդ անուան ստուգարանութեամբ երեւան եկած նրա դուզահռոնների յիշատակութիւնները փակելուց առաջ՝ չենք կարող չիշել նաեւ Սինուարդի (Sinuardi)⁵¹ աստուածութիւնը, որը նոյնպէս կազմուած է նոյն երկու (լուսին եւ արեւ) աստուածութիւններից: Սինուարդի անուան արդի-ն նոյն արեւի Արդ(ի) աստուածն է, որ տեսանք Նուարդ եւ Սիել-արդի⁵² անունների մէջ, իսկ Սին-ը, ինչպէս յայտնի է, ակկադական (Առաջաւոր Ասիայում յայտնի) լուսնի աստուածն է, եւ մենք գտնում ենք, որ հենց մեր լուսին բառն էլ (LU-SIN) ուրիշ բան չէ, բայց եթէ միայն ակկադական ILU SIN կապակցութիւնը, որ նշանակում է աստուած (ILU) Սին («լուսին»): Հետեւաբար Սինուարդի նշանակում է «լուսինը արեւի»: Նուարդ, Արսինոյէ, Սիեւարդի անունների մէջ Նու, ինոյէ (Ենիտ)ն եւ Սիելը իդական աստուածութիւններ են, դժուար է ստել, թէ Սինուարդի անուան Սին («լուսին») մասը իդակա՞ն է, թէ ոչ, եթէ այստեղ Սինը արական է, ապա արդի-արեւը պէտք է այս դէպքում լինի իդական, բայց նկատի առնելով այն հանդամանքը, որ այս անունը բերում է

47) Կ. Վ. Մելիք-Փաշայեան, «Անահիտ դիցուհու պաշտամունքը», Երևան, 1963, էջ 68-72, ուր իրաւացիօրէն խօսում է Անահիտի լուսնային բնույթի մասին:

48) Միերի դրամ ուրարտական արձանագրութեան մէջ «Լուսնի աստուածը գլխաւոր վարիստուս արտայայտուած է գաղափարագրով (Sin), իսկ գուգահեռ վարիստուս արուած է հնչիւօրէն. Šielardi անունով...» (Տե՛ս Գր. Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը», Երևան, 1940, էջ 46):

49) N. Adontz, «Histoire d'Arménie», Paris, 1946, p. 226:

50) Եղիա Քասունի, նշուած գիրքը, էջ 113:

51) Ն. Ադոնց, «Histoire d'Arménie», էջ 226:

Եղիա Քասունի (Շինուարդիս), էջ 622:

52) Գր. Ղափանցեանը («Ուրարտուի պատմութիւնը», Երևան, 1940, էջ 46) նշում է Սիել-արդի եւ Սինուարդի (Յինուարդի) անունների -արդի մասի մէջ տեսնում է արեւ նշանակութիւնը, բայց սխալ է քարգմաթում այս անունների առաջին մասերը՝ Սիել-ը քարգմաթելով «գիշեր», իսկ Յինու-ն (կասկածամբով)՝ «աստղ»:

ուրարտական այն (Մհերի դրան) արձանագրութեան մէջ, ուր բերուած է Սիեւ-արդի անունը, որտեղ Սիեւը («լուսին») իզական է, ապա նոյն երկրի ժողովուրդներից մէկի աստուածութիւնն եղող Սինուարդի անունն մէջ էլ Սին-ը պիտի լինի իզական, ուստի ինչպէս Նուարդ՝ այնպէս էլ Սիեւարդի եւ Սինուարդի անունները նշանակում են Արեւի սիրելի Լուսինը:

Հայերի մօտ արեւի եւ լուսնի պաշտամունքը այնպիսի խոր արմատներ է ունեցել, որ անգամ հեթանոսութեան վերջին դարերին, հակառակ հայկական պանթէոն ներխուժած օտար աստուածներին, Արմաւիրում արձաններ են կանգնեցնում նրանց համար. Խորենացին հայոց Վաղարշակի դործերի մասին խօսելով գրում է. «Իսկ յետ այս ամենայնի մեհեան շինեալ յԱրմաւիր, անդրիս հաստատէ արեգական եւ լուսնի...» (Խոր. Բ—ը):

«Սումերահայ յարարութիւններ» գլխում խօսել էինք գիտութեան բացայայտած այն իրողութեան մասին, որ սումերները նախապէս եղել են Հայկական լեռնաշխարհի բնակիչները, դրա համար բերել էինք նաեւ մի շարք ապացոյցներ: Այժմ, Նու-արդ անունն ստուգարանութիւնից յետոյ, հնարաւոր (հասկանալի) է դարձել մի կարեւոր փաստ եւս, որը, որպէս միջանկեալ, ցանկանում ենք բերել այստեղ. դա սումերների լուսնի աստուած Nannar-ի եւ արեւի աստուած Babbar-ի ստուգարանութիւնն է:

Սումեր լուսնի աստծոյ Nannar անունը հենց մեր Նուարդ-ն է: Վերելում ցոյց տուցինք, որ Նու-արդ նշանակում է «Արդի՝ Արայի Նու-ն» (Նանէ կամ Անահիտ). այսպէս էլ Nann-ar նշանակում է «Ar-ի Nann-ը», այսինքն՝ «արեւի (սիրելի) լուսինը»: Այս Nann-ը Nanâ-ն (մեր Անահիտը կամ Նանէ-ն) է: Սումերական լեզուում կայ նաեւ nin, որը նշանակում է «տիկին», իսկ մենք գիտենք, որ հայերէնում ֆու նշանակում է «հարս»:

Ճիշդ է, որ սումեր Nannar-ը Ur քաղաքում հանդէս է գալիս որպէս արական աստուածութիւն, բայց դա դժուարութիւն չի յարուցում մեր մեկնարանութեանը, որովհետեւ Հայաստանում էլ լուսինը մի շրջանում (Վան եւ շրջանները) իզական է, իսկ մի այլ շրջանում (Խոսրջուր, Համշէն, արեւելեան Հայաստանի մի մասը)՝ արական, այս երեւոյթը ցոյց է տալիս, որ լուսնի սեռային բնոյթը փոփոխական է՝ նայած ժամանակի ու տեղի:

Ուստի միանգամայն պարզ է, որ սումեր Nin, Nana կամ Nann

աստուածուհին մեր Նու-ն է, որով Nann-ar անունը ճիշդ մեր Նու-ար(դ) անունն է: Nann-ar անունն այս ստուգարանութիւնը ունի մեծ նշանակութիւն սումերահայ յարարութիւնների տեսակէտից. այն ոչ թէ միայն ցոյց է տալիս Nann-ի մեր Նու-ն լինելը, այլ եւ ar-ի մեր Արդ-Արան լինելը, որը փաստում է նաեւ սումերական արեւի աստծոյ Babbar անունն ստուգարանութեամբ: Babb - ar նշանակում է «պապ (մեծ հայր) Ար»՝ «նախահայր-Արա»⁵³. սումերերէն bab, pap նշանակում է «հայր» կամ «մեծ հայր»: Bab տեղիքը «հայր, մեծ հայր, նախահայր» իմաստներով տարածուած է բազմաթիւ լեզուներում. դա առաջացել է բնական ձեւով. երախաների արտասանած առաջին բառը շատ յաճախ լինում է բա, ար, բար (պապ) կամ բարա (պապա). այդ է պատճառը, որ ար կամ բար (պապ) բառը «հայր կամ մեծ հայր» նշանակութեամբ դանում է բազմաթիւ (սեմական, հնդեւրոպական եւ այլ) լեզուներում:

Bab անունն վերջին b-ն կրկնուած է՝ (Babbar)՝ ar-ի հետ հնչելիս: Այդ բանը պատահել է նաև Nin կամ Nan (Nanâ)՝ հետ, որի վերջին n-ն կրկնուած է (Nannar)՝ ar-ի հետ հնչելիս: Հետեւաբար կատկած չկայ, որ Nann - ar նշանակում է Ar-ի (արեւի) Nanâ-ն (լուսինը)՝ հենց Նու-արդ «Արայի Նու-ն»: Իսկ Babb - ar նշանակում է «հայր Ար», («նախահայր Արա»): Սա կատկած չվերցնող փաստ է, որ սումերները նախապէս բնակուել են Հայկական լեռնաշխարհում:

Այսպիսով, Նու-արդ անունն («Արայի Նու-ն»՝ «Արեւի (սիրելի) լուսինը») ստուգարանութիւնը փաստող Արս-ինոյէ, Սիեւ — արդի եւ Սինու-արդի նոյնականների շարքին աւելանում է եւ Nann-ar անունը: Հետեւաբար վերջնականապէս հաստատում է, որ Նու-արդ, Սիեւ-արդի, Սինու-արդի անունների Արդ կամ Արդի բաղադրիչը հենց Արս-ինոյէ եւ Nann-ar անունների բաղադրիչ Արս (Ares) կամ Ar (Արա)-ն է. մանաւանդ (բարեբախտաբար) Խորենացին վկայում է, թէ Նու-արդը Արայի կիներ է. հետեւաբար, ինչպէս ասացինք վերելում, պէտք չէ մոռանալ Արդի = Արա հաւասարութիւնը, որը մեծ

⁵³ Սրանով ժխտում է Babbar-ի Bar - bar ստուգարանութիւնը, որ բերում են ոմամք: Bab կամ Pap = «հայր» կամ «մեծ հայր», տես Deimel եւ S. Langdon:

զեր է խաղալու մեր ժողովրդի պատմութեան մէկից աւելի հանդու-
ցային կէտերի լուծման համար՝ հայութիւնից զէպի Ուրարտու տա-
նող փակ դռների բացման գործում :

4. — ԱՐԱ. — ՇԱՄԻՐԱՄ

Առասպելում Շամիրամն իր տարփալի ցանկութիւններէ զո-
հացման համար իր մօտ է հրաւիրում Հայաստանի զեղեցիկ Արային,
իսկ Արան մերժում է կատարել նրա ապօրինի ցանկութիւնը, նախ-
ընտրելով հարազատ Նուարդի սէրը՝ պատճառ դառնալով, որ վա-
ւառուրդ վայ՝ բռնի ուժով կատարելու իր մտադրութիւնը: Սա ի հար-
կէ հզօրացած Միջագետքի զէպի հիւսիսային հարուստ լեռնաշխարհ
(զէպի Հայաստան) կատարած նուաճողական արշաւանքների արտա-
ցումն է՝ Ուրարտուի զէմ կատարուած արշաւի առասպելականաց-
ուած յիշողութիւն: Իրական պատմական զէպքերը, առասպելակազ-
մութեան սկզբունքների համաձայն, փոխակերպուել են սիրավէպի,
որի մէջ հակառակորդ երկու կողմերն անձնաւորուել են զիցարանա-
կան (Արա, Շամիրամ) զէմքերով:

Նկատի առնելով այն հանդամանքը, որ Արան արեւի աստուա-
ծութիւն է, բնականաբար նրան սիրահետողն էլ պիտի լինէր մի երկ-
նային զիցուհի, ինչպէս Նուարդ, Սիւլ-արդի, Արա-Ինոյէ եւ նման
զոյգերի մէջ արեւի սիրելին է լուսինը: Հետեւաբար կասկած չի կա-
րող լինել, որ Շամիրամը ներկայացրել է միջագետքեան մի երկնա-
յին իդական աստուածութիւն:

Ո՞վ էր երկնային այս զիցուհին:

Ասորեստանի պանթէոնում կայ միայն մի երկնային զիցուհի,
դա Իշտարն է: Ուստի հարցի լուծման համար որպէս նախնական ե-
լակէտ ընդունում ենք, որ Արային սիրահետողը Իշտարն է: Այս կար-
ծես հաստատում է Աշտիշատում Աստղիկի (Իշտարի) մեհեանի «Վա-
հագնի սենեակ» կոչուելովը, մի բան, որ ցոյց է տալիս, որ Վահագնի
սիրուհին Աստղիկն էր, իսկ մենք զիտենք, որ Վահագնը դբաւել է
Արայի սեղը, եւ զիտենք միաժամանակ, որ Աշտիշատում Վահագնի
(Արայի) եւ Աստղիկի մեհեանների կողքին կար նաեւ Անահիտի մեհե-
անը, որը կարծես ներկայացնում էր (մի բան որ մոռացուել է) Ա-
րայի իսկական կնոջ՝ Նալ զիցուհուն (այդ ցոյց ենք տուել Նուարդի
բացատրութեան մէջ):

Բայց ինչպէ՞ս է պատահում, որ Իշտարը մեր առասպելում
հանդէս է գալիս Շամիրամ անուան տակ, կամ ո՞վ էր Շամիրամը:

Եթէ Արային սիրահետող զիցուհին սումեր-ակկադական էր,
սպա նա պիտի լինէր Ninni (Innanna), Nanâ, Anunit և Ninâ զիցուհի-
ներից մին⁵⁴, իսկ եթէ ասորեստանեան զիցուհի էր, ինչպէս ասացինք,
նա պիտի լինէր Իշտարը: Բայց բանը նրանումն է, որ Իշտարն ընդ-
հանրապէս հանդէս է եկել այլ անունների տակ, որոնցից են նորից
Nanâ, Innanna, Ninâ և Anunit⁵⁵: M. Jastrow-ն ասում է, թէ նոյնիսկ
Համմուրաբի ժամանակներում այս զիցուհիները, որոնք նախապէս
տարբեր աստուածութիւններ էին, որպէս կենսատու ուժ միացած էին
Իշտարի մէջ⁵⁶: Հետեւաբար զուրս է գալիս, որ խնդրոյ առարկայ
զիցուհին սումերական էր եւ ներկայացնում էր Սումերը, եւ հենց
Համմուրաբին եւ նրանից սկսած ուրիշներ, Šumer և Akkad անունները
յիշում են Šumerim և Akkadim⁵⁶ ձեւերով: Եւ ահա, մեր կարծիքով,
Շամիրամ անունը հենց Šumerim անունն է, իսկ այս հաւասարութիւ-
նը իմաստաւորում է յատկապէս Šumer անուան իսկական նշանա-
կութեամբ, որը մինչեւ հիմա մնացել է անյայտ՝ որովհետեւ զիտա-
կան շրջանակներում Šumer անուան համար մի սխալ ստուգաբանու-
թիւն է ընդունուել:

Իրականում ի՞նչ ծագում ունի Սումեր անունը: Այս հարցի
պատասխանը շատ կարեւոր է մեր առասպելի Շամիրամ անուան նը-
շանակութեան բացայայտման համար. որով այստեղ բերում ենք
Սումերի մեր ստուգաբանութիւնը.

Սումերներն իրենց գոտական ժամանակաշրջանում իրենց եր-
կրի համար աշխարհադրական կամ ցեղային յատուկ անուն չեն ու-
նեցել: Գործածել են Kalama տերմինը, որը նշանակել է «երկիր».
Երեւի դբանով ուղեցել են ասել «հայրենի երկիր», իսկ օտար երկր-
ները զատորոշել են Kur տերմինով: Մի ժամանակ էլ Ur, Larsa և Isin
քաղաքների սումերական զինաստիայի արքաները կրում էին արքայ
Ki-en-gi(n)-ի եւ Ակկադ-ի տիտղոսը՝ սումերների երկիրը նշելով Ki-en-

⁵⁴) Սրաճց մասիս տե'ս Morris Jastrow, «The Religion of Babylonia and Assyria»:
Boston, U. S. A., 1898, p. 80:

⁵⁵) M. Jastrow, «Encyclopaedia Britannica», 13th ed., տե'ս Ishtar:

⁵⁶) S. Langdon, Պշուած գիրքը, էջ 4:

-gi(n) տերմինով. այս տերմինը վերաբերում էր նախապէս սումերներին կրօնական կենտրոն Nippur քաղաքին, քանի որ KI-EN-GI տերմինը գտնուել է Nippur քաղաքի տաճարին նուիրուած մի վազայի վրայ: Շումեր անունը, ինչքան յայտնի է, առաջին անգամ յիշուել է Eannatum-ի կողմից «Stèle des Vautours»-ի (Անդրների կոթող) արձանագրութեան մէջ⁵⁷:

Hommel-ը սումերերէնի մէջ նկատուող բաղաձայնների ներքին ձայնափոխութիւնների օրէնքի հիման վրայ (զբանցից են՝ mm > ng, n > s⁵⁸, š = z⁵⁸, որով n = z, i-ից առաջ k > š⁵⁹, n > m⁶⁰, n > r⁶⁰, g > n⁶¹ եւ այլն⁶². Ki-en-gin կապակցութիւնից (i-ից առաջ k > š եւ n > r) ստացել է Šumer անունը: Այս ստուգարանութիւնն էլ ընդունուել է գիտնականների շրջանակում:

Մենք, սակայն, չենք ընդունում այս ստուգարանութիւնը, ոչ թէ միայն նկատի առնելով անցումների բարդութիւնը, որոնք անհրաժեշտ են համարուել KIENGI-ից Šumer անունն ստանալու համար, այլ եւ յատկապէս աչքի առաջ ունենալով այն իրողութիւնը, որ անգամ Eannatum-ի ժամանակներին (Գ հազարամեակի կէսերին) եւ ի հարկէ նրանից յետոյ, ակկադական եւ բաբելական ժամանակներում յիշուում էին թէ Šumer եւ թէ՛ KIENGI տերմինները,

57) Նոյն տեղում, էջ 1:

58) S. Langdon, Պշուած գիրքը, էջ 38, 41:

59) Նոյն տեղում, էջ 43:

60) Նոյն տեղում, էջ 44:

61) Նոյն տեղում, էջ 45:

62) Այս ձայնափոխութիւնների կարելու մասը առաջ եկած պիտի լինի այն պատճառով, որ նախապէս գրութիւնները գաղափարագրութիւններ էին, եւ տարբեր ձայն ունեցող հոմանիշ բառերի համար բնականաբար օգտագործում էին միևնույն գաղափարամիշը: Գաղափարամիշից վանկահնչիւնային սխտեմին անցնելով՝ հոմանիշ արմատներից առաջացած տարբեր վանկահնչիւնների համար պիտի մնար մի սեպանշան (սեպանուր), այնպէս որ որոշ դէպքերում հոմանիշ բառերից մէկից առաջ եկած քաղաձայնը ունենում էր միւս հոմանիշից առաջ եկած այլ քաղաձայնի արժէքը: Սա ի հարկէ չի նշանակում, որ բոլոր դէպքերում կարելի է, օրինակ, K-ն փոխարինել չ-ով:

մի բան, որ ցոյց է տալիս զբանց իրարից տարբեր եղած լինելը, թէ եւ երկուսն էլ կարող էին նոյն երկիրը նշել, ինչպէս Իրաք եւ Միջագետք անունները նոյն երկիրն են նշում, բայց տարբեր անուններ են. առաւել զբան՝ հաշուի ենք առնում եւ այն հանգամանքը, որ KIENGI տերմինը չունէր ո՛չ զիցարանական (այդ ժամանակների համար բընորոշ) եւ ոչ էլ ցեղաբանական նշանակութիւն:

Մենք գտնում ենք, որ Šumer անունը առաջ է եկել սումերների նշանաւոր Ur քաղաքի շատ սիրուած լուսնի աստուած Nannarի անունից, կամ այլ խօսքով՝ Šumer անունը հենց Nannar անունն է: Ur քաղաքը սումերների կեանքում խաղացել է կարելուր դեր՝ մի ժամանակ լինելով նաեւ հարաւի մայրաքաղաքը, իսկ լուսնի աստուած Nannar-ը սումերների մօտ ունեցել է շատ աւելի մեծ կարեւորութիւն, քան արեւի Babbar աստուածը եւ նրա ազդեցութիւնը շատ մեծ է եղել ամբողջ Սումեր երկրում:

Ըստ սումերերէնի ներքին (վերեւում նշուած) ձայնափոխութեան օրէնքների (նրանցից է n > š), Nannar անունն N սկզբնաձայնը Š ձայնի փոխելով (ինչպէս nir > šer, ne-gar > še-gar)⁶³ ստացուել է šannar կամ (n > m) šammar > šumer: Ինչպէս յայտնի է՝ Ս. Գրքում այս անունը յիշուում է Սենաար⁶⁴ (Սենար) կամ Շինար⁶⁵, իսկ անգամ ներկայումս Իրաքում գոյութիւն ունի արաբական վրանաբնակ եւ նշանաւոր šammar ցեղը (տարիներով ապրել եմ նրանց մէջ), որը, ի հարկէ, պահում է šumer-ի յիշատակը: Ս. Գրքի Սենաար-ը եւ Իրաքի šammar-ը փաստում են մեր վերոյիշեալ ստուգարանութեան անցումների ճշգրտութիւնը:

Այս ապացուցումը կարելի է ստանալ նաեւ միւս ուղղութեամբ. Šumer կամ (Ս. Գրքի) Šinar անունն Š ձայնը N-ի փոխելով՝ կը ստացուի Nin-ar > Nannar, Nannar, որը սումերական լուսնի աստուածն է: Բայց Ninar-ը կամ Nannar-ը կոչուում էր նաեւ Sin սեմական էթնիկ տարրի առկայութեան պայմաններում (արաբերէնը

63) S. Langdon, նշուած գիրքը, էջ 41:

64) Ս. Գիրք, Մարգարէութիւն Եսայեայ, գլուխ ԺԱ.—11:

65) Ս. Գիրք, անգլիերէն, նոյն տեղում:

այս անունը պահել է անգամ երկու n-ով՝ Sinn, Sinnu 𐎎-
«տարիք»․ սա լուսնի անունն է, որովհետև հին ժամանակներում
տարին ու տարիքը հաշվում էին լուսնով՝ լուսնի շրջանով), ուստի
Nann-ar կամ Nan-ar անունն առաջին մասը Sin-ի փոխելով՝
ստացուել է Sin-ar կամ Šin-ar, որը (Ս․ Գրքի) Sumer անունն է։

Սա ցույց է տալիս, որ Nannar (Sin-ar) անունն մէջ լուսին
(Sin) նշանակութիւնը դանդում է առաջին մասում, մանաւանդ որ սու-
մերները լուսնին կոչում էին նաև Enzu, որը հաւասար է (n > z ինչպէս
սուսեց վերելում) Ennu կամ Nann ձեւի։

Այս կապակցութեամբ կարող է մի (թէեւ աւելորդ) փաստա-
կան արժէք ներկայացնել արարական 𐎎 qamar⁶⁶ («լուսին») բառը,

⁶⁶ Հայերէն կամար բառի համար Անտանի Լիբրշմանից բերելով գրում է․
«կամար «մէջքի գոտի», որից կամարածու «գոտի կապող»... = պի․ kamar
«գոտի» բառից, որի հետ նոյն են պիւ․ kamar եւ գնտ․ kamara «գոտի»․ պիւ․ բառը
փոխ են առել նաև քրտ․ kemer, փղաց․ kamar, քրթ․ kemer, վրաց․ կամարա, ասոր․
qamrā, qamarā «կամար»։

«կամար «շէնքի կոր մակառ», կամարահայ, կամարածու եւայլն։

= յն․ κάμαρα «կամար, կամարածու ծածկով որևէ շէնք, կամարաւոր
սեննակ» բառից փոխառեալ։ Այս բառը շատ հիմ է․ Հերոդոտոս գործածում է
κάμαρον «կամար» փոխառութեամբ անցել է շատ բազմաթիւ լեզուների․ ինչպէս լատ․
camera, camara «կամար ծածկ, կամար, սեննակի կամար», իտալ․ camera
«սեննակ», սլոն․ cámara, ֆրնս․ chambre, հնդ․ camra, գերմ․ kammer, հու․ kamara,
բուլգար․ kemer, լիթ․ kamarà, պրամ․ kamare, վրաց․ կամարա, քրթ․ kemer
«կամար»... Յոյն բառը, որ այս բոլորի աղբիւրն է, ըստ վերջին գիտական բա-
ցատրութեան հնդեւրոպական ծագում ունի․ ցեղակիցներն են լտ․ camurus
«կար», «կամարածու», սամ․ kamārati «կորամալ», գերմ․ himmel «երկինք»։

Ոչ մի կասկած, որ քե՛լ Հիբրշմանը, որ վերելի բոլոր կամարները յոյն բա-
ռից ծագած է համարում եւ քե՛լ բառը հնդեւրոպական համարողները սխալում
են․ բոլորի աղբիւրը արար․ 𐎎 qamar (լուսին) բառն է․ բնական է, որ մարդիկ
կարը, կտրը եւ կիտակտրը առաջ լուսնի վրայ են տեսել։ Այս արար․ կամար ան-
ունն միւս լեզուներին անցումը կատարուել է մեր կամար-ի միջոցով։

Եթէ այն Nannar անունից է ծագել։ Յայտնի է, որ q, k, g լծորդ են․
սումերերէնում կայ նաև g > m, g > n, n > m (gal > mal, ug > un
եւայլն), որով qamar = nannar։ Եթէ արարական կողորդային q (𐎎)
ձայնը (զոնէ որոշ դէպքերում) որևէ խնամութիւն ունի § ձայնի հետ,
սպա զժուար շէր լինի ընդունել šinar > šamar > qamar անցումը։ Ի
հարկէ այս տեսակէտով շատ հետաքրքրական են արարերէն 𐎎 qimmat
եւ անդերէն summit բառերը, որոնք ունեն նոյն նշանակութիւնը՝
երկուսն էլ նշանակում են զագաթ, կատար։ Այստեղ պարզ երևում է
q q ձայնի s կամ § ձայնի հետ ունեցած խնամութիւնը։ Արարական
q q ձայնը համապատասխանում է հնդեւրոպական c (կ)-ի․ օրինակ՝
𐎎 qit = cat = կատու, قرمز qirmiz = crimson = կարմիր, قيسر
qaysar = caesar = կեսար եւայլն, իսկ ինչպէս յայտնի է, մարդկային
բերանում u եւ կ ձայները հեշտ են փոխանակուում, դրա համար ա-
պացուց է հնդեւրոպական լեզուների սատակ եւ կենտում խմբաւոր-
ումները։ Ի հարկէ կարելի է ընդունել Nannar > šinar (կամ Sumer)
անցման սումեր-ակկադեան Միջագետքի աւելի սեմական բնակչու-
թեան կողմից կատարուած լինելը, որովհետև sin-ը սեմական է եւ
նրա աղբիւրները այս անցման մէջ զժուար շէ ընդունել, մանա-
ւանդ որ սումերերէնի մէջ որոշ դէպքերում ի յայտ եկող n > š
անցումը առկայ է նաև սումերական n սկզբածային ունեցող որոշ
բառերի ակկադական-սեմական օրինակներում․ օրինակ՝ սումեր․
Enim («երկինք») = ակկադ․ Šamu («երկինք») ⁶⁷, որից արար․ 𐎎
sama' («երկինք»), սումեր․ mun («անուն») = ակկադ․ Šumu
(«անուն») ⁶⁸, սումեր․ Anir («հոր») = ակկադ․ šihru («հոր») ⁶⁹,
սումեր․ em, en («բարձրանալ») = ակկադ․ âsû («բարձրանալ») ⁷⁰
եւայլն։ Յետոյ՝ արարական 𐎎 qamar բառը սեմական չէ, արար-
ները զերէին Sin անունը, զա, ինչպէս ստացինք, պահուել է 𐎎 sinn
(= տարիք) եւ sana «տարի» բառում։

⁶⁷ S. Langdon, Պշուած գիրքը, էջ 213։

⁶⁸ Նոյն տեղում, էջ 229։

⁶⁹ Նոյն տեղում, էջ 203։

⁷⁰ Նոյն տեղում, էջ 212։

Ամփոփելով վերև բերուածները, պիտի տեսնք, որ անկասկած Տumer-Տinar անունը առաջ է եկել սումերական լուսնի աստուած Nannar անունից, կամ այլ խօսքով՝ Sumer և Nannar նոյն անունն են:

Եւ այսպէս՝ ուրեմն Samiram-ը՝ Sumerim-ը՝ (Sumer-ը) լուսնի աստուածութիւն է, ճիշդ է, որ սումերական Nannar-ը արական աստուածութիւն է, բայց Արա-Շամիրամ առասպելը յօրինողները մօտ լուսինն իդական է, մանաւանդ որ Տumerim-ը Հիւսիսային Միջագետքում իդականացած է-at մասնիկով՝ Տammuramat, եւ յետոյ նաեւ is մասնիկով եւ դարձել Samiramis: Սրանից միանգամից հասկանալի է դառնում առասպելի կազմութեան ամբողջ դադարաբախօտութիւնը որպէս արեւ-լուսին սիրավէպ:

Մեր յայտնաբերած այս Շամիրամ-Արա կապակցութիւնը փաստում է հենց Մին-ու-արդ-ի անունով, որը, ինչպէս ցոյց ենք տուել (նման Նու-արդ եւ Սիեւ-արդի անունները), նշանակում է Sin - Ardi «լուսինն արեւի», կամ արեւի սիրելի լուսինը: Այստեղ էլ ուրեմն Sin-ը, որ հենց Nannar-ն է, հանդէս է գալիս որպէս իգական: Նրա արեւի (Արդի) հետ կապը փաստում է, որ Շամիրամը (Մին-արդի = Շամիրամ-Արա = լուսին-արեւ) լուսնի աստուած Nannar-ն է: Այս էլ հետեւապէս մի յաւելեալ փաստ է, որ Շամիրամը Տumerim (Տumer) է, եւ Sumer-ն էլ՝ Nannar:

Այլշանն իր «Հին հաւասք Հայոց» աշխատութեան մէջ, ինչպէս նշել ենք, բերում է այս հարցի համար մի շատ կարեւոր տեղեկութիւն. նա գրում է. «...Իտալ նոր հեղինակ մի, Պիւթագորասի ուղեւորութեան վրայասանական պատմիչ, երգել տայ քաղզէացուց. «Ով լուսին, բնակիչք աշխարհին Հայոց՝ որ մեր հին նախահարքն էին, նուիրեցին քեզի լեռ մի եւ պաշտօն, եւ կու պարծին քու անուամբ կոչուելու⁷¹»: Յայտնի չէ, թէ Պիւթագորասի ուղեւորութեան վրայասանական պատմիչը ո՞րտեղից է քաղել այս տեղեկութիւնը, սակայն կասկած չկայ, որ այն խոր անցեալից եկող աւանդական դոհարներից է, որն անաղարտ պահել է պատմական կարեւոր յիշողութիւններ: Յայտնի է արդէն, ինչպէս նշել ենք նաեւ վերեւում՝ սումերահայ կապերի մասին մեր ուսումնասիրութեան մէջ, որ սումերները նախկին բնակավայրը եղել է Հայկական լեռնաշխարհը: Այժմ

էլ ցոյց ենք տալիս, որ Սումեր անունն առաջ է եկել լուսնի աստուած Nannar անունից, այլ խօսքով՝ սումերները կոչուած են լուսին Sumer -Nannar), եւ ահա Պիւթագորասեան այս վկայութիւնը դալիս է մի անգամ եւս փաստելու այս թաքուն մնացած իրողութեան ճշդութիւնը, որ Հայոց աշխարհի լուսին կոչուած բնակիչները նախահարքն էին քաղզէացիների եւ նրանք անգամ պարծենում էին լուսին կոչուելու: (Քաղզէացիները այս աւանդութիւնը ժառանգել են սումերներից): Ուստի կասկած չի կարող լինել, որ Շումեր անունը հենց Nannar անունն փոփոխակն է:

Այսպէս ուրեմն՝ Միջագետքի Շամիրամը (լուսինը) սիրում է Հայաստանի Արային (արեւին) եւ նրանից մերժուելով իր անհամար հետեւորդ զինուորներով (ասաղերով) արշաւում է նրա վրայ, բայց երբ յայտնուած են Շամիրամն ու զինուորները (լուսինն ու աստղերը)՝ մեռնում է Արան (մայր է մտնում արեւը) եւ լուսին Շամիրամին չի յաջողում հանդիպել նրա հետ նրա կենդանութեան (երկնքում գտնուած) ժամանակ:

Երկնային մարմինների շարժումների վրայ հիմնուած այս զեղեցիկ սիրավէպն ու ողբերգութիւնը ստեղծուած են ժողովրդի կողմից պատմական իրական դէպքերի որպէս առասպելաբանական այլափոխութիւն եւ դրանք դարերով փոխանցուել են սերնդից սերունդ: Ի հարկէ այս առասպելը չի ծագել առանց պատմական հիմքի. դրա մասին տես Ձ գլխում Մարդուրի Ա եւ Իշպուիմի հատուածը:

Անկասկած, պատմելով Շամիրամի տարփանքի մասին դէպի Արան՝ առասպելը նշում է հզօրացած Միջագետքի ազահ ցանկութիւնները հիւսիսի հարուստ լեռնաշխարհի նկատմամբ: Արան մերժում է Շամիրամի (Միջագետքի լուսնի) լիբր առաջարկը՝ նախընտրելով հարազատ Նուարդի (Հայկական լուսնի) սէրը. սա էլ ի հարկէ արտացոլում է Արայի ժողովրդի պատասխարութիւնն ու օտարի տիրապետութեան չհանդուրժելով պայքարի դիմելը: Թէեւ Արան մեռնում է յանուն պատուի եւ հայրենիքի մղուած անհաւասար կրուում, սակայն նա նորից է կանգնում (ծագում-յարութիւն առնում), սիմվոլիզացնելով անմահութիւնն իր ժողովրդի:

5.— ԱՐԱՆ ԱՐՄԷՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՍՏՈՒԱԾՆ Է

Մենք արդէն խօսել ենք այն մասին, որ Արան, որպէս մի հին եւ մեծ աստուածութիւն, ծնուել ու զարգացել է իր փոքրասիական

71) Ղ. Ալիշան, «Հին հաւասք Հայոց», էջ 101, ծան. 1:

օրրանում՝ ճշգրտե՛ն ասած՝ Փոքր-Ասիայի արեւելեան շրջանների եւ հայկական լեռնաշխարհի տերիտորիաների վրայ:

Այս ուղղութեամբ կատարած մեր երկարատեւ հետազոտութիւնները մեզ բերել են այն հաստատ համոզման, որ Արան հանդիսացել է ոչ թէ միայն շատ լայն տարածուած մի հին աստուածութիւն, այլ եղել է հենց արմէնների ազգային գլխաւոր աստուածութիւնը կանխագոյն ժամանակներից: Այս մասին դեռ կը խօսենք, բայց այստեղ չենք կարող շնչել, որ մեծահմուտ Հ. Ա. Մատիկեանն իր աշխատութիւններում զրպոյցնել ասլիս է այս հանգամանքը:

Մատիկեանն այս մասին գրում է. «Արա Գեղեցիկն ուսումնասիրել կը նշանակէ հայ ազգի ծագման մթին դարերը թեւակոխել եւ քննել⁷²»: «Վահագնը նկատելու է օտարմուտ աստուած մը, որ բնիկ ազգային աստուծոյ մը տեղը բռնած է: Այսօր կը միտիմ այս ազգային աստուածը Արա Գեղեցիկը համարել եւ այս նոյնացումը երեւակայութիւն չէ, այլ արդիւնք համեմատական քննութեան»⁷³:

Ինչպէս յիշեցինք վերեւում՝ Ն. Աղոնցը նոյնպէս գտնում էր, որ Վահագնը գրաւել է «հարազատ» «հայկական աստուածութիւն» եղող Արայի տեղը: Իսկ Վահագնը, ինչպէս յայտնի է, հայերի շատ սիրելի ազգային աստուածն է դարձել, ի հարկէ շնորհիւ իր ստացած Ժառանգութեան, անգամ Հայկի նման, քրիստոնէութիւնից յետոյ, յիշուել է որպէս հայկական նահապետ: Վահագնի գլխաւոր մեհեանը գտնուում էր հենց Տարօնում, հայկական տրադիցիաների (ինչպէս ցոյց կը տանք յետոյ) կենտրոնում՝ Աշտիշատ անունով, իսկ Աշտիշատ անունը կազմուած է Աշտի եւ շատ մասերից, որի առաջին Աշտի- մասը առաջ Արաի ← Արգի (Արա) էր⁷⁴, ինչպէս Ուրարտու անունը Գարեհի՛ Բեհիտունեան ժայռի բարեխական տեքստում կոչուել է Ուր-աշատ, իսկ -շատ մասը, ինչպէս յայտնի է, մի շարք տեղանունների վերջածանց է հանդիսանում, ինչպէս Երուանդաշատ, Արտաշատ, Զարիշատ եւ այլն:

Մենք վերեւում յիշեցինք, որ Sayce-ը ասում է, թէ «... Արա-ն հայկական անունն էր արեւ-աստծոյ»: Սա արդէն նշանա-

72) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 4:

73) Նոյն տեղում, էջ 237:

74) Ա. Ղարիբեանի գրքում («Հայ բարբառագիտութիւն», Երևան, 1953, էջ

132) ցոյց է տրուում որ > չ անցումը: Այս մասին դեռ մանրամասն կը խօսենք:

կում է, որ Սէյսը արեւի աստուած Արային համարում էր հայկական:

Հեռաւոր Պլատոնն իր «Պետութիւն» աշխատութեան վերջին գլխում ասում է, թէ Էր-ը (Ara-ն) «Armenios-ի որդին» էր: Պլատոնն այս վկայութիւնը բերում է հակառակ այն բանի, որ նրա մօտ Էր-ի հետ կապուած դէպքերը տեղի են ունենում Կիլիկիայից արեւմուտք գտնուող հեռաւոր Պամփիլիայում: Այդպիսի հեռաւոր ժամանակներում օտար մասնաւորի բերած այս վկայութիւնը մենք անվիճելի եւ զօրաւոր ապացոյց ենք համարում, որ Արան արմէնների հարազատ աստուածութիւնն էր:

Արա Գեղեցիկ - Ծամիրամ առասպելը նոյնպիսի վկայութիւն է պարունակում: Վաւաշտ Ծամիրամը մերժուելով Արայից, մեծ ուժերով դալիս է Հայաստան՝ Արայի դէմ կռուելու կամ նրան ենթարկելու իր ցանկութիւններին: Առասպելները չեն յօրինում առանց պատմական հիմքի: Ծամիրամն ինչո՞ւ Արային դանելու համար չի գնում այլ երկիր, ինչո՞ւ նա դալիս է Հայաստան: Պարզ է, որ Արան իշխում էր Հայաստանում, պատկանում էր Հայաստանին: Եթէ առարկուի, թէ Ծամիրամի՝ Արայի համար Հայաստան դալու պատճառը պիտի փնտուել նրանում, որ առասպելը Հայաստանում էր յօրինուել, ապա դժուար թէ նոյն առարկութիւնն ոյժ ունենայ նոյն նիւթի նինոսեան զրոյցի վերաբերմամբ, որին մենք յիշեցինք վերեւում՝ բերելով Ն. Աղոնցից: Ըստ այդ զրոյցի, որը կազմուած է Հայաստանից դուրս եւ մեր առասպելից անկախ, նինոսը իմանալով, որ իր սիրած կինը սիրում է Արային, խանդից վառուած մեծ ոյժերով արշաւում է Հայաստան՝ հարուածելու համար Արային: Արեւի պէս պարզ է, որ Արան Հայաստանին է պատկանում, որ նրա բուն տեղը Հայաստանում է, ուստի նա հարազատ է Հայաստանին՝ հայերին, նա հայերի հարազատ աստուածն է:

Այսպիսի հարազատ ազգային մեծ աստուածութիւնը, որ ունեցել է իր ժողովրդի մէջ պաշտամունքի երկարատեւ շրջան, հակառակ հազարաւոր տարիների ամէն ինչ աւելող ու ջնջող վերիվայրումների եւ մէկը միւսի տեղը գրաւող աստուածների գործած աւերների, հակառակ հայ ժողովրդի բազմադարեան կեանքում տեղի ունեցած քաղաքական եւ լեզուա-մշակութային այլ զարգացումների, չէր կարող ճանաչելի հեռեր թողած չլինել տակաւին գոյատեւող արմէն ժողովրդի հաւասարիքների ու լեզուի մէջ, նրանց ապրած շրջանների աշխարհազրական անունների մէջ: Մենք ի հարկէ մտադրութիւն չու-

նենք, եւ մեր հնարաւորութիւնից դուրս է հետադասել այդ բոլորը, բայց անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել մի քանի շատ յատկանշական բառեր եւ անուններ, որոնք, մեր կարծիքով, հետաքրքրական տուեալներ են պարունակում մեր քննարկած հարցի համար:

Նրանցից մէկն է առաւօտ բառը: Մենք դանձում ենք, որ առաւօտը (առ-աւօտ) բարդ բառ է՝ կազմուած առ եւ աւօտ բառերի միացումով: Առաջին առ մասը մեր Ար(ա) աստուածն է իր արեւ նշանակութեամբ, իսկ աւօտ մասը նշանակում է ժամանակ: Աճառեանն իր Արմատական բառարանում աւօտ բառի համար տալիս է հետեւեալ բացատրութիւնը. «Այս բառից են կազմուած անշուշտ շաղաւօտ «զիշերուայ ժամի շորը՝ ըստ արեւելեան ժամահաշուի» եւ կամաւօտ «զիշերուայ ժամի հինգը»: — Ըստ իս աւօտ նշանակում է «ժամանակ»: Հետեւաբար առ-աւօտ նշանակում է Ար(ա) աստուած՝ արեւի (եկած) ժամանակը: Այս եզրակացութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի մեր նրբի համար: Նախ մի անգամ եւս եւ անտարկեյիօրէն փաստում է Ար(ա)-ի արեւի աստուած լինելը, երկրորդ՝ որպէս բազազրիչ մաս կազմելով հայկական լեզուին պատկանող մի հասարակ բառ-անուն, որը մարդկային հասարակութեան լեզուի տեսակէտով իր հիմնական պրիմիտիւ հասկացողութեամբ նախնական փոքրաքանակ բառերից մէկն է, ցոյց է տալիս, թէ արեւի Ար աստուածը ինչպիսի խոր հնութիւնից է գալիս (այժմ մոռացուած առաւօտ-ի բազազրիչ մասերի նշանակութիւնը) եւ թէ որքան հայկական է արեւի Ար(ա) անունումը:

Այստեղ ուզում ենք բերել նաեւ յառնել (յարութիւն) բառը: Արդէն յիշել էինք, որ Ղափանցեանն այս բառի մէջ տեսնում է «մաքուր ար» արմատը, մեր Ար(ա) աստուածը, եւ թէեւ նա դրա նշանակութիւնը տեսնում էր բուսականութեան զարթօնքի մէջ, սակայն պիտի այն կապել արեւի ծագելու եւ բարձրանալու երեւոյթի հետ (յառ-նել «փիւր բարձրանալ, արեւի պէս բարձրանալ, արեւանալ»:

Արեւապաշտութիւնը ի հարկէ յատուկ չէ միայն հայերին ու Հայաստանին: Արեւը լուսաւորում ու ջերմացնում է երկրագնդի բոլոր մարդկանց, ուստի բնական է, որ նրա պաշտամունքը գրեթէ համամարդկային երեւոյթ լինի, սակայն եւ այնպէս եղել են ցեղեր, որոնք չեն պաշտել արեւը, կամ նրա պաշտամունքը, այլ աստուածների կողքին, ունեցել է երկրորդական կամ աւելի նուազ ոյժ, իսկ եղել են հին ցեղեր, որոնց մօտ արեւի պաշտամունքն ունեցել է ազգային մեծ եւ առաջնակարգ նշանակութիւն: Այդպիսին են եղել մեր

նախնիները, որոնք Ար(ա) անուամբ արեւն են պաշտել հազարաւոր տարիներ, որի ընթացքում ձեւաւորուել եւ զարգացել է մեր ցեղի հոգեւոր մշակոյթը եւ հեշտ չի եղել նրանց տեղը դիժնել այլ աստուածներին. նրանցից որոշ յարատեւող տարբեր, որպէս «աղանդաւորներ» երկար ժամանակ զիմազրել են քրիստոնէութեան ահեղ եւ համայնակուել ալիքի դէմ եւ շարունակել են կոչուել «արեւորդիք», որոնց՝ մինչեւ ուշ միջնադար դոյութեան մասին հաւաստի տեղեկութիւններ են հասել մեզ: Լէօն ասում է, թէ «Արեւ աստուածն պաշտողներն իրենց անուանում էին արեւ-որդի: Այս անունը պահուում էր Հայաստանի սահմաններում դեռ ժ.թ. դարում (Ք. Յ.): Հաւանական է, որ հնագոյն հայկական պաշտամունքի անունն էլ այդ լինի եղած»⁷⁵: Իսկ Ալիշանը գրում է. «...Արեւաշտութիւնն քան զայլ հաւատո՝ կերպով մի աւելի երկար եւ խոր տպաւորում է յազգային մեր, եւ այլիւ այլ ժամանակ երիւցներ են Արեւորդիք... ԺԱ դարու կիսում Գր. Մագիստրոս՝ այս անուամբ յիշէ զանոնք... իր Շնորհալի շառաւիղ Ս. Ներսէս՝ Սամոստիոյ կաղմանց արեւորդեաց հաւար յայտնապէս կ'ըսէ քէ հայոց սերունդք են»⁷⁶:

Միւս յատկանշական բառը՝ հայկական տոմարի Արաց ամսանունն է: Գր. Ղափանցեանը համաձայն է Ա. Մատիկեանի հետ, որը Արաց-ի մէջ տեսնում է Արա աստուածանունը եւ նրանով հասկանում «Արայի օրեր»: Ղափանցեանը գրում է. «Հայոց Արաց ամիսը, ըստ քաղաքական տարւոյն, համընկնում է Փետրուար-Մարտին, եթէ Նաւասարդը Օգոստոսին զնենք: Կրօնական տոմարի հաշուով Արացն ընկնում է Օգոստոս-Սեպտեմբերի միջոցին (Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ» էջ 313): «Երկու պարագային ալ, — ինչպէս Ա. Մատիկեանն է ասում, — շատ յարմար աստուած էր, որ կը մեռնի եւ զարձեալ յարութիւն կ'առնու: Թէ Քաղոց, որ հինգերորդ ամիսն է եւ թէ անոր յաջորդը՝ Արաց քերականական միեւնոյն օրէնքով կազմուած են. առաջինը կը նշանակէ հունձքի օրեր, եթէ ի հարկէ քաղ արու այժմ մաստով չէ առնուած (Ալիշան, Հին հաւատք», էջ 141), իսկ Արաց պիտի նշանակէ «Արայի օրեր» (ibid. 313)⁷⁷:

75) Լէօ, «Հայոց պատմութիւն», Ա. հատ. Երեւան, 1966, էջ 270:

76) Լ. Ղ. Ալիշան, «Հին հաւատք հայոց», Վեներտիկ, 1895, էջ 91:

77) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկ պաշտամունքը», էջ 74: Ղափանցեանն այս էջում ** ծանօթութեան տակ աւելացնում է հետեւեալը. «Արաց մեր աստուայ արմատը ara-ից առի է ման Ք. Պատկանեանը (Լ. Աճառեան, Արմ. բառ. էջ 625): Մատնանում է Ա. Մատիկեանը (ibid. ծան. 1):»:

Ի հարկէ կասկած չկայ, որ Արաց ամսուայ մէջ նստած է մեր Ար(ա)ն, բայց ճիշդ չէ, երբ Արաց եւ Քաղոց ամսանունների ստուգարանութեան համար ելակէտ են վերցնում այդ ամսանունների մեր նոր ժամանակների արեգակնային կայուն տոմարում գրաւած տեղը եւ դրա համար ընդունում են, որ Քաղոցը նշանակում է «Հունձքի օրեր» եւ հաշուելով, որ Արացը ընկնում է Փետրուար-Մարտին կամ Օգոստոս-Սեպտեմբերին, գտնում են, որ դա յարմար է մեռնող ու յարութիւն առնող աստծուն, այսինքն՝ բուսականութեան-գարնան աստծուն:

Մինչդեռ մեզ յայտնի է, որ հեթանոսական հին օրերին (մեր ամսանունների կիրարկման սկզբի օրերին) հայկական տոմարը եղել է շարժական, ամիսները տարուայ միշտ նոյն եղանակին չեն հանդիպել: Հայկական տոմարի շարժական լինելու մասին Ա. Ա. Օղարաշեանը բերում է կոնկրետ եւ կենդանի վկայութիւններ⁷⁸: Հայկական հին շարժական տոմարը կայունացնելու համար հին 12 ամիսներին հնդօրեայ փոքր Աւելեաց ամիսը կցելը կատարուել է աւելի ուշ ժամանակներին, դրա համար ապացոյց է հենց ինքը Աւելեաց անունը, որի նշանակութիւնը ցոյց է տալիս, որ յետոյ է աւելացուել: Ուստի միանգամայն պարզ է, որ մեր տոմարը նախապէս եղել է շարժական: Այն շարժական է եղել (թէեւ դանդաղ) անգամ Աւելեաց ամիսն աւելացնելուց յետոյ մինչեւ 1084 թուականը, երբ հայ գիտնական Յովհաննէս Սարկաւազը տոմարի կայունացման համար մտցրել է նահանջ տարուայ կիրառութիւնը⁷⁸, եւ այդպիսով Նաւասարդ ամիսը (առաջին ամիսը) հաստատուել է Օգոստոս 11-ին:

Միանգամայն պարզ է, որ հնում հայկական տոմարը եղել է շարժական, ուստի ճիշդ չէ մեր տոմարի ամսանունների նշանակութիւնը փնտել եղանակների հետ կապուած հանդամանքներում, որովհետեւ նրանք նախապէս եղանակների հետ կապ չեն ունեցել, եւ հանդիպել են տարուայ տարբեր եղանակներին, այնպէս որ, երբ հայկական տոմարը կայունացուեց, հաւանաբար մոռացուել էր ամսանունների ներքին իմաստը, ուստի Արացը դնել կայուն տոմարի Փետրուար-Մարտին կամ Օգոստոս-Սեպտեմբերին եւ ասել, որ դա յարմար է մեռնող ու յարութիւն առնող (բուսականութեան-գարնան) աստծուն՝ միանգամայն անիմաստ է:

⁷⁸) Ա. Ա. Օղարաշեան, «Հայ ժողովրդական հաւատալիքների մի քանի վերապրուկների մասին», Ղ. Գիտ. Ակ. «Տեղեկագիր» 1962. 1 (Յուլուար) էջ 65-66:

Տոմարի շարժականութեան պատճառով նոյնպէս Քաղոցը մերթ հանդիպում էր տարուայ այնպիսի եղանակներին, երբ բերքահաւաքի կամ հունձքի մասին մտածելը ծիծաղելի կը լինէր: Քաղ բառի իմաստի համար տե՛ս Զ վրիտում Վահագնի մասին բերուած մտքը:

Հայկական տոմարի տասներկու ամիսների անուններն են 1—Նաւասարդ («Նոր տարի»), 2—Հոռի, 3—Սահմի, 4—Տրէ, 5—Քաղոց, 6—Արաց, 7—Մեհեկան, 8—Արեդ, 9—Ահեկան, 10—Մարերի, 11—Մարգաց, 12—Հրոտից:

Մենք գտնում ենք, որ, բացի Նաւասարդից (Նաւա-սարդ բառը նշանակում է Նոր Տարի. արդէն (ս)արդ նշանակում է արեւ եւ Նաւա-սարդն էլ «նոր-արեւ, այսինքն՝ նոր տարի»), մեր ամսանունները ներկայացնում են հեթանոսական ժամանակների աստուածների եւ ցեղերի անուններ: Նրանք նշուած են այն պատճառով, որ նրանց տոնակատարութեան օրերն ընկնում էին համապատասխան ամիսներին: Սումերները իրենց 8-րդ ամսուայ համար ասում են *iti ezen d Bau*, որը նշանակում է «Bau աստծոյ տօնի ամիս»⁷⁹: Ոմանք Մարգաց ամսանունն էլ «մարդեր կազելու» իմաստ են վերադրում. նման բացատրութիւնները ժողովրդական ստուգարանութիւն են. մինչեւ հերթը մարդերին դալը՝ կարող էին ամսանուններ նշանակել առուններին, դետերին, ցանքին, կալերին, անտառներին, ոչխար խուզելուն եւայլն: Մարգացը նոյնպէս պիտի ցեղանուն լինի. այն յիշեցնում է Դարեհի նշած Մարգիանա երկրի կամ ցեղի անունը (սեպաղիբը կարդացուած է Մարգուս). Բեհիստունի արձանագրութեան մէջ «Դարեհ թագաւորը կ'ըսէ, երբ ես Բարելոնի մէջ կը գտնուէի, հետեւեալ նահանգներն ապստամբեցան ինձի դէմ. Պարսկաստան, Շոշաստան, Մարաստան, Ասորեստան, Հայաստան, Պարթևաստան, Մարգիանա (Մարգուս), Սաստագիւտիա, Սագաստան»⁸⁰: Մարգաց ամսանունը համեմատուած ենք նաև Դարեհի յիշած մարգագանաչ ամսանուն հետ⁸¹: Մարգաց-ի յոգնակի սեռական վերջուորութիւնը առաջ եկած պիտի լինի ազգուելով իրենից առաջ եկող, յոգնակի սեռական վերջուորութիւն ունեցող Արաց ամսանունից:

⁷⁹) S. Langdon, Պշուած գիրքը, էջ 53:


⁸⁰) Կ. Բաւսման, «Դարեհի արշաւանքի ի հայտ», Բամասէր, 1899, Պարիս, հատ. Ա., էջ 26:

⁸¹) Տես մեր այս գիրքի մէջ՝ Գլուխ Զ. 2 — Բ. «Ետիդի».— կամ British Museum, Պշուած գիրքը, էջ 56—59:

կասկած չկայ, որ Արաց ամսանունը նոյնպէս ներկայացնում է ցեղանուն: Թէեւ նրա մէջ նստած է Ար-ը (Արան), բայց նրա յոդնակի սեռական հոլովածելը ցոյց է տալիս, որ այն նշանակում է ոչ թէ «Արաների» (մի բան, որ չէր կարող լինել), այլ «արերի (արմէններ)»: Արաց ամսանունը ցոյց է տալիս, որ այդ ամսուայ մէջ է ընկած եղել արերի ազգային տօնակատարութիւնը: Ի հարկէ սխալ չէին Ա. Մատիկեանն ու Ղափանցեանը, երբ Արաց-ը հասկանում էին «Արայի օրեր»: Այդ բացատրութիւնը հիմնականում ճիշդ է, որովհետեւ արերի տօնակատարութիւնները վերաբերում էին իրենց ազգային Ար (Արա) աստծուն, որով այդ տօնակատարութեան օրերը Արայի օրեր էին, բայց Արաց-ը իր յոգնակի սեռական հոլովածելով ուղղակի նշանակում է արերի (արմէնների): Արացը պիտի հասկանալ այնպէս, ինչպէս եթէ ասէինք մոկաց, սիւնեաց, վրաց եւայլն:

Մեր նիւթի համար նոյնպէս հետաքրքրական եւ յատկանշական է տյար (տեար < Տրար) բառը, որը խոր անցեալում մեր նախնիների իրենց Ար աստծոյ պաշտամունքի ուղղակի եւ սակայն մոռացուած վիաներից մէկն է հանդիսանում: Տիար (Տի-ար) կազմուած է նոյնպէս երկու բառերից: Առաջինը՝ տի նշանակում է «մեծ, վեհափառ, աստուած», իսկ երկրորդը՝ ար ներկայացնում է մեր Ար(ա) ազգային աստուածը. հետեւաբար Տի-Ար նշանակում է Մեծն Ար, Վեհափառ Ար, կամ աստուածային Ար, աստուած Ար: Հ. Աճառեանը տեար-ի մասին Արմատական բառարանում գրում է հետեւեալը. «Մագում է տի-այր ձեւից, աւելի հինը տէ այր (հմմտ. միայն > մէն), որ կազմուած է տէ-եւ այր «մարդ» բառերից. առաջինը՝ նշանակում է անշուշտ «մեծ», դանում ենք նաեւ տի-կին (< տէ-կին) «մեծ կին» եւ տի-եղերք (< տէ-եղերք) «մեծ եղերք» բառերի մէջ. ծագումը անձանօթ»: Բառի տի մասի համար Աճառեանը բերում է նաեւ ուրիշների կարծիքը. «Patrubany յն. zeus, սանս. dyaus «աստուածային» եւն ձեւերից: ... Ադոնց տի կցում է դիք, deus եւն. բառերին համարելով նախ «աստուած» յետոյ «Տէր»: Karst, սումեր. tik «բարձր», didim «նուաճել», du «զազաթ», սումեր. tik «զազաթ, ճակատ, բարձրութիւն...»:

Միանգամայն պարզ է, որ այստեղ տի (կամ տէ) նշանակում է մեծութիւն-բարձրութիւն, աստուածային, աստուած, իսկ ար աներկրայօրէն ներկայացնում է մեր Ար(ա) աստուածը, այնպէս որ տի-Ար նշանակում է մեծութեան, բարձրութեան Ար, աստուածային

Ար, կամ աստուած Ար: Տի (կամ տէ) բառը այստեղ հանդէս է գալիս որպէս կոչում-տիտղոս, կարծես աւելի ճիշդը՝ որպէս դետերմինատիւ՝ աստուած նշանակութեամբ, ինչպէս սեպագրութեան մէջ աստուածների անունների առաջ գրուած  դետերմինատիւ:

Այնպէս որ տի-կին (կին՝ երեւի որպէս ծնող կամ բեղմնաւորութեան զիցուհի), որ ունի նոյն կազմութիւնը, պիտի նշանակի աստուածային կին կամ զիցուհի: Ի հարկէ բազում դարերի վերիվայրումների ազդեցութեամբ՝ տիար եւ տիկին կորցրել են իրենց նախնական նշանակութիւնը եւ դարձել են հասարակ անուն կամ առ առաւելն՝ յորջորջում, ինչպէս օրինակ՝ «Տիկինն Անահիտ», Հայոց թագուհիներն ու իշխանուհիները կոչուել են «Տիկինն Հայոց», իսկ մեր աստուածներին, թագաւորներին խօսք ուղղելիս ասում էին «Տէր-իմ», «Տիար-իմ»: Թէեւ հազարաւոր տարիներ են անցել այն օրերից, երբ մեր նախնիներն արտաքին անդիմադրելի ազդեցութիւններից մզուած՝ իրենց ազգային Ար աստծոյ տեղը զիջել են այլ աստուածների, սակայն Ար(ա)-ի հին մեծութեան մասին պատմող հեռքերը դեռ հնարաւոր է ճանաչել:

Այս գլուխը փակելուց առաջ ուզում ենք նշել եւ այն, որ, ի հարկէ, բնական կը լինէր սպասել, որ արմէնների բնակութեան հին վայրերում իրենց այս նշանաւոր ազգային Ար (Արա) աստծոյ անունով կոչուած լինէին որոշ շրջաններ, ականներ, դետեր, լեռներ եւ աշխարհազրական այլ տեղեր: Յիրաւի մենք հանդիպում ենք այդ երեւոյթին, եւ հանդիպում ենք այնպիսի տեղերում եւ այնպիսի քանակով ու ձեւով, որոնք մեր պատմութեան ինչ-ինչ հարցերի պարզաբանման համար բաւական մեծ կարեւորութիւն եւ հետաքրքրութիւն են ներկայացնում: Մենք դրանց մասին կը խօսենք յաջորդ գլուխներում, իրենց տեղերում:

ԱՐՄԷՆ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

1.— ԱՐՄԷՆ ԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Հայ ժողովրդի Արմէն ազգանունան ստուգարանութեամբ կամ ծագման հարցով զբաղուել են մի շարք հայ եւ օտար գիտնականներ, եւ Սարարոնից սկսած տարրեր ժամանակներում տարրեր կամ նման բացատրութիւններ են բերել, բայց զեռ ոչ մէկը չի տուել ընդհանուր հաւանութիւն գտնող սպառիչ եւ վերջնական լուծում, եւ արմէն անունը հիմնականում զեռ մնում է չբացատրուած :

Ընդհանրապէս ստուգարանութեան ուղղութեամբ կատարուած ուսումնասիրութիւնները իրենց հիմքում ունեցել են Արմ- մասը արմատական համարելու կամ համարելու գիծը :

Նրանք, որոնք անուան Արմ- մասը արմատական են համարել, անտեսել են տարրեր ժամանակների բեւեռագիր արձանագրութիւնների յիշած Arime, Urume, Erimena, Արամանեակ ձեւերի հնարաւոր հակասութիւնը այդ մտքի հետ, իսկ Արմ- մասի արմատական լինելը ժխտող բացատրութիւններն էլ (իրենց օրին) հետու լինելով պատմալեզուաբանական անհրաժեշտ ստույգ հիմնաւորումից՝ նոյնպէս չեն եղել համոզիչ, չեն գիմացել օրէ օր լոյս աշխարհ եկող պատմական նոր տուեալների ազդեցութեան :

Բերուած անսակէտներից արժէ այստեղ յիշել հետեւեալները .

1. Սարարոնը ասել է, թէ մեր երկիրը Արմենիա է կոչուում Թեաւլիայի Արմենիոն քաղաքից զնացող Արմենոսի անունով :

2. Մ. Խորենացին ասում է, թէ մեր երկիրը Արամի անունով կոչուել է Արմէն : Նա գրում է. «Արամայ բազում գործք քաջութեան

պատմին մարտիւք նահատակութեան, եւ ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմից, յորոյ անուն եւ ամենայն ազգք զաշխարհս մեր անուանեն, որպէս Յոյնք, Արմէն, եւ Պարսիկք եւ Ասորիք՝ Արմնիք»¹: Մ. Խորենացու այս տեսակէտը չի ընդունուել. առարկութիւնները չիմնուում են յատկապէս այն պատմական տուեալների վրայ, որ Արամը եղել է ուրարտացիների թագաւորը՝ «ոչ թէ Հայերի», եւ արմէնները յիշուել են նրանից առաջ:

3. ա) J. Darmesteter², Bochart³, Կ. Բասմաճեան⁴ եւ ուրիշներ գտնում են, որ Արմենիա (Ar-min) կազմուած է Արարատ եւ Միննի երկրների անունների միացումով, այսինքն՝ Ար(արատ) + Մին(նի) = Արմին: Darmesteter-ը ասում է, թէ երկու անունների այս միացութիւնը կատարուել է արհեստականօրէն պարսկական պետական-վարչական պաշտօնատան մէջ:

բ) Ոմանք (Bochart, Բասմաճեան⁵ եւ ուրիշներ) Ար-մին անունն առաջին մասը համարել են երբայերէն հար (=լեռ), երկրորդ մասը՝ Մին(նի), որով Արմին նշանակում է Միննի երկրի լեռ կամ լեռները:

գ) Կ. Ա. Ղէ Կարա իր մի յօդուածում⁶ Արմենիա (Ար-մին) անունը նոյնպէս բաժանելով երկու մասի, ասում է, թէ Միննի (Մին-իացիք) կամ Միննիի (Մաննացիք) առջեւ դնելով Կար (Kar) մասնիկը, որ խամիտերէն նշանակում է «տեղ» կամ «բնակարան»՝ ունենում ենք Կարմին-Կարմինիա, որի կոկորդային առաջին տառի անկումով՝ Արմին-Արմինիա:

ձ. Ելնելով Հայերէնի Հնդեւորոպական լեզու լինելուց, բերուել է նաեւ այն կարծիքը, թէ Ար-մին անունն առաջին մասը պիտի հասկանալ արի (=քաջ), իսկ երկրորդ մասը՝ man (=մարդ): Հայերէնում ման (=մարդ) բառը եղել եւ կորուել է, բայց պահուել է ման-

ուկ (=փոքր մարդ) բառում: Այնպէս որ Ար-մին նշանակում է «արի մարդ», կամ «արի մարդիկ»:

5. Մ. Մինասեանը իր մի յօդուածում⁸ ընդունում է Խորենացու տեսակէտը, որ Արմենիա ծագած է Արամ անունից, միաժամանակ տալիս է Արամ անունն ստուգարանութիւնը: Ըստ նրան, Արամը արմատական է, այլ բաղկացած է երկու բառերից՝ Ար եւ ամ (Ար-ամ) անուններից, եւ որտեղ Ամ կամ Ամա Մայր-աստուածուհին է, իսկ Ար, որ ներկայացնում է արեւը, նշանակում է «աչք», որով Ար-ամ նշանակում է «աչքը մայր-աստուածուհու»:

6. ա) Բ. Խալաթեանցը, ղեռ 1902 թուին, յայտնում է այն կարծիքը, թէ Արմենի կամ Արամենի երկրանունը «...բաղկացած պէտք է լինի (ուրարտական) նի մասնիկից եւ Արամէ (Ուրարտուի առաջին թագաւորի) անունից», այսինքն՝ Արամէ+նի = Արմէնի: Այս ստուգարանութիւնը տալուց յետոյ Խալաթեանցն աւելացնում է. «Այսպիսով Արամէ-նի կամ կրճատած՝ Արմէ-նի, անգամ Արմ-նի (Գարեհ. վ.) կարող էր սկզբում նշանակել Արամէ-ի հպատակները (եզ. սեռ.) եւ կամ Արամէ-ի սերունդը (յոզն. ուղ.)»:

բ) «Մարկուարտ հին պարսկական Armina, յունական Armenioi անունների արմատը համարում է Arm կամ Ar(i)m, Ar(u)m, որից եւ խաղական ini վերջաւորութեան օգնութեամբ կազմուել են վերոյիշեալ Arm-ina, Arm-eni-oi ձևերը»: «Այս մեկնարանութեամբ, շարունակում է Մարկուարտ, լոյս է սփռում նաեւ Հայաստանի հընադոյն մայրաքաղաք Արմաիր, ինչպէս նաեւ Հայ նահապետ Արամ անունների վրայ»¹⁰:

գ) Գոկա. պրոֆեսոր Բ. Պիտարովսկու կարծիքով Արմէնի կամ

1) Մ. Խորենացի, Ա—ժբ:

2) Journal Asiatique, Huitième série, Tome XVII, No. 1, 1891, Paris, p. 140-141:

3) Phaleg I, 3, էջ 20 (տե՛ս Կ. Ա. Ղէ Կարա, «Արմենիա անունն ստուգարանութիւնը եւ հայ ազգի ծագումը», «Բագմավէպ», 1899, էջ 575 - 576):

4) «Հայք Մ. Գրոց մէջ», «Բագմավէպ», 1899, էջ 63 - 64:

5) Նոյն տեղում:

6) «Արմենիա անունն ստուգարանութիւնը եւ հայ ազգի ծագումը», քարգմ. Թորոսեան, «Բագմավէպ», 1899, էջ 575:

7) Այս ստուգարանութիւնը գտել ենք արեւմտահայ մի հին պատմութեան գրքում, որի առաջին մի քանի էջերը դժբախտաբար պակասում էին, որտեղ պէտք է լինէին գրքի եւ հեղինակի անունները, հրատարակման վայրն ու բուկալանը: — Տես Միմոն Միմոնեանի «Հայոց Պատմութեան» գասագիրքը, Հին Շրջան, Ա. տարի, 1939, էջ 35-6: ՀՐԱՏ:

8) «Արմէն եւ հայ ազգանունները», «Հայրենիք ամսագիր», Նոյեմբեր, 1927, քիւ 1:

9) Բագրատ Խալաթեանց, «Մի կարծիք հայ նախաբանութեան ծագման մասին», «Բանասէր» 1902, քիւ 6:

10) Մ. Մինասեան, «Արմէն եւ հայ ազգանունները», «Հայրենիք ամսագիր», Նոյեմբեր, 1927, քիւ 1, էջ 94 - 95:

Արմինի կազմուած է Արմէ (երկիր, որ յիշուած է Արզիշտի որդի Սարգուրի արձանագրութեան մէջ) անուան վրայ ուրարտական նի վերջածանցի աւելացումով, որով Արմէ + նի = Արմէ-նի (կամ Արմինի, որովհետեւ «Արմէ անուան երկրորդ մասի սեպագիրը կարող է սալ թէ՛ մէ եւ թէ՛ մի վանկը») ¹¹ :

Բերուած այս ստուգարանութիւնները, ինչպէս երևում է, բաժանուած են հիմնականում երկու խմբի: Առաջին խմբին են պատկանում Ստրարոնը, Մ. Խորենացին, Բ. Խալաթեանցը, Մարկուարտը, Բ. Պիտրովսկին եւ ուրիշներ, որոնք Արմէ-նի (կամ Արմինի) անունը ամբողջութեամբ կամ նրա Արմ մասը համարել են արմատական, կամ (գոնէ) Արմ մասը չեն բաժանել երկու մասի. երկրորդ խմբին են պատկանում J. Darmesteter, Bochart, Կ. Բասմաճեան, Կ. Ա. Ղէ Կարա, Մ. Մինասեան եւ ուրիշներ, որոնք Արմէ-նի անուան Արմ մասը արմատական չեն ընդունել, այլ համարել են բաղկացած երկու (Ար-մին, Ար-ամ) բառերից:

Այժմ գիտական շրջանակներում, յենուելով հնագիտական եւ պատմա-լեզուաբանական յայտնագործութիւնների եւ հետազոտութիւնների վրայ, ընդունում են, որ Արմէ-նի անուան վերջին մասը խուրրի-ուրարտական նի վերջածանցն է, որ երևում է մի շարք հին տեղանունների վրայ (Միտանի, Գայաէնի, Ծուպանի, Ալզինի եւ այլն) եւ որը, ինչպէս մեր Բ մասնիկը (Հայք, Վիրք, Ծոփք, Աղձնիք) նշանակում է տուեալ անուան ցեղը կամ (յատկապէս) ցեղի բնակավայրը: Մենք կարծում ենք, որ այս ստուգարանութիւնը վերջնականապէս հիմնաւորուած պիտի համարել:

Բայց ինչ վերաբերում է Արմէ-նի անուան առաջին մասին՝ ապա պիտի տեսել, որ Ստրարոնի (Արմէ-նու), Խորենացու (Արամ), Խալաթեանցի (Արամէ) եւ նմանների կարծիքները անհրաժեշտ պատմա-գիտական հիմնաւորում չստանալով՝ չեն ընդունուել: Մարկուարտը եւ նմանները Arm կամ Ar(i)m մասը արմատական համարելով փակել են նրա ստուգարանման ճանապարհը: Միայն այն տեսակէտը (Արմէ), որի ներկայացուցիչն է այստեղ Բ. Պիտրովսկին, այս կէտում, ունի հնագիտական եւ պատմական հիմնաւորում, բայց նա էլ Արմէ երկրի անունը կա՛մ համարել է արմատական եւ կա՛մ ստուգարանութիւնը թողել է ապագային:

¹¹) Բ. Պիտրովսկի, «Հայ ժողովրդի ծագման հարցը», «Սովետական գրականութիւն եւ արուեստ», 1944, քիւ 12, էջ 78:

Ուստի Արմէն կամ Արմէնի անունն իր ամբողջութեամբ տա-կաւին չի բացատրուած, մնում է մութ:

2.— ԱՐՄԷՆ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Պատմա-հնագիտական հետազոտութիւնները աներկբայօրէն պարզել են, որ կրօնը, նախապատմական ժամանակներից սկսած, շատ մեծ տեղ է զբաղեցրել մարդկանց կեանքի բոլոր բնագաւառներում: Բնութեան դեռ անբացատրելի երևոյթների նկատմամբ չին մարդկանց ունեցած հաւատալիքներն ու նախապաշարմունքները ամբողջութեամբ կլանել են նրանց ողջ կեանքը, ճակատագրական ուղղութիւն տուել նրանց ամբողջ գործունէութեան ու նպատակներին:

Այդ ժամանակներին ամէն մի ցեղ, անգամ ամէն մի տոհմ ու զերգաստան ունեցել է իր տոտեմը՝ պաշտամունքի առարկան, իր աստուածը: Տոհմի եւ ապա ցեղի մեծացումով մեծացել է նաեւ ցեղի աստծոյ նշանակութիւնն ու զօրութիւնը, իսկ ցեղերի միաւորման ժամանակ, կամ մի ցեղի կողմից միւսների նուաճման դէպքում, հզորագոյն ցեղի աստուածութիւնը դարձել է ընդհանուրի աստուածութիւնը՝ ամէն մէկը տեղում պահելով հանգրձ իրը:

Բեւեռագիր արձանագրութիւններից իմանում ենք, որ միջցեղային կոիւները, ապա եւ միջպետական պատերազմները մղուել են կռուող կողմերի աստուածների համար, եւ աստուածների անունով, իսկ ցեղապետն ու թագաւորը ունեցել են երկրորդական նշանակութիւն՝ կատարելով միայն ցեղի կամ պետութեան աստծոյ կամքը (օրինակ՝ Տիգլաթ-Պալասարը գրում է. «որ ես պէտք է քայլեմ հռչակուած հզօրութեամբը Աշուր-ի՝ իմ տիրոջ, Հարիա երկրի եւ Բարիսի-ի լայնափիւռ գօրքերի դէմ բարձր բլուրների (վրայով), որտեղ ոչ մի թագաւոր չէր մտել, Աշուրը՝ իմ տէրը հրամայեց ¹²»):

Ուստի պարզ է, որ տոհմերը, ցեղերն ու պետութիւնները, ընդհանրապէս, իրարից պիտի զանազանուէին իրենց աստուածների անուններով: Եւ իսկապէս էլ պատմական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ մի շարք ցեղերի եւ պետութիւնների անունները ծագել են նրանց աստուածների անուններից: Այդպէս են ծագել նաեւ շատ բնակավայրերի եւ երկրների անունները:

¹²) D. Luckenbill, «Ancient Records of Assyria and Babylonia», Chicago, 1926,

Միջնդաշին կռիւների պատճառով ցեղը ստիպուած ամրացրել է իր բնակավայրի կենտրոնում մի վայր, որտեղ ազահովութեան մէջ պահել է ցեղի նուիրական տոտեմը, կամ հաստատել ցեղի աստուծոյ դահը կամ տաճարը, որից այդ վայրն ստացել է իր անունը. ապա ցեղի մեծացեալներ ու ծառայեալներ ամրացուած այդ բնակավայրը զարձակել է անտեսական ու վարչական շրջկենտրոն եւ ապա մայրաքաղաք:

Բեւեռազիր արձանագրութիւնների մէջ յաճախ կարդում ենք, որ այս կամ այն թագաւորը յաղթել է այսինչ քաղաքի-երկրի թագաւորին. այդ բանը տեսանք Նարամ-Սինի խեթական արձանագրութեան մէջ: Սա պարզօրէն ցոյց է տալիս, որ ցեղի կամ պետութեան ընդհանուր երկիրը կարող է իր անունը ստացած լինել իր կենտրոնական կամ արքայական քաղաքի (մայրաքաղաքի) անունից, որը շատ անգամ կրել է տուեալ ցեղի գլխաւոր աստուծոյ անունը:

Այդպէս են ծագել, օրինակ՝ Ասորեստանի եւ Հոմի մեծ կայսրութիւնների անունները, որոնք նախապէս եղել են անունները ցեղերի կենտրոնական քաղաքների՝ Ասուրի եւ Հոմի, որտեղ հաստատուած են եղել իրենց պաշտամունքի առարկայ Աշուրն ու Հոմուրսը:

Գոկտ. Հ. Ա. Մատիկեանը իր «Արա Գեղեցիկ» աշխատութեան մէջ գրում է. «Ամէն ազգային պատմութիւն դիցարանական աշխարհահայեցքով մը սկսած է...: Այս կէտը հայ պատմաբանի մը մտադրութեան էրբեք վրիպելու չէ. մեր պատմութեան Գորգեան հանգոյցը հոս է¹³»:

G. Contenau-ն ասում է, թէ խոր անցեալում տարբերութիւն չէին գնում երկրի եւ նրա աստուծոյ միջեւ. («la haute antiquité ne faisait pas de différence entre un pays et ses dieux»)¹⁴:

Աչքի առաջ ունենալով վերելում բերուածները, կարելի է սպասել, որ առաջաւոր Ասիայի հնագոյն ժողովուրդներից եւ ցեղային միութիւններից մէկը ներկայացնող Արմէն (եւ որով Արմեհիա) անունը առաջ եկած է այս անունը կրող ցեղի կանխագոյն գլխաւոր աստուծոյ անունից:

Մենք տեսանք, որ ազգային այդ գլխաւոր աստուծոյ անունը եղել է Ար կամ Արա:

¹³ Գոկտ. Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 1 - 2:

¹⁴ Dr. G. Contenau, «La Civilisation des Hittites et des Hurrites du Mitanni», Paris, 1948, p. 75:

Տեսանք նաեւ, որ Արմէն կամ Արմեհիա անունն կանխագոյն ձեւը եղել է Արմանու կամ Արմանի:

Մենք գտնում ենք, որ Արմանի անունն ծագումը պայմանաւորուած է եղել այս աշխատութեան նախորդ գլուխներում մեր նկարագրած այն աշխարհագրական ու լեզուա-կրօնական միջավայրով, որտեղ նախնազարեան համայնական հասարակութեան տոհմաէթնիկական տարրերից բիւրեղացել ու առաջ է եկել արմանի ցեղը: Այդ միջավայրը, ինչպէս ցոյց ենք տուել, եղել է Հայկական լեռնաշխարհում սուժերաճայ մշակոյթի եւ սուժերաճայ լեզուի կամ լեզուների միջավայր, ինչպէս նաեւ (յատկապէս արմէնների համար) Ար կամ Արա աստուծոյ պաշտամունքի միջավայր:

Հետեւորար գտնում ենք, որ Ար-մա-նի անունը բարդ բառ է, որի առաջին Ար բաղադրիչը հենց արմէնների ազգային արեւի (գըր-խաւոր) աստուած Ար-ն (Արա-ն) է (սուժերերէն ar և ara արդէն նշանակում են «ճառագայթել, լոյս տալ»՝ արեւի յատկանիշ¹⁵). անունն միջին մա բաղադրիչը սուժերերէն նշանակում է «ծնել, սերել, շինել¹⁶», որով Ար-մա նշանակում է «Արածին, Արի-սիրունը, Ար-որդի, արեւորդի»: Ար-մա-նի անունն նի վերջաւորութիւնը, ինչպէս ցոյց են տուել թաւաթեանցը, Մարիուարտը, Պիտարովսիին եւ ուրիշներ (եւ որն այժմ ընդունուած է պատմագիտութեան մէջ), մի շարք երկրանունների ու տեղանունների վերջնամասում երեւացող եւ Պուրբի-Ուրարտական կոչուած նի մասնիկն է (օրինակ՝ Դայանի, Ծուպանի, Ալդինինի եւայլն)՝ միայն այն տարբերութեամբ, որ այդ նի վերջաւորութիւնը Արմանի ցեղանունն ծագման ժամանակ ոչ Պուրբիական էր եւ ոչ էլ ուրարտական, այլ՝ սուժեր-հայկական յոգնակերտ նի մասնիկը, որին հետագայում փոխարինել ենք Բ յոգնակերտ մասնիկով (հմտ. Դայանի-Տայք, Ծուպանի-Ծուփք, Ալդինինի-Աղձնիք եւայլն). այդ նի յոգնակերտ մասնիկի մասին արդէն խօսեցինք «սուժերաճայ յարաբերութիւններ» (Բ) գլխում. հետեւաբար

¹⁵ P. A. Deimel, 1934 (reprinted in Austria, 1962), p. 17, այստեղ նա գրում է: I ar = (սկիպ.) NAMARU (գիր.) leuchten («լոյս տալ») vgl. ar. IV ara = NAMRU, glänzend («առագայթել, փայլել»), = Kādu, anzünden («լուսաւորել»):

¹⁶ Stephen Langdon, «A Sumerian Grammar and Chrestomathy», Paris, 1911, p. 227. այստեղ գրում է: 1, MA = Beget, build («սերել, շինել»): P. A. Deimel, *mt'u* I ma = Banù, *mt'u* V me = Banù, erzeugen («սերել»):

Ար-մա-նի նշանակում է «Արածիններ, Արորդիներ, արեւորդիներ»:

Այսպիսով՝ Ար-մա եւ Ար-մա-նի տերմինները ունեցել են հետեւեալ նշանակութիւնները.

ա) Ար-մա — «Արա-ծին, Արից սերուած, Ար-որդի, արեւորդի» (Համեմատել Անանունի՝ Հայկի համար բերած Յարեթածին բառը), իսկ Ար-մա-նի նշանակում է «Արածիններ»՝ Ար-ից (Արա-ից) ծնուածներ, Ար-ից սերուածներ, Արորդիներ («Արեւորդիներ»), Ար-ցեղ, հետեւաբար եւ Արորդիների բնակավայր, Ար ցեղի քաղաք կամ Ար ցեղի երկիր. ճիշդ այնպէս ինչպէս հայք, վիրք նշանակում են «հայեր, վրացիներ» եւ նաեւ «հայերի երկիր, վրացիների երկիր»:

բ) Ար-մա = «Արաչէն», այսինքն՝ Ար-ի շինած, Ար-ի քաղաք, ինչպէս Սորենացին յիշում է Հայկաչէն անունը, նա գրում է. «Շինէ [Հայկ] եւ դիւզ մի, եւ անուանէ յիւր անուն Հայկաչէն¹⁷»:

Մենք կարծում ենք, որ մա-ի այս երկու նշանակութիւնների մէջ անդրանկութիւնն ու աւագութիւնը պատկանում է առաջինին, այնպէս որ արմա-ն մեր Արմա-նի անուան մէջ պիտի աւելի ունենայ «Արածին» իմաստը, թէեւ այդ խոր անցեալում լեզուների աւելի պրիմիտիւ ստադիայում, մա-ն կարող էր ունենալ «սերել» եւ «շինել» նշանակութիւնները միասին (համտ. արար յ բն կամ յ իրն «որդի» ۞ բանա «շինել», եւ մեր ծիմ ու շիմ արմատները, որոնք դուցէ ծագումով կապ ունեն իրար հետ):

Հին ժամանակներում մարդիկ իրենց հօր (ծնողի) անունով էին ճանաչուում (ազգանուն չկար), դրա համար էլ թաղաւորներն արձանագրութիւնների մէջ միշտ իրենց անուան կողքին յիշում են իրենց հօր (ծնողի) անունը: Այդ սովորութիւնն ու միտքը կիրառուել է նաեւ ցեղերի նկատմամբ՝ նրանց համարելով իրենց աստուածների որդիները կամ սերունդը: Այդ սովորութեան համաձայն (հնդեւրոպական լեզու խօսող) մարդիկ իրենց անուան կողքին գրում են իրենց հօր անունը՝ նրան կցելով ծիմ բառը (հօր անուն + ծիմ). մենք ունենք, ինչպէս յիշեցինք, -ծիմ, -ազն եւ -գում վերջաւորութիւններով յորջորջումներ, օրինակ՝ Յարեթածիմ, արքայազն, արքայագում, Հայկազն եւ այլն. անդիւրացիներն ունեն — son վերջաւորութիւններով ձևեր, օրինակ՝ Johnson, Peterson եւ այլն, իսկ սեմական լեզու խօսող մարդիկ, -ծիմ կամ -արդի նշանակութիւնն ունեցող յ բն բառը

17) Խորենացի, Ա.—ժ:

բերում են հօր անունից առաջ, օրինակ՝ արարները ունեն علی بن Բն Ալի «Ալիի որդի», ۶۴ بن Բն Օմար «Օմարի որդի» («Օմարածին») եւ այլն: Հենց այսպէս՝ Ar-ma անուան -ma վերջաւորութիւնն էլ ունի -ծիմ, -ազն կամ -գում վերջածանցի իմաստ եւ դեր: Այս մա-ն համեմատել Փոքր Ասիայի Մա դիցուհու («ծին, ծնող՝ սերնդաբերութեան, պողպարեութեան դիցուհու») բովանդակութիւն — նշանակութեան հետ:

Սուսերերէն ma և me համանիշ են «ծին» նշանակութեամբ (տե՛ս Deimel, me 𐎢𐎡 = Banû = erzeugen), որով Ar-ma «Արածին» ունի նաեւ համանիշ Ar-me (կամ Ara-me) ձևը, նոյնպէս համանիշ են Arma-ni և Arme-ni «Արածիններ» կամ «Արածինների երկիր»: Արդէն դիտենք, որ ուրարտական արքաները յիշում են Arme և Urme (Urme-uhî) ձևերը:

Այսպիսով՝ Արմա նշանակում է «Արածին» կամ «Ար աստծոյ սերունդ կամ որդի» (հնում Արեւ աստծուն պաշտողներն արդէն իրենց անուանում էին «արեւորդի» (տե՛ս Ա, 1966, էջ 270), իսկ Արմանի (-նի որպէս յոգնակի)՝ սկզբներում նշանակել է «Ար աստծոյ որդիներ, Ար աստծոյ ժողովուրդ», ապա (յատկապէս քոչուորականից նստակեցութեան անցնելուց յետոյ)՝ «Ար աստծոյ որդիների, կամ Ար աստծոյ ցեղի բնակավայր կամ քաղաք», ապա՝ «Ար աստծոյ ցեղի երկիր»:

Հակառակ անցած մի քանի հազար տարիների ընթացքում արմէնների կեանքում տեղի ունեցած վերլվայրումներին, հակառակ հետադարձում մուտք դործած տարբեր հաւատքների եւ աստուածութիւնների ազդեցութիւններին, յատկապէս հակառակ հեթանոսական հաւատալիքներն ու տրագիցիաները ջնջող քրիստոնէութեան, հայերը դեռ որոշ շրջաններում չէին մոռացել իրենց՝ Ար աստծուց սերունած կամ Արեւ աստծոյ որդիներն եղած լինելը եւ տակաւին (ինչպէս նշել ենք յառնել բառի ստուգաբանութեան առթիւ) գոյատեւում էին «արեւորդիք» կոչուած հայ ազանդաւորները մինչեւ ուշ ժամանակները:

Հ. Ա. Մատիկեանը իր «Արա Գեղեցիկ» աշխատութեան մէջ բերում է մեր այս հարցի համար հետեւեալ կարեւոր տեղեկութիւնը. «Թէ Արա ազգային դիցարանական հերոսի մը անունն է եւ հետեւա-

բար Անանունն իր պատմութեամբ մեզի Ե-րդ դարու հայ ժողովրդեան իրական առասպել մը կ'աւանդէ...: Հոս կը ներկայացնեմ ուրիշ քանի մը փաստեր ալ, որոնց մէջ նշանաւորն է Յովսէպոս Փղաւիտսինը: Հրեայ մատենագիրս պատմելէն վերջը, թէ ինչպէս Դաւիթ զանազան աշխարհակալութիւններով իր պետութեան սահմանները կ'ընդարձակէր՝ յարձակելով՝ ի մէջ այլոց նաեւ Մովսրացիներու վրայ, որոնց բանակին մէկ մասը սրէ կ'անցընէ, մէկ մասն ալ զերի կը տանի, կ'աւելցնէ հետեւեալ մեզի համար շատ կարեւոր տողերը. «Եւ մինչ անոնց վրայ տարեկան տուրք դրաւ, անմիջապէս Ծովաց Ազրազատ թագաւորին՝ Արայի որդւոյն դէմ քալեց, եւ անոր հետ Եփրատայ ջով պատերազմելով՝ անկից 20.000 ստանաւոր եւ 7000 ձիաւոր սպաննեց: Այնպէս, որ մինչեւ անգամ հազար պատերազմական կառք աւար առաւ...»: Թէ ուսկից առած է Յովսէպոս այս տեղեկութիւնները... հաւանական կը զտնեմ, որ հրէական առանձին աւանդութիւն մ'ըլլայ անոր աղբիւրը¹⁸:

Յովսէպոս Փղաւիտսը (Ա դար) այս տեղեկութիւնը հրէական աւանդութիւնի¹⁹, թէ՞ դրաւոր աղբիւրից է առել, միեւնոյն է, հայկական աղբիւրներէց դուրս օտարի կարեւոր վկայութիւն է: Մեզ յայտնի է, որ Ծովաց աշխարհը հայկական երկիր էր իր հայկական առանձին թագաւորութեամբ: Այս երկիրը գտնուում էր Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջանում, այդ շրջաններում էր գտնուում նաեւ, ինչպէս տեսանք, Նարամ-Սինի յիշած Արմանի-ն «Արասածոյ որդիներէ» (ար ցեղի) երկիրը: Հայկական լեռնաշխարհի հարաւային հարեւանները, որոնց թւում եւ Պաղեստինն ու հրեաները, հայկական աշխարհի հետ շփման մէջ էին անմիջապէս այս շրջաններով, եւ շատ հնուց հայերին պիտի ճանաչէին որպէս Ar-ma (Ar-ma-ni), այսինքն՝ Ար-ի որդի (Արայի որդիներ), եւ ահա այս աղբիւրը Ծովաց աշխարհի Ատրազար (հայ) թագաւորին Արմա (> Արմէն) կոչելու տեղ ասում է Արայի որդի: Ոչ մի կասկած, որ «Արայի որդի» ասելով աղբիւրը նշում է Ծովաց աշխարհի թագաւորի ազգութիւնը՝ նրա Արայի ցեղին պատկանելը: Օտար, հին աղբիւրի այս վկայութիւնը շատ պարզ եւ աներկբայօրէն ցոյց է տալիս Արմա անուան ունեցած վերոյիշեալ նշանակութիւնը եւ կոնկրէտ փաստ է մեր տեսակէտի համար:

18) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 305 - 306:

Մուշի մօտ գտնուած է Մենուայի մի կոթողը, որի չորս երեսների վրայ կան արձանագրութիւններ: Երեսներից մէկի վրայ գրում է, թէ նա արչաւել է Ուրմէ (= Արմանի) երկրի վրայ եւ այդտեղ՝ Արայեան (Ar-xi = Ար-եան) երկրում թողել արձանագրութիւն: Ահա կոթողի երրորդ երեսի արձանագրութիւնը.

[U]RU a-ta-u-ni-¹e
 [U]š-ta-a-di
 KUR Ur-me-i-e-di
 [h]a-a-u-b[i]
 KUR Ur-me-i-e
 te-ru-ū-b[i]
 i-ni DUB-t[e]
 [K]UR ar-hi-i-e-d[i]
 [.]

«Թագաւ Ատաուսէ. Գուրս ելայ (արչաւի) Ուրմէ երկրի դէմ, նուաճեցի եւ Ուրմէ երկիրը. կանգնեցրի այս արձանագրութիւնը. Արիսի երկրում...»¹⁹:

Մենք գտնում ենք, որ թարգմանութեան մէջ «այս արձանագրութիւնը» կապակցութիւնից յետոյ բերուած կէտը կարելի է հանել եւ հասկանալ, որ արձանագրութեան կոթողը կանգնեցուել է Արիսի երկրում. թէեւ առանց հանելու էլ հասկացուում է, որ այդ երկիրը կոչուել է Ար-իսի (Ար-եան, Արա-եան)՝ մանաւանդ որ արձանագրութիւնը գտնուած է Մուշի շրջանում, որի մօտ էր գտնուում Աշտիշատը՝ Վահագնի մեհեանը, որի՝ Արայի մեհեան լինելը ցոյց կը տանք այս եւ յաջորդ գլուխներում: Այսպիսով այս արձանագրութիւնը անհեր-

19) Գ. Ա. Մեյիֆիշվիլի, «Ուրարտական սեպագիւ արձանագրութիւններ», Մոսկուա, 1960, էջ 165—166:

քելի եւ կոնկրէտ վկայութիւն է, որ Ուրմէ-Արմանին Մուշի շրջանով հանդերձ կոչուում էր «Ար-խի երկիր» (Ար-եան կամ Արա-եան երկիր)։ Սա ինքնին կարեւոր փաստ է Ար-մա-նի տերմինի «Արորդի-ների երկիր» նշանակութեան համար։

Այստեղ միանգամայն իմաստաւորուում է Պղատոնի պահած այն յայտնի վկայութիւնը, որ Էր-ը (Արան) Armenios-ի որդին էր. նոյնպիսի վկայութեան ուժ ունեն Պղատոնի պահած պատմութիւնից բոլորովին անկախ Բեռլինի պապիրուսների ժողովածուի մէջ դերմանացի դիտնական Վիլհելմի յայտնաբերած՝ Արա-Շամիրամ սիրավէպի նիւնոսեան վարիանտում յիշուած էրօս եւ Արմեհի անունները²⁰։ Պարզ է, որ Armenios-ը կամ Արամանեակը անձնաւորուած ցեղանուն կամ երկրանուն է, ինչպէս Էր-ը կամ Արան անձնաւորուած դիցանուն է։ «Armenios-ի որդի Էր» խօսքը նշանակում է «արմէններին կամ Արմենիային պատկանող Ար աստուածը», եւ, ի հարկէ, եթէ Ար աստուածը պատկանում էր արմէններին, ապա պարզ է, որ արմէններն էլ պիտի պատկանէին Ար աստծուն։

Մենք զիտենք նաեւ, որ շատ հին ժամանակների հեթանոսական աստուածները հետագայում անձնաւորուելով դարձել են անձնանուններ. անգամ արքաները շատ անգամ իրենց ժողովրդի աստծոյ անուն հետ են կապել իրենց անունները։ Աշուր-Նիրարի, Աշուր-Նազիր-Պալ, Աշուր-Բեն-Պալա եւ այլ Աշուրներ ի հարկէ համարուած էին Ասորեստանի որդիներ, ուստի հասկանալի է, թէ ինչո՞ւ էր-ը համարուել է Արմեհիսի որդին։

Մեր ներկայ ուսումնասիրութեան համար մեծ նշանակութիւն է ստանում էր-Արմեհիս յարաբերութեան հետեւեալ համեմատութիւնը.

- ա) էր որդի Արմեհիսի՝ յիշուած Պղատոնից.
 - բ) էրօս — Արմեհի՝ յիշուած Բեռլինի պապիրուսում.
 - գ) Արա սերունդ Արամանեակի՝ յիշուած մեր մատենագրութեան մէջ.
 - դ) Ալիս բխում է Արմեհիոն լեռից։
- Մրանց մասին զեռ կը խօսենք. այստեղ միայն ցանկանում ենք նշել, որ իրաւունք չունենք այս համեմատութիւնները պատահականութեան վերագրել։ Միանգամայն պարզ է, որ Ար աստուածը եղել

²⁰ Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունքը», էջ 35—36։

է արմէնների ազգային գլխաւոր աստուածը, որ Ար-մա նշանակում է «Ար աստծոյ սերունդ, Արորդի», իսկ Ար-մա-նի՝ «Ար-որդի-ներ» կամ «Արորդիների երկիր»։

Ինչպէս յայտնի է, Հայկական լեոնաշխարհի հարաւային շրջանները, այն շրջանները, որոնք սումեր-ակկադական արքաների հասոցութեան սահմանների մէջ էին գտնուում, յատկապէս Աղձնիք-Արմանին (Արմէ-Շուարիան) Լազաշի էաննատում արքայի օրերից (Գ հազարամեակի սկզբներից) կոչուում էր սումերերէն Սուբիր (սեպագիրը կարգացուած է նաեւ Սու-րի), իսկ ակկադների կողմից Սուբարու (Սուբարի, Սուբարու)։ Արմանին նուաճող Նարամ-Սինը տիրոջսագրուում էր «յաղթողը Սուբարուի մինչեւ անտառը մայրիների (Ամանու)»։ Sub-ar(u), Sub-ar(i) կամ Sub-ar(tu) տերմինը կազմուած է երկու բաղադրիչ մասերից. առաջին Sub կամ Sub բաղադրիչը սումերերէն նշանակում է «երկրպագել, պաշտել»²¹, իսկ երկրորդ ar բաղադրիչը (սումերերէն «չողալ, փայլուն») մեր արեւի աստուած Ար-Արամն է. որով Սուբ-արի նշանակում է «Ար պաշտողներ, Արապաշտներ (արեւապաշտներ)»։ Հենց այն Արապաշտները, որոնք կոչուել են նաեւ Ար-մա-նի «Ար-որդի-ներ» (արեւորդիներ)։ Արմանու կամ Արմանի տերմինը նշանակում է նաեւ «Արորդիների երկիր», ինչպէս Subaru կամ Subartu նշանակում է «Արապաշտների երկիր»։

Ար-մա անունն —մա վերջաւորութիւնը եզակի երեւոյթ չէ այդ հին ժամանակների համար։ Մա վերջաւորութիւն ունեցող անունների շատ ենք հանդիպում Մերձաւոր Արեւելքի սեպագրական շրջանի պատմութեան մէջ. բերում ենք նրանցից մի քանիսը համեմատութեան համար.

ՈՒԼՄԱՆԻԱ — Հայկական լեոնաշխարհի երկրներից մէկի անուն է, որից տուրք է ստացել Աշուր-Նազիր-Պալը. այս անունը, ինչպէս Ար-մա(նի) անունը կազմուած պիտի լինի Ուլ-մա (-նի-ա) մասերից, որի վերջին —ա ածանցը յայտնի է ասոպոնոմիական նման վերջաւորութիւն ունեցող անուններից, օրինակ՝ հենց նոյն արմանագրութեան մէջ, որտեղ յիշուում է Ուլմանիա, յիշուում են նաեւ Սուրա, Արուրա քաղաքներն ու Սիմերա երկիրը²²։

²¹ S. Langdon, Պշուած գիրքը, էջ 241: Տե՛ս SUB, SUB, b) To incline oneself, bow, worship: P. A. Deimel, տե՛ս IV Sub = Verehrung, II Sub = huldigen.

²² D. Luckenbill, Պշուած գիրքը, էջ 82:

ԴՈՒՔՔԱՄԱ. — Սա Հայաստանի կարեւոր քաղաքներից մէկն է, որը յիշուած է **Խեթերի Մուրսիլիս թագաւորի** (1349 – 1318 մ. թ. ա.) կողմից Հայաստանի վրայ կատարած պատերիչ յարձակման մասին պատմող արձանագրութեան մէջ²³ :

ՏԱՐԿՈՒՄԱ, **ՀՈՒՐՇՄԱ**. — Այս երկու տեղանունները նոյնպէս յիշուած են **Մուրսիլիսի** կողմից²⁴ : Սրանք դտնուած են Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջաններում :

ԿՈՒՐՈՒՍՏԱՄԱ. — «Գտնող ցեղերէն կուրուսամացիք, որ ատենօք ապստամբութեան մը պատճառաւ Լիրանան տարագրուած եւ ապա պատերազմի առիթով Եգիպտացւոց կողմէն դերի սեպուած էին. Գ. ա. 1358-ին Եգիպտացւոց եւ Խետացւոց միջեւ կնքուած Հաշտութեան շնորհիւ ոչ միայն ազատ արձակուած, այլեւ Հայրենիք վերադառնալու թոյլտուութիւն ստացած էին»²⁵ :

ԱՍՏԱՍԱՄԱ. — Սա անունն է Միտանների երկրորդ արքայի, որն իր դուստրը կնութեան տուեց Եգիպտոսի թոռմեանին²⁶ :

ԷԼԱՄԱ²⁷. — 18 լեռներից առաջինը, որը Տիգրիս-Պարսպար Ա-ը անցաւ նայիրեան 23 ցեղերի դէմ յարձակուելու համար :

ՏԱՐԽԻԳԱՄԱ. — Հայաստանի քաղաքներից է, որը յիշուած է Ուրարտուի Մենուա թագաւորի կողմից²⁸ :

ԿԱԼԱՄԱՇՄԱ, **ԽՈՒՐՄԱ**. — Միտանների թագաւոր Մատտիուազայի եւ Խեթերի մեծ արքայ Մուրբիլուլիումայի միջեւ կնքուած դաշնագրում յիշուած են Արեւելեան Փոքր Ասիայի մէջ դտնուող այս վայրերը : Կալամաշմա անունը յիշուած է «Կալամաշմայի մարդիկ» ձեւով, այնպէս որ յայտնի չէ թէ Կալամաշմա երկրանունն է թէ՞ ցեղանուն, իսկ Խուրմայի մասին յիշում է որպէս գաւառի տնուն²⁹ :

ՍՈՒԲԲԻԼՈՒԻՈՒՄԱ. — Խեթերի այս մեծ թագաւորը իր մի արձանագրութեան մէջ գրում է. «Եւ Արեգ Սարել մեծ արքայ...»³⁰ : Այս անունը Սարել ձեւով յիշուելը ցոյց է տալիս, որ Մուրբիլու-

23) Եգիս Քասունի, «Նախահայկական Հայաստան», Պէյրուք, 1950, էջ 104 :
24) Նոյն տեղում, էջ 100 :
25) Նոյն տեղում, էջ 72 :
26) Seton Lloyd, «Twin Rivers», London, 1943, p. 50.
27) D. Luckenbill, նշուած գիրքը, էջ 82 :
28) Եգիս Քասունի, յիշուած գիրքը, էջ 100 :
29) Նոյն տեղում, էջ 78 :
30) Խաչատրեան Ա., «Միտանի խարրի ժողովուրդը», Երևան, 1926, էջ 8 :

լիումա անունն — մա վերջնամասը կարելի է անջատել բարդութեան մէջ որպէս առանձին անդամ :

ԱԼԱՏԱՐՄԱ. — Իշուած երկրի գլխաւոր քաղաքներից մին³¹ :

ԻԼՈՒՇՈՒՄԱ. — Ասորեստանի՝ ակկադներից անջատուելով որպէս մեծ պետութիւն հանդէս եկած ժամանակաշրջանի (Գ հազարամեակի վերջում — մ. թ. ա.) մեծ արքաներից մէկի անունն է³² :

ԱՐԻ-ՇԱՐՈՒՄԱ. — Անունն է Մեխրի ցեղի թագաւորի, որը զինակցելով Խեթերի Սատուսիլ Գ (1285 – 1260 մ. թ. ա.) թագաւորի հետ, յաղթում է Ասորեստանի բանակներին³³ :

ՊԱՍԱՐՄԱ. — Խեթերի Տուգհալիա Ա թագաւորի որդին ու յաջորդը³⁴ :

ԲԵԼՏԱՐՍԻ-ԻԼՈՒՄԱ. — Բարձրաստիճան մի պաշտօնեայ, որը կոթող է կանգնեցրել Նաբաւ աստծոյ քանդակով, որի տակ արձանադրել է. «Զայս իր տիրոջը՝ Ասորեստանի Ադադնիրարի թագաւորին արեւշատութեան համար եւ իր տիրուհւոյն՝ պալատական տիկնոջ Շամմուրամատի արեւշատութեան համար, Բելտարսի-Իլումա, Կալախի քաղաքապետը... շինել ու նուիրագործել տուաւ»³⁵ : Իլումա անունը բաղկացած պիտի լինի երկու բառից (Իլու-մա), որի առաջին մասը՝ Իլու, նշանակում է աստուած, ուստի Իլումա պիտի նշանակի աստուածային ծնունդ :

Արմա անունն նման — մա վերջաւորութիւն ունեցող անունների շարքը փակելուց առաջ ցանկանում ենք ուշադրութիւն հրաւիրել յատկապէս Խորենացու յիշած Արտաշամա անունն վրայ :

ԱՐՏԱՇՄԱՄԱ. — Սա անունն է հայոց Արտաշէս թագաւորի դուստեր, որին Արտաշէսը կնութեան է տուել Միհրդատին : Խորենացին Արտաշէսի մասին գրելով ասում է. «Բայց զդուստր իւր զԱրտաշամա տայ կին Միհրդատայ ումեմն Վրաց բղեշխի մեծի, որ էր ի գաւազէ Միհրդատայ՝ Գարեհի նախարարի, զոր կացուցեալ էր Աղեքսանդրի վերայ գերութեան Վերիացւոց, որպէս յառաջագոյն պատմեցաք. եւ հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լեռանցն եւ Պոնտոս

31) Նոյն տեղում, էջ 28, 427. տե՛ս Ե. Քասունի, նշուած գիրքը, էջ 78 :
32) Նոյն տեղում, էջ 125 :
33) Նոյն տեղում, էջ 133 :
34) G. Contenau, «La Civilisation des Hittites et des Hurrites du Mitanni», Paris, 1948, p. 56.
35) Եգիս Քասունի, նոյն տեղում, էջ 283 :

ծովու³⁶ : Անկախ այն բանից, թէ պատմական ի՞նչ արժէք ունի Պորենացու այս պատմածը, մեր հարցի համար Արտաշատն անունն ունի կարևոր նշանակութիւն : Ըստ Պորենացու պատմածի՝ Արտաշատն Արտաշէսի դուստրն է : Այն կարծուած է Արտաշէս եւ մա վերջաւորութիւնից, որ նշանակուած է ծնել, սերել, սերունդ, ուստի Արտաշատն նշանակուած է «Արտաշէսածին» (հմմտ. մեր բերած Յարեթածին անուան հետ) :

Փոքր Ասիայի յայտնի մեծ Մա դիցուհին, մեծ հաւանականութեամբ, պիտի առաջ եկած լինի հենց սուսերական այս մա (ծնել, սերել) բառից եւ իր սկզբնական շրջանում ունեցած լինի «մայր կամ ծնող աստուածուհի» նշանակութիւնը : Ուստի անտարակուսելիորէն Արտաշատն նշանակուած է «Արտաշատին» եւ հետեւաբար այստեղ եւս մա նշանակուած է «ծնել, սերել, ծնունդ, սերունդ» :

Մենք գտնում ենք, որ վերելում բերուած անունների (գոնէ մեծ մասի) մա վերջաւորութիւններն ունեն Արմա անուան մա վերջաւորութեան իմաստը կամ նրա համար նշուած երկու իմաստներից մէկը :

Մեր ցեղի Արմա անունը, ինչպէս եւ մեր երկրի Արմանի անունը (ինչպէս այլ ցեղանուններ եւ երկրանուններ) անձնաւորուելով որպէս էպոնիմներ պահպանուել են հայկական առասպելների եւ Մարարայի գրաւոր աղբյուրի մէջ եւ հասել Պորենացուն ու Անանունին : Արմա ցեղանունը Պորենացու (Ա ծր) մօտ տեսնում ենք Հարմա ([հ]արմա) անուան մէջ : Հարմա անուան սկզբի հ ծայրը աճած է որպէս սաստկացուցիչ (համեմատել ոգի > հոգի, սկա > հսկայ, Ռոմ > Հոմ եւայն), իսկ Արմանի անունը՝ Արամանեակի մէջ : Այստեղ չենք կարող նախապէս շատել, որ մեր ներկայ ուսումնասիրութեան համար մեծ նշանակութիւն եւ արժէք ունի Պորենացու եւ Անանունի պահած այն վկայութիւնն ու տեղեկութիւնը, որ Արամանեակը եղել է Հայկի որդին (այս մասին դեռ կ'անդրադառնանք), եւ ցանկանում ենք նշել, որ Արամանեակ կամ Արամեակ անունը հենց անձնաւորուած Արմանի երկրանունն է (Արմա-նի-ակ կամ Արա-մա-նի-ակ > Արամանեակ) :


Մեր Արմա ցեղի անցեալի հնագոյն շրջանի պատմութիւնը տակաւին թաղուած է մթութեան մէջ : Հայկական լեռնաշխարհում Արմա ցեղի հնագոյն բնակավայրերի կոնկրէտ տեղերը մեծաւ մա-

36) Մ. Խորենացի, Բ — Ժա :

սամբ մնում են անյայտ . դրանց յայտնաբերման համար էլ առանձին հետախուզական աշխատանքներ չեն կատարուում եւ հետեւաբար հնագիտական պեղումների չեն ենթարկուում՝ գտնուելով նրանց դայութեամբ չհասագործուող եւ չհետաքրքրուող կամ աւելի ճիշդը՝ նրանց մթութեան մէջ մնալը ցանկացող օտարի ձեռքում, ուստի ուղղակի նրանց հողի տակ պահուած յիշատակարանների տալիք ստոյգ տեղեկութիւններից զրեթէ ոչինչ չունենք . իսկ մեզ հասած կցկտուր տեղեկութիւններն էլ մեծ մասամբ գալիս են օտար միակողմանի բընոյթ ունեցող աղբյուրներից, սակայն եւ այնպէս՝ մեր ունեցած այդ կցկտուր տեղեկութիւններն անգամ ցոյց են տալիս, որ արմա ցեղը, որպէս երկրի բնիկ տարրից առաջ եկած ցեղ կամ ցեղախումբ, այնպէս ժամանակներից տարածուած է եղել Հայկական լեռնաշխարհում : Նրանց այս անուան հանդիպում ենք Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, տարբեր ձեւերով, թէ՛ որպէս ցեղանուն եւ թէ՛ որպէս տեղանուն :

Բերում ենք նրանցից մի քանիսը .

ԱՐՄԱԻԻ — Այս անունը առաջ է եկած Արմա-էրի կամ Արմա-

ուրու ձեւից : Մտ կամ eri ասորեստանեան սեպագրով՝  ³⁷

սուսերերէն նշանակում է քաղաք : Այս բառն օգտագործել են նաև ասորեստանցիները, ուրարտացիները եւ ուրիշներ : Մեր ուր «տեղ» բառը համապատասխանում է սուսեր uru բառին : Ուստի Արմա-էրի կամ Արմա-ուրու (հմմտ. URUTUŠPA-URU) ³⁸ կամ Արմաիւր նշանակում է Արմա ցեղի քաղաք կամ Արմա անունով մի նշանաւոր արմենի քաղաք (Պորենացին ասում է՝ Արամայիսը շինեց Արմաիւրը իր անունով . դեռ մենք կը տեսնենք, թէ ի՞նչ է նշանակում Արգիշտի, որ շինել է Արգիշտիիւնիւի-Արմաիւրը) : Պտղոմէոսը (Բ դար) Արմա-իւրին յիշում է Ἀρμαουρία (Արմաուրիա) ձեւով³⁹ . այս ձեւը միանգամայն համապատասխանում է մեր բերած Արմա-ուրու բացատրութեան : Մրա համար էլ անվիճելի ազդացոյց է Պորենացու (էլի մեր դանձապահ Պորենացու) պահած հետեւեալ վկայութիւն-տեղեկու-

37) S. Langdon, Ձուած գիրքը, էջ 268 եւ 301 :

38) Մեիիֆիշվիլի, էջ 126 :

39) Հիւրշման, «Հիմ հայոց տեղւոյ անունները», Վիեննա, 1907 . տե՛ս Արմաիւր . Հ . Ա . Էֆրիկեան, «Պատկերագրող բնաշխարհիկ բառարան», Խառ. Ա, Բ . տպ. , Վեճեսիկ, 1903 - 1905 . տե՛ս Արմաիւր :

թիւնը. «Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւ-
ւրի. եւ թողեալ զՀարմայ յԱրմաւիւր, Հանդերձ որդւոյք բնակել, եւ
ինքն գնաց...»⁴⁰: Սա պարզ վկայութիւն է, որ Արմաւիւրի բնակիչ-
ները Արմա ցեղից (Հարմա եւ նրա որդիները) էին: Հարմա հայոնիմն
է Արմա ցեղի. Հարմա անուան հ սկզբնամասը, ինչպէս ասել ենք,
աճած է որպէս սաստիկացուցիչ:

ԱՐԱՄԱՆԱ — Սա գիւղ է Բագրեւանդ նահանգում, Արածանի
ազրերակունքների երկրում: Ղազար Փարպեցին գրելով Մամիկոն-
եանների ղէպի Արեւմտեան Հայաստան գաղթի շուրջ՝ Արամանայի
մասին բերում է հետեւեալ տեղեկութիւնը. «...Հասանէին ի գիւղ
մի, որոյ անունն էր Արամանայ, ի նահանգին Բագրաւանդայ, մեր-
ձակայ սահմանակից Բասենոյ եւ Տուարածատափու»⁴¹:

ԱՐՈՒՄԱ — Տիգրաթ Պալասար Ա.ը (1100 մ. թ. ա.) իր տա-
րեգրութեան մէջ, որ արձանագրել է Աշուր քաղաքի Անու եւ Աղազ
աստուածների տաճարի անկիւններում գեանդած կաւէ շորս պրիզ-
մաների վրայ⁴², յիշում է Aruma անունով լեռը: Նա յաղթելով Կուտ-
մուխի երկրի ուժերին (որի բնակիչների մի մասը փախչում է «Դէպի
Շերեշէ քաղաքը»⁴³, որը Տիգրիսի միւս կողմի վրայ էր գտնուում)
բարձրանում է Արումա լեռը, որտեղ կուում Միլտիշ երկրի ոյժերի
դէմ⁴⁴: Տիգրաթ Պալասարը Հարիա երկրի վրայ կատարած մի մեծ
արշաւանքի առթիւ նորից յիշում է Արումա լեռը⁴⁴: Արձանագրու-
թեան մէջ բերուած տուեալների քննութիւնը ցոյց է տալիս, որ Ա-
րումա լեռը գտնուել է Արարազ լեռների արեւմտեան շրջանում, Աղձ-

նիքի արեւելեան սահմաններից ներս կամ սահմաններին մօտ: Ուստի
Արումա լեռը անկասկած իր անունը ստացած պիտի լինի Աղձնիքում
տեղադրուած Արմանի երկրի ժողովրդի Արմա կամ Արամա ցեղա-
նունից:

ՈՒՐՈՒՄԻ — Տիգրաթ Պալասարը գրում է նաեւ, որ արշաւել
է Շուրարտուի դէմ. «...Ես նուաճեցի Շուրարի երկիրը, նրա գոռոզ
եւ անդուպ (ժողովրդին), եւ Ալգի երկրի վրայ եւ Պուրուկուզի
երկրի վրայ, որոնք զաղարեցրել էին իրենց տուրքն ու հարկը...:
Չորս հազար կասիկ եւ ուրումի [մարդիկ]՝ hatti երկրի զինուոր-
ներ, որոնք ապստամբել էին եւ վերցրել էին Շուրարի երկրի քաղաք-
ները իրենց սեփական ուժով, քաղաքներ որոնք ենթակայ էին Աշու-
րին՝ իմ տիրոջ...»⁴⁵:

«...Ուրումի [մարդիկ]՝ խատտի երկրի զինուորներ» արտա-
յայտութիւնը միաժամանակ շատ կարեւոր պատմական վկայութիւն
է, որը մի պահ ճեղք է բացում այս ժամանակաշրջանի արմէնների
քաղաքական դոյաձեւը մթութեան մէջ պահող վարպետների վրայ:
Այս յիշատակութիւնը ցոյց է տալիս, որ արմէնների մի կարեւոր
մասը գտնուում էր խեթական մեծ կոնֆետերացիայի մէջ, եւ եթէ նրանք
չէին յիշում, ապա պատճառը այն էր, որ նրանք էլ մտնում էին
ընդհանուր hatti անուան մէջ: Խեթական կոնֆետերացիան դաշ-
նակցութիւն էր տարբեր թագաւորութիւնների, որոնք մերթ միա-
նում, մերթ անջատուում էին:

Տիգրաթ Պալասարի նախորդի մահով մի մեծ ապստամբու-
թիւն է ծաւալուել Ասորեստանին ենթակայ երկրների (Պարիա,
Կուտմուխի, Կորդուք, Սուրարի, Ալգի, Պուրուկուզի եւ այլն) շըր-
ջաններում. այս շարժման ժամանակ «Կասիկ եւ Ուրումի մարդիկ»
եկել էին Շուրարտուի, Ալգիի եւ Պուրուկուզի բարեկամ եւ ցեղա-
կից բնակչութիւնների օգնութեան: Այս երեւոյթի վրայ եթէ աւե-
լացնենք եւ այն, որ արձանագրութեան մէջ Ուրումի անունը յիշում
է, ոչ թէ որպէս (Ուրումի) երկիր, այլ որպէս (ուրումի) մարդիկ,
ապա միանգամայն պարզ է դառնում, որ ուրումի տերմինը հենց
Աղձնիքում տեղադրուած Արմա-նի երկրի Արմա կամ Արամա ցեղա-
նունն է:

ԱՐԱՄԱՆԷ — Ասորեստանի Սարմանասար Գ.ը (859 - 824)
Ուրարտուի Արամէ թագաւորի դէմ կատարած յարձակման մասին
թողած արձանագրութեան մէջ յիշում է այս քաղաքը, որին նա գրա-

45) Նոյն տեղում, էջ 77:

40) Մ. Խորենացույ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Մ. Արեղեան Եւ
Ս. Յարութիւնեան, Տիգրիս, 1913, էջ 40 - 41:

41) Վ. Փարպեցի, էջ 57 (Վ. Կ. Իսկանեան, «Իրիզանդակամ կողմնորոշման
հարցը վարդանանց պատերազմի ժամանակ», «Պատմա-բանասիրական հանդէս»,
1966, քիւ 3, էջ 55):

42) D. Luckenbill, նշում գիրքը, էջ 74—76:

43) Նոյն տեղում, էջ 76:

Երեւի Խորենացու յիշած Շարաշմը այս Շերեշէ-ի էպոնիմն է. Պա գրում է.
«...Եւ գՇարաշմ ի տանէ Սանասարայ հաստատէ Բդեշի մեծ Եւ կուտակայ յարե-
մտից հարաւոյ, յեզր սահմանացն Ասորեստանի, առ ավն Տիգրիս գետոյ, գաւառս
պարգեւելով զԱրմն, Եւ որ շուրջ գնովաւ, Եւ գիեան Տուրոս, որ Եւ Սիմ, Եւ զկիւ-
տուրն ամենայն» (Խոր. Բ — ք):

44) Նոյն տեղում, էջ 78—79:

ևել է Երևտա լեռներից իջնելով: Երևել Արամալէ քաղաքը գտնուում էր Մաղկանց լեռների հարաւային փէշերին:

Սալմանասարի յիշած այս Արամալէ-ն պիտի Սարգոն-ի յիշած Արմարիլի-ն լինի: Այս անուան -լէ (Արամա-լէ) կամ -լի (Արմարի-լի) վերջաւորութիւնը պիտի ունենայ այն նշանակութիւնը, ինչ ունեն Արգիշտիխի, Բիախիլի և նման անունների -լի վերջաւորութիւնները: Ուստի Արամալէ պիտի լինի Արմա-լի, Արամա-լի (որը համապատասխանում է Արմա-նի «արմա-ներ, արմէններ կամ արմէնների վայր» իմաստին): (Հմտ. նաեւ Դարանաղի, Մանանաղի):

ԱՐՄՈՒՆԱ — Այս քաղաքը յիշուած է (Ասորեստանի) Սարգոն Բ-ի կողմից՝ Ուրսայի (Ռուսայի) դահակալութեան ժամանակ Ուրարտուի վրայ կատարած արշաւանքի առթիւ: Սարգոնը, ըստ իր արձանագրութեան, Ուլխու (Սոյ) քաղաքից դուրս գալով մօտենում է Սանդիբիտու նահանգին, որտեղ Արգարիա լեռան վրայ կործանում է 21 ամուր քաղաքներ (որոնց թւում եւ Արմունա-ն) նախքան շարժուելը դէպի արեւմուտք՝ դէպի Վանայ ծովի կողմը: Ուստի այս 21 քաղաքների հետ Արմունա-ն պիտի գտնուած լինի Վասպուրականի լեռների հիւսիսային թեւի վրայ՝ Մակուից դէպի Մաղկանց լեռները ասանդ ուղղութեամբ:

ՈՒՐԻՄԱՆ — «...Դասական աշխարհագրութեան Ուրիման, զարդիս Ուրում, աւերակ մը Նիդիպէ քիչ մը հիւսիս՝ Եփրատի եզերքը»⁴⁶:

ՈՒՐԵՄՆ — Մա մի գաւառի անուն է (հաւանաբար եւ բերդաքաղաքի), որին Մատթէոս Ուռհայեցին յիշում է իր պատմութեան մէջ: Նա գրում է. «Յայսմ ամի զօրաժողով արար կոմսն Անտիօքայ Տանգրի, եւ գնայր ի վերայ Վասլին՝ Հայոց իշխանին, եւ յարուցանէր պատերազմ ի վերայ Ռապնայ. եւ սաստիկ պատերազմաւ էառ զքաղաքն Ռապան ի Վասլէն... եւ տայր Վասիլն զգաւառն Հասան-Մարայ եւ զԹորէր, եւ զՈւրեմն ի Տանգրի. վասնզի Վասիլն ի Քրանկաց էր առեալ զգաւառս զայս զՀասան-Մսուր եւ զԹորէր եւ զՈւրեմն...»: Եղիա Քասունին գրում է, թէ Ուրեմն-ը գտնուած է «Սամոսաի մօտերը»:

46) Եղիա Քասունի, Յշուած գիրքը, էջ 160:

47) Մ. Խորենացի, Հայոց պատմութիւն (քարգոյ. Սո. Մալխասեանի), Երևան, 1940, Ա — ժգ. (էջ 28):

48) «...Տիւղարիմէ բերդաքաղաքը, որ արդի կիւրին (դասական Gauraina) աւանի է...». Եղիա Քասունի, Յոյն տեղում, էջ 563:

ԹՈՒՄԱՐՄԱ կամ ԹԵԳ-ԱՐԱՄԱ⁴⁹ — Այս երկրանունը մեր մատենագրութեան մէջ յիշուած է որպէս «Տուն Թորգոմայ» եւ որպէս էպոնիմ կոչուել է Թորգոմ: Մովսէս Խորենացին Հայկին համարում է Թորգոմի որդին. նա գրում է. «այս է Հայկը, հայ ազգի նախնին, որ Թորգոմի որդին էր»⁴⁷: Ինչպէս Խորենացին՝ այնպէս էլ մեր մատենագիրներից շատերը հայկերին համարում են Թորգոմից սերուած: «Հետաքրքիր է նշել (գրում է Հ. Ժամկոչեանը), որ հայ պատմագիրներից դեռ շատ առաջ Գ — Դ. դարերի եկեղեցական պատմագիրներ Հիպոլիտոսը եւ Եւսեբիոս Կեսարացին նոյնպէս հայերին սերած են համարել Թորգոմի սերնդից, իսկ «Տունն Թորգոմայ» ասելով հասկացել են Հայաստանը: ... Հայագիտական հին եւ նորագոյն աշխատութիւններում արդէն ցոյց է տրուած, որ Թորգոմա երկիրը կամ հետագայի Երրորդ Հայքի տերիտորիան ոչ միայն հնուց սկսած միշտ հայաբնակ է եղել, այլեւ հանդիսացել է հայ-արմենական ցեղախմբերի հնագոյն բնակավայրերից մէկը: Առաջին անգամ Յ. Լնորմանը, իսկ հետագայում նաեւ շատերն ապացուցել են, որ Թորգոմա կամ Թեղ-Արամա կազմուած է «Թոգ»-«Թեղ» եւ «արմա»-«արամա» բառերից, որոնցից առաջինը նշանակում է «ազգ», «ցեղ», «առն», «երկիր», իսկ երկրորդը՝ «արմա-արամա», այսինքն՝ «արմէ» կամ «արմէն» ցեղանուն. «Թոգարմա»-«Թեղ-Արամա» նշանակում է «արմա-արմէնների» կամ «արմէնների ազգ, ցեղ, առն կամ երկիր»⁴⁸:

Ի հարկէ մեր նպատակից դուրս է այստեղ բերել արմա ցեղի թոգած բոլոր հետքերը կամ նրա մասին եղած բոլոր յիշատակութիւնները. այդ բանը մեր հնարաւորութիւնից էլ դուրս է, այսուհանդերձ մեր ունեցած (ինչպէս ասացինք) կցկտուր տեղեկութիւնների մի մասից բերուած այսքանն էլ (Արմանի, Արմալի, Արամա, Ուրամի, Ուրմէ տեղանունները), կարծում ենք, բաւական են ցոյց տալու, որ արմա ցեղանուն կամ Արմանի երկրանուն հետքերն ու յիշատակը պահպանուել են հայկական լեռնաշխարհի տարբեր տեղերում:

Միայն Արարատեան դաշտի Արմալիը, Մաղկանց լեռների մօտ գտնուող Արամալէն, Վասպուրականի լեռների Արմունան, Բագրեւանդի Արամանան բաւական են խօսելու այն մասին, որ Արմա

49) Հ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», Երևան, 1963, էջ 115-116:

ցեղը իր գոյութեան հետքերը թողել է Հայկական լեռնաշխարհի սրտում Ուրարտուի անկումից շատ առաջ:

3.— ԱՐ ՅԵՂԸ

Մենք խօսեցինք այն մասին, որ Արմէն ցեղն իր ազգային գլխավոր Ար կամ Արա աստծոյ անունով կոչուել է ար-մա, որ նշանակում է «Արածիմ, Ար-ի սերունդ», Արմա-նի «Ար-ի որդիներ, ար ցեղ», ուստի բնական կը լինէր, որ նրանք իրենց Ար աստծոյ անունով ուղղակի կոչուէին ար, ինչպէս ասորեստանցիք իրենց Աշշուր աստծոյ անունով կոչուում էին աշշուր կամ ասուրի եւ նրանց երկիրը՝ Ասորեստան, եւ ինչպէս շատ այլ ցեղեր կոչուել են իրենց գլխավոր աստծոյ անունով:

Իսկապէս էլ հայերը կոչուել են նաեւ ար, եւ յատկապէս նրանք իրենք իրենց այդ անունով են կոչել:

Նախքան այս կէտի մասին մեր հետազոտութիւնների արդիւնքը բերելը, սենք, որ Արմէն ցեղը չի եղել ցեղային միայն մի միաւոր:

Մենք վերելում նշել էինք, որ արմէնները ծագել են Փոքր-Ասիայի արեւելեան շրջանների եւ Հայկական լեռնաշխարհի կանխագոյն տոհմա-էթնիկ տարրի (Ար աստծոյ պաշտամունքի պայմաններում) որպէս ցեղ բիւրեղացումից: Այս ցեղն իր նախապատմական ժամանակներից, աճելով (Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանների տարբեր պայմաններում եւ կամ արտաքին ազդեցութիւնների պատճառով) բաժանուել է առանձին մասերի կամ ճիւղերի՝ կազմելով առանձին ցեղային միաւորներ, որոնք, կամ նրանցից ոմանք, կարող էին նորից միանալ հայկական մի մեծ միութեան մէջ:

Այս ցեղի տարբեր ճիւղերը, իրարից տարբերուելու համար, բնականաբար պիտի ունենային անուանումների տարբերութիւններ: Այդ բոլոր անուանումներն էլ կարող էին իրենց հիմքում ունենալ Ար դիցանունը, կամ (նրանցից ոմանք) բոլորովին տարբեր անուններ (հայկական ցեղերը իրենց գլխավոր եւ ազգային Ար աստծուց զատ, ի հարկէ, համաձայն հեթանոսական ժամանակների հաւատքի, պիտի ունենային տեղական այլ աստուածութիւններ, որոնց անունով կարող էին կոչուել առանձին շրջաններում ապրող հայերը, ի հարկէ գծուարացներով պատմաբանի կողմից նրանց ճանաչումը):

Այստեղ յատուկ շեշտով պիտի ասենք, որ հայկական ցեղերի մեծ մասն իրենց տարբեր անուանումների հիմքում ունեցել են Ար աստծոյ անունը: Նրանք իրենք իրենց կոչել են ար, եւ ժամանակի ընթացքում այս անուան հնչիւնային տարբերութիւններով, կամ ստացած տարբեր անուններով ստացուել են տարբեր ճիւղերի տարբեր անուանումներ: Սակայն եւ այնպէս ընդհանուր անուամբ ար կոչուած ցեղային միութեան մէջ մանող առանձին ճիւղեր կարող էին ունենալ, ինչպէս ասացինք, բոլորովին տարբեր անուններ, որոնք ի յայտ էին դալու որպէս առանձին ցեղ առանձին անունով՝ միութեան տրոհումով, եւ անգամ էլ ի անյայտանալ ար անուան տակ նորից միաւորուելով:

Այստեղ պէտք է զգուշացնել, որ հայկական այս Ար-ը պէտք է չի շփուել իրանական արեւա անուան հետ, եւ ոչ էլ ար ցեղի արեւի Ար աստծոյ պաշտամունքը իրանական արեւապաշտութեան հետ, որոնք, համեմատելով արմէնների մեծ Ար-Արայի պաշտամունքի ժամանակների հետ, աստիճան են եկել շատ ուշ ժամանակներին:

Մենք սեսանք, որ արմէնները Հայկական լեռնաշխարհի հարաւարեւմտեան մասում, որպէս սումեր-ակկադական հարաւի անմիջական հարեւաններ, կոչուել են արմա (Արմանի, Ուրուի, Ուրմէ, Արմէ), սակայն մենք դատում ենք, որ նրանք եւ յատկապէս նրանցից հիւսիս՝ Հայկական լեռնաշխարհի աւելի խորքերում դանդաղները կոչուել են ուղղակի ար: Բերենք մի քանի անուններ:

ա) ԱԼԶԻ

Ար անունն է թաքցնում հենց Ալզի երկրանունը, որի շրջանում էր, ինչպէս տեսանք, Արմանիմ:

Ասորեստանցիներն այս երկիրը կոչել են Ալզի, խեթերը՝ Ալզէ, ուրարտացիները՝ Ալզի-նի, մեր մատենագիրները պահել են այն Ալզիմիք ձևով, որը համապատասխանում է ուրարտական Ալ-զի-նի-նի ձևին:

Ալ-զի անուան -զի վերջաւորութիւնը արմատական է, այլ՝ ածանց կամ բարդութեան մէջ բ. անգամ (հմմտ. Պուրուկուզ-զի⁵⁰,

50) Պուրուկուզի-մ յիշուած է Ալզի-ի հետ Տիզլաք Պալատար Ա-ի կողմից. տե՛ս D. Luckenbill Աշուած գիրքը, էջ 76:

Տետիւմ-գի⁵¹, Բուրուլում-գի⁵¹, Պիկուր-գի⁵² եւ նման անուններ) : Ալ-գի անունն առաջին Ալ մասը առաջ է եկել Ար անունից . արդէն ուրարտական Ալգիինի «Աղձնիք անունն տեղ օտարագրիք ր-ով ձեւ մը կը գործածեն, այսպէս՝ յուն . Ἀρζαενή (Պրոկոպիոս եւայլն) , լատ. Arzanena, Arzianena ... ասոր. Arzōn կամ Arzun ... արար. Arzan⁵³» : Հին երկրանունների ծագումը, ինչպէս ասել ենք վերելում, պիտի շատ անգամ փնտռել տուեալ երկրի մայրաքաղաքի կամ գլխաւոր քաղաքի անունն մէջ, որովհետեւ շատ երկրանուններ առաջ են եկել իրենց գլխաւոր քաղաքի անունից : Մենք գտնում ենք, որ Աղձնիքի գլխաւոր քաղաքն հանդիսացող Արծն, Արձն կամ Արգն (այժմ կոչւում է Խարզան, որ գտնւում է Աղձնիքի Արգնի գաւառում) քաղաքանունը աներկբայօրէն փաստում է Ալ-գի անունն Ալ մասի Ար եղած լինելը (համեմատել՝ Ալագեագ-Արագած, Ալարոդ-Արարոդ, Ալամուիկ-Արամուեակ, Ալընջա-Երնջակ եւայլն) : Ուստի կարծում ենք, որ Ալ-գի (Ալգիինի) անունը հենց Ար-մա (Արմանի) անունն մի այլ փոփոխակը, հոմանիշը, կամ թարգմանութիւնն է, որի Ար սկզբնամասը փոխուած է Ալ-ի, իսկ վերջնամասը՝ գի վերջաւորութեան : Այս դէպքում Ալ-գի (Ալգիինի) անունն գի (գիինի) կամ Ար-գն անունն գն վերջաւորութիւնը (ինչպէս Ար-մա անունն մա վերջաւորութիւնը) պիտի ունենայ հայերէնում պահուած ազն (յոզնակի ազինք) բառի (ազգ, ցեղ, սերունդ) նշանակութիւնը, ինչպէս այն գտնում ենք Հայկազն, Ղիւցազն, արքայազն եւ նման բարդութիւններում : Հետեւաբար կարծում ենք, որ Ալգի (Ալգիինի) անունը կարելի է Արմա (Արմանի) անունն հոմանիշը կամ թարգմանութիւնը համարել, որը տրուած է Արմէն ցեղի մի կարեւոր հատուածին :

Ար-ի Ալ ձեւը գտնում ենք նաեւ Ալ-իս գետի անունն մէջ, որը սկիզբ է առնում Արմենիոն լեռից (հմմտ. Էր որդի Armenios -ի) :

Մենք գտնում ենք, որ Ալգի նշանակում է «ար ցեղ», Աղձնիքը որպէս ցեղանուն երեւում է նաեւ այն բանում, որ մեր մատենագրութեան մէջ Աղձնիքը առանձին եւ եզակի ձեւով չի երեւում, այլ՝ տունն Աղձնեաց, բղէխն Աղձնեաց, երկիրն Աղձնեաց ձեւերով : Եւ

⁵¹ Տետիւմգի եւ Բուրուլումգի անունները յիշուած են Տագլաթ Իիմիպ Ա-ի կողմից. տե՛ս Ե. Քասուհի, Յշուած գիրքը, էջ 144 :

⁵² Պիկուրգի յիշուած է Մուրսիիսի կողմից. տե՛ս Ե. Քասուհի, Յշուած գիրքը, էջ 100 :

⁵³ Հիւրշամ, «Հին հայոց տեղւոյ անուններ», Վիեննա, 1907 :

կարծես արմէններին եւ նրանց երկրին աւելի օտարներն են Արմա եւ Արմանի անուանել, իսկ Ալգիում բնակուող արմէնները՝ իրենք իրենց աւելի ալգի : Դա, ի հարկէ, չի նշանակում, որ Արմա (Արմանի) անունը օտարները պիտի տուած լինեն միայն Ալգիում բնակուող արմէններին եւ նոյնպէս չի նշանակում, որ Ալգի անունը միայն տեղացիներն էին գործածում ալգիցիների համար : Ինչպէս տեսանք խեթական կոնֆեզերացիայի մաս կազմող «Հատտի երկրի ուրումի գինուորներ» (որոնք մեծ հաւանականութեամբ կոմագենէի կողմերից եկած արմէններ էին՝ մտած խեթական միութեան մէջ) եկել էին Սուրբարիի եւ, ի հարկէ նաեւ, Ալգիի իրենց ցեղակից եզրայրների օգնութեան Տիւրլաթ Պալասար Ա-ի դէմ ծաւալուած ապստամբութեան ժամանակ :

Պարզ է միտամանակ, որ Ալգիի արմէնները Արմէն ցեղի (եթէ ոչ մայր բունը) կանխադոյն եւ կարեւորագոյն հատուածը կամ հատուածներից մին էին, ուստի պատահական չէ, որ պատմականօրէն մեզ աւելի յայտնի հայկական թագաւորութիւնների օրերին Աղձնիքի բղէխութիւնը հայկական շորս բղէխութիւններից առաջինն էր համարուում :

Այս կապակցութեամբ անհրաժեշտ է այստեղ նշել եւ այն հանգամանքը, որ Տիւրբան Մեծը չի կարող Աղձնիքը պատահականօրէն ընտրած լինել իր նոր մայրաքաղաքի (Տիւրբանակերտի) կառուցման համար, կասկած չկայ, որ նա այս ընտրութեան մէջ ունէր մղիչ պատճառ եւ մեծ հաւանականութեամբ ազգային աւանդութիւնների թելադրանք : Ի հարկէ նա լքեց Արտաշատը նկատի առնելով, որ այն մնացել էր իր ընդարձակուած եւ առաւելապէս դէպի արեւմուտք ծաւալուող կայսրութեան արեւելեան (գրեթէ) ծայրամասում, ուստի նա իր կայսրութեան տարբեր շրջանների հետ վարչական կապերը հեշտացնելու համար պէտք ունէր մայրաքաղաքը փոխադրել աւելի կենտրոնական շրջաններ եւ յատկապէս իր ժամանակների քաղաքակիրթ հելլենիստական շրջաններին աւելի մօտ տեղեր, այսուհանդերձ նա կարող էր Տիւրբանակերտի տեղից աւելի կենտրոնական տեղ ընտրել եւ ստրատեգիականօրէն էլ աւելի ամուր վայր : Կասկած չկայ, որ նա Աղձնիքը ընտրեց ազգային զգացումների մղումից, ազգային աւանդութիւնների թելադրանքից, որպէս արմենական սուրբ եւ մայր հող, որպէս աւելի հարազատ եւ վստահելի միջավայր :

Սեպագրական ժամանակաշրջանի սուժեր-ակկադեան, ասուրական եւ խեթական արձանագրութիւնների պահած տեղեկութիւն-

ները խօսում էին արմէնների Հայկական լեռնաշխարհի հարաւ եւ հարաւ-արեւմտեան շրջաններում գտնուած լինելու մասին: Սոր անց-եալի սումեր-ակիդեան աղբիւրները մեզ համար չեն պարզում, թէ իրենց ժամանակներում Հայկական լեռնաշխարհի կենտրոնում եւ արեւելքում հայկական ցեղեր կախին թէ ոչ, որովհետեւ ամենահին արձանագրութիւնները թողնող նրանց աշխարհակալ արքաներին հեշտ չի եղել այդ ժամանակներում թափանցել Հայկական լեռնաշխարհի խորքերը, եւ նրանց յիշատակութիւնները վերաբերում են աւելի հիւսիսի իրենց հարեան շրջաններին, աւելի ճիշդ՝ Եփրատի եւ Տիգրիսի այն շրջաններին, որոնք գտնուում էին դաշտային հարաւը հիւսիսից ելերող լեռնային գոտիում, որոնց թւում էր եւ Արմանին Աղձնիքում:

Այսուհանդերձ մի շարք տուեալներ՝ Հայկական լեռնաշխարհում սփռուած բազմաթիւ տեղանուններ, ցեղանուններ, ինչպէս պատմագիտական տեղեկութիւններ ցոյց են տալիս, որ խոր անցեալում տեղի է ունեցել արմէնների ներթափանցում իրենց (Հայկական լեռնաշխարհի արեւմտեան շրջաններին) բնօրրանից դէպի արեւելք եւ յատկապէս հարաւ-արեւմտեան շրջաններից դէպի հիւսիս եւ հիւսիս արեւելք: Այդ ներթափանցման հետքերից պիտի համարել Ալլի — Ալ-զինի կամ արզն անուան կրկնութիւնը իրենց աստիճանական տարածման ճանապարհների մի քանի տեղերում: Դրանցից են Կարինի մօտ գտնուող Արզն, Հայաստում գտնուող (Ալլինի⁵⁴) Երիզան եւ Կոտայքում գտնուող Արզնի բնակավայրերի անունները եւ հաւանաբար նաեւ Արածանի գետի եւ Վանայ ծովի արեւելքում գտնուող Արծուկիւնի բնակավայրի անունները եւ ուրիշներ:

Քանի որ խօսք է լինում եւ լինելու է արմէնների Հայկական լեռնաշխարհի հարաւից եւ հարաւ-արեւմտեան շրջաններից (իրենց բնօրրանից) դէպի հիւսիս եւ արեւելք տարածման մասին, ապա ցանկանում ենք նշել միաժամանակ, որ այդ ծաւալման երեւոյթը չպիտի հասկանալ ամբողջ ժողովրդի ընդհանուր տեղաշարժ, տեղափոխութիւն, մինչդեռ այստեղ այդպիսի բան բնաւ չի պատահել: Տեղի ունեցած շարժումով նախկին շրջանը բնաւ էլ չի դատարկուել շարժուող ցեղի բնակչութիւնից: Եթէ ալպեյիներից որոշ խմբեր շարժուել են

դէպի հիւսիս, ապա Ալլին բնաւ էլ չի դատարկուել ալպեյիներից, կարող ենք ասել, որ այդ խմբերի մայր շրջանից հեռանալը կատարուել է բնական աճի հաշուին, այդ պատճառով էլ այդ շարժումը պէտք է հասկանալ ծաւալում եւ ոչ թէ դաղթ: Ի հարկէ որոշ խմբեր շարժուած պիտի լինեն դէպի հիւսիս կամ Հայկական լեռնաշխարհի խորքերը՝ հարաւի (սեմական աշխարհի) աճող սոնձգութիւններից խուսափելու եւ աւելի ապահով տեղեր ապաստանելու նպատակով: Այս շարժումներից միաժամանակ չպիտի հասկանալ, թէ արմենական ցեղեր չկային առաջ հիւսիսում եւ Հայկական լեռնաշխարհի խորքերում: Ծարժուող հայկական խմբերը կարող էին պարզապէս միացած լինել իրենց այլ ցեղակիցներին խաղաղ ձեւով, եւ ինչպէս կը տեսնենք, Հայկական լեռնաշխարհի խորքերում էլ եղել են Ար-ի հետ կապուած տեղանուններ ու ցեղանուններ:

բ) ՀԱՐՔ

Հայ-արմէնների՝ Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքից դէպի հիւսիս ծաւալման մասին տեղեկութիւններ են պահպանուել նաեւ մեր աւանդութեան մէջ: Այս մասին Անանուշը Մար-Աբայի մատենանից վերցրել ու անաղարտ պահել է հետեւեալը. «... Եւ չորաւ կալաւ Հայկն գերկիրն Արարադայ, եւ բնակեցաւ անդէն ազգաւ իւրով մինչեւ ցայժմ: ... Եւ Արամանեկայ հրամայեաց երթալ ի հիւսիսակողմն, ուր ինքն իսկ դադարեաց զառաջինն: ... Աւ Արամանեկ զորդիս իւր եւ զզստերս իւր եւ զարս նոցա, եւ զքորս եւթանեսին եւ զարս նոցա, զուստերս եւ զզստերս նոցա եւ զամենայն աղիս իւր, եւ չորաւ բնակեցաւ անդէն յառաջնումն դաւառին, զոր կոչեցին յանուն հարց իւրեանց՝ Հարք» (Մեթ. Ա): Սորենացին պահել է նաեւ այն, որ Հայկի՝ այս շրջան եկած ժամանակ այդտեղ «ապրելիս են եղել առաջուց սակաւաթիւ մարդիկ, որոնք կամովին հնազանդուել են դիւցազնին»:

Այս վկայութիւն-տուեալներից հասկացում են հետեւեալները. ա) Հայկը արմէնների աստուածն էր («Հայ անուան ծագումը» գլխում ցոյց կը տանք Հայկ անուան հիմքի Ար-Արա լինելը):

բ) Արարադը (Կորդուաց Աշխարհը) խոր անցեալից ի վեր եղել է Հայկի պաշտամունքի վայր, այսինքն՝ հայերի երկիր:

գ) Արամանեակի գաւակների ու թոռների դէպի հիւսիս շարժ-

54) Տե՛ս «Հայկական ՍՍՌ Ատլաս», Երևան, 1961, էջ 102:

ուելը նշանակում է զէպի հիւսիս են շարժուել Արմանի երկրի (Արամանեակ < Արմանի-ակ = Արմանի երկրի էպոնիմ) արմէն բը- նակիչներէց մարդիկ:

դ) Այս արմէնների Հարք դալուց առաջ այդտեղ եղել է Հայկը, այսինքն՝ այդտեղ առաջուց գտնուած են եղել Հայկին պաշտող հա- յեր:

ե) Իրենց հարաւային բնօրրանից արմէնների զէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք տարածուելը տեղի է ունեցել Ուրարտուից եւ Ասո- բեստանից շատ առաջ, քանի որ սրանց ժամանակներում այդ շրջանի բնակիչները ո՛չ այդքան սակաւաթիւ էին եւ ո՛չ էլ այդքան տկար, որ ինքնակամ հնազանդուէին:

զ) Հարք անունը կրում է հայերի նախահօր անունը:

Ոչ մի կասկած, որ Հարք անունը պարզ եւ անաղարտ պահում է հայերի ար ցեղանունը, որը արեւրի Ար աստծու անունն է: Հարք անունն սկզբի հ ձայնը արմատական չէ եւ աճել է որպէս սաստկա- ցուցիչ: Հմմտ. Արմա > Հարմա, ոգի > հոգի, Ռոմ > Հոմ եւ այլն: Ուստի Հարքը արք է՝ արեւր, այսինքն՝ հայեր կամ հայերի երկիր (հմմտ. Հայք, վիրք, որոնք նշանակում են հայեր, վրացիներ եւ հա- յերի երկիր, վրացիների երկիր):

Մեր երկարատեւ հետազոտութիւնները երեւան են հանել, որ ար ցեղի անունով կոչուած շրջանները չէին սահմանափակում քար- տէղիների վրայ նշուած Հարք դաւառով. իրենց հիմքում Ար զէպա- նունը կամ Ար ցեղանունը կրող տոպոնիմական անունները տարած- ուած են եղել զրեթէ ամբողջ Հայկական լեռնաշխարհում: Այդ երե- տոյթի կարեւոր կէտերը ցոյց կը տրուեն մեր այս աշխատութեան մէջ: Այստեղ միայն ցանկանում ենք նշել, որ Հարքը գրաւում էր շատ աւելի մեծ տարածութիւններ, քան ցոյց է տրուում քարտէղնե- րում. նրա մէջ անկասկած մտնում էր նաեւ Վանայ ծովի արեւմտեան կողմում տարածուող շրջանները Աղձնիքից մինչեւ յայտնի Հարքը (Տարօնը ամբողջութեամբ իր Մուշի շրջանով հանդերձ): Վերելում արդէն բերել ենք Մուշի մօտ գտնուած՝ Մենուայի կոթողի արձա- նագրութեան մի մասը, որի մէջ ի միջի այլոց գրուած էր. «...Տե- ղազրեցի ես այս արձանագրութիւնը Arhi երկրում...»: Մեզ յայտ- նի է, որ Ar-hi նշանակում է «Ար-եան» (-hi = -եան): Սա անհեր- քելի սեպագրական փաստ է, որ Մուշի շրջանը, որտեղ գրուած էր կոթողը, կոչւում էր «Ար-եան (Արաեան) երկիր» եւ որով մաս էր

կազմում (Հ)արքի (արերի երկրի):

Այս շրջանում էր գտնուում Աշտիշատը՝ հայ հեթանոսութեան ամենանշանուոր սրբաովայրերից մէկը: Աշտիշատում էր գտնուում Արայի (Վահագնի), Անահիտի ու Աստղիկի մեհեանները: Վերելում արդէն նշել ենք, որ Մատիկեանն ու Արսնցը իրենց ուսումնասիրու- թիւններում եկել են այն եզրակացութեան, որ Աշտիշատում Վահագ- նը գրաւել է Արայի տեղը: Արա-Շամիրամ առասպելի մեկնարանու- թեան առթիւ ցոյց ենք տուել, որ Արային սիրահետող Շամիրամը Իշատը — Աստղիկն է, իսկ Նու-արդ անուան ստուգարանութեամբ էլ երեւան հանեցինք, որ Արայի հարազատ կրին եղող Նուարդը Նու — Անահիտն է. եւ ահա մեր մեկնարանութիւնները փաստում են Աշ- տիշատում Արայի (Վահագնի) մեհեանի կողքին նրա սիրելի կնոջ Նու-Անահիտի եւ նրա տարիածու Աստղիկի մեհեանների գոյու- թեամբ: Յայտնի է միաժամանակ, որ Աստղիկի մեհեանը կոչւում էր «Սենեակ Վահագնի»⁵⁵ (Արայի), իսկ սենեակ բառը հնում նշանակում էր նաեւ «կանանոց, հարճ»: Հելլենիզմի շրջանում Աստղիկը համար- ւում էր Ափրոդիտէ⁵⁶, իսկ Ափրոդիտէի սիրելին Արէսն (Արան) էր⁵⁷: Հետեւաբար միանգամայն հաստատուում է, որ Վահագնի անուամբ ծանօթ մեհեանը պատկանում էր Արային: Այս իրողութիւնը հաս- տատուում է նաեւ Աշտիշատ անուան ստուգարանութեամբ:

Աշտի-շատ անունը Արտի-շատ է, աւելի ճիշդը՝ Արդի-շատ (Արա-շատ): Ը-ի փոխարէն շ ձայնի երեւալը անտոյր չէ մեզ մօտ. օրինակ՝ «Համչէնի եւ Հաճընի բարբառներում ատամնային պայթա- կաններից առաջ ր-ն արտասանում է «չ» օրինակ՝ (թ-ից կամ դ-ից առաջ շ=ր) մաչդիկ < մարդիկ, դէշոն < կ'երթան [գնում] (Համ- շէն), դաշդի < կ'երթայի [գնում էի] (Հաճըն)»: Նոյն բանը «նաեւ Նոր-Նախիջևանի բարբառում, օրինակ՝ մաշթ < մարդ, մօշթի < մօրթի, էշթալ < երթալ եւ այլն»: Այս երեւոյթին հանդիպել ենք նաեւ սեպագրական շրջանի արձանագրութեան մէջ. Դարեհի Բեհիս- տունի արձանագրութեան բարեւական տեքստում Ուրարտու անուան տեղ բերուած է Ուրաշտու, այսինքն՝ արտու-ն փոխուած է աշտու-ի (ր > շ), ճիշդ այնպէս ինչպէս Արտի -շատը հնչուել է Աշտի-շատ, իսկ

55) Լէօ, «Հայոց պատմութիւն», հատոր Ա, Երեւան, 1966, էջ 380:

56) Նոյն, էջ 381:

57) Ն. Աղանց, յիշուած յօդուածում, «Հայրենիք ամսագիր», 1926, քիւ 2.

էջ 75:

—չատ վերջաւորութիւնն արդէն ծանօթ է Արտա-չատ, Երուանդաչատ, Զարիչատ, Արչամաչատ եւ այլ ձեւերից: Ուստի հաստատուած է, որ Աչտի-չատ անունը պիտի հասկանալ Արզի-չատ. արդէն գիտենք, որ Արզի = Արա, հետեւաբար Արզի-չատը Արա-չատ է (Արայի չէն կամ քաղաք), զա պատահական չէ ի հարկէ, քանի որ այդտեղ էր դրանու Արայի մեհեանը, որը կարեւոր պատճառ էր, որ այս շրջանները կոչուեն Arbi («Արեան») կամ (Հ)արք՝ «արերի երկիր»:

Վանայ ծովի արեւմտեան կողմի այս շրջանը իր Աչտիչատով անյիշելի ժամանակներէց եղել է հայ ժողովրդի կրօնամշակութային գլխաւոր կենտրոններից մէկը, հայ ժողովրդի աւանդութիւնների ծագման, պահպանման ու արտացոլման շրջանը:

Մենք կարծում ենք, որ Աչտիչատի մեհեանում, ըստ հեթանոսական սովորութիւնների, արձանագրուած տախտակներ եւ մագաղաթների վրայ գրուած մատեններ էին պահուած՝ կրօնական, շինարարական, գիտական ու պատմական թեմաներով: Դրանցից գատ, ի հարկէ հենց այս շրջաններում (տեղի ունեցած իրական դէպքերի հիման վրայ) պիտի կազմուած եւ դարերով անազարտ պահպանուած լինեն հայ ժողովրդի աւանդական պատմութիւնները, որոնց թոււ եւ Հայկի ու Բելի գրոյցը: Դրա համար մենք ապացոյց ենք համարում հետեւեալները.

ա) Հայկի եւ Բելի գրոյցն ու այլ աւանդական (եւ զբաւոր) պատմութիւններ Խորենացուն ու Անանունին փոխանցող Մար Արան Մծուրնացի էր («Մատենան Մարարայ փիլիսոփայի Մծուրնացւոյ») իսկ Մծուրն կամ Մծուրք քաղաքը գտնուած էր հենց այս շրջանում՝ «Մշոյ գաւառի արեւմտակողմում», Արածանիի վրայ, հենց Աչտիչատի մօտ⁵⁸: Մար Արան անկասկած իր մատենի համար (ինչպէս եւ Հայկի ու Բելի իր գրանցած գրոյցի համար) օգտուած պիտի լինի ինչպէս Աչտիչատի գիւղանից (Գրիգոր «Լուսաւորչի» կործանարար մոլորեցումներէն) փրկուած մի մատենից (յիշատակութիւններ կան, որ Մար Արան օգտուել է մի մատենից), այնպէս էլ այս շրջանում ժողովրդի յիշողութեան մէջ պահպանուած աւանդական պատմութիւններից:

բ) Այս շրջանում էր գտնուած Խորեան գիւղը, ուր ծնուել էր Խորենացին (Տարօնացին): Նա հենց այս տեղերի բնակիչներից պիտի

58) «Հայկական ՍՍՌ տալաս», Երևան, 1961, տես քարտէզ էջ 104:

լսած լինի այն գրոյցները, որոնք, ըստ իր ասածի, արդարացուած էին Մար Արայից իր բերածներով:

դ) Գ. Վ. Սրուանձտեանցը հենց այս շրջաններում (Վանայ ծովի նաւահանդիսա Դատուան գիւղի եւ Նեմրութ լեռան միջեւ եղած դաշտում) է քաղել Բելի մասին իր գրանցած վէպը⁵⁹:

Եւ յիրաւի այս շրջանը մի կարեւոր մասն էր հայ ժողովրդի բնօրրանի (ծագման վայրի): Այստեղ էր գտնուած Արայի մեհեանը, դրա համար էլ այն ստացել էր ուղղակի Ար (Arbi, Հարք) անունը: Այս հանդամանքը զարմանալիորէն լաւ է պահպանուել աւանդութեան մէջ, ինչպէս տեսանք, աւանդութիւնն ասում է, թէ հայերն այս գաւառը իրենց հայրերի (այսինքն՝ հօր) անունով կոչեցին Հարք (Սեր. Ա.), իսկ այժմ արդէն գիտենք, որ հայերի («արորդիների») հօր անունը Ար կամ Արա էր, որի անունով էլ այս շրջանը կոչուել է Arbi կամ Հարք: Արդէն արերի բնօրրանի մի այլ կարեւոր մասը (Աղձնիքում) Գ հազարամեակին (մ. թ. ա.) կոչուած էր Ար-մա-նի («Արորդիների երկիր»): Ինչպէս ասացինք՝ Արիւ-Հարքը արերի համար նշանաւոր էր այն հանդամանքով, որ այստեղ էր գտնուած Աչտիչատի Արայեան մեհեանը, որը համազրային յարգանքի առարկան էր (Զ գլխում ցոյց կը տանք թէ ինչու այն կոչուել է Վահագնի մեհեան), եւ գտնուած էր Արայի անուան հետ կապուած Արածանիի ափի մօտ:

գ) ԱՐԱԾԱՆԻ

Արածանին զուտ հայկական հարազատ գետ է, որը գտնուած է Հայկական լեռնաշխարհի սրտում, որպէս մայր երակը հայոց աշխարհի՝ անյիշելի ժամանակներից եւ բազմահազար տարիներով սնել է հայկական ցեղերին: Նրա շուրջ աճել, բազմացել ու ճիւղաւորուել են հայկական բազմաթիւ ցեղեր: Ոչ մի կասկած, որ հայկական այս գետն եւս իր Արածանի (Արձանիա) անունն ստացել է հայերի Ար աստծու կամ ար ցեղի անունից: Արձանիա անունը յիշեցնում է Աղձնիքի Ալզի — Արզն-Արզանի անուանաձեւը:

Գր. Ղափանցեանը մատնանշում է Արածանիի «Արայի գետ» նշանակութեան հնարաւորութիւնը⁶⁰. տարակոյս չի կարող լինել, որ

59) Գ. Վ. Սրուանձտեանց, «Գրոց ու բրոց», Պոլիս, 1910, էջ 30—31:

60) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունք», էջ 105:

զեան իր անուան Ար սկզբնամասը ստացել է իր շուրջն ապրող ար ցեղի կամ երկու կողմերում տարածուող Ար երկրի անունից, որը պահպանուել է նրա մի մասի՝ Հարք շրջանի անուան մէջ: Արածանիի վրայ է գտնուում ոչ թէ միայն Հարք շրջանը, այլև Աշտիշատը (Ար-դիշատը)՝ Ար աստծու հնագոյն մեհեանը, ար ցեղի նշանաւոր սրբա-վայրը: Արածանիի եւ Աշտիշատի մօտ են գտնուել այլ հայկական հե-թանոսական սրբավայրեր, որոնցից մէկը քրիստոնէութեան ժամա-նակ փոխակերպուել է Ս. Կարապետ անունը կրող վանքի, որը նոյն-պէս կարեւոր տեղ է զբաղեցրել հայ ժողովրդի կեանքում: Արածանին ար-երի հարազատ եւ սուրբ զեան է, որի շուրջ աճել ու բազմացել են հայկական նայիրեան բազմաթիւ ցեղեր, որոնց մասին դեռ կ'անդ-րադառնանք այս աշխատութեան մէջ:

դ) ԷՐԻԱՆԻ

Ըստ մեր աւանդութեան՝ արմէնները Հարքից Արածանիի ուղ-ղութեամբ շարժուել են, աւելի ճիշդը՝ տարածուել են դէպի արե-ւելք՝ տարածման տերիտորիաների վրայ իրենց ցեղանուամբ բնակու-թեան վայրեր հաստատելով: Նրանցից ուշադրութիւն են զբաղում կամ արդէն ճանաչելի են Արամանա բնակավայրը Բաղրեւանդ գաւա-ռում, Երիտա լեռը Մաղկանց լեռնաշղթայում, եւ նրա ստորոտում գտնուող Արամալէ քաղաքը, Արմունիա քաղաքը Վասպուրականի լեռների հիւսիսային հատուածում: Արածանիով դէպի վեր տարա-ծուելով խորացած պիտի լինեն (զետի երկու կողմերին ուղղահայեաց դժով) դէպի աջ եւ դէպի ձախ: Ուստի տեսնում ենք, որ ար-երը տա-րածուել ու լցրել են Վանայ ծովի հիւսիսային շրջանները, որի արե-ւելեան ծայրում են գտնուում Արբու քաղաքը (ըստ Սարգոնի՝ Ռու-սայի հօրենական քաղաքը), Ռիարը (Սարգուրիի քաղաքը), Արծի-բիդիմի: Հասնելով Արածանիի աղբերակունքների շրջաններին՝ աջից մտել են Մասեացոսն գաւառը եւ կազմել էրիկուախիի թագաւորու-թիւնը, իսկ ձախից մտնելով Արաքսի հովիտն ու Շիրակի շրջանը՝ կազմել են էրիախիի թագաւորութիւնը: Էրիախիից Արաքսի հոսան-քով իջնելով ներքեւ տեսնում ենք Արմաւիրը, ապա արերը ողողել են Արազած լեռան շրջակայքը:

Այստեղ ցանկանում ենք կանգ առնել ար-երի (հայերի) Էրիա-խիական թագաւորութեան վրայ: Էրիախի անուան մէջ տեսնում ենք

ար ցեղը (արմէններին), որից դուրս է մեր զեան ստացել է իր Երասխ (Արաքս) անունը: Էրի-ախի նշանակում է «ար-եան կամ Արա-եան»⁶¹, հոմանիշ է Ար-խի անուան: Էրի - (ախին) Ար անուան այն ձեւն է, որին մենք դիտենք Պղատոնի եւ Պլուտարքոսի յիշած Armenios-ի որդի Էր-ի անունից եւ Բեռլինի պապիրոսի վրայ յիշուած Eros-ից: Էրի-ախի անուան Էրի սկզբնամասը հենց ուրարտական Էրի-մենա (Արա-ման-եակ)-ի սկզբի Էրի-ն է, որը Արա-ի տարբերակ է: Անտարակոյս է-րիախի ցեղանունն է կրում Դարեհի Բեհիստունի արձանագրութեան մէջ յիշուած հայ («արմին») Արախան:

Այդ արձանագրութիւնը ոչ թէ միայն վկայում է, որ Արախան արմէն էր, այլև յիշում է, որ նրա հօր անունը Խաղդիտա էր: Այս երկու հանգամանքները միանգամից մեր ուշադրութիւնը տանում են Ուրարտուի (Խաղդի) ժամանակների Էրիախիին, մանաւանդ որ հա-զիւ 70 տարի անցած պիտի լինի Ուրարտուի անկման եւ Արախայի՝ Դարեհի կողմից յիշուելու ժամանակների միջեւ:

Կարծում ենք, որ Արախայի փաստը (նրա արմէն եւ Խաղդի-տայի որդին լինելը) կասկած չի թողնում, որ Էրիախի ցեղը եղել է հայկական, իսկ Էրիախի անուան առաջին մասը հենց ար (հայ) ցեղի կամ նրա Արա աստծու անունն է, իսկ -ախի, -խի, -ուխի կամ -ախա վերջաւորութիւնը (-եան իմաստով) տեսնում ենք այլ անունների ծայրում, ինչպէս՝ Էրիկուախի, Արեւիանիսի, Դիաուիսի, Չարախա եւ այլն:

Էրիախիի կապակցութեամբ այստեղ ցանկանում ենք ուշադ-րութիւն հրաւիրել մի շատ կարեւոր հանգամանքի վրայ, որը մեծ նշանակութիւն ունի Հայաստանում արերի (հայերի) թողած հետքերի ճանաչման եւ ուսումնասիրութեան համար: Դա այն է, որ ինչպէս սեպագրական՝ այնպէս էլ Մեսրոպեան ժամանակաշրջանի Հայաս-տանի ցեղանուններից ու տեղանուններից շատերը ունեն Ար-, Եր-, (քիչ քանակով Իր-, Որ-, Ուր-,) սկզբնաձայնները: Այս երեւոյթը ցոյց է տալիս (եւ դժուար է բացատրել այլ կերպ), որ նրանք (մեծ մասով) եղել են արեր (հայեր) եւ ար ցեղերի բնակութեան վայրեր:

Ար- ձեւերի կողքին եր- ձեւերի գոյութիւնը շատ պարզ ցոյց է տրուել մեր մեծահմուտ դիտնականներ Հ. Աճառեանի եւ Էդ. Ա-ղաջեանի ուսումնասիրութիւնների մէջ: Էդ. Աղաջեանը այս մասին գրում է. — «Իր «Հայոց լեզուի պատմութեան» երկրորդ հատորում՝

61) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունք», էջ 27:

քննութեան առնելով բարբառային հնազոյն տարբերութիւնները հարցը՝ մեծալատակ հայագէտ Հրաչեայ Աճառեանը յատուկ ուշադրութիւն է դարձնում հին հայերէնի ր կամ դ-ով սկսուող բառերի սկզբում աւելացած ա կամ ե ձայնաւորները վրայ եւ, հաւաքելով այն բառերը, որոնք ունեն դուրսաձեւեր, այսինքն՝ մէկը նախահունչ ա-ով, միւսը՝ ե-ով, գտնում է, թէ «կարելի է ընդունել, որ այդ երկուսը բարբառային ձեւեր են»:

Այդ բառերը հետեւեալներն են.

աղաւնի — եղունիկ, եղինիկ

եկ, եկն — աղալ, աղիք

եղբայր — աղբայր, աղբար, աղբէր

եղիմ — աղիմ, աղինճ, եղինջ (նաեւ լէղիմ, խաղինջ)

եղունգ — աղունգ, օղունգ, ուղունգ, դունգ, ըղինգ, ղինգ

եղջիւր — աղջիւր, աղջեր

երագ — արագ

երայսայ — արայսայ

երաշտ — արաշտ

երակ — արակ

երեկոյ — յարակու, հարակու

երեսում — արասուն, յարասուն

երեւալ — արեւալ

երինջ — արինջ

երկաք — արկաթ

երկամ — արկան, արկանք

երկու — արկու, օրկու

...ուսումնասիրելով մեր բարբառներում այդ բառերի ձեւերը... պէտք է եզրակացնել, որ իրօք մեր հիմնական բարբառները բաժանում են երկու խմբի, նրանցից մէկին բնորոշ է ա-ով ձեւը, միւսին՝ ե-ով ձեւը»⁶²:

Ուստի պիտի չկասկածել, որ էրիախի (կամ Երիախի) եւ Արախա նոյն անունն են ներկայացնում եւ նոյն նշանակութիւնն ունեն (էրիական⁶³, արեան կամ Արաեան)⁶⁴, թէ եւ մէկն անուանումն է ցեղի եւ նրա երկրի, իսկ միւսը՝ անձի:

62) Էդ. Ազոյեան, «Բարբառային հնագոյն տարբերութիւնները հայերէնում», «Տեղեկագիրք» ՀՍՍՌ գիտ. ակադ. հաս. գիտ. 1958, ԲԻ 5, էջ 67—68:

63) Գր. Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը», էջ 181:

64) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 27:

Ե) ԱՐԱԳԱԾ ԵՒ ԱՐԵԻԻՔ

Արերը (հայերը), ինչպէս ասացինք, ողողել են Արագած լեռան շրջակայքը: Եւ հենց Արագած լեռն էլ կոչել են իրենց արեւ-ասածու Արա անունով:

Հին ժամանակների լեռնարնակ ժողովուրդները հաւատում էին, որ աստուածները բնակում են բարձր տեղերում՝ լեռների վրայ կամ գագաթին: Այդ հաւատքը մենք տեսնում ենք անգամ Հարաւային Միջագետքի դաշտավայրում սպրոզ, բայց հայկական լեռնալսարհից իջած, սումերների մօտ, որոնք իրենց աստուածների բնակութեան համար կառուցում էին զիլուրատներ (նման Բաբելոնի բարձր աշտարակի) եւ աստուածների մեհակները կամ գահերը տեղադրում էին ամենաբարձր տեղում: Մենք գիտենք նաեւ, որ Յունաստանում աստուածներն սպրում էին Օլիմպոս լեռան վրայ: Այդ հաւատքն անկասկած պիտի աւելի ուժեղ լինէր արեւի ասածու վերաբերմամբ, որի ներկայացուցիչն էր աշխարհի վրայ հուրը, իսկ հուրը (հրաբուխը) բխում էր լեռների կատարներից, ուստի, անտարակոյս, մի լեռան շուրջ սպրոզ արեւապաշտ ժողովրդի ասածու գահն էլ պէտք է գտնուէր այդ լեռան գագաթին, կամ հենց լեռը ամբողջութեամբ պէտք է համարուէր իրենց արեւի ասածու գահը:

Հենց այդ է ցոյց տալիս Արագած անունն ներքին նշանակութիւնը, որն այդքան մեծ ճշդութեամբ ցոյց է տուել Ղափանցեանը իր «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատութեան մէջ:

Ղափանցեանը Արագած լեռնանունն մասին գրում է. «Ինքը բառը անտարակոյս Արայի հետ է կապուած եւ բաղկացած է Արա եւ «գած» չարհուած հասարակ անունից, որը նշանակել է «գահ», այսինքն՝ Արագածը նշանակել է տառացի՝ Արայի գահ: Նման կազմութիւն է ունեցել Միւնիքի հին Գեղարքունի շրջանի Մեհոզած գիւղանունը... եւ պիտի նշանակէ ուրեմն «Միհրի գահ» («հր» հնչիւնակազմը դառնում է հետագայում «հ», օրինակ, Մեհեւանգակ, ամեհի, մեհեան, մեհեկան եւ այլն նոյն Միհր աստուածանունից...): Իսկ «գած» (=գահ) բառը Արագած եւ Մեհոզած անունների մէջ դալիս է կամ ուրարտացիներից, ուր guza կամ gutsa («գուծա») նշանակում է «գահ» (համարում է սումերական բառ): Հին ժամանակ շատ էին սիրում աստուածներին բազմեցնել սարերի կամ բլուրների վրայ: Որ Արագած տառացի նշանակել է Արայի գահ, ինչպէս եւ Մեհոզած՝ Միհրի գահ, գրանում ոչ մի կասկած չի կարող լինել եւ ի դուր չէ,

որ Արազածի «կըզըլ Զիարաթ» (= Կարմիր սրբատեղի) կոչուած տեղում, ըստ ժողովրդի ասելուն, գտնուած է մի մեծ երկար քարասեղան (= դահ, թախտ), որի շուրջը դրուած են փոքր աթոռներ այլ եւ այլ գծազրութիւններով: Արազածի բառակազմութեան համար համեմատել մեզ մօտ «Աթոռ նահատայ» (= Անահատայ) լերան անունը, որ բերում է Փ. Բիւզանդացին, ինչպէս պարսկերէնը նման առումով հեղաշարժ կազմել է Շահթախտ, թախտի Սուլէյման եւ նման տեղանունները⁶⁵:

Հետաքրքրականն այստեղ նաեւ այն է, որ Մեհոզածը, ինչպէս Արազածը նշանակում է արեւ-կրակ աստծու դահ: Հաւանաբար Արազածի հրաբխային գործունէութիւնը լրիւ չէր յանգել երբ կոչուեց Արազած՝ «Արայի դահ»:

Արեւը (հայերը) իրենց բնակութեան վայրերում միայն Արազածն ու Արայի լեռը չէ որ կոչեցին Ար աստծու անունով: Մենք հանդիպում ենք նաեւ այլ տեղեր այդ անունով կոչուած լեռների, օրինակ՝ կայ Նր լեռը «Այրարատայ վանանդ գաւառի Զարիշատ վիճակի մէջ, (որը) բարձր է 2400 մետր»⁶⁶:

Սալմանասար Գ-ը յիշում է Երիտիա լեռը Ծաղկանց լեռներում Ուրարտուի դէմ կատարած արշաւանքի առթիւ: Փաւստոս Բիւզանդը յիշում է Առեւծ լեռը («...եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչեւ ի լեռան, որ անուանեալ կոչի Առեւծ»)⁶⁷: Առեւծ-ը ի հարկէ պիտի հասկանալ Առեւծ, որը հնում խորհրդանշել է հուրն ու արեւը (Արան). այս մասին դեռ կ'անդրադառնանք:

Այսպէս ուրեմն, Արազած նշանակում է Արայի դահ: Ովքե՞ր էին այդ լեռան անունը Արազած կոչողները. կասկած չի կարող լինել, որ դրանք արեւն (հայերն) էին, որոնք շատ հին ժամանակներից (Ուրարտուից շատ առաջ) ապրելով այդ լեռան շուրջ՝ իրենց Ար կամ Արա (արեւի) աստծու անունով այն կոչեցին Արազած («Յայսմ խորութեան դաշտին բնակեալ Արամենակայ, շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, եւ զտան լեռինն ի նոյն կողմանէ, եւ զլեռան անուանէ յանդազոյն յիւր անունն Արազած, եւ զկալուածսն՝ Ոտն Արազածու») (Սոր. Ա. Ժբ.), իսկ այդ արեւը ոչ թէ միայն Էրիտիայի

(Արայեան) ժողովուրդն էին, այլեւ Էտիունի-ի ժողովուրդը, որոնց մէջ գտնուած էր (Արազածից արեւելք) Արայի լեռը (= այժմ «Մաղկեվանք» սարը) եւ նրա ստորոտում էլ՝ Արայի գիւղը... իսկ այս գիւղի դիմացի բլուրն էլ կոչուել է «Շամիրամի բլուր»⁶⁸:

Էտիունիի ժողովրդի՝ արեւ (հայեր) եղած լինելը ցոյց են տալիս տեղագրական եւ այլ նշաններ: Էտիունին տեղագրում են Կոտայքում: Կոտայքում, Հրազդանի ձախ կողմը, կայ դեռ յայտնի եւ հինաւուրց Արդնի պարսպապատ բնակավայրը: «Արդնիի հին մեծութեան վկայք են պարսպաց եւ բազմաթիւ ամայի տանց աւերակներն...: Գիւղիս մօտ, ձորի մէջ կան բազմաթիւ քարայրներ, որոնց մէջ կը պատսպարուէին Արդնի բնակիչք...»⁶⁹: Արդնի անունը հենց Աղծնիքի Ալդի կամ Ալդինի (Ալդինի = Արդաննէ, Արդան) երկրի եւ Արդն քաղաքի անուան յիշատակն է պահուած (ինչպէս Կարինի մօտ գտնուող Արդն քաղաքը), որին արեւը բերել են այդ շրջաններից աստիճանաբար տարածուելով դէպի այս շրջանները Ուրարտուի որպէս պետութիւն ասպարէզ իջնելուց շատ առաջ:

Կոտայքում կար նաեւ Արամուս կամ Արամոնք անունով հին բնակավայրերը. Եղիշէն այն անուանել է Երամոնս, Ասողիկը՝ Արամոնեաց, Սամուէլ եւ Կիրակոս պատմիչները այն կոչել են Արամոնք: Այս գիւղի մօտ եղել է Արախուս կոչուած վայրը⁷⁰: Արախուս(ս) ի հարկէ յիշեցնում է Էրիտիայի կամ Արախա անունը: Այս բոլորից յետոյ, կարծում ենք, ոչ մի կասկած չի կարող լինել, որ Էտիունիի ուժեղ թագաւորութիւնը կազմող ժողովուրդները բազկացած էին արեւից (հայ-արմէններից):

Քանի որ խօսք բացուեց Էրիտիայի եւ Էտիունիի հարեւանութեան մասին, ապա պէտք է նշենք, որ եթէ արմենական Էրիտիայի եւ Էտիունիի ցեղերը այս շրջանում տարածուել են դալով Հայկական լեռնաշխարհի այլ վայրերից, ապա այդ տեսակէտով շատ հետաքրքրական է Աշուր-Նաղիր-Պալ Բ-ի մի արձանագրութեան մէջ յիշուած եւ նոյնպէս իրար հարեւան եղող Urini, Aruni եւ Etini կոչուած լեռները, որոնք գտնուած էին Հայկական լեռնաշխարհում Տումմէ երկրում: Բերում ենք արձանագրութեան մեզ հետաքրքրող մասի թարգմանութիւնը. «...Ես զօրակոչեցի իմ մարտակառքերին եւ բա-

65) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունքը», էջ 98—99:

66) Հ. Ա. Էփրիկեան — «Պատկերագրող Բնաշխարհիկ բառարան» հատ. Ա, Բ տպ. վեցնտիկ, 1903—1905, տես էջ:

67) Փաւստոսի Բիւզանդացույ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, էջ 113:

68) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունքը», էջ 99 — 100:

69) Հ. Ա. Էփրիկեան, նոյն տեղում, տես «Արգմի»:

70) Նոյն տեղում, տես «Արամուս կամ Արամոնք»:

նակներին, անցայ սրաթեք լեռների վրայով, դժուար ճանապարհներով, որոնք չէին պատրաստուել մարտակառքերի եւ դորքերի անցման համար, եւ քայլեցի Tumme երկրի վրայ: Նրանց ամրացուած Libé քաղաքը եւ Surra, Abuku, Arura եւ Arubé քաղաքները, որոնք գտնուած են Urini, Aruni եւ Etini լեռների վրայ, ամրացուած քաղաքներ, եւ գրաւեցի...»⁷¹:

Ինչպէս պարզ երեւում է, Urini, Aruni եւ Etini լեռները հարեաններ են, ինչպէս Eriahi եւ Etiuni երկրները: այս երեւոյթը թեւազրուած է այն միտքը, որ Urini, Aruni եւ Etini լեռների բրնակիչներից որոշ խմբեր շարժուել են վեր եւ հաստատուել աւելի նպաստաւոր վայրերում, որոնց Eriahi եւ Etiuni անունները պահում են իրենց մայր երկրների անունների յիշատակը, ի հարկէ ուշադրութիւն է գրաւում եւ այն, որ Urini եւ Aruni (հմմտ. Urme եւ Arme) լեռնանունների Uri կամ Aru արմատը երեւում է նաեւ նոյն լեռների վրայ գտնուող Aru - ra եւ Aru - bé քաղաքանունների մէջ. այս բոլորը խօսում են այն մասին, որ այս անունների մէջ նստել է մեր Արա-ն, որով այդ լեռների ու քաղաքների բնակիչները արեւ (հայեր) էին: Urini, Aruni եւ Etini անունները անկասկած պատկանում են իրար մօտ ազդող հայկական ցեղերին, եւ ինչպէս Eti - ni-ն հենց Eti - uni անունն է վերջաւորութիւնների -ni եւ -uni տարբերակներով, այնպէս էլ Uri - ni եւ Aru - ni անունները հենց Eri-ahi (Ar-aha) տերմինն է վերջաւորութիւնների -ni եւ -ahi ձեւերով:

Կասկած չկայ, որ Etini եւ Etiuni անունները նոյն ցեղի տարբեր բնակավայրերի անուններ են: Կարծես այս Eti - ni անունը, որ գտնուած է Uri - ni, Aru - ni, Aru - ra եւ Aru - bé անունների շքրջանակում՝ ունի հենց նրանց բնոյթն ու նշանակութիւնը, այսինքն՝ բոլորն էլ հայկական են եւ պահում են արեւի աստճոյ Արա եւ Առաֆ անուանաձեւերը: Մեզ յայտնի է, որ Եգիպտոս հարս գնացած Միտանիի իշխանուհու ազդեցութեամբ՝ Իինատոնը Եգիպտոսում հաստատեց արեւի տիակ Ատոն-ի պաշտամունքը: Ատոնը մեզ համար օտար չէ. նրանից պահում ենք սօֆի բառը. իսկ մեր կարծիքով Etini եւ Aton անունները նոյն ծագումն ունեն եւ երկուսն էլ Արային հա-

մարտէք: Մանաւանդ որ Etini-ն եւ Aruni-ն ինչպէս Արազածը (որ նուիրուած է Արա-արեւին) լեռնանուն են: Եթէ մեր այս ենթադրութիւնը ճիշդ դուրս գայ, ապա կարող ենք այս Eti արմատը համեմատել մեր տի «մեծ, աստուած» բառի հետ (այս բառի մասին խօսեցինք տի-ար եւ տի-կին բառերի ստուգարանութեան առթիւ): Eti - ni եւ Id - ni (տես էջ 168) լեռնանունները համեմատել նաեւ հայերէնի դի-է բառի հետ: Ուստի գտնում ենք, որ Eti(ni)-ն հայկական նախրեան ցեղերից մէկն էր, որի մի ճիւղը (Etiuni) Կոտայքում Ուրարտուի ժամանակներին ստեղծել էր կոնֆեդերացիա:

Էտիունիից հարաւ գտնուած էր Ազա երկիրը, որի մէջ, ինչպէս ցոյց է տուել Ն. Վ. Յարութիւնեանն իր մի նոր աշխատութեամբ⁷², մասնում էր ոչ թէ միայն Արդիշտիխիխիլի — Արմաւիրը, այլեւ Տէյչերախինին Երեւանի շրջանով հանդերձ: Etiuni-ի մօտ գտնուող Aza երկրի անունն էլ պիտի սերունդը լինի Etiuni-ի շրջանակում գտնուող Azu լեռնանունան. տես էջ 168:

Արդիշտին արդէն իր օրերին գրաւել էր Ազաին ու միացրել Ուրարտուին՝ Արմաւիրում կատարելով մեծ շինարարութիւն եւ հիմնադրելով էրեբունիի ամուր բերդը (մեր կարծիքով) որպէս յենարան ոչ թէ միայն էտիունիի դիմադրութիւնը կտարելու, այլ յատկապէս այս կողմից հիւսիսային թշնամի ցեղերին զսպելու եւ նուաճելու համար: Ազա երկրի ժողովուրդը նոյնպէս արեւ (հայեր) էին:

Ի հարկէ արեւը Արաքսի հոսանքով իրենց ծաւալման մէջ չեն կանգնել Ազայում, այլեւ ծաւալուել են աւելի հեռու, ոչ թէ միայն ողողելով Նախիջեւանի, այլեւ Մեղրիի շրջանը, որտեղ իրենց ներկայութեան դրոշմն են դրել Արեւիք (Արեւեաններ) անուան մէջ:

Մեր տեսակէտով Արեւիքի շրջանը շատ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում յատկապէս այն պատճառով, որ իր մօտ ու կողքին գտնում ենք Բաղք կոչուած շրջանը եւ Մեղրի անունով գետը:

Ինչպէս ցոյց էինք տուել մեր աշխատութեան Ա զլխում, նախամ-Սինը մի յատուկ արշաւանքով նուաճել է Արմանի-ն Աղձնիքում եւ Իրլա-ն Բալահոյտի (Բալուի) եւ Բաղնատան (Բաղին բերդի) շքրջաններում, սակ էինք միաժամանակ, որ այս երկու երկրները՝ Արմանին եւ Իրլան հարեւաններ են եղել: Եւ ահա երբ հետեւում ենք Արմանիի արմէնների մի մասի շարժման կամ տարածման մինչեւ Ա-

71) D. Luckenbill, մշուած գիրքը, էջ 142:

72) Ն. Վ. Յարութիւնեան, «Ուրարտական նոր սեպագրեր» (ուսերէն), Երևան, 1966 թ.

րաքսի ստորին հոսանքները, մինչև այս օր (կարծես) տերմինալ հանդիսացող Արեւիքը, տեսնում ենք, որ այս շրջաններում, Արեւիքի արերի (արմէնների) կողքին՝ Միւնիքի Բաղարեղը և Բաղք (Բաղաց աշխարհ) կոչուած վայրերում, եկել ու բնակութիւն են հաստատել նոյնպէս՝ մայր ելակէտում (Արմանիում) արերի հին հարեւաններն եղող (Իրլայի՝ Բալահովտի և Բաղնատան) Բալերը⁷³: Հետաքրքիր է և այն, որ Արմանիի և Իրլայի (Բալուի) շրջանի մօտ և Մեղրա-դեախի⁷⁴ շուրջ ապրող Մեխրի ցեղի մարդիկ նոյնպէս եկել և Արեւիքի ու Բաղքի մօտ հաստատուել են մի գետի շուրջ, որին նոյնպէս կոչել են Մեղրի:

Այստեղ մեր նպատակից ու ծրագրից դուրս է եղել քննարկել արմէններին մինչև այստեղ հասցնող պատճառները, ուստի այս կէտում պիտի միայն ասենք, որ այն մղիչ ուժը, որ Արմանիի արմէններին բերել է մինչև այստեղ, բերել է նաև նրանց հարեւան բալերին ու մեխրի մարդկանց: Այս երեւոյթը ինքնին պիտի եւս մի նոր փաստ համարել, որ Արեւիքի արեւապաշտ արերը հենց Արմանի-Ալզիի բնակիչների յետնորդներից էին, որոնց հարեւան էին Բալուն ու Բաղնատունը և Մեղրագետը: Արերը դարեր տեւող իրենց առաջխաղացման ճանապարհներին աճելով տարածուել են ու ծաւալուել և բնակութիւն հաստատել Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արեւելեան բոլոր շրջաններում, յատկապէս Արածանիի և Արաքսի աւազաններում, որոնք Ուրարտուի որպէս մեծ պետութիւն հանդէս դալուց շատ առաջ եղել են նրանց աճի, ճիւղաւորման, զարգացման ու հզորացման օրրանը:

Մենք Սորենացու և Անանունի պահած յիշատակութիւնների հիման վրայ հետախուզական (բայց արագ) ճանապարհորդութիւն կատարեցինք այն ուղիով, որը ցոյց էին տուել մեզ Մար Աբայի կողմից փոխանցուած աւանդական (կամ դրատր) հին տեղեկութիւնները:

73) Հայերի Հայկական լեռնաշխարհի արեւմտեան շրջաններից դէպի արեւելեան շրջանները շարժման մասին անդրադարձել են մի շարք հայագետներ, նրանցից ոմանց և յատկապէս Ղափաճեանի ու շաղաբախից չի վրիպել ման Բալերի այս շարժումը Բալահովտից ու Բաղնատանից դէպի Միւնիքի Բաղարեղ աշխարհը (տե՛ս ման թ. Խ. Յակոբեան, «Ուրարտուի Հայաստանի պատմական աշխարհագրութեան», Երեւան, 1960, էջ 75):

74) Մեղրագետը սկիզբ է առնում Սասունի լեռներից (Բիբլիսի մօտերից)՝ Մեղր(ագետ)ի շուրջ ապրում էր Մեխրի ցեղը: Այստեղ էր Մեխրի երկիրը:

րը: Մենք ճանապարհ դուրս ելանք Նարամ-Սինի յիշած Արմանիից (Ալզիինի-Աղձնիքից), որին համարեցինք ելակէտ, և որը նոյնպէս մարաբայեան յիշատակութիւնների մէջ համարուել է ելակէտ (հնաշուած Բարելունը, որը Ս. Գրքի աշտարակաշինութեան զրոյցի ազդեցութեամբ է մտել մեր առասպելի մէջ): Ալզիինի-Արգանենէ-ից անցանք Աշտիշատ, և Տարօնի դաշտով մտանք Հարք, հասանք Արածանի: Ապա Արածանիի հոսանքով բարձրացանք վեր՛նայելով աջ ու ձախ: Աչք ածելով դէպի հիւսիս տեսանք էլի Արգն (էրզրումի մօտ), տեսանք Արամաւա բնակավայրը, Երիտա լեռը, Արամալէն, Արմունիան: Աչք դարձնելով դէպի Վանայ լճի կողմը՝ տեսանք, որ դոյութիւն ունէին Արքաւ քաղաքը, Ռիարը, Արծիբիտիմի: Հասնելով Արածանիի աղբերակունքներին, Բաղրեւանդից անցանք Մրտախի աւազանը, մի կողմից հանդիպեցինք Էրիկուախիին, միւս կողմից Էրիախիին, Էտիուներին իր Արգնիով և Արամոնքով, ապա տեսանք դահակալ Արագածը, այցեւեցինք Ազալում Արմաւիբին, Էրերունիին և իջանք մինչև Արեւիք: Այս ամբողջ ճանապարհին, մեր հանդիպած բոլոր վայրերում, տեսանք արերին (հայերին)՝ Արայի որդիներին:

Այս ուղին, սակայն, որով անցանք, Հայկական լեռնաշխարհի տարբեր ուղիներից մէկն էր միայն, եթէ անցնէինք մի այլ ճանապարհով, պիտի հանդիպէինք նոյն արերին՝ արեւորդիներին: Համոզուելու համար, ցանկանում ենք վերադառնալ մեր ելակէտը՝ Աղձնիք և այդտեղից դուրս դալ մի այլ ուղիով դէպի արեւելք, Վանայ լճի հարաւով:

գ) ՀԱՐԻԱ

Հայկի և Բելի զրոյցում պահուած յիշատակութիւնները խօսում էին նաև այն մասին, որ Արարազ երկիրը նոյնպէս եղել է Հայկի սերունդների բնակավայրը: Ինչպէս տեսանք վերեւում, Անանունը պահել էր հետեւեալ տեղեկութիւնը. «... Եւ չողաւ կալաւ Հայկն զերկիրն Արարազայ, և բնակեցաւ անդրէն աղբաւ իւրով մինչև ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ դնա կալուած ժառանգութեան Կազմեայ թոռին իւրում, որդւոյ Արամանեկայ եղբաւր Հարմայի...»:

Ասորեստանի արքաների թողած սեպագիր արձանագրութիւնների տուեալները փաստում են մեր ազգային աւանդութեան պահած տեղեկութիւնները:

Տիգլաթ-Պալասար Ա-ը իր գահակալութեան երկրորդ տարին երկրորդ անգամ լինելով արչաւում է Կուամուխի երկրի վրայ: Կուամուխին նորից նուաճելուց յետոյ, նոյն տարին, արչաւում է Կուամուխի հարեւան մի (ընդարձակ) երկրի վրայ, որին նա կոչում է Հարիա: Այս երկրի նուաճման առթիւ բերուած մանրամասնութիւնների տուեալները ցոյց են տալիս, որ Հարիան գտնուելով Վանայ ծովի հարաւում՝ տարածուած էր երեւի Աղձնիքից մինչեւ Մուսասիր՝ ներառնելով Արարադ երկիրը: Արարադը, ինչպէս տեսանք, յիշուած է մեր աւանդութեան մէջ որպէս Հայկի եւ Արամանեակի սերունդների բնակավայրը: Այդ բնակավայրը տուել է որպէս ժառանգութիւն Հարմայի եղբայր Կաղմոսին, որը պատմագրութեան մէջ համարուած է Կուամուխի երկրի իպոնիմը: Դա նշանակուած է, որ Կուամուխի եւ Արարադ (Հարիա) երկրները բնակիչները, լինելով Հայկի եւ Արամանեակի սերունդներից, ցեղակից էին: Այդ ցեղակցութեան համար ի հարկէ փաստ է նաեւ այն, որ Կուամուխի օգնութեան էին եկել Հարիայի բնակիչներից մարտիկներ, երբ այն յարձակման էր ենթարկուել Ասորեստանի կողմից: Սա միանգամայն ցոյց է տալիս, որ Հարիա (Հարիա) անունը, ինչպէս Հարք (Հարք) անունը հենց երկրի բնակիչների՝ արերի ցեղային անունն է ներկայացնում: Հարիա-ն Արիա է, ինչպէս Հարքը՝ արք: Իր կարեւորութեան համար բերում ենք այս արձանագրութեան տեքստի մեզ հետաքրքրող մասի թարգմանութիւնը կրճատումներով. «Որ ես պէտք է քայլեմ հռչակուած հորութեամբը Աշուրի՝ իմ տիրոջ, Հարիա երկրի եւ յայնասփիւռ քուրտէ գորքերի դէմ բարձր բլուրների (վրայով), որտեղ ոչ մի թաղաւոր չէր մտել, Աշուրը՝ իմ տէրը, հրամայեց: Ես հաւաքեցի իրար մօտ իմ մարտակառքերը եւ իմ գորքերը Idni եւ Aia լեռների միջեւ՝ մի դժուար շրջան, ես բռնեցի ճամբան: ... Լայնասփիւռ քուրտէ⁷⁵ գորքերը ամբողջութեամբ խմբուել էին իրար մօտ եւ խիզախօրէն դիրք էին բռնել Azu լեռան վրայ՝ պատերազմելու, կռուելու եւ ճակատամարտ տալու համար: Ես կռուեցի նրանց հետ լեռան վրայ՝ մի դժուար շրջան, եւ յաղթեցի նրանց: ... Լեռների կատարներում գտնուող քաղաքների դէմ ես ուժգին ճնշում գործեցի: Հարիա երկրի

75) Գորքերի եւ նրանից յետոյ ուրիշներ Kurté հնչուած սեպագրերը կարդում են բարի, տե՛ս պրոֆ. Խաչատրեան, «Հայաստանի սեպագրակաճ շրջանի բնագիտական պատմութիւն», էջ 26:

քանհինգ քաղաքներին, որոնք գտնուած էին Aia, Šuira, Idni, Šēzu, Selgu, Arzanibiu, Urusu եւ Anitku լեռների ստորոտներում, ես գրաւեցի: Նրանց աւարը, նրանց ինչքը եւ նրանց ունեցուածքները ես տարայ: Նրանց քաղաքները այրեցի կրակով. ես աւերեցի, կործանեցի (դրանք)⁷⁶: Ուրեմն Հարիան ու Բարխին (Պարխին) նոյն երկիրն է:

Ինչպէս երեւում է բերուած տեղեկութիւններից, Հարիան բաւական ընդարձակ երկիր է, որտեղ յիշուած են առանձին անուն ունեցող ութ գժուարանցանքի լեռներ: Ի հարկէ այնտեղ կային եւ այլ անուններ, որոնք չեն յիշուել, որոնցից ինչպէս գիտենք Արարադ լեռների արեւմտեան շրջանում Արուժա կոչուած լեռը, որի վրայ (ինչպէս գիտենք) Տիգլաթ-Պալասարը կռուեց Շարասուշի եւ Ամմաուշի ուժերի դէմ:

Այսպիսով, տեսնում ենք, որ Աղձնիքից արեւելք, Վանայ ծովի հարաւում տարածուող շրջանները՝ դրանց մէջ Ararad լեռներիկը, Urūni, Aruni եւ Etini լեռները, Arura եւ Arubē քաղաքները, ընդարձակ Haria երկիրը պատկանում էին արերի հետքերով: Այստեղ Հարիայի մասին մեր խօսքը փակելուց առաջ ասենք, որ Հարիա անունը շատ չի յիշուած Ասորեստանի արքաների թողած արձանագրութիւնների մէջ, մինչդեռ յաճախ է յիշուած Նաիրի անունը:

76) D. Luckenbill, հշուած գիրքը, էջ 78 - 79:

ԳԼՈՒԽ Ե.

Ն Ա Ի Ր Ի

Նախընտրելի անունը յիշուած է մի քանի ձեւերով՝ եզրուածական արձանագրութիւնների մէջ՝ Նախարի-նի կամ Նախրի-նա¹, խեթական արձանագրութիւնների մէջ՝ Նիիրի-յա կամ Նիիր-յա¹, ասուրական արձանագրութիւնների մէջ՝ Նիրի, Նաիրի ձեւով:

Մեզ հասած ամենահին յիշատակութիւնը գտնուած է եզրուածական արձանագրութեան մէջ: Միտանիների թագաւոր Տուշրատայի՝ Եզրուածական փարաւոն Ամենոփիս Գ-ին (1408-1372 մ. ա. թ.) գրած մի նամակի վրայ Եզրուածական արքունի զաւիրը կարմիր թանաքով մակագրել է. «Հասել է ձմրան ամսու տասներորդ օրը, երբ արքունիքը գտնուած էր հարաւային Աթոսանիստը (Թերէ) կա-եմ-եխուա բուրգում: Նահարիների նամակի կրկնօրինակը, որ բերին պատգամաւորներ Պրիցցի եւ մէկ ուրիշը»...: Երբ Ամենոփիս Գ (1408-1372 մ. թ. ա.) կնութեան է տունում Միտանի թագաւոր Սուտանա Ա-ի դուստր Գիլուխեպային, հրամայում է այս հարսանեկան հանգէսը յուերժայնէլ բզեզակնիքով (Skarabeus) ու վրան արձանագրել տալիս. — «Ամենհոտէպ Գ-ի (= Ամենոփիս Գ) տասներորդ տարին (նրա կինը Տէյ, որա հայրը՝ Հիուա եւ մայրը Տուխա) մի հրաշալի դէպք [պատահեց] նորին մեծութեան հետ. Նախարիների իշխան Սուտանայի դուստր Գիլուխեպա ու նրա կանանցից ամենալաւերը՝ 317²...»:

¹) Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմութիւն», Երևան, 1933, էջ 19:

²) Նայն տեղում, էջ 7 - 8:

Նիրի ձեւը յիշուած է Ասորեստանի Սարմանասար Ա-ի (1280-1261 մ. թ. ա.) արձանագրութեան մէջ. նա գրել է. «Սարմանասար՝ ... արքայ Ասորեստանի, որդի Աղադ-Նիրարիի... որ տիրեց... Նիրի, Լուլուի... եւ Մուարի...»³:

Ասորեստանի արքաները ընդհանրապէս բերում են Նաիրի ձեւը:

Արձանագրութիւնների տուեալներից պարզ երեւում է, որ Նաիրին յատուկ ցեղի կամ ցեղերի անուն չէր. այն աշխարհագրական տերմին էր, տրուած՝ Ասորեստանի եւ Միջագետքի հարթ տարածութիւնների հիւսիսում բարձրացող Հայկական լեռնաշխարհին, որտեղ ապրում էին Նաիրեան բազմաթիւ ցեղեր:

Սէյսը եւ մի քանի այլ ուսումնասիրողներ, աչքի առջ ունենալով Շամսի -Աղադ Ե-ի արձանագրութեան մէջ Na'iri (Նահիրի) ձեւը՝ Նաիրի անունը մեկնեցին որպէս «գետերի երկիր»՝ երեւի ելնելով ակկադերէնի nāru «գետ» եւ արարերէնի נַחַר nahr «գետ» բառերից: Նոր արձանագրութիւնների յայտնաբերումից յետոյ, սակայն, այս մեկնութիւնն արդէն կորցրել է իր ուժը, եւ գտնում են, որ այն չի համապատասխանում արձանագրութիւնների մէջ Նաիրի տերմինի ներկայացրած աշխարհագրական շրջաններին:

Ի հարկէ Նաիրի անունն հետ կապ չունի «գետ» նշանակութիւնը, այն չէր կարող նշանակել «գետերի երկիր», որովհետեւ Նաիրի ասելով՝ արձանագրութիւնների տուեալներից հասկացւում է նաեւ այնպիսի «հեռուոր լեռներ» որոնք շատ հեռու էին Միջագետքից՝ ما بين النهرين ma bein el nahrein «երկու գետերի միջի» երկրից:

Ասորեստանի Տուկուլտի — Ուրտա Ա-ը (մօտ 1250 մ. թ. ա.) Նաիրի երկրներին յիշում է որպէս «հեռուոր լեռներ»: Նա գրում է. «Հեռուոր (?) լեռներ, ուր ոչ մի ճանապարհ չկար, որի անցուղիները ոչ մի (առաջուայ) թագաւոր չգիտէր, ուժովը իմ գերազանց հզօրութեան եւ անցայ եւ Նաիրի երկրների 43 արքաներ (որ) խիղախօրէն դէմ էին կանգնել, պատերազմ տուեցին. եւ կռուեցի նրանց հետ...»⁴:

Ոչ մի կասկած, որ Նաիրի տերմինը կապուած է Ասորեստանի նկատմամբ դէպի հիւսիս գտնուող «հեռուոր լեռներ»-ի հետ, յատ-

3) Նոյն տեղում, էջ 22:

4) D. Luckenbill, Ֆշում գիրքը, էջ 50:

կապէս, ինչպէս ցոյց կը տանք ստորեւ, Հայկական լեռնաշխարհի այդ ժամանակներին գործող հրաբուխների լեռների հետ:

Նաիրին չունի յատուկ եւ որոշ սահմաններ: Այսուհանդերձ արձանագրութիւնների տուեալների գումարից ելնելով՝ կարելի է Նաիրին մօտաւորապէս սահմանադրել հարաւից Կաշխարի եւ Ուրուատրի, արեւելքից Վասպուրականի (Կուտուրի), հիւսիսից Հայկական Պար լեռնաշղթաներով, իսկ արեւմուտքից՝ Տիարբեկիբ — էրզրում գծով: Այս շրջագծի մէջ Նաիրի կենտրոնը կազմում էր Վանայ ծովն ու նրա անմիջական շրջապատում գտնուող լեռները:

Այս մասին Տիգլաթ — Պալասար Ա-ը (մօտ 1100 մ. թ. ա.) Նաիրի երկրների վրայ կատարած արշաւանքի մասին գրած արձանագրութեան մէջ ասում է (բերում ենք կրճատումներով՝ միայն մեզ հետաքրքրող մասերը).
«Այդ ժամանակ, հռչակուած հզօրութեամբ Աշուրի... քայլեցի դժուար ճանապարհների վրայով եւ սրաթեք անցքերի միջով, որոնց ներսերը (սիրտը) նախկին օրերի ոչ մի արքայ չգիտէր, դէպի երկրները հեռուոր արքաների, որոնք վերին ծովի եզերքներում են եւ որոնք բնաւ չգիտեն հպատակութիւն... անցայ... տասնվեց հզօր լեռներ իմ մարտակառքով, որտեղ երկիրը լաւ էր, եւ որտեղ այն դժուար էր՝ եւ տաշեցի իմ ճանապարհը բրոնզէ կացիններով: Ուրում մի ծառեր՝ ծառեր լեռների, եւ կտրեցի, շինեցի ամուր կամուրջներ... անցայ Եփրատը... 23 արքաներ Նաիրի երկրի հաւաքել էին իրենց մարտակառքերը եւ բազմութիւնները իրենց երկրներից եւ յառաջացել էին պատերազմելու եւ դիմադրելու: Մոլեղնութեամբը իմ սոսկալի դէնքերի յարձակուեցի նրանց վրայ եւ բերեցի կործանում նրանց լայնասիրու գօրքերին... 60 արքաներին Նաիրի երկրների, ինչպէս եւ նրանց, որոնք եկել էին սրանց օգնութեան, եւ հալածեցի ծայրովն իմ նիզակի դէպի վերին ծով: ... Իմ ձեռքերը ձերբակալեցին բոլոր արքաներին Նաիրի երկրների. եւ դժացի այդ արքաներին եւ ինայեցի նրանց կեանքը... Ես նրանց ազատ թողեցի...: Սիենի-ն՝ արքան Դայաէնի երկրի, որը չէր յանձնուել Աշուրին՝ իմ տիրոջ, եւ բերեցի զերի...»⁵:

Ինչպէս պարզ երեւում է, Նաիրեան 23 եւ 60 արքաների երկրները գտնուում են «վերին ծովի» (Վանայ ծովի) շրջապատում, ուր հասնելու համար Ասորեստանի արքան անցել է 16 դժուարանց լեռ-

5) D. Luckenbill, Ֆոյն տեղում, էջ 80:

ներ: Նաիրի հասկացողութեան մէջ մտել է նաև Վանայ ծովից էլ դէպի հիւսիս բաւական հեռու երկրներ՝ ինչպէս Դալմաթի երկիրը, որի արքան գտնուել էր Նաիրեան երկրների արքաների շարքում (մեր կարծիքով Դալմաթի երկիրը պէտք է ներկայ Տայքից որոշ չափով հարաւ գտնուէր, այդ ցեղը պէտք է հետագայում շարժած լինի դէպի վեր):

Ի հարկէ տարբեր արքաների արձանագրութիւններում յիշուած Նաիրին չի ընդգրկում Նաիրեան բոլոր շրջաններին. ամէն մէկը Նաիրի ասելով նշում է Նաիրեան ընդհանուր լեռնաշխարհի այն մասը, ուր գործ է ունեցել: Օրինակ՝ Ասուր-Նազիր-Պալի մի արձանագրութիւնից հասկացուում է, որ Աղձնիքը նոյնպէս մտնում էր Նաիրիի մէջ. նա գրում է. «Կաշչիարի լեռը անցայ ես եւ երկրորդ անգամ լինելով գնացի ներքեւ դէպի Նաիրի երկիրը...»⁶: Միանգամայն պարզ է, որ Կաշչիարի լեռը անցնելով մտած երկիրը Աղձնիքն էր: Միաժամանակ՝ վերելում բերուած եզրագտական արձանագրութիւնից երեւում է, որ Միտանին (ըստ մեզ նրա հիւսիսային՝ լեռնային շրջանը) նոյնպէս մտնում է Նաիրի (Նահարինա) հասկացողութեան մէջ. այդ արձանագրութիւնը մի վիւայութիւն է նաև այն մասին, որ Միտանին եղել է բուն Հայկական լեռնաշխարհի պետութիւն, թէև տարածուել էր նաև դէպի հարաւ՝ դէպի ասորեստանեան հարթավայրերը:

Կասկած չկայ, որ Նաիրին գտնուում էր հիւսիսում՝ «վերելում». ահա այդ մասին նաև Շամսի-Աղադ Ե-ի (823-810 մ. թ. ա.) խօսքերը. «Իմ առաջին արշաւանքի ժամանակ ես գնացի վեր Նաիրի-ի դէմ (որպէս) տուրք՝ ձիեր, լծի վարժեցրած, ես ստացայ բոլոր թագաւորներից Նաիրիի: Այդ ժամանակ ես զցեցի Նաիրին մինչև իր ամենահեռաւոր սահմանները՝ ինչպէս մի ցանցում: Տերիտորիան (գր. սահման) Ասորեստանի Paddiria-ից Na'iri մինչև Kar-Salmaneser, որ գտնուում է Կարբեմիշի դէմ...»⁷: Ինչպէս պարզ երեւում է՝ ասում է «գնացի վեր Նաիրիի դէմ»:

Իրականում ինչ էր նշանակում կամ ներկայացնում Նաիրի տերմինը:

Ինչպէս տեսանք՝ Նաիրի տերմինով ասորեստանեան արձանագրութիւնները նշում էին հիւսիսային «հեռաւոր լեռներ»-ը, «վե-

⁶) D. Luckenbill, Պշուած գիրք, էջ 179:

⁷) Նայն տեղում, էջ 255:

րիւ» երկրները, յատկապէս այն լեռները, որոնք գտնուում էին «վերի ծովի» (Վանայ ծովի) շրջապատում:

Նաիրի անունն իմաստն ընկալելու համար անհրաժեշտ է նրկատի առնել Հայկական լեռնաշխարհի իսկական հին բնիկներին՝ արբերի (հայերի) դիցարանութեան՝ արեւի պաշտամունքի հետ կապուած հողերանութեան եւ համոզմունքների էութիւնը, Ար-ի կամ Արայի (արբերի արեւ ասածու) պաշտամունքի (արեւ-կրակ) երկփեղ-կուածութիւնը կամ երկիմաստութիւնը:

Ինչպէս յայտնի է՝ հեթանոսական դարաշրջանում պաշտամունքի տեսակէտով արեւն ու կրակը միասնանում էին. արեւապաշտութեան ընկերանում էր կրակապաշտութիւնը. մարդիկ զգում էին, որ արեւը կրակի, լոյսի եւ ջերմութեան (հետեւապէս եւ կեանքի) աղբիւր է, բայց այդ աղբիւրը ոչ թէ միայն անհասնելի էր մարդու համար, այլև հնարաւոր չէր մարդու աչքի համար ուղղակի նայել նրա վրայ (հաւանաբար այդ է պատճառը, որ հեթանոսական ժամանակների թագաւորները յաճախ իրենք իրենց կոչում էին արեւ, եւ սովորական մարդկանց համար նրանց վրայ ուղղակի աչք դարձնելը համարուում էր վիրաւորանք, սրբապղծութիւն եւ ենթակայ պատժի): Բայց մարդն ունէր կրակը այս աշխարհի վրայ, որը նոյնպէս լոյսի եւ ջերմութեան աղբիւր էր. դա նշանակում էր, որ Արեւն իր ներկայացուցչին (հուրն) էր ուղարկել աշխարհ, որպէսզի մարդիկ մօտիկից ծանօթանային նրա հետ եւ պաշտէին արեւը եւ մարդիկ պաշտելով հուրը՝ պաշտում էին արեւը:

Հեթանոսական ժամանակների այս դադափարախօսութիւնը քրիստոնէութեան ժամանակ դժուար էր վերացնել, ուստի նոր վարդապետութիւնը (քրիստոնէութիւնը) յարմարեցուել է դրան. եւ ահա երկինք է հանուում Եհովան եւ ինչպէս որ արեւը (այս աշխարհում ունի) այս աշխարհ էր ուղարկել իր կրակ ներկայացուցչին՝ իր կրակ որդուն, այնպէս էլ «Եհովան աշխարհ է ուղարկում Յիսուսին, իր որդուն, որպէսզի իրենով (իր քարոզներով) մարդիկ ծանօթանան (Աստծուն) Եհովային» (մենք դեւ կը խօսենք Աստուած անունն ծագման ու բովանդակութեան մասին) եւ պաշտելով Յիսուսին՝ պաշտեն Եհովային, իսկ արեւի (եւ կրակի) լոյսն ու ջերմութիւնն էլ փոխարինուում են հոգին սուրբով: Ուստի պատահական չէ, որ աշխարհում առաջին անգամ հնարաւոր եղաւ հայկական պետութիւնը քրիստոնէականացնել՝ հիմնուելով այս (Արայի) դադափարախօսու-

Թեան հետ յարմարուած կերպարանափոխութեան: Քանի որ կրակ պաշտելը հաւատար էր արեւը պաշտելուն, ապա հասկանալի է, թէ ինչու արեւ ասածու կարելոր մեհեաններում կար հուրի պատուանդան՝ ատրուշան, որակց միշտ վառ էին պահում կրակը (կրակի մեհեանները ուղղուած էին արեւելք, այդ ուղղութիւնը ժառանգել են մեր եկեղեցիները), ուստի հուր եւ արեւ զիցարանական համոզմունքների տեսակէտով իրար փոխարինող, իրար լրացնող, մի տեսակ նոյնիմաստ դարձած հասկացողութիւններ էին: Մանաւանդ որ արեւի մայրամուտից յետոյ, զիշեր ժամանակ, մարդկանց համար կրակը թէ՛ լոյսի եւ թէ՛ ջերմութեան տեսակէտով փոխարինում էր արեւին, այսինքն՝ բռնում էր արեւի տեղը, ուստի պատահական չէ, որ Պանփիւլիայում Armenios-ի որդի Էրը (հայկական արեւի աստուած Արա-ն) ըստ առասպելի, ճակատամարտում մեռնելուց յետոյ, յարութիւն է առնում խարոյկի վրայ⁸, այսինքն՝ կրակն ու արեւը միասնանում են. արեւի մայր մտնելուց յետոյ հուրը բռնում է նրա տեղը՝ լուսաւորելով զիշերը եւ ջերմութիւն աւելով մարդկանց:

Աշխարհի վրայ հուրը հին մարդկանց համար (նախքան կրակի զիւտը) յայտնի էր հրարուխներով, եւ հրարուխներն էլ լինում էին միայն լեռների կատարներում, իսկ հրարխային այդ լեռները Ասորեստանի եւ Ասորիքի տափաստանների բնակիչների տեսակէտով գտնւում էին հիւսիսի Հայկական լեռնաշխարհում, եւ ի հարկէ Հայկական լեռնաշխարհում, Արայի (արեւ ասածու) պաշտամունքի կազմաւորման (սկզբնական) ժամանակաշրջանում, մի շարք լեռնագագաթներում գործում էր հրարուխը: Ահա թէ ինչու արեւի գահը գտնւում էր լեռների կատարներին (համա. Արա-գած «Արայի գահ», Տարօնում Արեղակինաճագ բլուրն⁹ ու Մաղկանց լեռներում՝ Երփտա [Եր = Արա] լեռը):

Ասորեստանի արձանագրութիւնների ժամանակներին Նաիրի կոչուած լեռնաշխարհը գործող հրարուխների երկիր էր: Գործող հրարուխի լեռներ էին Վանայ ծովի հարաւում Ռարուատրի լեռը (յաջորդ գլխում ցոյց կը տանք, որ Ուրուարի նշանակում է «վայր կրակի»), Վանայ ծովի հարաւ-արեւմուտքում Նիխան Դաղը, ծովի արեւմտեան ափին՝ Նեմրուքը (որի նշանաւոր խառնարանը դեռ գոր-

ծում էր 1440 թուականին)¹⁰, ծովի հիւսիսային ափի մօտ՝ Սիփանը (Նեխ Մասիք), հիւսիս-արեւելքում՝ Մաղկանց լեռների Թոնդուրեկ գագաթը, որը տակաւին հանգած չէ մինչեւ հիմա¹¹, իսկ հարաւ-արեւելեան ափի մօտ՝ Վարագը եւ ուրիշներ: Ուստի բնական է, որ հրարուխների այս լեռներկիրը Առաջաւոր Ասիայի հեթանոս ժողովուրդների մօտ պիտի ունենար մեծ համբաւ եւ նրանց կողմից, յատկապէս հարաւի տափաստանային երկրների բնակիչների կողմից պիտի կոչուէր «կրակի երկիր»:



Եւ ահա Առաջաւոր Ասիայի արքաների՝ յատկապէս Ասորեստանի արքաների արձանագրութիւններում հրարուխների այս լեռնաշխարհը կոչուում է Նախարիմա, Նիրի կամ Նաիրի, որը նշանակում է «կրակի երկիր»: Այս տերմինը, իր այս նշանակութեամբ գալիս է հարաւի սեմական աշխարհի լեզուներից, ահկադերէն, ասորերէն, արարերէն nûr նշանակում է «լոյս», արարերէն ܢܢ nâr, ասորերէն nuira, nûra նշանակում են «կրակ», արարերէն ܢܐܝܪ nâriy՝ «կրակային», ܢܐܝܪ nahâr՝ ցերեկ, հայերէնում ունենք մոխիր (ազլ. բարբառում՝ մախիր, մահիր) < նահիր: Հետեւաբար երբ հին ար-

⁸) Վափանցեան «Հայաստ», էջ 90:
⁹) Ալիշան, «Հիմ հաւատք հայոց», վեմետիկ, 1895, էջ 90:

¹⁰) Թ. Խ. Յակոբեան, «Հայաստանի Պատմական Աշխարհագրութիւն», Երեւան, 1968, էջ 10-11:
¹¹) Թ. Խ. Յակոբեան, նոյն տեղում, էջ 11:

ճանազրութիւնները մեր լեռնաշխարհը կոչում են Նահրի-նա, Նիհիր-եա, Նաիրի կամ Նաիրի երկրներ, Նաիրի լեռներ, ապա դա նշանակում է «կրակի երկրներ», «կրակի լեռներ», ուստի եւ «Ար-Արայի երկրներ»:

Վերելում ասացինք, որ հեթանոսական պաշտամունքի տեսակէտով արեւն ու հուրը միասնանում էին. հետեւաբար հուր եւ Ար(արեւ) > հար միասնանում էին (հմմտ. արար ܚܗܐ hâr «տաք», ինչպէս եւ հայ խար «կրակ», որից խարոյկ): Ահա թէ ինչու Արայի (արեւի աստուծու) տեղը (երկիրը) գտնուում էր Հայկական լեռնաշխարհում, ահա թէ ինչու Շամիրամը Արային փնտրում էր Հայաստանում, ահա թէ ինչու Հայկական լեռնաշխարհի խոհական հին բնիկները կոչւում էին ար, արմա (Արի սերունդ), արմանի (Ար-որդիներ) > արմէն:

Արեւի եւ կրակի միասնութեան արտայայտութիւնն ենք տեսնում մեր հեթանոսական «երկնէր երկին, երկնէր երկիր...» բանաստեղծութեան հետեւեալ տողերում.

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր.
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաչ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
(Ապա քէ) բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունքն:

Ինչպէս տեսնում ենք՝ սա հուրի (Նաիրի) եւ արեւի (Ար-ի) միասնութեան մարմնացումն է՝ արտայայտուած բնիկների (արերի) գիցարանական համոզմունքները պատկերող այս բանաստեղծութեամբ, այնպէս ինչպէս պամփիւլյական առասպելի մէջ պատերազմի ճակատում մեռած Էրը (Արան) յարութիւն է առնում խարոյկի վրայ:

Այստեղ չենք կարող շքերել մեր կրակի եւ արեւի աստուած Միհր — Մհերին: Շատեր այս անունը կապում են իրանական Միտրասին: Դէ՛, ի՛նչ անենք, այդ իրանացաւր շատերին է վարակել, ի հարկէ ելնում են մեր մեծ պատմութեան աւելի ուշ եւ յայտնի շրջանում պարսիկների մեր երկրի վրայ ունեցած ախրապետութիւնից, բայց մեր Միհրը գալիս է աւելի խոր անցեալից: Մենք գտնում ենք, որ Միհր կամ Մհեր անունը կապուած է Նաիրի կամ Նահիրի անուն

հետ աղերսուող հայկական մեխրի ցեղանունի հետ¹²: Եղիա Քասունին Մեխրի երկիրը տեղադրում է «Վերին Սասունի եւ Բաղէշի շրջանակներում»¹³: Մենք ընդունում ենք այս տեղադրումը՝ աչքի առջ ունենալով նոյն շրջանում գտնուող Մեղրագետը (Մեղր-ագետ), որն սկիզբ է առնում Սասունի լեռների արեւելեան (Խութ) թեւից, Բաղէշի (Բիթլիսի) մատոյցներից: Եւ ահա Սասունի շրջանում գտնուող հայկական մեխրի ցեղի՝ հետեւաբար եւ Նաիրի-Նահիրի երկրի (= կրակի երկրի) յիշատակն է պահում մեր Սասնայ Մեքրը, որը մեր կրակի եւ արեւի աստուած Միհրն է: Յիշենք, որ Ասուր-Նազիր-Պալը այս շրջանը կոչում է Նաիրի («լեռը Կաշիարիի եւ անցայ եւ երկրորդ անգամ լինելով գնացի ներքեւ դէպի Նաիրի երկիրը»): Նաիրի կամ Նահիրի-ից Մեխրի եւ Մհեր անցման համար յիշեցնում ենք արար. nâr «կրակ», nahâr «ցերեկ», ասորերէն nuira, nûra «կրակ» եւ հայերէն մոխր (ազլ. բարբառում մախր, մահիր)¹⁴ բառերի համեմատութիւնը:

Եթէ Միհր աստուածանունը կայ նաեւ Իրանում. ապա դա մեզանից անցել է Իրան, որովհետեւ, ինչպէս դիտենք Ամենոփիս Գի ժամանակուայ եգիպտական արձանագրութիւնից, նահարինան յիշուում է 15-րդ դարում մեր էրայից առաջ, եւ ի հարկէ այդ անունը չի ծագել (կամ տրուել մեր աշխարհին) հենց այդ օրը. ապա դա շատ աւելի հին ծագում պիտի ունեցած լինէր, իսկ այդ ժամանակներում, անգամ 15-րդ դարում (մ. թ. ա.) Իրանը հայկական աշխարհին ու լեզուին ազդելու վիճակի մէջ չէր, այլ ընդհակառակը՝ նա ստանում էր:

Հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհի հողի, ջրի եւ արեւի ծնունդն է: Մենք այս հետազոտական շրջադաշտութեան ժամանակ ճանաչեցինք արերին երբ դեռ սակաւաթիւ եւ փոքր խմբերով ապրում էին համայնական հասարակութեան մէջ, այն ժամանակներում, երբ շինում էին քարէ գործիքներ, ապա կաւէ ամաններ եւ ջուր էին խմում Տիգրիսի ակունքներից եւ Արածանիի ու Վերին (արեւելեան)

12) Մեխրի ցեղի քաղաւորի անուցն է Արի-Շարումա: Մեմֆ Արի անուամ մէջ տեսնում ենք Ար-Արա անունը, իսկ (Շ)արումա անուամ մէջ արմա-արմանի անունը:

13) Եղիա Քասունի, յիշում աշխատութիւնը, էջ 78:

14) Տես Անտանի Արմատակամ բառարանում «մոխր»:

Եփրատի ստորին հոսանքներից, Թոզլույի աղբյուրներից և Վանայ լիճը թափուող գետակներից: Մենք տեսանք նրանց թէ ինչպէս իրենց յատուկ հնարամտութեամբ ու դործակցութեամբ համաշխարհային քաղաքակրթութեան դուռ բացած բարձր մշակոյթ էր ստեղծուած իրենց լեռնաշխարհում. մենք տեսանք նրանց երբ պաշտում էին իրենց ցեղին ծնունդ տուող Ար-ին (արեւին) և իրենց լեռների դադաթներից բխող հուրին, և դա այն ժամանակներում, երբ Հնդկաստանում չկար հնդեւրոպական հնդիկը, երբ Իրանում չկար ոչ պարսիկ և ոչ էլ պահլավ: Յետոյ մենք տեսանք, թէ ինչպէս Հայկական լեռնաշխարհի բնիկների ստեղծած մշակոյթն էր տարածուած չորս կողմ, շատերի թւում և Իրան՝ մինչև Ուրարտուի անկման ժամանակները, մինչև Տիգրանի Հայկական կայսրութեան անկումը: Ուստի ժամանակն է, որ պատմաբաններն ու հնագէտները մշակութային աղբյուրներն հարցում անայն հայ ժողովուրդին միշտ ստորադաս, միշտ ստացողի, աղղուողի դերում զնոյ իրենց միակողմանի և սխալ տեսակէտները. մանաւանդ որանից յետոյ (երբ պարզուած է երկինքն ու երեւան է դալիս Արան իր պատմական շքեղութեամբ) իրականութեան ճիշդ գնահատմամբ վերադասուորեն մշակոյթի միջադրային առևտրի պատմական գործը, որի մէջ, ոչ մի կասկած, արերը (արմէնները) բնաւ էլ պարտական չեն մնացել:

Հայկական հրաշալի էպոսի Սանասարին ոճանք կապում են լուսնի (սեմական) Մին աստուածութեան հետ, իսկ մենք հենց էպոսի տուեալներից ելնելով գտնում ենք, որ Սանասարը արեւի աստուածութիւն է: Սան-ա-սար և Բաղա-ա-սար անունների մէջ Սան և Բաղաու դիցարանական դէմքեր են: Ղափանցեանը արդէն Բաղասար անունը բաժանելով Բաղա-ա-սար մասերի՝ առաջին Բաղա-մասը համեմատում է խեթական արձանագրութիւններում յիշուած Balta(ik) աստուածութեան հետ¹⁵: Նոյնպիսի բաժանում ունի ի հարկէ Սանասար (Սան-Սար) անունը, որի առաջին մասը՝ Սան-արեւի աստուածն է (Սան-ը համեմատել անդլերէն Sun «արեւ» բառի հետ):

«Երկնէր երկին...» բանաստեղծութեան մէջ տեսանք, թէ ինչպէս արեգակը բոցերի միջով դուրս է դալիս ծովից: Այսպեղ էլ Սանասարը մտնում է ծով և այդտեղ գտնում Թուր-կայծակին և

Քուռկիկ Ջալալի ձին: Սանասարը հեծնում է Քուռկիկ Ջալալին, որը նրան մինչև արեւը տանելու կարողութիւն ունի.

Սանասար սիրտ արաւ,
Մէկ Աստծու անուն էտու,
Զինք շալապուտիկ արաւ, էքալ ծով:

.....

Սանասար ծովու մէջ որ մտաւ,
Ինչ չոր գետնի վերայ գնաց:
Տեսաւ ծովային ձին, Քուռկիկ Ջալալին,
Էնտեղ կապուկ, բամբ սաղափին վերան պատրաստ,
Կեծական բուր վերան կախած:

.....

Էլաւ, սիրտ արաւ, որ ձին հեծնէր:
Քուռկիկ Ջալալին դարձաւ, ասաց.
— Հոգածին, ի՞նչ կ'անես, քո միտն ի՞նչ է.

Ասաց.— Քէ կը հեծնեմ.

Ասաց.— քէ կը տամ արեգական, կ'էրեմ:

.....

Թաւ քամակ, հեծաւ ըզնին,
Որ կը տար արեգական՝ էրեբ,
Ինք էտու փորի տակ.
Որ կը տար գետին՝ էրքար անդունդ,
Ինք էտու ձիւ քամակ:

.....

Զկարցաւ ըզՍանասար ձգէր գետին:
Խելացացաւ, կայնաւ, հնազանդեց,
Ասաց.— Ես քո ձին, դուն իմ տէր¹⁶:

Ինչպէս տեսնում ենք, այս տողերը ներկայացնում են ժողովրդական այն պատկերացումը, որ արեւը, հրեղէն ձիու վրայ հեծած, արշաւում է արեւելքից արեւմուտք, իջնում է անդունդ կամ ծով (մայրամուտ), և շարունակելով արշաւը անդունդի (խաւարի թաղաւորութեան) մէջ՝ նորից է յայտնուած (արեւածագ) ու բարձրանալով վեր՝ շարունակում է յաւիտենական արշաւը:

Յայտնի է միաժամանակ, որ ձին (յատկապէս այս հրեղէն ձին, որի վրայ կախուած է Թուր-կայծակը) խորհրդանշում է արեւին:

15) Գր. Ղափանցեան, «Հայաստ», էջ 95:

16) Սասունցի Գալիք, Երեւան, 1961, էջ 39 - 42:

Մենք խօսել էինք վերելում արևելի հետ ձիու կապի մասին. յիշել էինք Հայաստանում գտնուած բրոնզէ գօտիները, որոնց վրայ արեւ աստծոյ ձիերն են քանդակուած՝ նշելով այդ մասին Հ. Մնացական-եանի արժեքաւոր յօդուածը¹⁷: Այստեղ նորից յիշեցնում ենք նաեւ հայերի՝ արեւին ձի գոհարեւելու հեթանոսական սովորութեան մասին, որը յիշուած է Քսենոֆոնի կողմից: Ուստի կասկած չկայ, որ Սանասարը արեւի աստուածութիւն է: Մեր այս աշխատութեան համար հետաքրքրականն այն է, որ Սանասարի որդին կոչուած է Մհեր: Իսկ Մհերը մեր կրակի աստուած Միհրն է, որն այստեղ միաժամանակ հանդէս է գալիս որպէս արեւի աստուած: Մհերը յորջորջուած է նաեւ «առիւծաձեւ Մհեր»: Իսկ մենք գիտենք, որ առիւծը դիցարանութեան մէջ խորհրդանշին է կրակի աստուածութեան, այնպէս ինչպէս ձիւն ու արծիւը խորհրդանշում են արեւին: Ուստի այստեղ Մհերը պարզօրէն ի յայտ է գալիս որպէս կրակի աստուածութիւն, բայց մենք էպոսի տուեալներից տեսնում ենք միաժամանակ, որ նա նաեւ արեւի աստուածութիւն է: Նա հօրից ժառանգում է հրեղէն ձիւն: Ակազ. Յ. Օրբելին «Սասունցի Գաւիթ» գրքի առաջաբանում գրում է. «Սասունցի Գաւիթ» էպոսում Մհերի (Փոքր Մհեր) կերպարը բաժանուած է երկու մասի. առաջինը պապի (Մեծ Մհերի) կերպարն է, որն արտացոլում է ծագող արեւի՝ ճաճանչափայլ եւ կենսալից արեւի յատկանիշները...» (էջ 11): Յիշեցնում ենք նաեւ էպոսի այն մասը, ուր Իսմիլ խանումը հրաւիրում է Մհերին դալ իր պալատը եւ ամուսնանալ իր հետ եւ օգնական դառնալ գահին: Այս ի հարկէ յիշեցնում է Արա-Շամիրամ առասպելը: Ուստի այստեղ կասկած չկայ, որ Մհերը միաժամանակ արեւի աստուածութիւն է:

Այս երեւոյթը միանգամայն փաստում է մեր ժողովրդի հեթանոսական դիցարանութեան մէջ արեւի եւ հուրի համագործութիւնը, նոյնութիւնը:

Այստեղ յատուկ ուշադրութիւն ենք հրաւիրում այս արդիւնքի վրայ՝ Նաիրի անուան մեր մեկնութեան եւ նրա Ար-ի հետ ունեցած սերտ ազերսի կամ նոյնութեան վրայ, որովհետեւ մեր ուսումնասիրութեան այս արդիւնքը շատ մեծ նշանակութիւն ունի մեր ժողովրդի պատմութեան հնագոյն շրջանի հանդուցային շատ խնդիրների լուծ-

17) Հ. Մնացականեան, «Արեւապաշտութեան հետեւերը Հին Հայաստանում բոս պեղածոյ իրերի», «Աշխատութիւններ Հայաստանի պետական պատմութեան քանդակարանի», հատ. II, Երեւան, 1948, էջ 67:

ման համար: Այն լոյս է սփռելու Նաիրեան ցեղերի ծագման, հայկական ցեղերի ճիշդաւորման ու նրանց տարածման շրջանների վրայ. օգնելու է աւելի լաւ ճանաչելու Սուրբ-Միտանին, Ուրարտուն, որոնք այնքան սերտ կապի մէջ են եղել Նաիրի անուան հետ:

Նաիրի անուան նուիրում այս գլուխը փակելուց առաջ ցանկանում ենք այստեղ բերել երկու բառեր, որոնք հաւանաբար կապուած են Նաիրի անուան հետ:

Սեպագիր արձանագրութիւնների տուեալների համաձայն Նաիրի երկրները եղել են անանապահութեան նշանաւոր ու հարուստ շրջաններ: Նաիրի երկրների վրայ թալանչիական եւ նուաճողական արշաւանքներ կատարած ասորեստանեան արքաները որպէս աւարքում տանում էին կամ որպէս տարեկան տուրք ստանում էին (յատկապէս) մեծ քանակութեամբ ձի, կով, եղ եւ եղջերաւոր այլ անասուններ: Անասնապահութեան մէջ Նաիրի երկրների ունեցած այս հոշակը կարծես Նաիրի անունը զարձրել է համանիշ այդ գրազմունքի: Ինչպէս օրինակ՝ թուրքերը եզրկոտայորենին ասում են մարը, չինական նշանաւոր յախճապակին մեզ տուել է չինի բառը: Այսպէս էլ եզների, կովերի եւ եղջերաւոր այլ խոշոր անասունների խմբերին կոչում ենք նախիր (ամկ. նախիր, ազլ. բարբառով՝ նա'հիր)¹⁸. Հաւանաբար մեր լեզուում սրահուած այս բառը սրահուած է Նաիրի, Նախիրի անուան յիշատակը:

Ինչպէս տեսանք վերելում, Ասուր-Նազիր-Պալի արձանագրութեան տուեալներով Աղձնիքը նոյնպէս համարուել է Նաիրի երկիր. մենք հաւանական ենք համարում, որ այս շրջանում տեղադրուող Նիխիրի, Նիխիրիանի քաղաքի անունը կապ ունի Նաիրի (եզրկոտայորների յիշած) Նախարինա անուան հետ: Ակազեմիկոս Ս. Երեմեանը Նիխիրիանի տեղադրման համար յիշում է «Կովկասեան ուղղական շտաբի նախաւելուցիտն տասը վերստանոց քարտէզի վրայ նշանակուած Նիխան-Տաղ լեռնազագաթը»¹⁹, որը Նաիրեան լեռնաշխարհի հնում գործող հրաբուխներից մին պիտի լինի, որոնց յիշեցինք վերելում որպէս Նաիրի անուան ծնունդ տուող գործօն:

18) Հ. Անտեան, «Արեւապաշտութեան բառարան», տե'ս «Նախիր»:

19) Ս. Տ. Երեմեան, «Հայերի ցեղային միութիւնը Արեւ-Շուպրիա երկրում», «Պատմա-քանդակարանական հանդէս», 1958, քիւ 3, էջ 66:

ԳԼՈՒԽ Զ.

ՈՒՐԱՐՏՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ Է

1. — ՈՒՐՈՒԱՏՐԻ — ՈՒՐԱՐՏՈՒ

Ուրարտու սնուան մեզ հասած ամենահին եւ նախնական ձեւը եղել է Ուրուաարի (Ուրուադրի) կամ Ուրատրի: Այս անունը առաջին անգամ յիշուած է Ասորեստանի Սալմանասար Ա-ի (ԺԳ դարի առաջին կէսին մ. թ. ա.)¹ կողմից: Այս արքան գրում է. «... Այդ ժամանակ իմ քրմութեան սկզբին (զահակալութեան սկզբին) Ուրուադրի երկիրը ապստամբեց: Աչուրին եւ մեծ աստուածներին՝ իմ տէրերին, ես բարձրացրի իմ ձեռքերը աղերսանքով. իմ բանակներին հաւաքեցի զինակոչով, զնացի վեր նրանց հզօր լեռների ամբողջիւնների դէմ: Himme, Uadkun, Bargun, Salua, Halila, Luha, Nilipabri, Zingun՝ ութ երկրներին եւ նրանց զօրութեան յաղթեցի. նրանց քաղաքներից 51 հատը դրաւեցի, այրեցի, որպէս աւար եւ վերցրի նրանց ունեցուածքը, ամբողջ Uruadri երկիրը երեք օրում նուաճեցի Աչուրի՝ իմ տիրոջ ստեղծած առաջ...»²:

Տիգլաթ-Պալասար Ա-ը (մօտ 1100 մ. թ. ա.) իր մի վատ պահպանուած արձանագրութեան մէջ յիշում է Ուրուաարի անունը.

¹ Ումանէ այս արձանագրութիւնը վերագրում են Սալմանասար Բ-ին (1027-1015 մ. թ. ա.). տե՛ս Եղիա Քասուհի, նշուած գիրքը, էջ 193:

² D. Luckenbill, «Ancient Records of Assyria and Babylonia», Vol. I, Chicago, 1926, p. 40:

նա գրում է. «... Նրանց դժուար ճանապարհները... բրոնզե կացիններով, ես կարեցի... դէպի նրանց (հեռուոր) շրջանները... Uruadri-ում... Bargun, Mel... նրանց մեծաքանակ նուէրները...»³:

Ուրուատրիին յիշում է նաև Աշուր-Բեւել-Կալան (1077-1060 մ. թ. ա.)՝ Տիգլաթ-Պալասար Ա-ի որդին: Ասորեստանի այս թագաւորն ասում է, թէ իր դահակալութեան առաջին տարին յաղթել է Uruatri -ին եւ Mašgun-ին, իսկ երրորդ տարին՝ Uruatri - ին, Mašgun-ին եւ Իւրուա-ին⁴:

Ուրուատրիին Ուրադրի ձեռով յիշում է Ադադ-Նիրարի Բ (911-890 մ. թ. ա.) . նա գրում է. «... հզօր հերոս, որ քայլեց օդնութեամբը Աշուրի, իր տիրոջ, ներքին Չարի միւս կողմից, սահմաններով Lulume երկրի, Kirbi-ի եւ Zamua-ի, մինչև կրճանցումները Namri երկրի, եւ բերեց ենթակայութեան իր ռաքերի ընդարձակ Kumanê-ին մինչև Mešri, Salua եւ Uradri երկրները, որը բերեց իր իշխանութեան տակ Kutmušhi-ին իր ամբողջութեամբ եւ աւելացրեց (զր. դարձրեց) այն իր երկրի սահմանին...»⁵:

Եթէ Ուրարտու անուան Ուրուադրի (կամ Ուրադրի) կամ Ուրուատրի (դ > տ կամ տ > դ օրինակներ շատ կան) ձեւը յիշուած լինէր միայն մի անգամ (անգամ եթէ յիշուած լինէր մէկից աւելի անգամներ նոյն թագաւորի կողմից), ապա կարելի կը լինէր մտածել, որ դա վրլպակ կամ ազաւաղում է, ինչպէս Ռուսա անունը Ուրսա եւ Սարգուրի անունը Սեղուրի են դարձրել Ասորեստանի արձանագրութիւնների մէջ: Ուրուատրին (միայն մեզ հասած տուեալներով) յիշում է չորս տարբեր արքաների կողմից, տարբեր ժամանակներում, եւ դա էլ Ուրարտուից առաջ: Այս իրողութիւնը բացառում է ազաւաղման կամ սխալմունքի հնարաւորութիւնը եւ միանգամայն հաստատում է, որ անուան նախնական ձեւը եղել է ոչ թէ Ուրարտու, այլ Ուրուատրի կամ Ուրատրի:

Ուրուադրին Խորենացու յիշած Արարադ երկիրն է, որտեղ Հայկը առաջին անգամ տուն շինեց, այսինքն՝ այդտեղ հայկական ցե-

3) Նոյն տեղում, էջ 103-104:

4) N. Adontz, «Histoire d'Arménie», Paris, 1946, p. 62:

5) D. Luckenbill, մոյն տեղում, էջ 110:

ղերը բնակում էին հնագոյն ժամանակներից: Ուրուատրին, ինչպէս մեր աւանդութեան տուեալներով, այնպէս էլ սեպագիր արձանագրութիւնների տուեալներով, հարեւան էր Կուտուխիին (աւանդութեան մէջ՝ Կադոս) եւ գտնուում էր Վանայ լճի հարաւում: Սա Ասորեստանի հարթ տարածութիւնների դէմ անմիջապէս հիւսիսից բարձրացող դժուարանցանելի լեռնաշղթան կամ լեռներիկրն էր:

Նախքի անուան բացատրութեան առթիւ ասել էինք, որ Ասորեստանի եւ Ասորիքի տափաստանների հիւսիսում բարձրացող լեռնաշխարհը եղել է Ար-ի (արեւ աստծոյ) երկիրը եւ կոչուել է (Նախքի երկրներ) կրակային կամ կրակի երկրներ, որովհետեւ այդ լեռնաշխարհի լեռնազագագութիւններից ոմանք (թեկուզ իրարից տարբեր ժամանակներում) անպայման հրաբխային գործունէութեան մէջ եղած պիտի լինէին այդ հին օրերում. եւ որպէս այդպիսի դադաթներ յիշել էինք Արադածը (Արայի դահը), Երիտա լեռը Ծաղկանց լեռնաշղթայում, Նիխան-Տաղը. եւ ահա մենք, Ուրուատրի կամ Ուրատրի ասելով, գտնուում ենք Հայկական լեռնաշխարհը հին ժամանակներում կրակի երկրներ անուանելու պատճառ դարձած (հրաբուխներից մէկի)՝ կրակ ժայթքած լեռներից մէկի առաջ:

Ուրուատրի կամ Ուրատրի բաղկացած է երկու մասերից (Ուրուատրի կամ Ուր-ատրի), որի երկրորդ մասը՝ ատր[ի], ինչպէս Նախք[ի] կամ Նահար[ի], նշանակում է կրակ, (ի վերջաւորութիւնը տոպոնոմիական սուֆիկս է): Ատր բառը կրակ նշանակութեամբ պահպանուել է հայերէնում ատրաշէկ «կրակի պէս կարմիր», ատրոքակ «հրագոյն», ատրագոյն «հրագոյն», հրափայլ, հրացայտ», ատրակամ «հրեղէն» եւ այլն (կան նաև տր > րտ դրափոխութեամբ) ատրաշէկ, արտաշիկագոյն, արտաշիկամալ⁶:

6) Հ. Անտանք «Արմատակամ բառարան», տե՛ս ատր: Անտանքը բերում է այս բառի իրանական ձեւերը՝ պիլ. atar «կրակ», գնդ. atare. եզ. ուղղ. atarğ, պրս. 𐬀𐬎 adar, կամ 𐬀𐬎 adar, azur «կրակ»: Անտանքը ատր-ը սխալ ենթադրում մի ձեւ է համարում եւ կարծում է, որ հայկականները եկել են պիլ. > atar ձեւից՝ աւելացնելով, որ պիլ. a t u r տալիս է հյ. *ատուր, որ հայերէնի սղմամ օրէնքով բարդութիւնների սկիզբը դարձել է ատր-, նշում է միաժամանակ, որ բառարանները ատր ձեւը համարել են արմատական: Խննդ համաձայն չենք այն մտքի հետ, որ հայերէն ատր- ձեւը եկել է պիլ. atar ձեւից: Atar-ը atur-ի փոխելով եւ սրանից էլ հայկական սղմամ օրէնքով ատր- ստանալը արհեստական (լեզ-

Ատր «կրակ» բառը հայկական թէ՛ բնիկ եւ թէ՛ շատ հին բառ է, որը հուր եւ կրակ բառերի մրցութեամբ Մեսրոպ Մաշտոցից առաջ դադարել է առանձին գործածուելուց. հայերէնի մէջ նրա շատ խոր անցեալում գոյութիւն ունեցած լինելը փաստում է մեր այրել բառը (այր «կրակ» բառն առանձին նոյնպէս դադարել է գործածութիւնից՝ ըստ Աճառեանի նոյնպէս հուր բառի մրցութեամբ). այր առաջացել է (տ > յ) հայկական շատ աւելի հին ատր ձեւից ա՛յն ժամանակներում, երբ հնիւ. patēr՝ ձեւից առաջանում էր հայր, եւ mater ձեւից՝ մայր: Ուստի կասկած չկայ, որ Ուրու-ատրի կամ Ուր-ատրի անուան ատր(ի) վերջնամասը նշանակում է կրակ, իսկ Ուր- կամ աւելի ճիշդը Ուրու- սկզբնամասը պիտի ունենայ սումերական uru (= սկիպերէն ereš) «ստեղծել»⁷ բառի նշանակութիւնը, ուստի Ուրու-ատրի նշանակում է «ստեղծում կրակի» կամ «այն տեղը, որտեղ կրակ է (ստեղծւում) դուրս դալիս: Uru կարող է ունեցած լինել վայր (սումեր uru «քաղաք») նշանակութիւնը (հայերէնում արդէն ունենք ուր «տեղ, վայր» իմաստով, որը համընկնում է սումերական uru բառի հետ), հետեւաբար Ուրուատրի պիտի նշանակի «կրակի վայր» կամ «կրակի երկիր», որը հոմանիշ է Նաիրի անուան, այն տարբերութեամբ, որ Նաիրի անունը ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի բաւական մեծ շրջանը, իսկ Ուրուատրի տերմինը միայն նրա մի մասը, որ գտնւում էր վանայ լճի հարաւում: Մենք գիտենք նաեւ, որ Ուրարտուի արքաները իրենք իրենց Նաիրիի արքայ էին կոչւում, հետեւաբար այստեղ էլ հասկացում է,

ուարաճական վարպետ, բայց իրանական դիրքերից ելնող) ձեւակերպում է, հայերէնում ատր ձեւի խոր հնուրեան համար փաստ է մեր այրել բառի գոյութիւնը: Այր[ել] բառը առաջ է եկել (տ > յ) աւելի հին ատր ձեւից (որը սխալ ձեւ չէ), ինչպէս հնիւ. patēr-ից առաջ է եկել հայր, եւ mater-ից՝ մայր: Ատր ձեւի սխալ կամ իրանականից եկած չլինելու համար փաստ է նաեւ հենց ինքը՝ Ուրուատրի: Մենք առաջարկում ենք մտածել պի. aturgon-ի՝ հյ. մոյմիմաստ ատրադոյն-ից առաջ եկած լինելու մասին: Ատր ձեւի կողմից արտ ձեւը (արտաշէկ, արտաշիկագոյն, արտաշիկամալ) սխալ գրչութիւն չէ, այն կեանքում գոյութիւն ունեցած ձեւ է, ինչպէս գոյութիւն են ունեցել (Ուրու)ատր(ի) եւ (Ուր)արտ(ու) ձեւերը:

7) S. Langdon, մշուած գիրքը, էջ 253. տե՛ս 3. Սր-ի սակ:

որ Ուրարտու եւ Նաիրի համանիշ տերմիններ էին (մենք կարծում ենք, որ Նաիրի տերմինը սեմական հիմք ունի, իսկ [Ուրու-]ատրին՝ արմենո-խուրբի-ուրարտական):

Գրեթէ բոլոր հետազոտողներն ընդունում են, որ Ուրուատրի կամ Ուրուատրի տերմինը նախնական ձեւն էր Ուրարտու անուան, որն Ասորեստանի արքաների կողմից տրւում էր Բիւայնայի մեծ եւ մրցակից պետութեան:

Աստուածաշնչի Հին Կտակարանի հայերէն («Եօթանասնից») թարգմանութեան մէջ բերուած Արարադ (ասուրական արձանագրութիւնների մէջ յիշուած Ուրուատրի) անուան տեղ ասորական «Պեշիտոտ» կոչուած հնագոյն թարգմանութեան մէջ բերուել է Կարդու տերմինը: Բերում ենք մեզ հետաքրքրող յիշատակութիւնները կրօնատուներով.

Հայկական «Եօթանասնից» թարգմանութեան մէջ (Մենդոց Ը. 4) գրուած է. «Եւ նստաւ տապանն... ի լերինս Արարադայ», իսկ ասորական հնագոյն «Պեշիտոտ» թարգմանութեան նոյն տեղում գրուած է. «Եւ նստաւ տապանն... ի լեանս Կարդու»⁸:

Հին Կտակարանի հայկական թարգմանութեան մի այլ տեղում (Դ. Թագաւորաց, ԺԹ. 37) գրուած է. «Եւ եղև մինչդեռ երկիր պագանէր (Սենեքերիմ) ի տան Նեսրաքայ աստուծոյ իւրում՝ Ազրամելիք եւ Սարասար որդիք նորա հարին զնա սրով, եւ ինքեանք զերծան յերկիրն Արարադայ», իսկ ասորական «Պեշիտոտ»-ի համապատասխան տեղում Երկիրն Արարադայ կապակցութեան տեղ գրուած է Atra - Kardu⁸ երկիրն Կարդու (= Աշխարհն Կորդու-աց):


Ինչպէս պարզ երեւում է, Ուրու-ատրի անուան տեղ բերուել է Կարդու: Սա կոնկրետ փաստ է, որ Ուրու-ատրին համարուել է Ուր-արդի, այս ձեւից էլ առաջացել է Արարադ. այսինքն՝ ատրի «կրակ» հասկացութիւն-տերմինը համարուել է նաեւ արդի «արեւ», իսկ ուրու կամ ուր («վայր, երկիր») բաղադրիչի տեղ երեւում է Կ նախածանցը, որը, ըստ մեր հետազոտութիւնների, դալիս է սումերական ki «վայր, երկիր» նախդիր-որոշիչից. այսինքն՝ Ur - ardu անունը կոչուել է նաեւ Ki-ardu, («վայր արդի-ի»), որը պահպանուել է Kardu ձեւով: Ki - ardu (Կ-արդու) ձեւը համեմատել սումերական

8) Հ. Գ. Մելիքնեան, «Հայ-Ասուրական յարաբերութիւնների պատմութիւնից», Երևան, 1970, էջ 77 եւ 81-82:

Ki - mah («վայր մահացածի՝ դերեզման», որից ունենք կ-մախ),
Ki - in - gi (Սուժեք), Ki - uri (Ակկադ) եւայլն:

Կարդու ([կ]արդու) տերմինի արեւել աստուած Արդի-Արա
լինելը հաստատուած է նաեւ Արայեան Արայի՝ Կարդու անուանումով
(Պորենացի Ա-ժե): Այսպիսով միանգամայն պարզ է, որ կ-արդու
(Ki-ardu) կամ Ուր-արդու (Ուր-արտու) նշանակում է «վայր (կամ
երկիր) արեւ-կրակ աստծոյ»:

Ոչ մի կասկած, որ կրակի պաշտամունքը սկսել է կրակ ժայթ-
քող (հրաբխային գործունէութեան մէջ եղող) լեռնազազաթի պաշ-
տամունքով՝ անգամ կրակի դիւտին նախորդող ժամանակներից,
իսկ, ինչպէս ասել ենք վերեւում, հեթանոսական ժամանակաշրջանի
համոզմունքների տեսակէտով՝ արեւ եւ կրակ իրար լրացնող, իրար
փոխարինող, պաշտամունքային տեսակէտով նոյնիմաստ էին, միեւ-
նոյն աստուածութիւնը կամ միեւնոյն աստուածութեան տարբեր ե-
րեւոյթներն էին ներկայացնում, հետեւաբար Ալը կամ Աար («կը-
րակ») եւ Արդի — Արա («արեւ») աստուածները միանում, միասնա-
նում էին, ուստի Ուրու-արդի կամ Ուր-ատրի կարող էր դառնալ
Ուր-արդի եւ Ուր-արտու: Ասորեստանի Աշուր-Նազիր-Պալ Բ-ը (883-
859) Ուրուարդիին յիշում է Ար-արդի ձեւով: Նա գրում է. «...Ես
մտայ Իսլուն կիրճով Kirbi երկիրը, որը գտնուած էր ներսում,
քաղաքները Hatu, Hataru, Ništun, Irbidi, Mitkia, Arsania, Têla
եւ Halua՝ քաղաքներ Kirbi երկրի, որոնք գտնուած էին Usu, Arua
եւ Arardi հզոր լեռներում, ես գրաւեցի, նրանցից մեծ թւով սպան-
եցի...»⁹: Այս արձանագրութեան վկայութիւնը (Ար-արդի ձեւի յի-
շատակութիւնը) մի ցուցմունք է Ուրու-արդի կամ Ուր-ատրի-ից
Ուր-արդի եւ ապա Ուր-արտու անցման համար: Մարզոնը արդէն

գրում է  Ուր-ար-դի¹⁰:

Ուրախ ենք, որ Ղափանցեանը նոյնպէս Արտի եւ Արդի անուն-
ները նոյն բանն է համարում: Արտիթ անուան մասին խօսելով նա

⁹) D. Luckenbill, Աշուր գիրքը, էջ 143:

¹⁰) Thureau - Danguin, «Une Relation de la Huitieme Campagne de Sargon», p. 62:

գրում է. «Arditi (|| Artiidi, Ardiidi) = Արտիթ Artith, Բասէնի
հայ եպիսկոպոսներից մէկի անունը»¹¹:

Այսպիսով պարզում է, որ Ուր-արտու նշանակում է «վայր
կամ երկիր կրակ-արեւ աստծոյ»: Իսկ ո՞ր կրակ-արեւ աստծոյ եր-
կիրն էր Ուրարտուն (Ուր-արդի-ն): Դա Արդի (յիշել Արդի¹² = Արա)
աստծոյ երկիրն էր: Դ գլխում ցոյց էինք տուել, որ Ար-մա-նի
(> Արմենիա) նշանակում է «Արա-ծին-ներ՝ Ար-որդի-ներ եւ Արոր-
դիներ երկիր»: Հետեւաբար Ար-մա-նի հոմանիշ է Ուր-արտու ան-
ունն. մէկը (Ար-մա-նի) նշանակում է «Արայի որդիների երկիր»,
իսկ միւսը (Ուր-արտու)՝ «Երկիր Արայի»: Արդէն Պորենացին պահել
է պատմալեզուական ճիշդ յիշողութիւն, որ Այրարատը (Ուրարտուն)
նշանակում է «Արայի դաշտ (Արայի վայր կամ երկիր)»: Նա գրում
է. «Փութով (Շամիրամը) դալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա
(Արայի) անունով կոչուեց Այրարատ» (Պոր. Ա-ժե), «... Շամի-
րամը սակաւ օրեր մնում է այն դաշտում, որ Արայի անունով կոչուեց
Այրարատ» (Պոր. Ա-ժդ): Այս հին վկայութիւնը նոյնպէս կոնկրետ
եւ անհերքելի փաստ է եւ կասկած չի թողնում, որ Ուր-արտու (Ուր-
արդի) նշանակում է Արդի-Արայի վայր կամ երկիր:

Բեհիստունի ժայռի վրայ Դարեհի՝ երեք լեզուներով (պարս-
կական, բաբելական, շոշական) թողած սեպագիր արձանագրութիւն-
ների մէջ, ինչպէս յայտնի է, երկար խօսուած է նրա բանակների հա-
յերի դէմ մղած հինգ ճակատամարտերի մասին: Հայագիտութեան
համար մեծ արժէք ներկայացնող այդ արձանագրութեան պարսկա-

¹¹) Գր. Ղափանցեան, «Հայաստ», էջ 226:

¹²) Արայի կնոջ Դուարդ (Դու-արդ) անուն ստուգաբանութեամբ ցոյց էինք
տուել, որ արեւի Արդի աստուածը հեթց Արան է: Այս փաստից անկախ՝ Ար-դի
անուն Ար կամ Արա լինելը կարելի է ցոյց տալ նրա Ար հիմքից անջատելով դի
վերջաւորութիւնը որպէս վերջածանց. հմմտ. Սուր-ար(-ի) եւ Սուր-ար(-դի) կամ
Սուր-ար(-տու), այսպէս էլ Ուր-ար(-դի) կամ Ուր-ար(-տու): Ուր-ար-դի կամ
Ուրար-տու անուն դի կամ տու վերջաւորութիւնը կարելի է ամօքտել առհասա-
րակ որպէս տապնութիւն վերջածանց, այս վերջածանցը տեսնում ենք նաեւ ու-
րիշ տեղակամ անունների վրայ. օրինակ՝ Մելիդու, Պալուարդի, Խալիտու, Սանգի-
րիտու, Զիկիրտու, Ալիշտու եւայլն (այս անունների համար տես «Հայկական ՍՍՀ
Ատլաս», Երեւան, 1961, էջ 102):

կան տեքստում յիշուած 𐎠 𐎡𐎴 𐎠𐎫 𐎠𐎡 Armina¹³

անուան փոխարէն բարելական տեքստում յիշուած է նրա հոմանիշ

𐎠𐎠 𐎡𐎴 𐎠𐎫 𐎠𐎡 Uraštu¹⁴ անունը: Բոլոր հետա-

դատողներն ընդունում են, որ Ուրաշտու անունը Ուրարտուն է:

Արձանագրութիւնը գրուած է 520 թուին (մ. թ. ա.), այսինքն՝ Ուրարտուի անկումից (590 մ. թ. ա.) 70 տարուայ կարճ ժամանակից յետոյ: Այստեղ հարց է առաջանում, թէ ինչպէ՞ս է պատահում, որ Գարեհէ Ուրարտուին Արմինա է կոչում. Արմինա անունը այդ ժամանակներին նո՞ր էր տրուել Ուրարտու կոչուած երկրին: Եթէ Ուրարտուն Արմինա չէր, ապա այս 70 տարիների ընթացքում կատարուած պիտի լինէր արմէնների լայնածաւալ արշաւանք, այնպիսի մեծ եւ համատարած ներխուժում, որ արմէններով ողողած լինէր Ուրարտու երկիրը եւ այն Արմինա անունանելու պատճառ դարձած. սակայն այդ ժամանակներին վերաբերող պատմագիտական յիշատակութիւնների մէջ այդպիսի ներխուժման ոչ մի հետք չկայ, բացի այն բանից, որ մարերի հարուածներից ընկել էր ուրարտական զինաստիան եւ նրա տեղ բռնել էր Երուանդունիների զինաստիան, մի բան, որ չէր կարող երկրի անուան փոփոխութեան պատճառ դառնալ, մանաւանդ որ երկրի նոր ղեկավարութիւնը գտնուած էր նախ մարերի, ապա աքեմենեանների ղերիշխանութեան տակ: Բարելոնն էլ մի ժամանակ ընկել էր ասսուրական արքաների իշխանութեան տակ, բայց չէր դադարել Բարելոն կոչուելուց. Ասորեստանի իշխանութիւնն անցել էր պարսիկներին, բայց չէր վերանուանուել Պարսկաստան: Նոյնիսկ եթէ այդ 70 տարիների ընթացքում նոր ժողովրդի ներխուժում կատարուած լինէր, կամ եթէ ուրարտական «ոչ-հայկական» զինաստիանի տեղ «ոչ-ուրարտական» (արդէն երկրում գտնուող հայկական մի ցեղից կազմուած) զինաստիա անցած լինէր, էլի երկրի դարաւոր անունը մի քանի տասնամեակում չէր փոխուի: Հո Գարեհէ չէր, որ երկիրը Արմինա անունով մկրտեց: Միանգամայն պարզ է, որ երկիրը արմէնների երկիր (Արմանի > Արմինա) էր, թէեւ օգտագործուած էր հոմանիշ Ուրարտու տերմինը:

13) British Museum, «The Sculptures and Inscriptions of Darius the Great», on the Rock of Behistun in Persia, 1907, p. 27-33:

14) Նայմ, էջ 178:

Եթէ արմէնների մեծ ներխուժում կատարուած լինէր ճշկելով «ոչ-արմէն» ուրարտացիներին, կամ եթէ երկրում արդէն «որպէս փոքրամասնութիւն» ապրող արմէնները ուրարտացիներից խլեցին իշխանութիւնը, ապա արմէնները «եւ ուրարտացիները» պէտք է թշնամական յարաբերութիւնների մէջ լինէին (հազիւ 70 տարի էր անցել հպարտ եւ պետական մեծ տրագիգիա ունեցած «ուրարտացիների անկումից»), եւ ուրարտացիները պէտք է պարսիկների կողմն անցնէին հայերի դէմ Գարեհէ բանակի կատարած ռազմական զորածողութիւնների ժամանակ. մինչդեռ այդպիսի երեւոյթ չի նշմարուում. երկրի ժողովուրդը Գարեհէի դէմ ապստամբել էր միասնաբար եւ Գարեհէ՝ Գաղարշիշի ղեկավարութեան տակ կոռուող պարսկական բանակին միասնաբար դուրս էր քշել Արմինայից եւ անգամ կոռուել էր նրանց դէմ Ասորեստանի հողի վրայ: Միւս կողմից՝ երբ արմէնները պարտուեցին պարսիկ զորավար Վաումիսայի ղեկավարութեամբ Արմինա վերադարձած պարսկական բանակից, պէտք էր երկիրը դադարէր Արմինա կոչուելուց՝ եթէ այն Արմինա էր կոչուել պարզապէս «ուրարտացիների դէմ արմէնների» յաղթանակով: Այդ օրերին գրուած արձանագրութեան բարելական տեքստում Ուրաշտու (Ուրարտու) տերմինի պահպանումը ցոյց է տալիս, որ եթէ Գարեհէի ժամանակ Ասորեստանը վերապրած լինէր որպէս մեծ տէրութիւն, էլի իր արձանագրութիւններում Արմինային Ուրարտու կը կոչէր, նոյնպէս, պարսկական տեքստում Ուրարտուի տեղ Արմինա յիշուելը ցոյց է տալիս, որ եթէ պարսիկները Ուրարտուի ժամանակ արձանագրութիւններ թողած լինէին մեր երկրի մասին, էլի Ուրարտուին Արմինա կը կոչէին:

Գարեհէ իր նոյն արձանագրութեան մէջ յիշում է Բարելոնում իր դէմ ապստամբութիւն հրահրած, այնտեղ թագաւոր դարձած արմին (հայ) Արախային, որի հայրը կոչուած էր Պալդիտա: Եթէ Ուրարտուի իշխող ժողովուրդը արմէններ եղած չլինէին, կամ, այլ խօսքով, եթէ արմէնները հենց Պալդիին պաշտող ուրարտացիներն եղած չլինէին, ապա արմին (հայ) Արախայի հայրը Պալդիտա (Պալդիի անուամբ) չէր կոչուի, մանաւանդ, որ Արախա նշանակում է «Արեան կամ Արա-եան»:

Արախայի պաղը (Պալդիտայի հայրը) ապրում էր հենց Ուրարտուի ժամանակ. Ուրարտուի ժամանակ ապրած այդ հայր իր որդուն (Արախայի հօրը) կոչել է Պալդիտա. սա անհերքելի փաստ է,

որ Սալղիին պաշտող ուրարտացիները հենց արմին Արախայի պապի ցեղից էին:

Մենք կապ ենք տեսնում Արմինայում Դարեհի գերիշխանութեան դէմ հայերի ապստամբութեան եւ հայ Արախայի Բարեւոնում հրահրած ապստամբութեան միջեւ: Այս երեւոյթը մտածել է տալիս, որ հայերը աշխատել են պարսկական հզօր գերիշխանութիւնը թօթափելու համար ապստամբութեան դրօշ բարձրացնել տարբեր երկրներում՝ օգտագործել այլ ճակատներ: այդ գործի համար Բարեւոնի ընտրութիւնը վատ չէր: Միաժամանակ Բարեւոնի նման մեծ ու նըշանաւոր երկրում հնարաւոր չէր այդ գործը դլուխ հանել աննշան եւ հեղինակութիւնից զուրկ առաքելութեամբ: Միանգամայն պարզ է, որ Արախան եղել է ուրարտական գինաստիպի իշխանական տնից: Նա Բարեւոնում օգտագործած պիտի լինի պետական մեծ տրադիցիաների տէր նախկին հզօր Ուրարտուի իշխանական տան հեղինակութիւնը, մանաւանդ, որ Ուրարտուն ու Բարեւոնը պիտի հին բարեկամներ եղած լինէին՝ երկուսի էլ թշնամի արիւնարբու Ասորեստանի դէմ դարաւոր պայքարի ընթացքում: Դարեհը գրում է. «... Արախանունով մի արմին (հայ), Սալղիտայի որդին, ապստամբեց Բարեւոնում... Նա ստեց ժողովրդին (ասելով). «Եւ Նարուգոսնոսորն եմ՝ Նարոնիտոսի որդին»: Ապա բարեւական ժողովուրդը ապստամբեց իմ դէմ եւ Արախայի կողմը բռնեց: Նա գրաւեց Բարեւոնը, նա դարձաւ թագաւոր Բարեւոնում»:

Դարեհը ստիպուած է եղել առանձին-առանձին բանակ ուղարկել (թէեւ տարբեր ժամանակներում) Արմինա եւ Բարեւոն: Դեռ մեզ համար մութ է, թէ հայերը Դարեհի դէմ ուրիշ ո՞ր երկրներին ոտքի հանեցին (կամ հանել փորձեցին): Դարեհի անձամբ Արմինա կամ Բարեւոն չզնայր կարող է ցուցմունք լինել նրա ռազմական զբաղուածութեան եւ այլ ճակատում: Նա Արմինա բանակ է ուղարկել նախ հայ զօրավար Դադարշիլի ղեկավարութեամբ (սա հաւատարիմ է մնացել Դարեհին՝ երեւի չհաւատարով հայերի յաղթանակին, ինչպէս Վասակը Աւարայրի ճակատամարտի ժամանակ), ապա, Դադարշիլի պարտութիւնից յետոյ, պարսիկ զօրավար Վատմիսայի ղեկավարութեամբ: Դարեհը առանձին բանակ է ուղարկել Բարեւոն պարսիկ զօրավար Վինտաֆրանայի ղեկավարութեամբ: Մրկու բանակներին էլ տուել է ապստամբներին հնազանդեցնելու հրաման: Արմինա ուղարկած բանակին ասել է. «Գնա զարկ այն բազմութեանը, որը ապստամբել է եւ չի ճանաչում ինձ», միւս կողմից՝ Բարեւոն ուղար-

կած բանակին ասել է. «Գնացէք զարկեցէք այդ բարեւական բազմութեանը, որը չի ճանաչում ինձ»:

Այսպիսով տեսնում ենք, որ հայերը յաջողուել են տարբեր ճակատներից — թէեւ հաղորդակցութիւնների պրիմիտիւ եւ դժուար պայմաններում ոչ նոյն ժամանակ — ապստամբութեան դրօշ պարզելու ծրագրի իրագործման մէջ: Այդ ծրագրի իրագործման համար Բարեւոն եւ առաքել մեծ հեղինակութեան տէր Արախային: Եւ ինչպէս տեսնում ենք, հայ Արախան հանդէս է եկել Բարեւոնում որպէս Նարուգոսնոսոր, որպէս Նարոնիտոսի որդին, այսինքն որպէս արքայական — աստուածային մեծ հեղինակութեան տէր անձնաւորութիւն, մի՞թէ հնարաւոր էր այդ ժամանակները զարգացած բարեւացիներին հաւատացնել, եթէ նա չունենար իր այդ կոչման համար իրական ապացոյցներ. նա բարեւացիների յօժարութեամբ էր դարձել թագաւոր. Բարեւոնի պէս երկրում համոզելով՝ ժողովրդին իր կողմ շահելու եւ թագաւոր դառնալու համար այդ ժամանակներում պէտք էր առնուազն արքայական-աստուածային ծագում ունեցած լինել. եւ յիրաւի Արախան այդպիսին էր. նա կոչուում էր Ար-ախա՝ «Արա-հան», այսինքն՝ արեւի Արա աստուծոյ սերունդ. նա որդին էր Սալղիտայի, այսինքն՝ ուրարտական մեծ Սալղիի շտաւիղը:

Այս տուեալները ազդակող փաստեր են, որ Դարեհի դէմ պայքարող հայերը եղել են հենց նախկին ուրարտական պետութեան տէր, Սալղիին պաշտող հայերը: Եթէ հայերը բուն հպարտ ուրարտացիներն եղած չլինէին, եթէ մարերի օգնութեամբ իշխանութեան զլուխ եկած՝ երկրում մի օտար փոքրամասնութիւն կամ երկրորդական-երրորդական տարր եղած լինէին, էլ ինչո՞ւ պիտի ապստամբէին եւ «թշնամի ուրարտացիներին» առկայութեան պայմաններում խախտէին երկրում «ի նպաստ իրենց» ստեղծուած դրութիւնը: Հայերը ոչ թէ միայն իրենք էին ապստամբած, այլեւ ապստամբութիւն հրահրած այլ երկրում. այդպիսի մեծ ձեռնարկութիւն չէր կարող կատարուել ուրիշ օգնութեամբ իշխանութեան զլուխ եկած հնուց երկրի ոչ-տէր տարբեր կողմից. միանգամայն պարզ է, որ հայերը նախկին ուրարտացիներն էին: Ուրարտուն երկրն էր հայերի: Ուրարտու եւ Արմանի (Արմինա, Արմենիա) համանիշ անուններ էին տրուած միեւնոյն երկրին եւ միեւնոյն պետութեան:

Մեր ուսումնասիրութիւններից բխող այս եզրայանգման համար փաստական տուեալները մինչեւ այստեղ բերուածներով չեն վերջանում: Դեռ կան այնպիսի ապացոյց-տուեալներ, որոնք ոչ թէ

միայն անվիճելիորէն կը հաստատեն Ուրարտուի արձէններէ երկէրն (Արմենիա) եղած լինելը, այլ եւ ցոյց կը տան, որ ուրարտական կրթոնը, ուրարտական իշխող ղինաստիան եւ հետեւաբար պետութիւնը եղել են աներկբայօրէն հայկական:

Բերենք այդ ապացոյց-տուեալները:

2. ՀԱՅՈՑ ԱՍՏՈՒԱՄԸ

Ինչպէս նշեցինք՝ Դարեհը Բեհիստունի ժայռի արձանագրութեան պարսկական տեքստում իր յիշած Արմինա անունն փոխարէն բարելական տեքստում բերելով (պահելով) նրա համանիշ Ուրաշտու անունը՝ մեծ եւ անդնահատելի ծառայութիւն է մատուցել հայազիտութեան՝ մեր ժողովրդի անցեալի մի շարք մութ մնացած հանդուցային հարցերի լուսարանման համար: Վերեւում ասացինք որ բոլոր հետազոտողներն ընդունում են, որ այստեղ յիշուած Ուրաշտուն Ուրարտուն է՝ Ուրարտու անունն մի այլ տարբերակը: Դա ցոյց է տալիս որ (Ուր)-աշտու անունն շ ձայնը նախապէս եղել է ր: Բ > շ փոփոխութիւնը անսովոր չի եղել հայերէնում: Աշտիշտ անունն համար մեր բերած ստուգարանութեան առթիւ խօսել էինք այն մասին, որ հայերէնի մի քանի բարբառներում ատամնային պայթեցումներէն առաջ ր-ի տեղ երեւում է շ, եւ օրինակ էինք բերել Համէլէնի բարբառից՝ մաշգիդ < մարդիկ, գեշտոն < կ'երթան (գնում), Համնի բարբառից՝ գաշգի < կ'երթայ (գնում էի), եւ Նախիջեանի բարբառից՝ մաշթ < մարդ, մօշթի < մօրթի, էշթալ < երթալ եւ այլն: Հետեւաբար Ուրաշտուն հենց Ուրարտու անունն է ր > շ տարբերութեամբ:

Ուր-աշտու = Ուր-արտու հաւասարութիւնից երեւում է, որ Ուր-աշտու անունն մէջ աշտու-ն Ուր-արտու (Ուր-արդի) անունն բաղադրիչ Արդու կամ Արդի աստուածութիւնն է, որը գտնուած ենք նաեւ Աշտիշտ անունն մէջ: Ինչպէս ասել ենք վերեւում՝ Աշտիշտ անունը (ր > շ փոփոխութեամբ) պիտի հասկանալ Արդի-

շառ¹⁵, այսինքն «Արդի (Արա) աստուայ քաղաք», որտեղ գտնուող մեհեանը (որը յիշատակուած է Վահագնի անուամբ) եղել է Արդի (Արա) աստուայ մեհեանը:

Վերեւում ցոյց էինք տուել, որ Ուր-արտու կամ Ուր-արդի անունն -արտու կամ -արդի (Արա) մասը ներկայացնում է արեւ-կրակ աստուածութիւնը, հետեւաբար Ardi - Artu > Ašdi - Aštu անունը ներկայացնում է կրակ-արեւ աստուածութիւնը, որը - as սուֆիքսով մեր առաջ ներկայանում է որպէս Aštu - as, որը հայերի դարերով պաշտած եւ մինչեւ հիմա ծաղումն անյայտ մնացած Աստուած աստուածութիւնն է: Ահա թէ ինչ էր նշանակում Դարեհի անդնահատելի վկայութիւնը, թէ Armina (Ar[-ma-ni]) = Uraštu ([ur-]aštu), այսինքն՝ Ar (Ara) = Aštu (Ardi):

Լաւ իմանալով, որ ժողովուրդների ծագման գծուարին հարցը շատ յաճախ կապուած է նրանց հեթանոսական ժամանակների ազգային ղլխաւոր աստուածութիւնների անունն հետ, հայազիտութեամբ զբաղուած հայ եւ օտար մի շարք գիտնականներ վերջին 150 տարիների ընթացքում բաւական ճիշտ թափեցին լուծելու Աստուած անունն բովանդակութեան ու ծագման խնդիրը՝ յոյս ունենալով զբանով լոյս սփռել հայերի ծագման մութ հարցի վրայ: Դժուարութիւնն այն էր, որ Աստուած անունը ղալիս էր խոր անցեալից եւ դադարել էր յատուկ անուն լինելուց, դարձել էր հայերէնի հասարակ անուններից մին: Երկրորդ դժուարութիւնն այն էր, որ հայկական պանթէոնում Աստուած-ի տեղը (մեհեանները) զբաւել էին այլ (հետագայում յայտնուած) աստուածներ (Բարշամին, Արամազդ, Եհո-վա եւ այլն), որոնք ծածկոյթի տակ էին առել նրան եւ դժուարացրել նրա ճանաչումը: Այս է պատճառը, որ հայազէտ պատմաբանները երկար որոնումներից յետոյ եւ նախապաշարուած՝ հայերի թաղկաններից գաղթած լինելու սխալ եւ այդ ժամանակներում տարածուած տեսակէտներից՝ Աստուածին համարեցին ծագած փոխգիտական

15) Աշտիշտ (Արդի-շառ) անունն գոյութիւնը կոնկրէտ փաստ է որ Ուր-աշտու (Ուր-արտու կամ Ուր-արդի) անունն աշտու (արդի) մասը բաժանելի է Ուր մասից, որ Ուր-արդի կամ Ուր-աշտու անունը արմատական չէ, այլ բաղկացած է երկու առանձին (բաժանելի) բառերից՝ Ուր կամ Ուրու եւ Արդի կամ Աշտու բառերից: Յոյց էինք տուել, որ Ուր-արտու կամ Ուրու-արդի ճշգրտուած է վայր կամ երկիր կրակ-արեւ (Արդու կամ Արդի) աստուայ:

Savazios-ից: Մինչդեռ Աշտուաք պարզ երեւում է Հայաստանի Անագ-Աշտուաշ գիցանուան մէջ:

Այժմ, երբ պարզուել է մեր Աստուած-ի թէ՛ ծագումը (Արա-Արդի) եւ թէ՛ բովանդակութիւնը (Արեւ-կրակ), բնական հարց է առաջանում, թէ արդեօք նա մեհեան ունէ՞ր: Այո, ունէր, եւ ունէր մէկից աւելի: Դրանցից առաջինին մենք ծանօթացանք: Դա Աշտիշատի մեհեանն էր:

Աշտիշատի մեհեանի մասին վերելում խօսած ժամանակ ցոյց էինք տուել, որ այն Արայի մեհեանն էր, որի մօտ գտնուում էին նաեւ Շամիրամ-Աստղիկի եւ Արայի սիրելի Նու[-արդ]-ի (=Անահիտի) մեհեանները:

Աշտիշատ նշանակում է Աշտի (Աշտուա-Աստուածի) շէն, այսինքն՝ Աշտի > Արդի-Արայի քաղաք: Շամիրամ անուան բացատրութեան առթիւ ցոյց էինք տուել, որ Արային սիրահետող Շամիրամը Իշտարն է, որը մեզ մօտ կոչուել է Աստղիկ, իսկ մենք գիտենք, որ Աշտիշատում Արայի (Վահագնի) մեհեանի մօտ կար Աստղիկի մեհեանը, որ կոչւում էր նաեւ սեմեակ վախագնի (սենեակ բառը հնում նշանակում էր նաեւ կանանոց, հարձ), յայտնի է, որ Շամիրամ-Աստղիկի սիրածը Արան էր, ոչ թէ Վահագնը: Այս հանգամանքը փաստում է նաեւ Աշտիշատում Աստղիկի մեհեանից դատ Անահիտի մեհեանի գոյութեամբ: Արայի սիրելի եւ հարազատ կնոջ՝ Նուարդ անուան վերլուծութեան առթիւ ցոյց էինք տուել, որ Նու-արդ նշանակում է Արդի (Աշտի)-Արայի Նու-ն («Արեւի Լուսինը»), որը մեզ մօտ կոչուել է նաեւ Անահիտ: Խորենացու պահած տեղեկութիւնից գիտենք, որ Նու-արդը (հետեւաբար՝ Նու-Անահիտը) Արայի սիրելի եւ օրինաւոր կինն էր, որի մեհեանի՝ Արայի (Վահագնի) մեհեանի մօտ գտնուելը նոյնպէս հասկանալի էր եւ փաստ, որ Վահագնի մեհեանը Արայի մեհեանն էր. եւ ինչպէս տեսանք, հենց Աշտի-շատ անունն էլ (Աշտի < Արդի — Արա) պիտի հասկանալ Արա-շատ, այսինքն՝ Աշտի կամ Աշտու (Աշտուա-Աստուած)-շէն:

ա) ՎԱՀԱԳՆ

Այստեղ առաջանում է այն հարցը, թէ ինչպէ՞ս է պատահել, որ Աշտիշատի մեհեանը Աշտիի՝ Աշտուաի (կամ Արայի) մեհեան կոչուելու տեղ կոչուել է Վահագնի մեհեան: Ո՞վ էր Վահագնը:

Այս առեղծուածի լուծմամբ զբաղուել են մի շարք հետազոտողներ, սակայն նրանց հնարաւոր չի եղել լուծել զաղտնիքը: Նրանց սխալ մօտեցումը եղել է նախ այն, որ Վահագնը համարել են այլ եւ օտարամուտ աստուածութիւն, երկրորդ՝ չեն հարցրել, թէ ինչո՞ւ Վահագնի մեհեանի վայրը կոչուել է Աշտիշատ եւ ոչ Վահագնաշատ: Ինչպէս տեսանք վերելում, Մատիկեանն ու Ալոնցը իրենց ուսումնասիրութիւններում եկել են այն եզրակացութեան, որ Վահագնը զբաղւել է Արայի տեղը, բայց նրանց չի յաջողուել գտնել թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս է պատահել այդ: Ուսումնասիրողներից ոմանք էլ Վահագնին անյաջող կերպով կապել են իրանական Վերեթրազնա-ի հետ (այդ ժամանակներին հայկական շատ անբացատրելի բաներ իրանականի հետ կապելու սովորութիւն կար): Մինչդեռ Վահագնի թէ՛ անուան եւ թէ՛ բովանդակութեան զաղտնիքը ունէր շատ մեծ հընութիւն, թաղուած՝ խոր անցեալի մոռացուած սումերահայ յարաբերութիւնների մթութեան մէջ:

Վերելում խօսեցինք այն մասին, որ հեթանոսական հաւատքի ու պաշտամունքի տեսակէտով արեւի եւ կրակի աստուածութիւնները միասնանում էին. այդ պատճառով էլ արեւի աստուած Արա — Արդին իր Աշտի — Աշտու (Աշտուա) ձեւում ունեցել է նաեւ կրակի աստուածութեան բնոյթ, զրա համար ապացոյց ենք համարում Աշտանակ («չամտան») բառը, որը նշանակում է «աշտ-ին՝ կրակ-լոյսին կրող, պահող» (հմմտ. դանձ-անակ, ժամ-անակ, չըլ-անակ, ճօճ-անակ եւ այլն): Գուցէ A š t u «կրակ» արմատը կայ նաեւ ուրարտական am - aštu «այրել» բառում (հմմտ. բառնալ — ամբառնալ, բարձել — ամբարձումն եւ այլն): Պարսիկները հին ժամանակներում մեզանից վերցնելով աշտ «կրակ» բառը՝ շտ > տշ դրափոխութեամբ աղաւաղել են աւտաշ «կրակ» ձեւի: Աշտ «կրակ» բառը համեմատել ակիաղական išātu «կրակ» բառի հետ:

Այս փաստերը ցոյց են տալիս, որ Աշտի-շատի մեհեանը եղել է յատկապէս կրակապաշտութեան վայր:

Մեր լեզուարանական, պատմադիտական եւ ազգադրական բնագաւառներում կատարած համեմատական հետազոտութիւնները ցոյց են տուել, որ Վահագնը եղել է կրակի աստուածութեան տրուած սումերահայ մի բարդ տեքստի: Այս անուան ծագման ու նշանակութեան մասին խօսելուց առաջ անհրաժեշտ է նշել հետեւեալը.

Խոր անցեալում մարդիկ իրենց գիշերները լուսաւորում էին

եղէզի ծայրին ամրացուած վառելանիւթով: Այդ միջոցառումը հետագայում աւելի զարգանալով հեթանոսութեան ուշ շրջանին եւ քրիստոնէութեան մուսքից յետոյ երեւում է աշտանակների ձեւով: Հեթանոսական խոր անցեալում մարդիկ պաշտել են կրակին եւ պաշտուող կրակը պահել են յաճախ բարձր պահուած եղէզների ծայրին: Հնում մեզ մօտ Վահագնի մասին երգուած յայտնի բանաստեղծութեան մէջ ասուած էր.

«... Ընդ եղեգան փող ծուխ ելանէր.
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր...»:


Ինչպէս տեսնում ենք՝ Վահագնի ծնունդը պատկերուած է եղէզի միջից բարձրացող բոցով: Եւ ահա Վահագն (վահ[ա]գն) անունը հենց կրակի աստծուն նշող սուճեր Bil - Gin «բոցավառուող եղէզ» տերմինն է:

Սումերերէնում կրակի աստծուն է ներկայացնում D Gibil-ը որը նշանակում էր «եղէզ բոցավառուող», գրւում էր Bil - Gi(Bil - Gin) ձեւով, որը բառացի նշանակում էր «բոցավառուող եղէզ»¹⁶: Սումերերէնում bil նշանակում է «բոցավառել», իսկ gi կամ (նախապէս) gin նշանակում է «եղէզ»: Bil - Gin բառի շեշտը առաջին վանկի վրայ է: Եւ շտուած bil վանկը (սեպագիրը հնչւում է նաեւ bel) b > վ, l > ղ ձայնափոխութեամբ սուել է վիղ (վեղ) > վաղ կամ վահ (l > ղ > ի > հ ձայնափոխութեան համար տե՛ս Աճառեան, «Լիակատար քեր. հայ լեզուի», 2, էջ 745), իսկ gin-ը (երկրորդ-վերջին եւ անշեշտ վանկում ի-ն ընկնելով կամ փոխուելով չզբուող ը-ի) սուել է գն (գրն), այնպէս որ Bil - Gin-ը դարձել է վահ(ա)գն: Ճիշդ է, որ հնդեւրոպական նախալեզուի g-ն հայերէնում համապատասխան է կ-ի, բայց Bil - Gin տերմինը հնդեւրոպական չէ, եւ սումեր գ-ն այստեղ համապատասխանում է հայ գ-ին (հմժա. սումեր gurun = հայ գարուն, սումեր ga = հայ գոյ, սումեր agar = հայ ագարակ, սումեր Idigna = հայ Տիգրիս եւայլն): Այնպէս որ

¹⁶ S. Langdon, Յոյն տեղում, էջ 215, տե՛ս Gibil, էջ 271 տե՛ս gin, էջ 27: Արդէն սումեր gi-ի gin լիթնիւն ցուցմունք է ակնադիւրսում պահուած Kanú նոյնամիշը. հմժա. նաեւ անգլ. cane «եղէզ» բառը, հաւանաբար եւ հայ չպահպանուած դան արմատը, որից՝ գամահարի, գամակոծել:

Bil - Gin-ը (D Gi - Bil) դարձել է վահագն, որը կրակի աստուածութեան տրուած տերմինն է եւ Աշտիշատում (Աշտի-շատ) ներկայացնում էր կրակի եւ լոյսի աստուած Աշտի-ին կամ Աշտու (Աշտու-աս = Աստու-ած) Արային: Ուրարտական որոշ տեքստերում արդէն amaštu-ի տեղ երեւում է Gibil «ջահ» դադափարագիրը:

Կրակի-լոյսի աստուած Վահագնը յորջորջուել է վիշապաբաղ: Այս մտկոյրը միանգամայն լուսարանում ու բացայայտում է Վահագնի նախնական բնոյթը՝ կապուած դործող հրարուխի (լեբան խառնարանից ժայթքող կրակի) պաշտամունքի հետ: Մինչեւ հիմա վիշապաբաղ-ի քաղաքաբնէր սխալմամբ կապելով քաղել բայի հետ՝ վիշապաբաղ տերմինն էլ հասկանում էին «վիշապ քաղող, վիշապ սպանող», մինչդեռ քաղ բառը ինքնին ներկայացնում էր երախից կրակ ժայթքող մի հրէշ. ուստի վիշապաբաղ տերմինն էլ պատկերացնում էր հենց խոր անցեալում պաշտուող հրարուխը որպէս խառնարանից (երախից) հուր արձակող բոցալեզու մի ահեղ վիշապ-հրէշ: Քաղ բառի այս իմաստը ճշգրտէն բացատրուած է Մ. Արեղեանի կողմից Արամի առասպելի մեկնարանման առթիւ, բայց հետաքրքիր է, որ այն վրիպել է վիշապաբաղ Վահագնի բնոյթն հետազոտողների աչքից:

Արամի պատմութեան մէջ Խորենացու յիշած «Պայապիս քաղ-եայ Տիտանիան»-ի մասին Մ. Արեղեանը գրում է հետեւեալը. «Այս հակայի անուան մէջ տեսնում են «Պայապիս խիմայրազենես» — Պայապիս խիմայրածին (քիմայրածին), որ հայերէն լինում է քաղի գարմ, քաղեայ: «Գիզանտների գլխաւորն է Տիփոն (Տիֆոն, Տիֆոս, Typhaeus, որ է իսկապէս ծուխ արձակող, ծխող...): ...Տիփոնի զաւակն է Քիմայրա, որ նշանակում է քաղ, մի հրէշ, որի երախից կրակ է դուրս հոսում: Նա սիմբոլ է Լիկիայի մի հրարխային լեբան»¹⁷: Քաղը համեմատել նաեւ սումեր gäl « storm de-mon»¹⁸ «փոթորիկի դեւ» բառի հետ:

Այսպիսով իմանալով քաղ-ի այս իսկական իմաստը՝ միանգամայն հասկանալի է դառնում կրակի աստուած Վահագնի «վիշապա-

¹⁷ «Հայոց Հին Գրականութեան պատմութիւն», Ա. Երեւան, 1944, էջ 24:


¹⁸ S. Langdon, Յոյն տեղում, էջ 269:

Գաղ» մակղերի նշանակութիւնը որպէս երախից բոց արձակող մի հսկայ վիշապ-հրէշ, որը սիմբոլացնում է գործող ահաւոր հրարուխը:

Սրանով վերջնականապէս բացայայտում է, որ Աշտիշատի մեհեանը կրակապաշտութեան մի նշանաւոր կենտրոն էր՝ նախապէս կապուած մի գործող հրարուխի պաշտամունքի հետ: Ի հարկէ պաշտամունքի այդ վայրը չէր կարող գտնուած լինել գործող հրարուխի ճիշդ վայրում. հուր-բոց արձակող խառնարանը պէտք է գտնուած լինէր պաշտամունքի վայրից (այս դէպքում՝ տաճարի վայրից) տեսանելի հեռաւորութեան վրայ: Հետեւաբար պիտի ընդունել, որ այժմ հանգած այդ խառնարանը պէտք է գտնուի Աշտիշատից ոչ շատ հեռու, մեհեանի շրջանից տեսանելի մի վայրում: Ի հարկէ, եւ անկասկած այն Աշտիշատի եւ Մշոյ շրջանից տեսանելի, Վանայ ծովի արեւմտեան ափին գտնուող նշանաւոր Նեմրութ լեռան ներկայումս հանգած խառնարանն էր, որի հրարուխը «գործել է ընդհուպ մինչեւ 1440 թուականը եւ նոյն իսկ դրանից յետոյ»¹⁹: Նեմրութ լեռան դադաթը բարձր է 3050 մետր, Վանայ ծովից՝ 1330 մետր: Ուստի նրա խառնարանը իր վեհութեամբ իշխում է ոչ թէ միայն Տարօնի, այլեւ ամբողջ Վանայ ծովի ու շրջապատի վրայ: Միանգամայն պարզ է, որ այդ խառնարանը, որպէս բացուած մի հսկայ երախ, իր որոտընդոստ ու Ֆշչացող ժայթքումներով՝ հեթանոսական ժամանակաշրջանի ժողովրդի աչքին պիտի ներկայանար որպէս տիտանեան մի ահաւոր բոցալեզու վիշապ, եւ որպէս կրակի աստուած՝ պիտի դառնար պաշտամունքի առարկայ: Հ. Լինչի «Armenia» գրքից բերուած այս քարտէզում պարզ երեւում է Նեմրութի խորագրեցիկ կլոր խառնարանը Վանայ ծովի արեւմտեան ափին:

Ի հարկէ դժուար չէ պատկերացնել՝ խառնարանից էլ շատ վեր, լճի մակերեսից մի քանի հազար մետր բարձրութեան հասնող այդ հրարխային բոցարձակման ու լուսարձակման թովիչ տեսարանը, որ դիտուում էր յատկապէս զիշեր ժամանակ ինչպէս Աշտիշատից ու Մշոյ դաշտից, այնպէս էլ ամբողջ Վանայ ծովից ու նրա շրջապատից: Հեթանոսական անցեալում վիշապաքաղ այդ Վահագնի՝ ամբողջ ծովը չիկացնող եւ ծիրանեգոյն դարձնող բոցարձակումների մէջ, երկիրը դղրդացնող որոտընդոստ ժայթքումների մէջ դժուար

¹⁹ Թ. Յակոբեան, «Հայաստանի պատմական աշխարհագրութիւն», Երևան, 1968, էջ 10 - 11:



Նեմրութ լեռան խառնարանը

չէր հաւատալ Վահագնին ծնող երկրի, երկնքի ու ծովի երկունքին, ուստի բնական է, որ պիտի երգէին.

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ եւ ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ուներ եւ գկարմրիկն եղեգնիկ,
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր...

Ինչպէս տեսնում ենք, ծովափին՝ դէպի երկինք ժայթքող բոցաչէկ հրարուխից (Վահագնի ծնունդից) ծիրանեգոյն է դարձել երկունքին մասնակցող ծովը:

Հեթանոսական շրջանում մարդիկ հաւատում էին, որ արեւն ու կրակը ծնւում են թոյսից՝ յատկապէս եղէդից. bil-gin («բոցափառուող եղէգ») տերմինի gin բաղադրիչը սուսերբէնում ունի թէ՛ «եղէգ» եւ թէ՛ «ծնել, ծին» իմաստը, հետեւաբար bil-gin նշանակում է նաեւ «բոց ծնող, հրածին», որով կոչուել է հրարուխը: Մեր կարծիքով նոյն Bilgin (> Վաղագն > Վահագն) տերմինից է գա-

լիս հռոմէական դիցարանութեան կրակի աստուած Vulcan անունը, որը եւրոպական լեզուներում (լատ. Vulcan, իտալ. , անգլ. Volcano, Ֆրանս. Volcan, ռուս. «Վուլխան» եւայլն) պահում է «հրարուխ» նշանակութիւնը. պիտի նոյն ծագումն ունեցած լինի նաեւ արաբ. بركان burkan «հրարուխ» բառը:

Ասորեստանի եւ Ուրարտուի ժամանակներում, Վանայ ծովի արեւմտեան ափին դործող Նեմրութի հրարուխից զատ՝ հիւսիս-արեւմտեան ափին կար հրարխային Սիփանը (4434 մետր) եւ հիւսիս-արեւելքում Ծաղկանց լեռների (Ալա-Դաղ 3330 մետր) այժմ իսկ դործող Թոնդուրեկի հրարուխը, հարաւային ափի մօտ Վարազը (մի այլ Bil - gi[n] ?) եւ դործող այլ դադաթներ: Ուստի շատ բնական է, որ դործող հրարուխների այս երկիրը հարաւի տափաստանային երկրների սեմական բնակչութեան կողմից պիտի կոչուէր Նաիրի երկիր՝ «կրակի երկիր» եւ այդտեղ ապրող բնիկ ցեղերը՝ Նաիրի երկրի ցեղեր: Անդամ Վանայ ծովը կոչուել է «Վերին ծով» կամ «Նաիրի ծով» («Կրակի ծով» կամ «Կրակի երկրի ծով»): Նաիրի մասին ահա սեպագրական մի յիշատակութիւն Տիգլաթ-Պալասար Ա-ի Նաիրի դէմ կատարած արշաւանքի մասին խօսող արձանագրութիւնից (բերում ենք կրճատումներով). «Այդ ժամանակ հռչակուած հզօրութեամբ Աշուրի... քայլեցի դժուար ճանապարհների վրայով... դէպի երկրները հեռու արքաների, որոնք վերին ծովի եզերքներում են եւ որոնք բնաւ չգիտեն հպատակութիւն... 23 արքաներ Նաիրի երկրի հաւաքել էին իրենց մարտակառքերը եւ բազմութիւնները իրենց երկրների եւ յառաջացել էին պատերազմելու...: Յարձակուեցի նրանց վրայ եւ բերեցի կործանում...: 60 արքաներին Նաիրի երկրների ինչպէս եւ նրանց, որոնք եկել էին սրանց օգնութեան, ես հալածեցի... Դէպի վերին ծով...»²⁰: Այս վկայութեամբ պարզ երեւում է, որ Վանայ ծովի շուրջ դործող հրարուխների երկիրը կոչուել է Նաիրի «կրակի երկիր»: Իսկ Աշուր-Նադիր-Պալ Ա-ը գրում է. «Կաշիարի լեռը անցայ եւ երկրորդ անգամ լինելով իջայ դէպի Նաիրի երկիրը...»²¹: Կաշիարի լեռը անցնելով մտած երկիրը Աղձնիքի ու Մուշի շրջաններն են, որոնց նա կոչում է Նաիրի երկիր «կրակի երկիր»: Ուրարտուի Մենուա արքայի՝ Մուշի մօտ կանգնե-

ցրած կոթողի արձանագրութիւնից էլ գիտենք, որ նա այդ երկիրը կոչում է Arbi («Արեան, Արայեան») երկիր: Այստեղ հետաքրքիր է նշել, որ սումերերէն Muš նշանակում է «վիշապ, օձ, փայլ, պայծառութիւն»²²:

Այսպիսով տեսնում ենք, որ Աշտիշատը եղել է Նաիրեան երկրի՝ արեւել-կրակի — լոյսի պաշտամունքի գլխաւոր կենտրոններից մէկը, որտեղ արեւի աստուած Արայի մեհեանը նուիրուած է եղել նաեւ կրակապաշտութեան՝ նախապէս կապուած Նեմրութի նշանաւոր հրարուխի պաշտամունքին որպէս վիշապաքաղ Վահագն: Սա ցոյց է տալիս, որ արեւի աստուած Ար-ի (Արայի) մէջ եղել է նաեւ կրակի աստուածութեան բնոյթ. դա հաստատուում է նաեւ Աղձնիքի (Արմանի)՝ Նաիրի (կրակի երկիր) կոչուելովը:

Ինչպէս նշեցինք վերեւում՝ պաշտամունքի տեսակէտով արեւի ու կրակի աստուածութիւնները միասնանում էին, դրա համար էլ արեւ Արա-Արդի տարբերակ Աշտին (Աշտու-Աշտուասը) ունեցել է նաեւ կրակի — լոյսի բնոյթ: Ղ. Ալիշանը բերում է մի հին վկայութեան խօսքերը. «Ոմանք գԱրեգական պաշտօնիցն եւ Վահագն կոչեցին»²³:

Արեւի-կրակի-լոյսի աստուածութիւնը կարող էր հետադառնալ դառնալ անգամ երկրի աստուածութիւն: Հաւանաբար, Վախագն անունն պէս, սումերական նոյն Bil - Gi(n) աստուածութիւնից է ծագել արաբ Ալ falak (un) տերմինը, որը ստացել է «երկինք, օրբիտ» նշանակութիւնը: Բնոյթի փոփոխութեան կամ զարգացման մի այլ օրինակ ունենք Պաղդի մէջ, Ուրարտուի հզօրացմամբ եւ իր մէջ բազմաթիւ Նաիրեան ցեղերի ընդգրկմամբ՝ նախկին արեւի-կրակի Արա-Արդի աստուածը իր Ալդի-Պաղդի ձեւով դարձել է բոլոր աստուածների գլխաւորը կամ հայրը՝ երկնքի աստուածը, եւ նրան որպէս արեւի աստուածութիւն փոխարինել է Շիւինին: (Աշուրն էլ, որ նախապէս եղել էր բուսականութեան աստուած՝ Ասորեստանի հզօրացմամբ դարձել է ռազմի աստուած եւ նոյնացուել արեւի հետ, թէեւ կար արեւի աստուած Շամաշը): Պաղդի բնոյթի փոփոխման այս երեւոյթը հաստատուում է Աշտուասով: Ինչպէս տեսանք վերեւում՝ Արդի > Աշտի-Աշտու (Աշտու-աս) աստուածը արեւի եւ յաս-

²⁰) D. Luckenbill, «Ancient Records of Assyria and Babylonia», 1927, p. 80:

²¹) Նոյն տեղում, էջ 50:

²²) S. Langdon, անյն, էջ 230:

²³) Ղ. Ալիշան, «Հին Հաւատք», Վեներիկ, 1895, էջ 86:

կապէս կրակի աստուածն էր Աշտիշատում, բայց մեզ լաւ է յայտնի, որ մեր Աստուածը քրիստոնէութեան մուտքի ժամանակներին երկնքի հայր աստուածն էր, հայերը ունէին հեթանոսական շատ աստուածներ, բայց քրիստոնէութեան սկզբի օրերին այդ աստուածների մէջ միայն Աստուածն է ներկայացրել Սուրբ Գրքում յիշուած երկնքի հայր աստուած Բհոլային. Ոչ մի կասկած, որ Աշտիշատ նշանակում է «Աշտուասի քաղաք»՝ Աշտուասաչէն կամ Աստուածաչէն. այդտեղ գտնուող Մեհեանն էլ պատկանում էր Աշտուասին (Արային)՝ արեւիկրակի-լոյսի աստծուն: «Հայկական բոլոր հեթանոս սրբավայրերից առաջինն էր Տարօնը իր Աշտիշատով»²⁴:

Ղափանցեանք ašdu և aštu (ինչպէս ardi և arti կամ artu) ձևերը լեզուարանական տեսակէտով նոյն բանն է համարում (հմմտ. նաեւ Ուր-արդի և Ուր-արտու): Այդ հիմքով բերում է խուրրիական երկու յատուկ անուններ և մի շարք իզական անձնանուններ. ašt կամ ašdu հիմքով բերում է astuzzi, ašduhhi, Ašdu, Asduanti, Asduatana, Asduašar, և ašta հիմքով՝ Aštahuta, Aštaqanza, Astakina և aste հիմքով՝ Aste, Ašten Asteia²⁵: Անտարակոյս՝ կանացի այս անունների մէջ ašt կամ ašd արմատն ունի արեւի, երկնային լուսատուի, կրակի կամ լոյսի նշանակութիւն, ինչպէս մենք եւս մեր աղջիկներին ու կանանց (որպէս գեղեցիկ սեռ) նմանեցնելով երկնային լուսատուներին կամ լոյսին ու հուրին՝ յաճախ անուանում ենք Արփ-իկ, Լուսին, Արուսեակ, Լուսնթաղ, Ասաղ-իկ, Արշ-ա-լոյս, Հր-անոյշ կամ Ատր-ինէ, Լուս-իկ կամ Լուս-ինէ եւայլն:

Այսպիսով միանգամայն հասկանալի է այժմ, թէ ինչու Նաիրի («Կրակի երկիր») անուան փոխարինող Ուրուատրի («Կրակի վայր») Ուրարդի կամ Ուրարտու («արեւի-կրակի երկիր») անունը Դարեհի արձանագրութեան բարեխական տեքստում բերուել է Ուր-աշտու, ձեւով, և այն էլ Արմինա (Արմենիա) անուան որպէս հոմանիշ (Ուր-արդի՝ «Երկիր Արայի», Ար-մա-նի՝ «Արայորդիների երկիր»):

Աշտու-ն կամ Աշտու-աս-ը (Աստու-ած-ը) արեւի (հայերի) գլխաւոր աստուածն էր («Հայկական հեթանոս սրբավայրերից առաջինն էր Աշտի-շատը»):

24) Լէո, «Հայոց պատմութիւն», հատր 1, Երևան, 1906, էջ 382:

25) Գր. Ղափանցեան, «Հայաստ», էջ 218:

Արդի-Աշտի կամ Արտու-Աշտու (Աշտու-աս)ն, Ուրարդի-Ուրարտու-Ուրաշտու անուան ծնունդ տուող աստուածը, անկասկած ուրարտացիների գլխաւոր աստուածն էր:

Նրա անունը, Ուրարդի-Ուրարտու անուան առաջացման ժամանակներին, կոչուում էր Արդի (Assur - Nasir - Pale-ը յիշում է Ar - ardi, Sargon - ը Ur - ardi), որը, ինչպէս տեսանք (Նու-արդ անուան ստուգարանման առթիւ) արեւի Ար կամ Արա աստուածն էր:

բ) ԽԱԼԴԻ

Արդի աստծոյ անունն էր կրում Արդի-նի քաղաքը՝ ասուրական արձանագրութիւնների մէջ յիշուած Մուսասիրը: Հետեւաբար Արդի աստծոյ միւս նշանաւոր մեհեանը անկասկած գտնուում էր Արդինիում: Եւ քանի որ այս մեհեանը պատկանում էր Ուր-արդի (Ուր-արտու) անուան բաղադրիչ Արդի աստծուն, ապա այն պէտք է ուրարտացիների գլխաւոր սրբավայրը եղած լինէր, ինչպէս Էջմիածինը քրիստոնէայ հայերի, Երուսաղէմը՝ քրիստոնէաների ընդհանրապէս և Մեկկէն՝ մահմեդականների: Յերաւի Արդինին ուրարտացիների մեծ և գլխաւոր սրբավայրն էր՝ նրանց կրօնական կենտրոնը:

Բայց ուրարտական և ասուրական արձանագրութիւնների մէջ չենք հանդիպում որեւէ յիշատակութեան Արդի աստծոյ մեհեանի Արդինիում գտնուելու մասին: Ուրարտական պանթէոնում էլ յիշուում է մի խեղճ Արդի, որին թէեւ Մեղիքիզիլիին բաւական ճշգրտութեամբ տալիս է «լուսատու» նշանակութիւնը, բայց Մհերի դրան արձանագրութեան ուրարտական աստուածների երկար ցուցակում դալիս է ամենավերջինից առաջ և նրան յատկացուած զոհերի տեսակից ու քանակից դատելով («Արդին» 2 ոչխար», երբ «Պայլիին 17 արջառ և 34 ոչխար»)՝ այն Նաիրեան ամենափոքր ցեղերից մէկի աստուածն էր: Ուստի պարզ է, որ սա չէր այն Արդի աստուածը, որի անունով երկիրն ու տէրութիւնը կոչուում էին Ուրարդի-Ուրարտու և որի անուան էր նուիրուած Արդինին՝ ուրարտացիների գլխաւոր սրբատեղին: Ի հարկէ բացառուած չէ, որ արեւի վաղեմի Արա-Արդի աստուածը արմենո-ուրարտական ցեղերից մէկի մօտ պահուած լինի որպէս արեւի աստուածութիւն, մի ուրիշի մօտ՝ որպէս երկնային լուսատու, կամ դառնար մի պարզ աստղ, իսկ մի ուրիշի մօտ՝ որպէս

լոյսի կամ կրակի աստուած, Արան արդէն հետագայում դարձել էր մի աննշան աստղ²⁶. բայց երկրին ու աէրութեան իր անունը տուող Արդի-ն, որի մեհեանի վայրը ամբողջ Ուրարտու երկրի գլխաւոր սրբատեղին էր, չէր կարող այդքան խեղճացուած լինել: Պարզ է, որ կար մի այլ Արդի, աւելի նշանաւոր, եւ ուրարտացիների (ժամանակ) կողմից աւելի յարգուած: Այդ Արդին (բարբառային տարբերութեամբ) կոչուած էր Ալդի. դա Ուրարտական պետութեան գլխաւոր աստուած Խալդին էր ([Ն]ալդի): Ոչ մի կասկած, որ այս էր Ուրարդի (Ուրարտու) անունն աէր Արդին. այն Արդի-ն, որի աւելի հին (Ուրարտական պետութիւնից առաջ) Արդի անուամբ Մուսասիրը կոչուել էր Արդի-նի: Խալդին, որպէս երկրի գլխաւոր աստուած, ի հարկէ ունէր մեհեաններ երկրի մի շարք այլ վայրերում, յատկապէս Բիայնայի կենտրոնում, բայց ինչո՞ւ այդ միւս Խալդեան մեհեանների վայրերից ոչ մէկը չի դարձել Ուրարտուի գլխաւոր սրբատեղին: Բնական կը լինէր, որ հենց մայրաքաղաք Տուշպան կամ գոնէ Արդիշտիֆինիին դառնար Ուրարտուի կրօնական կենտրոնը, բայց այդպէս չի եղել: Ուրարտուի ժողովրդի եւ պետութեան գլխաւոր սրբատեղին, կրօնական կենտրոնը եղել է ու շարունակել է լինել Մուսասիր-Արդինին: Մելիքիշվիլին Արդինի քաղաքի մասին գրում է.

« URU ardini — Ուրարտուի կրօնական կենտրոն-քաղաքը, ուրարտացիների գլխաւոր աստծոյ Խալդիի պաշտամունքի գլխաւոր կենտրոնը»²⁷:

Խալդիի գլխաւոր տաճարը գտնուում էր Արդինիում, մի քաղաք, որն առանձին թագաւորութիւն էր, թէեւ յետոյ միացուեց կամ դաշնակից դարձուեց Ուրարտուին: Այն գտնուում էր կենտրոնից հեռու՝ հարաւում, սահմանին աւելի մօտ մի վայրում, որն Ասորեստանի դէմ պաշտպանելն աւելի գծուար էր, քան թէ եթէ գտնուելու լինէր կենտրոնում:

Պարզ է, որ Արդինիի (Արդիի) տաճարը գոյութիւն ունէր շատ հնուց (Ուրարտուի պետութեան կազմաւորումից ու հզօրացումից առաջ) որպէս ուրարտական ժողովրդի աւանդական սուրբ եւ ազգա-

²⁶ «Նուագ է լուսին քան գարեգակն, Պուագ է եւ աստղ քան լուսին. նուագ է Արայն քան գարեգակն գեղեցիկ», տես Մատիկեան, «Արա Գեղեցիկ», էջ 310:

²⁷ Մելիքիշվիլի, նշում գիրքը, յատուկ ամսագրի ցուցակում, տե՛ս

URU ardini:

յին նշանաւոր տաճարը, որն Ուրարտուի զարգացման, հզօրացման ու ծաւալման պատճառով մնացել էր հարաւում: Մուսասիրը արդէն կոչուում էր Արդինի. եթէ Ուրարտուի արքաներից մէկի կատարած կառուցումով էր այդ քաղաքը դարձել Ուրարտուի սրբալայրը, ապա այն պէտք է կոչուէր ոչ թէ Արդինի, այլ Խալդինի, գոնէ՝ Ալդինի: Մուսասիրն Ուրարտուի ժամանակ կոչուում էր Արդինի, այնպէս ինչպէս Վաղարշապատն այժմ կոչուում է Էջմիածին, ինչ նշանակութիւն եւ կարեւորութիւն որ ունի Էջմիածինը ներկայ աշխարհի հայութեան համար, աւելի մեծ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունէր Արդինին այդ հեթանոսական ժամանակների Ուրարտուի ժողովուրդների համար. Արդինին Արմենո-ուրարտական ցեղերի միանութեան խորհրդանշան էր: Արդի աստուծոյ անունով էր կոչուած Ուրարտական մեծ պետութիւնը, հետեւաբար եւ էր նրանց գլխաւոր աստուածը:

Խալդի անունն ունեցել է պատմական-լեզուաբանական հետեւեալ անցումները. Ար(Արա) > Արդի > Ալդի > Խալդի: Ար- Արայի Արդի կոչուելու մասին արդէն խօսել ենք վերելում Նուարդ անուն բացատրութեան առթիւ, իսկ Արդի > Ալդի (ր > լ) անցման համար օրինակ են Ար > Ալ՝ Արգն > Ալդի, Ալդինին-Արգանենէ ձեւերը հմտ. նաեւ Արագած-Ալադեազ, Արարատ-Ալարոզ (Հերոզոտից), Արմանի-Ալմանի²⁸ եւ Istar, անդլ. star, հայ աստղ (r > l = l), պճլ. sarvār, հայ սաղաւարտ, անդլ. other, Փր. autre, հայ այլ (t > j). Մասն արդէն համոզիչ կերպով բացատրել է, որ Խալդի անունն հիմքը խալ է²⁹: Ուստի Խալ կամ Հալ ձեւը պիտի ընդունել որպէս Հար, որտեղ հ-ն աճել է որպէս սաստկացուցիչ, հետեւաբար հիմքն էր Ար:

Գալով Ալդի > Խալդի անցման՝ անհրաժեշտ չենք համարում այստեղ բերել բացատրութիւն մի շարք բառերի սկզբում և ձայնի աւելացման որպէս սաստկացուցիչ՝ ինչպէս ոզի-հոզի, սկայ-հսկայ, Ռոմ-Հոմ եւ այլն. արդէն կիլիշինի երկրագրեան արձանագրութիւնից զիտենք, որ Խալդին առաջ կոչուում էր Ալդի:

Այս արձանագրութեան աէր Իշպուլինիի հայր Սարդուրին իր արձանագրութիւնները գրել էր տալիս ասուրերէն, բայց Իշպուլինին

²⁸ Եղիա Քասունի, նշում գիրքը, էջ 64:

²⁹ Բ. Պիտրովսկի, Հայ ժողովրդի ծագման հարցը, «Սովետական գրեկա-նութիւն եւ արուեստ» 1944, ԻԽ 12, էջ 81:

մեծ բարեբախտութեամբ որոշել էր զրեւ ուրարտերէնով եւ Կելիշինի կայս Երկլեզուեան արձանագրութիւնը (ուրարտերէն եւ ասուրերէն) կարծես մի անցում էր ասուրերէնից ուրարտերէնին: Երեւի երբ սկսեցին զրեւ այս արձանագրութիւնը, զիտնական զրիչը մտածել է ուրարտերէն տեքստում պահել Խալդի անուան աւանդական հին Ալդի ձեւը, եւ տեքստի մօտաւորապէս կէսը զրեւ ու քանդակել է՝ բերելով (7 անգամ) Ալդի ձեւը: Չգիտես յետոյ ի՞նչ է պատահել, զրի՞չն է փոխուել, թէ՞ որոշումը, 7 անգամ Ալդի զրեւուց յետոյ ուրարտական տեքստի մնացած մասում զրուել է Խալդի (6 անգամ): Երեւի յետոյ, երբ որոշեցին եւ սկսեցին ուրարտական տեքստը թարգմանել ասուրերէնի (այն նոյնպէս արձանագրելու համար), այնտեղ աւանդական Ալդի ձեւի տեղ պէտք տեսան բերել այդ օրերին դործածական Խալդի ձեւը, ուստի անհամապատասխանութիւն տեսնելով երկու տեքստերի մէջ (ասուրերէնը ուրարտերէնի տառացի թարգմանութիւնն է)՝ որոշել են ուրարտերէնի մնացած մասում էլ զրեւ Խալդի:

Ինչ էլ լինի պատճառը այդ փոփոխութեան, մի բան պարզ է, որ ուրարտական տեքստի առաջին կէսում 7 անգամ զրուած Ալդիին չէր կարող վերապահ կամ սխալմունք լինել: Ոչ մի կասկած, որ Խալդին կոչուում էր նաեւ Ալդի, եւ այդ ձեւը աւելի հին էր, քան Խալդի ձեւը:

Գուցէ Ալդի անուան նախապէս Արդի (Աշտի) կոչուած լինելուն համար ցուցմունք կայ նաեւ նրա կնոջ Բազմաշտու (Բազբարտու) անուան մէջ: Մենք վերելում ցոյց էինք տուել, որ Արայի կնոջ Նուարդի անուան մէջ (որը նշանակում է Արդ-ի Նու-ն կամ Արդ-ի սիրելի Նու-ն) արդ մասը հենց Արան է, եւ Նուարդ անունից զատ, համեմատութեան համար բերել էինք նաեւ Սիել-արդի (ուրարտական լուսնի աստուածութեան) եւ Սիելու-արդի անունները: Ուստի գուցէ այս անունների շարքը պիտի դասել նաեւ Ալդի (Խալդի) աստուածու կնոջ Բազմաշտու կամ Բազբարտու (հմմտ. Ուր-աշտու, Ուրարտու) անունը, որի երկրորդ մասը (աշտու կամ արդի) ներկայացնում է հենց Խալդի-Ալդի անուան (պահուած) Աշտու կամ Արդի ձեւը:

Այսպիսով՝ տարակոյս չկայ, որ Ար (Արա) > Արդի (Աշտի) > Ալդի (Խալդի) անցումը ճիշդ է: Ուստի պիտի ընդունել, որ Խալդին (Արդի — Ալդին) հենց եղել է (Ուրարդի = Ուրաշտու) հայերի Աշտուաս աստուածը՝ արմենոյ-ուրարտական ցեղերի վերագոյն աստուածը՝ հայկական Ուրարտուի աստուածը:

Ի՞նչ բովանդակութիւն ունէր Խալդի աստուածը: Այս հարցի պատասխանը նոյնքան կարեւոր է պատկերացնելու համար Ուրարտուի կրօնա-էթնիկական էութիւնը:

Յայտնի է, որ ուրարտական սեպագրութեան վանկանշերի եւ զաղափարագրերի կարեւոր մասը զալիս է սուամերերէնից՝ ասուրական սեպագրութեան միջոցով, որը հիմք է ծառայել ուրարտական սեպագրութեան համար:

Խալդի անուան առաջին (հիմնական) խալ բաղադրիչի սեպագիրը սուամերերէնում նշանակում է նաեւ բար. երեւի խալ ու բար համանիշ էին (Deimel, տե՛ս hal) հետեւաբար խալ-դի անուան տեղ մի պահ ընդունենք բար-դի: Խալդի անուան բարդի ձեւի զոյու-թեան համար ապացոյց պիտի համարել սրա գտնուելը Խալդիի կնոջ Բազ-բարտու անուան մէջ, այնպէս, ինչպէս Արդի (=Արա) անունը, որպէս երկրորդ բաղադրիչ, գտնում ենք նրա կնոջ Նու-արդ անուան մէջ կամ Սիել-արդի («լուսինը արեւի») անուան մէջ: Բազբարտու անուան բարտու բաղադրիչի Խալդի-ն լինելը ապացուցում է նաեւ Բազբարտու-ի Բազմաշտու կոչուելովը (հմմտ. Ուր-արդի, Ուր-արտու, Ուր-աշտու), որի աշտու բաղադրիչի մէջ արդէն ճանաչել ենք Խալդին:

Այսպիսով հաստատում է, որ Խալդի անուան սեպագրի նաեւ Բարդի կարգացուելը անտեղի չէ: Որով պիտի ընդունել, որ Խալդի անունը ունէր նաեւ Բարդի սարբերակը:

Եւ ահա մեզ համար կարեւորը այն է, որ Բարդի-ն (բարտի-ն) հայերէնում պահպանուել է որպէս ծառանուն (populus pyramidalis), որը պաշտամունքի առարկայ էր հնում հայերի մօտ: Խալդի-բարտի առընչութեան համար փաստական մեծ արժէք ունի Խալդիի Մուսասիրեան տաճարի ճակատում բարտի ծառի նկարը, որի մասին մտնանշում է Պրոֆ. Աս. Մնացականեանը իր մի մեծարժէք յօդուածում (հայ-ուրարտական զարդարուեստի եւ դիցաբանական առընչութիւնների հարցի շուրջ, «Հայրենիքի Չայն», 1969, թիւ 27) . նա զրուում է.

«Բարեբախտաբար Մուսասիրի տաճարի մեզ հասած տեսարանում կենաց ծառի վերարտադրութիւնը պահպանուած է բաւականին որոշակի գծագրութիւններով: Դա թոյլ է տալիս նկատել, որ այդ ծառը Հայկական ընաշխարհի համար այնքան հարազատ բարտու ծառն է: Հետեւաբար, պիտի ընդունել, որ Մուսասիրի տաճարը նուիրուած է եղել տեղաբնիկների բարտեպաշտութեանը: Այս առու-

մով բացառիկ արժէք ունի այն փաստը, որի համաձայն հայ ժողովրդի մէջ, քրիստոնէութիւնից առաջ, իրօք, դոյութիւն է ունեցել բարտու ծառի պաշտամունքը: Եւ դա այնքան խոր արմատներ է ունեցել, որ առանձին վայրերում բացարձակ յարատեւել է մինչեւ 12-րդ դարը՝ իր դէմ հանելով հայոց կաթողիկոս Ներսէս Շնորհաւուն»:

Բարտի ծառանուան տակ Աճառեանը (Արմ. բառ.) նոյնպէս բերում է հետեւեալը. «Մորթման ZDMG 31, 414 բառս կապում է Պորչապատի ասոր. արձանագրութեան 76-րդ տողում յիշուած bagbartu ասածու հետ, հիմնուելով այն բանի վրայ, որ բարտին էլ պաշտում էր Արեւորդիներէց»: Միաժամանակ բարդ բառը (Աճառեանի մօտ) նշանակում է «դէզ» (խտի կամ հացարոյսերի համար զործածուած) եւ «մի տեսակ ծաղիկ, որ դարնան սկիզբն է բացուում». այլ խօսքով՝ բնութեան, բուսականութեան դարթօնք:



Հետեւաբար, նկատի առնելով վերեւում բերուածները, պիտի աներկբայօրէն ընդունել, որ Պալլին, իր անուան ծննդի օրերին, եղել է բուսականութեան — երկրագործութեան աստուածութիւն, ճիշդ այնպէս, ինչպէս Ուրարտուի մրցակից Ասորեստանի Աշուր աստուածը նախապէս եղել է բուսականութեան—հողագործութեան աստուածութիւն եւ յետոյ՝ Ասորեստանի հզօրացմամբ դարձել է ռազմի աստուածութիւն եւ նոյնացուել արեւի հետ՝ թէեւ ունէին Շամաշը (արեւի աստուածը): Սումերերէնում արդէն aldi ([h] aldi) նշանակում է «հող մշակել, հողագործութիւն» (տե՛ս Deimel, էջ 11):


Բուսականութեան—հողագործութեան աստուածութիւնը ի հարկէ կապում էր արեւի աստուածութեան հետ. մանաւանդ հաւատում էին, որ արեւն ու կրակը ծնում են բոյսից, դա ի հարկէ բնական էր, քանի որ ծառն ու բոյսը վառելիս կրակ ու լոյս էր ծնում:

Այսպիսով մեր ուսումնասիրութեան արդիւնքը ցոյց է տալիս, որ Պալլին (Ալլի—Արլին) նախապէս լինելով բուսականութեան — հողագործութեան աստուածութիւն՝ ճանաչուել է որպէս արեւի աստուածութիւն (թէեւ կար նաեւ արեւի աստուած Շիւինին), իսկ աւելի ուշ ժամանակներում Ուրարտուի հզօրացումով Պալլին դարձել է բոլոր աստուածների մեծը՝ երկնքի աստուածը:

Ինչպէս յայտնի է՝ աշխարհում դրերը նախապէս եղել են

պատկերագրեր (hieroglyph), որոնցից առաջացել են գաղափարագրերը: Հիերոգլիֆներով երկնային մարմիններին ներկայացրել են նրկարելով մօտաւորապէս տուեալ մարմնի մի յատկանշական ձեւը:

Արեւը ներկայացրել են  կլոր սկաւառակով, լուսինը 


մահիկով, իսկ աստղը՝  ձեւով: Խեթական հիերոգլիֆներում կայ


արեւի թեւաւոր սկաւառակ , որի կենտրոնի շրջանակա-

ձեւ սկաւառակը հենց արեւի պատկերագիրն է: «Եգիպտացիներուն հօր աստուածին խորհրդանշանն է թեւաւոր բոլորակ մը, եւ արեւու պատկերագրութիւնն անիւով մը կը ներկայացուի. նոյնպէս ասորաբարեւոյցիներն Ասուրի պատկերը թեւաւոր բոլորակով մը կը ներկայացնէին»³⁰:

Խեթական հիերոգլիֆներում աստուած դետերմինատիւը ներկայացուել է արեւի կլոր սկաւառակի մէջ աւելացնելով մի յատուկ

շտրիխ՝ ուղղահայեաց գիծ  որը նման է հին ժամանակների



անիւի: Ի հարկէ դետերմինատիւները պիտի համարել հասարակ անուն, որոնք դրուելով այլ անունների կողքին ցոյց էին տալիս նրանց տեսակը: Հետաքրքրականն այն է, որ ինթերի մօտ արեւի աստուածութիւնն այնքան հին է եղել, որ նրա նշանով ստեղծուել է հասարակ աստուած—անուն ներկայացնող դետերմինատիւը, իսկ այստեղ մեզ համար կարեւորն այն է, որ արեւի սկաւառակի շտրիխով դետերմինատիւ դարձած ձեւի մի պարզ փոփոխակը՝ մի պարզ ուղղահայեաց տրամագծով արեւի սկաւառակը  ներկայացնում է u[r]

հնչիւնը, իսկ մի այլ փոփոխակ  ru հնչիւնը³¹: Արեւի սկա-

ւառակով ներկայացուած այս ur եւ ru ձայները չենք կարող չհամեմատել մեր արեւի աստուած Ար կամ Արա անուան հետ՝ աչքի առաջ

³⁰ Ա. Գ., Արեւը հայ ժողովրդական հաւատքի մէջ, «Հանդէս Ամսօրեայ», 1929, էջ 640 — 641:

³¹ B. Hrozny, Ceskoslovensky Usten Orientalni, Praha, «Les Inscriptions Hittites Hieroglyphiques», Livraison II, Praha, 1934, pp. 124 — 128:

ունենալով նաև Արմա, Արմէ, Արամէ ձևերի գիմաց երբեմն յիշուած
 urme, urume ձևերը: Բայց բանը նրանում է, որ ինչպէս խեթերը
 արեւի սկաւառակի վրայ մի շտրիխ (չիծ) աւելացնելով ստացել են
 աստուած դետերմինատիւր, այնպէս էլ ուրարտացիների Պալլի գի-
 ցանուան առաջին Պալ մասի  սեպագրի վրայ մի շտրիխի
 աւելացումը կը տայ  աստուած դետերմինատիւր, իսկ այս
 ձևն էլ սումերների «երկինք» բառի սեպագիրն է, որը պատկերա-
 գրով ներկայացուած էր մեծ աստղ * (աստղերի մեծը, ուրեմն՝ երկ-
 նային աստուածների հայրը) նշանով: Մինչդեռ Պալլին (Ալլի-Արլի
 -Արա) առաջ եղել էր Արեւ-կրակի, յատկապէս կրակի աստուած
 (նրա խորհրդանշն էր առիւծը). Արին-Բերդի խալդեան տաճարի
 որմանկարում Պալլին պատկերուած է առիւծի վրայ, ինչպէս
 խուրրի միտանեան Sausatar արքայի ցիլինդրային կնիքի վրայ
 նկարուած է արեւի թեւաւոր դիսկը առիւծների վրայ, ինչպէս Իրանի
 դրօշի արեւը առիւծի վրայ:



Արեւի թեւաւոր
 սկաւառակը
 առիւծների վրայ.

Միտանիի արքայ Sausatar-ի կնիքից. 1450 թ. (մ. թ. ա.). տե՛ս G. Contenau, «La Civilisation des Hittites et des Hurrites du Mitanni», p. 62.



Խալդի աստուածը առիւծի վրայ.

Հրեբուսի բերդ-քաղաքի որմանկար-
 ցերից 782 թ. (մ. թ. ա.):



Արեւը առիւծի վրայ՝
 Իրանի դրօշակից:

(Այստեղ երևում է
 խուրրի-ուրարտական գի-
 ցաբանութեան ազդեցու-
 թիւն):

Ուրեմն պարզ է, որ առիւծի վրայ նկարուած Պալլին արեւ-
 կրակի աստուած էր. ի հարկէ բնական էր, որ Ուրարդիի (Ուրար-
 տուի) («արեւի վայրի») կամ Նախրիի («կրակի երկրի») աստուածը
 պիտի լինէր արեւ-կրակի աստուած, ինչպէս ասացինք՝ Խալ-գի ան-
 ուան Խալ բաղադրիչը հոմանիշ է սումեր Բար բառին, որը հենց
 Բաքար-ն է՝ արեւի աստուածը (Deimel, տե՛ս VI bar): Այսպիսով
 տեսնում ենք, որ Պալլին, որ նախապէս եղել էր բուսականութեան
 եւ յետոյ արեւ-կրակի աստուած, հետագայում դարձել է երկնքի
 աստուած, այսինքն՝ ուրարտական պետութեան հզօրացումով եւ
 շատ ցեղեր ու երկրներ նուաճելով՝ Պալլին դարձել է բոլոր աս-
 տուածների հայրը՝ երկնքի աստուածը: Այս բովանդակութիւնը հա-
 մապատասխանում է Մհերի դրան աստուածների ցուցակին, որին
 գլխաւորում է Պալլին, որպէս բոլորի մեծը:

Եւ ահա մեզ մօտ էլ Աշտուասը դարձել է հասարակ անուն
 (աստուած), մի բան, որ ցոյց է տալիս նրա խոր անցեալից դալն ու
 ազգային գլխաւոր աստուած լինելը:

Միաժամանակ գիտենք, որ Աշտուաս-Աստուածը երկնքի աս-
 տուածութիւն է: Նրա այս բնոյթը բնաւ էլ չպիտի վերադրել քրիս-
 տոնէութեան ազդեցութեան: Ճիշդ է, որ քրիստոնէական սուրբ
 գիրքն ասում է, թէ Եհովան՝ հայր աստուածը գտնուած է երկնքում,
 բայց Հայաստանում քրիստոնէութեան հեշտ տարածման համար
 պէտք էր Եհովային՝ համապատասխան մի հայկական աստուած ան-
 ունով ներկայացնել, իսկ հայերն ունէին հեթանոսական շատ աս-
 տուածներ, բայց նրանցից միայն Աշտուաս-Աստուածն է, որ ներկա-
 յացրել է երկնքի հայր աստուած Եհովային քրիստոնէութեան ժա-
 մանակ: Դա միանգամայն ցոյց է տալիս, որ հայկական Աշտուասը
 (Արա-Արլին), որ հնում բազմահազար տարիներով եղել էր Արեւի
 աստուածութիւն, վերջին դարերին, անգամ քրիստոնէութեան մուտ-
 քի օրերին, յայտնի էր որպէս երկնքի հայր աստուածութիւն: Սա մի
 յաւելեալ փաստ է, որ նա հենց երկնքի մեծ աստուած Պալլին էր:

Այստեղ շենք կարող չլիջել Դարեհի՝ Բեհիստունեան արձա-
 նագրութեան մէջ յիշած հայ Արախային, որը թաղաւոր էր դարձել
 Բարեկոնում եւ որի հօր անունն էր Պալլի-տա: Բերում ենք այդ ար-
 ձանագրութեան մեզ համար մեծ կարեւորութիւն ունեցող մասը.

«[Այսպէս] է ասում Դարեհ արքան. — Երբ ես Պարսկաստա-
 նում ու Մարաստանում էի, բարեկայինները երկրորդ անգամ ապրա-
 տամբեցին իմ դէմ. մի մարդ՝ Արախա անունով մի հայ, Պալլիտայի

որդին, ապստամբեց Բարելոնում: Դուրալա կոչուած մի վայրում նա ստեց ժողովրդին [ասելով]. «Ես Նարուզդոնոսորն եմ՝ Նարանիտոսի որդին»: Ապա բարելական ժողովուրդը ապստամբեց իմ դէմ եւ Արախայի կողմը բռնեց: Նա գրաւեց Բարելոնը. նա դարձաւ Թագաւոր Բարելոնում:

[Այսպէս] է ասում Դարեհ արքան. ապա ես մի բանակ ուղարկեցի Բարելոն. Վինդաֆրանա անունով մի պարսիկ նշանակեցի որպէս նրանց առաջնորդ եւ այսպէս ասացի նրանց. «Գնացէ՛ք զարկեցէ՛ք այդ բարելական բազմութեանը, որը չի ճանաչում ինձ». ուստի Վինդաֆրանան քայլեց բանակի հետ Բարելոնի վրայ. Ահուրա-Մազդան օղնեց ինձ. Ահուրա-Մազդայի շնորհիւ Վինդաֆրանան տապալեց բարելակներին եւ [իմ կողմ դարձրեց (?) ժողովրդին]: Մարքագանաչ ամսի 22-ին այդ Արախային, որ իրեն Նարուզդոնոսոր էր հրահակել եւ այն մարդկանց. [որոնք նրա գլխաւոր հետեւողներն էին, նրանք ձերբակալեցին եւ շղթայեցին: Յետոյ ես հրաման տուեցի (ասելով). — Թող այդ Արախան] եւ այն մարդիկ, որոնք նրա գլխաւոր հետեւողներն էին, խաչ հանուեն Բարելոնում»³²:

Կարծում ենք, որ այս վկայութիւնը կարիք չունի բացատրութեան, բայց սա չափը ասենք, որ եթէ Դարեհը Արախայի համար չափք հայ (Արմին) է, մենք էլի, ելնելով մեր ուսումնասիրութիւնից (ինչպէս տեսանք վերեւում), պէտք է ասէինք, որ նա արմէն էր (Ար-ախա նշանակում է Արա-եան կամ ար-եան. հմմտ. Կումմախա, Չարախա, էրիկուախի եւայլն), բայց քանի որ Դարեհն արդէն վկայում է, որ նա հայ էր, ուստի կարծում ենք, որ է՛լ տարակոյս չի մնում այդ մասին: Այստեղ մեզ համար կարեւորն այն է, սակայն, որ այս հայի հօր անունը Սալդի-տա էր: Հայ Արախան, ինչպէս ասացինք, դատելով այն բանից, որ այդ ժամանակներում կարողացել է դառնալ Թագաւոր, պատկանում էր հայկական-ուրարտական հին արքայական ընտանիքին: Ուստի ընական ենք համարում, որ մի հայ իշխան (խօսքը վերաբերում է Արախայի հօրը) ունենար անուն՝ կազմուած իր ազգի աստծոյ անունով: Այդ բանը հեթանոսական հին ժամանակներում յաճախակի երեւոյթ էր, օրինակ՝ նոյնպէս Ասորեստանի արքաներից ոմանք իրենց Assur, Adad, Enlil, Šamaš աստուածների անուններից կազմուած անուններ էին կրում, ինչպէս՝

32) British Museum ճշուած աշխատութիւնը, էջ 56 - 59:

Assur - nirari, Assur - nâsir - pal, Assur - dan, Adad - nirari, Enlil - nasir. Šamši - Adad եւ այլն: Ուստի գտնում ենք, որ սա էլ մի նոր եւ անվիճելի փաստ է, որ Սալդին հայերի աստուածն էր՝ հայերի Աչտուասը: Հետեւաբար պիտի ընդունել, որ Սալդին եւ Աչտուասը նոյն աստուածն էին: Սալդի եւ Աչտուաս անունները բարբառային տարբերութեամբ միեւնոյն անուան փոփոխակներն էին: Սալդի-Աչտուասը աստուածն էր ուրարտացիների եւ հայերի, աւելի ճիշդը՝ հայկական Ուրարտուի եւ ուրարտական հայերի:

Հայերի Արա-Արդի > Աչտի (Աչտու-աս) աստուածը Ուրարտուի Արա-Արդի > Ալդի (Սալդի) աստուածն է:

Քանի որ Ուրարտուի գլխաւոր աստուածը հենց արերի (հայերի) ազգային աստուածն էր, ապա պիտի ընդունել, որ ուրարտական իշխող զինաստիան ու ժողովուրդը նոյնպէս հայեր էին: Տեսնենք, թէ ինչ են ասում մեզ հասած կցկտուր բայց խորքում կարեւոր տեղեկութիւններ պահող տուեանները:

3. — ԱՐԳԻՇՏԻ

Պատմագիտութեան եւ հնագիտութեան յայտնի է, որ հեթանոսական հին ժամանակաշրջանի արքաները, յատկապէս մեծ եւ աշխարհակալ Թագաւորները իրենք իրենց աստուած են հռչակել կամ իրենց վերազրել են աստուածային ծագում. ոմանք իրենց համարել են պատերազմի աստծու կամ ազգային գլխաւոր աստծու սերունդ: Խեթերի Սուրբիլուլիումա մեծ արքան իրեն Արեգ էր կոչում. Մեծն Ալեքսանդրը հաւատում էր, որ ինք հօր դժով սերուած է Հերակլէսից, իսկ մօր դժով՝ Աքիլլէսից, իսկ ուրիշներ շողքորթութեամբ նրան կոչում էին «Չեւսի որդի»: Սումերական, եգիպտական, ակկադական եւ ասուրական շատ արքաներ կրել են այնպիսի բարդ անուններ, որտեղ բաղադրիչ մաս է կազմել իրենց սիրած աստծոյ կամ ազգային գլխաւոր աստծոյ անունը: Այդպիսի կազմութիւն են ունեցել օրինակ՝ սումերական Ուր-Նինա, եգիպտական Իխն-Ատոն, ակկադական Նարամ-Սին, ասուրական Աշուր-Նազիր-Պալ, Շեմսի-Աղադ եւ ուրիշ շատ արքաների անուններ, որոնք ունեցել են աստուածային յատուկ նշանակութիւն:

Այդպիսի անուն է եղել նաեւ ուրարտական մեծ արքայի Ար-

գիշտի անունը: Արգիշտիի աստուածացման մասին է վկայում Սար-
զոնի մի սեպագիր արձանագրութիւնը. նա Մուսասիրի (Արգիշտիի)
կալգեան մեհեանից տարած աւարները թուելիս՝ գրում է. «Ուրար-
տուի արքայ Արգիշտիի մի արձանը զլիսին դրած՝ աստուածների
աստղազարդ խոյր (թագ), իր խորշի հետ (ամբողջը) բրոնզից՝ 60
տաղանդ ծանրութեամբ»³³: Այս վկայութիւնից պարզ հասկացում
է, որ Արգիշտին աստուածացել է, կամ համարուել է աստուծոյ սե-
րունդ:

Մեր ուսումնասիրութիւնները պարզել են, որ Ար-գիշ-տի

𐎠𐎺𐎠𐎠𐎺𐎠 𐎠𐎺𐎠 𐎠𐎺𐎠 𐎠𐎺𐎠 անունը կազմուած է երեք բաղադրիչ մասե-
րից, որտեղ առաջին Ար բաղադրիչը աստուածանուն է. դա արեւի
աստուած Ար-ն (Արա-ն) է. անուան երկրորդ բաղադրիչը ԵՂ

գիշ-ը այստեղ գաղափարագիր է (ideogram), որը սումերերէն նշա-
նակում է՝ «ծնել, սերել, փայտ»³⁴ կամ «ծառ, ճիւղ»: (Գիշ-ը որպէս
դետերմինատիւ գրուել է նաեւ սումերականիզական, ասուրաբարե-
լական եւ, նրանց օրինակով, ուրարտական արձանագրութիւնների
մէջ ծառատեսակների եւ փայտից շինուած առարկաների անունների
սկզբին): Գիշ-ը այստեղ բերուած է «ծնել, սերել, ծնունդ, սերունդ,
ճիւղ» գաղափարով: Հետեւաբար, Ար-գիշ նշանակում է «Արածին»,
այսինքն՝ արեւի աստուած «Ար-ից ծնուած-սերունդ», «Ար-ի ծնունդ
-սերունդ-ճիւղ»:

Ար-գիշ անուան մէջ գիշ-ի այս նշանակութեան համար բերում
ենք նաեւ հետեւեալ ապացոյց-օրինակը. Միջագետքի արձանագրու-
թիւններում արեւի աստուածութիւնը (Šamaš-ը) ներկայացուած
էր նաեւ D Giš - Šir - Gal³⁵ դիցանունով (աստուածային մակդե-
րով), որը նշանակում էր «լոյսի մեծ աղբւր»: Giš - Šir - Gal
անունը բաղկացած է երեք բաղադրիչ մասերից, որտեղ Giš

33) Thureau-Dangin, «Une relation de la huitième campagne de Sargon»,
արձանագրութեան տող 402:

34) S. Langdon, նշուած գիրքը, էջ 217:

P. A. Deimel, նշուած բառագիրքը, էջ 66 (𐎠𐎺𐎠 giš=giessen, erzeugen):

35) René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», Paris, 1953, p. 137:

բաղադրիչը, ինչպէս ասացինք, սումերերէն նշանակում է «ծնել,
սերել, ծառ...»: Šir բաղադրիչը, ինչպէս ցոյց ենք տուել սումե-
րերէն բառերի մեր ցուցակում, նշանակում է «չող, լոյս», ուստի
Giš - Šir կապակցութիւնը նշանակում է «ծնող լոյսի, ծառ լոյ-
սի», իսկ Gal բաղադրիչը նշանակում է «մեծ» (հմմտ. Lu - Gal
«մարդ մեծ = թագաւոր»): Հետեւաբար Giš - Šir - Gal կապակցու-
թիւնը ամբողջութեամբ նշանակում է «ծնող լոյսի մեծ, ծառը լոյսի
մեծ», այսինքն՝ «մեծ աղբւրը լոյսի», իսկ D Giš - Šir - Gal-ը արդէն
բերում էր արեւի աստուած Šamaš-ի տեղ: Այս մակդեր-անուան
նշանակութիւնը անհերքելի ապացոյց է Ար-գիշ անուան մէջ գիշ բա-
ղադրիչի նշանակութեան համար. ուստի անտարակուսելիօրէն Ար-գիշ
նշանակում է «Արածին, Ար-ի ծնունդ, արեւի աստուած Արայի սե-
րունդ (որդին)»:

Ար-գիշ-տի անուան վերջին 𐎠𐎺𐎠 տի բաղադրիչը այս-

տեղ նոյնպէս գաղափարագիր է (𐎠𐎺𐎠 -ը սեպագրութեան մէջ
օգտագործուած է մերթ որպէս վանկ - հնչիւն տի - եւ մերթ որպէս
գաղափարագիր), որը ունի «կենդանի (ապրող)» գաղափար-իմաս-
տը: Հետեւաբար Ար-գիշ-տի ամբողջութեամբ նշանակում է «Ար-որ-
դին կենդանի»՝ արեւի աստուած «Ար-ի կենդանի սերունդ», հայերի
արեւի ազգային աստուած «Ար-ի (Արայի) կենդանի որդին»:

Եւ ահա բանը նրանում է, որ Ար-գիշ ունի ճիշդ Ար-մա անուան
նշանակութիւնը: Մենք վերելում Արմա(նի) անուան ծագումը բա-
ցատրելու առթիւ ցոյց էինք տուել, որ Ար-մա անուան Ար բաղադրի-
չը արմէնների արեւի ազգային աստուած Ար-ն (Արա-ն) է, մա բա-
ղադրիչը սումերական բառարմատ է եւ նշանակում է «ծնել, սերել»
(այս բառարմատը հնում օգտագործուած է եղել նաեւ հայերի կող-
մից. յիշել մեր Արտաշէս արքայի գստեր Արտաշաճմա³⁶ անունը, որ
նշանակում է «Արտաշածին»), ցոյց էինք տուել, որ Ար-մա նշանա-
կում է «Արածին», այսինքն՝ հայերի ազգային արեւի աստուած
«Ար-ից (Արայից) սերունդ, Ար-որդի, Արեւորդի»: Ուստի միան-
գամայն պարզ է, որ Ար-գիշ ունի ճիշդ Ար-մա անուան նշանակու-

36) Խորեմազի, Բ—ժա:

թիւնը. հետեւաբար Արգիշտին անտարակուսելիօրէն հայ է: Վերեւում Արմէն անուան ստուգարանութեան առթիւ մէջ էինք բերել Յովսէփոս Փղաւիտսի մի վկայութիւնը, որը Մոսկոյ Աշխարհի Ազրազար հայ արքային արմէն կոչելու տեղ ասում է՝ «Արայի որդին»:

Բարեբախտաբար մեր փաստերը չեն սահմանափակում միայն սեպագրական-լեզուաբանական տուեալներով ու վերլուծութիւններով. ունենք նաեւ պատմական կոնկրէտ եւ անհերքելի վկայութիւն, որ Արգիշը Արմա-ն է: Խորենացին պահել է ուրարտագիտութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող մի յատուկ անուն. նա տեղեկացնում է, որ Արմաւիրը (Արգիշտի-խինիլին) կառուցած արքայի անունը եղել է Արմայիս (տարբ. Արամայիս). բերում ենք Խորենացու խօսքերը. «Այս Արմենակ (տարբ. Արամենակ) կեցեալ ամս, ծնաւ զԱրմայիս. եւ յետոյ կեցեալ ամս շատ, մեռաւ. իսկ որդի նորա Արմայիս շինէ իւր տուն ընկուցեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն, եւ անուանէ զնա յիւր անուն Արմաւիր»³⁷: Ուրարտական արձանագրութիւններից գիտենք, որ Արգիշտին կառուցել է քաղաք եւ իր անունով կոչել Արգիշտի-խինիլի. յայտնի է, որ այդ քաղաքը Արմաւիրն է, իսկ Խորենացին տեղեկացնում է, որ Արմաւիրը իր անունով կառուցող արքան կոչուել է Արմայիս: Այս վկայութեամբ ոչ թէ միայն տրուում է Արմաւիրը կառուցած արքայի իսկական անունը, այլ եւ բացատրում է, որ Արմաւիր անունը կրում է Արմայիսի (Արմա-ի) անունը: Վերեւում Արմա(նի) անուան ստուգարանութեան առթիւ ցոյց էինք տուել, որ Արմա-ւիր անունը առաջ է եկել Arma-eri կամ Arma-uru ձևերից, որ սեպագրական լեզուով նշանակում է «Արմա-ի քաղաք» (հմմտ. URU Tušpa Uru). Պտղոմէոսը արդէն Բ. դարում այս քաղաքը յիշում է Արմաւրիա ձևով: Խորենացու գրանցած ու պահած այս յոյժ կարեւոր վկայութեան անտեսումը մեծ մեղանշում կը լինէր ուրարտագիտութեան զարգացման համար, հայ ուրարտական կապերի որոշ սկզբունքային մութ կէտերի լուսաբանման համար: Խորենացին անպայման այս տեղեկութիւնները վերցրել

37) Մ. Խորենացու պատմութիւն հայոց, Վեներիկ, 1881, Ա—Ժբ (էջ 60): Մեր ձեռքի տակ գտնուող այս հրատարակութեան մէջ բերուած է Արմայիս, որը անուան հնագոյն ձևն է, այլ հրատարակութիւններում այս անուան բերուած է նաեւ Արամայիս ձևով: Այս ձևը քէեւ հնագոյնը չէ, բայց սխալ էլ չէ, որովհետեւ Ար եւ Արա նայնն են:

է իր ժամանակի գրաւոր աղբիւրներից³⁸: Վերեւում բերուածները միանգամայն պարզում են, որ Արգիշտին Արմայիսն է, որ Արգիշ նշանակում է Արմա, որ Արգիշտին հայ է: Միթէ՞ Խորենացին է ստեղծել Արմայիս (Արամայիս) անունը, յայտնի է, որ Արմայիս (կամ Արամայիս) անուան չենք հանդիպում ոչ մեր Արշակունի, ոչ Արտաշեսեան եւ ո՛չ էլ Երուանդունի արքաների շարքում. հետեւաբար պարզ է, որ նա պիտի գտնուէր աւելի կանուխ՝ ուրարտական արքաների մէջ:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ Եգիպտոսի փարաւոններից ու մանց Ռամզես (Ռա-մես-սես) անունը կազմուած է արեւի աստուած Ռա եւ մես («սերունդ») բաղադրիչներով, որով Ռամզես նշանակում էր «Ռա-ի սերունդ», հետեւաբար Ռա-մես-սես եւ Ար-մա-իս անունները համանիշ են, դուցէ՛ նոյնական:

Փաստ է նաեւ, որ Ատրեւանի դաւառը հնում կոչուել է նաեւ Արմարիլի կամ Արամալի, որով Արա-մա-լի եւ Առ-բեր-ամի համանիշ են, հետեւաբար համանիշ են Արա եւ Առ, մա եւ բեր, լի եւ ամի (այս վերջինները յոգնակերտ մասնիկներ են): Ղափանցեանից գիտենք, որ բեր նշանակում է «ցեղ», ուստի պարզ է, որ Ար-մա («Ար-որդի») եւ Առ-բեր («Առ ցեղ, Առ-ի սերունդ») համանիշ են. սա մի յուելեալ փաստ է, որ Արմա նշանակում է Արորդի:

Մեր նիւթի համար Խորենացու գրանցած ու պահած կարեւոր վկայութիւնները դեռ սրանցով չեն վերջանում: Խորենացին պահել է նաեւ մի թաքուն եւ անսպասելի սպացոյց, որ Սարգուրիի հայր Արգիշտին եղել է Արմայիսը: Դա Արգիշտի որդու Սարգուրիի էրիախում (Շիրակում) կատարած ռազմական կողոպտիչ գործողութիւններից մէկի աւանդական արձագանգն է, որ զբի է առնուած՝ իր օրին դրանց գիտական արժէքը առաջին զնահատող Խորենացու կողմից:

Բերում ենք նախ Սարգուրիի՝ իր այդ կողոպտիչ արշաւանքի մասին թողած արձանագրութեան մեղ հետաքրքրող մասը. «...Մեծութեամբ Խալդի աստծոյ արշաւեց Սարգուրին՝ Արգիշտի որդին:

38) Խորենացին գրում է. «...Պարսիկներն ու Քաղէտացիները, որոնց մտաւելի շատ են գտնում մեր ազգին վերաբերեալ բազմաթիւ գործերի յիշատակաբաններ» (Ա—բ): «...Թէ ո՞րտեղից մե՞նք այսպէս գիտեմք մեր նախնիների անուանները, այլև շատերի գործերը՝ կը պատասխանեմ — Քաղէտացիների, Ատրեւտացիների եւ Պարսից հին Դիւաններից» (Ա—իա):

Սարգուրին ասում է. արշաւեցի էրիախի վրայ, նուաճեցի եւ էրիախի երկիրը. մէկ օրում եւս (այն) գրաւեցի, թաքցրած պահեստատներ (?) , հայրերից եւ պապերից մնացած, որտեղ հարստութիւններ (?) էին պահուած որպէսզի արքաները ուրարտական ոչ մի անգամ չկարողանան գրաւել, տերունական կարգադրութեամբը Սալգիի եւ 150 թաքուն պահեստատներ (?) գրաւեցի: Քչեցի եւ ստրկութեան այր ու կին, անասունների հօտ (?) այդտեղից տարայ...»³⁹: էրիախի (Շիրակի) այս նշանաւոր պահեստները (ամբարները) որպէս երկրի հարստութեան արդիւնք ու բարեկեցութեան նշան՝ Շիրակի համար պատմականօրէն եղել են բնորոշ, եւ Սարգուրի կողմից գրանց կողոպտուելը այնպիսի մի մեծ աղէտ, որ նրանց յիշատակը մեծ տեղ է գրաւել ժողովրդի յիշողութեան մէջ եւ սերնդէ սերունդ աւանդուելով հասել է Սորենացու ժամանակներին առածի կամ ասացուածքի ձեւով: Սորենացին շարունակելով Արմայիսի մասին բերածները աւելացնում է. «Իսկ իր որդուն, բազմազաւակ եւ շատակեր Շարայիս ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակայ արգաւանդ ու բերրի դաշտ ... Նրա անունով, ասում են, գաւառը կոչուեց Շիրակ: Ուստի, թոււմ է, թէ արդարանում է զիւղացիների մէջ գործածուող առածը «դու, ասում են, Շարայի որդորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չունենք»⁴⁰:

Այս թանկագին վկայութիւն-յիշատակութիւններից նախ հասկացուում է, որ Արմայիսի որդի Սարգուրի անունից ժողովրդի յիշողութեան մէջ պահուել է միայն սկզբնական Սար մասը Շարա ձեւով: Գուցէ իր օրերում էլ Սարգուրին ժողովրդի կողմից կոչուում էր կրճատուած Սար կամ Շար (Շարա) ձեւով, այնպէս ինչպէս ներկայումս շատ անուններ ժողովրդի կողմից կրճատուած են հնչում (օրինակ՝ Անդրանիկը՝ Անդո, Յովհաննէսը՝ Յովիկ, Կարապետը՝ Կարօ եւ այլն): Ներքեւում՝ «Ուրարտական պետութեան կազմաւորումը» բաժնում կ'անենք Սարգուրի մի շարք արձանագրութիւններից մէջ-բերումներ, որոնք ցոյց կը տան, թէ Սարգուրին քանի-քանի անգամներ կատարել է էրիախի վրայ կողոպտիչ արշաւանքներ եւ քանի-քանի անգամներ այդտեղից դէպի Ուրարտուի կենտրոն տարել հարստութիւն, մանր ու խոշոր եղջիւրաւոր անասունների հօտեր, ձիերի

³⁹ Մեյիֆիշվիլի, նշում գիրքը, էջ 279:

⁴⁰ Խորենացու այս քարգամուրիւնը բերել եմ Մալխասեանից. Մովսէս Խորենացի, Երեւան, 1940, էջ 26 (Ա—Ժբ): Ընդգծումները իմն են (Մ. Գ.):

երամական, դերիններ եւ այլն: Այդ բոլորի հետ նրա կողմից Շիրակի՝ պապերից մնացած 150 թաքուն եւ նշանաւոր ամբարների կողոպտուելը ժողովրդի յիշողութեան մէջ դարձել է ասացուածք. Շարան (Սարգուրին) որակուել է «չատակեր» մակղիրով, նրա անկուշտ որկորի մեծութիւնը առածի կարգ է անցել, դարձել է նշանաւոր, որ այդպիսի որկորի համար Շիրակի (էրիախի) ամբարներն են պէտք: Այսպիսով՝ այս վկայութիւն-յիշատակութիւններից բացայայտոււմ է, որ Շարան Սարգուրին է, որ Սարգուրի հայր Արգիշտին կոչուել է Արմայիս, եւ ինչպէս ցոյց տուեց, Արգիշ(տի) եւ Արմա(յիս) համանիշ են եւ նշանակում են «Արածին», այսինքն՝ հայերի ազգային արեւի աստուած «Ար-ի (Արայի) սերունդ, որդի»: Հետեւաբար կասկածից վեր է, որ ուրարտական այս արքան հայ էր թէ՛ ազգութեամբ եւ թէ՛ անուամբ, մի բան, որ հաստատոււմ է նաեւ Սորենացու մի այլ վկայութեամբ, որ Արմայիսը եղել է Արմենակի (= արմէն ցեղի էպոնիմ) որդին⁴¹:

Մեր ուսումնասիրութեան այս արդիւնքը մեծ նշանակութիւն ունի Ուրարտուի պատմութեան համար: Դրանով պատասխան է տրուում ուրարտական պետութեան մի շարք մութ եւ կարեւոր հարցերին՝ լուսաւորելով Ուրարտուի հայկական էութիւնը:

Այստեղ արդէն առաջանում է այն հարցը, թէ արդեօք որտեղից առաջացաւ ուրարտական այս արքայի անունան երկուութիւնը: Արգէն զիտենք, որ Արգիշ(տի) եւ Արմա(յիս) համանիշ են. արդեօք ո՞ր մէկով էր իրականում կոչոււմ այս արքան իր օրին: Պարզ է, որ Արգիշտի անունը բերուել է սեպագրերի ներկայ ընթերցումից, իսկ սեպագրերի ընթերցումը կարող է լինել ճիշդ կամ սխալ, մինչդեռ Արմայիսը գալիս է 15 դարեր առաջ գրանցուած պատմագիտական հաստատուն վկայութիւն-յիշատակութիւններից: Սորենացու այդ ժամանակներն աւելի մօտ են ուրարտական ժամանակաշրջանին, քան թէ մեր օրերին, մանաւանդ որ յատուկ անուններն ընդհանրապէս շատ երկար են դիմանում ժամանակի ջնջող ուժի առաջ: Օրինակ՝ Տիգլաթ-Պալասար Ա-ի (մեղանից մօտ 3070 տարի առաջ) Միլիտիա կոչած քաղաքը այսօր կոչոււմ է Մալաթիա. մեր էրայից դարեր ա-

⁴¹ Մ. Խորենացին գրում է. «Այս Արմենակ կեցեալ ամս, ծնաւ զԱրմայիս, եւ յետոյ կեցեալ ամս շատ, մեռաւ, իսկ որդի նորա Արմայիս...» (Ա—Ժբ): Արմենակ անունը Խորենացու մօտ բերուել է նաեւ Արամենակ ձեւով, որը ըստ Մալխասեանի, եղել է անուան հնագոյն ձեւը:

ուջ գործածուած Արամ, Տիգրան և այլ անուններն այսօր էլ պահուել են նոյնութեամբ, այլ խօսքով՝ հին յատուկ անուններից շատերը լաւ են պահպանուել: Արմայիս անունն էլ հեթանոսական հին օրերից եկած կայուն անուններից է. այնքան կայուն, որքան եգիպտական հիերոգլիֆները ընթերցման համար որպէս հիմք ու բանալի ծառայած Պտղոմէոս և Կլէոպատրա անունները: Ուստի անառարկելիօրէն պիտի ընդունել, որ ուրարտական ժողովուրդը, իր օրին, այս արքային ճանաչում էր Արմայիս անունով, որը լինելով նշանաւոր՝ փոխանցուել է յաջորդող դարերին ու անաղարտ հասել Խորենացուն:

Իսկ Ար-գիշ-տի սեպակումը Արմայիս անունն նշանակութեամբ ասուրական սեպագրութեան ուրարտականացուած (զեռ լրիւ չբացայայտուած) վանկ-հնչիւնների և սումերական պայմանական գաղափարազրեքի սխտեմով բերուած արտայայտութիւնն է: Այդ սեպակումը ասուրարաբելական շրջանակում ի հարկէ կարող էին արտասանուել Ար-գիշ-տի, բայց ուրարտացիների մօտ Ար-գիշ-տի ձեւի գիշ ու տի գաղափարազրեքը բերուել էին այլ ձայն ունեցող բառերի համար. մանաւանդ որ Արմայիս անունը ունէր յատուկ նշանակութիւն, և նշանակութիւնը յայտնի անունները թարգմանում են. օրինակ՝ մենք չենք ասում Great Britain, Մովետսկի Մոյուզ, այլ Մեծ Բրիտանիա, Մովետական Միութիւն: Ուստի հաշուի առնելով այն, որ Ար-գիշ նշանակում է Ար-մա (Արորդի) և Խորենացին վկայում է, որ այս արքան կոչուում էր Արմայիս, ապա գտնում ենք, որ Ար-գիշ-տի սեպակումը ուրարտացիների մօտ ներկայացրած պիտի լինեն Արմայիս արտասանութիւնը: Մեր քննութիւնները պարզում են, որ յիշուելի այդպէս է եղել. ահա թէ ինչպէս.

Պարզ է, որ $\triangleleft \nabla \triangleright \triangleright \nabla \triangleleft \nabla \triangleright \nabla$ (Ար-գիշ) սեպակումը և Ար-մա անունն առաջին Ար բաղադրիչները համընկնում են, մնում է երկրորդ (համանիշ) բաղադրիչների՝ գիշ-ի և մա-ի հնչիւնային տարբերութիւնը բացատրել: Այստեղ էլ բանը նրանումն է, որ $\triangleright \nabla$ սեպակումը թէեւ սեպագրութեան մէջ անուանում է գիշ, բայց գաղափարազրեք է (ideogram) և այստեղ հնչիւնային կայուն արժէք չունի, այն այստեղ բերուած է արտայայտելու, ինչպէս ասացինք վերելում, «ճնել-սերել, ծնունդ-սերունդ, ծառ-ճիւղ» գաղափարը, հետեւաբար այն կարող էր բերուած լինել նոյնիմաստ մա բաղադրիչի

համար: Հետեւաբար $\triangleleft \nabla \triangleright \triangleright \nabla \triangleleft \nabla \triangleright \nabla$ (Ար-գիշ) սեպակումը կարգացում են նաև Ար-մա:

Այս երեւոյթը ի հարկէ տարօրինակ կամ եղակի չէ սեպագրութիւնների մէջ. դա այդպէս է բոլոր գաղափարազրեքի համար: Շատ գաղափարազրեք, ինչպէս և աստուածութիւններ ներկայացնող մի շարք սումերակական-ասուրարաբելական գաղափարազրեք, բերուելով սեպագիր այլ լեզուներում, չեն պահել իրենց սումերական կամ ակկադական հնչիւնային արժէքները, այլ արտասանուել են դրանք օգտագործած լեզուի համապատասխան բառի կամ աստուածանունն հնչիւններով: Օրինակ՝ IM գաղափարազրեքը, որը ասուրարաբելական սեպագրութեան մէջ ներկայացնում է Աղաղ աստուծոն, խուրրիական սեպագրերում բերում է Թեշուլ աստուածութեան համար, որը նկարագրով նման էր Աղաղին. այդ նոյն IM գաղափարազրեքը ուրարտական սեպագրութեան մէջ ներկայացնում էր Թեշ-շերա աստուծոն: Հետեւաբար IM գաղափարազրեքը ասուրարաբելական սեպագրերում արտասանում էր Աղաղ, խուրրիական սեպագրերում Թեշուլ, իսկ ուրարտականում՝ Թեշերա: Հետեւաբար Ար-մա անունն մա բաղադրիչի գաղափարն արտայայտելու համար ասուրական սեպագրութիւնից բերուած սումերական նոյնիմաստ գիշ գաղափարազրեքի օգտագործումը միանգամայն հասկանալի կը լինէր:

Հետաքրքիր է նաև այստեղ նշել, որ $\triangleright \nabla$ գաղափարազրեքը բաւական նման է $\triangleright \nabla$ մա վանկ-հնչիւնին, դժուար է ասել, որ այս նմանութիւնը ունի իմաստ, թէ պատահականութիւն է: Պարզ է, որ ուրարտացիները Ար-մա անունն մա բաղադրիչի համար չէին բերի $\triangleright \nabla$ մա վանկ-հնչիւնը, որովհետեւ մեր մա բաղադրիչը սոսկ վանկ-հնչիւն չէր, այլ ունէր կարեւոր և յատուկ իմաստ, որը չէր կարելի արտայայտել սովորական մա վանկ-հնչիւնով. միաժամանակ յայտնի չէ թէ Ար-մա անունն մա ձայնը նման էր սովորական $\triangleright \nabla$ մա ձայնին, դուրսէ մէկը հնչում էր մա, իսկ միւսը քմային մա (վանի բարբառը ունի թէ ա և թէ ա). հետեւաբար $\triangleright \nabla$ գաղափարազրեքը

միանգամայն նպատակալարմար էր արտայայտելու Ար-մա անուան մա բաղադրիչը:

Սակայն ուրարտական արձանագրութիւններում երբեմն Ար-գիշ անուան գիշ մասը արտայայտուած է ոչ թէ $\triangleright \nabla \nabla \triangle$ գաղափարա-գրով, այլ ասուրական սեպագրութիւնից բերուած $\triangleright \nabla \nabla \triangle$ գի եւ

$\triangleright \triangle \nabla \nabla$ իշ սեպախմբերով. այսինքն՝ Ար-գիշ գրելու տեղ բերել են Ար-գի-իշ: Մեր ուսումնասիրութիւնը պարզում է, որ հենց այս

$\triangle \nabla \triangleright \nabla \nabla \triangle$ $\triangleright \nabla \nabla \triangle$ $\triangleright \triangle \nabla \nabla$ (Ար-գի-իշ) սեպախմբերը կա-րող են արտայայտել Ար-մա-իս (Արմայիս) անունը: Միանգամայն ակնյայտ է, որ Ար-գի-իշ վանկերի (առաջին) Ար եւ երրորդ իշ վան-կերը լրիւ համապատասխանում են Ար-մա-իս անուան (առաջին) Ար եւ (երրորդ) իս (յիշ-ը լինում է եւ is) վանկերին, մնում է բացա-արել միայն միջին (երկրորդ) գի վանկը:

Մենք գտնում ենք, որ ուրարտացիները Ար-մա-իս անուան իս (կամ յիշ) վերջաւորութիւնը $\triangleright \triangle \nabla \nabla$ սեպախմբով ներկայացը-նելուց բացի՝ պիտի պէտք գրային պահել — արտայայտել մա բա-ղադրիչը «ծնել, ծնունդ, ճիւղ» նշանակութիւնը. դրա համար յար-մար էր այս անգամ $\triangleright \nabla \nabla \triangle$ gi կամ gin⁴² սեպախումբը, որ սու-մերերէն նշանակում էր «եղէզ», որը կը տար նաեւ «բոյս, ճիւղ»

42) «Սուսերահայ յարաբերութիւններ» գլխում ցոյց ենք տուել, որ սուսե-րերէն շատ միավանկ արմաղ-բառեր, որոնց մեծ մասը ունեցել են երկու բաղա-ձայն (բաղաձայն + ձայնաւոր + բաղաձայն), օգտագործուել են որպէս վանկ-իւր-չիւն՝ դուրս գցելով վերջին բաղաձայնը: Այդպէս էլ $\triangleright \nabla \nabla \triangle$ gi վանկ-իւր-չիւնը հիմնականում սուսերերէն gin «եղէզ» նշանակող բառարմատ է: Մեր ներկայ խնդրի համար հետաքրքիր է նաեւ $\triangleright \nabla \nabla \triangle$ -ի նմանութիւնը $\nabla \nabla \triangle$ մա՛ւ սեպախմբին, որին կարելի էր ընդունել որպէս մա՛ (տե՛ս S. Langdon, p. 27):

գաղափարը: Դիցարանութեան յայտնի է, որ ըստ հեթանոսական հա-ւատալիքների արեւը ծնուել է բոյսից կամ յատկապէս եղէզից: Յիշել արեւի ծաղումը բացատրող՝ եղէզի միջից արեւի դուրս գալը պատ-կերող մեր հեթանոսական «Նրկնէր երկին, երկնէր երկիր...» բա-նաստեղծութեան հետեւեալ տողերը.

Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ .
Ընդ եղեգան փոզ ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փոզ բոց ելանէր .
Եւ ի բոցոյն վագէր խարտեաշ պատանեկիկ .
Նա հուր հեր ունէր,
(Ապա քէ) Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:


Ինչպէս պարզ երեւում է՝ արեւը ծնում էր եղէզից, եւ որով-հետեւ Ար-մա նշանակում է «Արածին», ուստի արեւ ասածուն ներկա-յացնող Ար վանկից յետոյ «եղէզ» նշանակող gin սեպախումբը կա-րող էր տալ մա բաղադրիչը «ծին» գաղափարը. արդէն սումեր gin արմատը ունի նաեւ «ծին» իմաստը (S. Langdon, էջ 48): Այսպիսով տեսնում ենք, որ $\triangle \nabla \triangleright \nabla \nabla \triangle$ $\triangleright \nabla \nabla \triangle$ $\triangleright \triangle \nabla \nabla$ սեպախմբ-բերով արտայայտում է Ար-մա-իս անունը: Հետեւաբար պիտի ըն-դունել, որ ուրարտական այս արքան իր փողովրդի կողմից կոչում էր Արմաիս:

Գալով ti (Ar-giš ti) սեպախմբին, յայտնի է, որ ti իրէնդրամը ներկայացնում է «կենդանի» գաղափարը, հետեւաբար Ar-giš ti նշանակում է «Այս աստույ որդին կենդանի» («Ար աստ-ժոյ կենդանի որդին»): «Կենդանի» մակղիբը անտեղի պատահակա-նութիւն չէ այստեղ. հեթանոսական փամանակներից եկող այդ մակ-ղիբին «աստույ որդի» կապակցութեան հետ հանդիպում ենք նաեւ Ս. Գրքում, որտեղ Սիմոն Պետրոսը Յիսուսին ասում է. «Դու ես Գրիստոսը՝ կենդանի Աստույ որդին»⁴³ (կենդանի Աստույ-որդին,

43) Ս. Գիբբ, Աւետարան ըստ Մարտոսի, գլխ. ԺԶ.
Մենք գտնում ենք, որ Արգիշտի-Արմայիսի անուան եւ կատարած սխառնակ-րի պատմութեան համար շատ հետաքրքիր է Ս. Գրքում պահուած այս չղու եւ

կամ Աստծոյ կենդանի որդին) : Այստեղ էլ նոյնպէս Ar-gi-iš ti նշանակում էր «Ար աստծոյ կենդանի որդին» : Տակաւին մեզ յայտնի չէ թէ սուամերական այս ti «կենդանի» իրէնորամբ ուրարտական ո՞ր բառին էր ներկայացնում : Ուրարտական արձանագրութիւններէ մէջ

Քրիստոսը՝ կենդանի աստծոյ որդին» յիշատակութիւն-վկայութիւնը : Այդ մասին մեր բացատրութիւնը բերելուց առաջ միջամկեայ ասեմք, որ Արգիշտի անունը, ինչպէս ցոյց ենք տուել, ասուրական սեպագրութեան վանկ հնչիւնների եւ իդէո-գրամների սխառմով արուած արտայայտութիւնն է Ար-մա-յիս անունն : մանաւանդ, որ օտար երկրների հետ պաշտօնական թղթակցութիւններում հենց այս սեպագրերով էր արտայայտուում Արմայիս անունը, ուստի ասուրաբարեկական եւ այլ օտար շրջանակներում Արմայիս անունը յայտնի էր Արգիշտի ձեւով, քէն Ուրարտուի ժողովուրդը իր արքային կոչում էր Արմայիս : Ուստի մեմ փորձում ենք Ս. Գրքի այդ յիշատակութեան մէջ տեսնել հետեւեալը : Ասորեստանը եղել էր արիւմարու պետութիւն, որը դարեր շարունակ իր կործանիչ ու կոզոպտիչ ասպատակութիւններով սարսափի ու հեքակայութեան տակ էր պահել Ասորեստանի շուրջ գտնուող երկրների ժողովուրդներին՝ ներառեալ Բաբելոնն ու Պաղեստինը : Եւ ահա Առաջաւոր Ասիայում ասպարէզ է իջնում մրցակից Ուրարտուի մեծ ու հզօր արքայ Արմայիս-Արգիշտին՝ «Ար աստծոյ կենդանի որդին», որը Ուրարտուին բարձրացնում է իր հզօրութեան գագաթին : Արգիշտին լինելով հզօր աշխարհակալ՝ ոչ քէ միայն կոտորել էր Ասորեստանի հզօրութեան Բաբել, այլ նրա դէմ շահած մի քանի յարձակումներով իջեցրել էր նրան երկրորդական դիրքի, գուցէ եւ հարկատու վիճակի : Մուտք գործելով խեթերի երկիր, նուաճելով Միլիտինէն, գրաւելով Մանան եւ Ասորեստանի եւ Ասորիքի որոշ շրջանները՝ դարձել էր Առաջաւոր Ասիայի հզօրագոյն արքան : Ասորեստանին հասցրած իր հարուածներով՝ Ասորեստանին ենթակայ երկրները վերստացած պիտի լինէին իրենց ազատութիւնը, հետեւաբար Արգիշտին՝ «Ար աստծոյ կենդանի որդուն» պիտի համարէին իրենց փրկիչը : Ազատագրուած երկրների մէջ պիտի լինէին Բաբելոնն ու Պաղեստինը, որտեղ տարածուած պիտի լինէր փրկիչ Արգիշտի՝ Ար աստծոյ կենդանի որդու համարը : Արգիշտիից 170 տարի յետոյ երուսազէմի հրեաները Բաբելոնի Nebuchadnezzar արքայի կողմից գերի էին տարուել Բաբելոն, որտեղ գերութեամբ մէջ մնալով կէս դար՝ վերադարձել էին Երուսազէմ եւ երեւի իրենց հետ բերել՝ լեզուակալան դարձած փրկիչ Արգիշտի՝ «աստծոյ կենդանի որդու» անունը : Եւ ահա Ս. գրքում Սիմոն Պետրոսը Յիսուսի գործած «Երաշխեքը» տեսնելով՝ ասում է *զոու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծոյ որդին* (այսինքն՝ Աստծոյ կենդանի որդին) : Այժի առաջ ունենալով Քրիստոս անունն տրուած «կենդանի աստծոյ-որդի» նշանակութիւնը՝ գրտնում ենք, որ Քրիստոս անունը պահում է Արգիշտի անունը, Արգիշտի [-շ]~ն կամ

հանդիպում ենք նաեւ Ar-gi-iš te ձեւին, այս  սեպարտումբը, որ կարգում են te, նոյնպէս իրէնորամ է եւ գալիս է ասուրական սեպագրութիւնից, այն սուամերերէն նշանակում է mul «աստղ» որը տալիս է նաեւ «փայլող, փայլուն» (նոյնպէս՝ «կենդանի») գաղափարը⁴⁴ : Ուստի ti («կենդանի») եւ te («փայլուն») գաղափարները միացնելով՝ կարող էինք բերել «կենսափայլ» մակդիրը (Արմայիս կենսափայլ), բայց «կենսափայլ»ը այն բառը չէ, որ արտասանում էր ուրարտացիները կողմից : Հետեւաբար գտնում ենք, որ մինչեւ այս մակդիրը ուրարտական ձեւի յայտնաբերումը կամ ճշգրտումը, յարմար կը լինէր պահել սուամերական ti բառը եւ Ar-gi-iš ti սեպարտները կարգաւ Արմաիս-տի («Արմայիս կենդանի, Արորդին կենդանի») :

Ի հարկէ, ինչպէս ցոյց տուեցինք, Արգիշտի ձեւը իմաստային տեսակէտով սխալ չէ, բայց Ar-giš ti ձեւի giš ու ti իրէնորամներէ գիշ ու տի ձայները, եւ Ar-gi-iš- ti ձեւի gin ու ti իրէնորամներէ գին ու տի ձայները սուամերական են եւ մեր սեպագրութեան մէջ ներկայացնում են այդ իրէնորամների անունն ու իմաստը, ոչ թէ հնչիւնը, չենք կարծում, որ ուրարտական ժողովուրդը այդպէս էր արտասանում իր թաղաւորի անունը : ուրարտացիների մօտ Ar-gi-iš սեպարտները ներկայացնում էին Ար-մա-իս անունը, այդ է ցոյց տալիս խորենացու վկայութիւնը, որ Արմաւիրը իր անունով կառուցողը եղել է Արմայիսը :

Հետեւաբար այս արդիւնքն էլ համարելով խորենացու վկայութիւնների հետ եւ աչքի առաջ ունենալով Արգիշ եւ Արմա համանիչների «Արածին» նշանակութիւնը, հաստատ հիմք ունենք ընդունե-

Արգիստի[-ես]-ը բգ > գր գրափոխութեամբ դարձել է Գրիստ (-ես) կամ Բրիստ(-ոս) : Քրիստ[-ոս]- Արգիստ նմանութիւնը կարելի էր վերագրել պատահակա-նութեան, երէ չլինէր Քրիստոսին տրուած «կենդանի Աստծոյ-որդի» նշանակու-թիւնը, մանաւանդ որ Քրիստոսն էլ համարուել է փրկիչ, քէն կրօնական հանգա-մանով : ուստի տարակոյս չկայ, որ Քրիստոս անունը պահում է Արգիշտի անունը եւ Քրիստոնէութիւն խօսքն էլ ծագել է մեր արքայի Արգիշտի անունամասից, մի բան որը միաժամանակ հաստատապէս ապացուցում է Ar-giš ti սեպարտների մեր բերած («Ար աստծոյ որդին կենդանի») ստուգաբանութեան նշանակութիւնը :

44) S. Langdon, նշում գիրքը, էջ 285, 229:

լու, որ Ուրարտական արքայ Արմախ-տի-ն հայ էր թէ՛ ազգութեամբ եւ թէ՛ անուամբ, մի բան, որը հաստատում է նաեւ Խորենացու մի այլ արժէքաւոր վկայութեամբ, որ Արմայիսը եղել է Արամանեակի (Արմանի ցեղի էպոնիմ) որդին:

Արմայիսը գրաւելով Արարատեան դաշտը՝ այդտեղ կառուցում է էրերունի բերդաքաղաքը, որպէս պաշտպանական հզօր յենարան Բիւսնան այդ կողմերից անխոցելի դարձնելու համար: Բնականարար Բիւսնայի համար ստրատեգիական այդպիսի կարեւոր նշանակութիւն ունեցող ամրոցը չպիտի յանձնուէր երկրի իշխող ցեղի համար օտար եւ թշնամի ցեղերից բերուած զերիններին, որոնք կարող էին մի օր ապստամբել եւ միանալ թշնամիներին հետ. կասկած չկայ, որ Արմայիսն այդ յենակէտը պիտի վստահէր պետութեան ամենավստահելի եւ ցեղակից ուժերից բաղկացած կայսրորդին, իսկ նա ինչպիսի՞ մարդիկ է տեղաւորում այդտեղ. ահա թէ ինչ է գրում նա այս մասին. «...մեծութեամբ Խալդի աստծոյ, Արդիշտին⁴⁵, Մեհուայի որդին, ասում է. Իրբունի քաղաքը եւ կառուցեցի հզօրութեան համար Բիւսնա երկրի եւ զսպման համար թշնամի երկրների, հողը ամայի էր, ոչինչ չկար կառուցուած այդտեղ, հզօր դորձեր եւ այդտեղ կատարեցի. 6600 զինուորներ Խաթէ [եւ] Մուպանի երկրների եւ այդտեղ բնակեցրի...»⁴⁶:

Մեզ յայտնի է, որ Մուպանի (Մոփք) երկիրը հայկական երկիր էր իր հայկական բնակչութեամբ: Մենք արդէն գիտենք Մոփքի հայկական թագաւորութեան մասին այն ժամանակներից, երբ Արտաշէս Ա-ի ժամանակակից Զարեհը իրեն թագաւոր է հռչակում Մոփքում: Յիշել էինք նաեւ վերելում, որ Յովսէպոս Փղաւիտսը վկայում է, որ Մոփսաց Աղբաղար թագաւորին կոչել են «Արայի որդի», այսինքն՝ արմէն: Մենք ցոյց ենք տուել նաեւ վերելում, որ Արմէ-Շուպրիան եղել է արմէնների բուն երկիրը՝ բնօրրանը, իսկ Մոփքը Արմէ-Շուպրիային կից էր կամ նրա մի մասը, հետեւաբար պիտի ընդունել, որ Արմայիսի՝ Մոփքից բերած զինուորները ցեղակից արմէններ էին: Իսկ ո՞վքեր էին Արմայիսի միաժամանակ նշած Խաթէ երկրի զինուորները. այս կէտն էլ պարզում է Տիգլաթ - Պալասար Ա-ի (մօտ 1100 մ. թ. ա.) մի արձանագրութեամբ: Տիգլաթ-Պալասարը Շու-

45) Պահելի եմֆ Արգիշտի ձեւը, որովհետեւ Մեյիֆիշտիից բերուած քարգմանութիւնների մէջ եղածները չուգեցինք փոխել, բայց պիտի հասկանալ Արմայիս:

46) Մեյիֆիշտիի, նշուած գիրքը, էջ 217:

բարիի դէմ կատարած մի արշաւանքի մասին գրած արձանագրութեան մէջ գրում է. «...Չորս հազար կասկի եւ ուրումի (մարդիկ)՝ խատտի երկրի զինուորներ, որոնք ապստամբել էին եւ վերցրել էին Շուրարի երկրի քաղաքները, իրենց սեփական ուժով, քաղաքներ, որոնք ենթակայ էին Աշշուրին...»⁴⁷: Յայտնի է, որ Տիգլաթ-Պալասարի յիշած ուրումի ցեղը կամ երկիրը Մեհուայի յիշած Ուրմէն-խին⁴⁸ է, որը յիշուել է նաեւ Արմէ ձեւով եւ որը ի հարկէ արմէնների մայր երկիրն է, ուստի պարզում է, որ այս շրջանի արմէնները, մի ժամանակ մտած լինելով խեթական կոնֆեդերացիայի մէջ, ճանաչուել էին որպէս խատտի երկրի զինուորներ. հետեւաբար Արմայիսի նշած «խատտէ երկրի զինուորներ» արտայայտութիւնը պիտի հասկանալ Տիգլաթ-Պալասարի յիշած «ուրումի մարդիկ՝ խատտի երկրի զինուորներ» արտայայտութեան իմաստով: Ի հարկէ, «խատտի երկրի զինուորներ» ասելով կարելի էր հասկանալ եւ այլ ցեղի մարդիկ, քանի որ խեթական կոնֆեդերացիայի մէջ, իր օրին, եղել են եւ այլ ցեղեր, բայց հայ Արմայիսը էրբերունին կարող էր յանձնել այն «խատտէ երկրի զինուորներին» որոնք, ինչպէս «Մուպանի երկրի զինուորները» բաղկացած պիտի լինէին արմէններից, այն արմէններից, որոնք արմէնների բուն երկրի մարդիկ էին եւ որոնց կարելի էր վրստահել Բիւսնայի համար ստրատեգիական մեծ նշանակութիւն ունեցող էրբերունի բերդաքաղաք-ամրոցը:

4.— ՌՈՒՍԱ

Մեր նիւթի համար հետաքրքրական է նաեւ Ռուսա անունը: Ուրարտական երեք թագաւորներ կոչուել են այս անունով: Աւելի հետաքրքրականն այն է, որ Ռուսա Գ-ի հօր անունը կոչուում էր Նրիմեմա կամ էրիմեմա: Այս անունը, բնականաբար, գրաւել է ուսումնասիրողներից շատերի ուշադրութիւնը՝ նրան իրաւացիօրէն նմանեցնելով Armina կամ Armenia անուան, բայց նրանց համար ուրարտական իշխող զինաստիւայում էրիմեմա անուան զոյութիւնը մնաց առեղծուած: Էրիմեման մնաց որպէս կղզի առանց կապուելու մայր ցամաքի (հայութեան) հետ: Ի հարկէ եղան յայտարարութիւն-

47) D. Luckenbill, նշուած գիրքը, էջ 77:

48) Մեյիֆիշտիի, նշուած գիրքը, էջ 102:

ներ, որ էրիմենան հայ էր, բայց այդ յայտարարութիւնները, ինչպէս այլ յայտարարութիւններ, չլինուելով փաստական հիմքի վրայ, մնացին որպէս յայտարարութիւններ: Ոմանք էլ առեղծուածին բացատրութիւն գտնելու համար դաղթի դուռը թակեցին, օրինակ՝ Ղափանցեանը գրում է.

«Ուրարտական վերջին թագաւորն է Ռուսա Գ-ը, որը իրեն կոչում է Երիմենայի որդի («Erimenaxi»). սակայն դրա հօրից ոչ մի տեղեկութիւն չկայ թէ՛ խալդական եւ թէ՛ օտար աղբիւրներում: Կարծում են, որ այդ Երիմենան թագաւորած պիտի լինի Սարգուր Գ-ի եւ Ռուսա Գ-ի միջեւ, այսինքն՝ 620—605 թուականներին: Բայց այս բոլորը շատ տարակուսելի է: Մինչեւ իսկ հարց կարելի է բարձրացնել նոր առհմից կամ ցեղից սերուելու մասին ի նկատի ունենալով, որ ուրարտական Erimenaxi կարող է նշանակել եւ «Երմինեան», այսինքն Erimena կամ Armina ցեղից սերուած, այդ ցեղին պատկանող: Իսկ այդ ազգանունը հաւանօրէն հենց նշանակում է «արմենական» հայկական», եւ ուրեմն Ռուսա Գ-ը եղել է «արմէն» (հայ) ուրարտական անունով: Այս կարող է նշանակել, որ 7—6րդ դարերի միջեւ ընկած ժամանակաշրջանում, կամ աւելի ճիշդ՝ 7րդ-ի վերջում հայ արմէնները հետզհետէ թափանցում էին Ուրարտու-Վան, բարձրանալով մինչեւ իսկ թագաւորական գահը»⁴⁹:

Ինչպէս տեսնում ենք՝ Ղափանցեանը ուրարտական գահի վրայ էրիմենայի գոյութիւնը բացատրում է ոչ թէ Ուրարտուի եւ Ուրարտական դինաստիայի հայկական լինելովը, այլ Ուրարտուի վերջին օրերին դէպի Ուրարտու (իբր թէ նոր եկող) թափանցող արմէնների կողմից ուրարտական գահի զբաւումով:

Մեր ներկայ ուսումնասիրութիւնը միանգամայն լուծում է ուրարտական դինաստիայում էրիմենայի գոյութեան առեղծուածը: Էրիմենա անունը հենց մեր Արմենակ կամ Արամանեակ անունն ուրարտական ժամանակների փոփոխակն է եւ նրա գոյութիւնը հայկական Ուրարտուի հայկական դինաստիայի թագաւորների շարքում բնաւ էլ անսպասելի կամ զարմանալի չէ: Այդ անունն գոյութիւնը ի հարկէ է՛լ աւելի հաստատում է ուրարտական իշխող դինաստիայի հայկական լինելը. ուրարտական դինաստիայի արմենական լինելու համար փաստ է նաեւ հենց Ռուսա անունը:


49) Գր. Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը», էջ 221:

Ռուսա անունը կազմուած է երկու մասերից (Ru-sa), որի-sa վերջաւորութիւնը պարզապէս մասնիկ է, իսկ Ru կամ ur (ասուրական արձանագրութեան մէջ Ru-sa-ն յիշուած է Ur-sa ձեւով)⁵⁰ մասն այլ բան չէ, բայց եթէ միայն Ar-ի (արմէնների արեւի աստուած) կամ Արայի մի այլ փոփոխակը. այս առթիւ նորից ենք յիշեցնում խեթական հիերոգլիֆներում արեւի սկաւառակով (սկաւառակի



վրայ մի դիւ աւելացնելով) ներկայացուած



ru եւ  u(r) վանկ-հնչիւնները:

Ar կամ Ara անունը ունեցել է եւ այլ փոփոխակներ. մենք տեսանք եւ Պղատնի մօտ Êr-ը՝ Armenios-ի որդին, մենք նշել ենք նաեւ Ra ձեւը եզրպտացիների մօտ. այս ձեւի համար կայ եւ մի այլ օրինակ՝ արարները Երասիւ-Արաղ-ին Ռասս եւ ասել⁵¹: Ղափանցեանը բերել է նաեւ Or ձեւը որպէս Ar կամ Ara-ի փոփոխակ⁵²: Ռու[սա] անունն Êr-Արա լինելն աւելի է իմաստաւորում Ռուսա Գ-ի հօր էրիմենա անուամբ, այդ իմաստաւորումը պարզ երեւում է հետեւեւլ համեմատութիւնից.

1. Ռու(սա) որդի էրիմենայի (ուրարտական արձանագրութիւնից)
2. Êr որդի Armenios-ի (Պղատնից)
3. Eros Armen-ի (Բերլինի պապիրուսից)⁵³
4. Արա սերունդ Արամանեակի (մեր մատենագրութիւնից)

Այս համեմատութիւնից տեսնում ենք, որ Ռու-սա անունը հենց Արա-ն է բարբառային տարբերութեամբ: Ru-ն (Ur-ը) Ար է. հմմտ. նաեւ Արմէ եւ Ուրմէ ձեւերը. հետեւաբար կասկած չկայ, որ Ռուսա=Արա:

50) D. Luckenbill, նշում գիրքը, էջ 4:

51) Հ. Ա. Էփրիկեան, «Պատկերագրող Բնաշխարհիկ բառարան», Վեմետիկ, 1903—1905, տե՛ս Երասի:

52) Գր. Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը», էջ 94:

53) Յար. Քիրտեան, Վամի քաղաքութիւն, «Բազմավեպ», 1928, էջ 319:

Սորենացին Արայի որդի Արայեան Արայի (Կարդոսի) եւ սրա որդի Անուշաւան Սօսանուէրի մասին գրում է հետեւեալը.

«Արայի մասին այսքանը բաւական է կարճառօտ յիշատակել: Նա տարիներ ապրելով ծնաւ Կարդոսին» (Ա—Ժե):

«...Արդ՝ Շամիրամի մահից յետոյ, որ տեղի ունեցաւ Արային սպանելուց յետոյ իր Զամեսէս որդու ձեռքով, որ ինքը Նինուանն է...» (Ա—Ժթ):

«Իսկ Շամիրամը դեռ իր կենդանութեան ժամանակ Արայի որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նուարդից եւ տասներկու տարեկան երեխայ էր մնացել Արայի մահուան ժամանակ, դէպի Արա Գեղեցիկը տածած զորովի պատճառով՝ նրա անունով կոչում է Արա եւ նշանակում է մեր աշխարհին վերակացու:

«Բայց (Մար Արասը) պատմութիւնը շարունակում է այսպէս. Արայեան Արան պատերազմի մէջ մեռնում է Շամիրամի հետ, թողնելով արու զաւակ՝ զործով հզօր, խօսքով հանճարեղ Անուշաւան Սօսանուէրին, որովհետեւ նա (կրօնական) պաշտամունքի համաձայն նուիրուած էր Արամեանակի սօսի ծառերին... որոնց տերեւների հանդարտ կամ սաստիկ շարժուելուց, նայելով քամու ուժին եւ ուղղութեանը՝ մեր հայոց աշխարհում սովոր էին գուշակութիւններ աւել երկար ժամանակ:

«Այս Անուշաւանը բաւական ժամանակ արհամարհանք կրելով Զամեսէսից, տառապում է արքունի դրանը, յետոյ բարեկամներից օգնութիւն գտնելով ձեռք է բերում մեր աշխարհի մի մասը՝ խնամելու համար իրրեւ հարկատու եւ վերջը նաեւ ամբողջ աշխարհը» (Ա—ի):

Սորենացու՝ Մար Արայի մատենանից բերած այս տեղեկութիւններից հասկացում է, որ Արայի (Նուարդից ծնած հարազատ) որդին կոչում էր Կարդոս, որին կոչել են նաեւ Արա. իսկ այս Արայեան Արայի (Կարդոսի) որդի Անուշաւանը կոչուել է Սօսանուէր, որովհետեւ նա նուիրուած է եղել հեթանոսական ծիսակատարութիւններով գուշակութիւնների միջոց հանդիսացած սօսի սրբազան (աստուածային) ծառերին, այսինքն՝ նա (երեւի գահակալութիւնից առաջ) նշանակուած է եղել այդ գուշակութիւնների պատգամախօս քուրմը: Այս Անուշաւանը ժամանակակից էր Ասորեստանի արքայ

Զամէսին, որից մի ժամանակ կրել է վիրաւորանք, սակայն եւ այնպէս տիրել է հայոց ամբողջ աշխարհին:

Մեր պատմագիտական, սեպագրական-լեզուաբանական բաղձակողմանի քննութիւնը պարզում է, որ Սորենացու պահած այս յիշատակութիւնները պարունակում են պատմական մեծ արժէք ներկայացնող իրողութիւններ, որ Արայեան Արան (Կարդոսը) եւ նրա որդի Անուշաւանը պատմական դէմքեր են՝ մեզ յայտնի ուրարտական արքաներ: Պարզում է, որ Արայեան Արան (Կարդոսը) Սարդուրի Ա—ն է, իսկ Անուշաւանը՝ Իշպուիւնին. այս իրողութիւնը փաստում է թէ՛ պատմագիտական եւ թէ՛ լեզուաբանական տուեալներով:

(Ս)արդ—ուրի անուան, (Ս)արդ բաղադրիչը (Ուր—արդի անուան բաղադրիչը) արեւի աստուած Արդ—Արան է, որի նախահունչ Ս—ն աճել է որպէս սաստկացուցիչ, իսկ —ուրի բաղադրիչը սուժերական Սու՛ կամ eri բառարմատն է, որը նշանակում է «ծնել—ծին, սերել—սերունդ»⁵⁴: Հայերէնում էլ ուր նշանակում է «որդի», որից կայ՝ ուրջու՝ «խորթ որդի»: Հետեւաբար (Ս)արդ—ուրի նշանակում է «Արդ(ա)ծին, Արայորդի» (յիշել Արդ = Արա):

Բարբերախտաբար մենք կարելոր ապացոյց ունենք Սարդ—ուրի անուան Սարդ բաղադրիչի «արեւ» նշանակութեան համար: Դա մեր Նաւասարդ «Նոր Տարի» բարդ բառն է. Նաւա—Սարդ կապակցութեան նաւա բաղադրիչը նշանակում է «նոր» (հմմտ. Նաւա—կատիկ «նոր շէնքի, եկեղեցիի բացման հանդէս»): Յայտնի է, որ հնում ամիսը որոշում էր լուսնով, իսկ տարին՝ (շատ տեղեր) արեւով. ուստի միանգամայն պարզ է, որ Սարդ—ը նշանակում է «արեւ», իսկ Նաւասարդն էլ՝ «Նոր—արեւ», այսինքն՝ «Նոր—տարի»: Այս փաստը ցոյց է տալիս, որ Սարդ—ի Ս—ն աճած ձայն է. հետեւաբար (Ս)արդ—ը արդ (Արդի) է, այսինքն՝ Արա: Այս փաստում է նաեւ հետեւեալով. յայտնի է, որ Աշուր—ը դարձել է ռազմի եւ արեւի աստուածութիւն. իսկ Աշուր—բանի—պալը կոչուել է Սարդ—անա—պալ (S. Lloyd, «Twin Rivers», p. 41 Սոր. Ա—իա), որով Սարդը համանիշ էր Աշուրի (արեւ):

⁵⁴ S. Langdon, էջ 213 (տես I. ER, ERI), եւ էջ 233 (տես 3 UR) Ակկադացիներն իրենց Ակկադ երկրամասն տեղ մերթ բերում էին Ki-uri կոմք Uri-(Ki) խօսքը, որը նշանակում է «տեղ—ծննդի, ծննդավայր» (Տե՛ս S. Langdon, p. 11), Տե՛ս նաեւ P. A. Deimel, II UR = Ակկադ. Ribû գերմաներէն erzeugen (= սերել, ծնել):

Այս իրողութիւնը փաստուում է Արայեան Արայի Կարգոս անուան վերլուծութեամբ. (Կ)արդ-ոս անուան նախահունչ կ-ն բացատրուած է Դ. գլխում Ուրուատրի-Ուրարտի բաժնում: Իսկ անուան -ոս վերջաւորութիւնը յունական սուֆիկս է. Սորենացին իր այս տեղեկութիւնները բերել է Մար-Արայի՝ յունարէնի թարգմանուած մատեանից, որի մէջ ուրիշ շատ ոչ-յոյն անուններ նոյնպէս ստացել են -ոս վերջաւորութիւն (տե՛ս Սոր. Ա-ԺԹ): Հետեւաբար (Կ)արդ-ոս անունից մնում է Արդ-ը, որը հենց Արա-ն է, «Արայի որդին» (Մարդ-ուրին): Մարդուրի «Արայի որդի» իմաստը չի նշանակում, որ նրա հօր անունը Արա էր, այլ նա համարուել է արեւի աստուած Արայի որդին՝ ինչպէս Արմայիւ-Արդիշտին: Արայեան Արայի (Կարգոսի) որդին կոչուում է Անուշաւան, իսկ մենք զիտենք, որ Մարդուրի որդին կոչուում է Իշպուինի, ուրեմն Անուշաւանը Իշպուինին է. այս իրողութիւնը հաստատուում է նաեւ մի քանի այլ փաստերով:

1. Ինչպէս Իրպունի (Էրեբունի) անունը տուել է Երեւան, այնպէս էլ Իշպուինի (Իշրուինի, Շամսի-Աղադ Ե-ի յիշած Ուշպինա) անունը տուել է (Ան)աշաւան, որի նախահունչ Ան-ը ածել է Ուշ-ը (Իշ-ը) դարձնելով Անուշ, կամ գոյութիւն է ունեցել հետեւեալ ձևով. Իշպուինին ունէր մի թոռ, որը կրում էր իր անունը, այն Մե-նուայի Inušpua կոչուած որդին էր. In-ušpu(a) անուան ušpu կամ išpu մասը հենց išpu-ini անուան հիմքն է, մեր հարցի համար հետաքրքիրը այն է, որ In-ušpua անունը ունի նախահունչ In. սացոյց է տալիս, որ Išpuini անունը ունեցել է նաեւ Inišpuini տարբերակը, որին լրիւ համապատասխանում է Անուշաւան-ը:

2. Անուշաւանը կոչուել է Սոսանուէր, որովհետեւ նա նուիրուած է եղել հեթանոսական ծիսակատարութիւններով զուշակութիւնների միջոց հանդիսացած սրբազան սօսի ծառերին, այլ խօսքով՝ նա դահ բարձրանալուց առաջ նշանակուած է եղել սօսի ծառերի միջոցով կատարուած զիւթութեան ու պատգամախօսութեան գլխաւոր քուրմ:

Հեղուարանական մեր քննութիւնը պարզում է, որ Išpu - ini (Išbu-ini) նշանակում է «պատգամախօս քուրմ». սումերերէն Išbi կամ išib նշանակում է incantation «զիւթութիւն», isib (=ակկադերէն Šiptu) նշանակում է oracle «պատգամ, պատգամախօսութիւն» (արմատն է Šib, որը նշանակում է to invoke deity

«կանչել աստծուն, որ յայտնի իր պատգամը»): ակկադ isibbu, ašibu նշանակում է priest of incantation «զիւթութեամբ զուշակութիւններ անող քուրմ»⁵⁵ (հմմտ. արաբ عَجِب agīb «զարմանալի», عَجِب agāba «զարմացնել», հայ. աճալ[արար]). հետեւաբար միանգամայն պարզ է, որ Išibbu - ini կամ Išpu - ini (ini-ն անունների ուրարտական յայտնի վերջաւորութիւն է) նշանակում է «զիւթութեամբ արուած զուշակութիւնների պատգամախօս քուրմ», որը համապատասխանում է Անուշաւանին ու նրա Սոսանուէր կոչման⁵⁶: Իշպուինի կատարած շինարարութիւնների ընդթիւն էլ համապատասխանում է նրա քրմական սլաշտօնին. նա կառուցել է միայն տաճարներ, կրօնական շէնքեր, եւ վանի Մհերի Դրան վրայ դրել է Ուրարտուի բոլոր աստուածների անուններն ու նրանց զոհուելիք անասունների քանակը (իր ժամանակի կրօնական օրացոյցը):

3. Անուշաւանը ժամանակակից է Ասորեստանի արքայ Չամէսին եւ նրա հետ դործ է ունեցել: Չամէսը բերուած է նաեւ Չամէսա ձեւով, ուր վերջին էս-ը յունական սուֆիկս է (հմմտ. Ար-էս, Սորենացու բերած Ասկատադ-էս, Ամինա-էս, Բողոտոտ-էս եւ այլն) (Ա-ԺԹ): Իսկ Չամէս անունը աղաւաղուած Շամս (Շամաշ) է, որը համապատասխանում է Իշպուինի (820-800 մ. թ. ա.) ժամանակակից Շամսի-Աղադ Ե-ին (823-810 մ. թ. ա.), զիտենք նաեւ, որ այս երկու արքաների բանակները ընդհարուել են. ուստի հաստատուում է, որ Շամսի-Աղադ Ե-ի ժամանակակից եւ նրա հետ ընդհարուած

55) S. Langdon, p. 222, տե՛ս išib, P. A. Deimel, տե՛ս išib:

56) Išpu կամ išbi յորհրդումը մեր Իշպուինից շատ առաջ գործածուել է սումերների կողմից. սումերական Isin քաղաքի պատեղի-մերից (Քրմապետարքայ) մէկը կոչուում էր Išbi-urra (S. Langdon, p. 16) Išbi-Irra մօտ 2100 մ. թ. ա. (S. Lloyd, 'Twin Rivers', p. 15): Այս անունը գտնուել է մի կրօնական երգի մէջ: Կրօնական երգեցողութեան մէջ երկրի գլխաւոր բուրմի անունը յիշելու սովորութեանը հետամուտութիւնից անցել է քրիստոնէութեան, եւ մեր եկեղեցական «գոհութիւն» երգի մէջ յիշուում է կաթողիկոսի անունը: Ինչպէս ասել ենք վերեւում, սումերները Ակկադ-ի տեղ քերում էին Uri քաղք. Urra նշանակում էր «Ակկադի» (հմմտ. Lugal Kingi Urra «արքայ Սումերի եւ Ակկադի»), (S. Langdon, p. 66), որով Ispi - Urra՝ «քրմապետ-արքայ Ակկադի»:

Իշպուրինին՝ Չամէսի ժամանակակից Անուշաւանն է: Հետեւաբար հաստատուում է, որ Անուշաւանը Իշպուրինին է եւ նրա հայր Արայեան Արան (Կարդոսն) էլ եղել է հենց Իշպուրինի հայր Սարգուրի Ա-ը:

4. Անուշաւանի «գործով հօր» համարուելը նշում է Իշպուրինի ուղղմական մեծ գործերը. «խօսքով հանճարեղ» որակուելը նշում է նրա՝ դիւթութեան մէջ պերճախօս լինելը եւ միաժամանակ արձագանգում՝ արձանագրութիւնների լեզուն աստուերականից ուրարտերէնի փոխելը: Ուրեմն Իշպուրինին եղել է նշանաւոր մտաւորական-գիտնական քուրմ:

5. Հետաքրքիր է նաեւ այն, որ Խորենացու մօտ Վանի հիմնադիրը համարուել է Արայեան Արայի (Կարդոսի) ժամանակակից Շամիրամը. իսկ մենք գիտենք, որ Վանի հիմնադիրը եղել է հենց Արայեան Արան (Կարդոս-Սարգուրի Ա-ը): Երեւի արեւ Արային սիրած Շամիրամը նոյնացուել է արեւի աստճոյ (Շիւրինի) կնոջ Tušpuea-ի հետ, որի անուամբ (կառուցուած) Վանը կոչուում էր Tušpa, զրա համար Վանի կառուցումը վերագրուել է Շամիրամին:

6. Խորենացու դրանցած տուեալներով՝ հայոց նահապետ Արամի թոռն է Արայեան Արան (Կարդոս-Սարգուրի Ա-ը): Այս վկայութիւնը պատմադիտական մեծ արժէք ունի. այն ցոյց է տալիս, որ Սարգուրի Ա-ը եղել է Արամէի թոռը: Սրանով վերանում են ուրարտական արքաների՝ Արամէից ուղիղ գծով իջած լինելու մասին եղած կասկածանքները եւ ապացուցւում, որ Արամէն եւ նրա յաջորդները պատկանել են միեւնոյն գինաստիային:

Այսպիսով՝ վերջնականապէս հաստատուում է, որ Սարգուրի Ա-ը եւ նրա որդի Իշպուրինին եղել են հենց հայկական հարազատ արքաներ հանդիսացած Արայեան Արան եւ նրա որդի Սօսանուէր Անուշաւանը:

Գ-րդ գլխում Արա-Շամիրամ առասպելի մասին խօսելիս՝ ասել էինք, որ այդ առասպելը չի ծագել առանց պատմական հիմքի: Արդէն պատմական այդ հիմքից որոշ երեւոյթներ նշմարուում են այստեղ: Պատմութեանը յայտնի է, որ Շամշի Ադադ Ե-ը իր դահակալութիւնից առաջ, զեւ իր հօր կենդանութեան ժամանակ, ամուսնացել էր Բարելոնի Շամիրամ իշխանուհու հետ: Մեզ յայտնի է նաեւ, որ Շամշի Ադադ Ե-ի հօր ժամանակ եւ իր դահակալութեան (823-810 մ. թ. ա.) առաջին տարիներին (823-820), որոնք համընկնում են Սարգուրի Ա-ի դահակալութեան (835-820 մ. թ. ա.) վերջին տա-

րիներին (823-820), Ասորեստանի կողմից արիւնալի արշաւանքներ կատարուեցին Ուրարտուի դէմ: Հետեւաբար այստեղ կարելի է մըտածել այն պատմական հնարաւորութեան մասին, որ այդ արշաւանքներից մէկի ժամանակ Շամիրամը ընկերացած լինի իր ամուսնուն՝ Շամշի Ադադին կամ նրա բանակին եւ դէմ առ դէմ եկած՝ Սարգուրի (Արայեան Արայի) հետ, մի բան, որը կարող էր, ի հարկէ, ծնունդ տալ Արա-Շամիրամ առասպելին: Մանաւանդ, ինչպէս ասացինք վերելում, Սարգուրի անուան Արայորդի իմաստը չի նշանակում, որ նրա հօր անունը Արա էր, այլ նա համարուել է արեւի աստուած Արայի որդին, որով Արան կոնկրէտ անձնաւորութիւն չէր այստեղ եւ առասպելում էլ Շամիրամը չի դոնում Արային կենդանի, այլ հանդիպում է կենդանի Արայեան Արայի հետ: Շամիրամը իր ամուսնու մահից յետոյ իշխել է միայնակ, որով այդ արշաւանքները կարող էին հեռագայում վերագրուել ուղղակի նրան, դուցէ ինքն էլ կատարել է առանձին արշաւանք:

Մտանադրութեան մէջ անգամ պահպանուել է այն հազորումը, որ Անուշաւանը «հօրը հետ (Արայեան Արայի հետ) միասին գերի տարուեց Նինուէ (իմա Ասորեստան, որովհետեւ Նինուէն զեւ մայրաքաղաք չէր այդ ժամանակ), բայց իր իմաստութեամբ պալատականների սիրտը շահելով՝ ազատուեց եւ ձեռք բերեց իր դահը...» (Աճառեանի Անձնանունների բառարանում տե՛ս Անուշաւան): Եթէ այս ականդրութիւնը դուրս գայ պատմական (այդ մասին զեւ մեզ չի հասել ասորեստանեան, սեպագրական որեւէ գրանցում), ապա կարելի կը լինի ընդունել, որ Շամիրամն ու Արայեան Արան (Սարգուրին) հանդիպել են իրար հետ, մի բան, որը կարող էր աւելի ուժեղ պատճառ լինել մեր առասպելի ծննդին:

Միւս կողմից, կարելի կը լինի մտածել նաեւ այն մասին, որ Անուշաւանը Ասորեստանի գրական-գիտական շրջանակներում («իր ուշիմութեամբ») ծանօթացաւ սեպագրական գիտութեան եւ երբ վերադարձաւ Ուրարտու եւ ձեռք բերեց հօր դահը, կարողացաւ սեպագրականացնել նաեւ ուրարտական լեզուն, ինչպէս յայտնի է, ուրարտական լեզուով արձանագրութիւն սկսողը եղել է հենց Իշպուրինին (Անուշաւանը):

6. — ԱՐԱՄԷ

Արամը, Խորենացու տուած տեղեկութիւնների հիման վրայ, մինչեւ 19-րդ դար, համարուում էր հայերի նշանաւոր եւ ազգային

մեծ թագաւորը, բայց ասուրական եւ ուրարտական արձանագրութիւնների յայտնարեքմամբ՝ զիտնականներին յայտնի դարձաւ, որ Պորենացու յիշած Արամը Ուրարտուի Արամէն է եւ այդ հիման վրայ էլ մերժուեց նրա հայ թագաւոր լինելը, որովհետեւ Ուրարտուի անկումից մինչեւ Արտաշէսեանները (Հայաստանի լիակատար անկախութեան վերականգնումը) տեւող ժամանակահատուածում օտար նուաճողների կողմից Ուրարտուին հայութեան հետ կապող թելերը մեծ մասամբ կտրուել էին, մնացածներն էլ քրիստոնէութեան մուտքով գործուած աւերները անհետացրին, իսկ ուրարտական արձանագրութիւնները, որոնք տալիս են միայն շարլոնացած նեղ տեղեկութիւններ արքաների նուաճումների եւ կատարած շինարարութիւնների շուրջ, այդ մասին ուղղակի բան չեն հաղորդում:

Մեր ներկայ աշխատութիւնը, ինչպէս տեսնում է, ի յայտ բերելով Ուրարտուի հայկական լինելը՝ վերականգնում է նաեւ Արամէի հայ թագաւոր եղած լինելը, եւ հետեւաբար Պորենացու հաղորդած տեղեկութիւններն էլ վերստանում են իրենց արժէքն ու հաւաստիութիւնը:

Պորենացին ուրարտական պետութեան մասին ուղղակի տեղեկութիւն չունի, բայց Արամէի մասին պահած յիշատակութիւնների քննութիւնը ցոյց է տալիս, որ նրանցով ներկայացուած են ոչ թէ միայն Արամէն, որպէս արմէնների մեծ արքան, այլեւ ամբողջ ուրարտական պետութիւնը՝ նրա գոյութեան մօտ երեք դարերի ընթացքում ունեցած գործունէութիւնը. Պորենացին գրում է.

«Հարման տարիներ ապրելով ծնաւ Արամին:

«Արամի մասին պատմում են, թէ շատ քաջ գործեր է կատարել յաղթական պատերազմներում եւ ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպէս յոյները՝ Արմէն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»⁵⁷ (Ա-ժբ):

«Եւ որովհետեւ մեզ հաճելի թուաց... Մեր յանձն առած նեղութիւնն աւելի մեծ բաւականութիւն համարել, քան ուրիշներից (առաջարկուած) ուրախութիւններն ու կերուխումը, ուստի համաձայ-

57) Խորենացու մօտ այս տեքստին Արմինի է, որը ճիշդ է: Մալխասեանի այս բարգմանութեամ մէջ ճիշդ չէ բերուած (տես. Մ. Խորենացույ Պատմութիւն հայոց, Վեներիկ, 1881, էջ 65):

նուեցինք կարճապատ մէջ բերել զրոյցները Հայկեան Արամի վարած պատերազմների մասին...:

«Այս Արամը Նինոսի Ասորեստանին եւ Նինուէին տիրելուց քիչ տարիներ առաջ, շրջակայ ազգերից նեղուելով՝ ժողովում է ընտանի քաջ եւ աղեղնաւոր մարդկանց բաղմութիւն...: Նա պատահում է հայոց սահմաններին մօտ մեղացոց երիտասարդներին, որոնց առաջնորդում էր մի ոմն Նիւբար Մադէս...: Արամը յանկարծօրէն նրա վրայ յարձակուելով... կոտորեց նրա բաղմութիւ ամբողջ եւ իրեն՝ Նիւբարին էլ, որ Մադէս⁵⁸ էր կոչուում... իսկ նրա աշխարհը, մինչեւ Չարասպ կոչուած լեռը, իրեն ծառայեցնելով հարկատու դարձրեց մինչեւ Նինոսի թագաւորին Ասորեստանի Նինուէի վրայ:

«Իսկ Նինոսը... մտքումը պահած ունէր իր նախնիի՝ Բելի վրէժի յիշատակը... մտածում էր վրէժխնդիր լինել... որպէսզի քաջ Հայկի սերունդներից սերմանուած ամէն մի ճետ ոչնչացնէ: Բայց կասկածելով, թէ այսպիսի ձեռնարկութիւնը կարող է նրա թագաւորութեան կորստեան պատճառ դառնալ... (Արամին) իրաւունք է տալիս... իր երկրորդը կոչուել» (Ա-ժգ):

«Նոյն այս Արամը, արեւելիցիների հետ ճակատամարտը վերջացնելուց յետոյ, նոյն զօրութեամբ շարժում է Ասորեստանի կողմերը. այնտեղ եւս դառնում է մի ուրիշ ապականիչ իր երկրի, Բարշամ անունով, հոկաների ցեղից...: Նա խիստ հարկերով սաստիկ նեղելով անսպաս էր դարձրել բոլոր շրջակայքը: Արամը պատերազմով նրան ընդհարուելով՝ հալածում է նրան Կորդուքի միջով մինչեւ Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով...: Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամ հարկատու ծառայութեան մէջ պահեց երկար ժամանակ:

«...Սա դէպի արեւմուտք շարժուելով... հասնում է Կապադովկացոց կողմերը...: Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանեան Քասդեան, որ բռնացել դրաւել էր տարածութիւնը երկու մեծ ծովերի միջեւ...: (Արամը) նրան ընդհարուելով վանում է եւ փախցնում է...:

«Սա այսպէս հզոր եւ անուանի դառնալով՝ նրա անունով մինչեւ այսօր մեր աշխարհն անուանում են մեր շրջակայ ազգերը, ինչպէս ամէնքին յայտնի է: Սա ուրիշ շատ քաջութեան գործեր էլ ունի կա-

58) Մադէս նշանակում է Բեդացի, Մարացի:

տարած, բայց ինչքան որ ասացինք՝ բուսական ենք համարում» (Ա—ժդ) :

Ինչպէս պարզ երեւում է, Արամի մասին բերուած տեղեկութիւնները չեն պատկանում միայն Արամէին, այլ ուրարտական պետութեանը ամբողջապէս՝ նրա հզօր արքաներին :

Այստեղ խօսուած է արեւելքում՝ մեղացիներէ երկրում կատարուած նուաճումների մասին, մենք արդէն ուրարտական արձանագրութիւններից գիտենք, որ Իշպուինին ու Մենուան արշաւել են Մարասան, գրաւել Ուրմիա լճի եւ Մաննայի շրջանները, Պարսկաստանի (Parsua-ի) մի շարք քաղաքներն ու բերդերը՝ եւ այն էլ, Պորենացու ասածի պէս, Նինուէի՝ Ասորեստանի մայրաքաղաքը լինելուց առաջ :

Հարուում Ասորեստանի ձեռքից հողեր գրաւելու մասին բերուած տեղեկութիւնները նոյնպէս պատմական են. մենք գիտենք, որ ուրարտական հզօր արքաներն աղատագրել ու գրաւել են եւ որոշ ժամանակ իրենց ձեռքում պահել Ուրմիա լճից մինչեւ Թիբրատ տարածուող (Մուսասիր, Պուրուչկիա, Կորդուք, Ալզինի) երկիրները, որոնք ենթակայ եւ հարկատու են եղել Ասորեստանին : Նրանք անգամ իջել են Ասորեստանի դաշտավայրն ու գրաւել հողեր : Արմայիսի (Արգիշտի) ժամանակ Ասորեստանը ապրել է անկման մի շրջան եւ դարձել է Ուրարտուի համեմատութեամբ երկրորդական :

Արմայիսը գրուած է թէ նուաճել է Ասորեստանի երկիրները :

Արեւմուտքում մինչեւ Կասպիցովկիա հասնելու մասին Պորենացու բերած տեղեկութիւնները նոյնպէս պատմական են, մեզ յայտնի է, որ Մենուան ու Արմայիսը հասել են Մելիդու (Մալաթիա) եւ յաղթական պատերազմներ մղել այդտեղի արքաների հետ : Մենուան ու Արմայիսը յաղթական պատերազմներ են մղել խեթերի դէմ : Արմայիսը գրուած է թէ Ծուպանի (Ծոփք) եւ Պաթէ երկրի գետնուորներ է բերել ու բնակեցրել իր կառուցած Իրպունի (Էրբերունի) ամրոց-քաղաքում : Արմայիսը նուաճել եւ Ուրարտուին է միացրել հիւսիսային եւ երեւի հիւսիս-արեւելեան երկրները, որոնք Պորենացու մօտ կոչուած են Սիսակեաններ :

Պորենացու բերած տեղեկութիւնների մէջ մեզ կարելուք է այն, որ նա Արամին «Հայկեան Արամ» է անուանում : Նոյնարժէք վկայութիւն է այն յիշատակութիւնը, որ Արամը ծնուել է Հարմա-ից, որը Արմա (Արմէն) ցեղի էպոնիմն է (բացատուած չէ, որ Արամէի հօր անունը Հարմա էր) : Առաւել սրան՝ Պորենացին պահել է յիշա-

տակութիւն, որ մեր երկիրը Արամի անունով կոչուել է Արմէն (մի բան, որ իր ժամանակ «Ամէնքին յայտնի» է եղել) . մեր ներկայ Հետազօտութիւնները փաստում են Պորենացու պահած վկայութեան ճշգրտութիւնը . մենք տեսանք, որ Արամէ, Արմէ կամ Արմա ցեղանունից է կազմուած մեր երկրի Արմա-նի (Արմէն) անունը :

Պորենացին գրում է, թէ Արամը եղել է հայերի մեծ արքան եւ ազգի նահապետ. ուրարտագիտութիւնը նոյնպէս ընդունում է, որ Արամէն եղել է ուրարտական պետութեան հիմնադիրը :

Պորենացին գրում է, թէ Արամին յաջորդել է նրանից սերուած Արան. մենք նոյնպէս տեսանք, որ Արամէին յաջորդել են նրանից սերուած եւ Արա անունը կրող Սարգուրիները, Արմայիսները, Ռուսաները :

Այսպիսով տեսնում ենք, որ Արամը (Արամէն), Արայեան Արան (Կարգոս-Սարգուրի), Անուշաւանը (Իշպուինին), Արմայիսը (Արգիշտին), Արաները (Ռուսաները) եւ Էրիմենան եղել են անուամբ եւ ազգութեամբ հայ արքաներ, հետեւաբար վերջնականապէս հաստատուած է, որ Ուրարտուի իշխող գինաստիան եղել է արմենական-հայկական :

Հին ժամանակներում սովորութիւն էր անդրանիկ որդուն կոչել նրա մեծ հօր անունով, այս տեսակէտով, երբ արդէն յայտնի է դարձել Արամէ (Արմա), Սարգուրի, Արմա[-իս] (Արգիշտի) եւ Էրիմե[-նա] անունների «Արա-ծին, Ար-որդի» նշանակութիւնը, ուրարտական արքաների ցուցակը ստանում է հետեւեալ հետաքրքիր եւ իրենց իմաստներով օրինաչափ յաջորդականութիւնը .

Անուն	Անունի իմաստը	Անուն	Անունի իմաստը
1. Արամէ	«Արայորդի»	7. Սարգուրի Բ	«Արայորդի»
2. Լուսիպրի	(?)	8. Ռուսա Ա	Արա
3. Սարգուրի Ա	«Արայորդի»	9. Արմայիս Բ	«Արայորդի»
4. Իշպուինի	«Պատգամախօս ֆուրմ»	10. Ռուսա Բ	Արա
	[Սարգուրի] [«Արայորդի»]	11. Սարգուրի Գ	«Արայորդի»
5. Մենուա Ա	(?)	(?)	(?)
6. Արմայիս (Արգիշտի Ա.)	«Արայորդի»	12. Էրիմենա	«Արայորդի»
		13. Ռուսա Գ	Արա

«Արայորդիների» թոռ է թոռ օրինաչափ յաջորդականութիւնը լրիւ կը պահպանուէր Արամէից սկսած մինչեւ վերջ, եթէ այդ շարքը չխանդարուէր Մենուայով եւ Սարգուրի Բ-ով: Այդ խանդարումը, մեր կարծիքով, առաջ է եկել երկու դահաժառանգների անժամանակ մահով: Արքաների ցուցակի քննութիւնը ցոյց է տալիս, որ Մենուան չի եղել Իշպուինիի անդրանիկ (դահաժառանգ) որդին, ցուցակի (ընդհանրապէս) օրինաչափ պատկերը թելադրում է, որ Իշպուինիի իր անդրանիկ որդուն պիտի անուանած լինէր «Արայորդի» իմաստն ունեցող (Արամէ, Արմայիս, Էրիմենա, Սարգուրի) անուններից մէկով. եւ յիշուի՝ Սարգոնը յայտնում է, թէ Արդինիում (Մուսասիր)՝ Սալդիի (Արդի-Արայի) տաճարում գտել է Իշպուինիի որդի (Մենուայի եղբայր) Սարգուրիի («Արայորդու») արձանը: Այս վկայութիւնը ցոյց է տալիս, որ Մենուայի եղբայր Սարգուրին, որը կրում էր իր մեծ հօր անունը, եղել է Իշպուինիի անդրանիկ (դահաժառանգ) որդին, որը մեռել է անժամանակ, Իշպուինիի մահից շատ առաջ: Իշպուինին, Մենուայի հետ Արդինիի (Սալդիի՝ Արդի-Արայի) տաճարն այցելելիս (կամ մի այլ առթիւ)՝ երեւի իր հանգուցեալ որդու՝ Սարգուրիի («Արայորդու») անդրին զետեղել է նրա զիցաբանական հայրը հանդիսացած Արդի-Արայի տաճարում եւ նրա յիշատակի համար Սալդիին տարել նուէրներ, զոհարեութեան կենդանիներ, կատարել շինարարութիւն (մենք չենք բաժանում այն միտքը, թէ Սարգուրին եղել է Սալդիի տաճարի քուրմը կամ Մուսասիրի արքան. Ուրարտուի դահաժառանգին այդպիսի ձեւով չէին հեռացնի իր գահից):

Մենուան, իր աւագ եղբայր Սարգուրիի մահով, որպէս Իշպուինիի երկրորդ որդին, բարձրացել է գահ եւ այդպիսով մի կէտում խախտել գահի վրայ «Արայորդիների» թոռ է թոռ օրինաչափ յաջորդականութիւնը: Հաւանաբար Սարգուրի Բ-ն էլ չի եղել Արմայիսի անդրանիկ որդին, որը երեւի նոյնպէս անժամանակ վախճանուել է, որովհետեւ Արմայիսի («Արայորդու») անդրանիկ որդին պէտք է ունենար անուն ոչ «Արայորդի» իմաստով: Մեր ցուցակը նոյնպէս թելադրում է, որ Էրիմենան չի եղել Սարգուրի Գ-ի յաջորդը, որ նրանց արանքում եղել է մի արքայ «Արայորդի» իմաստը չունեցող անունով: Այսուհանդերձ արքաների ցուցակն իր ներկայ օրինաչափութեամբ էլ ունի մեծ արժէք: Նախ այն յաւելեալ փաստ է անունների մեր մեկնարանութիւնների ճշգրտութեան համար, երկրորդ՝ մի անգամ

էլ է ապացուցուած Արամէի եւ նրա յաջորդների միեւնոյն դինաստիային պատկանելը:

Կարող է հարց ծագել, թէ ինչո՞ւ ուրարտական արքաների շարքում «Արայորդի» իմաստով եղել են չորս անուն (Արամէ, Արմայիս, Էրիմենա, Սարգուրի) փոխանակ մէկի. ինչպէս յայտնի է՝ արքան ու նրա ապրած ժամանակը ճանաչուած էին արքայի անուան հետ նրա հօր անուան յիշատակումով. եթէ որդու ու հօր նոյն երկու անունները միասին կրկնուէին տարբեր սերունդների ժամանակ (օրինակ՝ եթէ «Ռուսա որդի Սարգուրիի» կապակցութիւնը կրկնուէր երկու կամ աւելի անգամներ)՝ դժուար կը լինէր ճանաչել, թէ այսինչ դորժը ո՞ր «Ռուսա որդի Սարգուրին» է կատարել: Դրա համար էլ պահելով հանդերձ մեծ հօր ու թոռան անունների նոյնիմաստութիւնը՝ անհրաժեշտ էր օգտագործել ձայնային տարբեր երանդաւորում ունեցող կամ տարբեր ածանցներով համանիշ անուններ կամ նոյն անուան տարբերակներ: Այդպիսի տարբերակներ ունենք նաեւ մեր ժամանակներում, օրինակ՝ Արեւ անուան որպէս համանիշ — տարբերակներ են Արելիկ, Արեւհատ, Արփիկ, Արփինէ, Արեգնազ եւ այլն:

Ուրարտական արքայանունների իմաստների («Արայորդիների») Արամէից սկսած թոռ է թոռ օրինաչափ յաջորդականութիւնը միանշամ եւս ցոյց է տալիս, որ Ուրարտական պետութեան իշխող ղինաստիան եղել է արմէն-հայկական:

7.— ՈՒՐԱՐՏՈՒԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մենք Ալճնիքից շարժուելով դէպի Արեւելք տեսանք, որ Վանայ լճի հարաւում դանուող երկրները կոչուել են ոչ թէ միայն Նաիրի, այլեւ Հարիա: Հարիայի միջով անցնելիս՝ տեսանք խորիմաստ Ուրուատրի լեռները եւ շարժուելով արեւելք, կանոյ առանք Արդինի քաղաքում, որին ճանաչեցինք որպէս արբերի (ուրարտացիների) կրօնական կենտրոնը: Այժմ բարձրանալով դէպի հիւսիս եւ մտնելով Ուրարտու երկրի կենտրոնը՝ մեր դէմ դուրս են դալիս Արծրունիներն ու Ռշտունիները:

Մենք կարծում ենք, որ արդէն Արծրունի եւ Ռշտունի անունները բացատրութեան կարիք չունեն, արդէն պարզ երեւում է նրանց մէջ Ար-Արան եւ Աշտուն (Աշտուատը):

Արծրունի (Արծու-նի-ունի) անունը յիշեցնում է Ալզինի-նի՝ Արզա-նե-նէ անունը, որին մենք տեսանք՝ Ալզի անունը բացատրելիս եւ որի մէջ անտարակոյս նստած է Ար-Արան:

Ռչտունի անունն արդէն յայտնի է որպէս ցեղանունը Ուրար-տու-Ուրաշտու-երկրանունան, որի մէջ մենք արդէն ճանաչել ենք Հայերի Աշտուաս-Ատուածը:

Արծրունիների միջով անցնելուց յետոյ՝ մեզ ընդառաջում են Վանայ լճի հիւսիս-արեւելեան ծայրում գտնուող Առերանի արերը: Ի հարկէ կարիք չկայ խօսելու Առեր-անի անունն վերջաւորութեան մասին. ուրարտական -անի վերջաւորութիւններն արդէն հանրա-յայտ են, իսկ Առ-բեր (-անի) անունն -բեր- բաղադրելի «ցեղ» ի-մաստը եւ Առ-բեր անունն «ար-ցեղ» նշանակելը դիտենք արդէն Ղա-փանցեանի աշխատութիւններից: Ղափանցեանն այս մասին գրել է. «Տիրչաւա-Պալասար Ա-ի արձանագրութիւնները Նաիրեան երկրների մէջ յիշատակում են Sinibirani, որը մեր կարծիքով նշանակում է «չին ցեղեր», իսկ Շամշի Աղադ Դ-ի կողմից յիշատակում է Նաիրեան Ginzibir երկիրը, որը անշուշտ նշանակել է «զինգի ցեղ»: Համե-մատել այդ Etiuni ibirani, Sinibirani, Ginzibir եւ նման կազ-մութիւններին հին Հայոց նման տեղանունները, ինչպէս՝ Տարուբե-րան (Տուրուբերան), Առերանի կամ Աբերան, որոնք տառացի նը-շանակել են «տուր ցեղեր» (= Հայկական Տարոս) եւ «առ-ցե-ղեր»⁵⁹:

Առերանի (ար ցեղերի) այս շրջանը կոչուել է նաեւ Արամալի («Արորդիք»), որն ունի նոյն նշանակութիւնը (Արամալի անունն -լի վերջաւորութիւնը հմմտ. Բիաինիլի, Արդիշտիլիլիլի եւ այլն): Այս շրջանում է գտնուում Արբու քաղաքը, որին Սարգսնը կոչում է Ռու-սայի Հայրենական քաղաքը, իսկ մենք արդէն դիտենք, որ Ռուսա ա-նունը Արան է, որը նստած է եւ Արբու անունն մէջ. ուստի Արբու կարող է լինել Ռուսայի հօրենական քաղաքը: Այստեղ է գտնուում նաեւ Ռիար (Սարգուրի) քաղաքը, որի կապակցութեամբ առիթ ենք ունեցել նշելու, որ Սարգուրի անունն մէջ պէտք է տեսնել ուրար-տական Սարգի աստծոյ անունը, որը նշանակում էր ([Ս]արդի) ա-րեւի աստուածութիւն՝ կապուած Ար-Արա-Արդ-ի հետ: Սարգուրի նշանակում է «Արորդի»:

59) Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը», էջ 78 - 79:

Առերանի-Արամալի երկրից ուղիղ բարձրանալով մի քիչ վեր՝ մեզ ընդառաջում են Էրիկուալիի արերը: Էրի-կու-ալի անունն մա-սին դեռ մենք կը խօսենք, այստեղ միայն պէտք է նշել, որ այս ան-ունն մէջ նոյնպէս նստած է Êr — Արա անունը, եւ Էրիկուալիի ժո-ղովուրդը նոյնպէս արեր են:

Էրիկուալիից բարձրանալով վեր մտնում ենք Հայկական Ե-րասիի աւազանը, որտեղ մենք արդէն, գալով Արածանի կողմերից, հանդիպել ենք Էրիալիի արերին: Մենք արդէն խօսել ենք Էրիալի անունն Արայեան նշանակութեան մասին եւ այստեղ անհրաժեշտ չենք համարում կրկնել բացատրութիւնը. միայն կարեւոր ենք հա-մարում յիշել Էրիալիի արերի հարեւան Աշտուալիի արերին:

Աշտուալիի անունն մէջ դժուար չէ ճանաչել մեր Աշտուալի արերին: Այս անունը շատ յատկանշական է նաեւ այն պատճառով, որ Արդիշտիի արձանագրութեան մէջ յիշուել է Ախուրեան քաղաքի (URU a-hu-ri-a-ni) եւ Էտիունի երկրի (KUR e-ti-ū-ni) միջեւ: Բե-րում ենք արձանագրութեան մեկ հետաքրքրող մասը.

[.]
 [. . .] ha-ū¹-bi URU a-hu-ri-a-ni
 [UR]u (?) āš-tu-hi-ni-e-¹ KUR-ni-ni
 š³i (?) -a- []¹ E¹ (?) 'a-ri [] Šū-ū-i-ni (?)
 [UR]u (?) āš-tu [] -hi-ni-i-¹e¹ ha-ū-bi
 [KUR] e-ti-ū-ni [KUR (?)] i-bi-ra-ni

«Նուածեցի Ախուրեանի քաղաքը, երկիրը Աշտուալիի քա-ղաքի... ամբողջ (?) ցորենապահեստները (?) Աշտուալիի քաղաքի. նուածեցի եւ Էտիունի երկիրը (?) ամբողջութեամբ (?)»⁶⁰:

Ինչպէս տեսնում ենք՝ Աշտուալիին գտնուում է Ախուրեանի շրջանում, հետեւաբար այն կա՛մ Էրիալիի մի մասն է կա՛մ նրա հա-րեւանը եւ սա շատ մեծ նշանակութիւն ունի այն տեսակէտով, որ այն գտնուում է նոյնպէս Ախուրեանի, Էրիալիի եւ Էտիունիի արերի շրջ-նանակում, մի բան, որը խոչոր նշանակութիւն ունի նրանց (Ռչտու-

60) Մեյիթիշվիլի, Պշուած գիրքը, էջ 258:

նինների եւ նրանց շրջանակում գտնուող միւս արերի հետ միասին) ճանաչման համար որպէս հետազայում յայտնի Աշտուատապաշտ հայեր :

Ինչպէս ասել ենք վերելում, պայման չէր, որ բոլոր ար ցեղերը ունենային Ար-Արա (կամ փոփոխակ եղող Արդի, Արտու, Աշտու) հիմքով անուանումներ, սակայն նրանց մէջ Ար-Արա հիմք ունեցող անունները ոչ թէ միայն հեշտացնում են նրանց ճանաչման գործը, այլեւ կարող են նշան լինել, որ նրանց խմբում գտնուող միւսներն էլ արեր են : Այսուհանդերձ մենք չենք ցանկանում ժխտած լինել արերի շրջանակում այլ ծագում ունեցող ցեղերի գոյութիւն ունեցած լինելը, սակայն ընդհանուր երեւոյթներն այնպիսին են, որ արերի շրջանակ մտած, այդ ցեղերի տարբերութիւնները շատ շանցած պիտի հալուէին արեւ-հուր պաշտողների քուրայում :

Հայկական լեռնաշխարհը արերի երկիր էր, արեւ-հուր պաշտողների երկիր, այդ ժամանակներին ցեղային պատկանելիութիւնը կախուած էր աւելի պաշտամունքային սկզբունքներից, պաշտուած աստծոյ բովանդակութիւնից, պաշտամունքային հաւատքի սովորութիւններից (շատ ցեղեր կոչուում էին իրենց դիւանոր ազգային աստծոյ անունով) : Հեթանոսութիւնը բաղմաստուածեան էր, բայց երկրի ազգային դիւանոր աստծոյ ազդեցութիւնը այնքան մեծ էր, որ անհնարին էր նրան դրժելով ապրել նրա շրջանակում (նրան պաշտողների երկրում) առանց բնաջնջման ու կործանման :

Հայկական լեռնաշխարհը մեծ Ար-Արայի երկիր էր՝ Արդի-Աշտուի երկիր : Սեմական հարաւի կողմից ճանաչուած հուրի երկիր էր՝ Նաիրի երկիր : Այն բաղմահազար տարիներով արեւի, հուրի եւ լոյսի լեռներկիր էր եւ այդպէս էր նաեւ Ուրարտուի ժամանակ, իսկ Ուրարտուն ինքը Առաջաւոր Ասիայում, իր ժամանակին, ներկայացուցիչն էր այդ կողման :

8. — ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուրարտուի ծագումն օրինաչափ էր, կապուած հենց այդ արեւ-հուր պաշտող արերի ճակատադրի հետ՝ Առաջաւոր Ասիայի միջագային գրութեան (այդ ժամանակների) զարգացման հետ, որտեղ կարեւոր դեր էր վերապահուած Արամէին՝ պետութեան հիմնադրին :

Պուրրի-միտանեան պետութիւնը կործանուել ու կազմալու-

ծուել էր մի կողմից քաղաքական ու ռազմական դերակազմութեան համար պայքարող մրցակից խեթերի սարքած երկարատեւ կռիւների ու սաղբանքների պատճառով, եւ միւս կողմից հզորացող Ասորեստանի եւ յատկապէս (մեր կարծիքով) ԺԳ դարի վերջերին (մ. թ. ա.) Ասորիքը ողողող եւ հետապայում արամէական կոչուած սեմիտական Գ պաղթալիքի հարուածների տակ :

Պուրրի-միտանեան հզոր պետութեան շիջումից յետոյ (ԺԳ դար մ. թ. ա.) ասպարէզը մնացել էր աւելի Ասորեստանին, որը դրնալով հզորացել էր իր շրջապատում ապրող ժողովուրդների ուսուրանների, արտադրութեան ու մատաղ սերունդների յափշտակման հաշուին եւ աստիճանաբար իշխանութիւն ու ազդեցութիւն էր տարածել միտանական տերիտորիաների վրայ մինչեւ Մուսասիրի եւ Ուրուարտի լեռնաշխարհի մատուցները :

Հիւսիսի Նաիրեան ցեղերի համար կեանքի պայքարը դժուարացել էր եւ գոյատեւելու համար պէտք էր կամ հեռանալ Ասորեստանի հասողութեան շրջանակում գտնուող հայրենի երկրներից, կամ միացնել ուժերով դիմադրել հասարակաց հզոր թշնամուն : Ահա այնպիսի պայմաններում ծնուել էր Ուրարտուն, որի սաղմերը պէտք է գտնուէին ԺԳ դարին (մ. թ. ա.) :

Ուրարտուն, մեր կարծիքով, կազմաւորուել էր Պուրրի-միտանեան հիմնական ժողովրդի՝ Նաիրեան ցեղերի պաղայի վրայ Արամէից շատ առաջ : Այս ժամանակների Ուրարտուն պատմական հետք չի թողել, որովհետեւ այն սահմանափակում էր հասարակաց թշնամու դէմ մերթ փոքր միւսորումներ կազմող եւ մերթ կազմալուծուող Նաիրեան ու ցեղակից ցեղերի գոյութեան պայքարներով :

Այդ պայքարներում ծնուել է Նաիրեան մեծ միւսորման ողնչնող, հզոր պետութեան հիմնադիր Արամէն :

Արամէի գործը շատ դժուար էր. երկրի բնակչիւմայական պայմանները, անմատչելի լեռներով եւ անանցանելի կիրճերով իրարից բաժանուած ցեղերի հետ հազորակցութիւնների դժուարութիւնները, խորամանկ թշնամու կողմից հաստատուած լրտեսական հսկողութիւնները, ի հարկէ եւ որոշ ցեղապետերի ինքնիշխանական մեծամբատութիւնները պիտի խոչընդոտէին միութեան գործը : Սակայն երեւի Արամէն ունեցել է իր ժամանակների համար ինչ-որ մեծ հեղինակութիւն, դուցէ նա (պատմութեան համար մթութեան մէջ մնացած) իր նախորդների այդ ուղղութեամբ կատարած մեծ ճիւղերի արդիւնքի ժառանգորդն էր, սակայն եւ այնպէս Պորեանցու պահած աւանդա-

կան յիշատակութիւնները խօսում են հենց նրա ունեցած նահապետական մեծ հեղինակութեան մասին, նրա կատարած դործի մեծութեան մասին: Երեւի նա այդ հեղինակութիւնը ձեռք էր ձգել Ասորեստանի դէմ կատարած մի կարեւոր յաղթանակով, որը մնացած կը լինի անյայտ, որովհետեւ ուրարտական արձանագրութիւնները դեռ չէին սկսուած, իսկ Ասորեստանն ի հարկէ չէր արձանագրի իր ձախողութիւնները: Այլ մի կասկած, որ Արամէն մեծ դեր է կատարել նախնական ցեղերից ուժեղ միութիւն ստեղծելու դործում, եւ ինչպէս հասկացուած է մեզ հասած ասորական սեպագիր արձանագրութիւններէն՝ նրան յաջողուել է հիմնել Ասորեստանի հզօր կայսրութեան հակադրուող ուժեղ պետութիւն:

Դժբախտաբար Արամէից արձանագրութիւններ չունենք, եւ մեր նրա մասին ունեցած տեղեկութիւնները թշնամու արձանագրած միակողմանի եւ Ասորեստանի արքաներին յատուկ պոռոտախօսական եւ միտումնաւոր յիշատակութիւններ են, այսուհանդերձ հենց այդ միտումնաւոր (իր ձախողութիւնների մասին լռող) տեղեկութիւններն անգամ ցոյց են տալիս Արամէի կազմած միութեան եւ հիմնած պետութեան հզօրութիւնն ու կայունութիւնը:

Ի հարկէ Վանայ լճի շուրջ եւ Ասորեստանի տեւական հարուածների տակ գտնուող Նախնական ցեղերին (արեւին) ուրարտական միութեան մէջ ընդգրկելը պիտի այդքան դժուար դործ եղած չլինէր, քանի որ արիւնարբու Ասորեստանի առկայութեան պայմաններում նրանք շահագրգռուած պիտի լինէին այդ միութեան ընձեռած պաշտպանութեամբ, բայց նոյն բանը չէր կարելի ասել Վանայ լճի հիւսիսում, հիւսիս-արեւելքում եւ հիւսիս-արեւմուտքում տարածուած արեւի համար, որոնք գտնուելով Հայկական լեռնաշխարհի խորքերում՝ իրենց աւելի ապահով պիտի զգային: Այդպիսիներից էր, օրինակ, Դայաէնի ուժեղ թագաւորութիւնը, որի արքայի մեծամտութիւնը երեւի անտեսել էր ոչ թէ միայն Մենուայից մօտ 3 դար առաջ Տիգրաթ-Պալասար Ա-ի կողմից Սինիի (Նախնական ցեղերին Ասորեստանի դէմ առաջնորդող Դայաէնիի արքայ) շղթայակապ Աշուր տարուելը, այլեւ հազիւ կէս դար առաջ Սաղմանասար Գ-ի կողմից իր երկրում կատարուած աւերածութիւնները: Այդ պատճառով էլ Մենուային անհրաժեշտ եղաւ կոպիտ ուժ դործադրել Դիաուխի-Դայաէնիի դիմադրութիւնը կոտրելու համար: Այս բոլոր ցեղերի մէջ, սակայն, անսպասելիօրէն ամենաերկար դիմադրութիւն ցոյց տուողը եղել է յարարերարար աւելի փոքր եղող Էրիախի հայկական

թագաւորութիւնը: Այս հետաքրքրական երեւոյթը անիմաստ չի թուում մեզ եւ արժանի է ուշադրութեան:

Էրիախին բաւական խիզախ, ազատասէր եւ անզուսպ ոյժ է ներկայացրել: Ուրարտուի թագաւորները շատ անգամներ են ընդհարուել նրա հետ կամ ստիպուած են եղել զէնքի ուժով տեւական ջանք դործադրել այդ երկիրը Բիախնայի հետ կապուած պահելու համար: Ամէն անգամ, երբ Արգիշտի Ա-ը եւ Սարգուրի Բ-ը արշաւել են այդ երկիրը, (ըստ իրենց ասելուն) կործանել են ամրութիւնները, հրկիզել են քաղաքները, աւերել են երկիրը եւ ջարդել բնակչութիւնը եւ ողջ մնացածներին քշել Բիախնա՝ տանելով հազարաւոր արջաւ ու ոչխար եւ այլ հարստութիւն: Պատմուածից այն տպաւորութիւնն է ստացուած, որ Էրիախին է՛լ չի յիշուելու, սակայն կարճ ժամանակ անց, կամ հենց նոյն արշաւանքի ժամանակ Էրիախից յետոյ արշաւելով մօտակայ երկրներ՝ վերադարձին, նորից են յարձակուած Էրիախի վրայ եւ նորից քաղաքներ են հրկիզում, նորից խօսք է լինում ամրութիւնների քանդման, մարդկանց գերեվարման եւ անասունների յափշտակման մասին, եւ այդ էլ տարին մի քանի անգամ: Սա ցոյց է տալիս, որ արշաւանքը կատարուած էր երկրի միայն մի շրջանի վերայ, մանաւանդ որ մերթ աւուր է, թէ այդ բոլորը կատարուել է մի օրում: Ի հարկէ դա ցոյց է տալիս յատկապէս երկրի յամառութիւնն ու դիմադրողականութիւնը: Անգամ այն ժամանակ, երբ Էրիախին Սարգուրիի կողմից զէնքի ուժով միացուած է Բիախնային, շատ շանցած նորից պէտք է լինում յարձակուել նրա վրայ եւ նորից նուաճել:

Ինչո՞ւմն է ոչ-մեծ Էրիախի այդպիսի յամառ դիմադրութեան պատճառը, մի յամառութիւն, որին չհանդիպեցինք անգամ հզօր Դիաուխի թագաւորութեան մօտ, ոչ էլ (համեմատելով Էրիախի ուժի հետ) Էտիուների հզօր դաշնակցութեան կենտրոնական կորիզն հանդիսացող բուն Էթիուների մօտ:

Մեր կարծիքով այս երեւոյթի պատճառն այն էր, որ Էրիախին հայկական ցեղերի մէջ իրեն համարում էր ինչ-որ աւելի դատրին, ինչ-որ արեւի մէջ արժէքով ու արժանապատուութեամբ աւելի բարձր: Հաւանաբար նրանք իրենց՝ ուրարտական իշխող դինաստիայից աւելի հարազատ որդիներն էին համարում Աշտուաս-Պալդիին (Արախայի հօր անունը պատահաբար էր կոչուած Պալդիտա): Գուցէ նրանք Աշտուասին ծառայող քրմական ցեղն էին, ինչպէս Վահէվահեանները Աշախատում: Այսպէս ենք խորհրդածում նաեւ այն պատճառով, որ Աշտուասին քաղաքը (որը երեւի Աշտուասի մի կարեւոր սրբատեղին էր) գտնուած էր նրանց շրջանում:

Աշտուխիների մասին Արգիշտին գրում էր․

«Նուաճեցի Ախուրեանի քաղաքը , երկիրը Աշտուխիների քաղաքի . . . ամբողջ (?) ցորենապահեստները (?) Աշտուխիների քաղաքի . նուաճեցի ես Էտիունի երկիրը (?) ամբողջութեամբ (?)»⁶¹ :

Արձանագրութիւնից պարզ երեւում է , որ Աշտուխիների⁶² քաղաքը գտնուում էր Ախուրեան քաղաքի շրջանում , եւ հենց այդ շրջանում էլ գտնուում էր Էրիախին : Արգիշտին եւ Սարգուրին բազմաթիւ անդամներ արշաւել են այս շրջանները , շատ անդամներ յիշել են Էտիունիին , Էրիախին , Իզանիին , Արիլիանիիին եւ միւսներին , բայց չեն յիշել նրանց մէջ Աշտուխիին . այս երեւոյթը , ի հարկէ , կարելի էր բացատրել , եթէ Աշտուխիին գտնուէր Էրիախիի մէջ : Յամենայն դէպս , Էրիախիի ցուցարբերած յամառ դիմադրութիւնը ուշադրութիւն է գրաւում :

Սարգուրեան արձանագրութիւնը կարելոք է նրանով , որ այնտեղ կարծես այնպէս է հասկացուում , որ Էրիախին ոչ թէ միայն հարեան էր Հայկական Էտիունիին , այլեւ գտնուում էր նրա կոնֆեդերացիայի մէջ (« . . . դնացի Etiuni երկրի վրայ , երբ ուղղուեցի (?) Etiuni երկիրը Eriaxi երկրի մարզը (?) խնայեցի . . . ») :

Այստեղ միջանկեալ ասենք , որ պիտի չզարմանալ , եթէ հայկական ցեղերը այս շրջանում մի շարք իրար հարեան թաղաւորութիւններ են ունեցել : Այդ երեւոյթի համար այսօր լաւ օրինակ է (ի հարկէ ժամանակակից պայմաններում) արարական տասից աւելի (մէկը միւսի հարեան) պետութիւնների դոյութիւնը , որոնցից շատերը նոյնպէս չեն կրում ուղղակի իրենց ազգային (արար) անունը , եւ նոյնպէս իրենց մէջ համեմատաբար աւելի մեծ ուժ ներկայացնողի (Եգիպտոսի) կողմից մեծ ճիզեր են թափուում (նոյնպէս կենտրոնախոյս ձգտումների պայմաններում) ընդհանուր մեծ միութիւն եւ ուժ կազմելու համար :

Այսուհանդերձ այդ թաղաւորութիւնները (ցեղապետութիւնները) ունեցել են որոշ խմբաւորումներ (կոնֆեդերացիաներ) : Այդ բանը ցոյց տուող անուղղակի տուեալները ենք հանդիպում , ինչպէս Դայաէնիի (յայտնի դարձաւ Տիգլաթ-Պալասար Ա-ի գրութեամբ) ,

61) Մեյիֆիշվիլի , Յուստ գիրքը , էջ 258 :

62) Աշտուխիի անունն այստեղ կարգալիս յիշեցի Օշականը , որը կարծես հետո է մի քիչ այս վայրից :

այնպէս էլ Էտիունիի վերաբերմամբ Ուրարտուի ժամանակ : Ղափանցեանն այս մասին գրում է . «Ուրարտուի որպէս հին Արեւելքի մի պետութիւն , որը նուաճուող երկրներին այս կամ այն կախուածութեամբ ենթարկում էր իրեն , հետզհետէ վեր էր ածուում մի Ֆեոերատիւ կամ աւելի ճիշդ կոնֆեդերատիւ քաղաքական միութեան բուն Բիախնայով եւ Տուշպա մայրաքաղաքով , որպէս հիմնական կորիզ : Այս Ֆեդերացիայի մէջ մտնող որոշ իշխանութիւններ , ինչպէս Էտիունի կամ Դիաուէխի , ներկայացնում էին ցեղերի դաշնակցութիւններ»⁶³ :

Ուրարտուն ինքնին ճնշիչ մեծամասնութեամբ Նաիրեանարմենական ցեղերի մեծ կոնֆեդերացիա էր :

Ուրարտուի արքաները նախապէս իրենք իրենց կոչում էին «արքայ Նաիրի երկրի»՝ որովհետեւ երկիրը «կրակի երկիր» էր , որովհետեւ իրենք նաիրեան ցեղերից էին . Ուրարտուի իշխող զինատիրան նաիրեան էր՝ ինչպէս Ուրարտուի հիմնական ժողովուրդը , որն ընդհանրապէս բաղկացած էր նաիրեան ցեղերից՝ արերից (հայարմէններից) :

Ուրարտական պետութեան ժամանակ առաջինը Սարգուրի Ա (Արայորդին) էր , որ սկսել էր սեպագրութիւնը , այն էլ ասուրական լեզուով , իր այդ լեզուով թողած արձանագրութեան մէջ իրեն կոչում է «արքայ Նաիրի երկրի» : Բերում ենք այդ կարելոք արձանագրութեան մեղ հետաքրքրող մասի թարգմանութիւնը . «Արձանագրութիւն Սարգուրիի , որդի Լուտիպրիի , արքայ մեծ , արքայ հզօր , արքայ տիեզերքի , արքայ Նաիրի երկրի , արքայ , որի հաւասար չըկայ . . . »⁶⁴ :

Ինչպէս պարզ երեւում է այս արձանագրութիւնից , Ուրարտուի արքան իրեն կոչում է Նաիրի երկրի արքայ . ինչպէս ցոյց ենք տուել՝ Նաիրի երկիր տերմինն էլ հենց նշանակում է Ուրարտու :

9. — ԲԻԱԻՆԱ - ԲԻԱՆԻԻԻ

Ուրարտուի հետագայ արքաները իրենց արձանագրութիւններում , որ թողնում էին ուրարտերէնով , իրենց չեն կոչում «արքայ Նաիրի երկրի» : Մի՞թէ նրանք Իշպուինիից (Անուշաւանից) յետոյ

63) Գր . Ղափանցեան , «Ուրարտուի պատմութիւնը» , էջ 95 :

64) Գ . Ա . Մեյիֆիշվիլի , էջ 117 :

զազարել էին Նաիրի երկրի արքաներ լինելուց: Ի հարկէ ոչ: Ընդհանուրապես՝ ուրարտական պետութիւնը Իշպուինիից յետոյ շարունակել էր բարձրանալ հզօրութեամբ եւ էլ աւելի էր ընդարձակուել Նաիրեան նոր ցեղեր ու շրջաններ ընդգրկելով:

Բանը նրանումն է, որ Նաիրի անունը սեմական-ասուրական տերմին էր, եւ Ուրարտուի արքաները իրենց արձանագրութիւնները ասուրականի փոխարէն ուրարտական լեզուով գրելով՝ սեմական-ասուրական Նաիրի («կրակի երկիր») տերմինն էլ փոխել են նրա թարգմանութիւնն եղող Բիաինա տերմինի: Այդ իրողութիւնը շատ պարզ երեւում է Կելիշինի արձանագրութեան մէջ:

Սարգուրի Ա-ից յետոյ նրա որդի Իշպուինին, որը մեր պատմութեան մեծ ծառայութիւն է մատուցել մեր սեպագիր արձանագրութիւնների լեզուն ասուրականից ուրարտականի փոխելով, իր դահակից Մենուա որդու հետ թողել է պատմագրութեան մէջ Կելիշին վայրի անունով յայտնի երկրեզուեան (ուրարտական եւ ասուրական) արձանագրութիւնը: Այդ արձանագրութիւնը, որ շատ կարեւոր է որպէս ուրարտական լեզուի փոքր բառարան, մեր նիւթի համար ունի նոյնպիսի մեծ արժէք: Ինչպէս Դարեհը իր եռալեզուեան արձանագրութեան պարսկական տեքստի Արմինա անուն տեղ ալկազական տեքստում բերելով նրա հոմանիշ Ուրաշտու անունը մեծ ծառայութիւն է մատուցել մեզ, այնպէս Իշպուինին իր երկրեզուեան արձանագրութեան ասուրական տեքստում յիշուած Նաիրի անուն տեղ ուրարտական տեքստում բերելով նրա թարգմանութիւնն եղող Բիաինա տերմինը՝ մեծ ծառայութիւն է մատուցել ուրարտական պետութեան կրօնա-էթնիկ կառուցումը մասին զազափար կազմելու համար: Բերում ենք այդ կարեւոր արձանագրութեան մեզ հետաքրքրող մասերը.—

Ասուրական տեքստից — «Երբ Խալդի աստծու առաջ, Մուսասիր քաղաքում, երեւացին Իշպուինին, Սարգուրի որդին, արքայ մեծ, արքայ հզօր, արքայ տիեզերքի, արքայ Նաիրի երկրի, զեկափարը Տուշպա քաղաքի (եւ) Մենուան, Իշպուինի որդին...»:

Ուրարտական տեքստից — «Երբ Այդի աստծու առաջ, Արդինի քաղաքում, երեւացին Իշպուինին, Սարգուրի որդին, արքայ մեծ, արքայ հզօր, արքայ տիեզերքի, արքայ Բիաինա երկրի, զեկափարը Տուշպա քաղաքի (եւ) Մենուան, Իսպուինի որդին...»⁶⁵:

⁶⁵ Գ. Ա. Մեյիֆիշվիլի, Առյն, էջ 125—127:

Ինչպէս պարզ երեւում է՝ ասուրական տեքստում յիշուած Նաիրի անուն տեղ ուրարտականում բերուել է, որպէս նրա թարգմանութիւնը, Բիաինա անունը: Հետեւաբար գտնում ենք, որ Բիաինա անունը, ինչպէս Նաիրի անունը, նշանակում է «կրակի երկիր»: Ուստի պիտի ընդունել, որ Բիա-ինա անունն բիա բաղադրիչը նշանակում է «կրակ»: Պիտի ասել, որ ուրարտական սեպագրական շատ տերմիններ բացատրում են սումերերէնով, իսկ սումերերէն bi (bil) նշանակում է «վառել, բոցավառել», որով bia նշանակում է «կրակ», իսկ biaina՝ «կրակի վայր, երկիր», biainili՝ «կրակի վայրեր (երկրներ)»:

Վերեւում ցոյց տուցինք, որ Վահագն անունը առաջ է եկել կրակի աստուած Bil-gin (^PGibil) տերմինից, որի bil (կամ bi) սկզբնամասը նշանակում է «բոցավառել»: այնպէս որ Վաի-աղն անունն սկզբնամասը (~~վաի~~) կապ ունի Բիա-ինա անունն սկզբնամասի հետ: Կարծում ենք, որ Կելիշինի արձանագրութեան փաստը, նրանից յետոյ արձանագրութիւնների մէջ Նաիրին չբերուելը եւ նրա տեղ Բիաինա տերմինի յիշուելը պիտի բաւարար ապացոյց համարել մեր մեկնաբանութեան համար: Այսուհանդերձ բիա բառը «կրակ» նշանակութեամբ բացատրում — ստուգարանում է նաեւ հնդեւրոպական լեզուների միջոցով:

Աճառեանը իր արմատական բառարանում հուր բառի դիմաց դրում է. «հուր... = բնիկ հյ. բառ՝ հնիս. puro ձեւից, ցեղակիցներն են յն. pur (սեռ. puros), ումբր. pir, գերմ. feuer, հրդ. fuir, fiur ... անդ. fire եւ այլն, բոլորն էլ «կրակ»: Այս բառը հնդեւրոպական նախալեզում p/r փոխանակութեամբ մի ձեւ էր, որով նոյն բառը ունենք հուն «կրակ» ձեւով, որից հնոց...»: Ուրեմն հնդեւրոպական նախալեզում կար p ձայնով ձեւ առանց r ձայնի՝ ինչպէս հայ (p > r) հուլի: Համեմատել նաեւ հայ բոց բառը, որի մէջ արմատականն է pn (տե՛ս Աճառեանի Լիակ. Քեր. հայերէն լեզուի, Զ. էջ 578): Ուստի bia բառը, անկասկած, նշանակում էր «կրակ»: Հետեւաբար հաստատում է, որ Bia-ina թարգմանութիւնն էր Նաիրի տերմինի եւ նշանակում էր «կրակի վայր կամ կրակի երկիր»:

Բնական է, որ կրակի (հարբուխների) այս երկրի Նաիրեան

բնիկ ցեղերի պաշտամունքի զլիսաւոր առարկան պիտի լինէր կրակը, որի համար Նաիրեան իւրաքանչիւր ցեղ իր կենտրոնաւայրում պիտի հաստատէր պաշտամունքի մեհեան: Ուստի երեւան է գալիս, որ KUR Biaina արտայայտութիւնով պիտի հասկանալ նաեւ կրակի պաշտամունքի վայր կամ տաճար իր քրմապետ արքայի պալատական շէնքերով ու պարսպով, որի շուրջ աճել է ժողովրդի բնակավայրը՝ ունենալով նաեւ շրջակայ անբնակատեաներ ու երկիր, որը իր բնակչութեամբ (շրջակայ գիւղերով) ենթարկուած էր տաճարի քրմապետ արքային. այնպէս որ այդ երկիրը կոչուած էր Բիաինա (կրակի տաճարի երկիր կամ կրակի երկիր):

Պիտի նաեւ ընդունել, որ ուրարտական պետութեան կազմի մէջ մտնող եւ արեւ-կրակ պաշտող իւրաքանչիւր Նաիրեան ցեղ-երկիր (Նաիրի՝ «կրակի երկիր»), իր տաճարային ու պալատական կորիզով, իր համար մի բիաինա էր, որով ուրարտական ամբողջ երկիրը կազմուած էր բիաինաներից եւ կոչուած էր KUR biainili «երկիր բիաինաների» (biainili անուան li վերջաւորութիւնը յոգնակերտ մասնիկ է): Հենց Նեմրութի (Վահագն), Սիփանի, Թոնդուրեկի եւ Վարազի հրաբխային լեռնազագաթները, որոնք շրջապատուած էին Վանայ Ծովը, պիտի շրջադժած լինէին Ուրարտուի կենտրոնը: Այս շրջադի մէջ էին գտնուած Արամէի արքունի քաղաք Արգասիու-ն (Վանայ Ծովի հիւսիս-արեւմտեան ափին), Ռուսա Ա-ի հօրենական քաղաք՝ Արբու-ն (ծովի արեւելեան ափին), մայրաքաղաք Տուշպա-ն (ծովի հարաւ-արեւելեան ափին) եւ նման ուրիշներ, ի հարկէ համապատասխանաբար այս վայրերում գտնուած էին նաեւ արեւ-կրակի պաշտամունքի մի շարք տաճարներ, ուստի Ուրարտուի այս կենտրոնը կարող էր կոչուել KUR biainili «բիաինաների երկիր»:

Բիաինա եւ Բիաինիլի տերմիններին մեր բերած այս մեկնութիւնը հաստատուած է նաեւ հնուց պահպանուած մի կարեւոր տուեալով: Ինչպէս ասացինք՝ ուրարտական պետութեան կազմի մէջ մտնող եւ արեւ-կրակ պաշտող իւրաքանչիւր Նաիրեան ցեղի երկիր իր տաճարային եւ պալատական կորիզով մի բիաինա էր: Այդպիսին էր կենտրոնական Բիաինան իր Տուշպա մայրաքաղաքի տաճարային ու պալատական կորիզով. ահա թէ ինչու Տուշպա մայրաքաղաքը (ոչ թէ գաւառը) մեզ հասել է Վան (բիաինա) անուամբ, որովհետեւ Տուշպա-ի երկիրը Բիաինա («կրակի երկիր») կոչուածն ասացել է նաեւ հենց Տուշպայում գտնուող տաճարի արեւ-կրակի պաշտամունքի

վայր լինելուն պատճառով՝ մանաւանդ հնում տաճար-կենտրոնի շրջապատում գտնուող երկիրը պատկանում էր իր աստծուն, որով տաճարին: Միաժամանակ բնական է, որ Վանայ ծովի շուրջ, այսինքն՝ վերոյիշեալ դործող հրաբուխների (Նեմրութ, Սիփան, Թոնդուրեկ, Վարազ եւ այլն) շրջապատում պիտի լինէին կրակապաշտութեան շատ տաճարներ (Նաիրեան առանձին ցեղերի կորիզներ), որոնք թէեւ հետագայում քրիստոնէականացուեցին, սակայն պահպանեցին Վանի կոչումը (արդէն յայտնի է, որ մի շարք հնագոյն վանքեր վերակառուցուել են հեթանոսական տաճարների հիմքի վրայ կամ վայրում). այնպէս որ Վանիքը պահում են biainili (բիաինաներ) տերմինի յիշատակը:

Վանք տերմինի ք վերջաւորութիւնը ինքնին յոգնակերտ մասնիկ լինելով հանդերձ՝ այստեղ բերուել է որպէս վայր (երկիր) նշանակող ածանց (հմմտ. հայք, վիրք, որոնք նշանակում են «հայեր, վրացիներ» բայց եւ «հայերի երկիր, վրացիների երկիր»): Այնպէս որ Վանի տերմինը նախապէս նշանակել է «կրակի տաճարի երկիր», այսինքն՝ կրակ պաշտող ցեղի տաճարային կորիզը իր երկրով հանդերձ, իսկ տաճարային կորիզը եղել է Վան (առանց ք-ի), որին գտնուած ենք վան-ա-կան, վան-ա-կեաց, վան-ա-հայր, վան-երէց եւ այլ ձեւերում. ինչպէս ասացինք, Տուշպան կոչուել է Վան (բիաինա, «կրակի վայր») այդտեղ գտնուող արեւ-կրակի տաճարի պատճառով: Ուրարտուի ժամանակ մայրաքաղաքը կոչուել է Տուշպա արեւ-կրակի աստուած Ծիւիլիի կնոջ Tušpuea-ի անուամբ (դուցէ Ծիւիլիի [արեւի] սիրելի Տուշպուէյան նոյնացուել է Արայի [արեւի] սիրած Ծամիրամ դիցուհու հետ եւ դրա համար Վանի կառուցումը Խորենացուն հասած տեղեկութիւններում վերագրուել է Ծամիրամին). երեւի Տուշպայում գտնուող կրակի կարեւոր տաճարը նուիրուած է եղել Տուշպուէյային, այդ պատճառով նրա շրջապատում գտնուող երկիրը (գաւառը) պահել է Տոսպ անունը, այնպէս ինչպէս Աշուր քաղաքի Աշուր տաճարի (Աշուր աստծու) անուամբ երկիրը կոչուել է Ատրեստան. իսկ մայրաքաղաք Տուշպան պահել է Վան (Բիաինա «կրակի վայր») կոչումը՝ այդտեղի տաճարի կրակի տաճար լինելուն պատճառով:

Ինչպէս ասացինք վերելում, բիաինաներ էին այն կրակի տաճարները, որոնք նախապէս կառուցուած էին պաշտուող հրաբուխի վերոյիշեալ խոռոարան-զագաթներից ոչ շատ հեռու վայրերում՝ Վանայ Ծովի անմիջական շրջապատում, բայց հրաբուխների հանգումով եւ քրիստոնէութեան մուտքով՝ մոռացուեց վանքերի ուրար-

տական իսկական բովանդակութիւնը, եւ վանք կոչումն էլ տարածուեց նաեւ կրօնական այլ նման հաստատութիւններէ վրայ:

Վանք բառը միանգամից մերկացնում է Բիաինա տերմինի կրօնական («կրակի [պաշտամունքի] վայր») նշանակութիւնը եւ հաստատում մեր մեկնարանութիւնը՝ ապացուցելով նաեւ բիա-ի «կրակ» իմաստը: (Բիա-իմա տերմինը համեմատել բազ-ին «տաճար» բառի հետ, ուր բազ նշանակում է «աստուած»՝ հաւանաբար՝ կրակի, ուր [բազինում] զոհասեղանի վրայ կատարւում էր ողջակիզում): Պիտի նշել եւ այն, որ բոլոր տաճարները չեն կոչուել վանք. քաղաքներում եւ դիւղերում առանձին տաճարները կոչուել են եկեղեցի, ոչ թէ վանք: Վանք տերմինի տակ հասկացուել է տաճարային համալիր, որը ընդհանրապէս գտնուելով քաղաքից դուրս՝ շատ դէպքերում շրջապատուած է եղել պարսպով՝ պարիսպներից ներս ունենալով բնակելի եւ վարչական բաժանմունքներ, իսկ պարիսպներից դուրս հողեր եւ այլն. այդ բոլորը միասին կրենց բովանդակութեամբ պահում են առանձին (այժմ մոռացուած) ցեղի կորիզի (Բիաինայի) ժառանգութիւնը:

Ուրարտուից յետոյ, եւ քրիստոնէութեան մուտքով, երկրի այս դրուածքը չի փոխուել. ինչպէս գիտենք, գլխաւոր վանքերի ներսում լինում էր տաճար կամ տաճարային համալիր՝ յարակից վարչական, հասարակական, ուսումնական, բնակելի եւ տնտեսական բաժանմունքներով. միաժամանակ վանքը ունէր տերիտորիաներ՝ վանքապատկան հողեր, դիւղեր եւ բնակչութիւն, որոնք պատկանում էին վանքին, տուրք էին տալիս ու ծառայում էին նրան (եւ ինչպէս նշեցինք, քրիստոնէական շատ վանքեր կառուցուած էին հեթանոսական աւերուած տաճարների հիմքերի վրայ կամ վայրում):

Հետեւաբար պիտի ընդունել, որ Հայաստանի հնագոյն գլխաւոր վանքերից հեթանոսական ժամանակներից ժառանգուածները (աւերուած-վերակառուցուած) եղել են Ուրարտուն կազմող Նաիրեան - հայկական ցեղերի բիաինաներ, որոնք Արշակունիների եւ քրիստոնէութեան ժամանակ համարուել են այս կամ այն նախարարական տան պատկանող վանք, այն նախարարական տների, որոնք ժառանգութիւն էին Ուրարտուն կազմած նախկին Նաիրեան առանձին ցեղերի: Ի հարկէ Նաիրեան իւրաքանչիւր ցեղ-երկիր ունէր իր գիտուած ուժերը, որոնք պատերազմի դէպքում հաւաքուած էին ուրարտական արքայի դրօշի տակ եւ պատերազմից ստացուած աւարից ու գերիներից բաժին էր հանուած բիաինաներին. ահա թէ որտեղից է

գալիս վանքերին՝ ծառայող ու տուրք տուող բնակչութիւն յատկացնելու տրադիցիան:

Այսպիսով պարզում է, որ Ուրարտուն Նաիրեան ցեղերի երկիր էր. այն հիմնականում կազմուած էր Նաիրեան ցեղ-երկրներից. այն այդ ցեղ-երկրների բիաինաների երկիրն էր: Այս կրօնութիւնը լաւ է երեւում ու ապացուցւում ուրարտական երկրորդ երկլեզուեան արձանագրութեան տուեալներով: Վերեւում ցոյց ենք տուել, որ Նաիրի անուան համանիշ է Ուրուատրի - Ուրարտու տերմինը, որը նոյնպէս նշանակում է «կրակի վայր կամ երկիր»: Ուստի պատահական չէ, որ ուրարտական միւս երկլեզուեան արձանագրութեան մէջ, որ թողել է Ռուսա Ա-ը պատմագիտութեան մէջ ծանօթ Տոպուզուա վայրի անուամբ, ասուրական տեքստում բերուած Ուրարտու (mât U-rartu) անուան տեղ ուրարտական տեքստում բերուել է բիաինաների երկիր (KUR biainili) տերմինը: Սա անհերքելի փաստ է, որ Ուրարտուն կազմուած էր Բիաինաներից, հետեւաբար վերջնականապէս ապացուցւում է բիաինա եւ բիաինիլի տերմիններին մեր բերած մեկնարանութիւնը:

Այս բացայայտումը մեծ նշանակութիւն ունի ուրարտական պետութեան ներքին կրօնա-էթնիկ կազմի մասին աւելի պարզ պատկերացում ունենալու համար:

Բիաինա անուան այս նշանակութիւնը պարզում է, որ այն մի յատուկ ցեղի անուն էր, ցոյց է տալիս, որ ինչպէս իշխողները, այնպէս էլ երկրի եւ պետութեան հիմնական ժողովուրդը կազմուած էին Նաիրեան ցեղերից՝ արեւ-հուր-յոյս պաշտող արբերից (հայերից): Եթէ բիաինա-բիաինիլ-ն ցեղանուն լինէր՝ այն անպայման կը վերապրէր ու կը յիշուէր ոչտունիների, արծրունիների եւ միւսների շարքում:

Պարզ է, որ Բիաինա անունը ուրարտական արձանագրութիւնների մէջ բերուել է որպէս թարգմանութիւն Նաիրի եւ Ուրարտու տերմինների: Բիաինա եւ բիաինիլ (բիաինաներ) տերմինների նշանակութեան ու դերի այս բացայայտումը, ինչպէս ասացինք, մեծ նշանակութիւն ունի Ուրարտուի ժողովրդի ճանաչման գործում պարզութիւն մտցնելու տեսակետից: Մինչեւ հիմա պատմագիտութեան համար առեղծուած էր ուրարտական իշխող ժողովրդի ցեղային պատկանելիութեան հարցը: Դժուարութիւններից մէկն էլ հենց բիաինա-բիաինիլի տերմինի գոյութիւնն էր, որին ցեղանուն տեղ դնելով

Հայութեան հետ նրա էթնիկ կապը չէր գտնուում եւ չէր էլ գտնուի: Այժմ արդէն հարցը աւելի պարզ է: Այժմ մեր գործը նախրեան ցեղերի՝ արերի (հայ-արմէնների) հետ է, եւ նրանց ճանաչման գործը զբուսում է ոչալ ուղու վրայ: Այժմ աւելի պարզ է գտնուում արմէնների՝ Ռչտունիների, Արծրունիների, Առբերանի արերի եւ միւսների, յատկապէս Ռչտունիների (Ուրաշտու) եւ արծրունի արերի (որոնք հետագայում իրենց վերագրում էին թագաւորական ծագում) կարեւոր դերը Ուրարտուի (Ուր-աշտուի) հայկական հզոր պետութեան կառուցուածքում, եւ աւելի պարզ՝ նրանց կապը Աշտու-աս (Աստուած) պաշտող հայութեան հետ:

Այսպիսով տեսնում ենք, որ Ալգի-Արմանին, Հարիան, Ար-խին, Հարքը, Արածանի շրջանը, Էրխիսին, Արագածի շրջանը, Առբերանին, Աշտուխինին, ուշտունիները, արծրունիները եւ ուրիշներ կղել են ար-եր, հայեր. նրանց աշխարհագրականօրէն զբաւած շրջանները գումարը կազմում է Ուրարտուի մեծագոյն մասը՝ ներառեալ կենտրոնը. հետեւաբար Ուրարտուի հիմնական ժողովուրդը, ներառեալ իշխող ցեղը, կղել է արմենական-հայկական:

ԳԼՈՒԽ Է.

ՀԱՅ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Մեր ժողովրդի հայ ազգանունան ծագումը բացատրելու փորձեր շատ եղան՝ յատկապէս քննական պատմութեան սկզբնաւորումից յետոյ, երբ գիտնականներին արդէն չէին բաւարարում աւանդական տեղեկութիւնները:

Մովսէս Խորենացուց մինչեւ անցեալ դարի վերջերն ընդհանրապէս տիրում էր մեր մատենագրութեան հաղորդած այն տեսակէտը, թէ ինչպէս հայերը, այնպէս էլ հայ անունը ծագել է հայերի նահապետ Հայկից, որի ծննդաբանական աղբւսակը եւ հիմնական (Հայկ եւ Բել) առասպելը Մար-Արա անուն մի գիտնականի մատեանից քաղելով պահել են Մ. Խորենացին եւ Անանունը: Սակայն այս վկայութիւն-յիշատակութիւնները ուսումնասիրողների կողմից համարուեցին գիտականօրէն անստահելի առասպել:

Երբ Առաջաւոր Ասիայի բեւեռագիր արձանագրութիւնները վերծանուեցին, գիտնականները՝ Փոքր Ասիայում մեր թուրքութիւնից մօտ 20 դար առաջուանից գոյութիւն ունեցած խեթական մեծ պետութեան սեպագիր արձանագրութիւններն ուսումնասիրելով՝ խեթերի եւ ներկայ հայերի միջեւ մեծ նմանութիւններ տեսան թէ՛ մարդարանական եւ թէ՛ լեզուամշակութային տեսակէտով: Այդ նմանութիւնների վրայ հիմնուելով եւ աչքի առաջ ունենալով հայերէնի ձայնափոխանակման որոշ երեւոյթները՝ գերմանացի գիտնական Պ. Են-սէնը ուղում էր ցոյց տալ, որ հայ անունը առաջ է եկել խեթերի խեթ կամ հատ անունից:

Այս միտքը տարբեր կարծիքներով ու երանգաւորումներով արտայայտել է նաեւ Մ. Մինասեանը: Նա գրել է. «Մտքիս մէջ ա-

մենափոքր տարակոյսն իսկ չէ մնացած, թէ մեր հայ ազգանունը իր մէջ կը բխրեղացնէ մեր նախապատմական նախնեաց կրօնական գերազոյն խորհուրդը՝ բեղմնաւորութեան աստուածութեան մասին, եւ թէ այդ անունը ճիշդ միեւնոյնն է սումերացւոց կանխադոյն հատի (Չուր-օձ) աստուածութեան հետ, որ յետոյ հայ կը կոչուէր եւ որու անունն կառուցուած էր ու մինչեւ այսօր ալ կ'անունակոչուի Տիգրիսը Եփրատին միացնող Եւֆրատ-հայ (օձ-դետ) արուեստական ջրբանջքը: Նոյնքան անտարակոյս եմ, թէ միեւնոյն ծագումն ունին քետական մեծ կայսրութիւնը հիմնողներուն հատի անունակոչութիւնը, Ս. զրական քետացի ազգանունը եւ հայերէն կազմուած ու թափ անձնական անունները¹:

Գիցարանական ուղղութեամբ եղել են նաեւ հայ անունը ուրարտացիներէ զլիսաւոր աստուած Խալդի անունով բացատրելու փորձեր: Ի հարկէ զբանջ չէին կարող ունենալ պատմա-գիցարանական հիմնաւորում, քանի որ դեռ հայերի եւ ուրարտացիներէ էթնոկրօնական կապը յայտնի չէր:

«Ն. Մարը փորձել է ցոյց տալ, որ «հայ» անունը առաջացել է Չ դարում (մ. թ. ա.) հիւսիսից դէպի հարաւ արչուած հենիոսիների կամ հանիոսների անունից»²:

Այս եւ նման այլ բացատրութիւններ չընդունուեցին, որովհետեւ չէին հիմնուած պատմական, գիցարանական (որ տիրապետող էր հին ժամանակներում) կամ նման ուժով փաստական այլ տուեալների վրայ:

Գժուարութիւնը կայանում էր արմէնների դաղթի տեսութիւնն ստեղծողների առջ քաշած եւ զիտական շրջանակներում ընդունուած ու տարածուած այն թիւր տեսակէտի մէջ, որ հայ ժողովուրդը կազմուած է երկու տարբեր ցեղերից կամ ցեղախմբերից՝ արմէններից եւ հայերից:

Չէր լուծուած այն ստեղծուածը, թէ ինչո՞ւ օտարները հայ ժողովրդին արմէն են կոչում, երբ նրանք իրենց անուանում են հայ:

Եթէ հայ ժողովուրդը կազմուած էր երկու տարբեր ցեղերից՝ արմէններից ու հայերից, ապա արդեօք ինչո՞ւ միացեալ ժողովուրդը նախընտրել է իրեն կոչել հայ:

1) Մ. Միսանաս, Արմէն եւ Հայ ազգանունները, «Հայրենիք ամսագիր», 1927 Նոյեմբեր, քիւ 1:

2) Հ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», Երևան, 1963, էջ 107:

Բանի որ երկու ցեղերի միացումով առաջացած ժողովուրդն իրեն հայ է կոչում, ապա բնական կը լինէր, որ նուաճողը, տիրողը եւ իր անունը պարտադրողը լինէր հայ ցեղը. եթէ այդպէս էր պատահել, ապա ինչո՞ւ օտարը նրանց հայ չի կոչել:

Պատմագիտութեան մէջ ընդունուած է, որ իշխողները եղել են արմէնները (Մատիկեանն ասում է. «... Որչափ կ'երեւայ, իշխողը Արամանեակի ցեղն էր...»)³: Հնդեւրոպարանները նոյնպէս դառնում են, որ առաջաւոր դերը կատարել են արմէնները, եւ հնդեւրոպական հայերէնը արմէնների լեզուն է. եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ նրանք համաձայնուել են հայ կոչուել, եւ հենց իրենց լեզուով էլ իրենց հայ են կոչում, եւ անգամ ընդունում են, որ Հայկը նրանց նախնին կոչուի:

Հայ ժողովուրդը երկու տարբեր ցեղերից (ցեղախմբերից) կազմուած լինելու տեսակէտի առաջ հարց էր ծառանում նաեւ, թէ հայերը հին սեպագիր արձանագրութիւններով յիշուած ո՞ր ցեղն էին:

Գիտութիւնն այսպիսի անելանելի դրութեան մէջ էր (որովհետեւ մերժում էին Խորենացուն, որը դրում էր «Հայկ ծնանի զԱրմենակ»), երբ առաջ քաշուեց հայ ցեղի եւ հայ անունն՝ խեթական արձանագրութիւնների մէջ յիշուած Խայասա-յից առաջ եկած լինելու տեսակէտը եւ անմիջապէս (գժուարութիւնից դուրս դալու որպէս միակ միջոց) ընդունուեց եւ տարածուեց պատմագրութեան մէջ, մանաւանդ, որ այդ տեսակէտի առաջ քաշողների զլիսաւորներից էր կրեւմեբը եւ մեզ մօտ մեծահամբաւ Ղափանցեանն իր «Հայասահայերի բնօրրան» գրքով:

Բայց այս դիւտն էլ չկարողացաւ պատասխանել վերոյիշեալ հարցերին, եւ պրոֆ. Մ. Մկրեանը շատ իրաւացի էր իր հետեւեալ առարկութեամբ. «Արմէնների հետագայ տեղաշարժերի եւ նուաճումների տեսակէտը պաշտպանողները, ի հարկէ, նախ եւ առաջ պէտք է աշխատէին լուծել տարակոյս յարուցող մի հարց. եթէ նրանք էին, որ նուաճեցին եւ իրենց հետ ձուլեցին Հայկական լեռնաշխարհի բոլոր ցեղերին, ապա որտեղից առաջացան հայ եւ Հայաստան անունները: Յ. Մանանդեանը այդ հարցը լուծում է բաւական հեշտ ձևով. նա ասում է. «Արմէնները իրենց առաջխաղացման ընթացքում նախ՝ նուաճեցին Հայասան, ձուլեցին իրենց մէջ տեղի ոչ հնդեւրոպական ցեղերին, բայց նրանցից վերցրին հայ եւ Հայաստան անունները»:

3) Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 275:

նունները, եւ արդէն իրենց հայեր կոչելով, շարունակեցին առաջնա-
դացումը»։ Եթէ նոյնիսկ անվիճելի համարենք այն, որ Պայասա
երկրի բնակիչները իրենց ճիշդ եւ ճիշդ հայ էին անուանում, ապա
խիստ վիճելի է, որ նուաճող, ձուլող ուժեղ ցեղը կարող էր իր ա-
նունը մոռանալ, կամ դէն նետել ու իւրացնել նուաճուած ցեղի ա-
նունը⁴։

Մենք տեղեկացել ենք խեթերի Պայասայի մասին թողած յի-
շատակութիւններին, մեծ մասամբ տեղեկացել ենք նաեւ հայերի եւ
հայ անուան Պայասայից ծագած լինելը պնդող աշխատանքներին՝
ինչպէս նաեւ Ղափանցեանի վերոյիշեալ աշխատութեանը, սակայն
դրանց մէջ, բացի խեթերի դործածած Պայասա տերմինից, չենք
հանդիպել բնիկների իրենց հայ կոչած լինելը ցոյց տուող որեւէ հետ-
քի կամ փաստի։ Եթէ բնիկներն իրենց հայ կոչէին, ապա այդ ան-
պայման իր հետքը թողած կը լինէր տոպոնոմիական անունների եւ
անձնանունների ձեւով։ Այս երեւոյթն անգամ կասկած է առաջաց-
նում Պայասա տերմինի սեպարմի ֆոնետիկ արժէքի ճիշդ գտնուած
լինելու մասին, եւ կարծում ենք, որ այս հարցում էլ իրաւացի են
պրոֆ. Մ. Մկրտչանի կասկածները. նա գրում է. «... «Պայասա» կամ
«Հայասա» անունը մեզ մնացել է խեթական արձանագրութիւններից,
բայց իրենք՝ Պայասայի բնակիչները ինչպէ՞ս են կոչել իրենց եւ ի-
րենց երկիրը, մեզ յայտնի չէ. արդեօ՞ք նրանք էլ իրենց երկիրը կո-
չել են Պայասա, հաստատ չգիտենք»⁵։ Պրոֆ. Ա. Պաշտարեանը դը-
րում է, թէ «Պայասա կամ Հայասա բառի ստուգարանութիւնը այ-
սուամենայնիւ մնում է դեռ անյայտ»⁶։

Այստեղ թիւրիմացութեան առաջը առած լինելու համար ա-
սենք, որ սրանով մենք չենք ուզում ժխտել խեթերի կողմից Պայասա
կոչուած երկրամասում հայկական ցեղի կամ ցեղերի գոյութիւն ու-
նեցած լինելը այդ ժամանակներում։ Որոշ երեւոյթներ կան, որոնք
հաստատում են նրանց գոյութիւն ունեցած լինելը։ Այդ երեւում է
կարծես քաղաքների անուններից եւ որպէս տեղանուն թողած հետ-
քերից (Ուրա, Արիբաս, Առնէա, Արիտա, Հուրշամա, Պալիմանա
(Ազգիում), Ալգինի-Երիզա եւ այլն), ինչպէս նաեւ նրանց աստուած-

ների անուններից (... անուշ, Սիլիլի՝ հմմտ. ուրարտական Սիւլ-
Արդի, Ուղաշտաաշ եւ յատկապէս Ունադ-աշտուաշ)⁶. այս վերջինի
մէջ պարզ երեւում է մեր Աշտուատ-Աստուածը։

Ի հարկէ Անի-Կամախը եւ Երիզան հայկական քաղաքներ էին։
Երիզայում էր գտնուում մեր Անահիտի նշանաւոր մեհեանը, բայց ին-
չո՞ւ նա չի յիշուում Պայասայի աստուածների շարքում. նոյնը կ'ասէ-
ինք Միհրի մասին, որի մեհեանը գտնուում էր նոյն շրջանի Բաղառի-
ջում։ Իսկ ի՞նչպէս կարող ենք հայկական համարել խայասական կո-
չուած Ուզուր, Զագրա, Պուշխուշ, Տերիտիտունիչ աստուածներին,
որոնք ոչ մի անգամ եւ ոչ մի ձեւով չեն յիշուել մեզ ծօտ։

Ինչպէս նշեցինք, խայասացիների իրենց հայ կոչած լինելը
ցոյց տուող ոչ մի հետք չկայ։ Եթէ խեթերի արձանագրութեան մէջ
այդ անունն իսկապէս խայ էր հնչում, ապա մեծ հաւանականու-
թեամբ նրանք յոյն մատենագիրների յիշած պոնտոսեան խոյերն էին.
այս նոյնացումն ընդունում է Կրեչմերը, բայց Ղափանցեանը, հաս-
կանալի պատճառով մերժում է⁷։ Այդ յոյն մատենագիրները ի հարկէ
այդ խոյերին հայ չէին համարում։ Աճառեանը ծաղրելով հայաշա-
Հայաստան նոյնացումը՝ գրում է. «Դեռ մէկը չի մտածել նմանեցնել
այս բառը Կիլիկիայի Այաս նաւահանգիստի հետ, որ այժմ կոչուում
է Այաշ կամ Մուսուրթալը»⁸։

Ինչպէս մի քանի առիթներով նշել ենք՝ բնակավայրերի անուն-
ները (ինչպէս նաեւ անձնանունները) շատ անգամ ուղղակի կամ ի-
րենց հիմքում կրում են բնիկների աստուածների կամ ցեղերի անուն-
ները, եւ այդ անուններն էլ խոշոր նշանակութիւն ունեն ճանաչելու
տուեալ շրջանում ապրող ցեղերին։ Պայասայում, ո՛չ սեպագրական
յիշատակութիւններում եւ ո՛չ էլ հետագայում տեղում պահպանուած
տոպոնոմիական անուններում, չի երեւում հայ անունը կամ այդ ա-
նունը յիշեցնող որեւէ հետք։ Մինչդեռ թէ՛ Հայասայում, թէ՛ Հայ-
կական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, թէ՛ պատմական յիշա-
տակութիւններով եւ թէ՛ տեղերում պահպանուած անուններով մենք
գտնում ու ճանաչում ենք արմէններին եւ այն արբերին, որոնք նայած
շրջանի, ժամանակի եւ ճիւղաւորման՝ ընդհանրապէս կոչուել են
այնպիսի անուններով, որոնց մէջ կարելի է ճանաչել իրենց արեւի-

4) Մ. Մկրտչան, Հայ ժողովրդի կազմաւորման եւ հայ գրականութեան սկզբ-
նաւորումի հարցը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1967, էջ 37 - 39։

5) «Հայաստանի սեպագրական շրջանի բնակական պատմութիւն», Երեւան,
1933, էջ 48։

6) Գր. Ղափանցեան, «Հայասա», էջ 245։

7) Գր. Ղափանցեան, «Հայասա», էջ 15։

8) Աճառեան, «Լիակատար ֆերականութիւն հայաց լեզուի», հատոր 2, էջ 769։

Հուրի-լոյսի մեծ աստուած Արը կամ այդ Արի տարրեր փոփոխակները Հանդիսացող Ար(դ)-Ալ(դ)-Ար(տ) եւ Աշ(տ) անունները:

Մենք արդէն վերելում բերել ենք մի շարք տեղանուններ կապուած արմա ցեղանուն հետ, ինչպէս Արմալիր, Արամանա, Իրմանի կամ Էրմանի, Արումա, Արամալէ, Արմունա, Ուրիման, Ուրեմն, Թոգարմա: Բերենք նաեւ մի քանի ուրիշներ.

Որմինինոն կամ Արմինինոն — լեռ, որտեղից սկիզբ է առնում Ալիս գետը:

Մարմանի — սա մի երկրանուն է, որ Երանի քաղաքանուն հետ յիշում է Մենուայի մի արձանագրութեան մէջ՝ նուաճուած երկրներէ եւ քաղաքներէ շարքում:

Ալամուն — սա մի գաւառի անուն է, որին յիշում է Տիգլաթ-Պալասարը Վանայ լճի Հարաւում ընկած երկրներէ վրայ կատարած արշաւանքի առթիւ:

Խալիմանա — ինչպէս նշեցինք վերելում, Ազգիի քաղաքներից մէկն էր:

Էրամունիա — Մուսասիրից վեր մի գետի անունն է:
Արմարիլի — Այս տեղանունը յիշում է Սարգոնի կողմից Ուրարուի դէմ կատարած արշաւանքի առթիւ:

Արամուս կամ Արամոն — գիւղ Կոտայքում. սրա մօտ էր Արախուս վայրը:

Կան եւ բազմաթիւ տեղանուններ ուղղակի Ար անունն Ար, Եր, Ուր եւ Արդ, Արտ, Աստ ձեւերով, ինչպէս, օրինակ՝

- Արահեգ — գիւղ Տայքում⁹:
- Արահուծ — գիւղ Սիւնիքում⁹:
- Արաժին — մի լեռ Դալարազեազում⁹:
- Արագեջ — գիւղանուն յիշում Մարմաշէնի եկեղեցու 1029 թուի մի արձանագրութեան մէջ⁹:
- Արսեաց — լեռներ Տայքում¹⁰:
- Արսիա — մի լեռ, Մուսասիրի ճանապարհի վրայ, յիշում Սարգոնի կողմից:
- Արագած եւ Արայի սար:

9) Գր. Վափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունք», էջ 105:
 10) Համբարձում Առաքելեան, «Համբարձումական բառարան», հատոր Ա. Թիֆլիս, 1915, էջ 1635:

Հարիա — Վանայ լճից Հարաւ գտնուող Նաիրեան երկրները, յիշում Տիգլաթ-Պալասար Ա-ի կողմից:

Արնէ — Ուրարտական քաղաք, յիշում Սաղմանասար Բ-ի պալատի գրան արձանագրութեան մէջ¹¹:

- Արգն — քաղաք Աղձնիքում:
- Արգնի — բերդաքաղաք Կոտայքում:
- Արգն — քաղաք Էրզրումի մօտ:
- Ալգինի — Երիզա-Էրզնջան-Հայաստանի քաղաք, նշում՝ վերելում:

- Արածանի — Հայկական գետ:
- Առքերանի — Վասպուրականի գաւառներից մէկը:
- Արգաշբու — արքայանիստ բերդաքաղաք Արամէի՝ յիշում Սաղմանասար Գ-ի կողմից:

Արշէն կամ Առշէն — գիւղ եւ կենտրոնավայր Մուշի Կինջ գաւառի¹²:

- Արուական — յիշում է նաեւ որպէս Աղահեճք:
- Արուծ — Վայոց ձորում¹²:
- Արուն — Հին աւան Արագածոտն գաւառի¹²:
- Արուխ — Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի¹²:
- Արջա կամ Արնա — գիւղ Այրարատայ Բասեն գաւառի¹²:
- Արջակ — Հառջակ:
- Արջաձոր — գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի¹²:
- Արջովիտ — նշանաւոր պատերազմի վայր՝ Այրարատի Բասեն գաւառում¹²:

- Արջուտ — գիւղ Շիրակ գաւառում¹²:
- Արսիս — գիւղ Տայքի Ասեացփոր գաւառի¹²:
- Եր-լեռ — Արարատի Վանանդ գաւառի Զարիշատ վիճակում¹²:
- Երասիս — Արաքս գետը: Էրիտիսի՝ Շիրակի ուրարտական անունը:

Երիշատ — քաղաք եւ բերդ Վասպուրականի Արճիշահովիտ գաւառում:

11) Ս. Տէր-Գրիգորեան, Արտաֆին անդրադարձութիւնք հիմ Հայաստանի մասին, «Բազմավէպ», 1928, Իւր 5, էջ 137 - 141:
 12) Տե՛ս Էփրիկեանի «Պատկերագրող Բնաշխարհիկ բառարան»ը, հատոր Ա. Վենետիկ, 1903 - 1905:

Երիշատ — Սիւնիքի Սողք գաւառում¹³ :

Երիտիա — լեռ Բազրեւանդի Ծաղկանց լեռներում, յիշուած՝ Սալմանասարի կողմից Ուրարտուի դէմ կատարած արշաւանքի առթիւ :

Երիկաւ — Հին բերդ Վասպուրականի Ատրեբանի գաւառում, Բերկրի քաղաքի սահմաններէ մօտ¹³ :

Երերին — տե՛ս Էրերին Վայոց ձորում¹³ :

Երերուք կամ Երերուաց — գիւղատեղ Այրարատի Շիրակ գաւառի արեւելեան մասում, Ախուրեանի աջ կողմը¹³ :

Երերուք — Հին գիւղ Սիւնիքի Վայոց ձոր գաւառում. կայ եւ այս անուամբ լեռ¹³ :

Երիմուխ — երկրանուն Այլթամարի ուրարտական արձանագրութեան մէջ :

Երիգակ — Տուրուբերանի Տարօն գաւառում :

Երգինա կամ Արգինա — անուանի գիւղաքաղաք Շիրակում, Ախուրեանի ձախ ափին¹³ :

Ուրա — ամուր քաղաք Հայաստանի, նշուած՝ վերելում :

Ուրէուս — քաղաք յիշուած Արգիշտիի կողմից. Եղիա Քասուներն նոյնացնում է Մասեացոտն գաւառի Ուղեւոյ բերդի հետ¹⁴ :

Ուրուսու — լեռ յիշուած Տիգլաթ-Պալասար Ա-ի կողմից : Եղիա Քասունին համեմատում է հայկական Որսերանքի հետ¹⁵ :

Արտի — գիւղ Այրարատի Հաւնունեաց գաւառում¹³ :

Արտին — այս անունով էր կոչուած Արագածոտն գաւառի լեռներից մին¹³ :

Արտոց — գետ՝ Վայոց ձորում :

Արտից — Հին ժամանակների գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառում, Ս. Կարապետ վանքի մօտ, որ ըստ Յովհաննէս Մամիկոնեանի՝ ունէր նաեւ ամրոց. կայ նաեւ այս անունով գաւառ¹³ :

Արտոս — Վասպուրականի բարձր լեռներից մին, Ռշտունեաց գաւառում, Ոստան ամրոցի հարաւում¹³ :

13) Տե՛ս Էփրիկեանի «Պատկերագրող Բնաշխարհիկ բառարան»-ը, Խատր Ա, Վեներտիկ, 1903 - 1904 :

14) Եղիա Քասունի, Յշուած գիրքը, էջ 334 :

15) Նոյն տեղում, էջ 163 :

Արտոս — գիւղ եւ լեռ՝ Բարձր Հայոց Կամախ վիճակում¹⁶ :

Արտոսդ — գիւղ՝ Վերին Բասենի համանուն գետի վրայ : Նոյն անունով գիւղ կայ Կիւմիշխանէի Հիւսիս-արեւմտեան կողմը¹⁶ :

Արտոսդ — մեծ գիւղ Վանանդ գաւառում մի գետի ափին, Աղսպապա լեռան հիւսիսում¹⁶ :

Արտոն — բերդ Չորրորդ Հայքում :

Արտոնի — գիւղ Տարօն գաւառում, Մուշի հարաւ-արեւելեան կողմը, Վարդենիս գիւղից 10 րոպէ հեռու¹⁶ :

Արտոնկն — Հին անուն մի գետի Այրարատի Շարուր գաւառում, ներկայ Չանախճը գետը :

Արտամետ կամ Արտամատ — պատմական նշանաւոր քաղաք Վասպուրականի Տոսպ գաւառում, Վանի հարաւ-արեւմտեան կողմը, ծովափին¹⁶ :

Արտահան կամ Արդահան — ամուր քաղաք Գուգարաց համանուն գաւառում, Կուր գետի հիւսիսային եզրին. բերդը բարձր դարաւանդի վրայ է գտնուած պարիսպներով եւ աշտարակներով¹⁶ : Այս անուան — հան վերջաւորութիւնը առաջ է եկած ուրարտական — խինի վերջաւորութիւնից :

Արտարայնի կամ Էրտարին — Հին գիւղ Հայոց Սիւնեաց Վայոց ձոր գաւառում, Կիւմիշ րուլաղ վտակի մօտ. այժմ՝ Էրտարին :

Արտագետ — Հին գիւղ Սիւնեաց Աղահեճք գաւառում :

Արտագերս կամ Արտագերից բերդ — Հին եւ պատմական դէպքերով նշանաւոր եւ ամուր բերդ Այրարատի Արշարունեաց գաւառում, Երուանդաշատից ոչ հեռու՝ հիւսիս արեւմտեան կողմը :

Արտագ — Վասպուրականի Հին նշանաւոր գաւառներից մին, որի հիւսիսում գտնուած է Մասեացոտն գաւառը, արեւմտակողմը՝ Կոզովիտը, հարաւում՝ Մարդաստանը եւ արեւմտքում՝ Երասխ գետը :

Աշտիշատ — ինչպէս բերել ենք վերելում, Հայոց գլխաւոր սրբատեղին էր, որտեղ գտնուած էր (Վահագնի) Արա-Աշտուատի գլխաւոր մեհեանը :

Ոստան — Ռշտունիների բերդ Վանայ լճի հարաւային ափին :

Ռշտունի — հայկական նշանաւոր նախարարութիւններից մէկի ազգանունը, որն Ուրարտու անուան Ուր-աշտու փոփոխակի հայկական վերջին ձեւն է :

16) Տե՛ս Էփրիկեանի նշուած բառարանը :

Աստարա — գլխաւոր քաղաք Թալիշ (Փայտակարան) նահանգի համանուն գետի վրայ¹² :

Աստախանէ կամ Աստեղանի — գիւղ Այրարատի Շիրակ դաւառում, Ախուրեան եւ Արզիւնի գետերի խառնման անկիւնում. ունի փոքր բերդ¹⁷ : Ի հարկէ սա Արզիւտի արձանագրութեան մէջ յիշուած Աշտուխիւնի քաղաքն է :

Ի հարկէ բերուած այս անունները մի մասն են այն բազմաթիւ տեղանունների, որոնք սփռուած են ամբողջ Հայկական լեռնաշխարհում եւ որոնցից շատերն իրենց մէջ պահում են արեւի-հուրի-լոյսի մեծ աստուած Ար-Արայի (> Ար(դ)-Ար(տ)-Աշ(տ)-ի) զաւակների՝ արերի գոյութեան հետքերը, իսկ ո՞ւր են հայերի հետքերը, չէ՞ որ, ասում են, հայ ժողովուրդը հիմնականում կազմուած է երկու տարբեր ցեղերից՝ արմէններից ու հայերից : Հայկական լեռնաշխարհում չկան այդպիսի հետքեր : Հայկական լեռնաշխարհում ո՛չ մի հին (պատմական) բնակավայր կամ քաղաք¹⁸, ո՛չ մի բերդ, ո՛չ մի լեռ, ո՛չ մի գետ չի կոչուել հայ անունով : Չէ՞ որ տեղանունները բնիկների կողմից են տրուած եւ ոչ թէ օտարի կողմից :

Աւելին՝ ասորեստանեան եւ ուրարտական ո՛չ մի արձանագրութիւն չի յիշում ո՛չ Հայաստանի եւ ո՛չ էլ հայ անունով որեւէ երկիր կամ ցեղ : Ասորեստանի արքաները իրենց կայսրութեան հզօրութեան ժամանակներին բազմիցս մտել են Փոքր-Ասիա, անցել են խեթերի երկրների վրայով եւ հասել են Սեւ ծովի մատոյցները, թափանցել են Հայկական լեռնաշխարհի խորքերը, բայց չգիտեն եւ չեն գրում Հայաստանի եւ հայ անունով երկրի ու ցեղի գոյութեան մասին : Ասորեստանի արքաները մէկ առ մէկ յիշում են իրենց դէմ կուռած բազմաթիւ Նաիրեան ցեղերի երկրների անունները՝ նրանց արքաների անուններով հանդերձ, բայց նրանցից ոչ մէկը չի կոչուած հայ : Ուրարտուի արքաները Հայկական լեռնաշխարհի մեծ մասը միացրել են իրենց պետութեան մէջ, խեթերի Հայաստ կոչած երկրի արեւելեան շրջանները մացրել են Ուրարտուի սահմանների մէջ, նրանց բանակները հասել են խեթերի երկիրը, բայց չեն հանդիպել Հայ եւ Հայա-

17) Տե՛ս էփրիկեամի նշումը բառարանը :

18) Գր. Ղափանցեամբ երկար փնտառութից յետոյ գտել է մի Հայկ կամ Խայէֆ եւ այն յղկելուց ու փայլեցնելուց յետոյ չորս անգամ ցուցադրել է իր գրքի չորս տեղերում : Մի տեղաճում կամ գիւղաճում, որը երեւի Մեքապ Մաշտոցից յետոյ Հայկ կոչուած մի տաճարի մասն է պահուած :

սա անունով երկրի կամ ժողովրդի : Ուրարտական արքաներն իրենց արձանագրութիւններում յիշում են բազմաթիւ ցեղեր, երկրներ, քաղաքներ, բայց հայ անուն չեն հանդիպում. մի՞թէ բոլորն էլ խօսքը մէկ են արել իրենց հայ անունը չյայտնելու : Մենք տեսանք արերին (արմէններին) իրենց ցեղանուն զանազան փոփոխակներով, այն անուններով, որոնցով իրենք են իրենց կոչում, իսկ ո՞ւր են հայերը :

Եւ ահա Ուրարտուից մօտ հազար տարի յետոյ, մեսրոպատա մատեաններն ասում են. մենք հայ ենք : Ովքե՞ր են «մենք հայ ենք» ասողները. բոլորը : Գոնէ մի մասն այդպէս ասէր, եւ մենք էլ ասէինք չեն նկատուել, դոնէ Հայկական լեռնաշխարհի մէկ-երկու շրջանի բնակիչներն ասէին «մենք հայ ենք» : Բոլորն էլ հայ են : Այդ ինչպէ՞ս եղաւ : Չուլո՞ւմ : Այդ ո՞ւր էին ձուլողները :

Ուրարտուի արձանագրութիւնները չեն յիշում հայ անունով ցեղերի ներխուժում կամ ներգաղթ : Ոչ մի նշան չկայ, որ Ուրարտուի, Երուսնդունիների եւ Աքեմենեանների տիրապետութեան ժամանակ հայ անունով ցեղի ներխուժում կամ ներգաղթ է տեղի ունեցել, եւ դա էլ բոլոր ցեղերին իր ազգանունը պարտադրող ուժով ու ծաւալով : Այդ բանը չի պատահել նաեւ Արտաշեսեանների եւ Արշակունիների ժամանակներին : Ուրարտուից շատ յետոյ էլ մնացել են ոչտունիները, արծրունիները, պալունիները, արեղեանները, ապահունիները, գնունիները եւ միւսները, որոնք պալիս էին Ուրարտուի ժամանակներից : Տեղանուններն էլ չեն փոխուել, Ալզինիսի-Աղձնիքը, Արածանին, Տայքը, էրիախի-Երասխը, Ախուրեանը, Ուրարտու-Արարատը, Վանը, Տոսպը, Մրեւանը եւ շատ ուրիշներ մնացել են անփոփոխ : Ապա ո՞րտեղից բուսան հայերը, ո՞ւր էին պահուած, ոչ մի հետք չկայ հայ անունան՝ անցեալից :

Ի զուր է փնտռել նրանց հետքերը, որովհետեւ հայ անունով ցեղ կամ ժողովուրդ չի եղել անցեալում : Որովհետեւ նրանք հայ չեն կոչուել անցեալում : Նրանք իրենց մեծ Ար-Արա աստծոյ անունով կոչուել են ար, հար (հմմտ. Արմա-նի, Հարմա) եւ հենց այս հար ձեւն էլ հետագայում (ը ձայնը փոխելով յ-ի) հնչել են հայ :

Մենք արդէն վերելում (Հ)արք եւ (Հ)արմա անունների բացատրութեան առթիւ խօսել ենք ար > հար անցման մասին՝ օրինակ բերելով ոգի > հոգի, սկա > հսկայ, Ռոմ > Հոռոմ եւ այլն անցումները : Հենց (Պորենացու բերած) Հարմա անունը բաւական է փաստելու հար ձեւի գոյութիւնը : Հար > հայ անցման օրինակներ շատ

կան մեր լեզուում. ր > յ փոփոխութիւնը հայերէնի համար օտար երեւոյթ է: Անգամ հայերէնի մի շարք բարբառներում ր-ի յ հնչիւնի վերածուելը օրինաչափ եւ ընդհանուր երեւոյթ է: Ար. Ղարիբեանն այս մասին գրում է. «*«ր» բաղաձայնը արտասանւում է «յ» խոսքը-ջուրի, Զէյթունի, Հաճընի բարբառներում, Հազրութի բարբառի Տումմի գիւղի խօսուածքում եւ Ղափանի Արաչէն գիւղում: Այդ բարբառներով գրուած տեքստերի մէջ կը նկատենք, որ ամէն տեղ «ր» հնչիւնը վերածւում է յ հնչիւնի: Այդ կատարուել է այն պատճառով, որ արտասանութեան ժամանակ լեզուի ծայրը դէպի քիմքն է բարձրացել շատ աւելի քիչ քան պէտք է, ր-ն մեղմացել է եւ վերածուել յ հնչիւնի: Փափկացման այդ միջին ճանապարհը կարելի է գտնել Երեւանի արուարձան հանդիսացող Նորքի խօսուածքի մէջ:*

«Սերաստիայի բարբառում «տր» կապակցութիւնը դարձել է յյ. օրինակ՝ գըյյուգ-կտրուկ, Բեյյոս-Պետրոս եւ այլն»¹⁹:

Ի հարկէ մեծահմուտ լեզուարան Ար. Ղարիբեան ր > յ անցման բոլոր երեւոյթների մասին տեղ չի տուել իր գրքում. օրինակ՝ Համչէնի բարբառով ջուր հնչւում է ցույ²⁰:

Գրաբարում ա եւ ռ ձայնաւորներով վերջացող բոլոր բառերից եւ բառաձեւերից յետոյ (մի քանի բացառութեամբ) գրւում է յ տառը: Այդպէս էինք գրում նաեւ մենք աշխարհաբարում մինչեւ մեր սովետական ժամանակաշրջանի նոր ուղղագրութիւնը. այդպէս են գրւում այժմ սփիւռքահայերը արեւմտահայերէնում. այ-ով եւ յյ-ով վերջացող բառերը եւ բառաձեւերը մեր լեզուում պատահում են հարիւրներով: Նրանց մէջ կան այնպիսիներ, որոնց -այ եւ -ոյ վերջաւորութիւնները արմատական են (վրայ, Բուրայ, պարագայ, գոյ եւ այլն), բազմաթիւ են այնպիսիներ, որոնք ստացւում են բառերի վերջաւորութիւնների քերականական փոփոխութիւններով. օրինակ՝ անորոշում -ալ վերջացող բայերը սահմանական եղանակ ներկայ 3-րդ դէմքում վերջանում են այ-ով (օրինակ՝ սուրայ, կարդայ եւ այլն): Որոշ գոյականներ ունեն սեռական -այ կամ -ոյ վերջաւորութիւններ (օրինակ՝ վաճայ, Սեւաճայ, աստծոյ, սիրոյ եւ այլն): Բառավերջի այս յ տառերը մեր ժամանակներում չեն հնչւում, բայց նրանք առաջ հնչուել են, այլապէս չէին գրուի: Այս հարցում մեզ համար հետա-

19) Ար. Ղարիբեան, «Հայ բարբառագիտութիւն», Երեւան, 1953, էջ 132:

20) «Գրական բերք», 1967, Ապրիլ 14, էջ 4:

քրքրահանը այն է, որ հայ բառը նոյնպէս վերջանում է այ-ով, բայց նրա յ տառը հնչւում է: Այս երեւոյթը թերադրում է, որ հայ բառի յ-ն արժէքով նման է վերեւում նշուած յ-ով վերջացող բառերի յ-ին, այլ խօսքով ասած, հայ բառի յ-ն առաջ չի եղել յ, եւ մեր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այն առաջ եղել է ր:

Հաւանաբար այդպէս են եղել նաեւ մի քանի (նոյնպէս) միավանկ բառերի վերջում գտնուող յ-երը, որոնք նոյնպէս հնչւում են, եւ որոնք նոյնպէս պէտք է տարբեր արժէք ունենան չհնչուող յ-երի հետ համեմատած: Դրանք են.

ձայ — (ըստ «Աճառեանի Արմատական բառարանի») «ուրուր», «մի տեսակ ագռաւ», «մի տեսակ արագիլ», «մի տեսակ ծովային թռչուն». նման են հնչւում տարբեր լեզուների մէջ զանազան հոմանիշ բառեր. վրաց. ձարի, ձարոյ «ձկնորս, թռչուն, չայկա...» դու-ից... Մշ. ձարեգ «թռչուն սարեակի ցեղից»:

Ինչպէս տեսնում ենք՝ փայ անունը վրացիները հնչում են փարի, փարոյ, եւ Մուշի բարբառում նոյնպէս կայ ձարեգ ձեւը. ուստի կարծում ենք, որ մեր փայ բառի յ-ն, որը հնչւում է, ունի տարբեր արժէք քան այն յ-երը, որոնք չեն հնչւում, եւ երեւի առաջ եղել է ր:

Բայ — նկատի առնելով այն հանգամանքը, որ այս բառը ծագած է քա արմատից, վերջին տառը չպէտք է հնչուէր, ինչպէս չհնչուող յ-երը, բայց քանի որ հնչւում է, ապա այն կապուած պէտք է լինի քառ բառի հետ, թէեւ համընկել է քալ բայի ներկայի եղակի Գ դէմքի՝ բայ-ի հետ, որի յ-ն (հմմտ. տայ, դայ եւ այլն) չի հնչւում:

Խոյ — (որպէս քաղաքանուն) գտնւում է Ուրմիոյ լճի հիւսիսում: Սարգսնը նրան յիշում է Ուլխու ձեւով, որը մեր հնքերի մօտ հնչուել է (լ > ր) Հեք, իսկ այժմ Խոյ: Այստեղ էլ պարզ երեւում է, որ Խոյ բառի յ-ն սովորական յ չէ, այլապէս այն էլ չէր հնչուի. ուստի պարզ երեւում է, որ այն առաջ եղել է յ > ր:

Խոյ — («արու ոչխար»). այս բառը շատ հետաքրքրական է. այն ունի նաեւ դիցաբանական արժէք: Մեր կարծիքով խոյը մի ժամանակ եղել է արեւ աստծոյ խորհրդանիշը (աստեմ) եւ այդ ժամանակներին այն հնչուել է խոք կամ խոռ: Յիշենք եգիպտական արեւի աստուած Hor-ը, մեր Հոռի ամսանունը, յունա-հռոմէական Հորա-ն, ինչպէս նաեւ յունական Հել(իոս)ը, որ նշանակում է արեւ, որի լ-ն համարժէք է ր-ի. արարներն ունեն յ- հար «տաք», պարսիկներն ունեն խոռ «արեւ»: Հայերէնում կայ խար (խար-ել) «այրել,

տաղել», որից խար-ոյկ: Այս կապակցութեամբ շատ հետաքրքրական է մեր Սասունցի Դաւիթ էպոսում փոքր Մհերի (արեւ-կրակի աստուած) մասին պահուած մի վկայութեան յիշատակութիւն, որ բերուած է որպէս խօսք Ձէնով Յովանի. նա խօսքը Մհերին ուղղելով ասում է. «Ո՛րդիւ, ա՛ռ հապի, նստի, Սասնայ տան խոյերէն դու ես մը-նացել, էլ ես խնայեմ ո՞ւր համար»²¹: Ի հարկէ առաջուայ խոյերն էին Սանասարը (արեւի աստուած), Մեծ Մհերն (արեւ-կրակի աստուած) ու Դաւիթը: Եղիպտոսի արեւի աստուած Ra-ն երբեմն պատկերացուած էր արեւի թեւաւոր դիսկով, որին երբեմն կցուած էր լինում խոյի երկու կոտոջ²²: Յիշենք նաեւ Հայաստանի տարբեր շրջաններում դանուղ խոյի քանդակները եւ հենց սիւների վրայ դրուող խոյակները, որոնք կապուած չեն թողնում խոյի պաշտամունքի մասին: Այստեղ կարծում ենք իմաստաւորուած է Խորենացու մօտ պահուած Խոռ անունը, որը բերում է որպէս Արամանակի որդի եւ Հայկի թոռ: Հետեւաբար դանում ենք, որ խոյ բառի յ-ն (որը հնչուած է) սովորական յ է (այլապէս չէր հնչուի՝ ինչպէս զոյ բառում) եւ մեծ հաւանականութեամբ ունի ր-ի ծագում:

Այսպիսով, այս օրինակներն էլ ցոյց են տալիս, որ հայ անունան յ վերջաւորութիւնը սովորական յ չէ, այլապէս չէր հնչուի: Այն առաջ եղել է ր: Ուստի հայ անունն էլ անկասկած առաջ հնչուել է հար:

Մեր ուսումնասիրութեան կապակցութեամբ՝ շատ հետաքրքրական է նաեւ այն երեւոյթը, որ մեր բարբառներից մէկում (Մեբաստիա) «տր» կապակցութիւնը դառնում է յյ: Մենք ցոյց ենք տրուել, որ Ար-Արամ ունեցել է Արդի, Ատր (Ուրու-ատրի), Արտ (Ուրարտու), Աշտ (Ուր-աշտու, Աշտուաս) փոփոխակները: Մեր բարբառներից մէկում «տր» կապակցութեան յյ-ի փոխուելը ունի կարեւոր նշանակութիւն այստեղ. դա մի փաստ է, որ անգամ ատր-ը (հետեւաբար եւ արտ-ը) կարող է դառնալ այյ կամ այ > հայ: Ի հարկէ այս երեւոյթը մասամբ հասկանալի է լինում, եթէ աչքի առաջ բերենք եւ այն, որ հայերէնը հնդեւրոպական տ-ն որոշ տեղեր փոխում է յ-ի, ինչպէս pater-հայր, mater-մայր եւ այլն:

Այս հարցի համար շատ կարեւոր նշանակութիւն ունի ր բաղա-

21) «Սասունցի Դաւիթ», Երևան, 1961, էջ 303:

22) W. M. Flinders Petrie, «The Gods of Ancient Egypt, wonders of the Past», Vol. I, p. 167:

ձայնի հայերէնում կրած փոփոխութիւնների (պատմութեան) մասին մեր բաղաձայնու Ար. Ղարիբեանի բերած Ֆորմուլան. նա գրում է. «Այս բաղաձայնը հայերէնի բարբառներում ենթարկուած է բաղաձայնի փոփոխութիւնների: Այս փոփոխութիւնները կարելի է պատկերացնել հետեւեւ ձեւով ր > ր > ր > ր > յ»²³: Այս Ֆորմուլան, հաշուի առնելով նաեւ տր > յյ կամ րտ > յյ անցումը, միանգամայն հաստատում է ինչպէս Ար-հար > հայ անցման, այնպէս էլ Ատր - Արտ > Աշտ > այյ - հայ անցումների հնարաւորութիւնը:

Մենք դանում ենք, որ Ար-հար > հայ անցումը կատարուած պիտի լինի մեր ուրարտական դինաստիայի անկումից մինչեւ Մեսրոպ Մաշտոց տեւող 1000 տարուայ ժամանակահատուածում²⁴, այսուհանդերձ բացառուած չէ այն հաւանականութիւնը, որ այդ պրոցէսը կարող էր սկսած լինել որոշ շրջաններում այս ժամանակներից առաջ: Այս միտքը մեր մէջ ծագեց ուրարտական պանթէոնում (Մհերի դրան արձանագրութեան աստուածների ցուցակում) Ար- սկզբնաձայնն ունեցող աստուածանունների շարքում Այ ձեւերի դոյութեամբ. ահա դրանք.

Ալդի	([H]al - di)
Արսիմելա	(Ar - si - me - la)
Իրմուչինի	(Ir - mu - ši - ni)
Էրինա	(E - ri - na)
Այրայնի	(A - i - ra - i - ni)
Խարա	(Ḫa - a - ra)
Արագա կամ Արածա	(A - ra - za)
Ուրա	(U - ra)
Արծիբեդինի	(Ar - si - be - di - ni)

23) Ար. Ղարիբեան, «Հայ բարբառագիտութիւն», էջ 132:

24) Խոյ բառի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ ր-ից յ անցումը կատարուել է ոչ շատ վաղ ժամանակներում: Խոյ-ի յ-ն եղել է ր. դրա համար փաստ է այն, որ Խոյ քաղաքը առաջ կոչուել է Հեր, բայց աւելի առաջ (ինչպէս գիտեմք Սարգսի արձանագրութիւնից) կոչուել էր Ուլիսու, այսինքն ր-ն հնչում էր յ: Հետեւաբար պիտի ընդունել, որ յ-ից (Ուլիսու-ից) ր (Հեր) անցումը կատարուել է Սարգսից յետոյ, իսկ ր-ից յ (խոյ) անցումը աւելի ուշ ժամանակներին: Այս փաստը բեկադրում է, որ Հար-ից հայ (ր > յ) անցումը պիտի կատարուած լինի մեր հեթանոսութեան ուշ ժամանակներին՝ Ուրարտուից յետոյ, Մեսրոպից առաջ:

Արնի	(Ar - ni)
Արտու'արասա	(Ar - tu - 'a - ra - sa)
Սարդի	(Sar - di)
Ար'ա	(Ar - 'a)
Արդի	(Ar - di)

Այս բերուածներէ հետ մենք գտնում ենք հետեւեալ աստուածները.

Այա	(A - i - a)
Ուայնի	(U - a - i - ni)
Աուի	(A - u - i)
Ույա	(U - i - a)
Այնաու	(A - a - i - na - u)

Այս բոլորը շատ դժուար է պատահականութեան վերագրել: Դժբախտաբար յայտնի չէ այս աստուածների մեծամասնութեան բրնոյթը եւ Հայկական լեռնաշխարհի ո՞ր ցեղին ու երկրին պատկանելը, սակայն պիտի ընդունել, որ դրանք արեւրի (հայերի) աստուածներն են: Այս Ար-, Իր-, Էր-, Ուր-, Արա- սկզբնաձայներն ունեցող աստուածանունների հետ Այ, Ուայ(նի), Այ(նաու) եւ միւս նմանների գոյութիւնը կարծես խօսում է այն մասին, որ Ար-ից Այ անցումը, այսինքն՝ Հար-ից Հայ անցումը արդէն որոշ տեղեր սկսել էր այդ ժամանակներին:

Ի հարկէ եթէ երկան դան Պայասայի՝ հայ անուան ու ցեղի հետ կապուած լինելը ապացուցող տուեալներ, ապա հնարաւոր կը լինի ընդունել, որ Հար-ի մի ճիւղը արդէն խեթերի ժամանակ կոչւում էր հայ, որը սակայն չզիմացաւ հետագայ աւերիչ իրադարձութիւններին ու արոհուելով կամ գերեմարումների ու բնաջնջման միջոցով քայքայուելով անհետացաւ՝ առանց իր ցեղանունը պահող մաս կամ հետք թողնելու Ասորեստանի եւ Ուրարտուի ժամանակներին:

Ար > ալ անցման տեսակէտով հետաքրքրական է Ղափանցեանի մի մէջբերումը, որ Aia արական մի յատուկ անուն հայոց մօտ թարգմանուել է Արայ ձեւի. նա գրում է. «... Ես կ'ուզէի ուշադրութիւն հրաւիրել մի տեղի վրայ, ուր Aia արական յատուկ մի անուն հայոց թարգմանութեան մէջ փոխարինուած է «Արայ» ձեւով: Այս տեղեկութիւնը ես բերում եմ Ա. Մատիկեանի «Արա Գեղեցիկ»-ից (էջ 319): Կիւրեղ Աղեքսանդրացուոյ ընծայուած «Մեկնութեան Ա-

րարածոց» տակաւին անտիպ գործին մէջ եւս կու գայ Արայ անունը եւ այն իբր Մննդոց դրքէն տոնուած. «Եւ այս են որդիք Սերեզոնի Արայ եւ Աւնան (ձեռ. Մխիթ. մատ. 231, թղթ. 22 ք), մինչդեռ թէ բնազիրը եւ թէ բոլոր թարգմանութիւնները Արայի տեղ «Այիէ» կ'ընթեանուն, Մննդ. 12 24... որուն համաձայն է նաեւ լատինականը»²⁵: Այս պարզ ցոյց է տալիս, թէ ինչքան հեշտ եւ բնականօրէն է կատարւում հայերի մօտ ար > ալ անցումը, եւ հնում գիտէին որոշ դէպքերում ալ-ի ար արժէքը:

Մեծ հաւանականութեամբ մեր այդ «առաւօտ» բառն առաջ է եկել արեղ «արեւ» բառից, ր ձայնը փոխելով յ ձայնի:

Հայ անուան Հար < Ար-ի հետ կապուած լինելը ցոյց տուող վկայութիւն կայ նաեւ մեր աւանդութեան մէջ: Աւանդական տեղեկութիւններն առանց պատմական հիմքի չեն առաջանում, եւ առանց պատմական հիմքի չէ, որ Մ. Պորենացին սրբութեամբ պահել է այն մեծարժէք յիշատակութիւն-վկայութիւնը, որ Արամանեակը սերուած է Հայկից:

Պորենացու այս վկայութիւնը միանգամայն հաստատում է թէ՛ Հայկի հիմքում Ար լինելը եւ թէ՛ Արմէն անուան՝ Ար-ից՝ Հայկ-ից սերուած լինելը, միայն այն տարբերութեամբ, որ հայ անունը առաջ է եկել Ար > հար-ից, իսկ Հայկ-ը Ար-ի Harh < Arhi կամ Araba «Արայեան» (տարբերակ՝ Էրիաի) անուանաձեւից: Վահագնի բնոյթը բացատրելիս ցոյց տուցինք, որ Արան ունեցել է նաեւ կրակի բնոյթ, սրանով բացատրւում է (Arhi = Արայեան) Հայկի՝ Պորենացու մօտ Հապետութեան (աղաւաղուած Հեփեսոսեան) կոչուելը:

Մար Արան հայ ժողովրդի ծագման պատմութիւնը գրելիս՝ օգտուած պիտի լինի ոչ թէ միայն Հայկի եւ Բելի գրոյցից, այլ եւ ուրիշ աւանդական կամ դրաւոր աղբիւրներից: Քրիստոնէութեան Հայաստան մուտքի սկզբնական (մոլոտանդ) շրջանի քրիստոնեայ պատմաբանի համոզմամբ՝ հին ազգերի ծագումը պէտք է կապ ունեցած լինէր Ս. գրքում յիշուած՝ Բաբելոնի աշտարակաշինութեան հետ, «որտեղ լեզուները եւ որով ազգերը բաժանում էին ստացելը»: Հայ ազգն էլ լինելով մի հնագոյն ազգ՝ նրա պատմութեան սկզբնաւորութիւնն էլ պէտք է կապուած լինէր Բաբելոնի աշտարակաշինու-

25) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկ պաշտամունք», էջ 78:

թեան ժամանակի հետ: Ուրեմն Մար Արան, որը ձեռնարկել էր գրել հայ ժողովրդի ծագման պատմութիւնը եւ ձեռք էր բերել Հայկի եւ Բելի գրոյցը որպէս հայ ժողովրդի նախնական պատմութիւն՝ պէտք է այն լրացնէր Հայկի անուան հետ կապուած պատմական այնպիսի հին իրադարձութիւններով, որոնք տեղի ունեցած լինէին Բարելոնում. հետեւաբար նա երկար որոնումներէց յետոյ պիտի ուրախութեամբ դատած լինի Արախա-Հայկի Բարելոնում օրուայ «Բելի» (Դարեհի) դէմ ապստամբած ու զիմադրած լինելու մասին պահուած պատմութիւնը եւ այն կապելով Բարելոնի աշտարակաշինութեան հետ՝ պիտի զետեղած լինի Հայկի եւ Բելի գրոյցի սկզբում: Խորեանացին այս մասին Մար Արայից բերել է հետեւեալը.

«Աստուածներէց առաջինները ահեղ էին եւ երեւելի...: Սրանցից առաջ եկան հսկաների սերունդը... որոնք ամբարտաւանութեամբ յղանալով ծնան աշտարակաշինութեան ամբարիշտ խորհուրդը...: Աստուածներէ ցասումից ինչ-որ ահադին եւ աստուածային հոգմ փշելով կործանում է աշտարակը եւ մարդկանց իւրաքանչիւրին տալիս (միւսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մէջ աղմուկ եւ շփոթութիւն է ընկնում: Սրանցից մէկն էր եւ Հայպետութեան Հայկը, անուանի եւ քաջ նախարարը...: Սա քաջ եւ երեւելի հանդիսացաւ հսկաների մէջ, զիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների եւ զիւցազուններէ վրայ տիրապետելու: Սա խորտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնաւորութեան դէմ...: ...Եւ Բելին պատահամբ յաջողուեց բռնանալ եւ բոլոր երկիրը գրաւել: Որին Հայկը չկամենալով հնազանդել... չուեց զնաց Արարազի երկիրը, որ գտնուում է հիւսիսային կողմերում...»²⁶:

Հենց Արախա-Հայկն էր, որ Բարելոնում հանդէս էր եկել այն ժամանակներին, երբ պարսիկներէ (Դարեհի) տիրապետութեան տակ ծնչուում էին հսկաների երկրներ հանդիսացած Բարելոնը, Ասորեստանն ու Ուրարտուն: Արախան հսկաների մէջ այն քաջ եւ երեւելին էր, որը ապստամբել էր Բարելոնում եւ զիմադրել բոլոր հսկաների ու զիւցազուններէ վրայ տիրապետող «Բելին»:

Կասկած չկայ, որ Հայկի եւ Բելի հիմնական գրոյցը Արախայից անկախ՝ խոր անցեալի պատմական իրադարձութիւնների արտացոլումն էր կապուած հարաւի սեմական աշխարհի դէմ հայ ժողովրդի մղած բազմադարեան երկարատեւ գոյապայքարի հետ: Բայց գրոյցը

²⁶) Խորեմացի, Ա—Ժբ:

Բարելոնի աշտարակաշինութեան հետ կապելու համար՝ Հայկի՝ Բարելոնում ապստամբած եւ Բելի իշխանութեան զիմադրած լինելու մասին բերուած տեղեկութիւններն էլ առանց հիմքի եւ մտացածին չեն եղել. դրանք բերուած են Արախա-Հայկի մասին Մար Արայի գտած գրաւոր կամ աւանդական յիշատակութիւններից: Ինչպէս պարզ երեւում է, Հայկի եւ Բելի գրոյցի խնդրոյ առարկայ սկզբնական մասը միանգամայն համապատասխանում է Բարելոնը, Ասորեստանը, Ուրարտուն եւ շրջակայ երկրները իր տիրապետութեան տակ պահող իշխանութեան («Բելի») դէմ ապստամբած Արախայի պատմութեան: Սա կարելու փաստ է, որ Արախա անունը նոյնացուած է Հայկ անունը առաջ է եկել Arbi > Harh կամ Araha անուանաձեւից, հետեւաբար հիմքը Ար > հար > հայ է, ոչ թէ Araha - Arbi > Harh > Հայկ, որը նշանակում է «Արայեան»:

Մենք վերեւում նշել ենք, որ մեր ուրարտական -ախի (օրինակ՝ էրիախի), -եխի (Արելիանիսի), -ուխի (Ուրմէուիսի), -ախա (Արախա) տուել են մեր հայկական -ակ վերջաւորութիւնը, օրինակ՝ Շիրակ, Արամանեակ (Ուրմէուիսի կամ Ուրմենիուիսի > Արմանիակ > Արամանեակ), Իսկ -խիմի (Աշտուիսիսի) կամ -խիմա (Ռուսախինա) տուել է -ախան (օրինակ՝ Ողական, Օշական) վերջաւորութիւնը: Ի հարկէ որոշ տեղեր (որոշ բարբառներում) պահպանուած է -ախ ձեւը, ինչպէս Չարախայից՝ Չաւախ, Կումմախայից՝ Կամախ, բայց -ախ վերջաւորութիւնը շատ հեշտութեամբ էր փոխուում -ակ-ի: Այսպիսով, Արխի (Արախա) > հարխի (հիմա. Արմա-Հարմա) տուել է Հայկ անունը: Մենք ունենք նաեւ Հայկակ անունը, որին ոմանք սըխալմամբ կարծում էին Հայկ անունն փաղաքական ձեւը. մենք գտնում ենք, որ Հայկակ անունը, որին նոյնպէս առանձին յիշում է Խորենացին, անձնաւորում է ուրարտական ժամանակների մեր արմենական էրիկուախի (էրի = Արա) ցեղանուն կամ երկրանուն, որը գտնուում էր Մասեացոսն գաւառում:

Այսպիսով՝ հաստատուած պիտի համարել, որ հայ անունը առաջ է եկել (հայերի արեւի աստուած) Ար-ի Հար ձեւից (Ար-ի հար ձեւի գոյութեան համար որպէս ապացոյց բերել էինք Հարմա, Հար[Ք] եւ այլն): Մենք արդէն նշել ենք, որ Ն. Մառը համոզիչ կերպով բացատրել է, որ Խալդի անունն հիմքը խալ է, Իսկ մենք էլ ցոյց

ենք տուել, որ խալ²⁷ անունը պիտի ընդունել (լ > ր) որպէս Հար, որովհետեւ խալդի-Ալդի-ն Արդի-Արա կամ Ար > հար է եւ տարակոյս չկայ, որ Հար ձեւից էլ առաջացել է մեր հայ ազգանունը: Հեռեւարար խալ(դի) եւ խայ(դ) անունները նոյնանում են (հմմտ. յուն. ալֆա. արար. ալիֆ եւ հայ. այր): խալ-խար > խայ կամ խալ-հար > հայ (լ-ր > յ) անցումը կատարուած պիտի լինի Ուրարտուից յետոյ. դրա համար ապացոյց է խայ քաղաքանունն Ուլխու > Հեր > խայ (լ > ր > յ) ձայնափոխութիւնը: Մեզ յայտնի է, որ այս քաղաքը Սարգոնի կողմից յիշուել է Ուլխու ձեւով, որը հեթանոսութեան ուշ շրջանին դարձել է Հեր եւ ապա խայ: Ուստի պիտի (նմանապէս) ընդունել որ խալ-հար > Հայ անցումը կատարուել է Ուրարտուի անկումից յետոյ, Մերոսի Մաշտոցից առաջ:

Հայկի՝ Արայից ծագած լինելը հաստատուում է նաեւ դիցարանական ուղղութեամբ: Մեզ յայտնի է, որ Արայի ժողովուրդն իր կեանքի բազմահազար տարիներ ընթացքում մերթ կորցրել է իր քաղաքական դերիչխանութիւնը եւ անգամ մերթ ընկել է ուրիշ տիրապետութեան կամ ազդեցութեան տակ. այդ առիթներով, արեւի մեծ Արա աստուածն էլ իր տեղը դիջել է այլ աստուածներին՝ Արամազդին, Եհովային (Յիսուսին) եւ այլն, իջել է արեւի աստուած լինելու պատուաւոր դիրքից եւ դարձել մի փոքր աստղ («նուազ է լուսին քան զԱրեղահին, նուազ է աստղ քան զլուսին, նուազ է Արայն քան զԱրուսեակն զեղեցիկ»): Եւ ահա տեսնում ենք, որ Հայկն էլ հանդէս է դալիս որպէս (Արայի այս վերջին աստիճանի մօտ) մի աստղ, այստեղից էլ պարզ հետեւում է, որ Հայկ անունը Արա անունն այն սերունդն է, որի ժամանակ արդէն Արան իջել էր իր Արեւ լինելու դիրքից, այլ խօսքով՝ Հայկ անունը առաջ է եկել մեր ուրարտական պետութեան անկումից յետոյ. առաջ Հայկը կոչում էր Արախա < Արա = Արդի > Ալդի (Պալդի): Ալիշանն ասում է, թէ «ոմանք զՀրատ մոլորակն եւս համարեն Հայկ կոչուած այս շիկակարմիր մոլորակն եւ իր անձնաւորն՝ չաստուած պատերազմի (Mars՝ ըստ լատ., Արէս՝

27) խալ-ը համեմատել յունական հել(իոս) «արեւ» բառի հետ, իսկ խար-ը կամ հար-ը մեր խար «կրակ» (որից խարոյկ), արար. յա հար «տաֆ», պրս. խոս «արեւ» բառերի հետ:

ըստ Յունաց...»²⁸: Մատիկեանն ասել է, թէ «...Արա Գեղեցիկ եւ Արէս իրենց ծագումով միեւնոյն դիցարանական դէմքերն են...: Երկուքն ալ պատերազմի աստուած էին, երկուքն ալ քաջ որսորդներ էին...»²⁹: Հայկն էլ պատերազմի աստուած է. «անուանի քաջ եւ նախարար, հաստ ազեղով եւ հօր նետածիք» (Պոր. Ա-թ.), որ յաղթում է Բելին (որսորդ հսկայ Բելն Տիտանեան, ճոխն չաստուածացեալ) (Սեր. Ա):

Մեր սակեղարեան թարգմանիչների մօտ Հայկը թարգմանութեան էր Օրիոնի, որը նոյնպէս մի աստղ էր: Մեծ հաւանականութեամբ Or(ion) անունն ունէր, ինչպէս Ar(es)-ը, Ար-ի ծագում: Այս առիթու Ղափանցեանից բերում ենք հետեւեալը.

«...«Արայարուլիս» հնդեւրոպական արմատն է ar կամ or-բայը, որ նշանակում է «ծագել (ծնուել), բարձրանալ, յարութիւն առնել», ինչպէս այդ տեսնում ենք Արայի տարածման մերձաւոր վայրերի լեզուներում»:— յուն. or- «բարձրանալ» (ornūmi, ornūo), լատին. or- (orior) «ծագել, ծնուել, բարձրանալ» (այստեղից է orient «արեւելք»)»³⁰: Ինչպէս տեսնում ենք. յունալատինական or-ը իր հնչիւնով եւ նշանակութեամբ, հետեւարար եւ ծագումով, հենց մեր արեւ Ար-Արան է, ուստի Հայկ անունը, որ բերում է որպէս orion-ի թարգմանութիւնը, հաստատապէս հայերի արեւի ազգային աստուած Ար-ն է: Հետեւարար մեր հետազոտութեամբ երեւան հանուած՝ Ար-մա (> Արմանի-Արամանեակ) անունն «Արորդի» (Հայկի որդի) նշանակութիւնը հաստատում է Պորենացու պահած «Հայկ ծնանի զԱրամանեակ» տեղեկութիւնը:

Այսպիսով կասկած չի մնում, որ հայերին՝ արեւի Ար աստծոյ ցեղը համարելով՝ կոչում էին արմա (Ար-ի սերունդ, ցեղ), իսկ հայերը իրենք իրենց ուղղակի իրենց Ար աստծոյ անունով կոչում էին ար > հար > հայ, ինչպէս ասորեստանցիներն իրենց Աշուր աստծոյ անունով էին կոչում: Ուստի վերջնականապէս հաստատուած պիտի համարել, որ հայ ժողովուրդը կազմուած չէ իրա-

28) Հ. Ղ. Ալիշան, «Հին հաւատք հայոց», վեմետիկ, 1895, էջ 215:
 29) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 73:
 30) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 93:

րից տարբեր երկու (հայ եւ արմէն) ցեղախմբերից, այլ եղել է մէկ ցեղախումբ, ոչ մի տեղից էլ չի ներգաղթել, եւ իր ծագման օրերից բազմահազար տարիներով չի բաժանուել իր մայր հողից, թէեւ ունեցել է արտահոսք, ինչպէս իր ազգային Ար-Արա աստուածն է ճանաչալթել հեռաւոր երկրներ: Հայագէտ գիտնականները պէտք էր հաւատային ու վստահէին մեծ Պորենացու պահած թանկագին «Հայկ ծնանի զԱրմենակ» տեղեկութեան, եւ հայն ու արմէնը համարելով տարբեր ցեղեր՝ չընկնէին սար ու ձոր: (Սրանով ի հարկէ մենք չենք ուզում ժխտել հայ ժողովրդի կազմի մէջ այլ ցեղերի մտած լինելը):

ԳԼՈՒԽ Ը.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ, ԽՈՒՐՐԻՆԵՐԻ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱԽՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1.— ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

Ուրարտական արձանագրութիւնների լեզուն ուսումնասիրողներ ու կարծիք յայտնողներ շատ եղան: Այժմ էլ շարունակում են հետազոտութիւնները: Արձանագրութիւնների վերծանումների սկզբնական շրջանում ոչ-խոր ուսումնասիրութիւններից հանուած հապճեպ եզրակացութիւնները խօսում էին այն մասին, որ նրանց լեզուն ոչ մի կապ չունի հայերէնի հետ, որ այն աւելի վրացական կամ կովկասեան տիպի լեզու է: Թուրքերն էլ ասում են, թէ այն թուրքական կամ թուրանական լեզու է, իսկ հայագիտական շրջանակներում վերջին տարիներին նոր բռնկում են ստացել մեր արձանագրութիւնների լեզուն հիմքով հայերէն եւ ոչ-հայերէն համարող տեսակէտների բախումները:

Ուստի այն իրողութիւնը, որ այդ լեզուի ազգային պատկանելիութեան հարցը դեռ դուրս չի եկել դեր ու դէմ կարծիքների ենթակայ լինելուց, խօսում է այն մասին, որ գիտութիւնը դեռ չի ասել իր վերջին համոզիչ խօսքը եւ հարցը մնում է մութ:

Ի հարկէ առաջին հերթին բնական կը լինէր մտածել, որ Իւպուինին հրաժարուելով արձանագրութիւնների համար իր հօր կիրառած ասուրական լեզուից (Սարգուրին սկսել էր գրել ասուրերէնով, որովհետեւ դրա համար կար պատրաստի մշակուած սեպագրութիւն), ընդունած պիտի լինի, որպէս հիմք, իր պապերի ու ցեղի լե-

զուն, եւ ոչ թէ մի այլ օտար լեզու եւ աշխատէր դրա համար սեպագրութիւն յարմարեցնել:

Իսկ այժմ, երբ բացայայտուած է ուրարտական հիմնական ժողովրդի հայկական լինելը, ուրարտական արքայական գինաստիայի ու կրօնի հայկական լինելը, հետեւաբար ուրարտական պետութեան հայկական լինելը, ապա բնականօրէն պիտի հետեւէր, որ նրանց թողած արձանագրութիւնների լեզուն էլ պէտք է լինէր հայկական:

Հարցին լեզուարանական տեսանկիւնով մօտենալիս, տեսնուած ենք, որ, ըստ ներկայ վերձանումների, ուրարտական արձանագրութիւնների լեզուն կիսով չափ կցական եւ կիսով չափ թեքական յատկանիչներ է ցուցաբերում՝ հնդեւրոպական ցեղակցութեան համար մօտ ու հեռու երեւոյթներով, որտեղ նկատուած են մեր գիտցած հայերէնով զեռ չբացատրուող ձեւարանական որոշ վերջաւորութիւններ, ինչպէս եւ բառային զգալի չափով օտար կամ անյայտ ֆոնդ:

Արդեօք ներկայ վերձանամբ ի յայտ եկած այս երեւոյթները պիտի ընդունե՞լ որպէս բաւարար հիմք, որով կարելի լինի արդէն հաստատ համարել, որ այդ լեզուն այդ օրերի հայերի լեզուն էր: Կարծու՞մ ենք՝ ոչ:

Ուրարտական արձանագրութիւններն այնքան իրար նման են եւ այնքան շարժունացած ոճով են գրուած, որ հակառակ արձանագրութիւնների 400-ից աւելի քանակին, նրանց մէջ լեզուական անհրաժեշտ ատաղձը քիչ է լայն համեմատութիւնների եւ ուսումնասիրութիւնների համար. իսկ եղածների մէջ էլ մեծ տոկոս են կազմում պայմանական զաղափարադիրները, ասուրաբարելական սեպագրութիւնից փոխ առնուած սումերական քերականական էլեմենտները (որոշիչներ, յոգնակերտ մասնիկներ եւ այլն), իսկ ուրարտական համարուած բառերի մեծ մասի իմաստները զեռ կասկածելի կամ անյայտ են, ինչպէս եւ քերականութեան եւ ձեւարանական վերջաւորութիւնների կարեւոր մասը՝ զեռ անորոշ: Սրանց վրայ պիտի աւելացնել եւ այն, որ դժուար է պնդել, թէ բոլոր սեպախմբերի հնչիւնային արժէքները ճիշդ են որոշուած:

Միաժամանակ պիտի ընդունել, որ Ուրարտական արձանագրութիւնների լեզուն իր արտայայտման ձեւերով ու միջոցներով չէր կարող համապատասխան լինել ժողովրդի հասկանալի լեզուին: Ժողովրդի ինչի՞ն էր պէտք այդ սումեր-ակկադական նախդիր ու վերջդիր որոշիչները (զետերմինատիւնները) եւ հարելուոր անհասկանալի իրէզդրամները: Ժողովուրդն արտայայտուած էր իր բառերով՝

առանց դրանց: Կարո՞ղ էր ժողովրդին հասկանալի լինել սումերական

Dingir^{meš} («աստուածներ») բառաձեւը, ո՛չ Dingir («աստուած») զաղափարադիր — բառն էր ուրարտական եւ ո՛չ էլ meš յոգնակիացուցիչը: Իսկ եթէ պահանջուած էր, որ ուրարտացին այդ զաղափարադիրը արտասանէր իր գիտցած բառով եւ յոգնակիացուցիչն էլ իր գիտցած մասնիկով, ապա դա անիմաստ դժուարութիւն էր: Այս բառը ցոյց են տալիս, որ արձանագրութիւններն իրենց արտայայտման ձեւերով մշակուած չէին ժողովրդի կողմից օգտագործուելու համար, այլպէս արձանագրութիւնները ասուրականից ուրարտականի փոխողների համար անկարելի չէր զաղափարադիրների փոխարէն իրենց արամագրութեան տակ եղած ձայնանիշների եւ վանկանիշների միջոցով ուղղակի գրել ժողովրդին հասկանալի համապատասխան ուրարտական բառերը, ինչպէս գրել են ուրարտական մի շարք բառեր ու նախադասութիւններ. այլ խօսքով՝ կարող էին ուղղակի գրել ժողովրդի խօսակցական լեզուով: Այն իրողութիւնը, որ մինչեւ հիմա որոշակիօրէն չի երեւում մի որեւէ ուրարտական արձանագրութիւն, որ դրուած լինէր արքաներից դուրս մի այլ անձնաւորութեան կողմից, ցոյց է տալիս, որ ժողովրդին հասկանալի չէին դրանք, կամ չէին մշակուած ժողովրդի օգտագործման համար: Այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի. այն կարող է մի ցուցմունք լինել, որ արձանագրութիւնների լեզուն ժողովրդի խօսակցական լեզուի հետ համեմատած ունէր տարբերութիւններ: Անգամ կարելի է մտածել, որ արձանագրութիւնների հիմքում ընկած լեզուն այդ օրերի ժողովրդի օգտագործումից ընկած (հնուց մնացած) տաճարային մի հին լեզու էր, ինչպէս մեր եկեղեցիներում օգտագործուող զրաբարը աշխարհաբար խօսող ժողովրդի համար: Հետեւաբար հաւանական է, որ այդ լեզուի ուսումնասիրութեամբ հնարաւոր չլինի ճիշդ պատկերացում կազմել Ուրարտուում հայ ժողովրդի կազմաւորման պրոցեսի՝ այդ ժամանակների փուլի (իրավիճակի) մասին: Այդ արձանագրութիւնները, որոնք կարող էին կարգացուել միայն սեպագրագէտ քուրմ գիտնականների կողմից, ուրարտական արքաների՝ իրենց սխրանքների ու մեծագործութիւնների մասին գոռոզ հաշուետուութիւններ էին լուի ի լուր գինաստիայի յաջորդ սերունդներին:

Այսպիսով դալիս ենք այն եզրակացութեան, որ դժուար է ուրարտական արձանագրութիւնների լեզուի ազգային սրատկանելիութեան հարցը լուծել սոսկ լեզուարանական ճանապարհով՝ առանց

ճշգրտող ու բարձրացնող իշխող ժողովրդի ու գինաստիայի ազգային (էթնո-կրոնական) բնոյթը, որից շատ բան է կախուած: Ճիշդ է, որ այս վերջինն էլ իր հերթին ընդհանրապէս կապուած է լինում լեզուի հարցի հետ, բայց ոչ բոլոր դէպքերում, քանի որ խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում էթնիկապէս իրարից տարբեր երկու ցեղեր կարող էին խօսած լինել նոյն լեզուով, կամ էթնիկապէս երկու քոյր ցեղեր կարող էին խօսած լինել տարբեր հիմքի լեզուներով:

Հետեւաբար լինում է ոչ ճիշդ եզրայանգման հնարաւորութիւն, երբ հետազոտութիւնը տարւում է լոկ լեզուաբանական դժով (այդպէս են վարւում Ուրարտուի հիմքում հայութիւնը շտեմոզները) կամ լոկ էթնո-կրոնական (հնագիտական-պատմագիտական) դժով: Ուստի հարցի լուծման ամենապահօժ ճանապարհը երկու դժերի համագործման է, որը, ի հարկէ, այդքան էլ հեշտ չէ, բայց՝ վստահելի:

Մինչեւ այստեղ ընթերցողին պիտի յայտնի դարձած լինի, որ այս աշխատութեան նախորդ գլուխներում իդէոլոգիական (դիցարանական), հնագիտական-պատմագիտական, լեզուաբանական (ստուգաբանական) եւ մատենագրական (աւանդական) տուեալների համադրութեամբ ցոյց է տրուել, որ հին անցեալի գործող հրարուիների Հայկական լեռնաշխարհում, արեւ - կրակի աստուած Ար - Արայի պաշտամունքի միջավայրում, նախնադարեան համայնական հասարակութեան տոհմական տարրերի էթնիկական բիւրեղացումով առաջ է եկել Արապաշա մի մեծ ցեղախումբ, որն իրեն իր արեւ - կրակի աստծոյ սերունդ է համարել: Ցոյց է տրուել, որ ուրարտական իշխող ժողովուրդն ու գինաստիայի կազմուած էին հենց այդ Նաիրեան Արապաշա ար > հար (հետագայում > հայ) կոչուած ցեղերից:

Մնում էր պարզել այս հար > հայ Նաիրեանների՝ իրենց (ուրարտական) արձանագրութիւնների լեզուի հետ ունեցած կապի բնոյթը:

Մեր ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի վերոյիշեալ Արապաշա մեծ ցեղախումբն ունէր (ցեղերի) երկու գլխաւոր ճիւղեր (այս մասին յատուկ կ'անդրադառնանք «հայ ժողովրդի կազմաւորման մասին» խօսուած բաժնում), մէկը՝ արեւմտեան՝ արմենական (Արորդիների) ճիւղ, որը Փոքր-Ասիայի հարեան ցեղերի հետ զարգացրել էր աւելի թեքական (հնդեւրոպական) լեզու, իսկ միւսը՝ արեւելեան Նաիրեան ճիւղ, որը զարգացրել էր աւելի կցական (հարրիական-հայական) լեզու:

Գ. հազարամեակից յետոյ (մ. թ. ա.) բնակչութեան համեմատական աճի հետեւանքով՝ երկու մեծ ճիւղերի հարեան ցեղերի իրար մէջ ներթափանցումների ընթացքում կատարւում էր երկու լեզուների փոխազդեցութիւն, որը Ուրարտուի ժամանակ հասել էր զգալի մեծ չափերի: Այս փոխազդեցութիւնների պրոցեսի վերջում հարրիական (խուրրիական) — հայական լեզուի բառային զանգուածային մարմինը մտել էր թեքականի կազապարում, այլ խօսքով՝ քերականորէն (լեզուի կառուցուածքային կմախքի տեսակէտով) յաղթող էր հանդիսացել թեքականութիւնը (հնդեւրոպականը)՝ առաջացնելով հայերէնը:

Այստեղ մեր խնդրի համար որոշիչ հարցն այն է, թէ կարո՞ղ ենք ասել, որ այդ պրոցեսը կատարուեց միանգամից՝ շատ կարճ ժամանակում. ի հարկէ հակառական-կամայական պատկերացում կը լինէր այդպէս մտածելը: Հետեւաբար պիտի ընդունել, որ եղել է միջանկեալ՝ անդամ երկլեզուանիութեան դրութիւններ (փուլեր), այսինքն՝ կցական լեզու կրողները թեքականին (հնդեւրոպականին) անցնելը կատարել էին աստիճանաբար:

Այդ պրոցեսի ո՞ր փուլում էին գտնուում Խուրրի-Պարրի արձանագրութիւնների լեզուն (խեթերի ասած խուրիլին) կրողները դեռ դժուար է ասել (այսուամենայնիւ խուրրիների մօտ նշմարուող հնդեւրոպական երեւոյթները խօսում են նրանց՝ այդ պրոցեսի մէջ մտած լինելը): Ճիշդ պատասխանը կախուած է խուրրիական սեպագրերի եւ նրանց լեզուի հետագայ հետազոտութիւններից ու ճշգրտումներից:

Սակայն միանգամայն յայտնի է, որ ուրարտերէնը, ինչպէս ընդունում է նաեւ Սէյսը, կիսով չափ կցական ու կիսով չափ թեքական յատկութիւններ է ցուցաբերում եւ նրա՝ հնդեւրոպականի հետ ունեցած համընկնումներն էլ, ինչպէս ցոյց տուեց պրոֆ. Գ. Ջահուկեանի ուսումնասիրութիւնը¹⁾ բաւական կշիռ ունեն:

Հետեւաբար այս լեզուն, որ Ուրարտուում ցեղակից արմէնների հետ իշխող Նաիրեան-հայական ցեղերի լեզուն էր, Ուրարտուում կազմաւորուող ժողովրդի այդ օրերի հայերէնն էր, թէ նրա նախորդող մի փուլը (ժողովրդի օգտագործումից ընկած տաճարային մի հին լեզու)՝ ցոյց կը տան հետագայ հետազոտութիւնները, յատկա-

1) Գ. Պ. Ջահուկեան, «Հնդեւրոպական, խուրրիո-ուրարտական եւ կովկասեան լեզուների փոխարարութիւնները», Երեւան, 1967, ռուսերէն հրատ.:

պէս երուանդունիների ժամանակուայ հայերէնի նմոշները հետ (եթէ դանունեն) հետագայում կատարուելիք համեմատութիւնները: Իսկ թէ ինչքան է կապուած այդ լեզուն մերոպատառ հայերէնի հետ՝ ցոյց կը տան ուրարտական սեպագրերի հետագայ ուսումնասիրութիւնները՝ անհասկանալի բառերի ճիշդ իմաստների բացայայտումը, քերականական հիմունքների, ձևարանական վերջաւորութիւնների բնոյթի պարզումը, որոշ սեպախմբերի հնչիւնային արժէքների ճշգրտումը:

Կասկած չկայ, որ որեւէ լեզուի ճանաչման գործում կարեւոր տեղ ունի տուեալ լեզուի հնչիւնային կողմը: Բառի հնչիւնային ազաւարումը կարող է դեռ շատ չաղղել նրա իմաստային արժէքի վերայ, օրինակ՝ ուրարտական երկլեզուեան (Կելիշիւնի եւ Թոպուզաւայի) երկու արձանագրութիւնները մեզ պարզեցին ուրարտական մի շարք բառերի ճիշդ նշանակութիւնները՝ դրանց համապատասխանող ասուրերէն բառերի յայտնի նշանակութիւնների հիման վրայ: Այդտեղ ուրարտական բառը ինչպէս էլ հնչէինք՝ նշանակութիւնը չէինք փոխի, սակայն բառի հնչիւնային ազաւարումը անպայման կը խանգարէր նրա ծագումը կամ ազգութիւնը որոշելու գործը:

Իսկ կարո՞ղ ենք պնդել, որ ուրարտական արձանագրութիւնների վերծանումներն ու թարգմանութիւնները հարիւր տոկոսով աւարտած, հաստատուն, անուղղելի, անփոփոխելի իրողութիւններ են: Կարո՞ղ ենք ընդունել, որ վերջնականապէս պարզուած են ուրարտական բոլոր վանկանիշ ու դաղափարանիշ սեպախմբերի հնչիւնային արժէքները: Չկա՞ն չպարզուած կամ սխալ վերծանուած, սխալ թարգմանուած սեպախմբեր, որոնց ուղղումն ու ճշգրտումը կարողանային փոփոխութիւն մտցնել այդ լեզուի ճանաչման գործում:

Ի հարկէ չի կարելի թերազնահատել ուրարտագիտութեան կատարած մեծ ու հիանալի նուաճումները: Արդէն բաւական մեծ թիւ են կազմում հնչիւնային արժէքները լուծուած ու հաստատուած վանկանիշ ու ձայնանիշ սեպախմբերը եւ իմաստները ճշգրտած ու աներկբայօրէն յայտնի բառերը, օրինակ՝ ներկայ վերծանման սկզբունքով ու գիտելիքներով կարգում ենք a-hu-ri-a-ni, a-be-li-a-ni, որոնց հիմա իսկ, 26 դար յետոյ՝ արձանագրութիւններից անկախ, կոչում ենք Ախուրեան (< Ախուրիան) եւ Աբեղեան (< Աբելիան): Սա արդէն ցոյց է տալիս, որ այս անունները կազմող ձայնանիշ ու վանկանիշ սեպախմբերի հնչիւնային արժէքները գրեթէ ճիշդ են լուծուած, եւ եթէ մի շարք այսպիսի փաստեր ի մի բերենք, կը տեսնենք,



որ ուրարտական ձայնանիշ ու վանկանիշ սեպախմբերի մեծ մասի հնչիւնային արժէքները պիտի արդէն յայտնի ու լուծուած համարել:

Այսուհանդերձ սակայն կասկած չկայ, որ մեր սեպագիր արձանագրութիւնների վերծանման ու թարգմանութեան գործը դեռ աւարտած չէ. հաստատուած ու յայտնի շատ բաների կողքին կան դեռ հնչիւնօրէն չարգղուած կամ կասկածելի սեպախմբեր, գաղափարադրեր, քերականական իմաստով մութ կէտեր, ինչպէս եւ նշանակութեամբ անյայտ շատ բառեր, իսկ գործի բնոյթն այնպիսին է, որ երկու-երեք ձայնների ճշգրտումը կամ փոփոխումը կարող է հիմնական փոփոխութիւն մտցնել ստացուող պատկերացման մէջ, եւ ոչ ոք չի կարող պնդել, թէ դրանով փոփոխութիւն չի մտնի նաեւ այդ լեզուի ճանաչման գործում: Օրինակ՝ եթէ արձանագրութեան մէջ սեպագրերով գրուած էր հուր (հու-ուր) «կրակ» եւ մենք գտանք երկու վանկերի հնչիւնային ճիշդ արժէքները եւ բառը կարգացինք—հնչեցինք հուր, ապա անմիջապէս կը ճանաչուէր, որ բառը հնդեւրոպական է եւ հայերէն. իսկ եթէ երկու-վանկերից մէկը՝ ասենք հու վանկը սխալմամբ հնչեցինք ֆու եւ բառը հուր (հու-ուր) կարգալու տեղ՝ կարգացինք—հնչեցինք ֆուր (ֆու-ուր) «լոյս», ապա անմիջապէս կը հետեւցուէր, որ բառը սեմական է եւ ակկադական կամ ասուրական:



Բերենք մի այլ օրինակ. ի՞նչ լեզուի եւ ի՞նչ ազգութեան է պատկանում հետեւեալ խօսքը. yurmuriul zumenuin kurgesis, ասենք, թէ յայտնի է նաեւ նրա հետեւեալ նշանակութիւնը. «Այդ բոլոր դասաւորեցինք յարմարեցնելով»: Կարծես այդքան էլ հեշտ չէ ասել: Այս խօսքը հայերէն է. պարզապէս բառերի միջի a ձայնը փոխել ենք u-ի («յարմարեալ դամենայն կարգեցից» Խոր. Ա.—Ժ):

Մենք կարծում ենք, որ եթէ ուրարտական հարիւրաւոր վանկանիշերի եւ ձայնանիշերի թեկուզ երկու-երեք հատը սխալ է հնչուած, ապա դա քիչ չի խանդարում ուրարտական լեզուի ճիշդ ճանաչմանը. մանաւանդ բառերի կարեւոր մասի նշանակութիւններն էլ ճիշդ յայտնի չեն, անշամ կասկածելի են որոշ այնպիսիների, որոնց նշանակութիւնները կարծում ենք թէ գիտենք:


Բերենք մի կոնկրէտ փոքր օրինակ. Աբեղեան անունն սեպախմբերը Մելիքիշիլիլի մօտ երեւում են a-bi-li-a-ni արտասանութեամբ: Մտածում եւ, թէ երեւի Աբիլիանի անունը ժամանակի ընթացքին (քի վանկի ձայն փոխելով բե-ի) հնչել են Աբելեան: Միւս կողմից կասկած է առաջանում. արդեօք ուրարտացիներն էլ այն



a - be - li - a - ni չէի² հնչում: Այս նպատակով ստուգում ես bi կարգացուող  վանկը այն աղբյուրի (ասուրական սեպագրութեան) մօտ, որտեղից օգտուել են ուրարտական սեպագրութեան համար եւ տեսնում ես, որ այս սեպագիր վանկը ունի թէ՛ bi եւ թէ՛ be հնչումը² (թէեւ be-ի համար կայ նաեւ  սեպագիրը), որով հաւանական ես համարում, որ բառը կարող էր ուրարտացիների կողմից հնչուած լինել ոչ թէ Արիլիանի, այլ՝ Արնիլիանի, ինչպէս այն հնչում է ներկայումս՝ Արիլեան:



Ի հարկէ կայ որոշ առարկութիւն այս մտքի համար.

Ասուրական վանկ-սեպախմբերից շատերն իրենց հիմքում, որպէս սումերական հին գաղափարակիր արմատների սերունդներ՝ ներկայացնում են նաեւ մէկ կամ ասելի համանիշներ, որով տարբեր հնչումներ, այլ խօսքով՝ պատահում է, որ սումերական տարբեր հնչում ունեցող մի քանի միավանկ բառարմատներ ներկայացուեն միեւնոյն սեպախմբով. միաժամանակ պատահում է, որ բառարմատ ներկայացնող միեւնոյն վանկը ունենայ տարբեր իմաստներ, որոնք ներկայացուեն տարբեր սեպախմբերով: Սրանք դասակարգուած են բառարաններում ըստ կարեւորութեան կամ յաճախականութեան, օրինակ՝ հենց be վանկը (բառարմատը) ունի տարբեր իմաստներ կամ իմաստախմբեր, որոնք ըստ կարեւորութեան կամ յաճախականութեան դասակարգուած են բառարանում I be, II be, III be եւ այլն, որոնց իւրաքանչիւրը ներկայանում է առանձին (տարբեր) սեպախմբով: Հետեւաբար պատահում է, որ միեւնոյն սեպախումբը ունենում է տարբեր հնչումներ եւ համապատասխան առումներ, որոնք մտած են լինում դասակարգման մէջ իւրաքանչիւր արմատ-վանկի համար բերուած ցուցակում. օրինակ՝  սեպագիրը ունի հնչիւնային հետեւեալ արժէքները. I be, II uš, IV bi, IV me, VII eš, IX ba եւ այլն:  սեպախումբը ունի I bi, II be, IX ul եւ այլն:

Այստեղ խնդիրն այն է, որ ուրարտական սեպագրերի վերծանման համար նրանց հնչիւնային արժէքները վերցուած են ասուրական-

նում նրանց ունեցած I առման հնչումները՝ որպէս ամենակարեւոր եւ ամենաշատ օգտագործուած հնչում տուեալ սեպախմբի համար եւ տեքստերի ընթերցումները ցոյց են տալիս, որ դա (թէեւ ոչ միշտ) ընդհանրապէս ճիշդ է, եւ հենց դրա համար էլ a - bi - li - a - ni անուան մէջ գտնուող  սեպախմբի համար վերցուած է

նրա (առաջին) I bi հնչում-առումը եւ բառը կարգացուած է a - bi - li - a - ni: Սակայն ուրարտական սեպագրերի հնչիւնային արժէքների ասուրականների հետ կատարուած համեմատական քննութիւնը ցոյց է տալիս, որ այս օրէնքից կան որոշ շեղումներ. օրինակ՝ ուրարտական  սեպախմբի համար ընդունուած է նաեւ ասուրականում նրա ունեցած II di վանկ-հնչումը (սումեր վանկ-արմատը)՝ փոխանակ միայն եւ միշտ I hi-ի (կամ I he-ի), ուրարտական  սեպախմբի համար՝ նաեւ ասուրականում ունեցած

III de հնչումը՝ փոխանակ միայն I ne-ի, ուրարտական  -ի համար (որպէս Ké) ընդունուած է ասուրականում նրա ունեցած II ge հնչումը՝ փոխանակ I kid-ի կամ I sah-ի, ուրարտական  -ի համար՝ ասուրական II ša հնչումը՝ փոխանակ I gar-ի եւ այլն: Հետեւաբար անհաւանական չէ, որ Ա-բե-լի-ա-նի անուան երկրորդ վանկի համար ուրարտացիները վերցրած լինեն ասուրական II be հնչման սեպագիրը, բառը արտասանած լինելով Արեիլիանի՝ ոչ թէ Արիլիանի: Ի հարկէ, սա լոկ կասկած է, եւ այդպիսիներ շատ կան:

Բացառուած չէ եւ այն, որ ուրարտական որոշ բառերի եւ անունների կազմութեան համար վերցուած լինեն ասուրական սեպախմբերը (իրենց հիմքում ընկած սումերական բառարմատների իմաստներով) որպէս գաղափարազրկ: Այդ երեւոյթը տեսանք օրինակ Ar - giš - ti և Išpu - ini անունները կազմող վանկերի իմաստների բացայայտմամբ:

Կարծում ենք, որ այսքանը բաւական է ասելու, որ հետագայ ուսումնասիրութիւնները կարող են դեռ շատ անակնկալներ ի յայտ

² P. A. Deimel, տե՛ս II be, էջ 29, եւ I bi, էջ 35:

րերել ուրարտական լեզուի կազմութեան հարցում, նրա հնչիւնային համակարգում, բառերի եւ նախադասութիւնների քերականական իմաստներում՝ պատճառ դառնալով, որ փոխուեն ուրարտական լեզուի ազգային պատկանելութեան մասին հապճեպօրէն կազմուած եւ մեծ կրքով պաշտպանուող կանխակալ հասկացութիւններն ու համոզմունքները:

Այս այսպէս լինելով հանդերձ, այդ լեզուի հակահայկական ընտրողման ջատագովները պնդում են, թէ այն, ինչ յայտնի է, պարունակում է լեզուի կառուցուածքի համար այնպիսի ընտրուիչ յատկանիշներ, որոնք արդէն յայտնի են դարձել, որ այդ լեզուն հայերէնի հետ կապ չունի:

Օրինակ՝ պրոֆ. Գ. Սարգսեանը ընդունելով հանդերձ, որ ուրարտերէնի քերականական հիմունքներից շատ բան տակաւին պարզ չէ նւթի պակասութեան պատճառով, բայց, ըստ իրեն յայտնի եղածներից, որպէս ուրարտերէնը հայերենից տարբերակող կարեւոր փաստ, բերում է հետեւեալը. «Օրինակ, պարզուել է, որ, ի տարբերութիւն հայերէնից, ուր նախադասութեան ենթական միշտ ուղղական հոլովով է հանդէս գալիս, ուրարտերէնը ենթական համարունի երկու հոլով, առանձին՝ ներդորձական բայից կազմուած ստորոգեալի դէպքում եւ առանձին՝ չէզոք բայից կազմուած ստորոգեալի դէպքում: Օրինակ, «Սարգուրինի ուշտարի» — «Սարգուրին ճանապարհուեց», բայց «Արգիշտիշէ ինի փիլի ազունի» — «Արգիշտին այս ջրանցքը անցկացրեց»: Ինչպէս տեսնում ենք, հայերէն թարգմանութեան մէջ ենթակաները նոյն հոլովով են, իսկ ուրարտերէնում՝ տարբեր...»³:

Մի պահ ընդունելով հանդերձ Սարգուրինի եւ Արգիշտիշէ անուանածների վերջաւորութիւնների քերականական իմաստների յայտնի լինելը՝ դժուար է դրանք ընդունել որպէս ուրարտերէնը (իր քերականական հիմունքով) հայերէնից տարբերակող փաստ:

Ուրարտերէնի եւ հայերէնի քերականական այս համեմատութիւնը, որպէս փաստական արտայայտութիւն բերուելը, անտեսում է լեզուների պատմականութեան կարեւոր հարցը, ենթադրում է նաեւ համեմատուող լեզուների ժամանակակիցութիւն՝ առանց հաշուի առ-

3) Գ. Ս. Սարգսեան, «Հիմնագուրկ տեսութիւններ Ուրարտուի մասին», Պատմաբանասիրական Համագիտ. 1970, քիւ. 3, էջ 49:

նելու փաստօրէն նրանց (ուրարտերէնի եւ համեմատուող հայերէնի) միջեւ գտնուող հազարաւոր տարիների գործօնը:

Եթէ կարելի լինէր ընդունել բերուած համեմատութեան տրամաբանական ուժը, որպէս տարբերակիչ փաստարկութիւն, ապա ստիպուած պիտի լինենք ընդունել, թէ կա՛մ դրարարը կա՛մ արեւմտասահայ աշխարհարարը հայերէն չէ, քանի որ նրանց միջեւ կան նոյն տիպի ու չափի եւ անգամ աւելի մեծ տարբերութիւններ, որոնց կարեւոր մասը, ժամանակի ընթացքին, լեզուի դէպի պարզեցում կատարած տեղաշարժի ու բարեփոխութեան արդիւնք են:

Գրաբարի եւ աշխարհարարի տարբերութիւնների մասին Տ. Ա. Շահրապեանը գրում է.

«Գրաբարը մի միայն կանոնաւոր հոլովների համար ունի... 9 հոլովիչներ...: Այնինչ աշխարհարարը «հետզհետէ պարզելով բնութիւնը հիմա երկուսի ամփոփած է: ... Եթէ համեմատենք գրաբարի եւ աշխարհարարի հոլովական տարբերութիւնները, կը տեսնենք, որ գրաբարի 9 հոլովածեւերի դիմաց արեւմտասահայ աշխարհարարում կայ միայն մի հոլովածեւ»⁴:

Գրաբարի խոնարհման ձեւերի հետ համեմատած՝ արեւմտահայ աշխարհարարի կը (կու) եւ պիտի եղանակիչները եւ կրաւորակերպ ու (վ) անանցը բոլորովին տարբեր կառուցուածք ունեն, որոնք լեզուն պարզեցրել են մեծ չափերով:

«Գրաբարի միայն ներդորձակերպ խոնարհման սահմանական ներկայի, անցեալ անկատարի, անցեալ կատարեալի, ապառնի ներկայի եւ ստորադասական ներկայի ու հրամայականի երեք ձեւերի փոխարէն, որոնցից իւրաքանչիւրը ունի իր կազմութեան ուրոյն ձեւերը, աշխարհարարը ունեցաւ կազմութեան միայն երեք ձեւ: Ութի դիմաց երեք ձեւ, իսկ եթէ ժամանակների ու դէմքերի վերջաւորութիւնների կազմութեան ձեւերի տարբերութիւնները հաշուենք, ապա պարզեցման ու կատարելութեան համեմատութիւնը 1-15-ի կը հասնի յօգուտ աշխարհարարի»⁵:

Աշխարհարարը վերացրել է ուլ լծորդութիւնը, որը շատ բարդութիւնների տեղիք էր տալիս գրաբարում:

Յոգնակիների կազմութեան հարցում նոյնպէս աշխարհարարը

4) Տ. Ա. Շահրապեան, «Արեւմտահայ աշխարհարարի առաջացումը», Երեւան, 1963, էջ 21 - 22:

5) Նոյն տեղում, էջ 28:

կատարել է մեծ չափերի պարզեցումներ. «աշխարհաբարի եր եւ ներ մասնիկները մի կատարելով յեղաշրջում մտցրին այս ուղղութեամբ: Լեզուն ի սպառ ազատուեց խառնաշփոթութիւններից (բազմաթիւ յոգնակերտ մասնիկների հետ անեզակամբ ու անյոգնակամ ձեւերից)՝ վերացնելով դրա հետ միասին նաեւ գրաբարեան յոգնակի թուի ք, ց, ս յոգնակիացուցիչ մասնիկները եւ բազմաթիւ մասնակի յոգնակիացուցիչներ (եար, նեար, ան, անի, եան, ոտի, ունի եւ այլն)»⁶:

Գրաբարում կայ որոշիչ ու որոշեալի համաձայնեցում (օրինակ՝ քաղաքի մեծի, քաղաքաց մեծաց). աշխարհաբարը չունի եւ ազատուել է այդ բարդութիւններից (մեծ քաղաքի, մեծ քաղաքների):

Գրաբարը ունի մի շարք հոլովակերտ նախդիրներ (զ, ի [J], ց, առ, ընդ, ըստ), որոնցից ազատուել է աշխարհաբարը, իսկ գրաբարից ժառանգուած ձեւերն էլ (օրինակ՝ ցտեսութիւն, ի հարկէ եւ այլն) քարացել են եւ նրանց քերականական կազմութիւններն ու իմաստները չեն զգացուում:

Տարբերութիւններ առկայ են անգամ իրար ժամանակակից արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի միջեւ, օրինակ՝ նախադասութեան խնդիրների ու տեղի պարագաների համար արեւելահայերէնում այժմ կայ վերջաւորութիւնների տարբեր ձեւեր, իսկ արեւմուտահայերէնում ընդհանրապէս մէկ, օրինակ՝

Արեւելահայերէն (ին, ը եւ ում վերջաւորութիւններ)

Նա սպաննեց թաղաւորին, նստեց նրա գահին.

Նա տեսաւ գետը, անցաւ միւս ափը.

Նա կանգնեց բակում: Ապրում էր երրորդ յարկում:

Արեւմտահայերէն (միայն ը վերջաւորութիւն)

Նա սպաննեց թաղաւորը, նստաւ անոր գահը.

Նա տեսաւ գետը, անցաւ միւս ափը.

Նա կեցաւ բակը, կ'ապրէր երրորդ յարկը:

Ի հարկէ դժուար է տեսլ, թէ խնդրի ու պարագայի ձեւաբանական վերջաւորութիւնները ենթակայինից պակաս արժէք ունեն որպէս լեզուի հիմունքի տարբեր: Այսուհանդերձ ահա մեր բարբառներից (հայ ժողովրդական հեքիաթներից) մի օրինակ ենթակայի ոչուղղական վերջաւորութեան համար.

⁶ Տ. Ա. Շախբազեան, նոյն տեղում, էջ 38:

«Կըլի շիլի մի թաքաւոր, էա թաքաւորին մի սիրուն ախշիկ կ'ունենայ»⁷:

Գրաբարում արդէն ուղղականից ու հայցականից զատ կան նաեւ սեռական ու տրական հոլովով ենթականեր⁸. տրական ձեւից օրինակ՝ Արեաց գնդին պատեհ է դիպան ելանել զօրացն յունաց (յարմար է, որ արեաց դունդը դէմ դուրս գայ յունաց զօրքին), դուռն՝ զոր բացին կորստեանն՝ Աստուծոյ միայն կարողութիւն է փակել (դուռը, որ բացին կորստեան համար, միայն Աստուած կարող է փակել)⁹:

Գրաբարի եւ աշխարհաբարի միջեւ (նշուած տարբերութիւններից զատ) կան եւ այլ քերականական տարբերութիւններ. սակայն կարծում ենք, որ այսքանն էլ բաւական է ցոյց տալու, որ այսպիսի տարբերութիւնները (որոնք շատ աւելի մեծ եւ ակնհաս են քան ուրարտերէնի ու հայերէնի միջեւ նշմարուածները) չեն ապացուցում համեմատաւոր երկու լեզուների՝ հիմքով ու ծագումով տարբեր լեզուներ լինելը: Պատմական պրոցես ապրող լեզուի համար պայման չէր, որ քերականական այս կամ այն ածանցները անգամ դրուածքը պահէր մինչեւ վերջ:

Գալով հենց մասնանշուող ուրարտական նախադասութիւնների ենթակաների (Սարդուրինի եւ Արգիշտիշէ) հոլովական նի եւ շէ վերջաւորութիւններին, մենք հաւանական ենք համարում, որ նրանք հասել են մեզ որոշիչ յօդի ձեւով (Սարդուրի-նի = Սարդուրի-ն): Ինչպէս նշել ենք այլ տեղեր՝ ուրարտական արձանագրութիւնների մէջ օգտագործուած են սուսերական մի շարք (կարելի է ասել) քերականական տարբեր, ինչպէս օրինակ՝ յոգնակերտ meš վերջդիրը եւ սր նախդիր-որոշիչը եւ այլն: «Սուսերահայ յարարութիւններ» գլխում արդէն նշել ենք, որ սուսերերէնում նի մասնիկը յոգնակերտ լինելուց զատ որոշ տեղեր հանդէս է գալիս որպէս որոշիչ յօդ, ինչպէս ն յօդը հայերէնում:

Պարզ է, որ այն դէպքում երբ գրաբարը ունի մէկ որոշիչ յօդ (ն), ապա աշխարհաբարը՝ երկու (ն եւ ը): Արդեօ՞ք որոշիչ ը յօդը

⁷ «Հայ ժողովրդական հեքիաթներ», Երևան, 1959, էջ 98:

«Փետէ Զիմ» հեքիաթը. պատմուած է Աշտարակ գիւղում, 1913-ին:

⁸ Է. Ս. Մկրտչեան, Տրական հոլովով ենթական գրաբարում, «Պատմա-բանասիրական հանդէս», 1967, քիւ 2 - 3, էջ 237:

⁹ Նոյն տեղում, էջ 240, 242:

հնուց չի դալիս՝ պահուած լինելով բարբառների մէջ: Յայտնի է, որ ուրարտական սեպագրութիւնը դալիս է սկիզբա-ասուրական սեպագրութիւնից. իսկ այդ սեպագրութիւնը ը ձայնի համար չունի յատուկ ձայնանիշ-սեպագրութիւնը: Եթէ ուրարտական լեզուն ունէր ը ձայնը որոշ բառերի կամ բառաձեւերի սկզբում կամ վերջում, ինչպէ՞ս կամ ինչո՞վ արտայայտէր, որ մենք իմանայինք: Արդեօք մեր ը որոշիչ յոդը մաշուած թե ($\text{> } \text{ը} \text{ > } \text{ը}$) ձայնը չէ՞, որը փոխանցուած լինի մեզ որոշ բարբառների միջոցով:

Հայերէնի համար օ բաղաձայնի կորուստը անսովոր երեւոյթ է (շ-ն լինում է եւ ու . հմմտ. Աշուր եւ Ասորեստան, Աշուրիներ եւ Աստախանէ եւն.). բազմաթիւ դէպքեր են նկատուած, ուր հայերէնը կորցրել է հնդեւրոպական մայր լեզուի օ-ն , օրինակ՝ $\text{esr} \text{ > } \text{ար(իւն)}$, $\text{bhoso} \text{ > } \text{բո(կ)}$, $\text{vesr} \text{ > } \text{վար(ուն)}$, $\text{wesno} \text{ > } \text{գին}$, $\text{smio} \text{ > } \text{մի}$, $\text{sephs} \text{ > } \text{եփ(ել)}$ եւ այլն¹⁰: Եթէ հաստատուի թե $\text{> } \text{ը}$ անցումը, ապա դժուար չի լինի տեսնել, որ ուրարտական նախադասութիւնների ենթականների հոլովական երկու (նի եւ շէ) վերջաւորութիւնները հասել են մեզ ն եւ ը որոշիչ յոդերի ձեւով ու դերով: Հակառակ դէպքում, եթէ ուրարտերէնը արդէն հայերէն էր, ի՞նչ մի մեծ աղէտ կը լինէր՝ քերականական բաղմաթիւ (բարդութիւններ ստեղծող) վերջաւորութիւններ, մասնիկներ ու նախդիրներ վերացնել կարողացող հայերէնի համար, որ ժամանակին, յանուն պարզութեան, վերացրած լինէր նաեւ շէ ածանցը՝ ենթակայի համար թողնելով միայն մի հոլովածեւ:

Այսքանով ցանկանում ենք ցոյց տալ, որ գիտութիւնը չի ստել իր վերջին ու համոզիչ խօսքը այդ լեզուի ազգային պատկանելիութեան մասին, հարցը թողել է մութ: Եւ ինչպէս տեսնում ենք, այս հարցում հակահայկական գիրքից բերուած փաստ-օրինակները չունեն լեզուն բնորոշող յատկանշական այն հաստատուն բնոյթը, որի վրայ յենուելով կարելի լինի ապացուցել ու պնդել, թէ արդէն հաստատ է, որ ուրարտերէնը, իր հիմքով, հայերէնից բոլորովին տարբեր լեզու է: Մանաւանդ որ ուրարտերէնի արդէն յայտնի համարուած քերականական երեւոյթների մի մասը գեռ այնքան էլ պարզ չէ, ինչքան կարծւում է, մեծ մասը գեռ անյայտ կամ անորոշ, իսկ այն ինչ յայտնի է, չի ներկայանում որպէս լեզուի կառուցուածքը բնորո-

շող իւրայատուկ հիմունք, որը կարողանար դարեր դիմացած լինել ժամանակի վերափոխիչ գործօնին, ուստի չի կարող ծառայել որպէս փաստական տուեալ հակադրուելու համար նրանցից յետոյ հազարաւոր տարիների կեանքի ուղի անցած հայերէնի հետ, հետեւաբար անիմաստ կը լինէր դրանք բերել, այն էլ որպէս ծանրակշիռ ապացոյցներ եւ դրանցից էլ ելնելով յայտարարել, թէ ուրարտացիները հայեր չեն եղել:

Արդեօք ուրարտական արձանագրութիւնների հիմքում դըրուած է նախրեան հայերի այդ օրերի օգտագործումից ընկած տաճարային մի հին լեզու, թէ՞ Ուրարտուում կազմաւորուող եւ իշխող ժողովրդի այդ օրերի հայերէնը: Այս հարցի ճիշդ ու վերջնական պատասխանը, ինչպէս ասացինք, պատկանում է հետագայ հետազոտութիւններին՝ մեծապէս կախուած արձանագրութիւնների որոշ սեպագրութիւններին արժէքների ճշգրտմից, անհասկանալի բառերի ճիշդ իմաստների բացայայտումից, քերականական հիմունքների, ձեւաբանական տարրերի բնոյթի պարզումից, սեպագրութեան հետ որդեգրուած դադափարագրերի կարեւոր մասի՝ համապատասխան ուրարտական բառերի ճշգրտումից, եւ, ինչ որ նոյնչափ կարեւոր է, համեմատութեան համար, նախամեսոպոտեան (Արտաշէսեանների եւ յատկապէս Երուանդունիների ժամանակների) հայերէնից նմոյշների յայտնաբերումից:

Գուցէ ասուի, թէ Երուանդունիները, ժառանգելով ուրարտական պետութիւնը, կը շարունակէին ուրարտական սեպագրութիւնը, եթէ նրա լեզուն հայերէն լինէր, մինչդեռ Երուանդունիներից մեզ չեն հասել սեպագիր արձանագրութիւններ: Մենք կարծում ենք, որ Երուանդունիների ժամանակ, երբ Հայաստանը գտնուում էր որոշ չափով կախուած մարերից եւ յետոյ աքեմենեաններից, չէր կարող խօսք լինէր ուրարտական ժամանակների ձեւով ու չափերով նոր երկրների ու ցեղերի կողոպտման կամ նուաճման եւ Հայաստանի մէջ նրանց ընդգրկման մասին, մի բան, որ կազմում էր ուրարտական արձանների արձանագրութիւնների հիմնական բովանդակութիւնը, ուստի այդպիսի արձանագրութիւններ թողնելու խնդիր չէր կարող ծագել, իսկ երկրի վարչական եւ շինարարական գործերի համար օգտագործուած գրութիւններն էլ գրուած պիտի լինեն այնպիսի նիւթերի վրայ (մագաղաթ, պապիրոս), որոնք չէին կարող հասնել մեզ, մանաւանդ որ լատինական արձարեաթի երեւան դալը՝ արամէականի հետ միասին անիմաստ էին դարձնում բարդ սեպագրերի կիրառումը և

10) Հ. Անտոնով, «Լիակատար ֆերականութիւն հայոց լեզուի», տես էջ 576 - 578:

հետեւաբար մոռացնել տուեցին սեպագրական դիտութիւնը, իսկ ինչպէս դիտենք՝ Արտաշէսեանները արդէն օգտադործում էին արամէերէնը, յունարէնը: Գուցէ Երուանդունիներն իրենց կատարած շինարարական գործերի եւ վարչական կարգադրութիւնների մասին արձանագրութիւններ թողել են, բայց դրանք հաւանաբար պիտի դըստուեն աւելի նրանց Երուանդաշատ մայրաքաղաքում եւ Երուանդակերտ բերդում, որոնք տակաւին սպասում են պեղումների: Հենց այստեղ էլ թաղուած պիտի լինեն շատ դաղանիքներ, որոնց լոյս աշխարհ բերումը կարող էր, մեծ հաւանականութեամբ, ուղիղ պատասխաններ տալ ուրարտական (մեզ յուզող) շատ հարցերին:

2.— ԽՈՒՐՐԻՆԵՐԻ, ԽՈՒՐՐԻԵՐԷՆԻ ԵՒ ՈՒՐԱՐՏԵՐԷՆԻ ՄԱՍԻՆ

Լեզուարանութիւնը սերտ կապ է տեսնում ուրարտական սեպագրերի լեզուի եւ խուրրիերէնի միջեւ. նոյնիսկ ոմանք դանում են, որ ուրարտերէնը խուրրիերէնի սերունդն է կամ նրա մի բարբառի յետնորդը, թէեւ Ջահուկեանը չափազանցութիւն է համարում այդ կէտը, բայց ուրարտերէնի եւ խուրրիերէնի ընտանեկան կապը չի մերժում եւ շեշտում է: Այս հանգամանքը կարեւոր նշանակութիւն ունի հայագիտութեան համար: Դա նշանակում է, որ ուրարտացիները՝ հայութեան հետ ունեցած կապի պատկերացումը զգալի չափով կը հեշտանայ նաեւ խուրրո-հայ յարաբերութիւնների բացայայտումով:

Ինչպէս ընթերցողը նկատած պիտի լինի, մենք մինչեւ այստեղ ոչ մի խօսք չենք ասել խուրրիների մասին, յատուկ նկատառումով էլ չենք ցանկացել խօսել անգամ խուրրի անուան մասին՝ մեր ար եւ հար անունների հետ կապուած հայ անուան ստուգարանութիւնը բերելուց առաջ: Մանաւանդ որ խուրրի-միտանիների հարցը առանձին մի մեծ թեմա ենք համարում եւ նրանց մասին դիտութեան յայտնի տուեալների եւ բերուած տեսակէտների մասին մեր վերաբերմունքի շարադրումը այս աշխատութեան նպատակից ու ծրագրից դուրս էր, սակայն եւ այնպէս քանի որ անխուսափելիորէն նշուեց ուրարտացիները՝ հայութեան հետ ունեցած աղերսի պատկերացման համար խուրրո-հայ յարաբերութիւնների կարեւոր նշանակութիւնը, ապա տե-

ղին կը լինի մի քանի խօսքով շարադրել մեր սպասուածութիւնները այդ հարցի վերաբերեալ:

Ինչպէս մի շարք փակ դռների բացման գործում բանալի ենք համարել դիցարանութիւնը, այնպէս էլ այստեղ մեծ նշանակութիւն ենք տալիս այդ բնագաւառին. այսուհանդերձ, ի հարկէ, մեծ եւ որոշիչ նշանակութիւն ունեն նաեւ խուրրիների բնակավայրի, պատմութեան հրապարակում նրանց երեւման, գործունէութեան տեղի, ժամանակի, էթնիկ կազմի եւ լեզուի հարցերը:

Նախ պիտի ասենք, որ ուսումնասիրողներն ընդհանրապէս խուրրիներին համարում են Հայկական լեռնաշխարհի ժողովուրդ, թէեւ նրանք տարածուել են նաեւ դէպի հարաւ:

Մեր թուագրութիւնից առաջ Գ. հազարամեակին եւ Բ. հազարամեակի առաջին կիսում Հայկական լեռնաշխարհը, յատկապէս նրա հարաւային կէտը (այն կէտը, որը դանում էր տեղեկութիւնները դրանցող սումեր-ակկադների եւ Եգիպտոսի հաստցութեան մէջ) կոչուել է Սուբարի կամ Սուբարու (հմտ. մեր Ուր-Ար[դ]ի կամ Ուր-արու անուան հետ): Սուբարուն այդ ժամանակներին զուրս էր եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից եւ տարածուել էր աւելի հարաւ՝ ընդդրկելով նաեւ Հիւսիսային Ասորիքը եւ Հիւսիսային Ասորեստանը՝ Չազրոսից մինչեւ Մայրիների անտառ Ամանոսի: Dr. G. Contenau-ն ասում է, թէ «Լագաշի Էաննադում արքայի ժամանակներից, Գ. հազարամեակի Ա. դարում, Միջագետքի հիւսիսը ճանաչուած էր Սուբարու անուան տակ. այս շրջանն ընդգրկում էր Միտանիի սպագայ տերիտորիաները, այսինքն՝ այն երկիրը, որ դըստում էր Չազրոսի եւ Եփրատի միջեւ... Նարամ-Սինը տիրողոսագրում է «յազթողը Սուբարուի մինչեւ անտառ մայրիների» (Ամանոս)»¹¹:

Գիտութիւնն ընդունում է, որ Սուբարու անունը էթնիկական արժէք չունի եւ պարզապէս աշխարհագրական տերմին է՝ ինչպէս մեր Նաիրի անունը: Միաժամանակ յայտնի է դարձել, որ աշխարհագրականորէն Սուբարու կոչուած երկրի ժողովուրդը խուրրիներն են եղել եւ թէ Սուբարի անուան տակ պիտի հասկանալ խուրրիներին: «Սուբարու»՝ հուրրիների եւ Միտանիոյ երկրին նախկին անունն

¹¹) Dr. G. Contenau, «La Civilisation des Hittites et des Hurrites du Mitanni», Paris, 1948, p. 58 - 59:

էր, զոր Ասորեստանցիք Միտաննիոյ կամ Խանիդայրատի պետութեան անկումէն յետոյ՝ նորէն զործածելի դարձուցին»¹² :

G. Contenau-ն բերում է նաեւ այս մասին հետեւեալը. «Այս ժամանակաշրջանից մենք ունենք Սամարրայում, Տիգրիսի վրայ, դանուած մի պրոնդէ տախտակ, որի վրայ նշուած յատուկ անունները՝ Arisen, Saumsen սեմական չեն... Մ. Ա. Ուզնադ-ի համար այս Սուբարու կամ Սուբարու երկիրը, որը սահմանազուծում է արեւմուտքից Amanus-ով, արեւելքից Guti-ի երկրներով եւ հարաւից Eshnunna-ով, արդէն պիտանիական մի մեծ շրջան էր... Բ հազարամեակին այս ազիանիկ տարրը աւելի ուժեղ էր թւում, եւ մենք կարող ենք այն փոխարինել ժողովրդի եւ թագաւորութեան անուններով՝ Սուբարուի ժամանակների, որն ուրիշ բան չէր, բայց եթէ միայն աշխարհագրական կոչում, մենք կարող ենք խօսել Հուրիա կամ Հուրրի ժողովրդից, որը հիմնել էր Հուրրիի եւ Միտաննիի թագաւորութիւնները»¹³ :

Հաւաստի տուեալներ կան, որ խուրրիները Բ հազարամեակի (մ. թ. ա.) կէսերին տարածուած էին Կանաանի, Վերին Ասորիքի եւ Հիւսիսային Միջագետքի ամբողջ տերիտորիաների վրայ, ներառեալ Ասորեստանը: Այս իրողութեան վկաներից մէկն էլ այն է, որ Եգիպտոսի ԺԸ դինաստիայի (ԺԶ դ. մ. թ. ա.) ժամանակներից եզրագտացիները Պաղեստինն ու Սիրիան անուանում էին H'rw (Hôr)¹⁴ որ նշանակում է Հուրրի: Հուրրի անունն են կրում Ս. Գրքի Հին Կտակարանի Horite-ները (քոսեցիք), որոնք հաստատուել էին Մեռեալ ծովի հարաւում¹⁵: M. Götzե-ն անգամ չի կասկածում, որ Ա հազարամեակի սկզբից (մ. թ. ա.) ասորեստանեան քաղաքակրթութիւնը ժառանգութիւն էր մնացել Հուրրիներից¹⁵:

«Հուրրիներու, — գրում է Քասունին, — առաջին յիշատակութիւնը հաթեան արձանագրութեանց մէջ՝ կ'ըլլայ Մուրսիլիս Ա-ի օրով (չուրջ 1790—1760 Ն. Ք.): Խեռացուց այս թագաւորը յարձակումով զբաւեց Հալէպը, որու թագաւորն իրր թէ ապստամբեր էր եւ կրնար

արդեւք դառնալ խեռացուց դէպի Սիւրիա յառաջխաղացման (Alms' tead, «History of Palestine and Syria», p. 117): Հալէպ այդ տան հուրրի կամ խարրի կոչուած ժողովուրդին ձեռքն էր, եւ ոչ թէ բարեւացուց կամ եզրագտացուց»¹⁶:

Տուչրատտայի ժամանակ խուրրի-միտանեան պետութիւնը տարածուած էր արեւելքից արեւմուտք՝ Նինուէից, Զաբրոսից եւ Ուրմիայի լճից մինչեւ Կապադովիա, իսկ հիւսիսից հարաւ՝ Պոնտոսից մինչեւ Պաղեստին եւ Բաբելոն¹⁷:

Ուղեբ՞ը էին այս խուրրիները:

Պրոֆ. Ա. Խաչատրեանն ասում է, թէ «Վինքլերի, Վայդների, Կոնտենայի, Կոհէնի եւ Մէյէի հետ ընդունում ենք, որ խուրրի-միտանեան պետութիւնը դրաւում էր ամբողջ Հայկական բարձրաւանդակը»¹⁸:

Խուրրիները Հայկական լեռնաշխարհի ժողովուրդ էին:

Կոնտենոն ասում է, թէ սահմանները Միտանիի թագաւորութեան, որը Բ հազարամեակի պատմութեան կարեւոր զործօնն էր, լաւ են յայտնի մեզ, այն նախապէս Նաիրին էր: ...Մի շարք հնագէտներ, յատկապէս Վինքլերը, խուրրիների թագաւորութիւնը տեղադրում են Հայաստանում¹⁹:

Հանքերով հարուստ Հայկական լեռնաշխարհի՝ միտանիների բնակավայր եղած լինելը փաստող կարեւոր տուեալ ենք համարում արաբների լեզուում պահուած *مآدان* m'adan բառը, որ նշանակում է «հանք, մետաղ»: Մենք դանում ենք, որ այս բառը պահուած է Միտանի անունը, ուստի այն պիտի փաստ համարել, որ միտանացիները Հայկական լեռնաշխարհի ժողովուրդ են: Գուցէ հենց Միտանի անունն էլ նշանակում է հանքերի երկիր, մի բան, որ կարող է բացատրել Խուրրի անունից զատ Միտանի անունն զոյութիւնը նոյն ժողովրդի կամ երկրի ու պետութեան համար:

Արդէն Հայկական լեռնաշխարհը դիտական շրջանակներում ճանաչուած է որպէս մետաղագործութեան աշխարհի ամենահին

16) Ե. Քասունի, նշուած գիրքը, էջ 63:

17) Պրոֆ. Ա. Խաչատրեան, Միտանի-խարրի ժողովուրդը, Ն. Խ. Ս. Հ. գիտ. եւ արուեստ. ինստ. «Տեղեկագիրք» քիւ. 1-ից, Երևան, 1926, էջ 8 եւ 23:

18) Պրոֆ. Ա. Խաչատրեան, նշուած գիրքը, էջ 8 եւ 23:

19) G. Contenau, նոյն տեղում, էջ 60—62:

12) Եգիպտոսի, նշուած գիրքը, էջ 62:

13) G. Contenau, նոյն տեղում, էջ 60:

14) Նոյն տեղում, էջ 65:

15) Նոյն տեղում, էջ 84:

կենտրոններից մին, եւ անգամ կարծիքներ կան, որ Հայաստանը եղել է մետաղագործութեան հայրենիքը: Այդ կարծիքներն արդէն ենթադրութեան սահմաններից անցել են փաստական հողի վրայ: «Միայն Հայաստանի հանրապետութեան սահմաններում այժմ յայտնի է 400-ից աւելի պղնձի հանքերեւակում, որոնց զգալի մասը հնում չահագործուած է եղել: Մի քանի հարիւրի են հասնում երկաթագործութեան ներկայումս յայտնաբերուած հին օջախները»²⁰: Այս բոլորի վրայ վերջերս յայտնաբերուել է Մեծամօրի հանքա-մետաղագործութեան մեծ կենտրոնը, որը մասնագէտների կարծիքով գնում է մինչեւ Գ հազարամեակի սկիզբները եւ գործունէութեան մէջ եղել է 2000 տարի: Այստեղ պեղուած բազմաթիւ հնոցները թոյլ են տալիս մասնագէտներին կարծելու, որ գոյութիւն են ունեցել 200-ից աւելի ձուլարաններ: Մեծամօրում գտնուած բազմաճիւղ արտադրութիւնը, յայտնաբերուած իւրայատուկ հիերոգլիֆ գրութիւնները, լուսատուներին (արեւ, լուսին եւ 5 մոլորակներ) նուիրուած պաշտամունքային կառոյցների հետքերը «խիստ բարձր զարգացման հասած մետաղամշակութիւնը եւ նրան յարակից արտադրութեան այլ տեսակները, աստղագիտութիւնը»²¹ ցոյց են տալիս բարձր զարգացման հասած մշակոյթ ունեցող հասարակութեան գոյութիւնը Հայաստանում:

Միտանիները համարում են նշանաւոր ձիււորներ, անգամ պատմութեան մէջ կարծիք կայ, որ նրանք են տարածել ձին Առաջաւոր Ասիայում. J. H. Breasted-ը խուրրի-միտանեան թագաւորութիւնը անուանում է «The Kingdom of the Mitannian horsemen»²² (Միտանեան ձիււորների թագաւորութիւն): Մենք գիտենք, որ էշ օգտագործող սումերները ձիււն «լերան էշ» էին կոչում: Միաժամանակ հանրայայտ իրողութիւն է, որ Հայաստանը նշանաւոր էր իր ձիերով: Աստուրական նուաճող արքաները միշտ ձի էին տանում Նաիրեան երկրներից եւ նրանց վրայ դրուած տուրքի մէջ կարեւոր տեղ էր զբաղում ձին: Հետեւաբար պարզ երեւում է, որ խուրրի-միտանացիք հայկական լեռնաշխարհի ժողովուրդ էին:

Պրոֆ. Ա. Սաչատրեանը գտնում է, որ Միտանիի, Սանիդալ-բաաի եւ Նահարինի նոյն լինելը հաստատուում է հետեւեալ վկայութեամբ (որը Միտանիի արքային Նահարինի իշխան է անուանում):

20) Կ. Մկրտչեան, Մեծամօր, «Գրական քերթ», Ուրբաք, 19 Մայիսի 1967:

21) Կ. Մկրտչեան, Ձուած յօդուածը:

22) J. H. Breasted, «Ancient Times», Boston, II ed., 1935, p. 189:

«Երբ Ամենոփիս Գ (1427—1392) կնութեան է առնում Միտանիի թագաւոր Սուտտուա Ա-ի դուստր Գիլուխեպային. հրամայում է այս հարսանեկան հանդէսը յաւերժացնել ըզեզա-կնիքով (skarabeus) եւ վրան արձանագրել տալիս «Ամենահոտեպ Գ-ի (= Ամենոփիս Գ) տասներորդ տարին (նրա կինը Տէյ, սրա հայրը՝ Հիուա եւ մայրը՝ Տուխա) մի հրաշալի զէպք [պատահեց] նորին մեծութեան հետ. Նահարինի իշխան Սուտտուայի դուստր Գիլուխեպա եւ նրա կանանցից ամենալուերը՝ 317...»²³:

Մասպերոն Միտանիին համարում է Նաիրիի մի մասը. «Այն պարագան, որ Միտանու իշխանի մի նամակն արձանագրուած է հիւրողիֆով իբր Նահարինից եկած, ընդունուեց իբր ապացոյց երկու երկրների նոյնութեանը. ես ցոյց տուի (մի ուրիշ տեղ), թէ այս վերագրումը հաստատում է միայն, թէ Միտանիին կազմում էր Նահարինի մի մասը»:

Այստեղ պէտք է նշենք նաեւ, որ աստուրական աղբիւրները Սուրբի-Միտանիին ճանաչում էին Սանի կամ Սանի-Գալբատ (փոփոխակ՝ Սանի-Ռարատ) անունով: Սուրբի-միտանիներն էլ իրենք իրենց այդ անունով էին կոչում: Տիգլաթ-Պալասար Ա-ը գրում է. «Այս արշաւանքին ընթացքում խաղացի գնացի Մելիտիա (= Մելիտանէ) քաղաքի վրայ, որ Սանի-Ռարատ երկրի մէջ է եւ որն ապստամբել էր»²⁴:

J. Garstang-ը խօսելով խեթերի մասին, ասում է, թէ նրանց՝ որպէս հզոր պետութիւն ասպարէզ իջած ժամանակներին՝ նրանց հակազուոյ (առաջխաղացումը կանգնեցնող) կայուն ուժ չկար Արեւմտեան Ասիայում, եւ հարաւի տաք տափաստանները չէին կարող արտադրել Ֆիզիքական այնպիսի ուժ, որ կարողանար յաղթահարել Տաւրոսեան լեռների խստութիւնը (կորովը), բայց միայն Հայաստանի ցեղակից խուրրիներն էին ներկայացնում սպառնալիք. նա գրում է. «... But beyond the upper Euphrates the Kindred rival power in Armenia — Then called Harri and later Urartu — was a constant menace on the eastern horizon» (... Բայց վերին Եփրատից այն կողմ ցեղակից եւ մրցակից զօրութիւնը Հայաստանի, որ այդ ժա-

23) Ա. Խաչատրեան, «Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմութիւն», էջ 8:

24) Խաչատրեան, «Միտանի-խարրի ժողովուրդը», էջ 7:

25) J. Garstang, «The Hittites, wonders of the past», p. 971:

մանակ կոչում էր Հարրի եւ յետոյ Ուրարտու, մի տեւական սպառնալիք էր արեւելեան հորիզոնում) :

Այսպիսով ըստ տեւականները խօսում են այն մասին (եւ ուսումնասիրողները ոչ էական տարբերութիւններով ընդունում են), որ Պուրրի-Միտանին պատուութիւնն էր Հայկական լեռնաշխարհի ժողովրդի :

Ի՞նչ ծագում ունէր այս խուրրի ժողովուրդը. ըստ յայտնի տեւականների, նրանք հնդեւրոպական ժողովրդի (եթէ կարելի է այդպէս ասել) սպաւորութիւն են թողնում, բացի նրանց լեզուից, որ տակաւին հնդեւրոպական չի համարւում :

Նրանց աստուածների մէջ գտնում ենք հնդեւրոպական ժողովուրդների (աւելի ճիշդը հնդկական համարւած) աստուածներ Mitra - ն, Varuna - ն, Indra - ն և Nasatya - ն: Ըստ Պաշտօնեանի արեւական անձնանուններ են կրում Միտանի հարստութեան արական անձերը, ինչպէս եւ խուրրիարեւակ Սիւրիայի քաղաքացիներն ու իշխանները: Բողաքէոյի արձանագրութիւններում, ըստ Հրոզնիի, «խարրի-մարդիկ» եւ «Մարեանի-մարդիկ» իրար հետ փոխանակւում են: Հենց այս բանից էլ ելնելով՝ ինչպէս Հրոզնին, այնպէս էլ շատեր գտնում են, որ խուրրիները արիներ են, որովհետեւ հնդկական Վեդայի մէջ կայ marya անունը «երիտասարդ մարդիկ, հերոս», «ձիաւոր ասպետ» կամ նման նշանակութեամբ: Սրանց վրայ կարելի է աւելացնել Սամարայի պրոնզէ տախտակի վրայ կարդացուող Arisen և Saumsen (Ari - Sen, Saum - Sen) անունները, որոնց երկրորդ բաղադրիչ sen-ի մէջ դժուար չէ տեսնել հնդեւրոպական -զուն (անգլերէն son) բառը, եւ որոնց կարելի է համեմատել հայկազուն, արքայազուն, Peterson, Jackson եւ այլն անունների հետ: Իսկ առաջին անուան Ari սկզբնամասը արդէն խօսում է ար անուան մասին: Այս եւ այլ տեւականներ (ինչպէս եւ խուրրի լեզուում գտնուող հնդեւրոպական տարրեր) խօսում են խուրրի ժողովրդի հնդեւրոպական դժի մասին :

Սակայն հենց առեղծուածն էլ այնտեղ է կայանում, որ խուրրի լեզուն լեզուաբանների կողմից համարւում է ոչ-հնդեւրոպական ազլուտինատիւ (կցական) լեզու :

Ոմանք այս առեղծուածից դուրս գալու ամենահեշտ միջոցի են դիմել. խուրրիներին բաժանել են երկու տարբեր ցեղերի՝ հնդեւրոպական (Միտանի) եւ ոչ-հնդեւրոպական (Պուրրի) ցեղերի: Ոչ-հնդեւրոպական համարուող խուրրի լեզուն վերագրել են խուրրիներ-

րին, իսկ հնդեւրոպական երեւոյթները՝ միտանիներին: Ոմանք էլ խուրրիներին, որպէս ոչ-հնդեւրոպական, համարեցին ստորին խաւի ժողովուրդ, իսկ միտանիներին համարեցին, որպէս արիացիներ, իշխող կամ գիւտարական դասակարգ: Ի հարկէ այս բաժանումը ունէր նաեւ իր երեւութական մի այլ պատճառը. դա այն էր, որ մի ժամանակ խուրրի-միտանեան մեծ պատուութիւնը բաժանուել էր երկու մասի, մէկը՝ Պուրրի, իսկ միւսը՝ Միտանի անունով :

Պատմագրութեանը սակայն յայտնի է, որ այդ բաժանումը չի եղել էթնիկ պատճառներով: Այն պարզապէս առաջացել է խուրրի-միտանեան մեծ պատուութեան իշխող գինաստիայի ներսում (խեթերի սաղբանքների որպէս արդիւնք) կատարուած դաւաճանութիւններով: Արատամա Ա-ին (մօտ 1435-1410 մ. թ. ա.) յաջորդող որդու՝ Շուտանայի սպանութեամբ՝ Արատամա Բ-ը (Շուտանայի եղբայրը) երկրի մի մասի վրայ իրեն թագաւոր է հռչակում, որպէս թագաւոր Պուրրի երկրի, երբ իր եղբորորդին, յաջորդելով հօրը, թագաւոր է դառնում միւս մասին՝ որպէս Միտանի թագաւորութիւն: Երկու թագաւորութիւնների այս անուանումները (մէկը Պուրրի, իսկ միւսը՝ Միտանի) կարող են առաջ եկած լինել հետեւեալ պատճառով. հաթերին Պուրրի-Միտանին ծանօթ էր աւելի Պուրրի անունով, իսկ սոսուրա-բարելական կողմին աւելի Միտանի (կամ Սուրարի) անունով. երբ երկիրը բաժանուեց երկու թագաւորութեան, խեթերի մօտ եղող մասը կոչուեց Պուրրի թագաւորութիւն, իսկ աւելի Ասորեստանին մօտ եղողը՝ Միտանի թագաւորութիւն: Երկու թագաւորութիւնների էլ ժողովուրդը խուրրիներ էին :

Խեթերի եւ Միտանի թագաւորութեան միջեւ կնքուած մի դաշնագրում դրուած է. «... Թող կրկին ու կրկին կարդացուի այս՝ Միտանի երկրի արքայի ու խարրի-մարդաց առջեւ...: Եթէ դու, Մատիուագա արքայորդիդ ու ձեր խարրի-մարդիկ չպահէք այս դաշնագրի խօսքերը, թող նրանք՝ աստուածները՝ երկրի տէրերը ոչնչացնեն քեզ՝ Մատիուագա ու ձեզ խարրի մարդիկ ձեր երկրովն ու ձեր կիներովը միասին: ... Դու՝ Մատիուագա ու խարրի մարդիկ, թող հազարաւոր աստուածները ձեր ճշմարիտ թշնամիները լինեն... Եթէ դու՝ Մատիուագա արքայորդիդ ու դուք՝ խարրի-մարդիկ այս դաշնագրի հաստատ պահէք»... Այսպէս եւ ուրիշ տեղեր: Մատիուագան ու խարրի մարդիկ ասում են. «Եթէ ես՝ Մատիուագա արքայորդիս ու մենք՝ խարրի-մարդիկ այս դաշնագրի ու երդումի խօսքերը հաստատ չպահենք, այն ժամանակ թող ես Մատիուագա ու մենք՝ խարրի-

մարդիկ...»²⁶։ Ինչպէս երեւում է այս դաշնագրից, Միտանիի ժողովուրդը խուրրիններ են, այնպէս ինչպէս խուրրի անունը ստոր խաւի անունն է։ Հետեւաբար միանգամայն պարզ եւ հաստատ պիտի համարել, որ Միտանի անունով առանձին (էթնիկ տարր) ցեղ զոյութիւն չի ունեցել, Սուրբի-Միտանիէն բաղկացած էր խուրրիններից։

Կոնտընտն ասում է, թէ «Մենք կարող ենք խօսել հուրրիա կամ հուրրի ժողովուրդից, որը հիմնել է Հուրրի եւ Միտանի թագաւորութիւնները»²⁷։ Եթէ Միտանի անուան տակ խուրրիններից դատ էթնիկապէս եւ լեզուով մի տարբեր ժողովուրդ զոյութիւն ունեցած լինէր, ապա նրանք եւս, ինչպէս խուրրինները, կ'ունենային սեպագիր արձանագրութիւններ։ Ուստի պէտք է ընդունել, որ հնդեւրոպական բոլոր երեւոյթները պատկանում են խուրրիններին։ Հենց այդ խուրրիններն են, որ պաշտում են հնդեւրոպական աստուածներ։ Հենց նրանք են, որ Գ հազարամեակի սկզբներից Հայկական լեռնաշխարհից իջնելով հարաւի տափաստանները՝ իրենց ոչ սեմական հետքերն են թողել Ասորեստանում, վերին Միջագետքում, վերին Ասորիքում, Կանաանում։ Հնդեւրոպական դրոշմ կրող այս մարեանինները ոչ մի կապ չունեն պարսիկների եւ հնդիկների հետ (այն իմաստով, որ այնտեղից չեն եկած), մանաւանդ, որ Գ հազարամեակի սկզբներին (երբ նրանց նշուած հետքերն ենք գտնում) Իրանում եւ Հնդկաստանում չկային ոչ հնդեւրոպական պարսիկ եւ ոչ էլ հնդեւրոպական հնդիկ։ Հենց խուրրիններն են մարեանինները, այն նշանաւոր ձիւղոր ասպետները, որոնց համբաւն ու անունը տարածուել են Իրան ու Հնդկաստան եւ օգտագործուել Վեդայի մէջ, եւ դեռ մենք կը տեսնենք այդ մարեանինների մի այլ անուանումը, երբ խօսենք մեր Երուանդունիների մասին։

Սուրբ-հայ կապի ինչպիսի՞ երեւոյթներ կան բացի այն բանից, որ նրանք եւս Հայկական լեռնաշխարհի ժողովուրդ են եւ ունեն հնդեւրոպական զգալի դրոշմ։

Մենք տեսանք, որ Սուրբի անունը ընդգրկում էր շատ մեծ տարածութիւն. ոչ թէ միայն Հայկական լեռնաշխարհը (յատկապէս նրա հարաւային կէսը), այլ նաեւ հարաւի տափաստանները Չաղրոսից մինչեւ Կիլիկիա։ Մենք տեսանք նաեւ, որ Սուրբի անուան տակ

գտնում էին խուրրինները. բայց այդ ինչպէ՞ս եղաւ, որ այդ Սուրբի անունը հետագայում դնաց-եկաւ ու մնաց Արմէ-Շուրբիայի վրայ (Շուրբարու-Շուրբիա)։

Մենք գիտենք, որ հենց Նարամ-Սինի (Գ հազարամեակի կէսերը մ. թ. ա.) եւ Ասորեստանի Սարգոնի (Բ հազարամեակի սկիզբ մ. թ. ա.) ժամանակներին այս Արմէ-Շուրբիայում էր գտնուում Արմանի երկիրը. այդ շրջանը հենց նոյն անունով էլ մնացել էր, եւ Բ հազարամեակի վերջերին եւ Ա հազարամեակին Ասորեստանի եւ Ուրարտուի արքաների կողմից կոչուում էր Ուրմէ կամ Արմէ երկիր. հետաքրքրականն այն է, որ արմէններն այդտեղից չհեռացան եւ այդտեղից շարունակեցին Ուրմէ, Ուրումէ, Արմէ, Արմինա կոչուել, բայց հենց խուրրինների յիշուած ժամանակներին, Բ հազարամեակի կէսերին, Արմանի, Ուրմէ, Արմէ կամ նման մի ձեւ յիշուելու տեղ, փոխարէնը, հենց նոյն տեղի համար էլ յիշուում է խուրրի անունը. կարծես արմէնները խեթերին ծանօթ էին աւելի խուրրի անունով. բերենք մի կոնկրետ վկայութիւն. խեթերի արքայ Մուլատալիի եւ Կիդուասնայի արքայ Մունաչուրայի միջեւ կնքուած դաշնագրում դրուած է. «Այսպէս ասում է Վեհափառ Մուլատալիի մեծ արքայ Սատաու երկրի... նախապէս՝ իմ պապի (Սարլել) ժամանակ Կիդուասնայի երկիրը մի մասն է եղել Սատաու երկրին։ Վերջը Կիդուասնայի երկիրը զատուեց Սատաու երկրից եւ դարձաւ Սարբի երկրին։ Արդ այն ժամանակ Արեգի ծառան՝ Իշուլա երկիրը թշնամութեամբ տոգորուեց Արեգի դէմ, այն ժամանակ Արեգս արշաւեցի նրա դէմ։ ...Իշուլայի մարդիկ խոյս տուին Արեգիս առաջից, իջան Սարբի երկիրը...»²⁸։ Այս արձանագրութիւնից միանգամայն պարզ երեւում է, որ այդ ժամանակ Սուրբի թագաւորութեան երկիրը սահմանակից էր Իշուլային, որ Իշուլացիք ազատուելու համար անցել են խուրրինների տիրապետութեան կողմը (երեւի ցեղակից էին)։ Ո՞ւր էր Իշուլան. Սալմանասար Գ (860-825 մ. թ. ա.) ասում է. «Բիտ-Չամանուց (Իխարեկիւրի շրջան) ելայ, Նամդանու, Միլիխու երկրները կարեցի անցայ... իջայ Իսուա երկրի Ինդիտի երկիրը...»²⁹։ Այստեղ էլ պարզ է, որ Ինդիտ-Հանձիթը Իշուլայի մի մասն էր. Վալդներն էլ ասում է, թէ Իշուլան հասնում էր Բալու²⁹։ Այսպիսով

28) Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Միտանի խարրի ժողովուրդը», նոյն տեղում, էջ 13:

29) Նոյն տեղում, էջ 15:

26) Ա. Խաչատրեան, «Հայաստանի սեպագրական շրջանի ֆնակոս պատմութիւն», էջ 185:

27) G. Contenau, նոյն տեղում, էջ 60:

միանգամայն պարզ է դառնում, որ խեթերի արքայի առաջից փակ-
նող իշուվացիք անցել են Արմէ-Շուպրիա, որին խեթերի արքան կո-
չում է խուրրինների երկիր:

«Ասարխադոնի արձանագրութիւններում յիշատակուած են
Արմէ-Շուպրիայի թագաւորի ու նրա որդիների անունները, որոնք
խուրրիական կերպար ունեն»³⁰: Մեր երուանդ Ա-ի որդու անունը
կոչուած էր Սաբարիս (Շաւարշ)³¹. այս անունը տարածուած է հա-
յուսթեան մէջ, իսկ Սարարի(ս) արդէն Սուրարի անունն է, որի մէջ
հասկացուած էր նաեւ խուրրի ժողովուրդը:

Այստեղ ի հարկէ անխուսափելի է հետեւեալ հարցը. ի՞նչ եղան
այն հզօր եւ մարդաշատ խուրրիները, որոնք Գ հազարամեակից տա-
րածուել էին Հայաստանի եւ հարաւային երկրների վրայ, եւ որոնք
Բ հազարամեակի կէսին ստեղծեցին Եգիպտոսի փարաւոնների հետ
խնամութիւն անելու չափ հզօր պետութիւն եւ խեթերի կողմից մի
քանի սերունդներ յիշուելուց յետոյ յանկարծ անյայտացան:

Հուրրի-Միտանեան հզօր պետութիւնը ըստ ոմանց 1500-ից
մինչեւ 1375 մ. թ. ա. (Առաջաւոր Ասիայում) փայլելուց յետոյ սկը-
սեց ներքին անմիարանութիւնների պատճառով քայքայուել եւ
1250-ին ի սպառ ջնջուեց³²: Իսկ ըստ ուրիշների՝ ջնջուեց այն օրից
(1370 մ. թ. ա.), երբ Ասորեստանի Ašur-uballit վերջ տուեց նրա
իշխող զինաստիային³³: Եւ ահա այս ժամանակներից յետոյ էլ ոչ մի
անգամ եւ ոչ մի տեղ չենք հանդիպում խուրրի անուան: Ի՞նչ եղան
խուրրիները:

Ասում են՝ ձուլուեցին հայերի մէջ:

Ինչ է, խուրրիները ձեան պէս տեղացին Հայկական լեռնաշ-
խարհի եւ հարաւի երկրների վրայ, եւ տեղացին առատ եւ ընդարձակ
տարածութիւնների վրայ, եւ յանկարծ, երբ հայերի Արամ նորից
դուրս եկաւ ամպերի տակից, անմիջապէս հալուեցին:

Ինչ խօսք, որ պատմաբանները շտապ օգնութեան հիանալի եր-

30) Ա. Տիրացեան, Հիմն հայկական պետութեան առաջացումը, «Պատմաբա-
նասիրական հանդէս», 1966, քիւ 4, էջ 92:

31) Հ. Գ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», Երևան, 1963,
էջ 126:

32) Եղիա Քասունի, «Նախահայկական Հայաստան», էջ 49:

33) Seton Lloyd, «Twin Rivers», Oxford, 1943, p. 51:

կու բառ ունեն, որոնց միջոցով շատ դժուարութիւններ են «յաղթա-
հարուում»: Դրանք են «գաղթ» եւ «ձուլում» բառերը: Երբ դժուար է
լինում մի ժողովրդի անունը տեղի հետ կապել, ասում են՝ ներգաղ-
թել են դրսից, երբ դժուարանում են նրանց նախկին անուամբ չյիշ-
ուելու պատճառը գտնել, ասում են՝ ձուլուել են: Այդպիսով ազատ-
ուում են զլիսացուից եւ առեղծուածի լուծման համար այլ դուռ բա-
խելու անհրաժեշտութիւնից:

Սալմանասար Ա-ը (մօտ 1280 մ. թ. ա.) հենց այն օրերին, երբ
դադարել էր Խուրրի պետութիւնը, արշաւում է Ուրուարի եւ Կուտ-
մուխի երկրների վրայ, Կաշիարի շրջանի երկրների վրայ եւ հաս-
նում Կարկիմիշ, բայց չէ յիշում խուրրի անունով ժողովրդի գո-
յութիւնը: Tukulti - Uta Ա-ը (մօտ 1250 մ. թ. ա.) նոյնպէս ար-
շաւում է Կուտմուխի, ինչպէս եւ Սուրարի՝ Ալգի եւ Պուրուկուզի,
եւ բոլորից յետոյ ասում է, թէ խոնարհեցրել է բոլոր Նաիրի երկրնե-
րը: Տիգլաթ-Պալասար Ա-ը (մօտ 1100 մ. թ. ա.) ոտնակոխ է անում
բոլոր Նաիրեան երկրները, մտնում Հայկական լեռնաշխարհի սիրտը,
վերադարձին մտնում Melidia, բայց չէ յիշում Խուրրի անունը: Ի՞նչ
եղաւ, ե՞րբ ձուլուեց, ո՞ւմ հետ ձուլուեց այդքան մեծ թուով ժողո-
վուրդ: Ոչ մի կասկած՝ նրանք իրենց փառքի ժամանակ յիշում էին
Նախարիմա անուան տակ, դրանից յետոյ էլ շարունակեցին ապրել
Նախարիմա-Նաիրի անուան մէջ, որովհետեւ նրանք Նաիրեան ցեղե-
րից էին, այն ցեղերից, որոնք յետոյ կազմեցին Ուրարտուի հայկա-
կան պետութիւնը:

Ի հարկէ, յետոյ, ժամանակի ընթացքում, Հայկական լեռնաշ-
խարհից հարաւ դանուող երկրներում մնացած խուրրիների մեծ մասը
ձուլուեց այդ շրջանները ողողող սեմիտական ցեղերի հետ: Մենք
առիթը կ'ունենանք նրանց նորից յիշելու մեր այս ուսումնասիրու-
թեան մէջ:

Հնագիտութիւնն արդեօք Ֆիդիբական տիպի կապ տեսնո՞ւմ է
հին խուրրիների եւ ներկայ կլոր դանդ (արմէնոյիդ տիպ) ունեցող
արծուեքիթ հայերի միջեւ: Գ. Կոնտենոն ասելուց յետոյ, որ խուր-
րիներին ներկայացնող յուշարձաններից երեւում է նրանց կլոր
(brachycéphale) դանդ եւ մեծ քիթ ունենալը, աւելացնում է. «Le type
des Hurrites, des monuments, se retrouve chez l'Arménien moderne»
(Խուրրիտների տիպը, ըստ յուշարձանների, գտնուում է ներկայ հա-
յերի մօտ)³⁴:

34) Dr. G. Contenau, նոյն տեղում, էջ 29:

Արդեօք խուրրի եւ հար-հայ անունների մէջ կապ կա՞յ:

Առաջ գիտնականները խուրրի անուան սեպախումբը կարգում էին խարրի կամ հար-րի. իսկապէս էլ հուր-ի սեպախումբն ունի թէ՛ հուր եւ թէ՛ հար հնչիւնի արժէք, այնպէս, որ մի շարք գիտնականներ ընտրում էին հար արժէքը եւ դրա մէջ էլ տեսնում էին «արիացի» (հնդեւրոպական) իմաստը, սակայն որոշ գրութիւնների մէջ այդ անունը կազմուած է վանկա-հնչիւնային hu - u - ur ձեւով, որի հիման վրայ գտան, որ այստեղ պէտք է ընդունել ոչ թէ հար, այլ հուր հնչիւնը: Այս տարբերութիւնը, մեր կարծիքով, այդքան էլ կարեւոր մի խոչընդոտ չէ, եթէ մենք հուր(րի) անուան մէջ գտնենք հար կամ հայ, որովհետեւ Արմէ անունն Արմէ-Շուպրիայի շրջանում կոչուել է նաեւ Ուրմէ կամ Ուրումէ ձեւով: Ա. Խաչատրեանը Խառամ քաղաքանուան մէջ տեսնում է Խուրրի անունը՝ հիմնուելով այդ քաղաքի հին բնակչութեան խուրրի լինելուն վրայ³⁵:

Մեր բարբառներից ոմանք որոշ տեղեր ք ձայնը փոխում են ու ձայնի. «Ա > ու, ու — շեշտուած վանկում՝ Սվեդիայում, նոյն դիրքում, բայց անգայինից առաջ՝ Ադուլիսում. ժամ > ժում — Ազլ. բան > բուն — Ազլ. բուն — Սվ., ծափ > ձուփ — Սվ. աղ > ուղ — Սվ.»³⁶:

Մենք տեսանք նաեւ, որ Ուր-արդի անունը Աշուր-Նադիր-Պալի կողմից հնչուել է Ար-Արդի. Արմէ անունը հնչուել է նաեւ Ուրմէ. նման դէպքեր շատ կան. անհասկանալի չէ, որ երկուսն էլ՝ թէ՛ հուր եւ թէ՛ հար ճիշդ լինեն՝ նայած շրջանի եւ ժամանակի: Մենք այժմ գիտենք, որ հայ < հար-ը առաջ է եկել հայերի ազգային արեւի Ար կամ Արա աստծոյ անունից, զիտենք միաժամանակ, որ ե-զիպտացիները Պաղեստինն ու Սիրիան Hôr էին անուանում այդտեղի խուրրի բնակչութեան անունով, իսկ Hor (Horus) Եգիպտոսի մէջ ճանաչուած էր որպէս արեւի աստուածութիւն: Այդ աստուածութեան Եգիպտոսի բնիկ չլինելը երեւում է նրանից, որ նրան համարում էին իրենց Սեթ աստծոյ հակառակորդը, եւ թէ՛ եւ յարգում

35) Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Միտամի-խարրի ժողովուրդը», նշուած տեղում, էջ 12:

36) Ռ. Հ. Բաղրամեան, «Ա» ճայնառքի փոփոխութիւնը բարբառներում, «Պատմա-բանասիրական համադէս», 1965, քիւ 4, էջ 79:

էին նրան (որովհետեւ հաւատում էին նրան), բայց չէին սիրում³⁷:

Վերելում մենք բերեցինք տուեալներ, որ Գ հազարամեակին (մ. թ. ա. -) սումերականական եւ յետոյ ասուրական հզօր արքաները իրենց հասողութեան մէջ ընկնող՝ Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջաններն յաճախ կոչել են Սուբարտու: Բերեցինք նաեւ տուեալներ, որ Սուբարտու անունը խուրրի-միտանինների երկրի նախկին անունն էր: Դ գլխում յայտնել էինք, որ Sub - ari կամ Šub - ari տերմինը կազմուած է երկու բաղադրիչ մասերից, որի առաջին Šub բաղադրիչը սումերերէն նշանակում է «երկրպագել, պաշտել»³⁸, իսկ երկրորդ ar(i) բաղադրիչը մեր արեւի աստուած Ար-Արան է. որով Սուբ-արի նշանակում է «Ար պաշտողներ» (արեւապաշտներ), իսկ Սուբար-տու՝ «Արապաշտների երկիր»: Հենց Գ հազարամեակին Շուպրիայում (Աղձնիքում) գտնուող այդ Արապաշտները Նարամ-Սինի կողմից կոչուել են Ար-մա-նի «Արորդիներ»: Մենք տեսանք, որ Հայկական լեռնաշխարհի Արորդիները (արմէնները) իրենց Ար (Արա) աստծոյ անունով ուղղակի կոչուել են նաեւ ար եւ աւելի ուշ ժամանակներին հար > հայ: Այդ Արապաշտ ժողովուրդն իր արեւ աստծոյ Ար > Հար - Hor - Խոր անունով մի ժամանակ յայտնի էր նաեւ Խուրրի (Հարրի) անունով: Ինչպէս նշել ենք՝ Եգիպտոսին յայտնի էր արեւի աստուած Hor-ը, պարսկերէնը պահել է խոս «արեւ» բառը, մենք ունենք խար [խարել «այրել»] որից՝ խար-ոյկ, իսկ արարները պահել են 𐎧𐎠 hār «տաք» բառը. բերել էինք յայտնի պատմարանների հետազոտութիւններից մէջ բերումներ, որ Սուբարի անուան տակ գտնուած էին Խուրրիները:

Նշել էինք, որ Հայաստանը նշանաւոր էր ձիաբուծութեամբ ու ձիաւորներով, որ Խուրրի-միտանինների համբաւը, որպէս ձիաւոր մարտիկներ, տարածուել էր Առաջաւոր Ասիայում: Եւ ահա շատ հետաքրքիր է, որ Subari անունը ճեղքելով 4-5 հազար տարիների տարածութիւնը անաղարտ հասել է մեզ արաբերէն سوارى Suwari եւ պարսկերէն سوارى Sawari բառում «ձիաւոր զինուոր» իմաստով: Սա կասկած չի թողնում, որ Սուբարիները («Արապաշտները») մի ժա-

37) G. Contenau նշուած գիրքը, էջ 88 - 90:

38) S. Langdon, նշուած գիրքը, էջ 241, տե՛ս ŠUB, SUB, b) To incline oneself, bow, worship:

մանակ իրենց արևև աստծոյ Ար-Հար > Hor-Պոր անունով կոչուած էին Պուրրի (Հարրի) եւ յայտնի էին դարձել Առաջաւոր Ասիայում որպէս նշանաւոր ձիւղոր մարտիկներ:

Մենք վերելում ցոյց էինք տուել, որ մեխրի ցեղը ապրում էր Սասունի շրջանում (Արմէ-Շուպրիա) եւ սասունցի այդ մեխրի ցեղի անունը պահուել է մեր էպոսում Սասնայ Մեքր անունով: Իսկ իոյ բառի ստուգարանութեան առթիւ յիշել էինք մեր էպոսի Ձէնով Յովանի խօսքն ուղղուած Մհերին. «...Սասնայ տան խոյերէն դու ես մնացէ», միտամանակ բացատրելով, որ խոյը խորհրդանիշն է արեւի աստծուն եւ որ խոյ բառը առաջ է եկել խոր ձեւից, որ նշանակուած է արեւ: Հեռեւաբար պիտի ընդունել, որ խորերը խուրրիններն են որպէս արեւի աստուած Պորից առաջ եկած ցեղ:

Մենք գիտենք, որ առիւծը դիցարանութեան մէջ խորհրդանիշն էր սրբազան կրակի կամ կրակի աստուածութեան³⁹, իսկ արեւի դիւկը կամ թեւաւոր դիւկը՝ արեւի աստուածութեան խորհրդանիշը. եւ ահա Միտանիի Sausatar արքայի ցելիքերային կնիքի վրայ պատկերուած է արեւի թեւաւոր դիւկը առիւծների վրայ⁴⁰: Այս կնիքի մեծ արժէքը կայանում է յատկապէս նրանում, որ այն ցոյց է տալիս, որ արեւ-կրակ աստուածութիւնը խուրրի-միտանիների կարեւորագոյն (եթէ ոչ գլխաւոր) աստուածութիւնն էր, այնպէս ինչպէս Ար-Աչտուան էր Հայերի Համար: Պրոֆ. Ա. Պաշտոբեանը ասում է, թէ կասիտները խուրրիներից առին արեւի աստուած Surya-ին⁴¹:

Եզրիպտոսի փարաւոն Ամենհոտեպ (Ամենոփիս) Գ-ը (1411-1375 մ. թ. ա.) ամուսնանում է Միտանիի Սուտաննա արքայի դուստրը Գիլուխեպայի հետ, իսկ երբ Սուտաննային յաջորդում է նրա որդի Տուչրատան, Ամենհոտեպ Գ-ը ամուսնանում է նաեւ սրա դուստրը Տադուխեպայի հետ⁴²: Երբ Ամենհոտեպ Գ-ը մահանում է, նրան

39) Թադէոս Աւարիեգեան, Միքրը հայոց մէջ, «Համդէս ամսօրեայ», 1928, քիւ 5-6 էջ 248-250: Աւարիեգեանը գրում է. «Առիւծը սրբազան կրակի խորհրդանիշն է», եւ յիշում է Միքր - Մեքրի առիւծ (Առիւծաձեւ) մակդիրը:

40) G. Contenau, Նշում գիրքը, էջ 78 - 80:

41) Ա. Պաշտոբեան, «Հայաստանի սեպագիր շրջանի բնագիտական պատմութիւն», էջ 193 - 195:

42) G. Contenau, Նշում գիրքը, էջ 69 - 70:

յաջորդում է որդին Ամենհոտեպ (Ամենոփիս) Գ-ը, որն ամուսնանում է իր հօր վերջին եւ երիտասարդ հարսի՝ Տադուխեպայի հետ⁴³: Այս փամանակներին Ամենհոտեպ Գ-ը իր մայր կամ հօր կին Գիլուխեպայի եւ (կամ) իր կին Տադուխեպայի՝ Միտանիից բերած կրօնական նոր դադափարներից ներշնչուած՝ վերացնում է Եզրիպտոսի հին աստուածներին, նրանց հետ եւ եզրիպտական պանթէոնը գլխաւորող Amon (կամ Amen) - ին, եւ նրանց փոխարէն հաստատում է միաստուածութիւն՝ Արեւի դիւկ Aton-ի պաշտամունքը: Միայն խնայում է արեւի աստուած Ra-ին, որին համապատասխան է դառնում իր աստուած⁴⁴: Նա հաւատում է, որ արեւը միակ աստուածն է բոլորի, որ այդ աստուածը ստեղծել է ոչ թէ միայն ցածր արարածներին, այլեւ մարդկային բոլոր ցեղերին, թէ՛ եզրիպտացիներին եւ թէ՛ օտարներին⁴⁵: Իր կատարած կրօնական այս փոփոխութեան առթիւ իր Amen-hotep («Ամեն-ը դոհ է») անուան տեղ ընդունում է Akhn-aton («Փառքը Ատոնի») անունը: Պրոֆ. Պետրին ասել է, թէ «Ախնատոնի մայրը միտանական-հայկական ծագում ունէր եւ նա էր բերել Ատոնի կրօնը իր հայրենիքից եւ սովորեցրել էր որդուն»⁴⁶: Ախնատոնը լքեց հին մայրաքաղաք Թեբէն, որը հին աստուածների մեհանների կենտրոնն էր եւ իր նոր մայրաքաղաքը կառուցեց զետի հոսանքով աւելի ներքեւ, որն այժմ կոչուում է Ամարնա: Այս տեղեկութիւնները մեզ համար ունեն այն կարեւորութիւնը, որ այն փաստում է, որ խուրրի-միտանիների գլխաւոր աստուածն էր Արեւը կամ արեւի դիւկը, որը ներկայացուած է նաեւ Sausatar-ի կնիքով, եւ որ Եզրիպտոսի Ra-ն համապատասխան է համարուել ո՛չ թէ միայն բովանդակութեամբ, այլ անգամ անուամբ Միտանիի արեւի Ար աստծուն:

Պուրրիների կարեւորագոյն աստուածն էր նաեւ ամպրոպի, փոթորիկի եւ անձրեւի աստուած Տեչուպը, որի կնոջ անունն էր Հեպա կամ Հեպիտ (Տեչուպը համապատասխանում էր Միջագետքի Աղադին)⁴⁶: Ուրարտացիների պանթէոնը գլխաւորող երեք աստուածներն էին Երկրորդ տեղը բռնող Տէյշերան եւ նրա կինը Հուբան (կամ Պուպա) հենց խուրրիների Տեչուպն ու նրա կին Հեպան էին նոյն անունով

43) G. Contenau, Նշում գիրքը, էջ 70:
44) L. W. King, «Egypt and Western Asia», London, 1910, p. 384:
45) J. H. Breasted, «Ancient Times», Boston, 1935, p. 116 - 117:
46) G. Contenau, Նշում գիրքը, էջ 76-77:

և նոյն բովանդակութեամբ: Տեղուպ-Տէյշեպային խորհրդանշող կենդանին եզր կամ ցուլն էր⁴⁷, որի քանդակները տարածուած են Հայկական լեռնաշխարհում: Յուլի արձանի հետքը գտել են նաև Գառնիի տաճարում:

Պուրրիները և ուրարտացիները այս աստուածները նոյնութիւնն էլ շատ կարեւոր նշանակութիւն ունի խուրրո-ուրարտական կամ խուրրո-հայկական կապի տեսակէտով. մանաւանդ որ, ինչպէս ցոյց է տուել Ղափանցեանը, Տեղուպ-Տէյշեպայի կնոջ Հեպիտ (Հեպա կամ Հուրա) անունն էլ պահուած է մեզ մօտ՝ հայերէնում հապիտ բառով⁴⁸:

Պուրրիները պաշտում էին նաև Տելեպինու աստուածը, որը բուսականութեան աստուած էր և պտղաբերութեան ոգին (այն համապատասխանում էր սումերական Dumuzi և Ningizida աստուածութիւններին)⁴⁹: Ի հարկէ բուսականութեան և պտղաբերութեան ոգին կապուած էր լինում ամպերի և անձրեւի հետ: Հետաքրքրական այստեղ մեզ համար այն է, որ Տելեպինու անունը պահուած է մեզ մօտ Թուղր (թուխպ, թուղի) բառի մէջ, որ նշանակում է մառախուղ, խիտ մշուշ, սև ամպ: Թուխպ բառից դատ (ինչ որ նոյն չափ կարեւոր է) ունենք դիցարանական Թպղա ոգին: Թուխպ և Թպղա անունների մեզ մօտ պահուելը նոյնպէս կարեւոր նշանակութիւն ունի խուրրո-հայ կապերի պատկերացման տեսակէտով:

Քիչ նշանակութիւն չունեն խուրրիական մի շարք անձնանուններ, որոնք մենք յիշեցինք վերելում: Պէտք է անտեսել Գ հազարամեակին պատկանող և Սամարրայում պղնձէ տախտակի վրայ պահուած խուրրիական Ari - sen և Saum - sen անձնանունների նշանակութիւնը: Saum - sen անունն -sen վերջաւորութիւնը պիտի անպայման հնդեւրոպական համարել, ինչպէս ցոյց տուեցինք վերելում, այն համեմատելով մեր զուն և անդլերէն son բառի հետ. միաժամանակ նա ցոյց է տալիս, որ Ari - sen անունն -sen վերջաւորութիւնն էլ որպէս առանձին բաղադրիչ բառ կարելի է անջատել Ari սկզբնամասից, այնպէս որ կ'ունենանք Ari որ ուրիշ բան չէ, այլ մեր Ար կամ Արա աստուածութիւնը: Ուստի Ari - sen նշա-

47) Նոյն տեղում, էջ 76—77:

48) Գր. Ղափանցեան, «Հայաստ - հայերի բնօրրան», էջ 85:

49) G. Contenau, նշում գիրքը, էջ 121—122:

նակում է Արազուն: Նոյնպիսի կարեւորութիւն ունի Ղափանցեանի՝ իր «Հայաստ» գրքում բերած՝ խուրրիական Ari (k) kum me և Aštikumme⁵⁰ յատուկ անունները, որոնց նա բերել է Kumbağa անունն հետ համեմատելու համար որպէս Kumma արմատով կազմուած բարդութիւններ: Այս երկու անունների մեզ համար ունեցած մեծ նշանակութիւնը դժուար է թերազնահատել. այդ անունների սկզբնամաս հանդիսացող Ari և Ašti անունների հայկականութիւնը սպացոյցի պէտք չունի, մենք արդէն «Ուրարտու և հայկական է» գլխում ցոյց ենք տուել Ar և Ašt (Աշտու—Աշտուս) անունների նոյնութիւնը որպէս հայերի գերագոյն աստուածը:

Մենք նշել էինք նաև Աշտուս—ի բովանդակութեան մէջ կրակ նշանակութեան գոյութիւնը և այդ առթիւ բերել էինք աշտ—ամակ բառը, որն ունի «կրակ կրող, կրակը վեր պահող» նշանակութիւն:

Գուցէ ուրարտական amaštu «այրել» բառի մէջ aštu - արմատն ունի նոյնպէս «կրակ» նշանակութիւնը: (Հմմտ. բառնալ - ամբառնալ, բարձել - ամբարձումն, բոշխնել - ըմբոշխնել եւայլն):

Այստեղ խուրրո-հայ յարաբերութիւնների կապակցութեամբ անհրաժեշտ ենք համարում նորից յիշեցնել վերելում նշուած խուրրիական իզական անձնանունները, որոնք կազմուած են ast, ašt, asd, ašd բաղադրիչներով. զրանք են՝ Astağuta, Astaqanza, Astakina, Asdu, Ašduanti, Ašduatana, Ašduašar, Ašte, Ašten⁵¹ և Asteia

50) Գր. Ղափանցեան, «Հայաստ-հայերի բնօրրան», էջ 50:

51) Եթէ իրան-ա-ցաւ ունեցողների ձեռքն անցնի այս Ašten անունը անմիջապէս կ'աւան, որ նրա (Ašt - en) - en վերջաւորութիւնն իրանական փաղափշական en մասնիկն է, ինչպէս որտէն, Արշէն, Արտէն, Զաւէն և նման անունների մասին են (սիպիմաթ) ասում (Անտանոն իր Անանտանոնների բառարանում սրանց այդ ստուգաբանութիւնը բերում է Հիւրշմանից). մտքերից չի անցնում, որ այդ ձեւը կարող է խուրրո-հայկական լինել, մի ծագում, որ շատ աւելի էին է, քան պարսիկների յոյս աշխարհ գալը: Խոր[էն]-ը, ըստ մեր բնութեան, նշանակում է արեւ և գալիս Խուրրի անունից. Արշ[էն], Արտ[էն] անունների մէջ, ինչպէս ցոյց ենք տուել, մտած է Ար—Արտ—Աշտ—Արան, իսկ Զաւէն անունն անկասկած ուրարտական արեւի աստուած Շվիթի-ն է. Զաւէն անունն օգտագործուել է մեզ մօտ շատ հինուց. օրինակ՝ Զաւէն եղիսկոպոս Բաւեմի, յիշուած 364 թ., Զաւէն Մամազկերտի, կաթողիկոս Հայոց (377—381 թթ. տե՛ս Անտանոն մօտ Զաւէն):

ինչպէս նաեւ հասարակ անուններ *āšduḥḫi* և *aštuzzi*: Ընդունելով, որ այս անունները մէջ գտնուող *ast*, *ašt*, *asd* և *ašd* արմատները պէտք է ունենան «արեւ, լոյս կամ կրակ» նշանակութիւնները, նշել էինք, որ մենք հիմա էլ մեր աղջկանց եւ կանանց նմանեցնելով երկնային լուսատուներին, կամ լոյսին ու հուրին՝ անուանում ենք Արփիկ, Արեգնազ, Լուսին, Արուսեակ, Լուսնթագ, Աստղիկ, Արչալոյս, Հրանոյշ, Ատրինէ, Լուսիկ, Լուսինէ եւ այլն:

Նախապէս Հրողնին եւ յետոյ մի շարք այլ գիտնականներ ընդունում են, որ Ուրֆա քաղաքը (Եդեսիան—յոյների *Orrhoë*, սիրիացիների *Urhôï* եղել է խուրրիական (առանձնացուած) թագաւորութեան մայրաքաղաքը եւ թէ հենց *Orrhoë* անունը ծագել է Սուրբի անունից⁵²: Իսկ Սորենացին գրում է, թէ Ուռհա կոչուած Եդեսիայի դիւանում կային գրուածքներ մեր առաջին թագաւորների գործերի մասին մինչեւ Երուանդ, եւ թէ ինք, ժամանակին, իր աչքով է տեսել տեղում: Նա գրում է. «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսէպոս եւ Հիւպոդիտոս եւ այլք բազումք ի Յունաց: Քանզի նա բովանդակ փոխադրեաց և որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսեայ՝ որ է Ուռհայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատմէր. . . Մի ոք անհաւատասցի, քանզի մեզէն իսկ ահանատես եղաք այն դիւանին, եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկլեսիաստէ զիրք Եւսերի կեսարացոյ, զորս եւ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու: Սնդիր արասցես ի Գեղարքունի ի գաւառին Սիւնեաց, եւ գտցես յառաջին հագներգութեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յԵդեսիա դիւանին լինել ամենայն գործոց առաջին թագաւորացն մերոց մինչեւ ցԱբգար, եւ զկնի Արգարու մինչեւ ցԵրուանդ: Որ եւ այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի» (Սոր. Բ—Ժ):

Դժբախտաբար Սորենացին՝ Սուրբիների մայրաքաղաքում պահուած եւ Հայոց առաջին թագաւորների մասին խօսող գրութիւնների բովանդակութիւնից բան չի յիշում: Գուցէ իր գրածների մէջ կան այնպիսիներ, որոնց այդտեղից է վերցրել, բայց այդ մասին չի նշում: Հաւանաբար նա մոռացել է այդ գրութիւնների բովանդակութեան մանրամասնութիւնները. նա դրանք տեսել է աւելի փոքր հա-

սակում⁵³, իսկ իր պատմութիւնը նա գրում էր ծերութեան ժամանակ. այդ պատճառով էլ գրում է. «Կարծեմ դտանի պահեալ ի նոյն քաղաքի»: Յամենայն դէպս, ինչ էլ լինեն այդ գրութիւնների բովանդակութիւնները, եւ ինչ աղբիւր էլ ունեցած լինեն, հենց Ուռհայում հնադոյն հայ թագաւորների մասին գրութիւններ պահուած լինելը անտեսելի տուեալ չէ խուրրո-հայ կապի տեսակէտով:

Փաւստոս Բիւզանդը Սուրբիների մայրաքաղաք Ուռհայի մասին պահել է հետեւեալ (գրաւոր կամ աւանդական՝ միեւնոյնն է) արժէքաւոր յիշողութիւնը. «Պապ թագաւորը. . . պատգամաւորներ էր ուղարկում յունաց թագաւորի մօտ, թէ Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաքները մերն են եղել, ետ տուր, Ուռհա քաղաքն էլ մեր նախնիքն են շինել. . .» (Փ. Բիւզանդ, Ե—Լբ): Պապ թագաւորի այս ելոյթը պատմական է թէ ոչ, միեւնոյնն է, դա նշանակում է, թէ Բիւզանդի ժամանակ դեռ մոռացուած չէր, որ Ուռհան կառուցողները (Սուրբիները) եղել են մեր նախնիները:

Այսպիսով՝ խուրրիները կապուած են հայութեան հետ՝ ոչ թէ միայն հայրենակցութեամբ եւ հնդեւրոպականութեան մի շարք գծերով, այլեւ պատմական մի շարք երեւոյթներով, կրօնով, Ֆիզիքական տիպով եւ ազգանունով:

Մեր Սորենացու պահած գրաւոր եւ աւանդական տեղեկութիւնները արհամարհանքով էին ընդունուած քննական պատմաբանների կողմից՝ դրանց համարելով պատմական իրողութիւններին չհամապատասխանող առասպելներ. սակայն, ինչպէս յայտնի է դառնում, եւ ինչպէս տեսանք մեր ուսումնասիրութեան մէջ մի շարք տեղեր, որ դրանք մէկ առ մէկ հաստատուում են, եւ երեւան է գալիս ո՛չ թէ միայն նրանց պատմական լինելը, այլեւ նրանց մեծ արժէքը որպէս մի շարք մութ հարցեր լուսարանող փաստական վկայութիւններ: Քննական պատմութեան սկզբնաւորութիւնից այս կողմ՝ գիտնականները կարեւորութիւն չէին տալիս այն վկայութեան, որ Արամանեակը սերուել է Հայկից, որ Արմալիրը շինողը եղել է Արամայիսը, որ Արմալիրում ընակուած էին Հարմայի սերունդները. մենք կարեւորութիւն չէինք տալիս, երբ Սորենացին գրում էր, որ Մանաւազը (Մենուան) Արամանեակի (արմէն ցեղի էպոնիմ) եղբայրն է, այսինքն՝ հայ է, որ Բազը (Բիաինայի էպոնիմ) Արամանեակի եղբորորդին է,

52) Dr. G. Contenau, նշուած գիրքը, էջ 60—62:

53) Խորենացիի որպէս ուսանող Ալեքսանդրիա գալիս՝ հանդիպել է Եդեսիա եւ ծանօթացել այդտեղի դիւանի պարունակութեան (տե՛ս Խորենացի, Գ—Լբ):

մենք ոչ մի արժէք չէինք տալիս Շարայի մասին պահուած սոսցուածքին («Դու Շարայի որդորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չունենք»)։ Մակայն մենք համոզուեցինք, որ այս բոլորը պատմական են եւ հաստատուած են անզամ սեպագիր արձանագրութիւններով։

Եւ ահա Խորենացին՝ պատմականութիւնն հաստատուած այդ արժէքաւոր եւ հաւաստի յիշատակութիւնների հետ վկայում է, որ Արմենակի եղբայրներն էին Խոռն ու Մանաւազը, որոնք իրենց սերունդներով մնում էին Հարբում։ Նա խօսելով Հայկի մասին գրում է. «Յետ որոյ կեցեալ եւ այլ եւս ամս ոչ սակաւ՝ մեռանի, յանձն առնելով գրովանդակ ազնն Արմենակայ որդւոյ իւրոյ։ Իսկ նորա թողեալ երկուս յեղբարց իւրոց զԽոռ եւ զՄանաւազ՝ ամենայն աղիւիւն իւրեանց ի կոչեցեալն Հարբ, եւ զորդի Մանաւազայ զԲազ» (Խոր. Ա.—Ժբ)։

Ո՞վ էր Խոռը, որ յիշուած է Մանաւազից (Մենուայից) եւ Բազից (Բիախնայի Հայոնիմ—ից) առաջ։ Ոչ մի կասկած, որ Խոռը անձնաւորումն է խուրրինների։ Խոռ անուան ռ ձայնը րր է, ուստի Խոռը պիտի լինի Խորը, որ հենց Խուրը(ի) անուան է։ Արդէն տեսանք, որ եզրագրացիները Պաղեստինն ու Սիրիան մի ժամանակ Hôr են անուանել՝ այդտեղի խուրրի բնակչութեան անունով։ Խորենացին միաժամանակ գրում է, թէ Խոռ—ից առաջ են եկել Խոռխոռունիները, այսինքն՝ Խոռխոռունի ցեղը խուրրիական ցեղ է։ Խոռխոռունի անունը (ինչպէս խօսել էինք սումերահայ կրկնական բառերի մասին) պիտի դասել հին եւ պրիմիտիւ յոդնակի ձեւ ունեցող անունների շարքը։ Խոռխոռ(ունի) անուան մէջ արմատի կրկնութիւնը ցոյց է տալիս, որ նրա եզակին խոռ է, իսկ յոդնակին՝ խոռխոռ, ուստի խոռխոռ նշանակում է «խոռեր», այսինքն «խուրրիններ»։ Խոռխոռունիների խուրրիական լինելը հաստատուած է Խորենացու բերած վկայումեամբ, որ Խոռխոռունիները սերած են Հայկի որդի Արամանակի եւ Մանաւազի եղբայր Խոռից («Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ զչէնս իւր. եւ ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց, արք քաջք եւ անուանիք, որպէս եւ որք առ մեք են այժմ երեւելիք»)՝⁵⁴. (հաւանարար Խորենացու ծնընդավայրը՝ Տարօնում գտնուող Խոր—եան գիւղը նոյնպէս պահուած է Խուրրի անունը)։

Մենք զիտենք, որ Մանաւազը Ուրարտուի մեծ արքայ Մե-

54) Խորենացի, Ա.—Ժբ։

նուան է, իսկ Բազը՝ Բիախնայի Հայոնիմը։ Այստեղ տարօրինակ չպիտի համարել, որ Մենուան համարուել է Բիախնայի Հայրը. դա բնական կ'երեւայ, եթէ աչքի առաջ բերենք Մենուայի կատարած մեծ գործը Բիախնայի հզորացման եւ ընդարձակման համար, մանաւանդ որ նա մեծ Արգիշտիի հայրն էլ էր։ Խորենացու մօտ տեսնում ենք, որ Խոռը յիշուած է Մանաւազից ու Բազից առաջ, այսինքն՝ Ուրարտուից առաջ, եւ դա միանգամայն համապատասխանում է պատմական իրականութեան՝ Խուրրիների եւ խուրրի թագաւորութեան Ուրարտուից առաջ եղած լինելուն։ Արամանակը անդրանիկ որդին է Հայկի եւ յիշուած է Խոռից ու Մանաւազից առաջ. սա նոյնպէս համապատասխանում է պատմական իրականութեան, որ Արամանի թագաւորութիւնը (որ յիշուած է անզամ Նարամ—Սինի կողմից) կար խուրրիների եւ ուրարտացիների թագաւորութիւններից առաջ։ Հետեւաբար մենք իրաւունք չունենք անտեսելու Խորենացու պահած այն մեծարժէք վկայութիւնը, որ Խոռն ու Մանաւազը եղբայրներ էին, այսինքն՝ խուրրիներն ու ուրարտացիները եղբայրներ, ցեղակիցներ էին։ Մենք իրաւունք չունենք կարեւորութիւն չտալ այն վկայութեան, որ Արամանակը, Խոռն ու Մանաւազը եղբայրներ, այսինքն ցեղակիցներ էին, որ Արամանակը, Խոռն ու Մանաւազը Հայկի որդիներն էին, Հայկի՝ Արայի սերունդներն էին։

Այստեղ արժէ վերադառնալ մեր ելակէտին՝ այն գրղապատճառին, որ մեզ ստիպեց խօսել Խուրրիների մասին, այսինքն՝ մեր արտայայտած այն մտքին, որ ուրարտացիների՝ հայութեան հետ ունեցած կապի պատկերացումը զգալի չափով կը հեշտանայ խուրրոհայ յարաբերութիւնների բացայայտումով։

Այժմ երբ որոշ չափով յայտնի ենք համարում այդ յարաբերութիւնները, կարո՞ղ ենք ասել, որ ուրարտերէնը հայերէն է, գուցէ աւելի հեռու գնանք եւ աչքի առաջ ունենայով ուրարտերէնի եւ խուրրիերէնի ընտանեկան յայտնի կապը, հարցնենք. կարո՞ղ ենք ասել, որ խուրրիերէնը հայերէն է. լեզուաբանութիւնը պատասխանում է. ո՛չ։

Ի հարկէ չենք կարող հաշուի չառնել, երբ լեզուաբանական ներկայ դիտութիւնն ասում է ոչ, բայց կարո՞ղ ենք առանց կասկածի ընդունել այդ ոչը, երբ այժմ գիտենք, որ ուրարտացիները հայեր էին, երբ այդքան տուեալներ, պատմական եւ գիցարանական երեւոյթներ, այդքան պարզ եւ անհերքելի վկայութիւններ իրար հետ են ցեմենտում հայերին, ուրարտացիներին եւ խուրրիներին։ Ի հարկէ

դժուար է հաշտուել: Այստեղ ինչ-որ անհամապատասխանութիւն, ինչ-որ խախտում կայ, կամ ինչ-որ շրացայայտուած օրէնքներ են դործում:

Ներկայ դիտութիւնն ասում է, թէ խուրրիերէնը ոչ թէ միայն հայերէնն է, այլ նոյնիսկ հնդեւրոպական է: Լեզուաբանները իրենց բացասական դիրքաւորման համար հիմք են համարում իրենց գտած այն երեւոյթները, որ խուրրիերէնը ազլուտինատիւ (կցական) լեզու է, իսկ հայերէնը (եւ հնդեւրոպականները)՝ թեքական: Մենք չենք կարող առարկել նրանց գտած այդ երեւոյթների դոյութեան դէմ: Բայց արդեօք նրանց այդ տուեալի բնոյթը եւ բացասական ուժը բաւարար է մերժելու խուրրիերէնի եւ հայերէնի կապը:

Լեզուաբանութիւնը իր լարորատորիայում քննել է խուրրիերէնի մեր էրայից 15 դար առաջուայ մի ստատիկ վիճակը: Նա չի դիտել նրան շարժման ժամանակ, նա հաշուի չի առել պատմական գործօնը: Հաշուի չի նստել խուրրիերէնի եւ հայերէնի միջեւ գործած քսան հարիւրամեակների հետ:

Մենք վերելում՝ երբորդ գլխում, սումերերէնի մասին մեր մտածումների շարադրման առթիւ ասել էինք, որ լեզուները ազգակցական խմբերի բաժանելիս (հնդեւրոպական, սեմական եւ այլն)՝ ազլուտինատիւ յատկութիւններ ունեցող լեզուները պէտք է ազգակցական առանձին խումբ համարել, որովհետեւ հնդեւրոպական եւ սեմական խմբերին պատկանող լեզուների մէջ եւս այս կամ այն չափով ազլուտինատիւ յատկութիւններ դրսեւորում են, եւ մենք գտնում ենք, որ հնդեւրոպական լեզուներն այս տեսակէտով բաւական մօտենում են սումերերէնին: Ուստի թեքական յատկութիւնները որոշ ուղղութեամբ դարձացման արդիւնք պիտի համարել, իսկ տարբերութիւնները վնահատելիս աչքի առաջ պիտի ունենալ այլ գործօնների ազդեցութեան հետ ժամանակի տարածութիւնը, որ բաժանում է համեմատուող լեզուները:

Պրոֆ. Էդ. Ադայեանն իր վերջին աշխատութեան մէջ ցոյց է տուել հայերէնի մէջ երկու-երեք սերունդների (ինչպէս եւ մի սերունդի) ժամանակամիջոցում տեղի ունեցած քերականական փոփոխութիւնները⁵⁵: Բերուած օրինակները հիանալի պատկերացում են

⁵⁵ Էդ. Ադայեան, «Ժամանակակից հայերէնի հոլովումը եւ խոսքի ուղղումը», Երևան, 1907, էջ 18—31:

տալիս, թէ ի՛նչ է նշանակում համեմատուող երկու լեզուների (մէկը մեռեալ, միւսը՝ կենդանի) միջեւ ընկած ժամանակամիջոցը:

Սուրբ լեզուով (ըստ խեթերի՝ խուրիլի) գրուած արձանագրութիւնների եւ ուրարտական լեզուով գրուած արձանագրութիւնների միջեւ ընկած ժամանակահատուածը աւելի կարճ է, քան ուրարտական լեզուով գրուած արձանագրութիւնների եւ Մեսրոպ Մաշտոցի (հայերէնով գրուած մեզ յայտնի առաջին գրութիւնների) միջեւ ընկած ժամանակահատուածը: Լեզուաբան գիտնականներն ասում են, թէ խուրրիերէնը ազլուտինատիւ լեզու է, ուրարտերէնի համար ասում են (Սէյս եւ ուրիշներ), թէ կիսով չափ ազլուտինատիւ եւ կիսով չափ թեքական է⁵⁶, իսկ հայերէնը՝ թեքական:

Ինչպէս ասել ենք ուրարտական լեզուի մասին խօսուած բաժնում՝ հիմքով առաւելապէս կցական լեզու կրող Նաիրեան Հար (Սարրի)–հայերը Սուրբի–միտանեան ժամանակներին արդէն, ցեղակից արմէնների հետ ունեցած խնամիական շփումներով ու համակցութիւններով, մտել էին «հնդեւրոպականացման» պրոցեսի մէջ՝ իրենց լեզուով ընդունած լինելով հնդեւրոպական որոշ տարրեր, իսկ ուրարտական լեզուն, ինչպէս ասել ենք, հանդիսացել է այդ պրոցեսի արդէն աւելի առաջացած փուլը՝ գոյացրած լինելով կիսով չափ կցական եւ կիսով չափ թեքական յատկութիւններ եւ աւելի զգալի հնդեւրոպականութիւն: Այս վերջինն էլ, ի հարկէ, դեռ մեսրոպատա հայերէնը չէր, որի մէջ հնդեւրոպական կառուցուածքը հասել է վերջնական յաղթանակի՝ անցած լինելով նշուած պրոցեսի ուղիով մի քանի նոր վերափոխիչ դարեր:

3. — ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՒՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Այս դարաշրջանի սկզբներից ի վեր, յատկապէս վերջին 2–3 տասնամեակների ընթացքում, հայ ժողովրդի կազմաւորման մասին (այս արտայայտութիւնը պատմագրութեան մէջ մտնելուց յետոյ) շատ աշխատութիւններ երեւացին: Այդ աշխատութիւնների մեծամասնութեան մէջ, ժամանակագրականօրէն դատելով, մտքերը ձե-

⁵⁶ A. H. Sayce, «The Decipherment of the Vanic Inscriptions», p. 308: Ուրարտերէնի համար գրում է. «The language of the inscriptions is of the semi-agglutinative, semi-inflectional character»:

ւակերպուեցին իրենց ժամանակների քննական պատմութեան ստացած մակարդակի եւ կուտակած տուեալների համաձայն: Թէեւ նրանց մէջ կային սկզբունքային տարբերութիւններ, սակայն ընդհանրապէս մտքերի վրայ իշխում էր (հակառակ մեր մեծարժեք մատենագրութեամբ պահուած աւանդական վստահելի վկայութիւններին, որ Արմէնը սերած է Հայկից) քննական պատմութեան սկզբնաւորութեան հետ ծնունդ առած եւ տարածուած այն տեսակէտը, թէ իբր հայ ժողովուրդը հիմնականում կազմուած է էթնիկապէս իրարից բոլորովին տարբեր երկու ցեղերից կամ ցեղախմբերից՝ արմէններից եւ հայերից, եւ թէ արմէնները գալով Բաղկաններից միացան հայերի հետ (վերջին 2-3 տասնամեակներում ասում են Պայասացիները հետ) կազմելու համար հայ ժողովուրդը, թէեւ հնարաւոր չէր ցոյց տալ, թէ ո՞ւր, ե՞րբ եւ ինչպէ՞ս կատարուեց այդ միացումը:

Հայ ժողովրդի կազմաւորման հարցում ի հարկէ շատ կարեւոր էր հայկական պետութեան առաջացման դրժօնը: Այդ պատճառով էլ հայ ժողովրդի կազմաւորումը պատմականօրէն կապուած էր առաջին հայկական պետութեան առաջացման հետ, իսկ այդ պետութիւնն էլ սկզբներում համարուում էր Արտաշէսեանների հայկական պետութիւնը, իսկ վերջերս Երուանդունիների հայկական պետութիւնը՝ որպէս սկզբնաւորութիւն խորութեան մէջ սահման ընդունելով Ուրարտուի անկման ժամանակաշրջանը: Ինչ խօսք, ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ Ուրարտուն համարուում էր ոչ-հայկական:

Սակայն եւ այնպէս կամաց-կամաց այստեղ եւ այնտեղ ձայներ էին բարձրանում, թէ Ուրարտուն ինչ-որ չափով կամ ինչ-որ մի ձևով կապուած պէտք է լինի հայութեան հետ, թէ կարող է հայերի մուտքը Ուրարտու կատարուած լինել նրա անկումից առաջ՝ վկայակոչելով էրիմենա անուան դոյութիւնը: Այսուհանդերձ իշխանութիւնը ուրարտական դինաստիայից Երուանդունիներին անցնելը բացատրում էր հայերի դրսից ներս մտած լինելու տեսակէտով:

Հայերի միալեզու դառնալու հարցում էլ բաւական մաշուեց Ստրաբոնի անունը (63 մ. թ. ա. — 20 մ. թ.): Այդ մատենագիրը, ի հարկէ, շատ ճիշդ եւ արժեքաւոր տեղեկութիւն է տուել զբեղով, որ հայերը միալեզու են իր ժամանակներում, բայց չգիտես արդեօք ո՞վ է ասել, թէ միալեզու չէին դրանից, ասենք, 500 տարի առաջ կամ աւելի վաղ:

Զարմանալին այն է, որ իրադրութիւնը ներկայացնում են այնպէս իբր թէ ուրարտական անկախ ու հզօր պետութիւնը անըն-

դունակ էր եւ չէր կարող գլխաւորել ժողովրդի կազմաւորման պրոցեսը, իսկ Ուրարտուից յետոյ Երուանդունիների պետութիւնը, որ որոշ չափով դառնում էր նախապէս մարերի եւ ապա աքեմենեանների գերիշխանութեան տակ, ունէր խոշոր առաւելութիւններ օգտուելու տիրողի եւ նուաճողի բոլոր արտօնութիւններից, ուստի կարողացաւ միաւորել Հայկական լեռնաշխարհի ցեղերին եւ ստեղծել պայմաններ մի միասնական լեզուով (հայերէնով) խօսող ժողովրդի կազմաւորման համար:

Հեթանոսական հին ժամանակների սոցիալ-մշակութային պրոցեսները մեր ժամանակների արշինով չափելը իրականութիւնից հեռանալ է նշանակում: Հաղորդակցութիւնների այդպիսի պրիմիտիւ պայմաններում, երբ ցեղերն իրարից բաժանուած էին անանցանելի լեռնաշղթաներով եւ ձորերով, երբ ոչ տպագրութիւն եւ ոչ էլ մասսայական դրականութիւն կար, դժուար է երեւակայել, որ տարբեր լեզու խօսող եւ էթնիկապէս տարբեր ծագում ունեցող ցեղերին կարելի էր հրաման արձակելով մի քանի հարիւր տարուայ մէջ միալեզու դարձնել:

Արեւմտեան Հայաստանը Ուրարտուի անկման եւ Ստրաբոնի միջեւ ընկած ժամանակաշրջանից աւելի երկար տեւողութեամբ մնաց թուրքական տիրապետութեան տակ, բայց հայկական նահանգների հայերին չկարողացան մոռացնել հայերէնը եւ դարձնել համատարած թուրքախօս, մինչդեռ թուրքերը Երուանդունիների հետ համեմատած իշխողի աւելի մեծ ու աւելի դաժան արտօնութիւններ էին վայելում:

Ժամանակն է, որ վերանայուի այն ոչ ճիշդ եւ շինծու տեսակէտը, որ իբր թէ Հայաստանի ժողովուրդները Ստրաբոնի ժամանակ միալեզու (համատարած հայախօս) դարձան այն ժամանակ, երբ խայասացիներն ու արմէնները միացան, միացեալ (արմենո-խայասական) ուժերով Ուրարտու ներխուժեցին (կամ հրաշքով խաղաղ ներթափանցեցին) եւ իշխանութիւնը ձեռք ձգելուց յետոյ, Ուրարտուի եւ Հայկական լեռնաշխարհի միւս մասերի բազմաթիւ օտար ցեղերին կարճ ժամանակում իրենց մէջ ձուլեցին: Հայկական լեռնաշխարհի ժողովուրդների՝ նշուած ժամանակներում միալեզու լինելը պէտք է բացատրել Ուրարտուի անկումից առաջ Հայկական լեռնաշխարհում նախնական-արմենական արդէն հայախօս ցեղերի առկայութեամբ, եւ նրանց՝ երկրում ճնշել մեծամասնութիւն կազմած լինելու իրողութեամբ:

Միալեզու խօսքն էլ, տուեալ հարցի համար ընդհանուր, ա-

ուսմանը և պայմանական իմաստ ունեցող արտայայտութիւն է :

Եթէ դա նշանակում է, որ տիրող ցեղն օգտուելով իր իշխողի արտօնութիւններէն՝ իր դերը խանութեան տակ գտնուող, բայց (ծագումով) տարբեր լեզու և ինքնուրոյն կեանք ու հող ունեցող ցեղերին ստիպեց սովորել ու խօսել իր լեզուով և այդպիսով առաջ եկաւ միալեզու ժողովուրդ, ապա դժուար թէ դա համապատասխանի Հայաստանի հին ժամանակների իրականութեան :

Ի հարկէ մենք չենք ժխտում, որ գոյութիւն ունեցել է ձուլում, և բնական է, որ իշխող ցեղը պարտուած ցեղին իր հողից տեղահան անելով և ցրուելով կամ նրանից մի խումբ գերիներ տանելով և իր ցեղի մարդկանց միջնալայրում պահելով՝ կարող էր նրանց սովորեցնել խօսելու նոր լեզուով, դա քչի՞ շատի մէջ հալուելու բնական երեւոյթն է, բայց մի ցեղ, որ ապրում է իր հողում, իր ներքին իշխանութեան տակ և ինքնուրոյն տնտեսութեամբ, ապա դժուար թէ վերին հրամանով կամ ճնշման տակ փոխէր իր լեզուն 3-4 դարերի ընթացքում :

Մենք գիտենք, որ արեւելեան տիպի պետութիւնները, ինչպէս Բաբելոնը, Ասորեստանը, Մարերը և Աքեմենեանները, այնպէս էլ մեր Ուրարտուն ու Արտաշեսեանները ընդհանրապէս իրենց նուաճած երկրի ինքնուրույնութիւնը, անգամ ներքին դինաստիան չէին վերացնում, միայն նրանց պահում էին վասալական կապակցութեան մէջ՝ նրանցից տարեկան տուրք և պատերազմի դէպքում զօրք առնելով : Այդպիսի պայմաններում նուաճուած ցեղերի լեզուն փոխելը այդքան էլ հեշտ չի պատկերացում :

Եթէ միալեզու ասելով պիտի հասկանալ մի վիճակ, ուր բոլորն իրար հասկանում են, ապա այդ բանը Հայաստանում բնաւ էլ չի եղել : Անգամ մեր ժամանակներում այդպէս չէր : Մի՞թէ (անգամ) Առաջնորդ կարող էր հեշտութեամբ կամ առանց թարգմանի հասկանալ Այուլիսի կամ Կարճեանի հայերէնով խօսող մարդկանց. կամ պրոֆ. Ջահուկեանը առանց մտածելու կամ առանց թարգմանի կարող էր զրուցել հայերէն խօսող Սուեդացու հետ (խօսքը չի վերաբերում մեր օրերի Սուեդացուն, որը Սուեդիայից դուրս գալով սովորել է ընդհանուր աշխարհաբարը) : Մենք ունենք այնպիսի բարբառներ, որոնցից մէկը միւսին չինարէն կր թուար : Մի՞թէ կարելի է խօսել այդ իմաստով միալեզու լինելու մասին : Իսկ ինչ վերաբերում է բարբառներին, ապա նրանցից շատերը նոյնքան հին են, որքան գրա-

բարը և գալիս են հեթանոսական ժամանակներից : Գոյութիւն ունեցած պիտի լինեն և այլ բարբառներ, որոնք չեն հասել մեզ :

Իսկ եթէ միալեզու ասելով պիտի հասկանալ այն, որ բոլոր խօսուածքների մէջ նստած է հայերէնը (թէ և մի շրջանի մարդիկ կարող էին լաւ հասկանալ միւսի խօսուածքը), ապա այդ վիճակը գոյութիւն պիտի ունեցած լինէր ոչ թէ միայն Ստրաբոնի և Երուանդունիների ժամանակներին, այլ Ուրարտուի հայկական պետութեան ժամանակ երկրի մեծ մասում :

Միանգամ ընդմիջտ պիտի ընդունել, որ հենց մեր ուրարտական պետութեան ժամանակ կատարուեց հայ ժողովրդի կազմաւորումը :

Ասորեստանի հզօր կայսրութեան դէպի Հայկական լեռնաշխարհ ծաւալումը կանգնեցնող մեր հզօր Ուրարտուն էր, որ ստեղծուել էր Նաիրեան ցեղերի միաւորմամբ : Նաիրեան ցեղերի այս մեծ միութեան մէջ կենտրոնական կորիզն էին, մեր կարծիքով, Ռչտունիներն ու Արժրունիները, որոնց ջանքերով էլ իրականացաւ Նաիրեան ցեղերի միութիւնը : Առաջին հերթին միացող Նաիրեան ցեղերը նրանք էին, որոնք գտնուում էին Ռչտունիների շրջապատում : Միաւորման այդ առաջին փուլը իրականութիւն էր արդէն Արամէի ժամանակ : Միաւորման այս առաջին փուլի պրոցեսը Արամէի՞, թէ նրանից առաջ էր սկսել՝ մեզ համար տակաւին մութ է (հաւանական է վերամիաւորման ջանքերը սկսել են հենց Խուրբի-միտանիների անկումից յետոյ), բայց պարզ է, որ այն արդէն Արամէի ժամանակներին Ասորեստանին անհանդստացնելու շափ ուժեղացել էր : Երկրորդ փուլը՝ Նաիրեան միւս հեռուոր ցեղերին միացնելով հայկական մեծ, հզօր և անխոցելի պետութեան կազմաւորումն էր Հայկական լեռնաշխարհում : Եւ մենք տեսանք, թէ ուրարտական արքաները ինչպիսի ճիզբով, ռազմական ինչպիսի (չառ անգամ) խիստ և արիւնալի միջոցներով կարողացան ընկճել իրենց ինքնուրոյնութիւնը պահպանել ցանկացող հայկական կենտրոնախոյս ցեղ-երկրներին՝ էրիախիին, էրիկուախիին, Արելիախիին, Ապաէնիին, ուժեղ Գիաուխիին, մայր Արմէին և միւսներին :

Մեծ, միացեալ ու հզօր պետութիւն ստեղծելու ի խնդիր բոլոր դիմադրութիւնները պատժելու ու տկարացնելու և երկրում լայն շինարարութիւն ծաւալելու համար մեծ գերեզմարումներ էին կատարում և տարուածներն էլ ստրկացում էին :

Մենք տեսանք, թէ երկարատեւ ինչ ճիզբ պահանջեցին միայն

էրիախի կենտրոնախոյս զիմադրութիւններն ընկճելու, այն կենտրոնական Բիախնային միացնելու համար: Մեր կարծիքով հենց այս ժամանակներին էլ մեծ առաջընթաց կատարուեց հայ ժողովրդի կազմաւորման զործում:

Բարեբախտաբար պահպանուել ու մեզ հասել է մագաղաթի վրայ Հայաստանի նախարարների գահերի ցուցակը՝ «գահնամակը», որը պարունակում է Հայաստանի բոլոր նախարարութիւնները՝ հայոց արքունիքում իրենց գահերի ունեցած զիրքերի հերթականութեամբ (տե՛ս Սորենացի, Թարգմ. Մայլատեանի, 1940, ծանօթագրութիւնների մէջ, էջ 337): Ահա այդ գահնամակը, որը ցուցակագրուած է Մեծն Մահակ կաթողիկոսի օրով:

Առաջին խխանն հայոց եւ մաղխազն

- | | |
|-----------------------|---------------------------|
| ա. — Սիւնեաց տէր | իզ. — Գաբեղենից տէր |
| բ. — Ասպետն | իւ. — Արեղենից տէր |
| գ. — Արծրունեաց տէր | իբ. — Սիւնեաց երկրորդն |
| դ. — Մամիկոնեից տէր | իք. — Արծրունեաց երկրորդն |
| ե. — Շահապն Ծոփաց տէր | լ. — Արծրունեաց երրորդն |
| զ. — Մոկաց տէր | լա. — Մամիկոնեից երկրորդն |
| է. — Ռշտունեաց տէր | լբ. — Ռոփսեանն |
| ը. — Վահունեաց տէր | լգ. — Աշոցեանն |
| ր. — Կասպեից տէր | լդ. — Դիմաֆսեանն |
| ժ. — Անձաւացեաց տէր | լե. — Բուխա Դիմաֆսեանն |
| ժա. — Ապահունեաց տէր | լզ. — Այդ Արեղեանն |
| ժբ. — Կամսարականն | լէ. — Այդ Դիմաֆսեանն |
| ժգ. — Այդ Ապահունի | լը. — Պալունի |
| ժդ. — Վանանդացին | լթ. — Առաւելեանն |
| ժե. — Ամատունի տէր | խ. — Աշահմարեանն |
| ժզ. — Գողթան տէր | խա. — Համբուժեանն |
| ժէ. — Գնունեաց տէր | խբ. — Վարասպակեանն |
| ժը. — Այդ Անձաւացի | խգ. — Զիւնականն |
| ժր. — Տայոց | խդ. — Ակեացին |
| ի. — Բասեռոյ Դատաւորն | խե. — Զարեհաւանեանն |
| իա. — Գնքունեաց տէր | խզ. — Ընծայեցին |
| իբ. — Վարձաւունի | խէ. — Մանդակունի |
| իգ. — Գարդմանայ տէր | խը. — Սղկունի |
| իե. — Սահարունի | խր. — Տայգրեանն |

- | | |
|-------------------------|--------------------------|
| ծ. — Երմանքունի | կա. — Որսապետն արքունի |
| ժա. — Սպանդունի | կբ. — Արտաշէսեանն |
| ժբ. — Առաւելեանն | կգ. — Վանանդացին երկրորդ |
| ժգ. — Տրունի | կդ. — Յուլն |
| ժդ. — Մումքերացին | կե. — Վիժանու(նի) |
| ժե. — Հաւնունի | կզ. — Աֆաժու |
| ժզ. — Բժնունի | կէ. — Շիրակայ Դիմաֆսեան |
| ժէ. — Քաջբերունի | կը. — Գագրիկեանն |
| ժը. — Մեհնունի | կր. — Մուրացեան տ(էր) |
| ժր. — Նախների | հ. — Վագրասպու(նի) |
| կ. — Քաղաքապետն արքունի | |

Յուցակում կան ունուններ, որոնք էթնիկ նշանակութիւն չունեն, օրինակ՝ որսապետն արքունի, քաղաքապետն արքունի, Արտաշէսեանն, Անձաւացեաց տէր եւ ուրիշներ: Կան նաեւ նախարարական այնպիսի անուններ, որոնց Փէոզալ գերդաստանների նախահայրերը կարող էին, ինչպէս ասուած է, եկած լինել զրսից, կամ պաշտօնի բերումով ու կատարած կարելուք ծառայութեան զիմաց որպէս վարձատրութիւն նշանակուած լինել արքայի կողմից: Օրինակ՝ եթէ Մամիկոնեանների նախահայրը հայ չէր (թէեւ թիւրիմացութեան կամ թշնամանքի վրայ հիմնուած աւանդութիւն պիտի համարել այդ), ապա նրանց նախարարութեան երկիր Տարօնը՝ Ար-խի երկիրը (ինչպէս տեսանք Գ. զլխում) բուն Ար-եան՝ Արայեան (հարազատ հայկական) էր: Սակայն նախարարութիւնների կարելուք մասն ունի էթնիկական ծագում: Թէեւ սրանց մէջ կան զրսից Հայաստան թափանցած կամ բերուած ոչ-հայկական (հայացած, բայց ծագումով դեռ յայտնի) ցեղերից ու ցեղային հասուածներից ժառանգութիւն մնացած նախարարութիւններ, օրինակ՝ Մարգեր, Մուրացեաններ (բստ Սորենացու՝ մարեր), Գարգմաններ (աղուաններ) եւ ուրիշներ, սակայն նախարարութիւնների մեծ ու կարելուք մասը ժառանգութիւն էր մնացել Հայաստանի պատմական յայտնի ցեղերից, օրինակ՝ Ռըշտունիք, Մոկք, Ապահունիք, Արեղեանք, Տայք եւ այլն, որոնք (թէեւ տեղի ունեցած պիտի լինի իրար մէջ որոշ ներթափանցումներ) աւանդական սովորութեան կարգով դեռ պահպանում էին իրենց՝ որպէս առանձին ցեղային միաւոր ունեցած ինքնուրոյնութիւնները՝ շատերն ի հարկէ իրենց առանձին բարբառներով հանդերձ: Ի հարկէ սրանցից զատ Հայաստանում կային եւ այլ ցեղեր, որոնց անունները չեն մտել այստեղ որպէս նախարարութիւններ, սակայն դրանք մտած կը լինեն

մեծ նախարարութիւնները կազմում: Յատկապէս նախընտան ընտանիքները ցեղեր մտած պիտի լինեն Վանայ լճի շուրջ գտնուող նախընտան մեծ նախարարութիւնները մէջ, գրանցելը են Ռշտունիները, Արծրունիները, Վահունիները, Մամիկոնեանները, Մոկքի, Բղնունիները, Ապահունիները եւ Խոսրոսունիները նախարարութիւնները: Այսպիսով կարող ենք ասել, որ Հայաստանի կարեւոր ու գլխաւոր ցեղերը վերապրել են որպէս նախարարութիւններ եւ իրենց կարեւորութեան համապատասխան հերթական դերք գրաւել արքունիքում՝ նրանց համար յատկացուած գահերի շարքում եւ այդ շարքով էլ մտել գահնամակում:

Ուրարտական պետութեան հարցում հայամերձ ուղղութեան ջատագովները չեն ընդունում Ուրարտուի հիմնական ժողովրդի հայկական լինելը: Ասում են ուրարտացիները հայեր չէին: Արդ՝ ճիշդ կը լինէ՞ր ընդունել, որ հայկական թագաւորութեան տակ հայ արքունիքում, իրենց գրաւած գահերի դերքով, հայկական ցեղերից ժառանգութիւն եղող նախարարութիւնները գրուէին յետին շարքում, իսկ ոչ-հայկականները առաջին տեղերում: Մինչդեռ ահա տեսնում ենք, որ գահնամակի 70 գահերի մէջ առաջին տեղերում են գտնուում Խոսրոսունիները (Մաղխաղ), Արծրունիները, Մամիկոնեանները, Մոկքի, Մոկքի, Ռշտունիները, Վահունիները, Ապահունիները նախարարութիւնները. իսկ կասկած չկայ, որ Ուրարտական հիմնական ժողովուրդը գտնուում էր հենց Ռշտունիները, Արծրունիները, Մոկքի, Մամիկոնեանները (Տարօնի), Խոսրոսունիները եւ Ապահունիները երկրներում, որոնք գտնուում են առաջին տեղերում:

Ասում են հայերը Ուրարտուի անկումից յետոյ եկան ու գրաւեցին իշխանութիւնը, կամ գալով գրսից՝ մասնակցեցին Ուրարտուի կործանման գործին: Ուրեմն հայերը, որ ըստ նրանց եկել են դրսից, մի առանձին հզօր տարր էին: Արդ՝ կարո՞ղ են ցոյց տալ, թէ գահնամակի (ժամանակին Ուրարտուի մէջ եղած ու յիշուածներից դուրս) ո՞ր նախարարական տունը կամ տներն էին ներկայացնում նրանց: Մի՞թէ «իրենց լեզուն բոլորին պարտադրած այդ հզօր հայերը» իրենց թագաւորութեան տակ եւ իրենց արքայի արքունիքում կարող էին գտնուած լինել նախարարական գահերի յետին տեղերում: Կամ բնաւ յիշուած չլինել, երբ պակաս արժէք ունեցողները յիշուել են:

Ուրարտական պետութեան ազգային բնորոշման հայամերձ դպրոցի ներկայացուցիչներից ոմանք էլ, Ուրարտուի հայկական լինելը ցոյց տուողները փաստերի ճշման տակ (փաստերի հետ հակա-

սութեան մէջ ընկնելուց խուսափելու եւ ետ դարձի բայ դուռ թողնելու համար), մանկուրում են, առանց իրենց կողմից որեւէ փաստ նշելու, յայտարարելով, թէ Ուրարտուի ժամանակ հայերը ապրում էին ուրարտացիների հետ կողք-կողքի: Ի հարկէ սա առաջուայ տեսակէտի հետ համեմատած մի քայլ առաջ է դէպի ճշմարտութիւն, բայց իրականութիւնից դեռ բաւական հեռու է:

Ուրեմն, ըստ նրանց, դուրս է գալիս, որ «Ուրարտուի տապալմանը մասնակցելուց կարճ ժամանակ յետոյ» բոլորին իր մէջ ձուլելու, իր լեզուն բոլորին պարտադրելու չափ հզօր ուժ ներկայացնող այդ հայերը առանց միաս հասցնելու եւ առանց դիմադրութեան հանդիպելու (ինչ հրաշք)՝ խաղաղ կամ աննշմարելի ձեւով մտել էին Ուրարտու եւ ուրարտական ստրկատիրական դաժան իշխանութեան տակ հրաշքով ապրել էին ուրարտացիների կողքում ազատութեան ու խաղաղութեան մէջ որպէս բարի ու անվնաս կենակիցներ, կամ այդ հզօր հայերը մտել էին ուրարտացիների ծառայութեան մէջ որպէս հլու-հնազանդ, աննշան ու խեղճ հպատակներ: Արդեօք հաւատում են իրենց ասածին ու դերքաւորման: Արդեօք կարո՞ղ են ասել, թէ (եթէ իշխող ուրարտացիները հայեր չէին) Ուրարտուի սահմանների մէջ ապրող եւ ուրարտական արձանագրութիւնների մէջ յիշուած բազմաթիւ ցեղերի մէջ (Արմէից դուրս) ո՞ր ցեղերն էին այդ հայերը, որ ապրում էին ուրարտացիների հետ կողք-կողքի: Ի հարկէ կը դժուարանան, քանի որ Ուրարտուի հիմքում չեն կարողանում տեսնել հայութիւնը:

Այս բոլոր հակասութիւնները ի հարկէ ծագում են իրենց՝ արմէնների գաղթի տեսութիւնից եւ հայ ժողովրդի կազմաւորման մասին իրենց կազմած համապատասխան հինցած վարկածից. մի սխալ ու իր դարն ապրած տեսութիւն ու վարկած, որոնք խանդարում են նրանց՝ Ուրարտուի մէջ տեսնելու իշխող հայերին:

Հենց այստեղ էլ պիտի շեշտել, թէ ի՞նչ ահաւոր եւ վնասակար սխալ են գործում այն «հայ» դիտնականները, որոնք դեռ յամառօրէն կառչում են արմէնների՝ Բալիկանիցից գաղթած լինելու մասին թիւրիմացութեամբ եւ արհեստականօրէն կազմուած, կրքոտութեամբ պաշտպանուող եւ հայ ժողովրդի պատմութիւնը խեղաթիւրող ու փշաջնող տեսակէտներից, եւ դրա համար էլ դառնում են Ուրարտուի հակահայկական բնորոշման ջատագովներ՝ դժուարանալով ընդունել հայ ժողովրդի կազմաւորման գործում Ուրարտուի խաղացած կարեւոր ու վճռական դերը:

Փաստացի ոչ մի հիմք չկայ արմէններին խառնելու «Մովի ժողովուրդներ»-ին եւ դրանով էլ թրակա-փոխուղական գաղթին: Արմէնները՝ Հայկական լեռնաշխարհի ծնունդ մարդարանական կլոր գանկ՝ արմէնոյիզ (brachycephal) տիպը պահպանել են հարազատօրէն, մինչդեռ «Մովի ժողովուրդներ» թրակա-փոխուղական ցեղերը պատկանում էին երկարագանկ (dolichocephal) տիպին:

Արմէնների՝ Բաղկաններից եկած լինելու տեսութիւնը ծագել էր անցեալ դարաշրջանին համեմատական լեզուաբանութեան սկզբնաւորմամբ՝ յնուելով հայերէնի հնդեւրոպական լեզու լինելու եւ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքն էլ Եւրոպան համարելու (խախտ տեսակէտի) վրայ՝ ուժ ստանալով նաեւ Հոմերի յիշած արիւմ ցեղանունն եւ Թեսալիայում Արմեկիոն անունով քաղաքի գոյութեան մասին Ստրաբոնի յայտնած տուեալների միակողմանի եւ սխալ մեկնարանութիւններից:

Միանգամայն սխալ է հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի տեղագրման յեղեղուկ տեսակէտներից հանել հայ ժողովրդի ծագման ու կազմաւորման մասին իրականութիւնը խեղաթիւրող այդպիսի ծանրակշիռ հետեւութիւններ:

Մի ժամանակ այդ հայրենիքը տեղադրում էին Միջին-Ասիայում, յետոյ բերեցին Սեւ ծովի հիւսիսային շրջանները եւ ապա տարան Եւրոպայի Բալտիկեան շրջանները, իսկ այժմ էլ ուժեղ տուեալներ են առաջացել (եւ փորձեր են արւում) այդ հայրենիքը (եթէ գոյութիւն ունեցել է) տեղադրելու Փոքր Ասիայում Հայկական լեռնաշխարհի արեւմտեան շրջանների մօտ, մի բան, որը հիմնովին փուլ է տալիս գաղթի համար հնդեւրոպականութեան վրայ յենուած պատճառարանութիւնների խախտ շէնքը:

Ինչ վերաբերում է Հոմերի յիշած արիւմներին եւ Թեսալիայի Արմեկիոն քաղաքին, ապա այս աշխատութեան «Ար-ի արտացոլումը եւ արբի արտագաղթը» վերնագրուած (վերջին) գլխում մանրամասն տուեալներով ցոյց կը տրուի Հոմերից էլ առաջ, Սուրբի-միտանիների ժամանակ, արիւմների՝ Աղձնիքում եւ Ասորիքում գտնուած լինելը, եւ Թեսալիայի Արմեկիոն քաղաքի՝ արմենական հին գաղթօջախներից մէկն եղած լինելը:

Գաղթի տեսութեան անհիմն վարկածը ծառայում է լոկ ջուր լցնելու հայ ժողովրդի ծագումն ու պատմութիւնը խեղաթիւրող եւ նրա պետականութիւնը ժխտող թուրք պատմաբանների ջրաղացին,

պատմաբաններ, որոնք աշխատում են իրենց վանտալական ցեղին վերադրել 7 հազարամեայ քաղաքակրթութիւն եւ աշխարհի քաղաքակրթութեան հիմնադիրների դեր: Զգտելով ծածկել, որ իրենց պալուստով տարածեցին լոկ աւեր ու մոխիր, որ արիւնով ու թալանով գրաւած երկրներում իրենց աւերիչ գործունէութեամբ դարերով արգելք հանդիսացան իրենցից շատ աւելի զարգացած բնիկների մշակութային վերելքին, ջանք չեն խնայում իրենց վերագրելու երկրի բուն բնիկներից մնացած հազարամեակների նիւթական ու հողեւոր մշակոյթի հետքերը, նրանց թոււմ եւ հայ ժողովրդի մշակութային փառաւոր ժառանգութիւնը: Արմէնների Բաղկաններից գաղթած լինելու սխալ տեսութիւնը նենդօրէն օգտագործւում է թուրքերի կողմից սակու, որ «հայերը եղել են մի քոչուր ցեղ, որը ինչպէս եկել է դրսից, այնպէս էլ դնացել՝ մի ժամանակ անհանգստացնելուց յետոյ տեղաբնիկ ազնիւ եւ քաղաքակրթ թուրք ժողովրդին»:

Ինչպէս ցոյց տրուեց այս աշխատութեան նախորդ գլուխներում՝ հնադիտական, պատմագիտական, վիճազրական-լեզուաբանական, աշխարհագրական եւ մատենագրական բազմաթիւ տուեալներ աներկրայօրէն խօսում են այն մասին, որ գործող հրաբուխների Հայկական լեռնաշխարհում ծնունդ առած արեւ-կրակի աստուած Ար-Արայի պաշտամունքի միջավայրում, նախնադարեան համայնական հասարակութեան տոհմական տարբերից էթնիկապէս բիւրեղանալով առաջ է եկել գլխաւորապէս արեւ-կրակ պաշտող (Արապաշտ) մի մեծ ցեղախումբ, որն իրեն Ար(Արա) աստծոյ սերունդ է համարել (թէեւ ունեցել է եւ այլ հաւատալիքներ):

Առաջաւոր Ասիայի հնագիտական, սեպագրական եւ տոպոնիմական տուեալները հաստատում են, որ գլխաւորապէս արեւ-կրակ պաշտող այս ցեղախմբի արեւմտեան ճիւղի ցեղերը արմա, արմէ («Ար-ի սերունդ») կամ արմանի («Արորդիներ») անուան տակ գոյութիւն են ունեցել Գ. հազարամեակում (մ. թ. ա.) Աղձնիքում՝ Արմէ-Շուպրիայում: Իսկ սումերական լեզուի տուեալները հաստատում են նրանց գոյութիւնը Հայկական լեռնաշխարհում անգամ աւելի կանուխ ժամանակներում:

Սրանք խուրբի-հայական ցեղախմբի այն հատուածներն էին, որոնք հայկական լեռնաշխարհի հարաւում ու արեւմուտքում, սուժերերէնը որպէս միջազգային դիպլոմատիկական լեզու օգտագործուած ժամանակներին, հարեան օտարների կողմից կոչուել էին

արմա, ուրմէ, արմէ կամ արմա-նի, ուրմէ-[ու]սի]-նի, արմէ-նի (> արմէն) :

Արմէններն իրենց ծաղման ժամանակներից տարածուած են եղել յատկապէս Եփրատից արեւմուտք: Նրանց կանխազոյն բնակավայրերից են եղել Աղձնիքը, Մոփքը, Կոմաղենէն, յատկապէս այդ հին ժամանակներում դործող հրարուխի Արդէոս (այժմ՝ էրջրաս) լեռան շրջապատը, Արմենիոն լեռների շրջանը, Արմենիոնից բխող Ալխս(Ար-խս) գետի աւազանը, Թողարման ու հարեւան վայրերը: Հենց այս շրջանում էլ արմէն ցեղերը հանդիսացել են մի մասը Փոքր-ասիական այն տարրերի, որոնց միջնավայրում էլ բիւրեղացել է հնդեւրոպական մայր լեզուն Գ հազարամեակին (մ. թ. ա.):

Հայկական լեռնաշխարհի վերոյիշեալ արեւ-կրակ պաշտող մեծ ցեղախմբի արեւելեան ճիւղի ցեղերը, որպէս իրենց արեւ-կրակի Ար(Արա) աստծոյ ցեղեր՝ Ար > հար (հետագայում > հայ) անուան տակ տարածուած են եղել յատկապէս Եփրատից արեւելք: Նրանց կանխազոյն (ծաղման) բնակավայրերից են եղել մասնաւորապէս Արածամիի աւազանը, Հարքը, Խոնխոռուսիքը, Մենուայի յիշած Ar-hi երկիրը (Տարօնը), Աշուր-Նազիր-Պալ Բ-ի յիշած Aru-ni, Uri-ni լեռներն ու Aru-ra և Aru-bé քաղաքները Տուսմէ երկրում, Արիգա (Երիգա-Երզնջան), Ուրա, Անիա, Անիպա քաղաքները (Եկեղեաց դաւառ), Տիգրաթ-Պալասար Ա-ի յիշած բնդարձակ Haria երկիրը եւ Ուրուարի լեռները Վանայ լճից հարաւ, Առ-Բեր-ամին («Ար-ցեղի-երկիրը»)՝ Ար-մա-բիլին Վանայ լճից արեւելք, Էրի-ախի (էր=Արա) երկիրը (Շիրակ), Արաքսի վերին ու միջին հոսանքների շրջանը, Արա-գածի («Արայի Գահի») շրջանը, Արարատի («Դաշան Արայի՝ Արայի վայրի») շրջանը: Ահա այս է արեւի՝ հարերի > հայերի (խարբի-խուրբի) երկիրը, այս է հայերի բնօրրանը՝ Նաիրի երկիրը («կրակի երկիրը»): Արա = Արդի՝ Աշտի-Աշտու («կրակ»)՝ Ատու-ած պաշտող այս հայերի երկրի մէջ մտած պիտի լինեն նաեւ Աշտու-իսիին (Ախուրեանի շրջան), Աշտիշատից արեւմուտք Հաշտեանքը, ինչպէս եւ Տայքը, Արեւմտեան Եփրատի աւազանը, Բիւրակնեան լեռների եւ յիշուածների միջեւ բնկած այլ վայրեր: Նրանք հենց Նաիրեան (կրակի-երկրի) այն ցեղերն էին, որոնք որպէս իրենց արեւ-կրակի աստուած Ար-ի սերունդներ՝ Ար > հար (խար-եւ «այրել», որից՝ խարոյկ, կամ խար «արեւ») կամ Խուրի-

Խարիի անուամբ Գ հազարամեակին (մ. թ. ա.) տարածուել էին դէպի հարաւ (Ասորիք, Հիւսիսային Միջագետք, Ասորեստան) եւ Բ հազարամեակի կէսերին (մ. թ. ա.) կազմել էին Խուրբի (Սարբի) - միտանեան հզոր պետութիւնը:

Փաւստոս Բիւզանդը, ինչպէս նշել ենք, խուրբիների մայրաքաղաք Ուռեայի մասին պահել է հետեւեալ (գրաւոր կամ աւանդական՝ միւսնոյնն է) արժէքաւոր յիշողութիւնը. Պապ Թազաւորը պատգամաւորներ էր ուղարկում յունաց Թազաւորի մօտ, թէ «Կեսարիայի հետ ուրիշ աստը քաղաքները մերն են եղել, ետ տուր: Ուռհա քաղաքն էլ մեր նախնիքն են շինել...» (Փ. Բիւզանդ, Ե-լր): Պապ Թազաւորի այս ելոյթը պատմական է թէ ոչ, միւսնոյնն է, դա նշանակում է, թէ Բիւզանդի ժամանակ դեռ մոտացուած չէր, որ Խուրբիների մայրաքաղաք Ուռեան կառուցողները (Խուրբիները) եղել են հայոց նախնիները:

Ինչպէս ցոյց էինք տուել նախորդ գլխում՝ հայ անունը ծագել է արեւ-կրակի աստուած Ար-ի հար ձեւից, որն իր ուժեղ արտայայտութիւնն է դտել Նաիրեան Սարբի կամ Խուրբի ցեղանուն մէջ, ինչպէս եւ Խալ(դի) կամ Խար(դի) անուան մէջ (հմմտ. Ար-Արա = Արդի): Բերել էինք նաեւ խուրբիներին եւ ուրարտացիներին՝ հայու-թեան հետ կապող կամ հայութեան հետ նոյնացնող բազմաթիւ տուեալներ ու ապացոյցներ, եւ անհաւանական չենք համարել նաեւ (որոշ պայմանով), որ խար > հայ անուան տակ խայասացիները սրանց՝ Եփրատից հիւսիս-արեւմտք անցած մի հատուածը լինեն, որոնք Ուրարտուից առաջ տրոհուելով անհետացան կամ միացան մայր ճիւղին:

Արեւ-կրակ պաշտող մեծ ցեղախմբի արեւելեան՝ հար > հայ ճիւղը Գ հազարամեակի սկզբներից (մ. թ. ա.), նախքան սումերների Եփրատ ու Տիգրիս գետերով բոլորովին հարաւ իջնելը, իրենց լեզուն զարգացնում էին աւելի կցական (ազլուտինատիւ) ուղղութեամբ: Իրենց այս լեզուն Գ հազարամեակի սկզբներից (մ. թ. ա.) փոխազդեցութիւնների մէջ է գտնուել արմէն ճիւղի հարեւան հատուածների հնդեւրոպական (թեքական) ուղղութեամբ զարգացրած լեզուի հետ, հարեւան (կրօնակից ու հայրենակից) հատուածներ, որոնց հետ էլ մերթ կազմում էին ուժեղ միաւորումներ: Այդ միաւորումների եւ փոխազդեցութիւնների մասին են խօսում սումերերէնում սումերահայ հին յարաբերութիւններից մնացած հնդեւրոպա-

կան – արմենական տարրերի հեռքերը, հենց այդ միաւորումների մասին են վկայում նաև աւելի ուշ ժամանակների խուրրի- միտան- կան ժողովրդի հնդեւրոպական գծերը:

Արեւմտեան ու արեւելեան ճիւղերի ցեղերն իրարից մեկուսա- ցուած չեն եղել. յատկապէս (ինչպէս ասացինք) Գ. հազարամեա- կից յետոյ տարրեր ժամանակներում կատարուել են իրար մէջ ներ- թափանցումներ: Զգալի չափերի է հասել արեւմտեան ճիւղի (արմէն) ցեղերի թափանցումները դէպի արեւելք: Երկու ճիւղերի որոշ հա- տուածներ Սուբարտուի, Արմէ-Շուպրիայի եւ Ուրուտարիի շրջան- ներից դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք կատարած միացեալ արմենո- հայական շարժման մասին խօսել ենք արդէն Դ. գլխում, մի հոծ խմբերով կատարուած շարժումներ թափանցում, որն իր կարեւոր արձագանգն է գտել նաև մեր աւանդութեան մէջ: Ի հարկէ հոծ խմբերով՝ ասելով պէտք չէ մեր ժամանակների իմաստով հասկանալ շատ մեծ բազմութիւն: Այդ ժամանակների աշխարհի բնակչութիւնը քիչ ու ցանցառ էր. աւանդութեան յիշած 300 մարդիկ իրենց աղխով ու ընդոծիններով՝ այդ ժամանակների համար բաւական մեծ բազմու- թիւն էին:

Հարաւից դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք եղած այս շար- ժումը կատարուած է Ուրարտուից շատ առաջ՝ սեմիտական երրորդ գաղթ – հեղեղի՝ suti, auri եւ ablamé ցեղերի Ասորիք ներխուժ- ման ժամանակներին, երբ զրանով եւ խեթերի պատեհապաշտական հարուածներով վերջնական անկում կրեց Պուրրի-միտանեան պետու- թիւնը: Այս ժամանակներին էր, երբ դէպի հիւսիս՝ դէպի Տարօն շար- ժուողներից մի խումբ (տրոհուած Պուրրի-միտանեան պետութեան տարրերից մի խումբ), որ գալիս էր աւելի հարաւային (Պարուր դետի) շրջաններից, չի վրիպել այդ օրերի Ասորեստանի արքայի ու- շաղրութիւնից. Սալմանասար Ա-ը դրում է, թէ արիմները Պարուր դետով վեր էին շարժում:

Դէպի հիւսիս եւ արեւելք կատարուած արմենո-հայական եւ արմենական ներթափանցումներից բաւական ժամանակ յետոյ արդէն կրօնակից ու հայրենակից արմէնների զանդուածային եւ խնամիական սերտ մասնակցութիւնն ենք տեսնում Նախրեան-հայական ցեղերի կազմած ուրարտական մեծ ու հզոր պետութեան իշխանութեան մէջ:

Ուրարտուն Պուրրի-միտանեան պետութեան ժամանակաւո- րապէս ընդհատուած շարունակութիւնն էր՝ աշխարհագրականօրէն սեմիտների ճնշման տակ յետ քաշուած դէպի հիւսիս:

Ուրարտական պետութեան արձանագրութիւնները սկսուել են նախապէս ասուրերէնով, յետոյ սակայն պետութեան հզօրացմամբ, ազգային ինքնասիրութեան ու պատուախնդրութեան թեւադրանքով, ասուրերէնը փոխել են առաջուց գոյութիւն ունեցած խուրրի-հայա- կան արձանագրութիւնների լեզուի մի յետնորդ բարբառի՝ դրա համար օգտագործելով ու պարզեցնելով ասուրաբարեւական սեպա- գրութեան սխեմաը, որը չդարձաւ ժողովրդի սեպահանութիւն, այլ մնաց քրմական-դիտական շրջանակում՝ արձանագրելու համար լոկ արքաների ռազմական ու շինարարական գործունէութիւնները:

Ուրարտու- Բիախնայի (կրակի երկրի) այս մեծ միութեան մէջ արմէնների եւ հայական-նախրեանների լեզուական սերտ փոխադ- դեցութիւնների պրոցեսում՝ արեւելքից Հայկական լեռնաշխարհ թա- փանցած սկիւթների, գլմմերների ու մարերի եւ արեւմուտքից ներ- մուծուող կամ եկող-միացող խեթական տարրերի հնդեւրոպական ազդեցութիւններով՝ ուրարտական պետութեան կազմաւորումից մինչեւ աքեմենեանների տիրապետութիւնը հասնող ժամանակների ընթացքում տիրապետող դարձաւ արմէնների հնդեւրոպական լե- զուն: Այսպիսով առաջացած հայերէնը ունեցաւ հնդեւրոպական կմախք-կառուցուածք, որի վրայ վերապրեց հայական լեզուի բառա- յին զանդուածային մարմինը:

Թէ արեւ-կրակ պաշտող Արածին մեծ ցեղախմբի այս երկու (արեւմտեան ու արեւելեան) գլխաւոր ճիւղերի լեզուները Պուրրի- ուրարտական ժամանակներին ինչքան էին իրար մօտ կամ ինչքան էին իրարից հեռու, ցոյց կը տան խուրրիերէնի եւ ուրարտերէնի հե- տադայ ուսումնասիրութիւնները:

Այսպիսով եզրակացնում ենք, որ հայկական-ուրարտական մեծ պետութիւնն էր, որի կենտրոնաձիւղ ջանքերի շնորհիւ վերջնա- կանապէս կազմաւորուեց հայ ժողովուրդը որպէս միադաւան ու միա- լեզու ժողովուրդ:

ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՆԵՐԸ

Ուրարտական պետութեան (աւելի ճիշդը՝ դինաստիայի) պարտութեան ու անկման ժամանակաշրջանի պատմութիւնը մութ է մնում տակաւին պատմագիտութեան համար: Խօսուած է այն մասին, որ մարերը յաղթելով վերջ են տուել Ուրարտուին իրենց հետ դաշնակցած հայկական ցեղերի գործակցութեամբ (դինակցութեամբ): Այս վերջին միտքը, ընդհանուր առումով ճշմարտութիւն լինելով հանդերձ, չի պատկերացում ուրարտական պետութեան էթնիկ կազմի մասին մինչեւ այս ուսումնասիրութիւնն եղած տեսակէաներով:

Ոմանք ասում են, թէ հայերը դալով արեւմուտքից՝ ուրարտական պետութեան վերջին ժամանակներին մտան Ուրարտու: Չի բացատրուած, թէ այդ ինչպէ՞ս եղաւ, որ հայերը ուրարտական հօր պետութեան առկայութեան պայմաններում եկան արեւմուտքից եւ առանց նկատուելու անցան Ուրարտուի վրայով եւ առօք-փառօք մարերի հետ միանալով յարձակուեցին Ուրարտուի վրայ:

Ուրարտուի հայկականութեան երդուեալ հակառակորդները, «Ուրարտուն հայկական է» ասողների բերած փաստերի ճնշման տակ սկսել են մանկերել (առանց իրենց կողմից որեւէ ապացոյց նշելու) ասելով, թէ Ուրարտուի ժամանակ հայկական ցեղերը ուրարտացիների հետ կողք-կողքի ապրել են Հայկական լեռնաշխարհում:

Ասում են, թէ Ուրարտուի անկումից յետոյ է, որ Երուանդունիների ղեկավարութեամբ հիմնուեց առաջին հայկական պետութիւնը եւ այդ տեսակէտն էլ ներկայացնում են այնպիսի ձեւակերպումներով, որ կասկածի տակ է առնում Երուանդի եւ Երուանդունիների հայկական ծագումը: Երուանդին համարում են պարսիկ՝ սերուած

Աքեմենեաններից կամ նրանց մերձաւորներից (Երուանդ Դ-ին էլ, ըստ Ստրաբոնի, Դարեհ Ա-ի զինակից Հիդարնէսից)¹: Աճառեանն էլ բերելով ուրիշներից, գրում է, թէ Երուանդ անունը առաջ է եկել պահլաւական arvand («արազ, քաջ») բառից, որին համեմատում է սանս. arvant «քաջընթացիկ (ձի)» բառի հետ²:

Այս բոլորից յետոյ՝ էլ ինչպէ՞ս է լինում, որ Երուանդունիների թագաւորութիւնը հայկական է համարում, էլ ինչի՞ց է յայտնի, որ Երուանդ Ա-ը հայ էր:

Այս բոլոր հակասութիւնները ծագում են հայ ժողովրդի պատմութեան կարեւորագոյն եւ սկզբունքային հարցերում պամագիտական սխալ զիրքաւորումից, որ իբր թէ հայերը բնիկ չեն իրենց երկրում, այլ նոր ու եկուոր. հայերը տկար ու փոքր են իրենց շրջապատում, իսկ հարեւանները՝ մեծ. հայերը ենթակայ են, իսկ նրանք, որոնց հետ համեմատում են՝ իշխող: Հայ ժողովրդի քաղաքական կշիռը եւ նրա մշակութիւնը արժէքները գնահատում ու մեկնաբանում են հիմք բնդունելով նրա պատմականօրէն մեղ աւելի մօտ եւ աւելի յայտնի վիճակը, ուր նա գտնում էր քաղաքականապէս ընկած, բնակչութեամբ կոտորուած ու կոտորակուած վիճակում եւ ենթակայ ուրիշներին: Հետեւաբար հայ-պարսկական, հայ-հռոմէական կամ հայ-յուճական, հայ-բիւզանդական յարաբերութիւնների մէջ թէ՛ ուղղափառ քաղաքական եւ թէ՛ լեզուամշակութային մութ եւ երկդիմի հարցեր քննելիս ու մեկնաբանելիս՝ հայ ժողովուրդը գրում էր են-

1) Գ. Տիրացեան, Երուանդունիները Հայաստանում, Տեղեկագիր ՀՍՍՌ գիտութիւնների ակադեմիայի, Հասարակական գիտութիւններ, 1958, քիւ. 6, էջ 67—68:

2) Հ. Աճառեանի իր «Հայոց անձնանունների քառարան»ում գրում է. «Երուանդ, ար. պիլ. arvand = գնդ. aurva-, aurvant «արազ, 2. քաջ» բառից. հմմտ. սանս. arvant «քաջընթացիկ, արագընթաց (ձի)»: Իբրև ար. անուն գործածական էր իրանցոց մէջ. որպէս՝ Ὀροντας, Ὀροντης մի խումբ պարսիկ ստորապետներ Հայաստանում (Գ դար Ն. Ք.), Orontes՝ Լիւկացոց գլխաւորը, ընկեր եմէասի (Վիրգիլիոս), պրս. اروند Arvand՝ հայր Լաւրասպ արքայի (Շահնամ): Ըստ Շահն. հտ. 1, էջ 70, պիլ. Arwand՝ Տիգրիս գետի անունն է...: Նոյն բառից կազմուած անձնանուններ են նաեւ գնդ. Aurvant-aspa՝ հայր Վշտասպի (որ բուն նշանակում է «արագձի, նա որ արագընթաց ձի ունի»)...

թարկուողի, ստորադասի, նպաստ ստացողի ու ազդուողի եւ ոչ թէ ենթարկողի, նպաստ սուղի ու ազդողի գերում³:

Ճիշդ է, որ այն ժամանակներին, երբ Պարսկաստանը Առաջաւոր Ասիայում ասպարէզ իջաւ որպէս մեծ պետութիւն՝ հայերը (ազդուելով նաեւ այլ զործօններից) կորցրին իրենց քաղաքական գերակաութիւնը եւ բաւական երկար ժամանակ ընկան Պարսկաստանի քաղաքական եւ լեզուամշակութային ազդեցութեան տակ, բայց այդ վիճակը պատկանում էր հայ ժողովրդի պատմութեան աւելի ուշ (Արտաշէսեաններին յաջորդող) շրջանին, մինչդեռ գրանից առաջ, եւ յատկապէս մեր ուրարտական եւ խուրբի-միտանեան ժամանակաշրջանում, պարսիկներն ու հայերը հակառակ դերերում էին գրտնում, թէ՛ քաղաքական, թէ՛ կրօնամշակութային գերակաութիւնը գտնում էր հայերի կողմը եւ նպաստ ստացողն ու ազդուողը մարն ու պարսիկն էին եւ ոչ թէ հայը: Եւ հենց հայկական Երուանդ անունն էլ (ինչպէս լեզուական եւ կրօնամշակութային այլ տարրեր) այդ ժամանակներին հայերից անցել է Պարսկաստան եւ դարձել անձնանուն կամ հասարակ բառ «արազ, քաջ, քաջընթացիկ» կամ «արագընթաց ձիաւոր» իմաստներով, այնպէս ինչպէս ուշ ժամանակներում պարթեւ ցեղանունն էլ անցել է մեղ մօտ եւ դարձել հասարակ անուն «բարձր, բարձրահասակ» իմաստով:

Ստորեւ ցոյց կը տանք, թէ ի՞նչ հանգամանքներով է անցել մեր Երուանդ անունը Պարսկաստան, բայց նախապէս պարզենք, թէ իսկականում ի՞նչ ծագում ունի Երուանդ անունը:

Երուանդ անունը կազմուած է մեր արեւ-աստծոյ Ար կամ Արա անունն Եր, Երու կամ Երի ձեւից եւ անդ ածանցով: Իրանը պահել է Արվանդ ձեւը: Ար անունն Եր ձեւի մասին արդէն խօսել ենք եւ պէտք չենք տեսնում այստեղ կրկնել եւ նորից բերել այն բազմաթիւ տեղանունները, որոնք կազմուած են Եր սկզբնամասով: Համեմատութեան համար կարելի է միայն բերել Պղատունի Էր-ը (Արա), մեր

3) Մեր այս առածի համար այսօր լաւ օրինակ է մեր Ազրաւարի տաճարը, որին բուրբ «պատմագիրներն» ու «արուեստագետները» համարում են սելջուկ բուրբերի գործ՝ հակառակ տաճարի վրայ քաղաքական եւ ազգալիզ խաչերին, մարտաբապետական հայկական ոճին ու հայաստան արձանագրութեան ու նրա հայկական բովանդակութեան. եւ ծիծաղելիմ կամ դժբախտութիւնն այն է, որ օտար գիտնականներից ունակ էլ հենց այդ քաղաքական Պղատառութեանով կանգնուած են նոյն գիրքերում:

Հայկական ցեղերից մէկի էրիալսի (Արալսա) անունը, Ռուսայի հօր էրիսեմա կամ Երիսեմա (Արմենակ) անունը, Արճեչի հիւսիսային կողմը Ալատաղի (Մաղկանց լեռ) ստորոտում գտնուող Երիշատ⁴ ականանունը, եւ նոյն լեռնաշղթայում գտնուող Երիտա լեռը եւ այլն: Իսկ -անդ ամալցը կամ սուֆիկսը գտնում ենք բազմաթիւ տեղանուններէ եւ անձնանուններէ վրայ Հայկական լեռնաշխարհում եւ Փոքր-Ասիայում. համեմատութեան համար կարելի է բերել Բագրեւանդ մեր զաւառներից մէկի անունը, ուրարտական ժամանակների Զարանդ երկրանունը (մեր Զարեւանդ զաւառանունը Ուրմիայի լճի հարաւում), Վանաւնդ (մեր զաւառներից. այս անունով թագաւորութիւն կար կարսի շրջանում), Անուանտա (խեթերի մի քանի արքաների անունը), Բիւզանդ, Մանանդ (եան), Հրանդ, Հոանդէա, եւ այլն եւ այլն:

Երուանդ անունն մեր Եր-ի (Արայի) հետ ունեցած կապը տեսնում ենք նաեւ հենց մեր Երուանդ Դ-ի եղբոր Երուազ անունն մէջ, որ նոյնպէս Եր (կամ Երու) սկզբնամասով է կազմուած: Երուանդ Դ-ը իր այս եղբորը նշանակել էր քրմապետ իր կառուցած Բաղարան քաղաքում, ուր Արմաւիրից փոխադրել էր հեթանոս աստուածների արձանները: Երուազ անունն -ազ կամ -ուազ վերջաւորութիւնը նոյնպէս (նման -անդ-ի) կցուած սուֆիկս է. համեմատութեան համար բերում ենք հետեւեալ անունները. Իմուազ⁵, Մանաւազ (Մենուաս), Բազ (Բիւրինայի էպոնիմ), Արտազ (զաւառանուն Մակուի շրջանի) եւ այլն:

Երուազ անունն էր կրում Արտաւազը Ա-ի որդին, եղբայրը Տիգրանի: Այս Երուազը պատանդ էր Հոռմում⁶:

Երուանդ անունն՝ հայերի ազգային աստուած Արայի եւ, միաժամանակ, հայ ժողովրդի ար (արմէն) կամ հար (հայ) ազգանունն հետ ունեցած կապով միանդամայն լուսաւորում ու բացատրում է Արտաչէս Ա-ի արամէստառ նորագիւտ արձանագրութեան մէջ

4) Եղիա Քասուսի, Պշուած գիրքը, էջ 243. Ինչպէս նաեւ Հիւրշում, «Հին Հայաստանի տեղւոյ տնօրէնքը», էջ 341:

5) Իմուազ-ը Երուանդ Ա-ի ժամանակ հայկական հետեւակի զորավարն էր, ինչպէս Երուանդի որդի Տիգրանը՝ հայկական հեծելազորի զորավար: Այս երկուսն էլ Կիւրոսի հետ մասնակցեցին Բաբելոնի դէմ կատարուած արշաւանքին (Գ. Տիրացեան, Երուանդունիքը Հայաստանում, Պշուած տեղում, էջ 59):

6) Հ. Անտոնան, «Անձնանունների բառարան», տե՛ս Երուազ:

Արտաչէսի Երուանդական կոչուած լինելու դադանիքը: Արձանագրութիւնը հետեւեալն է լատինական տառադարձութեամբ.

1. 'R THSSY MLK
2. BRZY ZRYTR
3. RWNDKN HLQ
4. 'RQ BYN
5. QRS [YN]

Արամէական տեքստի թարգմանութիւնն է. «Արտաչէս արքան Զարեհի որդին Երուանդական բաժանեց հողը մասերի (բաժիններէ)»⁷:

Պատմագիտութեան համար մնում էր առեղծուած, թէ ինչպէ՞ս է պատահում, որ Երուանդին ու նրա ընտանիքին վերջ տալով դահ բարձրացած Արտաչէսը իրեն Երուանդական է կոչում: Արտաչէսը ոխերիմ թշնամաճքի մէջ էր Երուանդունիների վերջին Երուանդի (Դ-ի) հետ: Նրա դէմ մղած ռազմական տրիւնալի պայքարից յետոյ է, որ (նրան սպանել տալով) դահ էր բարձրացել, անգամ Երուանդ Դ-ի ընտանիքից դահի վրայ յաւակնորդ շթողներու համար սպանել էր տուել Երուանդի եղբայր Երուազին: Այս բոլորից յետոյ անբացատրելի էր մնում, թէ ինչո՞ւ Արտաչէսը իրեն Երուանդական է կոչում:

Ոմանք առեղծուածը ուզում էին բացատրել այն բանով, որ իբր թէ Երուանդունիները հզոր Արեւմեաններէ շտապիլից լինելով՝ նրանց հետ ազգակցական կապի մէջ մտնելը պիտի նշանակէր մեծ հեղինակութիւն ձեռք բերել: Եթէ Արտաչէսը այդպիսի մտքով դրած լինէր այդ մի տերմինը եւ այդ էլ քարի վրայ, որ դրուել էր երկրի մի հեռաւոր տեղում, ապա նախ ո՞վ պիտի կարողար այդ բառը, յետոյ, ո՞վ կը հաւատար Արտաչէսի այդ խօսքին. մի՞ թէ այդ ժամանակներին (երբ ամէն ինչ յայտնի էր Արտաչէսի եւ Երուանդի մասին) երկրի մի հեռաւոր անկիւնում դրուած քարի (ժողովրդի համար անընթեռնելի) խօսքի՞ց պիտի հասկանային, թէ ո՞վ էր Երուանդը եւ ի՞նչ ծագում ունէր Արտաչէսը:

Կասկած չկայ, որ Արտաչէսը իրեն Երուանդական է կոչում որովհետեւ ինքն էլ «արեւի մեծ աստուած Արի սերունդներից էր»,

7) Գ. Տիրացեան, Արտաչէս Ա-ի Արամէաստա նորագիւտ արձանագրութիւնը, Տեղեկագիր ՀՍՍՌ գիտ. ակադ. գիտ., 1957, քիւ 10, էջ 106—107:

որովհետեւ ինքն էլ հայ-արմէն էր, եւ Երուանդական յորջորջումը իր մէջ պահում էր արեւի սերունդ լինելու ազնուական ծագման իմաստ:

Ի դուր չէ, որ մեր մեծահմուտ եւ հայրենասէր Խորենացին ուրախութիւն էր յայտնում, որ իրեն համար հերթը եկել է գրելու հարազատ եւ ազգակից պահպանորդների (Թագաւորների) մասին, որոնց թւում բերում է Երուանդ Ա-ին (Սակաւակեաց) եւ Տիգրանին: Նա գրում է. «Արդ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ Թագաւորաց, մինչեւ ցտէրութիւնն Պարթևաց: Քանզի ինձ այսոքիք արք ի մերոց Թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք եւ իմոյ արեան առուք, եւ հաւատալի հարազատք: Եւ սիրելի էր ինձ յայնձամ զայլ Փրկչին եւ զիս գնել, եւ առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, եւ նոցա տեսութեամբ խրախճանալ, եւ յարդեացս վտանդից պարել: Այլ վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն, թէ արդեւք եւ վիճակ: Բայց արդ են առ Մարաց Թագաւորութեամբն կեցեալ բնիկք պահպանոր արք այնոքիք, զորոց եւ զանուանսն ի ներքոյ դրոշմիք» (Խոր. Ա-իբ):

Երուանդ Ա-ի՝ Կիւրոսի ենթակայութիւնից դուրս գալու ճիշդերն ինքնին ապացոյց են Երուանդի (ոչ պարսիկ) հայ լինելը: Երբ Կիւրոսը մեծ ուժերով Հայաստան է մտնում՝ իր ներկայութեան բնուած հայոց Երուանդ Թագաւորին հարցնում է. «Արդ, ինչո՞ւ այժմ ոչ աուրք ես վճարում, ոչ զօրք ես ուղարկում եւ սկսել ես ամբողջութեամբ շինել», Երուանդը նրան պատասխանում է. «Ես ազատութեան էի ձգտում, որովհետեւ գերադասում էի, որպէսզի թէ՛ ինքս ազատ լինեմ եւ թէ՛ որդիներս ազատութիւն թողնեմ»⁸⁾: Եթէ Երուանդը հայոց գահի վրայ նշանակուած մի պարսիկ լինէր, ապա այս խօսքերը չէին լինի՝ թէկուզ վիպական ձեւով:

Խորենացին Մեծն Տիգրանին էլ Երուանդեան է կոչում (Խոր. Ա-իդ), թէեւ նրա մօտ միացել են Ա եւ Բ Տիգրանները:

Բացառուած չէ այն, որ Արտաշէս Ա-ը Երուանդունիներին տոհմից լինէր, ասենք՝ Երուանդ Դ-ի հօրեղբորորդին կամ Երուանդունիներին ոչ ուղիղ շառաւիղներից մին: Մենք գիտենք, որ Երուանդ Ա-ի (Սակաւակեացի) որդին կոչւում էր Տիգրան, գիտենք նաեւ, որ վերջին Երուանդի (Երուանդ Դ-ի) եղբոր անունն էր Երուազ, եւ ահա Արտաշէս Ա-ի թոռներից (Արաւազդ Ա-ի որդիներից) մէկը կոչւում

8) Ը. Գ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», հատոր Ա, էջ 126:

էր Տիգրան եւ մէկն էլ Երուազ: Այս հանդամանքը շատ կարեւոր է եւ պէտք չէ անտեսել: Ոչ մի կասկած, որ այս երեւոյթը նախ մի յաւելեալ փաստ է, որ Երուանդունիները հայկական ծագում ունէին եւ հայոց գահի վրայ նստած բոլոր Երուանդները միեւնոյն զինաստիայի անդամներն էին. երկրորդ՝ այն կարող է ցուցմունք լինել, որ Արտաշիսեանները նոյնպէս Երուանդունի զինաստիայի (ոչ ուղիղ գծով) շարունակութիւնն էին:

Մեր այս կարծիքն արդէն անցնում է ենթադրութեան սահմանները՝ հենց Արտաշէսի վերոյշեալ արամէական արձանագրութեան փաստով. առաւել դրան՝ մեր այս կարծիքն ուժեղանում է այն հանդամանքով, որ Արտաշիսեանների վերջին եւ կին շառաւիղը կոչւում էր Երատոյ: Մենք կարծում ենք, որ հենց Երատոյ անունն էլ կազմուած է Երուանդ եւ Երուազ անունների Եր- սկզբնամասով եւ իզականացուցիչ -ատոյ (-at, -et, -te) մասնիկով (հմտ. Իշտար-ի քանաանական Astor - et եւ յունական Astar - te ձեւերը, իզական -et կամ -at մասնիկով): Հայկական գահի վրայ զինաստիայի կին անդամի նստելը բացառիկ երեւոյթ էր. այդ անսովոր երեւոյթը ժողովրդի առջ աւելի կը խորթանար, եթէ Երատոյ անունն էլ ոչ հայկական կամ նոյնիսկ, իշխող զինաստիայի անուանումներից դուրս մի անուն լինէր⁹⁾: Ի հարկէ նրան կարող էին կոչել Երզուխտ կամ Երուանդուխտ, բայց նրա հօր անունը Երուանդ չէր, յետոյ՝ Երատոյ անունն -ատոյ վերջաւորութիւնը, ի հարկէ, համապատասխանում էր այդ ժամանակներին Արտաշիսեանների մօտ հելլենիզմի ունեցած ազդեցութեան:

Տիգլաթ - Պալասար Գ-ի գերիշխանութիւնն ընդունողներից Արաբիայի մի նշանաւոր Թագուհի կոչւում էր «Shamsi of Arabi»¹⁰⁾ («Արաբիայի կամ արաբական արեւ»): Հենց մեր Երատոյ անունն էլ նշանակում է «Արեւուհի»: Երատոյ անունն Եր- սկզբնամասը մեր ազգային արեւ աստու Ար կամ Արա անունն Եր փոփո-

9) Մենք անհիմն ենք համարում այն բացատրութիւնը, որ, իբր քէ, Երատոյ անունն ամբողջութեամբ վերցուել է յունարէնից, որ այն յունարէն նշանակում է «սիրում, սիրելի»: մեր արեւների եւ իշխանների դուստրերը այդ տիպի անուններով քնաւ չեն կոչուել: Մամուսնդ որ երէ այդ անունը յունարէն լինէր՝ հայոց գահի վրայ այդ ազգական նստեցնելուց առաջ անունը կը փոխէին հայկականով:

10) Seton LLoyd, «Twin Rivers», p. 58:

խակն է (դրա մասին խօսել ենք վերելում), այնպես որ Երատոյ նշանակում է «Արեւուհի» եւ հոմանիշ է մեր ժամանակներում գործածութեան մէջ եղող Արփիկ անունն՝ այն տարբերութեամբ, որ իր մէջ պահում է դինաստիայի «Երուանդական» մականունն Եր արմատը, որը միաժամանակ հայկական ցեղի կամ հայ արմէն (էրիախի) անունն արմատն է, ուստի Երատոյ անունը հենց մեր Արմենուհի կամ Հայկուհի անունն Արտաշիսեանների Հելլենիստական ժամանակաշրջանի փոփոխակն է՝ աւելի ազնուականի, աստուածայինի իմաստով:

Այսպիսով՝ մենք յանդում ենք այն հետեւութեան, որ Արամէից մինչեւ Երատոյ հայոց զահի վրայ անընդհատաբար գտնուած էին հայ-արմէն ցեղի զաւակները: Իսկ թէ Արամէից առաջ ինչպիսին էր դրութիւնը, դրա մասին շատ բան ունի ասելիք ապագան:

Այժմ մենք կը քննարկենք, թէ Երուանդ անունն ինչպէ՞ս անցաւ Իրան, եւ ի՞նչ հանգամանքերով հայերն ու հայ Երուանդը մարերի հետ միացան ուրարտական դինաստիայի տապալման դործում:

Աճառեանն իր Անձնանունների բառարանում, ինչպէս նշել ենք վերելում, գրում է, թէ «Երուանդ անունը իր Arvand ձեւով Իրանում նշանակում էր «արագ, քաջ», եւ (սանս.) «քաջընթացիկ, արագընթաց (ձի)»: Գործածական էր նաեւ իբր ար. անձնանուն. իբրեւ հասարակ անուն նշանակում էր «իղձ, փափաք, շուք, փառաւորութիւն», եւ թէ նոյն բառից կազմուած անձնանուն էր Aurvat - aspa, որ բուն նշանակում էր «արագաձի, նա որ արագընթաց ձի ունի», իսկ ըստ Շահնամէի հա. 1, էջ 70՝ Arwand կամ Arvand՝ Տիգրիս գետի անունն էր»:

Այս վերջին նշանակութիւնն արդէն մերկացնում է Երուանդ անունն (ոչ պարսկական) նաիրեան-հայկական լինելը:

Իրանում Երուանդ անունն այսպիսի իմաստով տարածում ստացած լինելն ու արմատաւորուելը բացատրելու համար պէտք է հաշուի առնել խոր անցեալում հայկական մշակոյթի գործած ազդեցութիւնը Իրանի հնդեւրոպական ժողովուրդների վրայ: Այդ ազդեցութիւնը շատ մեծ է եղել ամբողջ Բ հազարամեակին եւ Ա հազարամեակի առաջին կէսին՝ յատկապէս Ուրարտուի ժամանակներին:

Խուրրի-միտանեան ժամանակներում (Գ եւ Բ հազարամեակին մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհի Նաիրեան ցեղերի մշակոյթի ազդեցութիւնը հարեւան երկրների վրայ արդէն յայտնի է: Այդ հարեւաններից մէկն էր ի հարկէ եւ Իրանը:

Իրանի հնդեւրոպական ժողովուրդները, Իրանի բարձրաւանդակի վրայ իրենց երեւման ժամանակներից (մոտ 2000 մ. թ. ա.) մինչեւ որպէս ուժեղ պետութիւն միջագոյսին հրապարակի վրայ հանդէս գալը (է դար մ. թ. ա.), ենթարկուել են Հայկական լեռնաշխարհի խուրրի-միտանեան եւ ապա ուրարտական մշակոյթի ազդեցութեան: Այդ ազդեցութիւնը շատ աւելի շեշտուած է եղել, երբ խուրրի-միտանեան պետութիւնը որպէս հզօրագոյն պետութիւն հանդէս է եկել Առաջաւոր Ասիայում, այն ժամանակաշրջանին, երբ Միտանիի հարս զնացող իշխանուհիները Եգիպտոսում կրօնի յեղափոխութիւն էին առաջացնում յօգուտ իրենց արեւի Ար (Ra կամ Ատոն) աստծուն: Պէտք է, այս առթիւ, մոռանալ դիտութեան ընդունած այն տեսակէտը, որ «ասուրական մշակոյթը խուրրիներից մնացած ժառանգ է»:

Մեր Նաիրեան ցեղերի խուրրի-միտանեան ժամանակների մշակոյթը այնքան բարձր է եղել Առաջաւոր Ասիայում եւ նրանց քաղաքներն այնքան զարգացած, որ հարաւի արաբական ցեղերն իրենց լեզուի մէջ Միտանի անունը պահել են «քաղաք» իմաստով. արաբերէն مدينة madina նշանակում է «քաղաք» (այս բառի յոգնակին է mudun «քաղաքներ»): Կասկած չկայ, որ արաբական այս madina «քաղաք» բառը մնացել է Միտանի անունից: Արաբական այս բառը, մեր կարծիքով, պիտի ընդունել ոչ թէ միայն որպէս խուրրի-միտանեան մշակոյթի եւ քաղաքների բարձր զարգացման աստիճանի վրայ դրսևուած լինելը ցոյց տուող ապացոյց, այլեւ որպէս մի յաւելեալ փաստ այդ մշակոյթի՝ հարեւան երկրների վրայ թողած ազդեցութեան:

Մեր Նաիրեան ցեղերի խուրրի-միտանեան պետութեան անկումից յետոյ՝ հայկական մշակոյթի շորս կողմ, եւ յատկապէս Իրան, տարածման դորձը շարունակեց մեր հայկական ուրարտական հզօր պետութիւնը: Դա այն ժամանակներից, երբ հայկական բանակները Իչպուրիի (Անուշաւանի) եւ Մենուայի առաջնորդութեամբ արշաւեցին Պարսկաստանի հողերի ու քաղաքների վրայ:

Այդ արշաւանքներից մէկի մասին է խօսում Իչպուրիից եւ նրա որդի Մենուայից մեզ հասած մի արձանագրութիւն. ահա այդ (Պարսկոնիսում գտնուած) արձանագրութեան մեզ հետաքրքրող մասը.

«Պալլին՝ տիրակալը, Իչպուրիին՝ որդին Սարդուրի (եւ) Մենուան՝ որդին Իչպուրիի, այս արձանագրութիւնը կանգնեցրին (?):

Սալլիին դուրս եկաւ [արշաւի] իր զէնքով (?), նա յաղթեց Մեիշտա քաղաքը, յաղթեց Պարսկաստան (Բարշուա) երկիրը. Սալլիին հզօր է, զէնքը (?) Սալլիին հզօր է :

Հօրութեամբ Սալլիին դուրս եկան (արշաւի) Մեիշտա քաղաքի վրայ Իշպուլինին՝ որդին Սարգուրի (եւ) Մենուան՝ որդին Իշպուլինի. Իշպուլինին հզօր եղաւ, Մենուան՝ հզօր, զօրքը [բաղկացած էր] 106 ռազմականքերից, 9174 ձիաւորներից, 2704 հետեակից, առաջից դնում էին Սալլիին, Իշպուլինին՝ որդին Սարգուրի (եւ) Մենուան՝ որդին Իշպուլինի. նրանք զբաւեցին Մեիշտա, Քուա, Շարիտու, Նիզիրի քաղաքները՝ քաղաքները Պարսկաստան երկրի ձեռք բերեցին (բառացի՝ եկան) այդտեղից... հազար 483... հազար... հարիւր... հազար 6600... 1120 ձի, 12000 զլուխ խոշոր եղջերաւոր անասուն... հազար 65 ուղտ... տաս հազար-5000 զլուխ փոքր եղջերաւոր անասուն. հօրութեամբ Սալլիին դրանց տարան Իշպուլինին՝ որդին Սարգուրի (եւ) Մենուան՝ որդին Իշպուլինի, բայց ինչ նրանք բաժին հանեցին երկրներին, երբ թողեցին (զբաւուած) ամբողջները...

Սալլիին՝ տիրակալը, Իշպուլինին՝ որդին Սարգուրի (եւ) Մենուան՝ որդին Իշպուլինի յայտարարեց իրենց կանգնեցրին(?) :

Սալլիին դուրս եկաւ (արշաւի)»¹¹ :

Ինչպէս պարզ երեւում է, Իշպուլինին եւ Մենուան մտնելով Պարսկաստան (Բարշուա)՝ քաղաքներ եւ բերդեր են զբաւել : Այս տեղեկութիւնը դեռ առնում ենք պատահականօրէն գտնուած մի արձանագրութիւնից : Մենք դեռ չգիտենք, թէ մեր ուրարտական արձանները քանի անգամ արշաւեցին Պարսկաստան, ինչքան, կամ մինչեւ ո՞ր շրջանները առաջացան, որքան ժամանակ պահեցին ենթակայութեան մէջ : Մեծ հաւանականութեամբ նրանք պարսկական հողի վրայ էլ արձանագրութիւններ թողեցին, եւ եթէ մեզ չեն հասել, դա նշանակում է, որ դրանք ջնջուեցին կամ ջարդուեցին հետագայ հպարտ շահահասների կողմից, կամ մնում են հողի տակ : Պարսկական հողի վրայ ուրարտական արձանագրութիւնների գոյութիւն ունեցած լինելուն համար կարող է ապացոյց լինել պարսկական արձանների արձանագրութիւնների ոճը, որ ընդօրինակուած է ուրարտական արձանագրութիւններից (մի բան, որ չի վրիպել Ղափանցեանի սուր աչքից)¹² : Ուրարտական արձանները իրենց ստեղծած սկսում են այսպէս.

11) Մեիշտա, էջ 140 :

12) Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը» էջ 114 :

պէս. «Արմաիսն ասում է...», «Սարգուրին ասում է...» եւ այլն, եւ ահա Բեհիստունի ժայռի վրայ կարդում ենք. «Դարեհն ասում է...» եւ այլն : Այս ոճը չկայ սումեր-ակկադեան, ասուրական, խեթական եւ այլ արքաների արձանագրութիւնների մէջ : Ոչ մի կասկած, որ այն վերցուած է մեր սեպագիր արձանագրութիւններից, եւ դա կարող է նշանակել, որ այդպիսի արձանագրութիւններ կային եւ պարսկական հողի վրայ, որոնք օրինակ հանդիսացան պարսիկ արքաներին (Դարեհին, Քսերքսէսին եւ ուրիշներին) :

Մեզ յայտնի է, որ Ուրմիայի լճի հարաւային շրջանները՝ Մաննա երկիրը, երկար ժամանակ մնաց հարկատու եւ ենթակայ կամ գինակից Ուրարտուին եւ շատ անգամ կռուախնձոր դարձաւ Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ :

Մեր ուշագրութիւնն է զբաւում նաեւ հետեւեալը. ուրարտական արքաները արշաւելով թշնամի կամ նուաճուող երկրները՝ այրում էին քաղաքները եւ աւերում բերդերը. օրինակ՝ «...Սարգուրին ասում է. նոյն երթով արշաւեցի դէպի Puzunia երկիրը, դէպի Alkania երկիրը, դէպի Tsudala երկիրը, ամբողջները աւերեցի, քաղաքները այրեցի, երկիրը նուաճեցի :»¹³ : Իսկ այն շրջանը կամ երկիրը, որին ցանկանում էին պահել ձեռքի տակ, չէին աւերում, անգամ այդտեղ կառուցում էին բերդեր կամ եղածները չէին քանդում, որպէսզի նրանց մէջ (անկասկած) կարողանային պահել կայսրօր-պահակազօր : Եւ ահա Իշպուլինի եւ Մանուայի այս արձանագրութիւնից հասկանում ենք, որ նրանք Պարսկաստանում իրենց զբաւած ամբողջները չեն քանդել, այլ թողել են անվնաս («... Երբ թողեցին (զբաւուած) ամբողջները...») : Սա, անկասկած, ցոյց է տալիս, որ մեր Իշպուլինին ու Մենուան այդտեղ թողել են հայկական պահակազօր :

Այս բանը հաստատուած է նաեւ Մենուայի մի առանձին արձանագրութեամբ (Տաշտեպէ) : Այդ արձանագրութեան մէջ գրում է, որ նա (նորից) այդ շրջանում կառուցել է բերդ, Մեիշտայի զբաւումից յետոյ էլ (նորից) զբաւել է Մաննա երկիրը : Ահա իր խօսքերը արձանագրութեան մեզ հետաքրքրող մասում.

«Մեծութեամբ Սալլիին ասածոյ՝ Մենուան՝ Իշպուլինի որդին, այս ամբողջը կառուցեց, նա նուաճեց Մեիշտա քաղաքը, նուաճեց այնտեղից Մաննա երկիրը... թողեց այնտեղ... թողեց (?) հետեւակ

13) Մեիշտա, էջ 287 :

մարտիկներ... (նրա) առաջից գնում էր Սալզին, Մենուան ասում է, ես նուաճեցի Մանա (?) երկիրը... այդտեղից... ..արձանագրություն...»¹⁴:

Այսպիսի պայմաններն ու իրավիճակը, անկասկած, Պարսկաստանում հայկական մշակոյթի տարածման անժխտելի ազդակներ էին, եւ չպէտք է տարակուսել, որ մեր այդ ժամանակների հզորութեան համապատասխանող մեծ մշակոյթը ուժգին տարածում է ունեցել Իրանի ժողովուրդներէ մէջ, այդ ազդեցութիւնն ու տարածումը չեն սահմանափակուել ռազմական հարցերով, այլ այդ տեղի է ունեցել կրօնական, լեզուական եւ նրբական մշակոյթի բնադաւաններում: Հենց այս հանգամանքները աչքի առաջ ունենալով է, որ մենք վերելում ասում էինք, որ հայերէնի եւ իրանական լեզուների միջեւ եղած փոխառութիւնները քննելիս՝ պէտք է միշտ միակողմանի ուղղութեամբ (պարսկերէնից հայերէն) մտածել եւ մեկնարանել. պէտք է աչքի առաջ ունենալ նաեւ (եւ յատկապէս) Պարսկաստանի աւելի կանուխ ժամանակներում հայերից ստացած նպաստը: Աճառեանը մեր ատրապոյն՝ բառին նմանող պճ. aturgon հոմանիշը տեսնելով անմիջապէս յայտարարում է, որ ատրապոյն-ը aturgon-ից է վերցուել: Մենք չենք կարող ընդունել այդպիսի հարձեւայ եւ միակողմանի դիտողութեան արդիւնքները: Ի հարկէ մենք միաժամանակ չենք կարող մեղադրել Աճառեանին. նա իր ժամանակների դիտման լաւագոյն է արել: Այժմ արդէն շատ վարագոյրներ են պատուել եւ ահա Ուրարտուն երեւան է եկել իր հայկական շքեղ հասակով ու դիմազօծերով:

Հայկական մշակոյթի Իրանի վրայ գործած ազդեցութեան մասին խօսելիս, կարելի էր այստեղ մէջբերել Գ. Ա. Տիրացեանի «Ուրարտական քաղաքակրթութիւնը եւ Աքեմենեան Իրանը» արժէքաւոր յօդուածը ամբողջութեամբ, բայց մենք կը բաւականանանք մէջբերելով մեր նիւթի առնչութեամբ մի քանի յատկանշական կէտեր: «Վերջին տասնամեակում, — գրում է Տիրացեանը, — յաճախակի նշում է նաեւ Ուրարտուն՝ որպէս հնարաւոր մասնակիցներից մէկը Աքեմենեան ժամանակաշրջանի իրանական մշակոյթի կազմաւորման գործում»¹⁵: ... «Ուրարտական մշակոյթի տեսակարար կշիռը, սա-

կայն, անընդհատ աճում է եւ նրա ճարտարապետութեան, շինարարական տեխնիկայի, կիրառական արուեստի, յատկապէս մետաղագործութեան ու խեցեգործութեան առաջատար նշանակութիւնը գծուար է այլեւս անտեսել»: ... «Կարմիր-բլուրի քաղաքային թաղամասում 1961 թ. բացուած մեծ շէնքում կան սենեակներ չորսական սիւներով, որոնց նմանները շատ են հանդիպում Աքեմենեանների մայրաքաղաք Պերսեպոլիսում»¹⁶: ... «Ուրարտա-իրանական մերձեցման եղբեր կարելի է յայտնարեւել նաեւ կրօնա-պաշտամունքային թեմաներ արտացոլող կուպոլիցիաներում եւ պատկերագրական սրբանմաներում: Անցեալ դարում Թուրքախ-կալէի դինու պահեստի կարասներից մէկում գտնուեց ոսկէ մի մեղալիւն՝ դահլի վրայ նստած կնոջ եւ նրա դիմացը կանգնած մէկ ուրիշ կնոջ փորագրուած պատկերներով... երկու անձնաւորութիւններն էլ ունեն նախընտրով պատած շքեղ զրեստներ... ընդունելի է դարձել այն կարծիքը, ըստ որի՝ նստած կինը պտղաբերութեան ուրարտական աստուածուհին է՝ Սալզաստոյ ամուսին Արուրանին, որին երկրպագում է ուրարտական թագուհին: ... Յատկանշական է, որ ուրարտական արուեստի այս թեման, պատկերագրական նոյն առանձնապատկերներով, հանդիպում է իրանական՝ Աքեմենեան ժամանակաշրջանի կնիքի վրայ... այստեղ եւս ներկայացուած է նոյն նստած աստուածուհին, դիմացը կանգնած կնոջ պատկերով»¹⁷:

Հայկական լեռնաշխարհը անյիշելի ժամանակներից եղել է ձիու հայրենիքը: Հայաստանի ձին եւ Հայաստանը որպէս ձիարուծութեան երկիր այնքան նշանաւոր են եղել անտիկ աշխարհում, որ օտար նուաճողները նպատակներից մին եղել է ձիերի երամակներ տանել Հայաստանից: Ձին հին աշխարհում ռազմական մեծ նշանակութիւն ունէր, ուստի պետական կարեւոր գործ էր բանակին անհրաժեշտ քանակով ձիեր ապահովելը: Հենց այդ պատճառով էլ Ասորեստանի եւ Պարսկաստանի աշխարհակալները Հայկական լեռնաշխարհից իրենց տարած աւարների մէջ, կամ հայերի վրայ իրենց ունեցած դերիշխանութեան ժամանակներին որպէս տուրք պահանջաների մէջ, միշտ լինում էին մեծ քանակութեամբ ձիեր: Անդամ մեր ուրարտական արքաների՝ Ուրարտուն հզորացնելու եւ ընդարձակելու

14) Մեխիթիշվիլի, էջ 153:

15) Գ. Ա. Տիրացեան, Ուրարտական քաղաքակրթութիւնը եւ Աքեմենեան Իրանը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1964, քիւ 2, էջ 149:

16) Նոյն տեղում, էջ 150:

17) Նոյն տեղում, էջ 158 - 159:

Համար նուաճած նախնական ցեղ-երկրներից որպէս տուրք կամ աւար տարածների մէջ միշտ լինում էին ձիեր:

Սալմանասար Գ-ը (859-824 մ. թ. ա.) Ուրարտուի վրայ կատարած արշաւանքի առթիւ խօսում է տարած ձիերի մասին. նա միաժամանակ գրում է, որ Դայախնիի երկրի արքայ Ասիա-ն իրեն որպէս ընծայ ձիեր բերեց¹⁸:

Տիգլաթ-Պալասար Ա-ը (մօտ 1100 մ. թ. ա.) թափանցելով Հայաստանի խորքերը, իր յաղթած նախնական ցեղերից ստանում է 1200 ձի¹⁹:

Արածանիի եւ Արաքսի աւազանները ձիարուծութեան նշանաւոր շրջաններ էին: Սարգուրին էրիախի (Շիրակի) վրայ կատարած միայն մի արշաւի ժամանակ իր տարածների մէջ յիշում է 1613 ձի²⁰:

Է. Պանդադեանը, խօսելով Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. Գ հազարամեակի մշակոյթի մասին, գրում է, որ Հայաստանի վաղ բրոնզի դարաշրջանին պատկանող մի շարք հնավայրերում՝ Կիրովականում, էլարում, Շենդաւիթում կատարուած պեղումներից յայտնաբերուել են ձիերի ոսկորներ²¹:

«Եզեկիել մարգարէն (592-570), խօսելով Տիրոս քաղաքի մասին, վկայում է. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք եւ հեծելովք եւ ջորւովք ցրին զվաճառս քո»²²: «Երկիրը (Հայաստանը), — ասում է Սարգոնը, — ձիերի համար ունի հարուստ արօտներ, որոնք մարահաններից վատ չեն, այնպէս որ նեսէական ձիերը, որ դործածում էին պարսից թագաւորները, այնտեղից էլ էին բերում, եւ Հայաստանի սատրապը պարսից թագաւորին ուղարկում է տարեկան 20.000 քուռակ»²³: Սումերներն արդէն ձիուն ճանաչում էին որպէս լերան էջ:

Ձիերով նշանաւոր երկիրն էլ, բնականաբար, պիտի ունենար իր նշանաւոր ձիաւորները. եւ իսկապէս էլ Հայկական այրուձին մեծ համբաւ է ունեցել անցելու: Մեծն Ալեքսանդրի դէմ մղուած Գաւ-

18) Եղիա Քասուհի, նշում գիրքը, էջ 247:

19) Luckenbill, Պշում գիրքը, էջ 82:

20) Մելիքիշվիլի, էջ 284:

21) Է. Խանգալեան, «Հայկական լեռնաշխարհի մշակոյթը», մ. ք. ա. Գ հազարամեակում, Երևան, 1967, էջ 40 - 41:

22) Լ. Գ. Ճամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», 1963, էջ 115:

23) Նայն տեղում, էջ 140:

դամելայի ճակատամարտում Դարեհին օգնելու համար Հայերը բերել էին 40.000 հետեւակի հետ 7000 ձիաւոր: Այս թիւը այդ ժամանակների համար շատ մեծ էր: Այս թիւի մեծութիւնը կարելի է պատկերացնել՝ եթէ աչքի առաջ բերենք այն, որ Ալեքսանդրը ամբողջ Ասիան գրաւելու համար հենց 7000 ձիաւորներով էր անցել նեղուցը:

Հայկական ձիու համբաւն ու Հայկական ձիաւորի քաջութիւնն են մարմնացնում եւ անձնաւորում Քուռկիկ Ջալալին ու Սասունցի Դաւիթն իր Թուր-կայծակիով:

Քսենոֆոնի վկայութիւններից դիտենք, որ Հայերը ձի էին դահաբերում իրենց արեւի աստծուն: Արդէն Հայերի մօտ, հեթանոսական ժամանակներում, ձին խորհրդանշում էր արեւի աստուածութիւնը: Քուռկիկ Ջալալին կարողութիւն ունէր Դաւիթն ու Մհերին մինչև արեւին տանելու: Այդ հաւատքի լաւ յուշարձաններից են Հայաստանում կատարուած պեղումներից գտնուած եւ հեթանոսական ժամանակներին պատկանող մի շարք բրոնզէ գօտիները, որոնց վրայ պատկերուած են արեւի ձիերը: Այս գօտիների եւ արեւի ձիերի մասին ճիշդ մեկնաբանութիւններով հանդէս է եկել Յարութիւն Մնացականեանը իր «Արեւապաշտութեան հետքերը հին Հայաստանում ըստ բրոնզէ պեղածոյ իրերի» յօդուածով²⁴:

Ուրեմն ձին Հայաստանում ներկայացնում էր արեւի աստծուն: Դա նշանակում է, որ այն կարող էր կրել Ար կամ Եր անունը. եւ ահա մենք ունենք երկվար բառը, որի եր- սկզբնամասը անկասկած ներկայացնում է մեր արեւի Ար (կամ Եր) աստուածութիւնը. հետեւաբար պիտի չզարմանալ, եթէ Հայկական Երուանդ անունը հասել է Իրան մեր ուրարտական ժամանակներին (Իշպուինիի եւ Մենուայի ժամանակներում կամ դուցէ աւելի առաջ) ստանալով «արազ», «քաջընթացիկ ձիաւոր» իմաստները եւ որպէս հասարակ բառ մտել օգտագործման մէջ, այնպէս ինչպէս մեզ մօտ պարթեւ բառը՝ պարթեւներից, եւ հսկայ բառը՝ սկիւթներից:

Հայկական Երուանդ անունն պէս Պուրրի-Միտանեան հօգր թագաւորութեան ժամանակներին ձիաւոր խուրրի ասպետների համբաւը «մարեանի» անունն տակ մտել էր Իրան ու հասել Հնդկաստան՝ մտնելով գործածութեան մէջ՝ ձիաւոր ասպետ նշանակութեամբ:

Նախի եւ Ուրուաարի անունների նշանակութեան մասին խօ-

24) Յ. Մնացականեան, «Աշխատութիւններ», Հայաստանի պետական պատմական քանդաքանի, հատոր Ա, Երևան, 1948, էջ 67:

սելիս մենք ցոյց էինք տուել, որ Հայկական լեռնաշխարհում անյիշելի ժամանակներից արեւն ու կրակը պաշտամունքային տեսակէտով եղել են իրար լրացնող եւ հոմանիշ ու համազոր հասկացողութիւններ եւ պաշտուել են միասին, որպէս միեւնոյն աստուածութեան տարրեր երեւոյթներ: Նշել էինք միաժամանակ, որ առիւծն եղել է կրակ-արեւ աստծոյ խորհրդանիշը: այդ առթիւ յիշել էինք առիւծածեւ Մհերին եւ Միտանիի մեծ արքայ Սոսատարի (1450 մ. թ. ա.) կնիքի վրայ դանուող արեւի թեւաւոր դիսկը երկու առիւծների վրայ. եւ ահա, երբ Իրանի ժողովուրդների խորհրդանիշն էր վիշապը՝ ատգահաւն (անգամ մար նշանակում է «օձ»), Իրանի ներկայ դրօշի վրայ էլ տեսնում ենք արեւի ճառագայթաւոր դիսկը առիւծի վրայ: Ոչ մի կասկած, որ դա կրում է խուրրի-միտանեան-ուրարտական դիցարանութեան եւ հոգեւոր մշակոյթի ազդեցութիւնը: Ուստի միանգամայն ճիշդ պիտի լինի ընդունել, որ Իրանի արեւ-կրակ աստծոյ պաշտամունքը կրում է Նաիրեան-Հայկական ազդեցութիւն:

Մենք վերելում խօսել էինք այն մասին, որ կրակի պաշտամունքն սկսել է, նախքան կրակի վիւարը, լեռների դազաթից ժայթքող հրաբխի պաշտամունքով, այդ պատճառով էլ արեւի եւ կրակի պաշտամունքը անյիշելի ժամանակներից կատարում էր լեռների բարձր տեղերում եւ դազաթիւններում: Մենք խօսել ենք Արագած անուան Արայի դահ նշանակութեան մասին. դա նշանակում է, որ դործում էր Արագածի հրաբուխը եւ պաշտում, կամ Արագածի վրայ շատ հին ժամանակներում եւ Ուրարտուի ժամանակ արեւի պաշտամունք էր կատարում: Խորենացին Արագածի համար ասում է «արեւդակնաճեմ լեռոն» (Ա—Ժբ): Լեռների գլխին կատարուող արեւի պաշտամունքն այնքան խոր արմատներ է ունեցել եւ այնքան խոր անցեալից է դալիս, որ Հայկական լեռնաշխարհի շատ լեռներ եւ դազաթիւններ կրում են Ար եւ Եր անունը: Արարատ (Ուր-արդի) անունը հենց նշանակում է Արայի վայր: Սեւանի մօտ ունենք Արեգունի լեռը, որի լանջերին դանուել են պալէոլիթի ամենավաղ շրջանի քարէ դործիքներ²⁵: Բազրեւանդի Մազկանց լեռներում Երիտաւ լեռը յիշուած է Սարգսնից: Տալբում ունենք Արսեաց²⁶ լեռները եւ այլն: Հայ-

²⁵ Հ. Գ. Ժամկոչեան, «Հայ ժողովրդի պատմութիւն», հատոր II, 1963, էջ 38:

²⁶ Համբարձում Առաքելեան, «Համբարձուական բառարան», Թիֆլիս, 1915, հատոր II, էջ 1435:

կական լեռնաշխարհում արեւի պաշտամունքի այս երեւոյթի հետ եթէ միացնենք եւ այն, որ հայերը արեւին (խոր անցեալում) ձի էին զոհարեւում եւ դրա համար էլ ունենք երիւթար անունը իր Եր (Արա) սկզբնամասով, ապա դժուար չի լինի հասկանալ, թէ որտեղից է ծագում Իրանում արեւի պաշտամունքի հետ կապուած հետեւեալ ծիսակատարութիւնը (բերում Յ. Մնացականեանի կողմից).

«Արեւի մատուցելիք ողջունի թափօրը արեւածագէն առաջ կը կազմուէր: Քահանայապետը թափօրը կ'առաջնորդէր՝ անոր կը հետեւէին մոզերու երկար շարան մը անրիժ ճերմակ հաղնուած: Տաղեր կ'երգէին ու արծաթեայ բուրվառներուն մէջ սուրբ կրակը կը տանէին: Մոզերուն կը հետեւէին 365 պատանիներ՝ կարմիր հագնուած, որոնք կը ներկայացնէին տարուայ 365 օրերը եւ կրակը: Ասոնց կը հետեւէր Արեւի կառքը, թափօր, ծաղկեպսակներով զարդարուած, որուն լծած կ'ըլլային հոյակապ ճերմակ ձիեր-զուտ ոսկեայ սապաղէնով: Յետոյ կու գար փառաւոր կեցուածքով ճերմակ ձի մը, որուն ճակատը սկուռնով զարդարուած կ'ըլլար... ճերմակ ձիուն կը հետեւէր թաղաւորը ոսկեպարզ փղոսկրեայ կառքին մէջ նստած...»:

«Շքաթափօրը կազմուած էր արեւածագից առաջ եւ բարձրանում էր Օրոնտէս լեռան վրայ ու այնտեղից խնկարկում եւ երկրպագում Արեւ աստծոյ երկրի վրայ ընկնող առաջին ճառագայթները»²⁷:

Թափօրում զարդարուած ճերմակ ձին (որը յիշեցնում է մեր՝ արեւին զոհարեւած ձին), արեւը պաշտելու համար լեռ բարձրանալն ու լեռան Օրոնտէս (Երուանդ-Արուանդ) անունը (այս երեք երեւոյթները միասին) կասկած չեն թողնում, որ այստեղ գոյութիւն ունի հայկականի ազդեցութիւն եւ ընդօրինակութիւն: Այս առթիւ պիտի նշենք, որ մեր Արա դիցանունը (որին մենք զոհարեւում էինք երիւթար), սլաւոնների մօտ ճանաչուած է որպէս Եար կամ Եարիլոյ անունով աստուածութիւն, այնպէս որ «Բելոռուսիայում Եարիլոյի պատկերացնում էին որպէս սպիտակ ձիու վրայ նստած մի մարդու...»²⁸:

Տիրացեանն իր վերոյիշեալ յօդուածում գրում է, թէ «Սեպա-

²⁷ Յարութիւն Մնացականեան, Արեւապաշտութեան հետեւերը հին Հայաստանում ըստ բրոնզէ պեղածոյ իրերի, «Աշխատութիւններ» Հայաստանի պետական քննարկման, հատոր II, Երևան, 1948, էջ 83 - 84: Ներքին չափերով մէջ աբուստակայերէնով գրուած մասը Մնացականեանը բերել է Մ. Գ. Ֆերահեանից, «Բրիտանական ինքնապատմութիւն» եւ հին հեթանոս կրօններու բազմապատկանք, էջ 470 - 471:

²⁸ Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունք», էջ 82 եւ 98:

դիր նիւթերից քաղուած անձնանունները եւ, որը յատկապէս կարեւոր է, տեղանունների վերլուծութիւնը ցոյց տուեց, որ Թ դարի առաջին կէսից սկսած այդ (իրանական) ցեղերը վիշապակոչուած են իրանական սարահարթի հիւսիս-արեւմտեան մասերում, աւելի կոնկրէտ՝ Ուրմիոյ լճի շրջակայքում, ներառեալ հիւսիսային եւ արեւմտեան շրջանները, իսկ երբեմն նոյնիսկ Հայկական լեռնաշխարհի որոշ հատուածներում: Այստեղից է, որ իրանական ցեղերից մարականները շարժուեցին դէպի արեւելք, դէպի բուն Մարաստան, իսկ պարսկականները՝ դէպի հարաւ, Փարս կամ Պարսք նահանգը»²⁰:

Մենք տեսնուք, որ հենց Ուրմիայի լճի եւ Պարսկաստանի այս շրջանները զբաղուած էին մեր ուրարտական արքաների կողմից: Հայկական այրուձին իր սմբակների տակ տրորելով Պարսկաստանի հողերը, անկասկած, պիտի իրեն հետ Իրան տանէր համբաւը հայ ձիաւորի ու Երուանդի: Աճառեանի կարեւոր նպատակն այստեղ այն է, որ նա ցոյց տուեց, որ Երուանդ անունը տարածուել է Իրանում (երեւի այստեղից էլ Հնդկաստան) եւ անգամ դարձել հասարակ բառ «արագ», «քաջ», «քաջընթացիկ, արագընթաց [ձի]» (կամ ձիաւոր) իմաստներով: Ի հարկէ սա միակ անունը չէ, որ դնաց Իրան եւ տարածուեց:

Մեր ուրարտական արքաներն իրենց արշաւանքները կատարում էին Խալդի եւ Թէյշերա(ինի) աստուածների անունով, եւ ահա Թէյշերաինի անունը Իրանում պահուել է (պ՛հ.) Դիւշման «ոսոխ» բառով. խրթրդ քուշպան «ոսոխ»: Դիւշման ձեւը Իրանից աւելի ուշ ժամանակներին տարածուել է ամբողջ արեւելքում եւ մեր լեզուին տուել է քշմամի բառը: Ուրարտական Մարդուրի (Ա՝ գուցէ եւ Բ) արքայի ռազմական սխրագործութիւններն էլ Իրանում ունեցել են մեծ հռչակ, զրա համար Սարգուր անունն էլ պահուել է Իրանում սարդար «գորավար» բառով:

Ուրարտական արքաների խտուրթիւնները նուաճուող եւ Ուրարտուին կցուող նախրեան այլ երկրների եւ նրանց իշխող դասի նկատմամբ յայտնի են արձանագրութիւններից: Բնականաբար այդ վերաբերմունքը պատճառ պիտի դառնար, որ արժանապատուութիւնը վերաւորուած զգացող իշխաններից ոմանք (անգամ ուրարտական դինաստիայի իշխաններից, նոյնպիսի զգացումներով զժգոհ ոմանք)

20) Տիրացեալ, յիշուած յօդուածը, նոյն տեղում, էջ 163:

առիթը պիտի գտնէին հեռանալու Ուրարտուից եւ ապաստան որոնելու Մարաստանում:

Ահա այդպիսիներից մէկը պիտի լինի Երուանդ Սակաւակեացը (կամ սրանից առաջ մի այլ Երուանդ), որը հաւանաբար իր կողմ շահելով Պարսկաստանում ու Մաննայում գտնուող հայկական պահակազորերին եւ սահմանամերձ հայկական ցեղերին, հզորացած մարերի հետ եկել ու տապալել էին ուրարտական թագաւորին ու զբաւել Տուշպան:

Ի հարկէ նրանք կուրացած՝ իշխանամուրթիւնից՝ չպիտի զգային այն սխալը (դա հայերի մէջ գժրախտ երեւոյթ է), որ կտարելով ուրարտական պետութեան ուժը՝ պիտի իրենց հետ մայր Ուրարտուն էլ դնէին մարերի գերիշխանութեան տակ:

Յաղթող մարերն ի հարկէ չէին կարող անգամ մտածել ուրարտական հպարտ, հերոս եւ պետական տրագիգիաներով հարուստ ու զարգացած ժողովրդի դահլի վրայ նստեցնել մի ոչ հայ: Այդպիսին մի օր էլ չէր մնայ դահլի վրայ: Յետոյ զբանով կը կորցնէին հայերի համագործակցութիւնը իրենց աւելի մեծ եւ լայն ծրագիրների իրականացման գործում:

Մարերը, ի հարկէ, իրենց որպէս ուժեղ պետութիւն ասպարէզ իջնելուց առաջ չէին կարող անգամ երազել, Ուրարտուի հզօրութեան ժամանակ, Ասորեստանի աշխարհակալ արքաների հետ չափուող ուրարտական հպարտ արքաների հետ բնտանեկան կապերի մէջ մտնել, բայց ուրարտական հզօր դինաստիայի անկումով՝ առիթը չպիտի փախցնէին խնամիական կապ հաստատելու ուրարտական մեծ պետութիւնը ժառանգած եւ արդէն ենթակայ կամ գոնէ բարեկամ Երուանդունիների հետ: Այսպիսի կապը ազգային շահերի տեսակէտից ձեռնուող էր եւ պատուաբեր ոչ միայն մեր հայ Երուանդներին, այլեւ մարերին ու Աքեմենեաններին: Այս կապերը, ի հարկէ, պիտի ունենային իրենց արձագանգը միջազգային հրապարակի վրայ (եւ ունեցել են) մեր Երուանդին ու Երուանդներին համարելով սերուած Աքեմենեաններից: Ի հարկէ այս կէտն էլ որոշ առումով կարելի է ճիշդ համարել, քանի որ Երուանդի կին եղող պարսիկ հարսը յաջորդ Երուանդի (ծնող) մայրը կը լինէր, բայց դա դեռ բաւական չէ, որ մեր Երուանդները պարսիկ համարուեն: Անգամ մեր ժամանակների Անդրիայի դահլի վրայ գտնուող Էլիզաբէտ թագուհու ամուսինը յոյն (իշխան) է, բայց դա պատճառ չէ, որ նրանց զուակը, որ Անդրիայի համառանգն է, յոյն համարուի:

Ոչ մի կասկած, որ մեր Երուանդները հայեր էին: Երուանդ կամ Արուանդ անունը Իրանում դասած տարածումը չի կարող փաստ համարուել, որ մեր Երուանդները պարսիկ են, մենք արդէն ցոյց տուեցինք այդ անունան ծագումը:

Այսպիսով՝ վերջնականապէս պիտի վերացնել այն անհիմն տեսակէտը, որ իբր թէ հայերն Ուրարտուի անկման ժամանակներին զալով (ներգաղթելով կամ ինչ-որ անբացատրելի եւ աննկատ ձեւով ներթափանցելով) արեւմուտքից, եկել եւ զբաւել են Ուրարտուի գահը:

Առաջին հազարամեակի (մ. թ. ա.) սեպագիր արձանագրութիւններից զիտենք զիւմմերների եւ սկիւթների Հայկական լեռնաշխարհում եւ հարեւան երկրներում յայտնուելու մասին, բայց Ուրարտուի (եւ Ասորեստանի) արքաների արձանագրութիւնները արմենո-հայ ցեղերի դէպի Ուրարտու ներթափանցման կամ ներխուժման մասին ոչինչ չեն ասում: Բիտինայի անկումից (590 մ. թ. ա.) մինչեւ Դարեհի դէմ արմէնների մղած հինգ ճակատամարտերը (520 մ. թ. ա.) տեւող 70 տարուայ ընթացքում էլ արմենո-հայ ցեղերի շարժման կամ դալստեան մասին ոչ մի յիշատակութիւն չգիտենք: Արմէն-հայերը եղել են ու գտնուել են նոյն վայրերում:

Հայկական Նաիրեան ցեղերը ուրարտական պետութեան հիմնադրումից շատ առաջ գտնուում էին Ուրարտուի մէջ եւ հենց իրենք էլ կազմեցին այդ հզոր պետութիւնը, եւ իրենք էլ ուրարտական գահին տուեցին հայ գահակալների մի հզոր զինաստիւ, որին փոխարինելու եկաւ հայ Երուանդունիների նոր զինաստիւն: Այս զինաստիւն անընդհատ մնաց հայոց գահի վրայ (հաւանաբար) մինչեւ Երատոն, եւ եթէ Երատոյով վերջ գտան Երուանդականները, ապա դա պիտի բացատրել ո՛չ թէ միայն միջազգային ռազմաքաղաքական նոր իրադրութեամբ, այլեւ Երուանդական Արտաշեսանների վերջին շոտաւիղի (Երատոյի ու նրա եղբայր-ամուսնու) արու գուակ (կամ գուակ) չունենալու պատճառով:

Արդէն զիտենք, թէ ինչ պատահեց Երատոյից յետոյ, մանաւանդ քրիստոնէութեան մուտքով, երբ հայ ժողովուրդը լքեց իր կենսատու ու հզոր Արային, եւ նրա հետ էլ աստիճանաբար մարեց հայոց քաղաքական արեւը:

ԳԼՈՒԽ Ժ.

ԱՐ-Ի ԱՐՏԱՑՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՒ ԱՐԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ

Մենք արդէն զիտենք, որ հայերի ազգային մեծ արեւի աստուած Ար-ը դուրս գալով իր հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններից՝ տարածուել է աշխարհի տարբեր ցամաքամասերում ու երկրներում իր անունն ու բովանդակութեան տարբեր երանգաւորումներով: Մենք նշել էինք, որ Ար-ը տարածուելով Փոքր-Ասիայում՝ անցել է խեթերի երկիր (որպէս Ara) եւ Պամփիլիա (Er), մուտք է դործել Եւրոպա՝ հասնելով Թրակիա-Սպարտա-Յունաստան (Ares), Մակեդոնիա (Aras), հիւսիս-արեւելքում նա հասել է Վրաստան (Arali) ¹, Վրաստանի վրայով անցել է Կովկասեան լեռնաշղթան եւ հասել Ռուսաստան-Ուկրանիա-Բելոռուսիա (harp, harrիոյ), հարաւից անցնելով Ասորիքի Սառան քաղաքով (Aru)՝ հասել է Ափրիկեան մայր ցամաք՝ հաստատուելով փարաւոնների երկիր Եգիպտոսում (Ra), իսկ հարաւ-արեւելքում՝ Բարեւոնում (Aria):

Մենք գտնում ենք, որ այս յիշուած երկրները դեռ մի մասն են այն շրջանների, որտեղ տարածուել է արեւի այս մեծ աստուածութիւնը, որովհետեւ այն ստացել էր համամարդկային տիեզերական նշանակութիւն:

Այստեղ ցանկանում ենք յատուկ նշել, որ Ար-ի այս տարածումը չի եղել ամէն տեղ առանց ար-երի (հայ-արմէնների): Երեւոյթները խօսում են այն մասին, որ շատ տեղեր հենց արերն են տարել իրենց հետ իրենց Ար աստուծուն ու տարածել:

¹) Գր. Ղափանցեան, «Արա Գեղեցկի պաշտամունք», էջ 81—82:

Աշխարհի տարբեր մասերում հայերի եւ հայկական դաղթօ-
ջախները գոյութիւնը չի պատկանում միայն վերջին դարերին: Անյի-
շելի ժամանակներից արեւրը արտահոսել են իրենց մայր երկրից զա-
նազան ու բազմազան պատճառներով: Հայկական լեռնաշխարհի կլի-
մայական խիստ պայմանները, աշխարհագրականօրէն մայր ցամաք-
ների նկատմամբ ունեցած խաչմերուկային դիրքը, արեւելքից, ար-
եւմուտքից, հարաւից եւ հիւսիսից ներխուժող մրցակից ոսոխների
եւ անդիմադրելիօրէն ահեղ արշաւանքների նպատակակէտ կամ ան-
ցուղի լինելը, հետեւաբար երկրի անապահով վիճակը, օտար նուա-
ճողների կողմից դրուած ծանր եւ անտանելի հարկերը, պատճառ են
դարձել, որ հայ ժողովուրդը արտահոսի դէպի մօտ ու հեռաւոր
երկրներ: Ի հարկէ արտահոսքը չի եղել միայն արտաքին ահեղ եւ
անդիմադրելի ներխուժումների առաջից փախչելով ու դերեվարում-
ներով, այլ յաճախ կամաւոր պատճառներով: Անյիշելի ժամանակ-
ներից հայ-արմէնները եղել են նշանաւոր առեւտրականներ, որոնցից
չատերը երթեւեկել են օտար երկրներ ու անդամ առեւտրական դաղ-
թաւայրեր են հաստատել հեռաւոր վայրերում:

Հերոզոտի պատմածներից գիտենք, որ Հայաստանի եւ Բա-
բելոնի միջեւ առեւտրական մշտական կապ է գոյութիւն ունեցել Եփ-
րատ գետի վրայով: Քսենոֆոնի պատմածներն էլ ցոյց են տալիս, թէ
արմէնները այնքան նշանաւոր են եղել որպէս հեռաւոր երկրներ եր-
թեւեկող առեւտրականներ, որ Պարսկաստանի Կիւրոս արքան (Չ
դար մ. թ. ա.) խնդրել է արմէն առեւտրականներից ուղեկցելու
պարսիկ զեսպանին եւ միջնորդելու Հնդկաստանի արքային ներկա-
յանալու համար: Մենք արդէն գիտենք Հնդկաստանում հայ առեւ-
տրականների հաստատած հին դաղթաւայրերի մասին: Հայ առեւ-
տրականները խաղաղ օրերին Հայաստանի իւրայատուկ եւ արտաքին
աշխարհում յարգի արտադրութիւնները (գինի, որդան կարմիր, գիւ-
ղատնտեսական ապրանքներ, ձի, մետաղներ եւ այլն) տարել են օտար
երկրներ ու վաճառել:

Հեթանոսական խոր անցեալում ռազմական, տնտեսական, շի-
նարարական եւ արուեստի ասպարէզներում մեծ նշանակութիւն են
ունեցել պղինձը, պրոնզը, երկաթը, արծաթն ու ոսկին, իսկ Հայկա-
կան լեռնաշխարհը որպէս հանքերի եւ հանքարդիւնարերութեան հա-
րուստ երկիր դարձել էր այս մետաղների արդիւնահանման, մշակ-
ման, ինչպէս եւ մշակութային այլ առարկաների արտադրութեան
նշանաւոր երկիր, հետեւաբար այս արտադրութիւնների արտահա-

նումը օտար երկրներ պիտի առաջացնէին հայ առեւտրականների մեծ
խմբեր, մանաւանդ որ արտահանման միջոցներն էլ չէին պակասում:
Հայերը շատ հին ժամանակներից նշանաւոր էին ձիարուծութեան մէջ
(մենք խօսել ենք վերելում Նաիրեան ցեղերի ձիարուծութեան մա-
սին), ուստի ձիերի եւ ջորիների կարաւանները հեշտացնում էին փո-
խադրութեան դորձը դէպի արտաքին աշխարհ. դէպի արտաքին աշ-
խարհ երթերին նպաստում էին նաեւ Հայկական լեռնաշխարհից բխող
դետերի ուղղութիւնները. Տիգրիսն ու Եփրատը դէպի հարաւ, Կուրն
ու Արաքսը դէպի արեւելք, Ճորոխը, Գայլ գետն ու Ալիսը դէպի հիւ-
սիս՝ դէպի Սեւ ծովի ելքերը. ուստի հայերը շատ հին ժամանակներից
պիտի ունենային յայտնի առեւտրականներ, հետեւաբար եւ օտար
երկրներում առեւտրական դաղթաւայրեր:

Հեռաւոր երկրներում հայ դաղթօջախների առաջացման կա-
րելու պատճառներից պիտի համարել հայկական զորամասերի բարե-
կամական, դաշնակցային կամ վասալական պարտաւորութիւններով
օտար (հարեւան եւ հեռաւոր) երկրներում կատարած ծառայութիւն-
ները: Թէեւ օտար երկրներում ծառայող հայկական զորամասերը
պէտք է վերադառնային ծառայութեան աւարտից յետոյ, բայց լինում
էին սրբազաններ, երբ նրանք կամ նրանցից շատերը մնում ու հաս-
տատում էին օտար երկրներում՝ հաստատելով հայկական դաղթօ-
ջախներ:

Քսենոֆոնը (Չ դար մ. թ. ա.) պատմում է, թէ Կիւրոսը,
գալով Հայաստան հայոց թագաւորին հարցնում է. «Ինչո՞ւ զօրք չես
ուղարկում...»: Հերոզոտի (480 մ. թ. ա.) պահած տեղեկութիւն-
ներից հասկացւում է, թէ յոյների դէմ կռուող Քսերքսէսի բանակում
կային հայկական զորամասեր: Մենք գիտենք նաեւ, որ Մեծն Ալեք-
սանդրի դէմ մղուած Գաւգամելայի (Արբելա-էրբիլի մօտ) ճակատա-
մարտում (331 մ. թ. ա.) Գարեհին օգնելու համար հայերն ուղարկել
էին 40 000 հետեւակ զինուոր եւ 7000 այրուձի: Մեղ յայտնի են նաեւ
արմէն զորամասերի խեթերի մօտ (կամ հեռ) ունեցած ծառայու-
թիւնները. արդէն վերելում (Գ գլխում) նշել էինք Տիգրաթ-Պայա-
սարի մի յիշատակութիւնը՝ «Չորս հազար կասիկ եւ Ուրումի [մար-
դիկ]՝ Hatti երկրի զինուորների...» մասին:

Աշխարհի տարբեր երկրներում հայկական դաղթօջախների ա-
ռաջացման համար մենք չենք ցանկանում օրինակ բերել մեծ եղեւնը,
որի պատճառով համաշխարհային մի ամբողջ Սփիւռք է առաջացել:
Օսմանեան թուրքերի կողմից իրենց ենթակայ խաղաղ եւ անմեղ

ընակչութեան հանդէպ) պետականօրէն եւ սառնասրտօրէն ծրագրուած ու գործադրուած եղեռնը չունի իր նախադէպը աշխարհի պատմութեան մէջ: Մարդիութեան հանդէպ դա մի ահաւոր ոճիր էր, որը չեն գործել ո՛չ ասսուրական արիւնարբու արքաները, ո՛չ պարսկական Շապուհն ու Շահաբբասը, ոչ էլ Լենգթիմուրն ու Ջինգիզխանը, որովհետեւ նրանց աւերիչ եւ արիւնահեղ արշաւանքներից յետոյ հայութիւնը մնում էր աէրը իր երկրի:

Մենք վստահելի տուեալներ ունենք անցեալ (պատմութիւնը մեզ յայտնի) դարաշրջաններում, աշխարհի տարբեր երկրներում եւ մայր ցամաքներում հայկական բազմաթիւ դաղթովայրերի դոյութեան մասին: Ի հարկէ մեր նպատակից դուրս է խօսել բոլորի մասին եւ ծրագրից դուրս՝ այստեղ բերել նրանց առաջացման կոնկրէտ պատճառները, բայց կարող ենք նրանցից յիշել մի քանիսը.

Պարսկաստանում ունեցել ենք հայկական դաղթօջախներ շատ վաղուց. ոմանք նրանց սկիզբ են համարում Շապուհի՝ Հայաստանից կատարած մեծ զերեւաբուծութիւնները. մինչդեռ այդտեղ հայկական դաղթօջախ հաստատուած պիտի լինի այն ժամանակներից, երբ մեր Իշպուլինին ու Մենուան արշաւելով Պարսկաստան՝ այդտեղ բերդեր շինեցին եւ հայկական կայաղորներ տեղաւորեցին:

Միջագետքի հայկական դաղթօջախները չունեն կոնկրէտ ըսկիզբ. այդտեղ հայկական դաղթօջախ է դոյութիւն ունեցել շատ վաղուց. խօսքը չի վերաբերում Բաղդադի հին դաղթօջախի մասին, որը պատկանում է աւելի ուշ շրջանին, ի հարկէ Դարեհի յիշած Արախայի ժամանակ (520 մ. թ. ա.) պէտք է Բարելոնում դոյութիւն ունեցած լինի հայկական դաղթ (մենք յիշել ենք նաեւ Բարելոնի եւ Հայաստանի միջեւ վաճառականական կապը):

Երուսաղէմում քրիստոնէութեան ծաղումից յետոյ, 2 դարում, հայկական դաղթօջախ է առաջացել Ս. Յակոբ վանքի շուրջ²: Եգիպտոսում էլ հեթանոսական ժամանակներին եղել են հայկական դաղթօջախներ, բայց կոնկրէտ տուեալները վերաբերում են առաջին դարին (մ. թ. ա.)³:

Սիրիայի եւ Լիբանանի հայկական դաղթովայրերը չունեն

2) Ա. Գ. Արքահամեան, «Համառոտ ուրուագիծ հայ գաղթովայրերի պատմութեան», Երևան, 1964, էջ 264:

3) Նոյն տեղում, էջ 128:

սկիզբ. նրանց մասին գիտենք խուրբի-միտանեան ժամանակներից. այս մասին դեռ կ'անդրադառնանք մանրամասնութեամբ:

Կիպրոսի հայկական դաղթօջախի մասին գիտենք Դ դարից³: Իսկ Ռուսաստանի դաղթովայրերի մասին մեզ հասած կոնկրէտ տուեալները վերաբերում են ԺԵ դարին, թէեւ եաքն ու Խարիլոն խօսում են այն մասին, որ հայերը վաղուց են եղել այնտեղ:

Եւրոպան էլ անյիշելի ժամանակներից եղել է հայկական դաղթօջախների վայր:

Լեհաստանի հայկական դաղթովայրի (Գալիցիա) մասին մեզ յայտնի տուեալները վերաբերում են ԺԳ դարին⁴, Հոլանդիայինը՝ ԺԱ դարին, Ռումինիայինն ու Հունգարիայինը՝ Ժ դարին⁵, իսկ Բիւզանդիայինը՝ է դարին⁶:

Պէտք է ասել, որ Բալկանեան թերակղզին դանուելով Փոքր Ասիայից Եւրոպա բացուող դրան անմիջապէս ետեւում՝ պիտի շատ վաղուց վայր եղած լինի հայկական դաղթօջախների: Բալկաններում եւ ընդհանրապէս Եւրոպայում հայկական հին դաղթօջախների դոյութեան մասին մեզ հասել են երկու տիպի տուեալներ. առաջինը հին մասնագրութեան մէջ պահպանուած ազօա եւ կիսաառասպելական յիշատակութիւններն են, իսկ երկրորդը պատմականօրէն աւելի յայտնի եւ կոնկրէտ վկայութիւններ: Ըստ երկրորդ տիպի տուեալների՝ Բալկաններում՝ հայկական դաղթօջախներում ապրած հայերի թիւը հասել է մեծ չափերի եւ նրանց սաղմաքաղաքական գործունէութիւնը ունեցել է պատմական նշանակալի հոչակ:

Ա. Գ. Արքահամեանը գրում է, թէ «սկսած Դ դարի վերջերից հայ ընակչութեան մեծաթիւ զանգուածներ թողնում են հայրենի երկիրը եւ դաղթում Բիւզանդիա: Հայ դաղթականութեան այդ հոսանքը անընդմէջ շարունակուում է մինչեւ ԺԲ դարը: Հայ տարագիրները Բիւզանդիայի տարբեր բնակավայրերում ստեղծում են ստուար դաղթօջախներ եւ գործուն դեր կատարում կայսրութեան կեանքում՝ տալով աչքի ընկնող բազմաթիւ ներկայացուցիչներ քաղաքականութեան, զինուորականութեան, տնտեսութեան եւ գիտութեան բնագաւառներում: Բիւզանդիայի ընակչութեան հիմնական տարրը, յոյներից յետոյ, փաստօրէն հանդիսացել են հայերը: Բիւզանդիայում

3) Նոյն տեղում, էջ 128:

4) Նոյն տեղում, էջ 202:

5) Նոյն տեղում, էջ 333 եւ 350:

6) Նոյն տեղում, էջ 308:

այդ ժամանակաշրջանում յիշուում են երեսունի մօտ հայազգի կայսրեր եւ հարիւրաւոր զօրահրամանատարների անուններ: Բիւզանդական բանակներում հայկական ամբողջական լեզուներ են գործել: Երկրի կեանքում մեծ դեր են ունեցել նաեւ հայ վաճառականները եւ արհեստաւորները⁷:

(Այստեղ միջանկեալ պէտք է նշել, որ բիւզանդական արուեստը հայկականի հետ համեմատելիս եւ նմանութիւններ տեսնելիս՝ դիտնականները՝ բիւզանդականը հայկականի հետ կապ չունեցող եւ անկախ արուեստ համարելով՝ հայկականը (միակողմանիօրէն) բիւզանդականից ազդուած են համարում, առանց հաշուի առնելու այն, որ Բիւզանդիայի բնակչութեան ու ղեկավար տարրի զգալի մասը եղել են հայեր, որոնք կարեւոր մասնակցութիւն եւ ազդեցութիւն են ունեցել երկրի զարգացման գործում, որով բիւզանդական արուեստը ինքնին ունի հայկական խմորում):

Այստեղ ուշադրութիւն դրաւօղն ի հարկէ այն է, որ օտար երկրներում հայկական զօրամասերը ոչ թէ միայն ունեցել են քաջութեան ու սիրամեքենի մեծ հռչակ, այլեւ կարեւոր դեր են խաղացել երկրի ռազմաքաղաքական կեանքի ձեւաւորման գործում: Վստահելի եւ հռչակուած հայկական զօրամասերը չեն գործել միայն Բիւզանդիայում, նրանք ուղարկուած են նաեւ Եւրոպայի տարրեր շրջաններ՝ ուր որ պէտք է եղել ռազմական դժուար եւ խիզախութիւն պահանջող գործ տեսնելու: Հայկական զօրամասերի հեռաւոր երկրներում ունեցած այսպիսի գործունէութիւններից էլ առաջ են եկել հայկական մի շարք գաղթօջախներ:

Ա. Գ. Արրահամեանը գրում է, թէ՛ «Հայ զինուորական մի այլ օջախ Զ դարում գտնուել է Իտալիայի Ռաւեննա քաղաքում, որն Իտալիայի էկզարխութեան կենտրոնն էր հանդիսանում: Հայկական այդ զօրամասերը, հաւանական է, Իտալիա են տեղափոխուել բիւզանդական հայ զօրահրամանատար Ներսէսի հետ միասին, որին Յուստինիանոս առաջինը 550 թուականին նշանակել էր բիւզանդական բանակի գլխաւոր հրամանատար Իտալիայում՝ զոթերի դէմ վարուող ռազմական գործողութիւնների ժամանակ: Ներսէսին, ինչպէս յայտնի է, յաջողուեց յաղթանակ տանել զոթերի դէմ, դուրս անել նրանց Իտալիայից եւ նշանակուել Իտալիայի կառավարիչ»⁸:

7) Ա. Գ. Արրահամեան, նոյն տեղում, էջ 30:

8) Ա. Գ. Արրահամեան, նոյն տեղում, էջ 42:

Հայերն օտար երկրներում աշխատել են իրար մօտ լինել, ապրել համատեղ եւ խմբաւորուած, այդ պատճառով երկար ժամանակ պահել են իրենց ազդութիւնը, ունեցել են իրենց ազգային-մշակութային եւ կրօնական հաստատութիւնները եւ շատ անգամներ իրենց դաղթօջախներն անուանել են իրենց հայրենիքի յիշատակը պահող հայկական անուններով կամ ուղղակի Հայաստանի եւ հայ ցեղի անունով: Բազմաթիւ են մեզ աւելի մօտ ժամանակներում հիմնադրուած եւ հայկական անուններ կրող գաղթավայրերը:

Արմեանի է կոչուում Ղրիմի քաղաքներից մէկը, որը 250 տարի առաջ կառուցել են Ղրիմի հայերը Պերեկոպի պարանոցում:

Արմենիստրի է կոչուում մի հայկական գիւղ Կիպրոսում⁹:

Էրմենիստան է կոչուում է Թուրքիի հայաբնակ թաղերից մէկը⁹:

Էրմենիքեղ է կոչուում է Բաբու քաղաքի թաղամասերից մէկը⁹:

Արարատ են կոչուում (մեր Արարատ-ի անունով) Աւստրալիայի Վիկտորիա նահանգում մի բնակավայր եւ մի լեռ⁹:

«Հայոց բերդ» կայ Ղրիմում, Կաֆայի մօտ¹⁰:

Արմենիա է կոչուում մի քաղաք Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների Վիսկոնսին նահանգում, նոյնանուն գետի ափին¹⁰:

Արմենիա անունով բնակավայրեր կան Հոնդուրաս եւ Սալվադոր հանրապետութիւններում¹⁰:

Արմենիա անունն է կրում մի քաղաք Հիւսիսային Ամերիկայի Կոլումբիա հանրապետութեան մէջ, ծովի մակերեսից 1500 մետր բարձրութեան վրայ, որն այժմ ունի 70·000 բնակիչ¹⁰:

Արմաւիր անունն է կրում Հիւսիսային Կովկասում մի քաղաք¹⁰:

Armenian street («Հայկական փողոց») անունով փողոցներ կան Հնդկաստանի Մադրաս եւ Կալկաթա քաղաքներում եւ Հնդկաչինի Սինդապուր քաղաքում¹⁰:

⁹⁾ Կամսար Աւետիսեան, Աշխարհագրական տեղանուններ Հայաստանի անունամբ, «Սովետական Հայաստան» օրաթերթ, Երևան, 1967, Գեկտ. 10:

¹⁰⁾ Կամսար Աւետիսեան, նշուած յօդուածը:

Էրմեոնի, Էրմեոնի, Էրմեոնի, Արմեոնի, Էրմեոնի և Էրմեոնի անուններով գրեցեր կան Բուլղարիայում¹⁰ :

Արմեոնը («Հայաքաղաք») է կոչում Ռուսիայի քաղաքներից մէկը. Ռուսիայում կայ նաև Արմեոն քաղաքը և մի քաղաք Արմեոն անունով, որը հիմնադրել են Վանայ ծովի Արմեոնից գաղթած հայերը¹⁰ :

Աշխարհի տարբեր երկրներում գոյութիւն ունեցած Հայկական գաղթօջախների մասին մինչև այստեղ մեր բերածները պատկանում են աւելի պատմական վկայութիւններով մեզ յայտնի ժամանակաշրջանին, սակայն, ինչպէս ասել ենք վերևում, հայ ժողովրդի իր հայրենիքից արտահոսքը չի վերաբերում ինչ-որ մի յատուկ ժամանակաշրջանին. այդ երեւոյթը կախում է եղել Հայկական լեռնաշխարհի այնպիսի (վերևում մեր թուած) աշխարհադրական, բնակչիմայական, ստրատեգիական, հասարակական, քաղաքական և անտեսական պայմաններից, որոնք միշտ էլ գոյութիւն են ունեցել և միշտ էլ (արմէնների որպէս ցեղ բիրեղացման օրերից ի վեր) պատճառ են դարձել արմէնների զէպի օտար երկրներ արտահոսքի :

Եթէ վերջին 25 դարերի ժամանակաշրջանին տեղի ունեցած արտահոսքի և առաջացած գաղթօջախների մասին մենք ունենք պատմական պարզ, որոշ և կոնկրէտ վկայութիւն-տուեալներ, ապա նրանից առաջուայ եղածների մասին էլ մեզ հասել են թէև կցկտոր և կիսաառասպելական, բայց հասկանալի յիշատակութիւններ հեթանոսական հին մատենագրութիւնից : Այդպիսի հին տուեալներից դատ մեզ օգնութեան են դալիս մի շարք գիցարանական և տպոնոմիական անուններ, որոնք արժեքաւորում են ընդհանուր այս երեւոյթների հետ համադրելով :

Այդպիսով կարող ենք ասել, որ Փոքր-Ասիայում արմէնների տարածման հետքերից պիտի համարել Սև ծովի Արմեոն նաւահանգիստը :

Ի հարկէ Փոքր Ասիայի արմենական գաղութի հետքերից պիտի համարել Պամփիլիական Էր-ի մասին եղած առասպելը :

Հայկական հին գաղութի հետքն է պահում Յունաստանի ծովափի Hermione քաղաքը, որի դիմաց գտնուող Hydra կղզու մէջ բարձրացող լեռը կոչուել է Ere :

Հին անցեալում արմէնների՝ Բալիաններում հաստատած գաղ-

10) Նոյն տեղում :

թօջախներից մէկն էր անկասկած Թեսալիայի Արմեոն անուն քաղաքը, որը, ըստ Ստրաբոնի հաղորդած տեղեկութեան, պիտի գոյութիւն ունեցած լինի Ժ դարում (մ. թ. ա.) : Ստրաբոնի պահած գրքից համաձայն՝ Թեսալիայի այս Արմեոն քաղաքից էր Արմեոնը, որը Յասոնի հետ հասել է Հայկական լեռնաշխարհի արեւելեան շրջանները :

Անցեալ դարաշրջանի երկրորդ կէսի և ներկայ դարաշրջանի առաջին կէսի պատմագրութիւնը հիմնուելով այս գրքից սխալ մեկնարանութեան վրայ՝ հայերին բերում էին Բալիաններից, մինչդեռ, ինչպէս պարզ երեւում է վերևում բերածներից, այս գաղութը մէկն էր բազմաթիւ այլ գաղութներից, որ արմէնները հաստատել էին օտար և հեռու երկրներում, Հայկական լեռնաշխարհից տարբեր ուղղութիւններով : Դեռ Թեսալիան գտնուում էր աշխարհադրականօրէն այնպիսի տեղում, զէպի ուր միշտ էլ եղել է արմէնների արտահոսք, մինչդեռ արմէնները Թեսալիայից մի քանի անգամ աւելի հեռու վայրերում են հաստատել գաղթօջախներ անցեալում :

Մեր դժբախտ բայց տաղանդաւոր ժողովրդի խոր անցեալի պատմութիւնը, անցեալում նրա դործած թէ՛ կոլեկտիւ և թէ՛ անհատական սխրանքները թաղուած են մթութեան մէջ : Դժբախտաբար հայ ժողովուրդը գտնուել է այնպիսի պայմաններում, ուր նրա զաւակների սխրանքներից օգտուել են ընդհանրապէս օտարները : Եթէ մենք ունենայինք հաւաստի և վստահելի մանրամասն տեղեկութիւններ Հայկական լեռնաշխարհից դուրս հայկական գաղթօջախների՝ հայ բնակիչների կոլեկտիւ և անհատական դործունէութիւնների ու սխրանքների մասին, ապա պիտի չզարմանայինք ո՛չ բիւզանդական դահի վրայ 30 հայազգի արքաների գոյութիւն ունեցած լինելուն, ո՛չ Բարբելոնի դահի վրայ հայ Արախայի նստելուն, ո՛չ Թեսալիայի Արմենիոն քաղաքի Արմենիոսի մինչև կասպից ծով հասած լինելուն, ո՛չ Իտալիայի մէջ Ներսէսի իշխելուն, ո՛չ Վարդանի՝ Ղրիմում կայսր դառնալուն¹¹, ո՛չ էլ Իռլանդիայի մէջ Իր-ի որդի (կամ եղբայր) Eremon-ի թագաւոր լինելուն :

Մեզ համար շատ հետաքրքրական է ի հարկէ Իռլանդիայի անդուլթեան պահած յիշատակութիւնները Իր-ի, Eremon-ի և Tigernmas-ի մասին : Աւանդութիւնը պատմում է, թէ Իռլանդիայի

11) Ա. Գ. Արքախանով, լոյս տեղում, էջ 160 :

պատմութեան սկզբնական շրջանում Յունաստանի կողմերից մի խումբ արկածախնդիրներ (երևի զինուորականներ) անցնելով ծովը՝ եկել, յարձակուել ու դրակել են Իռլանդիան՝ այդտեղ իրենցից առաջ եկած ու հաստատուած Danu աստույցից հետ կռուելով ու յաղթելով: Մեզ համար հետաքրքրականն այն է, որ Յունաստանի կողմերից եկած այս մարդկանց մէջ եղել է Իր եւ նրա որդի (կամ եղբայր) Eremon-ը, որը պատերազմը շահելուց յետոյ իշխում է ամբողջ կղզու վրայ¹²: Այս երկու անունները, Իր-ն ու նրա որդի կամ եղբայր Eremon-ը մտցնում ենք մեզ յայտնի Էր - Armenios եւ նոյնական զոյգերի համեմատութեան մէջ:

- 1.— Էր որդի Armenios-ի՝ Պղատոնից,
- 2.— Eros - Armenos՝ Պլուտարքոսից,
- 3.— Ռուսա որդի էրիմենայի՝ Ուրարտուից,
- 4.— Արա, սերունդ Արամանեակի՝ մեր մատենագրութիւնից,
- 5.— Հայկ, որդի Թորգոմի՝ մեր մատենագրութիւնից,
- 6.— Ալիս, բխում է Արմենիոն լեռից,
- 7.— Իր, որդի (կամ եղբայր) Eremon-ի՝ Իռլանդիայից:

Այս համեմատութիւնից պարզ երևում է, որ Իր-ն ու նրա որդի (կամ եղբայր) Eremon-ը միանգամայն համապատասխանում են Էր - Armenios կամ Արա-Արամանեակ զոյգին: Այստեղ հետաքրքրականը նաեւ այն է, որ Իռլանդական աւանդութիւնը պահել է նաեւ այն տեղեկութիւնը, որ Eremon-ի գահակալութեան եւ քրիստոնէութեան միջև ընկած ժամանակահատուածում Իռլանդիայում եղել է մի թագաւոր, որի անունը եղել է Tigarnmas. այս անունը, որը յիշեցնում է Հայկական Թողարմա անունը, միանգամայն փաստում է Իր-ի եւ Eremon-ի Հայկական անուններ եղած լինելը, հետեւաբար Իր-ը անձնաւորումն է մեր Ար-ի, ինչպէս Էր-ն ու Արան, իսկ Eremon-ն ու Tigarnmas-ը որպէս էպոնիմներ ներկայացնում են Ար-մենիան եւ Թողարման. սա դեռ բոլորը չէ, աւանդութիւնը նշում է նաեւ, որ սրանց ժամանակաշրջանում դերադոյն իշխանութեան իմաստ ունէր ard - ri բառը, եւ թէ պաշտամունքի առարկայ էին աբելն ու կրակը¹²:

¹²) Edmund C. Quiggin, «Encyclopaedia Britannica», 13th ed., 1926, տե՛ս Ireland:

Վերևում խօսեցինք այն մասին, որ Հայկական լեռնաշխարհի խուրրի փոքրիկ որոշ հատուածներ անյիշելի ժամանակներից (իջնելով մեր լեռնաշխարհից հարաւ) տարածուել էին Կանաանի, Ասորիքի եւ Հիւսիսային Միջագետքի տերիտորիաների վրայ: Մի շարք աուեսալներ բերեցինք նրանց հետքերից, որ նրանք թողել են այդ երկրներում Գ եւ Բ հազարամեակներին (մ. թ. ա.), նշելով անգամ զիտնականների այն տեսակէաները, որոնք ասուրական քաղաքակրթութիւնը համարում են խուրրի-սուրարեան ժառանգութիւն: Միաժամանակ ցոյց տուցինք, որ Արմէ-Շուպրիայի փոքրիկ թողութիւնը ինքերի կողմից կոչւում էր նաեւ խուրրի՝ այն ժամանակ, երբ սպառնական աւելի հին եւ աւելի ուշ արձանագրութիւններ նրանց երկիրը կոչում են Արմանի, Արմէ, Ուրմէ անուններով: Ուստի դանում ենք, որ արմենո-խուրրի փոքրիկ փոքր տարածուելով Հայկական լեռնաշխարհի սահմաններից հարաւ՝ իր հետ տարաւ նաեւ իր խոր, հար, աւելի ճիշդը ար ցեղանունը:

Այս առթիւ յիշում ենք Կանաանի եւ Պաղեստինի՝ Եդիպոսի կողմից (խուրրի բնակչութեան անունով) Hôr կոչուելը, խուրրի անունից մնացած Սաուան քաղաքանունը, Եդեսիայի Ուրհա կոչուելը, Սամարայի բրոնզէ տախտակի վրայ գրուած Ari - sen անձնանունը, յատկապէս Arim (Arime) անունը, որով կոչուած են Ասորիքի եւ Կաշիարի լեռան շրջանները:

Ինչպէս նշել ենք վերևում՝ արմենո-խուրրի բնակչութիւնը Գ հազարամեակից արդէն իջած լինելով հարաւ՝ տարածուել էր այս շրջաններում հոծ բազմութեամբ նախքան սեմական ցեղերի գալուստը (գաղթաշարժը) դէպի Ասորիք:

Ասորիքում Կաշիարի լեռան շուրջ ապրող այս արերը իրենց հարեւան ասուրա-բաբելացիների կողմից կոչուել են arim եւ նրանց բնակչութեան վայրերը՝ Arime:

Ar - im բաղկացած է երկու մասերից (ar եւ im), որի առաջին՝ ar- մասը, ինչպէս գիտենք, հայերի ար ցեղանունն է, իսկ -im վերջնամասը՝ սեմական լեզուների մէջ յոգնակերտ մասնիկ է: Ուստի arim նշանակում էր արեր:

Մենք գիտենք արդէն, թէ ի՛նչ էր նշանակում Ար-մա («Արա-ծին», Ար-ի սերունդ, Ար-ի ցեղ) եւ գիտենք, որ այս անուան մա վերջաւորութիւնը սումերական բառ է: Սօսել էինք նաեւ այն մասին,

որ Ար-մա (և Ար-մա-նի) կապակցութեան ծագումը պայմանաւորուած է եղել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական և լեզուակրօնական միջավայրով, և որ այդ միջավայրը եղել է Հայկական լեռնաշխարհում սումերահայ մշակոյթի և սումերահայ լեզուի կամ լեզուների միջավայր, ինչպէս նաև, և յատկապէս, արմէնների համաք, Ար կամ Արա (արեւի) աստծոյ պաշտամունքի միջավայր: Սումերներէն լեզուն (սեպագրական ժամանակաշրջանում) այս միջավայրում, և ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքում, ունեցել է կարեւոր և միջազգային (գերլոմատիկական) նշանակութիւն, հետեւաբար և Ար-մա կապակցութեան իմաստը հասկանալի էր այս շրջանի՝ արմէնների հարեւանների և սումեր-ակկադական շրջանակի համար:

Այստեղ ցանկանում ենք նշել, որ թէև սումերներէն լեզուն շարունակեց մնալ որպէս գերլոմատիկական լեզու և շարունակեց օգտագործուել միջազգային թղթակցութիւնների և դրատումների գործում, սակայն ակկադերէնը՝ ակկադական հզօր գերնատիւայի (Սարգոնի և Նարամ-Սինի) ժամանակներից սկսել էր ասպարէզ իջնել և Համմուրաբի ժամանակներում արդէն դարձել էր նոյնպէս միջազգային լեզու՝ որոշ չափով դրաւելով նաև սումերներէնի տեղը: Գ. Կոնտենոն ասում է, թէ «Ամառնայի նամակները մեզ ցոյց են տալիս, որ ակկադական լեզուն այդ ժամանակի գերլոմատիկական լեզուն էր»¹³:

Հայկական լեռնաշխարհի արերը արդէն վաղուց ծանօթ էին միջազգային հրապարակի վրայ արմա (\gg Արմէ, Ուրմէ) անունով: Իսկ իրենք իրենց աւելի կոչում էին ուղղակի աք, սակայն այն (հարաւ իջած և Ասորիքի և Կաշխարի լեռան շրջաններում բնակուողները) արերը, որոնք աւելի մօտ և աւելի սերտ և ուղղակի շփման մէջ էին հարաւի սեմիտների հետ, սեմիտական վերջաւորութեամբ կոչուել են ar-im («արեր») և նրանց ապրած շրջաններն էլ՝ Arime («արերի բնակավայր»): Arime-ի e վերջաւորութիւնը տոպոնիմական (երկրի իմաստ տուող) վերջածանց է (հմմտ. Տումմէ, Անդիաբէ, Մելիդենէ, Փիւնիկէ և այլն):

Ինչպէս ասացինք, ar-im անունն -im վերջաւորութիւնը սեմական յղանակերա մասնիկ է: Մենք արդէն Շամիրամ անունն ստուգաբանութեան առթիւ յիշել էինք Sumer և Akkad անունների

Sumerim և Akkadim (յոզնակի) ձևերը: Այս մասին յայտնի արեւելագէտ S. Langdon-ը գրում է. «Ուր-ի, Իսինի-ի և Լարսա-ի սումերական գերնատիւայի թղթաւորները գործածում էին՝ արքայ Ki-en-gi (Sumer)-ի և Akkad-ի» տիտղոսը, բայց սեմական աշխարհակալ Համմուրաբին գործածեց «mat Šu-me-ri-im ù Ak-ka-di-im խօսքը»¹⁴: Šumer-im և Akkad-im նշանակում են «սումերներ և ակկադներ», այսինքն՝ «սումերացիներ և ակկադացիներ», իսկ Համմուրաբի տիտղոսը (Šar mat Šumerim ù Akkadim)՝ արքայ սումերների և ակկադների: Այսպէս էլ ar-im նշանակում է ար-եր: Սեմական լեզուի -im յոզնակերա մասնիկը երեւում է նաև (օրինակի համար) երբայական Elohim «աստուածներ» բառածեւում, որի երկրորդ է Eloah. նոյնպէս գիցարանական Baal անունն յոզնակին Baalim է (Baal-ը Մ. Գրքում օգտագործուած է նշելու հեթանոսների աստուածներին)»¹⁵:

Կարելոր հարցն այստեղ այն է, որ աստուաբաբելական սեմիտների կողմից Հայկական լեռնաշխարհից հարաւ գտնուող արերին տրուած arim (Arime) անունը հետագայում իւրացուել է սեմական երբարդ գաղթալիքով եկած (Սիրիա ներխուժած) սեմիտական ցեղերի կողմից:

Պատմագիտութեան յայտնի է, որ արարական թերակղզուց սեմիտական ցեղերը ներխուժել են Մերձաւոր Արեւելք երեք գլխաւոր գաղթալիքներով:

Սեմիտական ցեղերի առաջին գաղթալիքը եկել է Դ հազարամեակի կէսին (մ. թ. ա.) և հաստատուել է սումեր-ակկադեան երկրում¹⁶:

Սեմիտական երկրորդ գաղթալիքը դուրս գալով արարական թերակղզուց ներխուժել է Մերձաւոր Արեւելք 1000 տարի յետոյ Գ հազարամեակի կէսին¹⁶: Այս գաղթալիքով եկող սեմիտական ցեղերը Բ. հազարամեակի սկզբներին արդէն հաստատուած են Կանաանում

14) S. Langdon, նշուած գիրքը, էջ 4:

15) Salomon Reinach, «ORPHEUS, A History of Religion», New York, 1942.

pp. 188 - 189:

16) J. L. Myres, «The Dawn of History», the Home University Library, p. 113:

13) G. Contenau, նշուած գիրքը, էջ 21:

և Ասորեստանի հարաւային շրջաններում, ուր հիմնեցին ասսուրական ուժեղ պետութիւնը, որի մասին առաջին յիշատակութիւնները վերադրուած են մօտ 1800 թուին (մ. թ. ա.)¹⁷:

Սեմիտական ցեղերի երրորդ զաղթալիքը (որ հետագայում կոչուեց արամէական) ըստ Myres-ի դուրս է եկել արաբական թերակղզուց 14-րդ դարի կէսին (մ. թ. ա.) եւ նոյն դարի վերջերին կանաանի եւ Պաղեստինի շրջաններից ներխուժել Ասորիք՝ ողողելով Երիւանդի բնակութեան վայրերը մինչեւ Կաշիարի լեռան մասոյցները¹⁸: Ըստ Breasted-ի այս ալիքի՝ Ասորիք ներխուժումը տեղի է ունեցել 15-րդ դարում (մ. թ. ա.)¹⁹: Մենք կարծում ենք, որ Myres-ը աւելի ճիշդ է, որովհետեւ 15-րդ դարի եւ 1300 թուականի միջեւ ընկած ժամանակաշրջանում՝ խուրրի-միտանեան ուժեղ պետութեան ազդեցութեան ու տիրապետութեան շրջանում էին գտնուում Ասորիքի վերին շրջանները, եւ եթէ սեմիտական այդ ալիքը այդ ժամանակ եկած լինէր, Պուրրի-Միտանին դժուար թէ հասնէր այդպիսի հզօրութեան եւ դա կը զգացուէր նրանց արձանագրութիւնների մէջ: Պուրրի-Միտանեան պետութեան անկումը հանդիպում է հենց Myres-ի յիշած այս (1300 մ. թ. ա.) շրջանին, եւ մեծ հաւանականութեամբ նրա անկման պատճառներից մէկն էլ հենց այդ սեմական զաղթալիքի դալն էր նոյն ժամանակներում:

Սիրիա ներխուժող սեմիտական այդ ցեղերին չէր պատկանում arim (Arime) կամ Aram²⁰ անունը: Նրանք Սիրիա մտնելուց առաջ

17) J. L. Myres, նոյն տեղում, էջ 114:

18) Նոյն տեղում, էջ 14 - 17:

19) J. H. Breasted, «Ancient Times», Chicago, 1935, p. 185:

20) Aram անունը կարող է Arim անուն (հնչիւնային աղաւաղումով) մի այլ փոփոխակը լինել, բայց նկատի առնելով ուրարտական Arame կամ Արամ անունը, կարելի է մտածել, որ Ar-am անուն am վերջնամասը ունի մօտաւորապէս մեր Ար-ամ անուն մա վերջաւորութեան («ծնունդ, սերունդ») իմաստը: Օրինակ Ad-am, կամ Ed-am (ed[us] ակկադերէն նշանակում է «բէկ, առաջին») նշանակում է «միակ ծնունդ կամ առաջին ծնունդ, առաջին մարդ», հմտ. նաեւ Բագ-ամ, Արգ-ամ, Արշ-ամ, ուր բազ (հմտ. բագ-ին, Բագ-արան) դիցմունք է կամ նշանակում է «աստուած», հետեւաբար Բագ-ամ պիտի նշանակի «Բագի-ծնունդ, աստուածային ծնունդ», նոյնպէս Արգ-ամ պիտի նշանակի «Արեգի-ծնունդ».

կոչուած էին Suti և Achlame. Սիրիայում հաստատուելուց յետոյ, տեղի արիմ-ների անունով կոչուած Արիմէ երկրանունով կոչուեցին արիմեցիներ կամ արամէացիներ, ճիշդ այնպէս ինչպէս Եգիպտոս անունը չի պատկանում Եգիպտոսի արաբներին, որոնք Եգիպտոսում հաստատուելուց յետոյ, տեղի բնիկների ցեղանունով կոչուած երկրի բնակիչները դառնալով՝ կոչուեցին եւ կոչուած են եգիպտացիներ: Հետագօտողներից շատերն անգամ գտնուած են, որ կանաան անունն էլ չի պատկանում սեմիտներին, ասում է, որ սեմիտները կանաան դալուց յետոյ իւրացրած պիտի լինեն այդ անունը, նոյնպէս կարծիք կայ նաեւ ամորիա, ամորիներ ցեղանունան նկատմամբ²¹:

Հետագայում արամէական կոչուած սեմիտական ցեղերը, նախքան Սիրիա մտնելը, Բարեւոնի արջանների կողմից կոչուել են Suti և Achlame. այս մասին Myres-ը գրում է. «Արամէացիները, երեւում է, սկսեցին դուրս գալ հիւսիս-արեւելեան Արաբիայից մօտ 1350 թուերին (մ. թ. ա.), երբ վաչկատուն հորդանները, որոնց Բարեւոնի արջանները կոչուած էին «Suti և Achlame», աւարելով ու ակերելով ողողում էին գրեթէ ամբողջ Եփրատեան սահմանը»²²:

Պուրրի-Միտանիների երկիրը սեմիտների Սիրիա դալուց առաջ արգէն կոչուած էր նաեւ Արամ: Ամառնայի նամակներում, որոնց մէջ գտնուել են Տուշրատայի (1387-1370 մ. թ. ա.) նամակները, յիշուած է Արամ անունը որպէս Միտանիի թագաւորութիւն²³:

Պէտք է ասել, որ սեմական այս աւտի եւ աքլամէ ցեղերը ներխուժելով Սիրիա, ի հարկէ, խաղաղ ձեւով գրաւած չպիտի լինեն արիմների բնակավայրերը, կասկած չկայ, որ տեղի ունեցած պիտի լինեն արիւնահեղ եւ կործանիչ ընդհարումներ. հաւանաբար նրանք բախուեցին խուրրի-միտանեան պետութեան, որի, ինչպէս ասացինք,

Արշ-ամ՝ «Արեւի ծնունդ» (հմտ. Արշ-ա-յոյս), ուստի Ար-ամ պիտի նշանակի «Ար-ի ծնունդ, Ար-որդի, կամ արբի երկիր», որ հոմանիշ է Arim-e անուն, որ, ինչպէս տեսնւմ, նշանակում է «արբի երկիր»:

Գր. Ղափանցեանը, իրաւացիօրէն, դիտում է, թէ Արամ անունը չի բացատրուում սեմական լեզուաբանութեամբ («Հայաստ», էջ 183 - 184):

21) J. L. Myres, նշուած տեղում, էջ 113:

22) Նոյն տեղում, էջ 114 - 117:

23) Մ. Միտանեան, «Արմէն եւ Հայ ազգամտագիր», Հայրենիք տաճար, Նոյեմբեր, 1927, քիւ 1:

անկման ժամանակաշրջանը համընկնում է սեմիտական այս ալիքի ներխուժման ժամանակներին հետ:

Ներխուժող սեմիտական այս հեղեղին չղիմացող արիմների (վերապրողների) մի մասը պիտի յետ քաշուած լինի դէպի հիւսիս եւ միացած մայր երկրում ապրող արեւին. Սալմանասար Ա-ը գրում է, թէ arim-ները Պարուր գետով վեր էին բարձրանում²⁴. կասկած չկայ, որ այս վեր բարձրացող արիմները սեմիտական ալիքի ճնշման տակ նահանջող (բուն) արիմներն էին:

Սեմիտական այս ցեղերը անապատային վաչկատուններ էին՝ վարժուած վրանների տակ եւ բաց դաշտում ապրելու, այդ պատճառով էլ նրանք սկզբներում արիմների քաղաքներում տեղաւորուած չպիտի լինեն (յիշենք որ արաբերէնում քաղաքը կոչւում է madina = Mitanni) եւ բախումից վերապրող եւ նոր կացութեան հետ հաշտուող արիմների կարեւոր հատուածներ մի ժամանակ գեռ սեմիտների հետ շխառնուած՝ պիտի մնացած լինեն իրենց գիւղերում ու քաղաքներում: Անապատային սեմիտները արեւից խանձուած, օտարորիկ, կիսամերկ, կիսավայրենի քոչուորներ էին, որոնց համար քաղաքների սպիտակամորթ ու սեւաչեայ կամ թխաչեայ դեղանի խուրրի ազնիւները չքնաղ յաւերժահարսեր պիտի թուային: Այս իմաստով էլ արաբերէնը պահել է ھ۱۲۳ hurīya («հուրրուհի») բառը, որը պահում է գեղեցիկ խուրրի ազնիւների յիշատակը որպէս հուրի-վերիններ՝ դրախտի յաւերժահարսեր: Այս բառը նոյնպէս փաստում է սեմիտների՝ խուրրի-արիմների հետ ունեցած անմիջական շփումները, երբ գեռ ճանաչում էին նրանց Պուրրի անունով: Սեմիտները ապրելով Արիմ կամ Արամ երկրում, ինչպէս ասացինք, դառնում էին նոյնպէս արիմեցիներ կամ արամէացիներ, բայց, սկզբներում, ասուրական արձանագրութիւնների մէջ սեմիտական արամէացիներին (կամ արիմեցիներին) բուն արիմներից դատորոշելու համար յիշել են որպէս աքլամէ-արիմ կամ աքլամէ-արամ, կամ ուղղակի աքլամէ, որոշ ժամանակ յետոյ, երբ (անապատային սեմիտները) կամաց-կամաց աների մէջ ապրել վարժուելով տեղաւորուած են հարաւի քաղաքներում, ասուրական արձանագրութիւններն արդէն շատ յաճախ նրանց էլ կոչում են ուղղակի (առանց սուտի կամ աքլամէի) արիմ կամ արամ: Ինքենք մի քանի օրինակ.

24) J. L. Myres, նոյն տեղում:

Աղադ-Նիրարի Ա-ը (14-րդ դարի վերջերը մ. թ. ա.) գրում է. «... Յաղթողը Տուրուկի եւ Նիգիմբի երկրները ամբողջութեամբ, նրանց թագաւորներով, լեռներով, լեռնադաշտերով, տերիտորիաները լայնասփիւռ կուտի-ի (մի փոփոխակում աւելացուած է՝ յաղթողը կուտուխի եւ նրա բոլոր դաշնակիցներին), սահմանեցրեքը ahlami, suti և lauri-ի եւ նրանց երկրներին, որոնք ընդարձակել են սահմաններ... թողը էնիլի-Նիրարիի, բուրմը Աշուրի, որը կործանեց կասիտների բանակները...»²⁵:

Ինչպէս պարզ երեւում է, այստեղ սեմիտական ցեղերը դեռ նոր են եկել եւ աշխատում են ընդարձակել քիչ ժամանակ առաջ իրենց դրաւած հողերը եւ Ասորեստանի այս ժամանակուայ թագաւորի կողմից կոչուած են ուղղակի իրենց բուն suti և ahlame ցեղանուններով, տակաւին արիմեցիներ չեն կոչուած եւ անգամ նրանցից անկախ յիշուած է կուտուխին, որտեղ չեն հասել սեմիտները:

Աղադ-Նիրարի Ա-ից յետոյ Սալմանասար Ա-ն էլ գրում է. «... Երբ մեծ աստուածների հրամանով առաջացայ Հանիգալբատ երկրի դէմ հզօր բանակներով իմ տիրոջ՝ Աշուրի, ես ճամբայ բացի դժուար ճանապարհների եւ նեղ անցքերի վրայով, Շատտուարա-ին՝ Հանիլի (փոփոխակում՝ Հանիգալբատի) արքային, խեթերի բանակին և ahlami-ին նրա հետ, ես շրջապատեցի. նա կտրեց (վերցրեց) անցքերը եւ իմ ջրի մատակարարումը. ծարաւի եւ յոգնութեան պատճառով իմ բանակը քաջարար առաջացաւ բազմութեան վրայ նրանց (փոփոխակում աւելացուած է՝ լայնասփիւռ) զօրքերի, եւ ես մղեցի պատերազմ եւ իրազորձեցի նրանց պարտութիւնը... խեթերի բանակին եւ ahlami-ին՝ նրա դաշնակիցներին եւ ջարդեցի որպէս ոչխար: Այդ ժամանակ Տաիդի քաղաքից մինչեւ Իրրիդի քաղաքը, ամբողջ կաշիարի լեռան շրջանը, մինչեւ էլուհատ քաղաքը, Սուդի ամբողջիւնը, Հարրան ամբողջիւնը մինչեւ կարքեմիշ, որը գտնուած է Նիբատի եզրին, ես գրաւեցի նրանց քաղաքները, նրանց երկրները եւ բերեցի իմ ենթակայութեան տակ, նրանց մնացած քաղաքները այրեցի կրակով:

Դրա վրայ, կուտի երկիրը, որոնց թիւը անհամար է, ինչպէս աստղերը երկնքի, որոնք դիտեն ինչպէս աւարել, իջան իմ վրայ եւ կռուեցին ինձ հետ, եւ թշնամութիւն զրգռեցին... Ուրուարի երկ-

25) D. Luckenbill, նոյն տեղում, էջ 28 - 29:

րի սահմանները մինչև Կուտուխի երկիրը՝ հեռաւոր (?) շրջան, մի երկիր՝ հեռուն հասնող (գր. հեռաւոր) տարածութիւններով (գր. դաշնակցութիւններով), մարմինները նրանց լայնասփիւռ բանակների դուրս թափեցի ինչպէս ջուր...»²⁶:

Ինչպէս այստեղ էլ է երեւում՝ Սալմանասարը սեմիտներին, որոնք դարձել էին խեթերի դաշնակիցները, յիշում է՝ նրանց բուն *ahIami* ցեղանունով: Միւս կողմից յիշում են Ուրուատրին, Կուտուխին եւ Հանիգալրատը որպէս նրանցից անկախ երկրներ. ուշադրութիւն է գրաւում նաեւ այն, որ Աղադ-Նիրարին ու Սալմանասար Ա-ը չեն յիշում Սուրբ-Միտանին, ոչ էլ արիմներին: Պիտի մտածել, որ խուրրիները եւ միտանիները պետութիւնը վերացուել են արդէն, իսկ հարաւի արիմները մի մասով ճզմուել էին, իսկ միւս մասով էլ քաշուել յետին պլան. սեմիտներն էլ որպէս նորեկներ՝ տակաւին չեն յիշում որպէս *Arime - Aram* երկրի ժողովուրդ:

Պատկերը միանգամից փոխուած ենք տեսնում 400 տարի յետոյ Աղադ-Նիրարի Բ-ի ժամանակ (911-891 մ. թ. ա.), երբ *ahIame* ցեղանունը յիշում է *Aram* անուան հետ կապակցուած (*AhIamé Aram*) կամ ուղղակի յիշում է Արամ կամ Արիմէ՝ երկրանունը, որի մէջ մտնում են թէ՛ սեմիտները եւ թէ՛ նախկին արիմները, որոնք կարծես մեծաւ մասամբ քաշուած են աւելի հիւսիս, իսկ հարաւ մնացածները մեծ մասամբ խառնուած են սեմիտների հետ:

Աղադ-Նիրարին գրում է. «... Պարտութիւնը անապատի ժողովրդի՝ ահլամէ արամէացիների, իրականացուեց, տուրքը Սուհիլ ստացուեց...»²⁷: Ահլամէ արամէացիներ կապակցութիւնը ցոյց է տալիս, որ կային նաեւ ոչ-ահլամէ արամէացիներ, այլապէս պէտք է գրուած լինէր ուղղակի՝ արամէացիներ եւ ինչպէս տեսնում ենք՝ այս ժամանակ արդէն ահլամէ ցեղը որպէս արամէացիներ է հանդէս գալիս, բայց մնում է անապատային շրջանում: Աղադ-Նիրարին իր կատարած այլ արշաւանքների առիթներով յիշում է միշտ *Arime* երկրանունը արդէն որպէս ընդհանուր աշխարհագրական տեղմին, որի մէջ մտնում են հարաւից սեմիտները, իսկ հիւսիսից՝ բուն արիմները՝ արեւը (խուրրի-արմէները):

26) D. Luckenbill, Գոյն տեղում, էջ 40:

27) D. Luckenbill, Պշուած գիրք, էջ 111:

Ահա Աղադ-Նիրարի Բ-ի խօսքերը (բերում ենք մեզ չհասաբերող մասերի կրճատումով).

«... Այդ տարին եւ Կիշլիմու ամսին, ... Պարուր դետի վերեւները երկիրը Հարկի (?) մինչև քաղաքը Կարքեմիշ, որը գտնուում է Հատտէ-ում, նա ասպատակեց ... մորթիներից շինուած նաւակներով [նա անցաւ Եփրատը]...: Այդ տարին եւ նոյն ամսին, Արիմէ երկրի դէմ կատարուած արշաւանքի միջոցին, Շաշիրի քաղաքում (անապատի քաղաքներից մին), որը գտնուում է ... քաղաքի նահանգում, նա մղեց (պատերազմ): ...: Այդ տարին, Արիու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, Պաուսա քաղաքում, որը գտնուում է Կաշիարի (?) լեռան ստորոտում, նա մղեց (մի պատերազմ): Այդ տարին, եւ նոյն ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, մուտքի առաջ (գր. դուխ) Նարուլա քաղաքի ... նա մղեց (մի պատերազմ): Այդ տարին եւ Սիմանու ամսին՝ զինուորներին Մուսրի երկրի՝ նա տարաւ: Նոյն տարին, նոյն ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, Տիրուա (?) քաղաքում, որը գտնուում է Տիրիսի վրայ, նա մղեց մի պատերազմ: Այդ տարին եւ Աբու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, Լիշուր-Սալա-Աշուր-ի քաղաքներում, որոնք Շինամու քաղաքի նահանգում են, նա մղեց մի պատերազմ: Այդ տարին եւ նոյն ամսին (բնակիչներին) Շու-րա քաղաքի, որը Հանիգալրատ երկրում է գտնուում, նա տարաւ: Հուլա քաղաքը, որ գրանւում է Կաշիարի լեռան մէջտեղում, եւ Էրիշա քաղաքը, որը Կիրիսի մարզկանց [ձեռքում էր], նա դրաւեց, եւ երեք-նա դուրս բերեց: Այդ տարին եւ Ուլուլու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ Մուրարի (?) քաղաքում, որը գտնուում է Շուպրէ երկրում, նա մի պատերազմ մղեց: Այդ տարին եւ ... ամսին, Մախիրանի երկրից մինչև Շուպպա (?), որը Պարրան երկրում է գտնուում, նա արշաւեց...»

Կիշլիմու ամսին, Էպոնեմականում Իլու-Իդդինա-ի, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, Մախրիսի քաղաքում, որը Իարի (?) լեռան վրայ է գտնուում, նա մղեց մի պատերազմ: Այդ տարին եւ նոյն ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, Դուր-Կատլինու քաղաքում, նա մղեց (մի պատերազմ) ...»²⁸:

Այս արձանագրութեան տուեալներից պարզ երեւում է, որ

28) D. Luckenbill, Գոյն տեղում, էջ 119 - 121:

Արիմէն բերուած է որպէս մի ընդհանուր եւ մեծ շրջաններ ընդգրկող աշխարհագրական տերմին, որի մէջ մտնում են թէ՛ սեմիտների ա- նապատային շրջաններն ու քաղաքները եւ թէ՛ արեւրի (բուն արիմեն- րի) լեռնային շրջաններն ու քաղաքները։ Արիմէ երկրի մէջ մտնում են մի կողմից (հարաւից) սեմիտների Շաշիրի քաղաքը, որը գտնու- ւում է հարաւի անապատում, իսկ միւս կողմից (հիւսիսից) Պաուսա քաղաքը, որը գտնուում է Կաշիարի լեռան ստորոտում եւ Մուրարի քաղաքը, որը գտնուում է Շուպրէ երկրում, որոնք չեն պատկանում սեմիտներին։

Կասկած չկայ, որ սեմիտները լինելով անապատի ժողովուրդ՝ մասսայաբար չեն բարձրացել ու տարածուել բարձրադիր եւ լեռնային շրջանները, հետեւաբար նրանք մնացել են հարաւի դաշտավայրե- րում, իսկ Ասորիքի եւ Միջագետքի հարթ տարածութիւնները հիւ- սիսից եզերող լեռնաշխարհը, իր ամենահարաւային շրջանները ներ- առեալ (Ուրուարի, Կուսմուխի, Կաշիարիի շրջան, Շուպրիա, Հա- նիդալբատ), մնացել են նրանց սահմաններից դուրս։ Ի հարկէ այս շրջանները թափանցած կը լինեն սեմիտական տարրեր, բայց նրանք որոշիչ դեր խաղալու չափ չեն եղել, հարաւում էլ, ի հարկէ, մնա- ցած կը լինեն խուրրո-արմենական տարրեր (արեւ, բուն արիմեն), բայց նրանք մի մասով փոքր կղզիներ ու դաղթօջախներ են դարձել եւ միւս մասով էլ խոսնուել ու ձուլուել են արիմեցի կամ արամէացի դարձած սեմիտների հետ։

Այս կէտը պարզ երեւում է նաեւ հետեւեալ արձանագրային սուեայններից․

Ադադ-Նիրարի Բ-ը, ինչպէս մասամբ բերեցինք վերելում, գրում է․ «... Պարտութիւնը անապատի ժողովրդի՝ ահլամէ-արամ- էացիների իրականացուեց, տուրքը Սուհիի ստացուեց․ (եւ եմ նա), որը վերադարձրեց Հիտ (Իդու, եւ) Զակիու քաղաքները՝ ամբու- թիւններ Ասորեստանի՝ դէպի տերիտորիան իր երկրի․ Արինու, Տուր- խու եւ Զադուրի քաղաքները՝ Շուպրէ-ի կոնֆեդերացիան, խզուեց Ասորեստանից...»²⁹։

Ինչպէս պարզ երեւում է, անապատի ահլամէ-արամէացիները պարտուում են եւ նրանց հետ կապ չունի Շուպրէ-ի կոնֆեդերացիան։

Ահա մի այլ սուեալ․ Տուկուլտի-Ուրտա Ա-ը գրում է․ «... Այդ ժամանակ Կուրաին, Կուսմուխի երկրները, Բուշի-ն, Մումմի-ն,

29) D. Luckenbill, ևոյն տեղում, էջ 111։

Ալլի-ն, Մագանի-ն, Նիհանի-ն, Ալաիա-ն, Տերուրդի-ն, Բուրուկուդ- զի-ն՝ ամբողջ ընդարձակ Շուրարի երկիրը, եւ այրեցի կրակով․ Թագաւորներին, նրանց ղեկավարներին եւ բերեցի ենթակայութեան իմ սաքերի եւ լծեցի աշխատանքի...»³⁰։

Ինչպէս տեսնում ենք՝ ընդարձակ Շուրարին իր վերոյիշեալ շրջաններով (որոնց մէջ գտնուում են Ալլին եւ Կուսմուխին) չեն յիշ- ւում որպէս ահլամէ ցեղին կամ ահլամէ-արամէացիներին պատկա- նող երկրներ։

Աշուր-Նազիր-Պալ Ա-ն էլ բերում էր հետեւեալ վկայութիւնը․ «... Կաշիարի լեռը անցայ եւ երկրորդ անգամ լինելով իջայ ներքեւ դէպի Նաիրի երկիրը...»³¹։ Կաշիարից իջնելով մտած երկիրը ի հարկէ Ալլի-Ադձնիքն է․ սա անհերքելի ապացոյց է, որ Ադձնիքը (Արմէ-Շուպրիան) համարուել է Նաիրի երկիր եւ անտարակուսելի- օրէն կապ չունի հարաւի ահլամէ-արամէացիների հետ։

Վկայութիւնների այս շարանը փակելուց առաջ, բերենք մի հատ էլ Աշուր-Նազիր-Պալ Ա-ից․ «... Երբ եւ մնում էի Տուշահ քա- ղաքում, տուրք ստացայ Ամմէ-Բալա-ից՝ Զամանիի որդուց, Շուպրէ երկրի Անհիտից եւ Լապտուրի-ից՝ Նիրգուն երկրի Տուբուսիի որ- դուց, եւ տուրք Ուրումէ երկրից, որը գտնուում է ներսերը եւ երկրնե- րից Նաիրի երկրները․ մարտակառքեր, ձիեր, ջորիներ, արծաթ, ոս- կի եւ ամաններ պղնձից, արջառ, ոչխար, եւ զինի եւ ստացայ որ- պէս տուրք․ կրելը դիտարարձիկները (?) դրի Նաիրի երկրի վրայ, իմ վերադարձի[ն] Նաիրի երկրների միջից, Ներբու երկիրը, որը զբա- նրուում է Կաշիարի լեռան մէջտեղում՝ ապստամբեց...»³²։

Ինչպէս երեւում է, երբ յիշուում են Նաիրի երկրները հետ Շուպրէ եւ Ուրումէ երկրները, ոչ մի խօսք եւ ոչ մի յիշատակութիւն չկայ ահլամէ-արամէացիների մասին, մանաւանդ Ուրումէ երկրի համար էլ ասուում է, թէ գտնուում է ներսերը, Նաիրի երկրների հետ․ սա անհերքելի փաստ է նոյնպէս, որ Շուպրիա, Ալլի-Ուրմէ երկրնե- րը ոչ մի կապ չունեն հարաւում մնացած սեմական ցեղերի հետ։ Իսկ ինչպէս տեսանք վերելում, Ադադ-Նիրարի Բ-ի ասածից, Շուպրիա երկիրը համընկնում է Արիմէ երկրի հետ («...մի ասպատակութեան

30) D. Luckenbill, ևոյն տեղում, էջ 50։

31) Նոյն տեղում, էջ 179։

32) Նոյն տեղում, էջ 148։

Ժամանակ Արիմէ երկրի վրայ Մուրարիբ քաղաքում, որը գտնուում է Շուպրէ երկրում, նա մի պատերազմ մղեց...»):

Մեր լեզուում պահպանուել է մի հին բառ, որը, կարծում ենք, առնչութիւն ունի հայերի արիւմ «արեր, արմէններ» յորջորջման հետ, դա հաւատարիւմ բարդ բառն է: Հաւատ-արիւմ նշանակում է «նա, որ արիւմ-ի հաւատից է», այսինքն՝ «արերի՝ արմէնների հաւատն ունեցող»։ Հմմտ. հաւատընտիր «նա, որ ընտիր հաւատ ունի», այսպէս էլ հաւատարիւմ նշանակում է «նա, որ արիւմի հաւատն ունի»: Համեմատել նաեւ մտերիւմ, ոխերիւմ բառերը, որտեղ արիւմ-ը երեւում է երիւմ ձեւով: Այստեղ աւելորդ ենք համարում նորից խօսել ու բացատրել Ար-ի (Արայի) եր տարբերակի գոյութեան մասին, մանաւանդ, որ յայտնի է Պղատոնի յիշած Էր-ը (Արան)։ Կարելի է յիշել միայն մի քանի օրինակներ՝ էրիախի-Արախա, Երուանդ-Արուանդ, Երասխ-Արաքս, էրիմենա-Արամանակ եւ այլն: Այնպէս որ մտ-երիւմ նշանակում է «մօտ արիւմին», այսինքն՝ «բարեկամ», իսկ ոխ-երիւմ նշանակում է «արիւմի դէմ ոխ, քէն, վրէժ ունեցող», այսինքն՝ «անհաշտ թշնամի»: Հայոց լեզուում, այսինքն՝ հայերի մէջ հաւատ-արիւմ բարդ բառի ստացած «վստահելի, անդաւաճան, անկեղծ» իմաստն ինքնին փաստ է մեր ստուգաբանութեան համար, քանի որ այդ երկու (հաւատ եւ արիւմ) բառերը առանձին վերցրած՝ չունեն այդպիսի իմաստ: Հին ժամանակներում ցեղակից լինել նշանակում էր նաեւ լինել հաւատակից, հետեւաբար մեզ համար նրանք, որոնք ունէին մեր հաւատը՝ նրանք, որոնք արիւմ-ի (արերի՝ արմէնների) հաւատից էին, հաւատ-արիւմ էին, այսինքն՝ մեզ համար վստահելի: Ի հարկէ պատահում էր, որ օտար եւ մեր հաւատից չեղողին դարձնում էինք մեր հաւատին. այդ արարքը հնում կոչում էինք հաւատարիւմ արարել, այսինքն՝ արիւմի (արերի) հաւատին դարձնել: Սրա համար կար եւ կամաւոր ձեւ, նրանք, որոնք դալիս, յանձնում ու միանում էին արիւմ-ի՝ արերի հաւատին, դրան կոչում էինք հաւատարիւմ լինել, որ նշանակում էր նաեւ «յանձնուել, հաւատացուել»³³: Հաւատարիւմ բառը իր կազմութեամբ (հաւատ-արիւմ) ու իմաստով (վստահելի) փաստ է արիւմ տերմինի մեզ համար ոչ օտար, մեր ցեղին պատկանած, մեր ցեղը ներկայացրած լինելուն: Եթէ հաւատ-արիւմ բարդ

բառի երկրորդ բաղադրիչը արիւմի տեղ լինէր մի այլ ցեղանուն, օրինակ՝ եթէ այդ բառը լինէր հաւատ-թուրք (կամ թրքահաւատ), ապա այն մեր լեզուում (մեզ համար) չէր նշանակի «վստահելի, անդաւաճան, աննեղ»: Նոյնպէս եթէ արիւմ տերմինը պատկանելու լինէր ոչ-հայերին՝ սեմիտներին, ապա հաւատարիւմ բառը մեր լեզուում նոյնպէս չէր ունենայ «վստահելի, անդաւաճան, անկեղծ» իմաստը: Հետեւաբար նրա «վստահելի» իմաստը փաստ է, որ արիւմ նշանակում է «արեր, արմէններ»:

Անտարակուսելիօրէն պիտի պարզ համարել, որ արարական անապատներից Սիրիա ներխուժած սուտի եւ ահլամէ (կամ աքլամէ) ցեղերը արամ (արամէացի) անունը ժառանգել են բնակիչները դառնալով Ասորիքի, որի Արիւմէ կամ Արամ անունը պահում է յիշատակը այն հին օրերի, երբ սեմիտների գալուց առաջ այս շրջաններն էին իջել ու տարածուել արեւի մեծ աստուած Ար-Արայի սերունդները՝ արմա, արիւմէ կամ ուրմէ կոչուած հայ-արմէնները:

Երեւան

33) Ստ. Մալխասեան, «Բացատրական բառարան», հաւատարիւմ բառի տակ տե՛ս հաւատարիւմ առնել եւ հաւատարիւմ լինել, 3:

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿ. ԳԻՏ. ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՄՈՒՔԻ ԱԿԱԳԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ԸՆԿԵՐ Ծ. Պ. ԱՂԱՅԵԱՆԻՆ

Յայտնի է թէ վերջերս ի՞նչ սուր եւ տարամերժ գիտական բախումների մարզ է դարձել հայ ժողովրդի ծագման հարցը: Կարելի է ասել, որ վերջին 100-ամեակում սա 3-րդ 4-րդ բռնկումն է, ծագած այդ պլուրեմի շուրջը: Ըստ որում, եթէ առաջ այդ արում էր մասամբ ընդհանուր արեւելագիտութեան, հնդեւրոպական լեզուաբանութեան զարգացման մղումով, մասամբ նաեւ քաղաքական ինտերեսների դրդումով, կապուած հայկական հարցի այս կամ այն բռնկումների հետ, ապա այս վերջին բռնկումը ծագում է աւելի շատ արեւելագիտութեան զարգացման նոր աստիճանի գուզընթաց: Սրան նպաստում է նաեւ այն, որ հայ ժողովրդի ծագման հարցի հին «լուծումների» սիւները անվերջ նարնատում են եւ շէնքը փլցնում, որովհետեւ այդ ոչ դիւրին պրոբլեմի լուծման շատ թերի մեթոդները, տրագիցիայով եւ այլ պատճառներով կիրառում են եւ այժմ:

Մարտիրոս Գալուքեանը, շուրջ 20 տարի ամենայն լրջութեամբ զբաղուել է այդ հարցով, հետզհետէ ծանօթանալով հարցին վերաբերող անմիջական եւ կողմնակի գրականութեանը, խորանում է եւ անազմուկ ծաւալում, ունենալով նաեւ այն առաւելութիւնը, որ տիրապետում է եւրոպական եւ արեւելեան շատ լեզուների: Նա երկար տարիներ բարեխղճօրէն, ծանօթացել է նաեւ հին արեւելեան մեռած լեզուների ոչ միայն բառապաշարին, այլ եւ սեպագրերի ընթերցանութեանը, նրանց դիցարանութեանը, հնագիտական ժառանգութեանը: Գալուքեանի ձեռագիր ուսումնասիրութիւնը միաժամանակ, կարծէք ամփոփումն է եղած գրականութեան եւ յայտնուած կարծիքների:

Հեղինակը իր այս ֆնական ուսումնասիրութեան մէջ, հիմնականում, առաջնորդում է պատմա-համեմատական եւ լեզուաբանական համեմատական սկզբունքներով եւ գալիս հետեւեալ եզրակացու-

քիւնների, որ հայ ժողովուրդը բնիկ ցեղերից գոյացած հին մի ամբողջութիւն է, աւստլստոն է, որ 3-րդ հազարամեակում սեմական բեւեռագիր դպրութեան մէջ յիշատակուող Արամի երկրանունը վերաբերում է Արմենիա-Հայաստանին: Հեղինակը նոր ձեւով է ստուգաբանում *արմէն* եւ *հայ* բառերը, հիմքը՝ արմատը համարելով *ար* եւ *հար* եւ ոչ *թէ՛ արմ* եւ *հայասա*:

Նա նոր մօտեցումով, մեծ ֆանակութեամբ օժանդակ փաստեր բերելով, հայ-ուրարտական դիցաբանական աղերս է գտնում. օրինակ, ուրարտական Արդ(ի) աստուածը համարելով հայ-արմենական: Ուրարտական դիմաստիան յանձնին Արամի, Արգիշտիի եւ Ռուսայի, համարում հայ-արմենական եւայլն: Նոյնը, իրաւացի կերպով, երուանդունի, հայկական հարստութեան հիմնադիր Սրուանդին ոչ միայն հայ ծագումի, այլեւ հայանուն մարդ է համարում, Արամ կամ արիմ ցեղանունը (սեմական) համարում է 3-րդ հազարամեակից սեմականացած հայկական ցեղանուն տարածման հետեւանք: 3-րդ հազարամեակում Նարամսինի դէմ կռուող արիմ-արմերին, իրաւացի կերպով, հեղինակը հայ է համարում:

Ընկեր Գավուհչեանը հանում է շատ նոր եւ համարձակ եզրակացութիւններ, կամ լրացման ալ ալ փաստերով աւելի համոզկեր դարձնում ալ ուսումնասիրողների մի շարք համարձակ կարծիքները, որոնք մերժում են առանձին կրֆով, մանաւանդ մեզ մօտ:

Մարտիրոս Գավուհչեանի ուսումնասիրութիւնը, իր ամբողջութեամբ նուիրուած հայ ժողովրդի ծագման հարցին, երեւի աւելի քան երեք-հազարով պարունակում է նոր հարցադրումներ, կամ այժմ մերժուող հին ու նոր տեսակետներից մի քանիսը նորանոր փաստերով հիմնաւորելու առաջարկներ: Սակայն, եթէ այդ հարցերի մէկ քանորդն իսկ ընդունուելու եւ վիճարկուելու ենթակայ դառնայ, ապա այդ կը լինի մի զգալի յարթանակ, այժմ մեզ գրադեցնող հետաքրքրական պրոբլեմի լուծման նանապարհին:

15/8/ 1969 թ.

Մ. ՀԱՍՐԱԹԵԱՆ

Այս աշխատութիւնը նուիրուած է հայ ժողովրդի ծագման հարցին: Այդ հարցի շուրջը գոյութիւն ունեն երկու հակադիր տեսակետներ: Ըստ մէկի հայերը տեղացի ժողովուրդ են, ըստ միւսի, որը պաշտպանում են համեմատական հնդեւրոպական լեզուաբանու-

թեան հետեւորդները, հայերը եկուոր են: Վերջին տեսակետի հետեւորդները յենում են այն խիստ ուժեղ փաստի վրայ, ըստ որի հայոց լեզուն պատկանում է հնդեւրոպական լեզուաբանութիւն: Իսկ այդ ընտանիքի լեզուներ կրողները իսկութեամբ գաղթերի միջոցով տարածուել են եւ բռնում են իսլանդիայից մինչեւ Հնդկաստան ընկած տարածքը:

Սոյն աշխատութեան հեղինակը դաւանում է առաջին տեսակետը եւ այդ տեսակետը հիմնաւորելու համար օգտագործում է հնագիտական, պատմագիտական, վիճագրական եւ այլ աղբիւրներ, որոնց քիւր շատ մեծ է:

Հեղինակի տեսակետով հայ ժողովուրդը կազմուել է տեղաբնիկներից, որոնք հայ են եղել ի սկզբանէ անտի: Դրա ապացոյցը հեղինակը համարում է Արա պաշտամունքային էակն ու գաղափարը, որով եւ իրենց կոչել են այդ աստու հետեւորդները: Մի շարք փաստերով ցոյց տալով, որ հայ անունը նոյն Արա անունն է, ինչպէս եւ Արմէն բառի առաջին հաստուածը (Ար) նոյն հայ բառն է, նոյն անունումը տեսնելով նաեւ Ուրար-դու բառի մէջ, ինչպէս եւ Հայաստանում բնակուած երկրորդ եւ առաջին հազարամեակներում վկայուած ցեղերի անունների մէջ, հեղինակը յանգում է այն եզրակացութեան, որ խուրրիները, սուբարները, արմէները, ուրարտները եւ այլք, եղել են նախապատմական հայեր եւ նրանց մշակոյթը, մարդաբանական տիպը, իդէոլոգիան եւ անունը անցել են, աւելի ճիշդ՝ ժառանգուել են պատմական շրջանի հայերի կողմից:

Վիճագրական, հնապատմագիտական եւ այլ աղբիւրները շատ դէպքերում իսկապէս հաստատում են հեղինակի վարկածը:

Աշխատութեան արժէքը եւ արժանիքը այն է, որ հեղինակը օգտագործել է շատ աղբիւրներ, ջանք է քափել հիմնաւորելու իր տեսակետը եւ առաջ է քաշում մի վարկած, որի քննութիւնը կարող է տալ լուրջ արդիւնքներ, ուստի գտնում եմ, որ պէտք է հրապարակել այն, որպէս իւր տեսակի մէջ եզակի գործ:

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ՝
Ա. Ս. ՂԱՐԻՊԵԱՆ

Ծանօթանալով ընկ. Գավուհչեանի աշխատութեան հետ, գրտնում եմ, որ այս ուսումնասիրութիւնը գրուած է հայկական եւ օտարաբան բազմազան եւ բազմաշատ սկզբնաղբիւրների եւ հրապարակում

եղած գրականութեան հիման վրայ: Աշխատութեան հեղինակը պատմա-համեմատական եւ լեզուաբանական հետազոտութեան ճանապարհով ցոյց է տալիս, որ հայ ժողովուրդը կազմաւորուել է Հայկական լեռնաշխարհում՝ հայ էթնիկ տարրի հէնքի վրայ: Այս տեսութիւնն ապացուցելու համար, մեր հեղինակը վկայակոչում է ոչ միայն գրաւոր, այլեւ՝ սեպագիր արձանագրութիւնների տուեալներ, հնագիտական նիւթեր եւ այլն: Ուշագրաւ են առանձնապէս աշխատութեան այն մասերը, որոնք նուիրում են ստուգաբանելու «հայ-արմէն» բառերի ոչ միայն լեզուական, այլեւ էթնիկական նշանակութիւնը: Յոյժ կարեւոր են հեղինակի կողմից Ար-ա-Արմէն անուններին տրուած մեկնաբանութիւնները:

Հեղինակն իրաւացի է, երբ ցոյց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի բնիկներն իրենց էթնիկական կազմով, կուլտուրական, տնտեսական ու հասարակական կեանքով եղել են արմէն-հայերի նախնիները: Այնուհետեւ, հեղինակը մի շարք փաստեր է վկայակոչում եւ ցոյց տալիս, որ հայ-արմենական տարբերը դրսից չէ, որ եկել են Հայկական լեռնաշխարհ, այլ եղել են տեղաբնիկ ցեղեր: Այս դրոյթն ապացուցելու համար նա վկայակոչում է ոչ միայն հայ, այլև օտարաբան շատ, մինչեւ սոյն գործը գիտութեանն անյայտ, յատկապէս սումերական սկզբնաղբիւրներ: Անտարակոյս է, որ սոյն աշխատութիւնն ուշագրաւ, պատմա-գիտական լուրջ գործ է եւ արժանի է խրախուսանքի ու հրատարակութեան:

Կարծում ենք, որ աշխատութիւնը խմբագրելուց յետոյ կարելի է հրատարակել եւ դարձնել լայն հասարակութեան սեփականութիւնը: Այս գործն իր տեսակի մէջ եզակի գործ է եւ կրկնում ենք արժանի է յատուկ ուշադրութեան:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈԿ.-ՊՐՈՖԵՍՈՐ՝
Ս. Ե. ՅԱԿՈԲԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
	—
Առաջաբան	5
ԳԼՈՒԽ Ա.	
ԱՐՄԷՆ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՁԵՒԸ	7
1. Նարամ-Սինի արձանագրութիւնները եւ Արմանի	7
2. Նարամ-Սինի մի արձանագրութիւնը - Արմանու և Իբլա	26
3. Գուդէայի արձանագրութիւնը - Իբլա և Ուրսու	33
4. Մենուայի արձանագրութիւնը - Ուրսա և Ուրմէն-Սինի	34
5. Գարեհի արձանագրութեան տուեալները - Արմինա կամ Արմինա	37
ԳԼՈՒԽ Բ.	
ՍՈՒՄԵՐԱՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ	43
ԳԼՈՒԽ Գ.	
ՄԵԾ ԱՐ ԿԱՄ ԱՐԱ ԱՍՏՈՒԱԾԸ	91
1. Ար (Արա) աստուծոյ ծաւալումը	91
2. Արան՝ արեւի աստուած	94
3. Նուարդ	101
4. Արա - Շամիրամ	110
5. Արան արմէնների ազգային գլխաւոր աստուածն է	117
ԳԼՈՒԽ Դ.	
ԱՐՄԷՆ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ	127
1. Արմէն անուան ստուգաբանութեան փորձեր	127
2. Արմէն կամ Արմենիա անուան ծագումը	131
3. Ար ցեղը	148
ա) Ալգի	149
բ) Հարֆ	153
գ) Արածանի	157

բ) Էրիախի	158
ե) Արագած եւ Արեւիք	161
զ) Հարիա	167

ԳԼՈՒԽ Ե.

Ն Ա Ի Ր Ի	171
-----------	-----

ԳԼՈՒԽ Զ.

ՈՒՐԱՐՏՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ Է	185
1. Ուրուատրի-Ուրարտու	185
2. Հայոց Աստուածը	196
ա) Վահագն	198
բ) Խալդի	207
3. Արգիշտի	217
4. Ռուսա	231
5. Սարգուրի Ա եւ Իշպուհինի	234
6. Արամէ	239
7. Ուրարտուի ժողովրդի հետեւերով	245
8. Ուրարտական պետութեան կազմաւորման մասին	248
9. Բիաինա-Բիաինիլի	253

ԳԼՈՒԽ Է.

ՀԱՅ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ	261
--------------------	-----

ԳԼՈՒԽ Ը.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ, ԽՈՒՐՐԻՆՆԵՐԻ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱԻՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ	283
1. Ուրարտական լեզուի մասին	283
2. Խուրրիների, խուրրիներէնի եւ ուրարտերէնի մասին	298
3. Հայ ժողովրդի կազմաւորման մասին	321

ԳԼՈՒԽ Թ.





ԵՐՈՒԱՆԻ ԵՒ ԵՐՈՒԱՆԻՈՒՆԻՆԵՐԸ	337
----------------------------	-----

ԳԼՈՒԽ Ժ.

ԱՐ-Ի ԱՐՏԱՑՈՒԱՑՈՒՄԸ ԵՒ ԱՐԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ	357
---------------------------------------	-----

Կարծիքներ այս գրքի մասին	381
--------------------------	-----

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպուած է	պէտք է կարդալ
6	4-5	աշխարհիկ	աշխարհի
18	ե.	10 ՍԱԿԱԻԱՍԻԱԿ	ՍԿԱԻԱՍԻԱԿ
19	ե.	3 «Հասարակական-պէտական կարգը»	«Հին Միջագետքում Շումերի հասարակական պետական կարգը»
20	ե.	1 էջ 406	էջ 39-153
36		6 Ումէտ-Ինինի	Ուրմէտ-Ինինի
49	բիւ	17 } be great (տպուած է grow up 2րդ սիւնակում)	be great (կարդալ իբրև grow up 3րդ սիւնակում)
79		9 ԵՃԱՅՈՍ	ԵՃԱՅՈՍ
102		13 Niná	Naná
114	ե.	11 «Կամար»	«Կամարաւոր»
133	ե.	5 Iar	I ar
137		4 Ar-xu	Ar-xi
165		15 169	168
173	ե.	1 8	80
186		8 irua-ի ⁴	իրուա-ի ⁴
190	ե.	5 Տպուած է շուրու տուած՝	Պիտի լինի՝
			
198		1 Հայաստ կամ	հայաստական
199	ե.	10 Այս	Այս
200	ե.	3 լինելուց	լինելուն
208		16 Արգիշտի-Ինինի	Արգիշտի-Ինինի
217	ե.	7 սիրած	սիրած
219	ե.	6 Արտաշատ	Արտաշատ
226	ե.	2  (տպուած է շուրու տուած)	Պիտի լինի՝ 
229	ե.	6 Քրիստոսն է	Քրիստոսն էլ
247	ե.	9 քաղաքը (?)	քաղաքը
255		14 (վա-ն) կապ ունի Բիա-ինա անուն	կապ ունի Բիա-ինա (վա-ն) անուն
256	ե.	9 Բիանիա	Բիանիա
274	ե.	10 կապակցութեամբ	կապակցութեամբ
281		12 Արայարուլի	Արայարուլի
284		20 շարլոնացած	շարլոնացած
288		17 ազգեցութիւնը	ազգութիւնը
290	ե.	1 Ibi	I bi
290	ե.	6 III bi	IV bi
292		10 դարձել	դարձրել
296		7 > Ը	> Ը

Այս գիրքին հրատարակութիւնը կարելի դարձաւ
շնորհիւ՝

«Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամ»ի
յատկացումին, «Վիոլէթ շեպեմեան ֆոնտ»ի, ինչպէս նաև
հեղինակի գրասէր բարեկամներուն՝ Տիկ. Մարի Խանգաւո-
եանի, Պ. Պ. Ճոն Կիրճեանի եւ Յովհաննէս Ճիւանեանի
օժանդակութեանց:

ԳԻՆ՝

12 Լ. Ո.

6 Տոլար

Տր. 38Ե.

ԿՅ

Ապստամբի հասցե.

A. ATTARIAN

P. O. Box 3905

Beirut, Lebanon